ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

12

ՀՈՒՍԱՆԻՏԱՐ ՀՈՍՔ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

12

Ա. ՄԵԼՔՈՆՅԱՆ, Է. ԳԵՎՈՐԳՅԱՆ, Կ. ԽԱՉԱՏՐՅԱՆ,
Յ. ՀՈՎՍԵՓՅԱՆ, Ա. ՎԻՐԱԲՅԱՆ, Է. ՄԻՆԱՍՅԱՆ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

12-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

ՆՈՐԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆ

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՀՈՍՔԻ ԴԱՍԱԳԻՐՔ

Երկրորդ՝ լրամշակված հրատարակություն

ԶԱՆԳԱԿ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ • 2016

Հաստատված է ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից՝
որպես դասագիրք ավագ դպրոցի 12-րդ դասարանի հումանիտար հոսքի համար

ՀՏԴ 373.167.1:941(479.25)(075.3)
ԳՄԴ 63.3 (2Հ) g72
Հ 282

Խմբագիրներ՝ **ԱՇՈՏ ՄԵԼՔՈՆՅԱՆ**. ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս
ԱՐԱՄ ՍԻՄՈՆՅԱՆ. ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ
ԱՐԱՄ ՆԱԶԱՐՅԱՆ. պատմագիտության թեկնածու

Հեղինակներ՝ **ԱՇՈՏ ՄԵԼՔՈՆՅԱՆ**. ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս
(Ներածություն)
ԷԴԻԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ. պատմագիտության թեկնածու, դոցենտ
(Բաժին 1. Գլուխ 1, Բաժին 2. Գլուխ 3, Բաժին 4. Գլուխ 1, Բաժին 5. Գլուխ 1, 2)
ԿԱՐԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ. պատմագիտության դոկտոր
(Բաժին 1. Գլուխ 2, 3, Բաժին 2. Գլուխ 1)
ՅՈՒՐԻ ՀՈՎՍԵՓՅԱՆ. պատմագիտության թեկնածու, դոցենտ
(Բաժին 2. Գլուխ 2, Բաժին 4. Գլուխ 2)
ԱՄԱՏՈՒՆԻ ՎԻՐԱԲՅԱՆ. պատմագիտության դոկտոր
(Բաժին 2. Գլուխ 4, 5, Բաժին 5. Գլուխ 3)
ԷԴԻԿ ՄԻՆԱՍՅԱՆ. պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր
(Բաժին 3. Գլուխ 1, 2, Բաժին 4. Գլուխ 3, Բաժին 5. Գլուխ 4)

Մեթոդական մասի հեղինակներ՝ **ԱՐՄԻՆԵ ՍԱՐԳՍՅԱՆ**. պատմաբան, մանկավարժ
ԱՐՄԱՆ ՄԱԼՈՅԱՆ. պատմագիտության թեկնածու

Քարտեզագիր՝ **ԳԵՂԱՄ ԲԱԴԱԼՅԱՆ**

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ: 12-րդ դասարան: Հումանիտար հոսքի դասագիրք /
Հ 282 Երկրորդ՝ լրամշակված հրատարակություն: Ա. Մելքոնյան, Է. Գևորգյան, Կ. Խաչատրյան, Յ. Հովսեփյան, Ա. Վիրաբյան, Է. Մինասյան.— Եր.: «Զանգակ» հրատ., 2016.— 320 էջ:

ՀՏԴ 373.167.1:941(479.25)(075.3)
ԳՄԴ 63.3 (2Հ) g72

ISBN 978-99941-1-923-3

© Ա. Մելքոնյան, Է. Գևորգյան, Կ. Խաչատրյան, Յ. Հովսեփյան,
Ա. Վիրաբյան, Է. Մինասյան, 2016 թ.
© «Զանգակ-97» ՍՊԸ, 2016 թ.

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1918 թ. մայիսի վերջին Արևելյան Հայաստանում թուրքական զորքերի դեմ հայ ժողովրդի տարած փառահեղ հաղթանակներով կյանքի է կոչվում հայկական անկախ պետականությունը: Պատմական այդ բեկումնային իրադարձությամբ բացվում է հայոց պատմության նորագույն ժամանակաշրջանի առաջին էջը:

Հայոց նորագույն ժամանակաշրջանի պետականությունը ծնվում է ռազմաքաղաքական ու սոցիալ-տնտեսական ծանրագույն պայմաններում: 1918 թ. աշնանից երկրում ծայր են առնում սովն ու համաճարակները, հատկապես ծանրանում է բազմահազար արևմտահայ գաղթականների վիճակը: Սակայն կարճ ժամանակում հաջողվում է կազմավորել իշխանության մարմիններ, սկսվում է բանակաշինության գործընթացը, մի շարք պետությունների հետ հաստատվում են դիվանագիտական հարաբերություններ, հետզհետե աշխուժանում է երկրի մշակութային կյանքը:

Համաշխարհային պատերազմում Օսմանյան կայսրության կրած պարտությունից և երկրամասից թուրքական զորքերի հեռանալուց հետո աստիճանաբար ընդարձակվում է Հայաստանի Հանրապետության տարածքը: Պետականության կայացման գործընթացը տեղի է ունենում հայկական մի շարք գավառների (Արցախ, Զանգեզուր, Նախիջևան-Շարուր, Ախալքալաք, Լոռի և այլն) նկատմամբ հարևան հանրապետությունների մշտական ոտնձգությունների, հաճախ նաև նրանց հետ ռազմական բախումների պայմաններում: Արցախի և Զանգեզուրի հայության հերոսական պայքարի շնորհիվ այդ երկրամասերը նախ պահպանում են իրենց անկախությունը, ապա ի վերջո Հայաստանի Հանրապետության մաս կազմում:

1920 թ. օգոստոսի 10-ին Ֆրանսիայի Սևր քաղաքում դաշնագիր է կնքվում պատերազմում հաղթանակած Անտանտի երկրների և պարտված Օսմանյան կայսրության միջև: Պայմանագիրը Հայաստանի կողմից ստորագրում է հայկական պատվիրակության նախագահ Ավետիս Ահարոն-

յանը: Այդ փաստաթղթով լուծում էր ստանալու Հայկական հարցը: ՀՀ տարածքը կազմելու էր ավելի քան 160 հազար քառ. կիլոմետր՝ իր մեջ ընդգրկելով Վանի, Բիթլիսի, Էրզրումի և Տրապիզոնի նահանգների մեծ մասը: Փաստորեն իրականություն էր դառնալու հայ ժողովրդի՝ միացյալ Հայաստան ստեղծելու դարավոր երազանքը: Սակայն քեմալաբոլշևիկյան գործակցության հետևանքով ոչ միայն չի իրագործվում այդ արդարացի պայմանագիրը, այլև 1920 թ. դեկտեմբերի 2-ին կործանվում է Հայաստանի Հանրապետությունը:

Հայաստանի առաջին հանրապետության հիմքի վրա ստեղծվում է Խորհրդային Հայաստանը: Խորհրդային իշխանության իրականացրած քաղաքական ու տնտեսական բռնությունների հետևանքով 1921 թ. փետրվար-ապրիլ ամիսների ընթացքում երկիրը հայտնվում է քաղաքացիական պատերազմի բովում: Նույն տարում՝ մարտի 16-ին, Մոսկվայում կնքված խորհրդաթուրքական պայմանագրով Հայաստանն ունենում է տարածքային խոշոր կորուստներ՝ զրկվելով ոչ միայն Արևմտյան Հայաստանից, այլև Արևելյան Հայաստանի մի շարք տարածքներից:

Հայաստանի առաջին հանրապետության գործունեությունն անհետևանք չի մնում: Գոյության առաջին տարիներին, հատկապես մինչև 1922 թ. Անդրդաշնության և ԽՍՀՄ-ի կազմի մեջ մտնելը ՀՍԽՀ-ն պահպանում է իր հարաբերական ինքնիշխանությունը, ազգային պետության որոշ հատկանիշներ: Որքան էլ քաղաքական համակարգով ՀՍԽՀ-ն տարբերվում էր Առաջին հանրապետությունից (զուրկ էր անկախ քաղաքականություն իրականացնելու, ժողովրդավարական արժեքներ կրելու ու կիրառելու հնարավորություններից), այն պետականության որոշակի դրսևորում էր և երաշխիքներ էր ապահովում հայ ժողովրդի ազգային անվտանգության, տնտեսական ու մշակութային զարգացման համար:

Ինչպես ԽՍՀՄ-ում, այնպես էլ Խորհրդային Հայաստանում 1920-1930-ական թվականներին հաստատվում է միակուսակցական, բռնատիրական վարչակարգ: Բազմաթիվ անմեղ հայեր զոհ են դառնում ստալինյան բռնություններին: Դրանք սաստկանում են հատկապես 1930-ական թվականներին, երբ երկրի ղեկավարությունը, հրաժարվելով տնտեսության աշխուժացմանը մեծապես նպաստած նոր տնտեսական քաղաքականությունից (նէպ), իրագործում է արդյունաբերացման (ինդուստրացման) ու գյուղատնտեսության բռնի կոլեկտիվացման միջոցառումներին:

Այդուհանդերձ, Խորհրդային Միության կազմում Հայաստանն ունենում է նաև լուրջ ձեռքբերումներ. երկրում կառուցվում են տասնյակ արդյունաբերական ձեռնարկություններ, որոշակի զարգացում է ապրում մշակութային կյանքը, բազմահազար սփյուռքահայեր 1920-ական թվականների սկզբին բռնում են հայրենադարձության ճանապարհը, 1936 թ.՝ Անդրդաշնության լուծարու-

մից հետո, Հայաստանը դառնում է միութենական հանրապետություն:

Հայ ժողովուրդն իր գործուն մասնակցությունն է ունենում Երկրորդ համաշխարհային պատերազմին: Ավելի քան կես միլիոն հայեր տարբեր ռազմաճակատներում մարտնչում են ֆաշիզմի դեմ, հարյուրից ավելի հայորդիներ արժանանում են Խորհրդային Միության հերոսի կոչման: Հայկական ազգային 6 զորամիավորումներից Թամանյան 89-րդ դիվիզիան, անցնելով մարտական փառահեղ ուղի, հասնում է Գերմանիայի մայրաքաղաք Բեռլին:

Պատերազմի ավարտից հետո բռնությունների ստալինյան քաղաքականության նոր ալիքը տարածվում է նաև Խորհրդային Հայաստանում: Բազմաթիվ հայ մտավորականներ հանիրավի մեղադրվում են օտարամոլության և այլ «մեղքերի» համար, ձերբակալվում, աքսորվում կամ պաշտոնազրկվում են:

ԽՍՀՄ-ի և պատերազմի ժամանակ նրա դաշնակից Արևմուտքի երկրների միջև սկսված սառը պատերազմի պատճառով Հայկական հարցի լուծման, տվյալ ժամանակաշրջանում հայկական հողերը Խորհրդային Հայաստանին վերադարձնելու խնդրի ձախողումը խոր հիասթափություն է առաջացնում հայության բոլոր շրջաններում: 1949 թ. դադարեցվում է սփյուռքահայերի մեծ հայրենադարձությունը, հունիսին իրականացվում է տասնյակ հազարավոր «քաղաքականապես անհուսալի» հայ մարդկանց աքսորն Ալթայի երկրամաս և ԽՍՀՄ ծայրամասային այլ շրջաններ:

Անհատի պաշտամունքի վերացումից հետո Հայաստանում ևս աշխուժանում է հասարակական-քաղաքական կյանքը: 1965 թ.՝ Հայոց մեծ եղեռնի 50-ամյա տարելիցի կապակցությամբ, հայրենիքում և Սփյուռքում սկսվում է ազգային զարթոնքը, ավելի են սերտանում Հայաստան—Սփյուռք կապերը, աշխուժանում է հանրապետության տնտեսական ու մշակութային կյանքը: Սակայն այդ գործընթացը 1970-ական թվականներին ոչ միայն կանգ է առնում, այլև երկիրը թևակոխում է խոր լճացման ժամանակաշրջան: Հայաստանում ծավալվում է ազգային-այլախոհական շարժումը՝ նպատակաուղղված Հայկական հարցի, Հայոց ցեղասպանության ճանաչման, մարդու իրավունքների պաշտպանության, Հայաստանի անկախության վերականգնման և այլ խնդիրների լուծմանը:

1988 թ. փետրվարին օգտվելով վերակառուցման քաղաքականության ընձեռած հնարավորությունից՝ հայ ժողովուրդը դուրս է գալիս ազատագրական պայքարի՝ 1921 թ. ապօրինաբար Ադրբեջանին բռնակցված Արցախը հայրենիքի հետ վերամիավորելու պահանջով: Արցախյան հուժկու շարժումը և անկախության համար ծավալված պայքարը տալիս են իրենց պտուղները. 1991 թ. սեպտեմբերի 2-ին հռչակվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը, իսկ սեպտեմբերի 21-ի համաժողովրդական

հանրաքվեի արդյունքների հիման վրա Հայաստանի Հանրապետության խորհրդարանը սեպտեմբերի 23-ին երկիրը հայտարարում է անկախ պետություն:

Հաղթանակ տանելով Արցախյան ազատագրական պատերազմում և հաղթահարելով բազմաթիվ դժվարություններ՝ հայկական երկու պետությունները թևակոխել են XXI դար՝ նոր մարտահրավերներին դիմակայելու պատրաստակամությամբ և ապագայի նկատմամբ խոր հավատով լցված:

ԲԱԺԻՆ 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

ԳԼՈՒԽ 1. ՆՈՐԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԿՅԱՆՔԸ

§ 1. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՌՉԱԿՈՒՄԸ

Հայաստանի Հանրապետության հռչակումը: Ազգային անկախ պետականությունը ծնվեց պատմական դժվարին պայմաններում: Ռուսական զորքերի հեռանալով Կովկասյան ճակատը մերկացել էր: 1918 թ. թուրքական արշավանքը դեպի Արևելյան Հայաստան և Այսրկովկաս բնաջնջման իրական ապառնալիք էր ստեղծել հայ ժողովրդի արևելյան հատվածի համար:

Անդրկովկասի Ժողովրդավարական Դաշնային Հանրապետությունն (ԱԺԴՀ) ի վիճակի չեղավ կազմակերպելու երկրամասի պաշտպանությունը: Վրաց մենշևիկներն իրենց հարցերը մեկուսի լուծեցին՝ ապավինելով Կայսերական Գերմանիայի հովանավորությանը: Մուսավաթականները ոգևորված էին թուրքերի առաջխաղացումով, իսկ վրացական ուժերը լուրջ դիմադրություն չէին ցուցաբերում: Պատերազմի ամբողջ ծանրությունն ընկած էր հայկական նորաստեղծ զինված ուժերի վրա:

Հայերի համար մի աղոտ հույս էր մնացել՝ գերմանացիների պաշտպանությունը: Գերմանիայի ներկայացուցիչ ֆոն Լոսովի առաջարկով Հայոց ազգային խորհրդի ներկայացուցիչներ Հ. Օհանջանյանն ու Ա. Ջոհրաբյանը մեկնեցին Բեռլին: Մայիսի 25-ին գերմանական պատվիրակությունը հեռացավ Բաթումից:

Մայիսի 26-ին գումարվեց Սեյմի վերջին նիստը, որը, վրացիների պնդումով, որոշում ընդունեց այդ մարմնի կազմալուծման մասին: Նույն օրը գումարվեց Վրաց ազգային խորհրդի նիստը՝ Ն. Ժորդանիայի նախագահությամբ, որը հայտարարեց Վրաստանի անկախությունը:

Նույն օրը գումարված Հայոց ազգային խորհրդի նիստը, չնայած բողոքներին ու դժգոհություններին, Վրաստանի անկախությունն ընդունեց որպես փաստ: Միաժամանակ, Ազգային խորհուրդն իր վրա վերցրեց հայկական շրջանների ժամանակավոր կառավարության գործառույթները:

Հարկ է նշել, որ այդ օրերին հայ քաղաքական գործիչների միջև անկախության հարցի շուրջ կար տարաձայնություն: Հայոց ազգային խորհրդի ու Սեյմի անդամները՝ Ա. Ահարոնյանը, Ռ. Տեր-Մինասյանը, Ս. Մամիկոնյանը և ուրիշներ, ինչպես նաև սոցիալիստ-հեղափոխականները (էսէռներ) դեմ էին անկախություն հայտարարելուն: Իսկ Խ. Կարճիկյանը, Ս. Վրաց-

Կառավարության նստավայրը Երևանում 1918–1920 թթ.

յանը, Ա. Երզնկյանը և ուրիշներ ստեղծված վիճակից դուրս գալու միակ ելքը համարում էին անկախության հռչակումը և հայկական իշխանության կազմակերպումը:

Մայիսի 27–ին հայտարարվեց «Արևելակովկասյան մուսուլմանական հանրապետության» (ԱԿՄՀ) անկախության մասին: Հանրապետությունը, ի դեպ, հենց այդ ժամանակ առաջին անգամ իրանական Ատրպատականի անունով պայմանականորեն կոչեցին «Ադրբեջան»: Հայոց ազգային խորհուրդը հակվեց դեպի Հայաստանի անկախության հայտարարումը:

Անկախության խնդիրը քննարկվեց Ազգային խորհրդի ***մայիսի 28–ի*** նիստերում (առավոտյան և երեկոյան): Այդ օրը պետք է պատասխան տրվեր նաև Բաթումում թուրքերի կողմից Հայաստանին ներկայացված վերջնագրին: Բուռն քննարկումներից հետո ***Հայոց ազգային խորհուրդը վճռեց հռչակել Հայաստանի անկախությունը***: Միաժամանակ որոշվեց Հայաստանի (որպես անկախ պետության) նոր պատվիրակություն ուղարկել Բաթում թուրքերի հետ հաշտության պայմանագիր կնքելու նպատակով:

1918 թ. մայիսի 30–ին Թիֆլիսի մամուլում ***Նիկոլ Աղբալյանի*** ձևակերպումով հրապարակվեց Հայոց ազգային խորհրդի կոչը, որտեղ ասվում էր. *«Անդրկովկասյան քաղաքական ամբողջության լուծումով և Վրաստանի ու Ադրբեջանի անկախության հռչակումով ստեղծված նոր կացության հանդեպ Հայոց ազգային խորհուրդն իրեն հայտարարում է հայկական գավառների գերագույն և միակ իշխանությունը՝ որոշ ժամանակշիռ պատճառներով թողնելով մոտիկ օրերում կազմելու հայոց ազգային կառավարություն: Ազգային խորհուրդը ժամանակավորապես ստանձնում է կառավարության բոլոր գործառույթները հայկական գավառների քաղաքական–վարչական ղեկը վարելու համար»*:

Այսպիսով՝ Հայաստանի Հանրապետության հռչակման օրը եղավ ***մայիսի 28–ը***: Այդ օրը մտել է ազգային տոնացույցի մեջ՝ որպես սրբազան օրերից մեկը:

Հայաստանի առաջին հանրապետության հռչակումը հայոց պատմության նորագույն ժամանակաշրջանի ամենակարևոր իրադարձություններից է, որը XIX դարի երկրորդ կեսի և XX դարասկզբի հայոց ազատամարտի արդյունքն էր: Վերականգնվեց կորսված անկախ պետականությունը:

Բաթումի պայմանագիրը: Ինչպես գիտեք, Տրապիզոնի հաշտության բանակցություններում Անդրկովկասի պատվիրակությունը մերժեց

ընդունել Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը, որով Ռուսաստանը Թուրքիային էր թողնում Արդահանը, Կարսը և Բաթումը: Թուրքիայի հետ հաշտության պայմանագիր կնքելու նպատակով (1918 թ. մայիսի 11-ին) վերսկսվեցին բանակցությունները Բաթումում: Թուրքական պատվիրակությունը գլխավորում էր արդարադատության նախարար ***Խալիլ բեյը***, իսկ անդրկովկասյան պատվիրակությունը՝ ԱԺԴՀ կառավարության նախագահ և արտաքին գործերի նախարար ***Ա. Չխենկելին***: Պատվիրակության կազմում էին հայ պատվիրակներ՝ խնամատարության նախարար ***Հ. Քաջազնունին*** և ֆինանսների նախարար ***Ա. Խատիսյանը***:

Թուրքերի համար անսպասելի կոնֆերանս ժամանեց նաև գեներալ ֆոն Լոսովի գլխավորած գերմանական պատվիրակությունը՝ Անդրկովկասում կայսերական Գերմանիայի շահերը պաշտպանելու պատճառաբանությամբ: Ֆոն Լոսովը պնդում էր, որ Թուրքիան բավարարվի Բրեստ-Լիտովսկի հաշտության պայմանագրի շրջանակներով և դրանից դուրս տարածքային պահանջներ չներկայացնի: Գերմանիայի նպատակն էր կանգնեցնել Թուրքիայի առաջխաղացումն Անդրկովկասում, թուրքական ազատված ռազմական ուժերն օգտագործել Միջագետքում և Պաղեստինում՝ անգլիացիների դեմ կռվելու համար:

1918 թ. մայիսի 30-ին Հայոց ազգային խորհրդի պատվիրակները հասան Բաթում: Նույն օրը նրանք նամակով դիմեցին թուրքական պատվիրակության նախագահ Խալիլ բեյին՝ առաջարկելով սկսել անջատ բանակցություններ Հայաստանի և Թուրքիայի պատվիրակությունների միջև: Հայ պատվիրակները տեղեկացնում էին, որ իրենք հանդես են գալիս Հայոց ազգային խորհրդի անունից: Թուրքերը հասել էին իրենց նպատակին. Անդրկովկասի դաշնությունը փլուզվել էր, ջլատվել էին ուժերը: Սակայն եթե մայիսի 27-ին Խալիլ բեյը Հ. Քաջազնունուն և Ա. Խատիսյանին հայտարարում էր, թե «Ազգային խորհրդին չի դիմել և դիմել չի կարող, քանի որ այդպիսի մարմին չի ճանաչում», ապա մայիսյան հերոսամարտերում հայկական զորքի սխրանքի ու փաստացի անկախություն հայտարարելու մասին գրավոր հավաստում ստանալուց հետո համաձայնեց նստելու բանակցությունների:

Մայիսի 30-ին Բաթումում սկսվեցին բանակցություններ թուրքական և հայկական պատվիրակությունների միջև: Խալիլ բեյը պնդում էր կատարել իրենց պահանջները՝ Բաքվից հայկական ուժերը դուրս բերել, «Բաքուն մաքրել հեղափոխականներից»: Հայկական կողմն առաջ էր քաշում Ազգային խորհրդի մշակած ծրագիրը, այդ թվում նաև տարածքային հարցերը:

Միաժամանակ թուրքերը խուսափում էին հայ-վրացական և հայ-ադրբեջանական սահմանների հարցը քննելուց: Պատճառաբանվում էր, որ այդ խնդիրը կորոշվի երեք պետությունների փոխադարձ համաձայնությամբ: Դա նշանակում էր, որ առայժմ

անորոշ էր մնում հայկական տարածքների՝ Լոռու, Զանգեզուրի, Ղարաբաղի և այլ շրջանների ճակատագիրը:

1918 թ. հունիսի 4-ին Բաթումում ստորագրվեց հայ-թուրքական հաշտության պայմանագիր: Դրանով օսմանյան կառավարությունն ընդունեց և ճանաչեց Հայաստանի անկախությունը: Բացի պայմանագրից՝ ստորագրվեցին նաև դրան կից երեք հավելվածներ, որոնք վերաբերում էին տարանցիկ և սահմանակից շրջաններում կատարվող առևտրին, կրոնական ազատություններին, նաև մեկ լրացուցիչ համաձայնագիր՝ հայկական զորքի զորացրման ու երկաթուղու շահագործման կարգի մասին:

Բաթումի հիմնական պայմանագիրը բաղկացած էր 14 հոդվածից: Պայմանները Հայաստանի համար ծանր էին: Թուրքիան զավթեց ոչ միայն Արդվինը, Կարսը, Արդահանը, Օլթին, Կաղզվանը, Ախալքալաքը, Ախալցխան, այլև ամբողջ Սուրմալուի գավառը, Ալեքսանդրապոլի և Էջմիածնի գավառների երեք քառորդը, Երևանի գավառի կեսը, Շարուր-Դարալագյազի մեկ հինգերորդ մասը: Թուրքերին էր մնում Ալեքսանդրապոլը, երկաթուղին՝ մինչև Ջուլֆա: Հայաստանի Հանրապետությանը փաստացի մնում էր 12 հազար քառ. կմ տարածք, որն ընդգրկում էր Սևանա լճի ավազանը և Արարատյան դաշտի մի մասը:

Բաթումի պայմանագիրը միանշանակ չընդունվեց հայ գործիչների և հասարակական-քաղաքական ուժերի կողմից: Զորավար Անդրանիկը չճանաչեց այն և իր կամավորական ջոկատով հեռացավ Սյունիք ու Նախիջևան: Հնչակյան կուսակցության Թիֆլիսի կենտրոնական վարչությունը ևս պահանջեց չեղյալ համարել Բաթումի պայմանագիրը: Իրենց բողոքի ձայնը բարձրացրին նաև Երևանի հայոց ազգային խորհրդի դաշնակցական թևը, ՀՅԴ Թիֆլիսի կոմիտեն:

Հարկ է նշել, որ այդ պայմանագիրը գործեց միայն մի քանի ամիս: Այն իրավական ուժ չի ունեցել, որովհետև չի վավերացվել ոչ Հայաստանի, ոչ էլ Թուրքիայի կառավարությունների կողմից, ինչը նախատեսված էր պայմանագրի վերջին՝ 14-րդ հոդվածով:

Հարցեր և առաջադրանքներ

1. Վերհիշեք, թե ինչ ավարտ ունեցավ 1918 թ. թուրքական արշավանքն Արևելյան Հայաստան և Անդրկովկաս: ԱԺԴՀ-ն ինչո՞ւ չցանկացավ կազմակերպել երկրամասի պաշտպանությունը: Ե՞րբ գումարվեց Սեյմի վերջին նիստը: Ներկայացրեք ռազմաքաղաքական դասավորությունը տարածաշրջանում 1918 թ. մայիսի վերջի դրությամբ:
2. Անկախության հարցում ի՞նչ տարաձայնություններ կային հայ քաղաքական գործիչների միջև. ձեր կարծիքով ովքե՞ր էին ճիշտ: Ի՞նչ հարցեր քննարկվեցին, և ի՞նչ որոշումներ կայացվեցին Ազգային խորհրդի մայիսի 28-ի նիստե-

րում: Ե՞րբ և ո՞ւմ ձևակերպումով հրապարակվեց Հայոց ազգային խորհրդի կոչը, ի՞նչ էր հայտարարում այն:

3. Ե՞րբ և որտե՞ղ վերսկսվեցին Տրապիզոնում ընդհատված բանակցությունները, ովքե՞ր էին մասնակցում: Ի՞նչ նպատակ էր հետապնդում Անդրկովկասում Գերմանիան:
4. Ներկայացրե՛ք Բաթումի բանակցությունների ընթացքը և արդյունքները: Ե՞րբ ստորագրվեց Բաթումի հաշտության պայմանագիրը, ի՞նչ հետևանքներ ունեցավ: Ինչո՞ւ այդ պայմանագիրը իրավական ուժ չունեցավ:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՅՈՒԹ

Հ. ՔԱՋԱԶՆՈՒՆԻՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ընտրություն անելու տեղ չէր մնացել: Պատմությունը բերել կանգնեցրել էր մեզ մի որոշ գծի առջև. պետք է հանդգնություն ունենայինք անցնել վրայից, եթե չէինք ուզում խորտակվել: Պետք է տեր դառնայինք մեր հայրենիքին, ապա թե ոչ, կկորցնեինք այն՝ գուցե անդառնալիորեն: Եթե տատանվեինք, եթե ուշացնեինք մեր հայտարարությունը, Հայաստանը ... բաժին կդառնար հարևաններին՝ թուրքերին, վրացիներին, ադրբեջանցիներին:

§ 2. ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄՆ ՈՒ ԱՄՐԱՊՆԴՈՒՄԸ

Իշխանության մարմինների ստեղծումը: Հայաստանի անկախության հռչակումից հետո Թիֆլիսում գտնվող Հայոց կենտրոնական ազգային խորհուրդը սկսեց ձևավորել օրենսդիր և գործադիր իշխանության մարմինները:

Մինչև նորակազմ կառավարությունը Թիֆլիսից կժամաներ Երևան, որը ճանաչվել էր նորաստեղծ հայոց պետության մայրաքաղաք, տեղում պետական կառույցներ ստեղծելու և կարգուկանոն հաստատելու ուղղությամբ մեծ աշխատանք էին կատարել Երևանի հայոց ազգային խորհուրդն ու նահանգի դիկտատոր ***Արամ Մանուկյանը***: Նրա գլխավորությամբ Երևանում ստեղծվել էր «Ժամանակավոր վարչություն», որը մեծ աշխատանք էր կատարել հայկական պետականության ձևավորման համար:

Բարձրագույն օրենսդիր իշխանությունը, որը կոչվեց Հայաստանի խորհուրդ (հետո՝ խորհրդարան), ձևավորվեց Թիֆլիսի և Երևանի հայոց ազգային խորհուրդների հիմքի վրա: Խորհրդի 46 պատգամավորներից 38-ը հայեր էին, 6-ը՝ մահմեդական, 1-ը՝ ռուս, 1-ը՝ եզդի: Նրա կազմում կային 18 դաշնակցական, 6-ական ներկայացուցիչ Հայ ժողովրդական կուսակցությունից (ՀԺԿ), սոցիալ-դեմոկրատական և սոցիալիստ-հեղափոխական կուսակցություններից:

Գործադիր բարձրագույն իշխանությունը՝ կառավարությունը, կոչվում էր ***մինիստրների խորհուրդ***, հետա-

գայում՝ ***նախարարների խորհուրդ***: ***1918 թ. հունիսի 7-ին*** Հայոց ազգային խորհուրդը (13 կողմ և 2 դեմ) կառավարության նախագահ (վարչապետ) ընտրեց ***Հովհաննես Քաջազնունուն***: ՀՀ առաջին կառավարության մեջ հիմնականում ընդգրկվեցին ՀՅԴ ներկայացուցիչներ:

1918 թ. հուլիսի 17-ին ՀՀ կառավարությունը և Հայոց կենտրոնական ազգային խորհուրդը մեկնեցին Թիֆլիսից և երկու օր անց ժամանեցին Երևան:

Օգոստոսի 1-ին Երևանի քաղաքային ակումբի շենքում բացվեց Հայաստանի խորհրդի անդրանիկ նիստը: Ընտրվեցին Հայաստանի խորհրդի նախագահ (Ավետիք Սահակյան), երկու փոխնախագահներ:

ՀՀ առաջին կառավարության մեջ մտան ՀՅԴ 4 նախարարներ (Հ. Քաջազնունի՝ նախարար-նախագահ, Ա. Խատիսյան՝ արտաքին գործերի, Ա. Մանուկյան՝ ներքին գործերի, Խ. Կարճիկյան՝ ֆինանսների) և երկու անկուսակցական նախարարներ (զորավար Հ. Հախվերդյան՝ զինվորական, Գ. Պետրոսյան՝ արդարադատության): Հայ ժողովրդական կուսակցությունը հրաժարվեց կառավարության մեջ մտնելուց և խորհրդարանում մնաց որպես ընդդիմադիր ուժ:

Խորհրդարանը հավանություն տվեց կառավարության ծրագրին: Վարչապետը երկրի վիճակը բնութագրում էր որպես «անձև քաոս և ավերակների կույտ»: Առաջնահերթ էր սահմանադիր ժողովի հրավիրումը՝ երկրի Սահմանադրությունն ընդունելու համար, սակայն ժողովն այդպես էլ չհրավիրվեց:

ՀՀ-ում անհրաժեշտ էր լուծել գաղթականության, պարենավորման, ֆինանսների, հաղորդակցության, բանակի ստեղծման, ազգամիջյան ներքին խռովությունների հնազանդեցման հարցերը, սահմանային վիճելի խնդիրները և այլն:

Խորհրդարանի 1919 թ. հունիսի 21-23-ի ընտրությունները եղան առաջինը և միակը Հայաստանի Հանրապետությունում: Ընտրություններն անցկացվեցին համամասնական (կուսակցական) ընտրակարգով և այն ժամանակվա համար բացառիկ ժողովրդավարությամբ: Ընտրություններին իրավունք ունեին մասնակցելու 20 տարին լրացած քաղաքացիները՝ առանց սեռի, ազգության և կրոնական խտրականության, ընդհանուր, գաղտնի, հավասար, ուղղակի քվեարկությամբ: Ընտրացուցակներում գրանցվեց 366 հազար մարդ: Ընտրվեցին խորհրդարանի 80 անդամներ (այդ թվում՝ 3 կին), որոնցից 72-ը ՀՅԴ անդամ էին, 4-ը՝ էսէռներ, 1-ը՝ անկուսակցական, 2-ը՝ թուրք-թաթար, 1-ը՝ եզդի:

1919-1920 թթ. ժողովրդավարական ընտրությունների միջոցով կազմավորվեցին համայնքային ինքնավարությունները՝ ***զեմստվոները***: Ինքնավար մարմիններ ստեղծվեցին քաղաքներում և գավառներում, բացառությամբ մի քանի վայրերի, որտեղ անկայուն քաղաքական իրավիճակի պատճառով հնարավոր չեղավ

անցկացնել ընտրություններ: Ընտրող էին նաև գյուղական տանուտերերի պաշտոնները: Տեղական իշխանությունների այս ամբողջ համակարգը ենթակա էր ներքին գործերի նախարարությանը, որն իրականացնում էր երկրի կառավարման ամբողջ գործը:

1920 թ. մայիսին հանրապետության տարածքը բաժանվեց 4 նահանգների՝ ***Արարատյան, Ծիրակի, Վանանդի*** և ***Սյունյաց***: Այդ ժամանակ ՀՀ տարածքը հասավ շուրջ 70 000 քառ. կիլոմետրի՝ 2 միլիոն բնակչությամբ:

Անչափ կարևոր էր երրորդ իշխանության՝ դատաիրավական մարմինների ու արդարադատության կայացումը: 1918 թ. դեկտեմբերի 6-ին ընդունվեց դատական հիմնարկությունների մասին օրենքը: Ձևավորվեցին հաշտարար, շրջանային, երդվյալ ատենակալների դատարաններ և այլն: Դատավարությունը կատարվում էր հայերենով:

Պետական լեզվի և խորհրդանիշների հաստատումը: Ազգային պետության հաստատման կարևոր պայմանը և երաշխիքը հայերենի՝ որպես պետական լեզվի ճանաչումն էր: Պետական լեզվի մասին օրենքը, որը ստորագրել էր խորհրդարանի փոխնախագահ Լևոն Շանթը, ընդունվեց ***1919 թ. դեկտեմբերի 26-ին***: 1920 թ. մայիսի 30-ին օրենք ընդունվեց պետական լեզվին չտիրապետող պաշտոնյաներին աշխատանքից ազատելու պայմանների մասին: Բացառություն էր արվում միայն փորձառու սպաների համար, որոնց ազատումը կվնասեր երկրի անվտանգությանը:

Ընդունվեցին պետական խորհրդանիշները՝ դրոշը, զինանշանը և օրհներգը: Ներքին գործերի նախարար Արամ Մանուկյանի 1918 թ. սեպտեմբերի 13-ի կարգադրությամբ ՀՀ պետական-հասարակական հիմնարկություններին պարտավորեցվում էր ունենալ և կրել «Հանրապետության դրոշակ»: Որոշվեց, որ պետական դրոշը լինելու է եռագույն՝ կարմիր, կապույտ, նարնջի: Կարմիրը մարմնավորում էր ազգային-ազատագրական պայքարում հայերի թափած արյունը, կապույտը՝ ազատագրված Հայաստանի լուրթ երկինքը, իսկ նարնջագույնը՝ աշխատանքը:

Զինանշանի (գերբի) մասին օրենքը հաստատվեց ***1920 թ. հուլիսի 23-ին***: Զինանշանի հեղինակներն էին ճարտարապետ, ակադեմիկոս ***Ալեքսանդր Թամանյանը*** և նկարիչ ***Հակոբ Կոջոյանը***:

Երկրի օրհներգն էր «Մեր հայրենիք» երգը, որի երաժշտության հեղինակն է Բարսեղ Կանաչյանը:

Առաջին հանրապետության դրոշը, զինանշանը և օրհներգը Հայաստանի երրորդ հանրապետությունը ժառանգել է որպես պետական խորհրդանիշներ:

Հայաստանի առաջին հանրապետությունը սահմանեց պետության տոնական օրերը՝ հիմնվելով ազգային (նաև երկրում ապրող ռուսների և մահմեդականների) սովորույթների ու արժեքների վրա: Կարևոր էր նաև ազգային դրամի՝ արժույթի, և սե-

Մովսես Սիլիկյան

փական ֆինանսական համակարգի ձևավորումը: 1919 թ. կեսերից շրջանառության մեջ դրվեցին հայկական չեկերը, իսկ 1920 թ. ապրիլին Լոնդոնում տպվեցին հայկական դրամանիշները: Հիմնվեցին պետական բանկը, առևտրաարդյունաբերական պալատը, կազմակերպվեց մաքսային գործը:

Ազգային բանակը: Զինված ուժերը պետության անվտանգության ապահովման կարևոր միջոց են: Հայաստանի Հանրապետությունը ծնվել էր պատերազմի բովում, և նրան վիճակվել էր կռիվներով պաշտպանել իր գոյությունը:

1918 թ. մարտին ձևավորված Առանձին հայկական կորպուսը ենթարկվեց արմատական վերակառուցման. սեպտեմբերին այն վերակազմավորվեց դիվիզիայի: Հրամանատար նշանակվեց գեներալ ***Մովսես Սիլիկյանը:***

Սահմանային վայրերում կազմավորվեցին միլիցիայի զորամասեր: Անդրանիկը լուծարեց իր ջոկատը, որը հանրապետության ռազմական ուժերի համակարգից դուրս էր: 1919 թ. նա Ամենայն հայոց կաթողիկոսի միջոցով զենքը հանձնեց Հայաստանի կառավարությանը և հեռացավ արտասահման, որտեղ շարունակեց իր ազգանվեր գործունեությունը:

Աստիճանաբար վերացվում էին նաև հիմնականում արևմտահայերից կազմված ոչ կանոնավոր զինված խմբավորումները: Այդուհանդերձ, դրանց մի մասը պահպանվեց և մասնակցեց թուրք–թաթարական խռովություններին և 1920 թ. Մայիսյան ապստամբության ճնշմանը:

1919 թ. ապրիլի 25–ին ստեղծվեց զինվորական խորհուրդ՝ ***Թոմաս Նազարբեկյանի*** գլխավորությամբ: Նրան հանձնվեց նաև սպարապետությունը: Նույն թվականին հայկական դիվիզիան վերակազմավորվեց: 1920 թ. սկզբին Հայաստանի զինված ուժերում կային 4 առանձին բրիգադ՝ 9 գնդով, զինվորական միլիցիայի մեկ գունդ և 2 գումարտակ, մեկ հեծյալ բրիգադ՝ 2 գնդով, գնդացրային ու թնդանոթային մարտկոցներ, ավիաջոկատ (Կարսում), 2 զրահագնացք և այլ ուժեր: 1920 թ. սեպտեմբերին Սևանա լճում գործարկվեց ***«Աշոտ Երկաթ»*** ռազմանավը: Հայկական բանակում կար նաև եզդիների ստորաբաժանում: Կազմակերպվեց փամփուշտների արտադրություն: Հայոց բանակը հիմնականում սպառազինվեց անգլիական զենքով ու զինամթերքով: Զենք ստացվեց նաև Դենիկինից: Երևանում, Ալեքսանդրապոլում, Կարսում, Դիլիջանում և այլուր բացվեցին զինվորական հոսպիտալներ:

Մեծ ուշադրություն էր դարձվում սպայական կադրերի պատրաստմանը: Գլխավոր շտաբին կից բացվեցին սպայական դասընթացներ: Հայկական բանակում ծառայում էր շուրջ 2500 սպա: 1920 թ. Հայաստանն ուներ շուրջ 40-հազարանոց բանակ, որի մարտական ուժը 25 հազար էր:

Օրենքն արգելում էր բանակում կուսակցական կառույցի գոյությունը: Ծառայություն անցնող զինվորներն իրավունք չունեին մասնակցելու խորհրդարանի և տեղական ինքնավարության մարմինների ընտրություններին:

Աշխատանք էր կատարվում բանակն ազգայնացնելու, այնտեղ հայերենն արմատավորելու ուղղությամբ:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչպե՞ս և ո՞ւմ կողմից ձևավորվեցին ՀՀ իշխանության մարմինները: Ո՞րն էր ՀՀ բարձրագույն օրենսդիր մարմինը, ազգային ու կուսակցական ինչ կազմ ուներ: Ո՞րն էր ՀՀ բարձրագույն գործադիր մարմինը: Ի՞նչ գիտեք Ա. Մանուկյանի, Հ. Քաջազնունու, Ա. Սահակյանի մասին: Ներկայացրե՛ք ՀՀ առաջին կառավարությունը: Ի՞նչ խնդիրներ էին ծառացած ՀՀ-ի առջև, դրանցից որի՞ լուծումն էր, ձեր կարծիքով, առաջնային. ինչո՞ւ:
2. 1919 թ. ընտրությունների արդյունքում ձևավորված ՀՀ խորհրդարանի կազմը համեմատե՛ք առաջին խորհրդարանի կազմի հետ և տվե՛ք ձեր մեկնաբանությունները:
3. Ներկայացրե՛ք տեղական ինքնակառավարման համակարգը: Ե՞րբ և ի՞նչ վարչամիավորների բաժանվեց ՀՀ-ն: Ներկայացրե՛ք Հայաստանի Հանրապետության դատական համակարգը: Ի՞նչ նպատակ էր հետապնդում հայերենի՝ որպես պետական լեզվի ճանաչումը:
4. Ինչո՞ւ էր անհրաժեշտ զինված ուժերի ստեղծումը: Համառոտ ներկայացրե՛ք ՀՀ ազգային բանակի ստեղծման պատմությունը: Ի՞նչ զորատեսակներ ուներ և ի՞նչ զինատեսակներով էր զինված հայկական բանակը:

§ 3. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ

Սոցիալ-տնտեսական կացությունը: Համաշխարհային պատերազմի պատճառով խիստ տուժել էր հանրապետության արդյունաբերությունը, հետադիմել էր գյուղատնտեսությունը: Խախտվել էին երկրի թե՛ ներքին, թե՛ արտաքին տնտեսական կապերը:

1919 թ. գյուղատնտեսության համախառն արտադրանքը նախապատերազմյան՝ 1913 թ. համեմատությամբ կրճատվել էր 6 անգամ, ցանքատարածությունները՝ 3 անգամ: Խիստ նվազել էր անասունների գլխաքանակը: Գյուղացին զրկվել էր գյու-

ղատնտեսական գործիքներից, չուներ սերմացու: Գյուղում հաստատված ընչազուրկ գաղթականները ծայրահեղ ծանր վիճակում էին: Սպառման շուկաների փակման հետևանքով խիստ կրճատվել էին բամբակի մշակումը և արտադրությունը:

Չէին աշխատում Ալավերդու և Ղափանի պղնձահանքերը և ձուլարանները, երկրի աղահանքերը: Ծանր վիճակում էր երկաթուղային տրանսպորտը:

Նման պայմաններում անխուսափելի էր զանգվածային սովը, որը վրա հասավ 1918 թ. վերջերին: Սովյալների թիվն անցնում էր կես միլիոնից: Օրական մահանում էր միջին հաշվով 2 հազար մարդ:

Կառավարությունը դիմեց արտակարգ միջոցների: Հայտարարվեց հացի, ինչպես նաև կարևոր հումք հանդիսացող բամբակի պետական մենաշնորհ: Հացի բռնագրավում էր կատարվում, կենտրոնացվում պետության ձեռքում ու բաշխվում բնակչությանը: Չունևորները հաց էին ստանում անվճար, իսկ մյուսները՝ վճարով:

Հայաստանի ռազմական և տնտեսական շրջափակումը գրեթե անհնարին էր դարձրել մոտակա շուկաների հետ կապեր հաստատելը և հաց ներմուծելը: Օգնություն կազմակերպելու նպատակով ԱՄՆ մեկնեց վարչապետ Հովհաննես Քաջազնունին: 1919 թ. մայիսին ԱՄՆ-ից ստացվեց 1,3 մլն փութ ալյուր, 6 մլն տուփ կաթ (փոշի) և այլ պարենամթերք:

Ներքին կյանքի բարդ խնդիրներից էր գաղթականության և որբերի հարցը: Գաղթականների թիվը հասնում էր 300 հազարի: 1918 թ. սեպտեմբերի 28-ին ընդունվեց գաղթականներին հողով, աշխատանքով կամ պետական նպաստով ապահովելու օրենքը: Մեկ այլ օրենքով նախատեսվում էր գաղթական կանանց աշխատանքի տեղավորելու համար բացել ջուլհականոցներ, որոնք պետք է ապահովվեին համապատասխան բամբակահումքով ու սարքավորումներով: Գաղթականներին բնակեցնում էին լքյալ և սակավամարդ բնակավայրերում, մասամբ՝ քաղաքներում:

ՀՀ-ում կային նաև 40 հազարից ավելի որբ և անապաստան երեխաներ: 1919 թ. վերջերին պետությունը կարողացավ մանկատներում կազմակերպել միայն նրանցից 13 հազարի խնամքը: Մյուսների հոգսը ստանձնեց Մերձավոր Արևելքի օգնության ամերիկյան կոմիտեն (Ամերկոմ): Այս շրջանում արտաքին օգնությունը զգալի դեր կատարեց սովը մեղմելու և մարդկանց փրկելու համար:

Հայոց պետության ամրապնդումը և նրա սահմանների ընդարձակումը գաղթականների վերաբաշխման ու բնակեցման նոր հնարավորություններ ստեղծեց:

Տնտեսական վերափոխումները: Պետությունը մեծ ուշադրություն էր դարձնում հողային քաղաքականությանը: Սակայն նոր օրենսդրություն դեռ չէին ընդունում. սպասում էին Հայկական հարցի լուծմանը, որով որոշվելու էին ՀՀ ընդլայնված սահմանները և հողային ֆոնդի ծավալը:

Հողային քաղաքականության հիմքում Անդրկովկասյան կոմիսարիատի և Անդրկովկասյան Սեյմի ընդունած օրենքներն էին, որոնց համաձայն՝ կատարվելու էր կալվածատերերի հողի մասնակի բռնագրավում: Ստեղծված հողային ֆոնդը, լինելով տեղական իշխանությունների տրամադրության տակ, օգտագործվելու էր վարձակալության հանձնելու նպատակով:

Հողային բարեփոխումը կենսագործելու համար ստեղծվեցին նահանգային և գավառային հողային մարմիններ: Նրանց խնդիրն էր պետականացնել բոլոր մասնատիրական, վանքապատկան, վակուֆային, եկեղեցական ու լքյալ հողերը և դրանք բաշխել գյուղացիներին:

Հայաստանում կալվածատիրական հողային սեփականությունը մեծ տարածում չուներ: Այդ պատճառով գյուղացու հողաբաժինը շատ չմեծացավ: Հողի մասին օրենքն ընդունվեց 1920 թ. Մայիսյան ապստամբության ճնշումից հետո:

Նոր օրենքը հենվում էր հողի ազգայնացման էսէռական ծրագրի վրա, որ կիրառվել էր Խորհրդային Ռուսաստանում: Այն է՝ կալվածատիրական հողատիրությունը վերացվում էր առանց հատուցման: Վերացվում էին նաև հողի մասնավոր սեփականությունը և վաճառքը: Բոլոր հողերն ազգայնացվում էին, հանձնվում գյուղական համայնքներին, ինչպես նաև պարբերաբար հավասարարական սկզբունքով վերաբաժանվում էին գյուղացիների միջև՝ ըստ շնչերի կամ աշխատող ձեռքերի: Հողի մասին օրենքը գյուղացիության կողմից ընդունվեց մեծ գոհունակությամբ: Ստեղծվեց սերմագնման կոմիտե, որը սերմացու հայթայթեց ու բաժանեց հողագործներին:

1920 թ. ամռանը հողային բարեփոխումն անցկացվեց Հայաստանի միայն մի քանի շրջանում: Թուրք–հայկական պատերազմի պատճառով այդ գործընթացն ընդհատվեց, և հարցի լուծումը ժառանգություն մնաց խորհրդային իշխանությանը:

Պետությունը տնտեսության մեջ թույլատրում էր սեփականության տարբեր ձևերի՝ պետական, մասնավոր, կոոպերատիվ, կոնցեսիա և այլն, գործունեությունը: Վարվում էր ճիշտ ֆինանսական քաղաքականություն, մտցվեց եկամտային–առաջադիմական հարկ: Պետական ծախսերը հիմնականում ծածկվում էին հարկերի հաշվին:

Տնտեսական բազմաթիվ առաջարկություններ էին անում հայ կապիտալիստները և օտարերկրացիները: Այլ երկրներում ապրող հայ կապիտալիստներից շատերը ցանկություն էին հայտնում գործունեություն ծավալելու Հայաստանում: Նրանք մտադիր էին Հայաստանում կառուցելու էլեկտրակայաններ, անցկացնելու երկաթուղիներ, յուրացնելու խոպան հողեր, շահագործելու հանքավայրեր:

Որոշ սփյուռքահայ մեծահարուստներ միջոցներ կտակեցին Հայաստանի Հանրապետությանը: Եգիպտահայ մեծահարուստ Մելքոնյան եղբայրները հայրենիքին կտակեցին իրենց ամբողջ ունեցվածքը, Ա. Մե-

լիք-Ազարյանը՝ Թիֆլիսի իր տանը, բաքվեցի Արշակ Ղուկասյանը՝ իր միջոցները: Ստավրոպոլից Պոպովը 25 միլիոն ռուբլի նվիրեց համալսարանին: Երիտասարդ ռամկավարները պատրաստվում էին հիմնադրել Հայաստանի օդային տրանսպորտը: Իսկ դաշնակցությունը ԱՄՆ-ում անցկացրեց «Հայաստանի բանակի օր»՝ միջոցներ հավաքելով զինված ուժերի կարիքների համար:

Ձեռնարկված միջոցառումների շնորհիվ քայլ առ քայլ վերականգնվում էր երկրի տնտեսությունը:

Հասարակական-քաղաքական կյանքը: Հանրապետությունում զարգանում էր նաև հասարակական-քաղաքական կյանքը: Լայն գործունեություն ծավալեցին քաղաքական կուսակցությունները և հասարակական կազմակերպությունները: Անկախության հռչակման պահին երկրում արդեն գոյություն ուներ պատմականորեն ձևավորված կուսակցությունների կայուն քաղաքական համակարգ: Այս շրջանում գործող քաղաքական կուսակցությունների թիվը հասնում էր 8-ի: Դրանցից 3-ը հայ ազգային ավանդական կուսակցություններն էին՝ Ս. Դ. հնչակյան, ՀՅԴ և արմենականների իրավահաջորդ Հայ սահմանադրական ռամկավար կուսակցությունը (ՀՍՌԿ): Գործում էին նաև Հայ ժողովրդական կուսակցությունը (ՀԺԿ), սոցիալ-դեմոկրատների (մենշևիկներ, բոլշևիկներ), սոցիալիստ-հեղափոխականների (էսէռներ) կազմակերպությունները: 1920 թ. ձևավորվեց Հայաստանի կոմունիստական կուսակցությունը:

Առաջին հանրապետության գոյության երկուսուկես տարիների ընթացքում ՀՅԴ-ն հիմնական կառավարող կուսակցությունն էր: Երկու անգամ կազմվել է կոալիցիոն կառավարություն. ՀԺԿ-ի հետ՝ 1918 թ. նոյեմբեր — 1919 թ. հունիս ամիսներին և էսէռների հետ՝ 1920 թ. նոյեմբեր-դեկտեմբերին:

Առաջին գումարման խորհրդարանում՝ Հայաստանի խորհրդում, պաշտոնապես գործել են չորս կուսակցական խմբակցություններ՝ ՀՅԴ, ՀԺԿ, սոցիալ-դեմոկրատական (մենշևիկ և բոլշևիկ) և սոցիալիստ-հեղափոխական (էսէռ): Երկրորդ գումարման խորհրդարանում կուսակցական խմբակցություն են ունեցել միայն ՀՅԴ-ն և էսէռները: Մնացած կուսակցությունները խորհրդարանում ներկայություն չունեին:

Կուսակցական ու հասարակական բոլոր կազմակերպությունները ժամանակի ընթացքում վերանայեցին իրենց ծրագրերն ու խնդիրները:

Հայ ժողովրդական կուսակցությունը 1919 թ. սեպտեմբերին գումարած երկրորդ համագումարում որոշեց ծառայել Հայաստանի անկախ պետականության ու մշակույթի զարգացմանը, նպաստել ժողովրդավարական և խորհրդարանական իրավակարգի հաստատմանը: Այդ կուսակցությունը որոշ վերապահությամբ կողմ էր միացյալ և անկախ Հայաստանի ստեղծմանը:

Հարևան երկրներում գործող հայ բոլշևիկները (մի քանի հարյուր մարդ), հալածվելով վրացական ու ադրբեջանական իշխանությունների կողմից, 1919 թ. կեսերից ապաստանեցին Հայաստանում: Նույն թվականի սեպտեմբերին Հայաստանի բոլշևիկյան կազմակերպությունները միավորվեցին և ստեղծեցին կենտրոնական ղեկավար մարմին՝ Հայաստանի կոմիտե (Արմենկոմ): 1920 թ. սկզբներին արտաքին մի շարք իրադարձություններ (բոլշևիկյան զորքերի մուտքը Անդրկովկաս, խորհրդա-քեմալական մերձեցումը և այլն) ավելի նպաստեցին Արմենկոմի գործունեության աշխուժացմանը:

1920 թ. հունվարին Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների՝ Երևանում հրավիրված 1-ին կոնֆերանսը քաղաքական որոշում ընդունեց. «*Պատրաստ լինել իշխանությունը գրավելու, երբ նեցուկ կունենանք մի հարևան երկիր, որով հնարավոր կլինի կապվել բանվորագյուղացիական Ռուսաստանի հետ*»: Նման հնարավորություն ստեղծվեց 1920 թ. ապրիլի 28-ին Ադրբեջանի խորհրդայնացումով, որն էլ ազդակ դարձավ Հայաստանում Մայիսյան ապստամբության համար:

1919 թ. սեպտեմբեր-նոյեմբերին գումարվեց ՀՅԴ-ի 9-րդ ընդհանուր ժողովը կամ համագումարը: Անկախ և միացյալ Հայաստանի հռչակումից հետո համագումարը հրաժարվեց երկու՝ Արևելյան (Ռուսաստանի կազմում) և Արևմտյան (անկախ) Հայաստանների վերաբերյալ կուսակցության ծրագրային կետերից:

Հանրապետության սոցիալ-տնտեսական, ներքին ու արտաքին քաղաքականության խնդիրներում հիշատակված կուսակցությունները դրսևորում էին տարբեր մոտեցումներ ու դիրքորոշումներ: Բոլոր կուսակցությունները, բացի բոլշևիկներից, ազգի և պետության համար ճակատագրական ու վճռական պահերին սատարում էին կառավարությանը:

Ամենազանգվածային հասարակական ուժն ***արհեստակցական միություններն*** էին: Գործում էր 13 միություն: Ամենաբազմամարդը երկաթուղայինների արհմիությունն էր: Գոյություն ունեին կանանց, գյուղացիական, սկաուտների (ռազմամարզական), Կարմիր խաչի կազմակերպություններ, դաշնակցական երիտասարդական միություն և այլն: Բոլորն էլ դաշնակցության քաղաքական ազդեցության տակ էին: Բացառություն էր 1919 թ. ստեղծված ***«Սպարտակ»*** երիտասարդական կազմակերպությունը, որը հայ բոլշևիկների ազդեցության ներքո էր:

Այսպիսով՝ ստեղծված քաղաքական, տնտեսական, ռազմական դժվարին իրավիճակում անգամ երկրի հասարակական-քաղաքական կյանքը բավականաչափ աշխույժ էր, ինչը վկայում էր ժողովրդավարության գոյության մասին:

Հարցեր և առաջադրանքներ

1. Որո՞նք էին ՀՀ տնտեսական ծանր դրության պատճառները: Ներկայացրե՛ք ՀՀ կառավարության իրականացրած արտակարգ միջոցառումները: Դրանք ի՞նչ արդյունքներ ունեցան:
2. Ի՞նչն էր ընկած ՀՀ հողային քաղաքականության հիմքում, ի՞նչ փոփոխություններ արձանագրվեցին: Ներկայացրե՛ք տնտեսական այն միջոցառումները, որոնք իրականացվեցին ՀՀ–ում. ի՞նչ հետևանքներ ունեցան դրանք:
3. Քաղաքական ի՞նչ կուսակցություններ էին գործում ՀՀ–ում. վերհիշե՛ք, թե երբ և ովքեր էին դրանք հիմնադրել: Հասարակական ի՞նչ կազմակերպություններ էին գործում ՀՀ–ում. որքա՞ն էր դրանց թիվը, որո՞նք էին բազմամարդ: Բերե՛ք փաստեր, որոնք վկայում են, որ ՀՀ–ն ժողովրդավարական երկիր էր:
4. Աղյուսակով ներկայացրե՛ք Առաջին հանրապետության կառավարող և ոչ կառավարող, խորհրդարանական և ոչ խորհրդարանական կուսակցությունները:

§ 4. ԵՐԿՐԻ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆԸ ՍՊԱՌՆԱՑՈՂ ՎՏԱՆԳՆԵՐԸ

Թուրք–թաթարական խռովությունները: Առաջին հանրապետության օրոք մշտապես առկա էին երկրի կայունությանը սպառնացող վտանգներ: Դրանք առաջին հերթին Թուրքիայի և Ադրբեջանի կողմից Հայաստանի ներսում կազմակերպվող թուրք–թաթարական խռովություններն էին:

Երկրի կայունության դեմ ուղղված քայքայիչ գործողությունները գլխավորապես կազմակերպվում էին թուրքական գործակալների և Երևանում Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցչության կողմից:

Առաջին աշխարհամարտի ավարտից հետո Թուրքիան ամեն ինչ անում էր հայկական տարածքներն իր ազդեցության տակ պահելու համար: Նրա կողմից այնտեղ կազմավորվել էին տեղական «անկախ հանրապետություններ»՝ այսպես կոչված «շուրաներ»՝ իրենց կառավարություններով: Ընդհանուր առմամբ ՀՀ տարածքում ստեղծվել էին մեծ ու փոքր մահմեդական իշխանություններ, որոնք հրաժարվում էին հանրապետության կառավարությանը ենթարկվելուց:

Հիմնականում գտնվելով ճանապարհային կարևորագույն հանգույցներում՝ մահմեդական «անկախ» կազմավորումները խափանում էին ՀՀ հաղորդակցության ուղիների բնականոն գործունեությունը: Նրանք ունեին թնդանոթներով և գնդացիրներով զինված ուժեր, որոնց գլուխ կանգնած էին փորձառու թուրք սպաներ: Խռովարարներին զենք, զինամթերք և սպաներ էր մատակարարում Թուրքիան, իսկ Ադրբեջանը հատկացնում էր դրամ:

Հակահայկական եռանդուն գործունեություն էր ծավալել հատկապես

Երևանում Ադրբեջանի ներկայացուցչությունը, որը 1919 թ. մարտից ղեկավարում էր խան Թեքինսկին, իսկ օգոստոսից՝ նրան փոխարինած Հախվերդովը:

Հայաստանի իշխանություններին հաջողվել էր բացահայտել Երևանում ադրբեջանական ներկայացուցչության հեռագրերի ծածկագրային բանալին: Հայկական կողմը, երկար ժամանակ (1919–1920 թթ.) հետևելով այդ կապին, 1920 թ. հրապարակեց իր բացահայտումները՝ մերկացնելով ՀՀ–ում Ադրբեջանի հակահայկական քայքայիչ գործունեությունը: Խան Թեքինսկին մի փաստաթղթում իր ղեկավարներին խորհուրդ էր տալիս երկու շաբաթվա ընթացքում նվաճել Զանգեզուրը և զորքերը շարժել դեպի Ղամարլու (Արտաշատ): Դրանից անմիջապես հետո Թեքինսկին Հայաստանի կառավարության պահանջով հեռացվեց երկրից:

ՀՀ կայունությանը սպառնացող վտանգն ավելի մեծացավ Խորհրդային Ռուսաստանի արևելյան քաղաքականության հետևանքով, երբ ընդդեմ Հայաստանի գաղտնի համագործակցություն հաստատվեց քեմալական Թուրքիայի, Ադրբեջանի և Ռուսաստանի միջև:

Անդրկովկասից անգլիական զորքերի հեռանալուց հետո բռնկվեց թուրք–թաթարական ընդհանուր խռովություն՝ ընդգրկելով Օլթիից մինչև Օրդուբադ ընկած շրջանները: Ապստամբությունը սկսվեց 1919 թ. հուլիսին Բեյուք–Վեդիում, որին շուտով միացան Շարուր–Նախիջևանի, Սուրմալուի, Զանգիբասարի, ապա Կարսի թուրք–թաթարները:

ՀՀ իշխանությունները ձգտում էին խաղաղ միջոցներով կանխելու այդ խռովությունները: Սակայն հանդիպելով ուժեղ դիմադրության՝ նրանք հարկադրված դիմում էին զենքի: 1919 թ. սեպտեմբերին վճռական գործողություններով հաջողվեց պատժել խռովարարներին:

Բոլշևիկների 1920 թ. Մայիսյան ապստամբությունը ճնշելուց հետո խռովություններին վերջ տալու ավելի մեծ հնարավորություն ստեղծվեց: 1920 թ. հունիսի 18–ին մայրաքաղաք Երևանից ոչ հեռու գտնվող Զանգիբասարի թուրք ապստամբներին ՀՀ իշխանությունը ճանաչելու և զինաթափվելու վերջնագիր ներկայացվեց: Սակայն պատասխան չստացվեց, և հաջորդ օրը հայկական ուժերը հարկադրված հարձակման անցան ու եռօրյա մարտերից հետո հսկողության տակ վերցրին ամբողջ շրջանը: Նույն ժամանակահատվածում հայկական ուժերն ազատագրեցին Կարսի մարզի վարչական մի գավառը կազմող Օլթին, որը հայտնի էր իր ածխահանքերով:

1920 թ. հուլիսի 10–ից սկսված երկօրյա ռազմական գործողության շնորհիվ Ղամարլուի (Արտաշատի) շրջանը ևս ազատվեց թուրք–թաթարական պաշարումից, և վերականգնվեց երկաթուղային կապը Երևանի հետ:

Թուրք–թաթարական խռովությունները ճնշվեցին նաև Շարուր–Նախիջևանում և Սևանա լճից արևմուտք ու հյուսիս ընկած շրջաններում:

Այսպիսով՝ 1920 թ. ամռանը թուրք-թաթարական խռովությունները հիմնականում ճնշվել էին, և ՀՀ իշխանությունը տարածվում էր Ղարաբաղից մինչև Օլթի ընկած տարածքների վրա: Վերջ էր դրվել երկրի կայունությանը սպառնացող թուրք-թաթարական խռովություններին:

1920 թ. Մայիսյան ապստամբությունը: Այս ապստամբությունը Հայաստանի բոլշևիկների զինված ելույթն էր ՀՀ-ում խորհրդային կարգեր հաստատելու համար: Ապստամբության հարցը բոլշևիկները քննարկել էին 1920 թ. հունվարյան կոնֆերանսում: Փաստորեն, Հայաստանում բոլշևիկների իշխանության հաստատումն ի սկզբանե կապվում էր միջազգային նպաստավոր պայմանների, այսինքն՝ արտաքին, ոչ թե ներքին գործոնների հետ:

Ադրբեջանի խորհրդայնացումը (1920 թ. ապրիլի 28) ոգևորեց հայ բոլշևիկներին: Աշխատավորների միջազգային օրը՝ մայիսի 1-ը, նրանք Երևանում, Ալեքսանդրապոլում, Կարսում, Սարիղամիշում և այլուր նշեցին ցույցերով ու հանրահավաքներով:

Իշխանության ազդեցության տակ եղած արհեստակցական միություններն էլ իրենց հերթին էին կազմակերպել տոնական հանրահավաք: Միաժամանակ փողոց էին դուրս եկել ցուցարարների երկու խմբեր՝ տարբեր կարգախոսներով: Բոլշևիկ ցուցարարների կարգախոսներն ունեին քաղաքական ու հակակառավարական բովանդակություն:

Ալեքսանդրապոլի բոլշևիկները, որոնց ազդեցությունը համեմատաբար ուժեղ էր երկաթուղային բանվորների շրջանում, փորձեցին խաղաղ ցույցերը վերածել ապստամբության: Դրան նպաստեց այն, որ բոլշևիկների ազդեցության տակ անցան «***Վարդան զորավար***» զրահագնացքը՝ կապիտան ***Սարգիս Մուսայելյանի*** հրամանատարությամբ, և քաղաքի զինվորական կայազորի զգալի մասը: Բոլշևիկներն Ալեքսանդրապոլի մայիսմեկյան ցույցի անունից ողջույնի հեռագիր ուղարկեցին Ադրբեջանի հեղկոմին, որտեղ մուսավաթականների դեմ տարած հաղթանակը գնահատում էին նաև որպես հայ բոլշևիկների հաղթանակ: Միաժամանակ Ադրբեջանից խնդրում էին պարենային օգնություն:

Բոլշևիկների Ալեքսանդրապոլի կոմիտեն նամակներ ուղարկեց նաև Արմենկոմ՝ զինված ապստամբության թույլտվության խնդրանքով: Արմենկոմը դեմ չէր ապստամբությանը: Նրա կարծիքով ապստամբությունը անհրաժեշտ էր սկսել Խորհրդային Ադրբեջանին մոտ գտնվող Ղազախ-Ծամշադինից՝ խորհրդային Կարմիր բանակի օգնությունը ստանալու նպատակով: Սակայն Ալեքսանդրապոլի կոմիտեն ձգտում էր լինելու առաջինը: Արմենկոմը որոշեց շարժմանը տալ կազմակերպված բնույթ: Ալեքսանդրապոլ մեկնեցին Արմենկոմի ներկայացուցիչներ Դրաստամատ Տեր-Սիմոնյանը և Արտաշես Մելքոնյանը:

Մայիսի 7-ին Ալեքսանդրապոլում՝ «Վարդան զորավար» զրահագնաց-

քում, կայացավ բոլշևիկների ընդլայնված խորհրդակցություն: Որոշվեց ապստամբությունը միաժամանակ սկսել Ղազախում և Ալեքսանդրապոլում: Այնուհետև հաղթանակած ապստամբ ուժերը շարժվելու էին դեպի Երևան՝ այն գրավելու համար:

Ստեղծվեց ***Հայաստանի ռազմահեղափոխական կոմիտե*** (ՀՌՀԿ): Ձինված ուժերի (կարմիր զորքերի) հրամանատար նշանակվեց ***Սարգիս Մուսայելյանը:*** ՌՀԿ-ներ կազմակերպվեցին նաև Կարսում, Սարիղամիշում, Նոր Բայազետում, Ղազախ-Դիլիջանում, Սուրմալուում և այլուր: Արմենկոմը ներկայացուցիչ ուղարկեց Ղազախ՝ միաժամանակյա ելույթն ապահովելու համար: Նախատեսվել էր ապստամբությունը սկսել մայիսի 10-ին:

ՀՀ իշխանությունները միջոցառումներ մշակեցին հակապետական ելույթները ճնշելու համար: Մայիսի 5-ին հրաժարական տվեց Ա. Խատիսյանի կառավարությունը: Նրան փոխարինեց Համո Օհանջանյանի բյուրո-կառավարությունը, որը վարում էր կոշտ քաղաքականություն: Ժամանակավորապես դադարեց գործելուց խորհրդարանը, որն իր լիազորությունները փոխանցեց կառավարությանը: Ընդունվեց օրենք արտակարգ դատարաններ կազմակերպելու մասին: Պետական դավաճանության, ապստամբության և այլ հանցանքների համար սահմանվեցին խստագույն պատիժներ՝ մահապատիժ, ցմահ տաժանակիր աշխատանք և այլն: Կառավարությունը դիմեց հանրապետության քաղաքացիներին՝ իր շուրջը համախմբվելու կոչով: Խորհրդարանի անդամները ցրվեցին երկրով մեկ՝ գաղափարական և կազմակերպչական աշխատանքներ տանելու համար:

Կառավարության միջոցառումները պաշտպանեցին բոլոր քաղաքական կուսակցություններն ու հասարակական կազմակերպությունները: Պետության շահերն էր պաշտպանում նաև եկեղեցին: Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Ե-ն ժողովրդին զգաստության և միասնության կոչ արեց:

Ապստամբությունը սկսվեց Կարսում, սակայն կառավարական ուժերը ապստամբներին ստիպեցին նահանջել Ալեքսանդրապոլ:

Ալեքսանդրապոլում մայիսի 10-ին ՀՌՀԿ-ն կոչ հրապարակեց իշխանությունն իր ձեռքը վերցնելու մասին: Քաղաքում իշխանափոխությունը կատարվեց անարյուն, քանի որ տեղական իշխանությունները չդիմադրեցին: Բոլշևիկները ձգտում էին ապստամբություն ծավալելու ոչ միայն Ծիրակի, այլև մյուս նահանգներում: Ալեքսանդրապոլին հետևեցին գյուղական շրջանները:

Բանակցություններ սկսվեցին կառավարության ներկայացուցիչների ու ՀՌՀԿ-ի միջև: Իշխանությունների՝ անձնատուր լինելու առաջարկը ապստամբները մերժեցին:

Կառավարությունն Ալեքսանդրապոլ ուղարկեց հիմնականում արևմտահայ կամավորներից բաղկացած մի զորամաս՝ ***Սեպուհի*** հրամանատարությամբ: Սեպուհը վերջնագիր ներկայացրեց ՀՌՀԿ-ին՝ առանց կռվի

զրահագնացքը վերադարձնելու և հանձնվելու մասին: Մայիսի 13-ի երեկոյան վերջնագրի հարցը քննարկվեց ՀՌՀԿ-ի նիստում և որոշվեց քաղաքը հանձնել առանց դիմադրության:

Մայիսի 14-ի առավոտյան Ալեքսանդրապոլում վերականգնվեց ՀՀ օրինական իշխանությունը: Բոլշևիկ ղեկավարների մի մասը դիմեց փախուստի, մյուսները ձերբակալվեցին: Ապստամբության կենտրոնի պարտությունը կանխորոշեց նրա անհաջողությունը նաև մյուս վայրերում: Ելույթները ճնշվեցին Սարիղամիշում, Նոր Բայազետում, Ղազախ-Ծամշադինում, Զանգեզուրում:

1920 թ. մայիսին բոլշևիկների զինված ապստամբությունը Հայաստանում ավարտվեց պարտությամբ: Բոլշևիկյան կազմակերպությունները հայտարարվեցին օրենքից դուրս: Գնդակահարվեցին ապստամբության մի շարք ղեկավարներ և մասնակիցներ (Ստեփան Ալավերդյան, Սարգիս Մուսայելյան, Բագրատ Ղարիբջանյան, Եգոր Սկյան, Արտաշես Մելքոնյան և ուրիշներ):

Բոլշևիկների ապստամբությունը սկզբից ևեթ դատապարտված էր անհաջողության, քանի որ ապստամբները թույլ էին, ապստամբությունն անկազմակերպ էր, տարբեր վայրերում այն սկսվեց տարաժամանակ, և հաղթանակի համար լուրջ նախադրյալներ չկային: Մայիսյան ապստամբությունը պետությանը միայն վնաս հասցրեց՝ ապակայունացնելով ներքին դրությունը:

Հարցեր և առաջադրանքներ

1. Առաջին հանրապետության տարիներին երկրի կայունությանը սպառնացող ինչ վտանգներ կային: Ինչպես էր Թուրքիան փորձում ՀՀ տարածքում ուժեղացնել իր ազդեցությունը: ՀՀ իշխանություններին ե՞րբ և ի՞նչ միջոցներով հաջողվեց ճնշել հակապետական խռովությունները:
2. Ներկայացրե՛ք 1920 թ. Մայիսյան ապստամբության պատճառները: Ովքե՞ր էին այն կազմակերպել: Երկրի կառավարության կազմում ի՞նչ փոփոխություններ տեղի ունեցան: Նկարագրե՛ք ապստամբության սկիզբը և ընթացքը: Ինչո՞ւ պարտվեց բոլշևիկների Մայիսյան ապստամբությունը:

ԳԼՈՒԽ 2. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ: ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

§ 1. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ

Հարաբերությունները Քառյակ միության երկրների հետ: Անկախության առաջին իսկ օրերից Հայաստանի Հանրապետության առաջնահերթ խնդիրներից էր միջազգային ճանաչման հասնելը: Հանրապետության ստորագրած դիվանագիտա-

կան առաջին փաստաթուղթը 1918 թ. հունիսի 4-ի Բաթումի հաշտության պայմանագիրն էր, որով Օսմանյան կայսրությունը ճանաչում էր Հայաստանի անկախությունը: Պայմանագրի համաձայն՝ ՀՀ-ն դիվանագիտական կապեր չպետք է ունենար Թուրքիայի դեմ պատերազմող երկրների հետ: Ուստի անկախության սկզբնական շրջանում Հայաստանի արտաքին հարաբերությունները սահմանափակված էին Քառյակ միության երկրների և անմիջական հարևանների շրջանակով: Հունիսի երկրորդ կեսին Կ. Պոլիս մեկնեց ՀՀ դիվանագիտական առաքելությունը՝ Հայոց ազգային խորհրդի նախագահ ***Ավետիս Ահարոնյանի*** գլխավորությամբ, Բաթումի պայմանագրի պայմանները վերանայելու և Բրեստ-Լիտովսկի հաշտության պայմաններին համապատասխանեցնելու նպատակով: Դեռևս հունիսի սկզբին նման առաքելությամբ Քառյակ միության երկու երկրների մայրաքաղաքներ Բեռլին ու Վիեննա էր մեկնել հայկական մեկ այլ պատվիրակություն՝ ***Համո Օհանջանյանի*** գլխավորությամբ: Հայոց ազգային խորհրդի կողմից կազմված հայկական երկու պատվիրակությունները հանդես էին գալիս Հայաստանի կառավարության անունից և գործում էին համախորհուրդ:

Անդրկովկասյան հանրապետությունների և Թուրքիայի միջև Բաթումում կնքված պայմանագրերը Բեռլինում ու Վիեննայում լուրջ քննարկման առարկա էին դարձել: Գերմանիան ու Ավստրո-Հունգարիան կարծում էին, որ դրանք ընդունելի չեն, քանզի կնքվել են առանց իրենց մասնակցության: Առաջարկվում էր Թուրքիայի և անդրկովկասյան հանրապետությունների միջև սահմանի հարցը վերաքննարկել Կ. Պոլսում հրավիրվելիք կոնֆերանսում, որը, սակայն, այդպես էլ չկայացավ: Պատճառներից գլխավորն այն էր, որ առկա էին գերմանա-թուրքական խոր հակասություններ թուրք-անդրկովկասյան սահմանի, Կովկասում ազդեցության ոլորտների բաժանման և այլ հարցերի շուրջ, որոնք հարթել չհաջողվեց: Անդրկովկասին տիրանալու Թուրքիայի ձգտումը հակասում էր պատերազմում նրա դաշնակից Գերմանիայի ծրագրերին: Վերջինիս նպատակն էր տարածաշրջանը միավորել սեփական ազդեցության ոլորտում գտնվող դաշնային պետության սահմաններում: Ինչ վերաբերում է Քառյակ միության մյուս երկու երկրներին՝ Ավստրո-Հունգարիային և Բուլղարիային, ապա ո՛չ Հայաստանի, ո՛չ էլ տարածաշրջանի նկատմամբ վերջիններս առանձնակի հետաքրքրություններ չունեին և Հայաստանի պատճառով Թուրքիայի հետ հարաբերությունները վատթարացնել չէին ցանկանում:

1918 թ. հոկտեմբերի 30-ին ստորագրված ***Մուդրոսի*** զինադադարն ազդարարեց Թուրքիայի պարտությունն Առաջին աշխարհամարտում: Ուժը կորցրին Բրեստ-Լիտովսկի և Բաթումի պայմանագրերը: Թուրքական զորքերը հեռանում էին Անդրկովկասից և Հայաստանից: Սակայն ազատագրված արևմտահայկական

Դիանա Աբգար

տարածքները չզինագրավվեցին պատերազմում հաղթող դաշնակից պետությունների կողմից: Դա հնարավորություն տվեց Թուրքիային վերահաստատելու իր տիրապետությունը հայկական նահանգներում: Հայաստանի դրությունը բարդանում էր նաև նրանով, որ Անդրկովկասին տիրելու համար պայքարն ընթանում էր ոչ միայն գերմանա–թուրքական խմբավորման, այլև Խորհրդային Ռուսաստանի և Անտանտի միջև:

Դիվանագիտական կապերի հաստատումը: Առաջին աշխարհամարտի ավարտից հետո Հայաստանի Հանրապետությունը՝ իբրև Անտանտի փոքր դաշնակից, սկսեց վարել աշխույժ արտաքին քաղաքականություն՝ փորձելով ամրապնդել երկրի միջազգային դիրքերը: Եթե Թուրքիա գործուղված ՀՀ պատվիրակությունը 1918 թ. նոյեմբերին վերադարձավ Երևան, ապա Հ. Օհանջանյանի պատվիրակությունը գործուղվեց Շվեյցարիա՝ Անտանտի երկրների հետ կապեր հաստատելու և Հայկական հարցի քննարկումները շարունակելու համար: Իսկ արդեն 1919 թ. փետրվարից Փարիզում, Լոնդոնում ու եվրոպական այլ մայրաքաղաքներում դիվանագիտական գործունեություն ծավալեց Ա. Ահարոնյանի գլխավորած պատվիրակությունը: Կարճ ժամանակում դիվանագիտական ներկայացուցչություններ ու հյուպատոսություններ հիմնվեցին աշխարհի տասնյակ պետությունների մայրաքաղաքներում՝ Փարիզում, Լոնդոնում, Հռոմում, Բեռլինում, Վաշինգտոնում, Տոկիոյում, Պեկինում, Աթենքում, Բուխարեստում, Մադրիդում, Օսլոյում, Ամստերդամում, Կիևում, Կահիրեում, Թեհրանում, Թիֆլիսում, Բաքվում և այլուր: Նշանակվեցին դեսպաններ և հյուպատոսներ: ԱՄՆ–ում Հայաստանի դեսպանն էր խորհրդարանի պատգամավոր ***Արմեն Գարոն*** (Գարեգին Փաստրմաճյան), Հռոմում՝ ***Միքայել Վարանդյանը***, իսկ Տոկիոյում՝ առաջին հայ կին դիվանագետ ***Անահիտ Աբգարյանը*** (Դիանա Աբգար): Կ. Պոլսում ՀՀ ժամանակավոր ներկայացուցիչ նշանակվեց ***Ֆ. Թախիրաջյանը***, սակայն Հայաստանի և Թուրքիայի միջև դիվանագիտական կապեր այդպես էլ չհաստատվեցին:

Երևանում իրենց գործունեությունը սկսեցին Անգլիայի, Ֆրանսիայի, Իտալիայի, Իրանի, Ադրբեջանի, Վրաստանի և այլ երկրների դիվանագիտական ներկայացուցչություններն ու լիազոր ներկայացուցիչները:

ՀՀ–ն 1918 թ. հոկտեմբերին դիվանագիտական հարաբերություն-

ներ հաստատեց Ուկրաինայի Կենտրոնական ռադայի կառավարության հետ: Կիևում հիմնվեց Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչություն, իսկ Օդեսայում և Խարկովում բացվեցին հյուպատոսություններ: Վերջիններս մեծ աշխատանք ծավալեցին Ուկրաինայում ապաստանած բազմահազար հայությանն օգնելու, նրանց հայրենիք տեղափոխելու, ինչպես նաև Ուկրաինայում Հայաստանի համար պարենային օգնություն հայթայթելու ուղղությամբ:

Քաղաքացիական պատերազմի հետևանքով Ռուսաստանի հարավում ու արևելքում հիմնվել էին ոչ խորհրդային պետական կազմավորումներ: Ի տարբերություն վերջինների, որոնց հետ հաստատվեցին բարեկամական սերտ հարաբերություններ, Խորհրդային Ռուսաստանի բոլշևիկյան կառավարությունը չէր շտապում ճանաչել Հայաստանի անկախությունը:

1919 թ. ամռանը ծովակալ ***Ա. Կոլչակի*** գլխավորած Սիբիրի կառավարությանը կից հիմնվեց Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչություն: Առավել սերտ էին Հայաստանի հարաբերությունները գեներալ ***Ա. Դենիկինի*** իշխանության տակ գտնվող՝ Ռուսաստանի հարավի պետական կազմավորումների հետ: Այստեղ, ինչպես նաև Հյուսիսային Կովկասում հանգրվանել էին ցեղասպանությունից փրկված 100 հազարից ավելի հայ գաղթականներ, որոնց օգնելու խնդիրը խիստ հրատապ էր: Քաղաքական և առևտրատնտեսական կապեր կային Դոնի և Կուբանի, Թերեքի կառավարությունների հետ: Այդ երկրամասերում հիմնվել էին Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչություններ: Դոնում և Կուբանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչն էր ***Ս. Վրացյանը***, իսկ Հայաստանում Դենիկինի զինվորական ներկայացուցիչն էր գնդապետ ***Մ. Զինկևիչը***:

Այսպիսով՝ Հայաստանի Հանրապետությունն անկախությունից ի վեր ծավալել էր դիվանագիտական լայն գործունեություն, սակայն երկրի միջազգային դրության ամրապնդումը կախված էր հաղթած տերությունների կողմից Հայաստանի անկախության ճանաչումից և Հայկական հարցի արդարացի լուծումից:

Հարցեր և առաջադրանքներ

1. Որո՞նք էին Առաջին հանրապետության ձեռնարկած առաջին դիվանագիտական քայլերը: Ո՞րն էր Բաթումի պայմանագրի հարցում գերմանա–թուրքական հակասությունների պատճառը:
2. Ո՞ր երկրների հետ դիվանագիտական կապեր հաստատեց Հայաստանի առաջին հանրապետությունը: Ժամանակաշրջանի նշանավոր ի՞նչ հայ դիվանագետների կարող եք ներկայացնել:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՅՈՒԹ

Վիեննայից Հ. Օհանջանյանի՝ 1918 թ. սեպտեմբերի 15-ի հաղորդումից Երևան՝ Հայոց ազգային խորհրդին և կառավարությանը՝ Քառյակ միության երկրների բարձրաստիճան գործիչների հետ իր հանդիպումների արդյունքների մասին

Երևում է, որ ընդունելությունները քաղաքավարության համար են, ոչինչ չեն ուզում անել, չեն ուզում իրենց վրա վերցնել ազգին հուզող խնդիրը, չեն ուզում ոչ մի դեպքում իրենց դաշնակից Թուրքիային նեղացնել, ոչ մի անախորժ քայլ անել, ընդհանուր խոսքեր՝ իրենց համակրանքների մասին հայ ժողովրդի տառապանքների հանդեպ, բայց դրանից մենք ոչ մի շահ չունենք:

Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 200, գ. 1, գ.180, թ. 25

§ 2-3. ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՐԵՎԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՀԵՏ: ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

ՀՀ արտաքին քաղաքականության կարևոր և բարդ խնդիր էր հարաբերությունների կարգավորումն անմիջական հարևանների հետ: Պատմականորեն ձևավորված և ցարական տիրապետության ժամանակներից ժառանգություն մնացած ազգամիջյան, տարածքային-սահմանային և այլ խնդիրների պատճառով փոխադարձ անվստահություն կար Թուրքիայի, Ադրբեջանի և Վրաստանի հետ ՀՀ հարաբերություններում:

Բարեկամական սերտ հարաբերություններ հաստատվեցին հարևան ***Իրանի (Պարսկաստան)*** հետ: Թեհրանում հիմնված ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունը ղեկավարում էր խորհրդարանի պատգամավոր ***Հովսեփ Արղությանը***: Նրա ջանքերով 1920 թ. ամռան ընթացքում Թեհրանում, Թավրիզում, Սպահանում և Իրանի հայաշատ այլ քաղաքներում ստեղծվեցին կոմիտեներ, որոնք ձեռնամուխ եղան Հայաստանի օգտին հանգանակություն կազմակերպելու գործին: Երևանում հաստատված Իրանի հյուպատոսությունը գլխավորում էր ***Ասադուլլա*** խանը:

Հայ-վրացական հարաբերությունները: Հայաստանի անկախացումից հետո առաջիններից մեկը ՀՀ դիվանագիտական առաքելություն հիմնվեց հարևան ***Վրաստանի Ժողովրդավարական Հանրապետությունում*** 1918 թ. հուլիսի կեսերին, որը ղեկավարում էր ***Արշակ Ջամալյանը***: Շուտով Հայաստանում իր ներկայացուցչին նշանակեց նաև վրացական կառավարությունը: Սակայն նորանկախ երկու պետությունների միջև գոյություն ունեցող տարածքային վեճերը խոչընդոտեցին բարեկամական սերտ հարաբերությունների հաստատմանը: Վրաստանը ձգտում էր իր կազմում պահելու Ախալքալաքի և Լոռու հայկական գավառները, որոնք Ռուսաստանի կայսրության վարչատարածքային ոչ արդարացի բաժա-

նումների արդյունքում հայտնվել էին Թիֆլիսի նահանգի սահմաններում:

Հայաստանի իշխանությունները թեև ջանում էին հասնել խնդրի հանգուցալուծմանը խաղաղ, դիվանագիտական ճանապարհով, սակայն վրացական իշխանությունների անզիջում և կարծր դիրքորոշման պատճառով կողմերին այդպես էլ չհաջողվեց խուսափել պատերազմից: 1918 թ. հոկտեմբեր–նոյեմբեր ամիսներին Հարավային Լոռուց, Ախալքալաքի և Ախալցխայի գավառներից թուրքական զորքերի հեռանալուց հետո վրացական կողմը դիմեց վճռական գործողությունների՝ այդ շրջաններում սեփական վարչակարգերը հաստատելու նպատակով: Մինչև դեկտեմբերի սկիզբը Վրաստանի զինված ուժերին հաջողվեց ռազմակալել Ախալքալաքի ու Բորչալուի գավառները, հարձակումներ գործել Լոռու մի շարք բնակավայրերի վրա և բռնություններ գործադրել հայ խաղաղ բնակչության նկատմամբ:

Երբ սպառվեցին տարածքային վեճերը բարեկամաբար լուծելու բոլոր հնարավորությունները, Հայաստանի իշխանությունները ստիպված ռազմական պատասխան գործողություններ ձեռնարկեցին վրացական զինագրավումից հայկական տարածքները ազատագրելու և հայ բնակչության անվտանգությունն ապահովելու համար: Կառավարության հրամանով հայկական բանակային զորամասերը տարբեր ուղղություններով հակահարձակման անցան և համառ մարտերից հետո մինչև դեկտեմբերի կեսերն ազատագրեցին հայկական տարածքների զգալի հատվածը, այդ թվում՝ Ախալքալաքի գավառի հարավային մասը: Զարգացնելով հաջողությունները՝ հայկական ուժերն առաջացան նաև դեպի Հյուսիսային Լոռի և հասան Բոլնիս–Խաչեն ու Շուլավեր հայկական ավանները: Դեկտեմբերի 23–ին հայերի հսկողության տակ անցավ Սադախլո կայարանը: Մարտական գործողությունները շարունակվեցին մինչև դեկտեմբերի 28–ը: Տարածաշրջանում Անտանտի (Անգլիայի և Ֆրանսիայի) զինվորական ներկայացուցիչների միջնորդությամբ դեկտեմբերի 31–ին կողմերի միջև հաստատվեց զինադադար:

Վրաց–հայկական 20–օրյա պատերազմը թեև ավարտվեց հայկական կողմի հաղթանակով, սակայն ծանր հետևանքներ ունեցավ ինչպես վրացահայության, այնպես էլ Հայաստանի Հանրապետության համար, որը զրկվել էր արտաքին աշխարհի հետ Վրաստանի տարածքով հաղորդակցվելու հնարավորությունից:

Հարևան երկրների միջև տարածքային վեճերը կարգավորելու նպատակով ***1919 թ. հունվարի 9–17–ը*** Թիֆլիսում Անտանտի ներկայացուցիչների մասնակցությամբ հրավիրվեց հայ–վրացական հաշտության կոնֆերանս, որը նախագահում էր տարածաշրջանում անգլիական զորքերի հրամանատար, գնդապետ Ստյուարտը: Բանակցությունների արդյունքում կողմերը համաձայնության եկան Լոռին հայտարարել «չեզոք գոտի», որի մեջ մտնում էին Բորչալուի գավառի

Ալավերդու (Թումանյան), Ուզունլարի (Օձուն) և Վորոնցովկայի (այժմ՝ Տաշիր) շրջանները՝ իրենց չորս տասնյակ գյուղերով: «Չեզոք գոտում» սահմանվելու էր հատուկ կառավարում, որն իրականացվելու էր Հայաստանի և Վրաստանի լիազոր ներկայացուցիչների համատեղ ուժերով և անգլիացի գեներալ-նահանգապետի ընդհանուր վերահսկողությամբ: Գոտում տեղակայվելու էին հայկական և վրացական զորամասեր: Ինչ վերաբերում է Ջավախքին, ապա վերջինս թեև համարվում էր վիճելի տարածք, սակայն փաստորեն մնում էր վրացական կողմի հսկողության ներքո:

Հաշտությունից հետո վերահաստատվեցին հայ-վրացական բնականոն միջպետական հարաբերությունները: 1919 թ. մարտին կողմերը ճանաչեցին միմյանց անկախությունը: Դեռևս փետրվարի վերջերից Թիֆլիսում վերսկսել էր իր գործունեությունը ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունը: Շուտով վերականգնվեց երկաթուղային երթևեկությունը, աշխուժացան առևտրատնտեսական կապերը:

Տարածքային վեճերը կարգավորելու հերթական փորձը կողմերը ձեռնարկեցին 1919 թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին տեղի ունեցած հայ-վրացական բանակցություններում, սակայն դրանք ավարտվեցին անարդյունք: Հարցի վերջնական լուծումը տեղափոխվեց Փարիզի վեհաժողով: 1920 թ. օգոստոսի 10-ի Սևրի պայմանագրի համաձայն՝ Հայաստանի սահմանները Վրաստանի, ինչպես նաև Ադրբեջանի հետ պետք է որոշվեին փոխհամաձայնությամբ, հակասությունների դեպքում սահմանագիծը նշելու էին դաշնակից տերությունները:

1920 թ. աշնանը՝ թուրք-հայկական պատերազմի ժամանակ, երբ առկա էր քեմալական զորքերի Լոռի ներխուժելու վտանգը, Վրաստանի կառավարության առաջարկությամբ ***նոյեմբերի 13-ին*** Թիֆլիսում ստորագրվեց հայ-վրացական համաձայնագիր ժամանակավորապես Լոռու չեզոք գոտի վրացական զորք մտցնելու մասին: Ըստ համաձայնագրի 2-րդ կետի՝ չեզոք գոտում վրացական զորքի գտնվելու փաստը չէր առաջացնելու տարածքի նկատմամբ վրացական կողմի որևէ նոր իրավունք: Համաձայնագիրը կնքվեց 3 ամիս ժամկետով, որը լրանալուց հետո կողմերի համաձայնությամբ կարող էր երկարաձգվել: Հակառակ դեպքում համաձայնագիրը կորցնելու էր ուժը. զորքերը դուրս էին բերվելու, «չեզոք գոտում» վերականգնվելու էր նախկին դրությունը:

1920 թ. աշնան վերջին Հայաստանում տիրող ծանր իրավիճակը, թուրք-հայկական պատերազմում հայկական կողմի պարտությունը Վրաստանին հնարավորություն ընձեռեցին պարբերաբար խախտելու համաձայնագրի դրույթները: Ավելացվեց «Լոռու չեզոք գոտում» տեղակայված վրացական զորամասերի թվաքանակը, դրանք զբաղեցրին նաև գոտու սահմաններից դուրս գտնվող հայկական այլ բնակավայրեր՝ Ջալալօղլի

(Ստեփանավան), Շահալի կայարան (Վահագնի), Փամբակ և այլն: Շուտով Լոռիում հաստատվեց վրացական գեներալ-նահանգապետություն:

Հայ-ադրբեջանական և հայ-թուրքական հարաբերությունները: Հայաստանի անկախացումից հետո շարունակում էին լարված ու թշնամական մնալ ***հայ-թուրքական*** և ***հայ-ադրբեջանական*** հարաբերությունները: Ադրբեջանի մուսավաթական իշխանությունները, ոգևորված Անդրկովկասում Թուրքիայի նվաճողական քաղաքականության աշխուժացմամբ, հավակնություններ ցուցաբերեցին Նախիջևանի, Շարուրի, Դարալագյազի (Վայոց ձոր), Զանգեզուրի, Ղարաբաղի և հայկական այլ տարածքների նկատմամբ: Օրակարգում շարունակում էր մնալ նաև համաթուրանականության թուրքական ծրագիրը, որի իրականացման ճանապարհին, սակայն, ամուր միրճված էր հայկական սեպը:

Բաթումի պայմանագրով Թուրքիան ոչ միայն իր տիրապետությունն էր հաստատում Հայաստանի զգալի տարածքներում, այլև պարտավորեցնում էր հայկական կողմին Բաքվից դուրս բերել և անմիջապես լուծարել այնտեղ գտնվող իր ազգային զորամասերը: Դա հնարավորություն էր տալու թուրքերին հեշտությամբ գրավելու Բաքուն և իրականացնելու արևելահայության նոր տեղահանություններ ու կոտորածներ: Այդ վտանգի գիտակցումն էր, որ ստիպեց Բաքվի Հայոց ազգային խորհրդին չճանաչել հայկական զորամասերի լուծարման վերաբերյալ Բաթումի պայմանագրի կետերը և, համագործակցելով Ստեփան Շահումյանի գլխավորած Բաքվի ժողովրդական կոմիսարների խորհրդի հետ, դիմել ինքնապաշտպանության կազմակերպմանը: Այդ գործում մեծ ավանդ ունեցան ***Գրիգոր Կորգանովը, գեներալ Հակոբ Բագրատունին, հայտնի հայդուկներ Սեբաստացի Մուրադը, Սեպուհը*** և այլք:

Թուրքական զորքերի ռազմարշավը դեպի Բաքու սկսվեց 1918 թ. հունիսի կեսերին: Ինքնապաշտպանության սկզբնական շրջանում հայկական ուժերին, որոնց կազմում առանձնանում էր ***Համազասպի*** բրիգադը, հաջողվեց կասեցնել թուրքական հարձակումը: Բաքվի մատույցներում համառ մարտերը վերսկսվեցին 1918 թ. օգոստոսի սկզբներին: Այդ կռիվներում հերոսաբար զոհվեց Սեբաստացի Մուրադը: Մարտերը շարունակվեցին մինչև սեպտեմբերի կեսերը, երբ համալրված թուրքական գերակշիռ ուժերին հաջողվեց անցնել վճռական գործողությունների և սեպտեմբերի 15-ին ներխուժել քաղաք: Թուրք-թաթարական խաժամուժը այստեղ կոտորեց շուրջ 30 հազար հայերի: Հայության հերոսական ինքնապաշտպանության շնորհիվ Բաքվի 100 հազարի հասնող հայ բնակչության շուրջ կեսին նախօրոք հաջողվել էր տեղափոխվել քիչ թե շատ ապահով վայրեր:

Ողբերգական ճակատագրի արժանացան նաև Բաքվի 26 կոմիսարները, որոնց թվում էին Ս. Շահումյանը, Գ. Կորգանովը և ուրիշներ: Սեպտեմբերի 20-ին նրանք գնդակահարվեցին

անդրկասպյան էսէռական իշխանությունների և անգլիացիների կողմից:

Բաքվի և Ելիզավետպոլի նահանգների հայկական գավառներում հայերի հալածանքների քաղաքականությունը շարունակվեց նաև հետագա տարիներին: 1918–1920 թթ. միայն Նուխիի և Արեշի գավառներում կողոպտվեցին և ավերվեցին ավելի քան հինգ տասնյակ հայկական բնակավայրեր, տեղի շուրջ 50 հազար հայ բնակչությունից փրկվեց միայն 10 հազարը:

Ոգևորված թուրքական բանակի հաջողություններով՝ Ադրբեջանի կառավարությունը նոր ոտնձգությունների դիմեց ***Ղարաբաղի*** ու ***Զանգեզուրի*** նկատմամբ: Ռուսական կայսրության փլուզումից հետո Լեռնային Ղարաբաղը փաստացի դուրս էր մնացել Ելիզավետպոլի նահանգի կազմից: 1918 թ. հուլիսի 22–26–ը արցախցիների՝ Շուշիում հրավիրված առաջին համագումարը երկրամասը հռչակեց անկախ վարչաքաղաքական միավոր և կազմեց «Ղարաբաղի ժողովրդական կառավարությունը»:

1918 թ. հոկտեմբերի սկզբին թուրք–ադրբեջանական զորքերին մեծ կորուստների գնով հաջողվեց գրավել Արցախի մի շարք տարածքներ, այդ թվում՝ Շուշի կենտրոնը: Վտանգված էր նաև Զանգեզուր–Սյունիքը: ՀՀ կառավարությունը, որն իր որոշումներով հայկական նշված տարածքներն արձանագրել էր որպես հանրապետության անբաժանելի մաս, քայլեր ձեռնարկեց դրանց կառավարումն ու պաշտպանությունը կազմակերպելու համար: Նախիջևանից Զանգեզուր տեղափոխված զորավար Անդրանիկը հոկտեմբերի սկզբին իրեն հռչակեց երկրամասի գերագույն զինվորական հրամանատար: Գավառի վարչական իշխանությունը ժամանակավորապես իրականացնելու էր Զանգեզուրի հայկական ազգային խորհուրդը: Վերջինս 1919 թ. սկզբին վերակազմվեց որպես «Զանգեզուր–Ղարաբաղի մարզային խորհուրդ» և գործելու էր Հայաստանի Հանրապետության անունից: Որպես վերջինիս ներկայացուցիչ՝ մարտին Գորիս ժամանեց կապիտան ***Արսեն Շահմազյանը***՝ ստանձնելով գեներալ–կոմիսարի պաշտոնը: 1919 թ. նոյեմբերին նրան փոխարինեց ***Սերգեյ Մելիք–Յոլչյանը***:

1918 թ. վերջին տարածաշրջանում ամրապնդվեցին Անտանտի, մասնավորապես Անգլիայի դիրքերը: Անգլիացի գեներալ Թոմսոնը 1918 թ. նոյեմբերի կեսերին դարձավ Բաքվի գեներալ–նահանգապետ: Մեծ Բրիտանիայի ադրբեջանամետ քաղաքականությունը պայմանավորված էր Բաքվի նավթի գործոնով: Թոմսոնի պահանջով նախ կասեցվեց արցախցիներին օգնության շտապող Անդրանիկի զորախմբի առաջխաղացումը դեպի Շուշի, իսկ 1919 թ. հունվարին բրիտանական զինվորական ներկայացուցչությունը Ղարաբաղի և Զանգեզուրի ժամանակավոր գեներալ–նահանգապետ նշանակեց իր հայատյացությամբ հայտնի ***Խոսրով բեկ Սուլթանովին***: Ադրբեջանի իշխանություններին ենթարկվելու՝ հայությանն ուղղված վերջինիս կոչը, որն

ուղեկցվեց ադրբեջանական զորքերի ներխուժումով Արցախ, ապարդյուն էր. հայ բնակչությունը շարունակեց զինված պայքարն իր ազատության համար:

Ի տարբերություն Արցախ–Զանգեզուրի՝ 1918 թ. վերջին օսմանյան բանակի զինագրավումից ազատագրված հայկական մեկ այլ երկրամասի՝ ***Շարուր–Նախիջևանի*** կառավարումն անգլիական զինվորական ներկայացուցչության համաձայնությամբ հանձնվեց Հայաստանին: 1919 թ. մայիսի 3–ին անգլիացի գեներալ Դևին և զորավար Դրոն (Դրաստամատ Կանայան) ստորագրեցին համապատասխան հրաման: Սկսվեց հայ գաղթականության վերադարձը հայրենի օջախներ: Սակայն Հայաստանի նկատմամբ թշնամաբար տրամադրված մուսուլմանական բնակչությունը Ադրբեջանի և Թուրքիայի հովանավորությամբ ցուցաբերեց անհնազանդություն և շուտով դիմեց զենքի: Երկրամասում գտնվող հայկական փոքրաթիվ զորամասին չհաջողվեց ճնշել թվական մեծ գերազանցություն ունեցող ապստամբներին: 1919 թ. հուլիսի կեսերին Շարուր–Նախիջևանի երկրամասը գրեթե հայաթափվեց: Հայության զանգվածային նոր կոտորածներ տեղի ունեցան 1919 թ. վերջին Գողթան գավառի Վերին և Ներքին Ազուլիս գյուղերում: Նախիջևանի կորստով Հայաստանի Հանրապետությունը զրկվում էր Երևան—Ջուլֆա երկաթգծով հարևան Իրանի հետ կապ ունենալուց, խոցելի էին դառնում Սյունիքի արևմտյան սահմանները:

Գարեգին Նժդեհ

Այդուհանդերձ, Հայաստանի իշխանությունները փորձում էին կարգավորել հայ–ադրբեջանական հարաբերությունները: 1918 թ. սեպտեմբերից Ադրբեջանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ նշանակված ***Տիգրան Բեկզադյանը*** 1919 թ. մարտին Գանձակից տեղափոխվեց Բաքու: Նույն ամսին Երևանում բացվեց Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցչությունը՝ Ալի խան Թեքինսկու գլխավորությամբ: Սակայն վերջինիս ծավալած լրտեսական գործունեությունը Հայաստանի ղեկավարությանը ստիպեց որոշում կայացնել նրան երկրից վտարելու մասին:

1919 թ. վերջին — 1920 թ. սկզբին հայ–ադրբեջանական կռիվները բորբոքվեցին նոր թափով: Զանգեզուրի ինքնապաշտպանությունն ամրապնդելու նպատակով 1919 թ. հոկտեմբերին այստեղ ժամանեց ռազմական և քաղաքական հմուտ գործիչ ***Գարե-***

գին Նժդեհը: Նրան շուտով հաջողվեց բարձրացնել զանգեզուրցիների ոգին, իսկ երկրամասը վերածել ամուր պաշտպանված ամրոցի: 1920 թ. ապրիլի սկզբին Նժդեհի ուժերը Որոտանի կիրճում ջախջախիչ պարտության մատնեցին Կապանը գրավել ձգտող Նուրի փաշայի զորքերին:

Լարված էր մնում իրավիճակը նաև Արցախում: 1920 թ. մարտի 20–ին ադրբեջանական բանակը և տեղի մուսուլմանների զինված խմբերը դիմեցին լայնածավալ հարձակման: Հայկական ուժերը հուժկու հակահարված տվեցին թշնամուն և ստիպեցին նահանջել: Ծանր կորուստների վրեժը թուրք–ադրբեջանցի հրոսակները լուծեցին Շուշիի ու շրջակա հայկական գյուղերի անզեն բնակչությունից: Արյունարբու Սուլթանովի հրահանգով նրանք մարտի 23–ին միայն Շուշիում գազանաբար կոտորեցին շուրջ 8 հազար հայերի և հրկիզեցին քաղաքի հայկական թաղամասերը: Արյունահեղությունը շարունակվեց մինչև ապրիլի սկիզբը:

1920 թ. ապրիլին Արցախի բնակչությանը Սյունիքից օգնության հասան զորավարներ Դրոյի և Նժդեհի ջոկատները: ***Ապրիլի 25–ին արցախցիների 9–րդ համագումարը երկրամասը հռչակեց Հայաստանի Հանրապետության անբաժանելի մասը***:

Իրադրությունը երկրամասում, ինչպես նաև ամբողջ Անդրկովկասում կտրուկ փոխվեց 1920 թ. ապրիլի վերջին՝ պայմանավորված տարածաշրջանում Խորհրդային Ռուսաստանի քաղաքականության աշխուժացմամբ և վերջինիս կողմից Ադրբեջանի խորհրդայնացումով: Դրանից անմիջապես հետո խորհրդային կողմը Հայաստանի կառավարությունից պահանջեց հայկական զորամասերն անհապաղ դուրս բերել Ղարաբաղից և Զանգեզուրից: Ստեղծված ռազմաքաղաքական անբարենպաստ իրավիճակում 1920 թ. մայիսի 25–ին Թաղավարդ գյուղում տեղի ունեցած արցախցիների 10–րդ համագումարը Լեռնային Ղարաբաղը հռչակեց խորհրդային:

1920 թ. ամռանը խորհրդային զորքերի կողմից Ղարաբաղի, Զանգեզուրի և Նախիջևանի զինագրավմամբ հայկական երկրամասերի խնդիրը տեղափոխվեց հայ–ռուս–ադրբեջանական հարաբերությունների ոլորտ: Ադրբեջանի բոլշևիկյան իշխանությունները, սերտորեն համագործակցելով քեմալական թուրքերի հետ, Մոսկվայի ղեկավարությունից պարբերաբար պահանջում էին նշված տարածքները փոխանցել Խորհրդային Ադրբեջանին:

Հայկական երկրամասերի խորհրդային զինագրավումն ուղեկցվում էր կարմիր զորամասերի և թուրք–ադրբեջանցի զինվորների կողմից Արցախի ու Զանգեզուրի հայ բնակչության նկատմամբ պարբերաբար գործադրվող բռնություններով և թալանով: Զանգեզուրում Հայաստանի և խորհրդային զինված ուժերի միջև տեղի ունեցած բախումներում հակառակորդը լուրջ կորուստներ ունեցավ: Գորիսից պարտադրված նահանջից առաջ՝

օգոստոսի 2-ի գիշերը, բոլշևիկները տեղում գնդակահարեցին մի խումբ զինվորական և քաղաքական հայ գործիչների, այդ թվում՝ Հայաստանի խորհրդարանի պատգամավորներ Արշակ Շիրինյանին և Վահան Խորենուն:

Ռուսաստանի Սոցիալիստական Դաշնային Խորհրդային Հանրապետության (ՌՍԴԽՀ) կառավարության և Հայաստանի Հանրապետության միջև ***1920 թ. օգոստոսի 10-ին Թիֆլիսում*** ստորագրված համաձայնագրով կողմերի միջև ռազմական գործողությունները դադարեցվում էին, իսկ Ղարաբաղը, Զանգեզուրն ու Նախիջևանը հայտարարվում էին «վիճելի տարածքներ», օրինականացվում էր խորհրդային զորքերի կողմից դրանց զինագրավման փաստը:

Խորհրդային ուժերի հարձակումները և գործադրվող բռնությունները, սակայն, Զանգեզուրում չդադարեցին: 1920 թ. սեպտեմբերին երկրամասի մի շարք գյուղերում, իսկ հոկտեմբերին՝ Սիսիանում՝ ***Պողոս Տեր-Դավթյանի*** գլխավորությամբ, բռնկվեցին հակախորհրդային նոր ապստամբություններ: Գարեգին Նժդեհը, որ հուլիսի սկզբին բոլշևիկների՝ Գորիս ներխուժելուց հետո ստիպված էր իր փոքրաթիվ ուժերով քաշվել ***Խուստուպ լեռը***, գլխավորեց համազանգեզուրյան ապստամբությունը: ***Նոյեմբերի 14-ին*** Նժդեհը վերջնագիր ներկայացրեց Կարմիր բանակի հրամանատարությանը՝ պահանջելով դադարեցնել բռնությունները և հեռանալ Զանգեզուրից: Ապստամբներին ճնշելու՝ կարմիրբանակային ստորաբաժանումների վերջին փորձերը հաջողություն չունեցան. ***1920 թ. նոյեմբերի 21-ին*** ապստամբներն ազատագրեցին Գորիս կենտրոնը: Հայաստանի խորհրդայնացման նախօրեին կարմիր զորքերից ազատագրվեց ամբողջ Զանգեզուրը: Երկրամասը կառավարելու համար Գ. Նժդեհի անմիջական ղեկավարությամբ ստեղծվեց ***Զանգեզուրի գյուղացիության ժամանակավոր խորհուրդ***:

1920 թ. վերջին Հայաստանի խորհրդայնացումով Արցախի, Զանգեզուրի և Շարուր-Նախիջևանի հիմնախնդիրը հայտնվեց նոր իրադրության մեջ:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչո՞ւ սրվեցին հայ-վրացական հարաբերությունները 1918 թ. վերջին: Ի՞նչ լուծում ստացավ հայ-վրացական հակամարտությունը: Ներկայացրե՛ք հայ-վրացական հարաբերությունները 1920 թ. ընթացքում:
2. Որո՞նք էին հայ-ադրբեջանական լարված հարաբերությունների պատճառները: Վերհանե՛ք հայկական զորքի խաղացած դերը Բաքվի 1918 թ. հերոսական պաշտպանության ժամանակ: Ինչպե՞ս զարգացան իրադարձություններն Արցախի և Զանգեզուրի համար պայքարում: Ինչո՞ւ Անդրանիկին չհաջողվեց իր զորամասով մտնել Արցախ:

3. Ինչ ընթացք ստացավ հայ–ադրբեջանական հակամարտությունը Ադրբեջանի խորհրդայնացումից հետո: Ո՞ր համաձայնագրով դադարեցին ռազմական գործողությունները Խորհրդային Ռուսաստանի և ՀՀ զինված ուժերի միջև: Գնահատե՛ք Նժդեհի դերը Զանգեզուրի ինքնապաշտպանության գործում:

§ 4. ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ՓԱՐԻԶԻ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎՈՒՄ: ՍԵՎՐԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ

Հայկական պատվիրակությունների գործունեությունը Փարիզի խորհրդաժողովում: Առաջին աշխարհամարտի արդյունքներն ամփոփելու, պարտված երկրների հետ հաշտության պայմանագրեր կնքելու նպատակով ***1919 թ. հունվարի 18–ին*** Ֆրանսիայի մայրաքաղաք Փարիզում իր աշխատանքները սկսեց Անտանտի երկրների ներկայացուցչական խորհրդաժողովը:

Հայկական հարցը սերտորեն առնչվում էր Թուրքիայի հետ պայմանագրի մշակման խնդրին: Այդ կապակցությամբ ընդունված որոշումներից մեկում մասնավորապես նշվում էր, որ օսմանյան տիրապետության տակ գտնվող քրիստոնյաների հալածանքները և սարսափելի կոտորածները նկատի ունենալով՝ դաշնակից տերությունները կարծում են, թե մի շարք տարածքներ, այդ թվում՝ Հայաստանը (ներառյալ Կիլիկիան), պետք է ամբողջապես անջատվեն կայսրությունից: Այդ տարածքները նախատեսվում էր դնել առանձին պետությունների հովանավորության (մանդատի) ներքո:

Խորհրդաժողովին մասնակցելու համար Հայաստանի Հանրապետության կառավարությունը և արևմտահայերը իրենց պատվիրակություններն ուղարկեցին Փարիզ: Հայությունը հույս ուներ, որ իր կրած ահռելի կորուստները և ռազմական ներդրումը դաշնակիցների հաղթանակի գործում կգնահատվեն, իսկ Հայկական հարցը արդարացի լուծում կստանա: Հայաստանի կառավարության պատվիրակությունը գլխավորում էր Ավետիս Ահարոնյանը, անդամներն էին Միքայել Պապաջանյանը և Համազասպ Օհանջանյանը: Արևմտահայերի շահերը ներկայացնող Հայոց ազգային պատվիրակությունը ղեկավարում էր եգիպտահայ մեծահարուստ Պողոս Նուբար փաշան, անդամներն էին Արշակ Չոպանյանը, Վահան Թեքեյանը և այլք:

Հայկական երկու պատվիրակությունները Փարիզում լայն գործունեություն ծավալեցին, սակայն գործում էին անջատ և տարբեր մոտեցումներ ունեին ինչպես ապագա Հայաստանի կառավարության, այնպես էլ պետության կազմում ընդգրկվելիք տարածքների վերաբերյալ:

Այդուհանդերձ, որոշ քննարկումներից հետո հայկական երկու պատվիրակությունների նախագահները

1919 թ. փետրվարի 12-ին Փարիզում ստորագրեցին հայկական պահանջների համատեղ հուշագիր: Այն փետրվարի 25-ին Միացյալ Հայաստանի քարտեզով ներկայացվեց Փարիզի խորհրդաժողովի Տասի խորհրդին:

Հուշագրով հայկական կողմը պահանջում էր ճանաչել Միացյալ Հայաստան անկախ պետությունը, որը ներառելու էր Արևմտյան Հայաստանի յոթ նահանգները (Վան, Բիթլիս, Դիարբեքիր, Խարբերդ, Սեբաստիա, Էրզրում և Տրապիզոն), Կիլիկիայի չորս սանջակները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունը՝ ընդլայնված սահմաններով՝ Երևանի նահանգով, Կարսի շրջանով (բացառությամբ Արդահանի հյուսիսի), Թիֆլիսի նահանգի հարավային և Գանձակի նահանգի հարավարևմտյան մասերով: Առաջարկվում էր առնվազն 20 տարով դաշնակից պետություններից մեկին հանձնել Հայաստանի մանդատը (հովանավորությունը), պատժի ենթարկել հայկական ջարդերի կազմակերպիչներին ու իրականացնողներին, պարտավորեցնել Թուրքիային փոխհատուցել հայերի կրած վնասները: Ընդհանուր առմամբ, արևմտահայությանը հասցված նյութական վնասի գումարը, համաձայն 1919 թ. փետրվարին Փարիզում իր աշխատանքները սկսած Հայոց ազգային համագումարի տվյալների, կազմում էր մոտ 20 միլիարդ ֆրանկ:

Միացյալ Հայաստանի հոչակումը: Փարիզի խորհրդաժողովում հայկական պատվիրակությունների գործունեության ընթացքում ի հայտ

Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը Ավետիս Ահարոնյանի գլխավորությամբ

եկած հակասությունները հարթելու, ինչպես նաև միջազգային դիվանագիտության առջև միասնաբար հանդես գալու անհրաժեշտությունը հրամայական էր դարձնում Միացյալ Հայաստանի հռչակումը: Դրան էր ձգտում թե՛ արևմտահայությունը, թե՛ արևելահայությունը:

1919 թ. փետրվարի 6-13-ը Երևանում հրավիրված արևմտահայերի 2-րդ համագումարը, որին մասնակցում էին նաև ՀՀ կառավարության անդամներ, բանաձև ընդունեց Միացյալ Հայաստան հռչակելու անհրաժեշտության մասին: Համագումարում ընտրված Արևմտահայ գործադիր մարմինը, առաջնորդվելով «Մեկ ազգ, մեկ հայրենիք» կարգախոսով, դիմեց «Արարատյան Հանրապետության» կառավարությանը՝ որոշումը կյանքի կոչելու համար: Համագումարը միաժամանակ երաշխիքներ էր ակնկալում դաշնակից պետություններից՝ միացյալ և անկախ հայկական պետության գոյության համար:

Հայկական երկու պատվիրակությունները

«Ամբողջական Հայաստանի անկախության» մասին հայտարարություն ընդունեց նաև Պողոս Նուբարի նախաձեռնությամբ ***1919 թ. փետրվարի 24–ից ապրիլի 22–ը Փարիզում*** կայացած Հայոց ազգային համագումարը: Վերջինիս աշխատանքներին մասնակցում էին աշխարհի տարբեր երկրներում, ինչպես նաև Կովկասում ապաստանած՝ Մեծ եղեռնից փրկված արևմտահայ գաղթականների ներկայացուցիչները:

1919 թ. ապրիլի 26–ին ՀՀ խորհրդարանը հավանության արժանացրեց Միացյալ Հայաստանի գաղափարը: Մեկ ամիս անց՝ ***1919 թ. մայիսի 28–ին***՝ անկախության հռչակման առաջին տարեդարձի օրը, հանրապետության կառավարությունը ստորագրեց և հանդիսավոր պայմաններում հրապարակեց ***«Միացյալ Հայաստանի անկախության հռչակագրի ակտը»***: Պատմական այդ փաստաթղթում մասնավորապես նշվում էր. «*Հայաստանի կառավարությունը, համաձայն բովանդակ հայ ժողովրդի միահամուռ կամքի և ցանկության, հայտարարում է, որ այսօրվանից Հայաստանի բաժան–բաժան մասերը մշտնջենապես միացած են իբրև անկախ պետական միություն*»:

Միացյալ Հայաստանի հռչակումը վճռական քաղաքական քայլ էր հայության ընդհանուր պահանջը ներկայացնելու և պատմական պայմանների բերումով միմյանցից բաժանված նրա երկու հատվածների միավորման համար: Այն ունեցավ նաև արտաքին քաղաքական կարևոր նշանակություն:

Հայկական հարցը Սան Ռեմոյի կոնֆերանսում: Հայաստանի ճանաչման և նրա մանդատի ստանձնմանն առնչվող հարցերն ուսումնասիրելու նպատակով 1919 թ. սեպտեմբերին տարածաշրջան գործուղվեց ԱՄՆ պատվիրակությունը՝ գեներալ ***Ջեյմս Հարբորդի*** գլխավորությամբ: Սեպտեմբեր–հոկտեմբեր ամիսներին պատվիրակությունը շրջագայեց Փոքր Ասիայում և Անդրկովկասում, Էջմիածնում հանդիպում ունեցավ Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Ե–ի հետ:

Հարբորդի առաքելության ծավալուն զեկուցագրում, որը 1919 թ. հոկտեմբերին ներկայացվեց ԱՄՆ պետդեպարտամենտ (արտաքին գործերի նախարարություն) և Սենատ, առաջարկվում էր Հայաստանի և Անդրկովկասի համար սահմանել մեկ ընդհանուր ամերիկյան մանդատ:

1920 թ. հունվարի 19–ին ԱՄՆ–ի, Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի և Ճապոնիայի (Մեծ հնգյակ) ղեկավարների՝ ***Փարիզում*** տեղի ունեցած նիստում վերջապես դե ֆակտո (փաստացի) ճանաչվեց Հայաստանի կառավարությունը՝ պայմանով, որ ճանաչումը չի կանխորոշում հայկական պետության ապագա սահմանների հարցը: Այդ սպասված իրադարձությունը Երևանում տոնվեց մեծ հանդիսավորությամբ և նշվեց 101 թնդանոթային համազարկով:

Հայկական հարցի լուծումն, այնուամենայնիվ, կախված էր Անտանտի երկրների և Թուրքիայի միջև պայմանագիր կնքելուց: 1920 թ. փետրվար–մարտ ամիսներին Լոնդոնում դաշնակից տերությունների դեսպանների, ապա ***Սան Ռեմոյում*** (Իտալիա) ***ապրիլի 19–26–ը*** կայացած՝ տերությունների Գերագույն խորհրդի խորհրդաժողովներում քննարկվեց և վերջնականապես մշակվեց Թուրքիայի հետ կնքվելիք հաշտության պայմանագրի նախագիծը:

Հայկական հարցի քննարկումների կապակցությամբ Սան Ռեմո էին հրավիրվել հայկական պատվիրակությունների ղեկավարներ Ա. Ահարոնյանը և Պ. Նուբարը: Խորհրդաժողովում դժվարին քննարկումներ ծավալվեցին հատկապես Էրզրումի խնդրի շուրջ, որն անվտանգության տեսակետից անհրաժեշտ էր մտցնել Հայաստանի կազմի մեջ: Բայց Մեծ եղեռնի հետևանքով Էրզրումում հայություն գրեթե չէր մնացել: Խորհրդաժողովի մասնակիցներին հայտնի էր նաև, որ Թուրքիայում մեծ թափ էր հավաքել Մուստաֆա Քեմալի գլխավորած թուրք–ազգայնամոլական շարժումը, որն ուղղված էր նաև Արևմտյան Հայաստանում անկախ հայկական պետության ստեղծման դեմ: Դաշնակիցները, այնուամենայնիվ, հավանություն տվեցին Միացյալ Հայաստանի ստեղծմանը՝ հարցը շարունակելով կապել ԱՄՆ–ի կողմից Հայաստանի մանդատը ստանձնելու խնդրի հետ: Նման առաջարկով Գերագույն խորհուրդը Սան Ռեմոյից դիմեց ԱՄՆ–ի կառավարությանը և նախագահ ***Վուդրո Վիլսոնին:*** Վերջինիս՝ «որպես անկախ և անաչառ արբիտրի (իրա-

վարարի)», առաջարկվում էր որոշել հայ–թուրքական սահմանի հարցը:

1920 թ. ապրիլի 23–ին ԱՄՆ–ի կառավարությունը փաստացի (դե ֆակտո) ճանաչեց Հայաստանի Հանրապետությունը, իսկ նախագահ Վիլսոնը համաձայնեց ստանձնել Հայաստանի սահմանները որոշող իրավարարի առաքելությունը: Ճանաչումից անմիջապես հետո Սան Ռեմոյի խորհրդաժողովը վերջնականապես հավանություն տվեց Թուրքիայի հետ կնքվելիք հաշտության պայմանագրի նախագծին, որով նպաստավոր ընթացք էր տրվում Հայկական հարցին:

Հայաստանի մանդատը ստանձնելու և այնտեղ ամերիկյան զորքեր ուղարկելու խնդրի շուրջ ԱՄՆ–ում թեժ քննարկումներ ծավալվեցին 1920 թ. մայիսի վերջերից, երբ նախագահ Վիլսոնը հարցը պաշտոնապես մտցրեց Կոնգրես: Սակայն հունիսի 1–ին ԱՄՆ–ի Սենատը, հաշվի առնելով արտաքին գործերի կոմիտեի բացասական կարծիքը, մերժեց Վիլսոնի առաջարկը:

Սևրի պայմանագիրը և Հայաստանը: Սան Ռեմոյի կոնֆերանսի որոշումները դրվեցին ***1920 թ. օգոստոսի 10–ին Փարիզի արվարձան Սևրում*** Թուրքիայի հետ ստորագրված խաղաղության պայմանագրի հիմքում: Գլխավոր դաշնակից տերություններից (Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա, Իտալիա և Ճապոնիա), ինչպես նաև մի շարք այլ պետություններից բացի՝ Թուրքիայի սուլթանական կառավարության հետ պայմանագիրը ստորագրեց նաև Հայաստանը՝ ի դեմս պաշտոնական պատվիրակության նախագահ Ավետիս Ահարոնյանի: Վերջինս և Ազգային պատվիրակության ղեկավար Պողոս Նուբարը գլխավոր դաշնակից պետությունների հետ կնքեցին նաև լրացուցիչ պայմանագիր՝ փոքրամասնությունների իրավունքների, դիվանագիտական և առևտրական հարաբերությունների վերաբերյալ:

Սևրի պայմանագրի 433 հոդվածներից Հայաստանին ամբողջությամբ վերաբերում էին 6–րդ՝ «Հայաստան» բաժնի 88–93–րդ հոդվածները: Դրանց համաձայն՝ Թուրքիան ճանաչում էր Հայաստանը որպես ազատ և անկախ պետություն, երկու պետությունների միջև սահմանն անցնելու էր Էրզրումի, Տրապիզոնի, Վանի և Բիթլիսի վիլայեթներով: Սահմանի վերջնական որոշումը հանձնարարվում էր ԱՄՆ–ի նախագահին, իսկ կողմերը պարտավորվում էին ոչ միայն անվերապահ ընդունել ԱՄՆ նախագահի իրավարար որոշումը, այլև համաձայնել բոլոր այն միջոցառումներին, որոնք կառաջարկվեին՝ Հայաստանին դեպի Սև ծով ելք տալու և սահմանագծին հարող օսմանյան ցանկացած տարածքների ապառազմականացման վերաբերյալ: Թուրքական կողմը պարտավորվում էր իրավարար վճռի հրապարակման օրից հրաժարվել Հայաստանին հանձնված տարածքների նկատմամբ բոլոր իրավունքներից: Հայաստանի սահմաններն Ադրբեջանի և Վրաստանի հետ որոշվելու էին երեք պետությունների փոխհամաձայնությամբ, տարաձայ-

ՀԱՅԱՍՏԱՆԸ՝ ԸՍՏ ՍԵՎՐԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ


ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ
Հայաստանի Հանրապետության սահմանները 1920 թ. Մարտին
ՀՅ և Մոսքվայի միջև, սահմանները՝ ըստ ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնի իրավարար վճռի
Սովետական Հայաստանի՝ ՀՍՀ-ին անցնող տարածքը
49 700 կմ² (40 000 կմ²)
Սովետական Ռուսաստանի միավորների բրիգադները մտան Հայաստան
Սովետական Ռուսաստանի կողմնակիցների ապստամբությունը
ՀՍՀ-ին անցնող տարածքը
32 700 կմ² (15 000 կմ²)
49 700 կմ² (40 000 կմ²)
27 100 կմ² (15 000 կմ²)
34 000 կմ² (20 000 կմ²)
ՍԵՎ ԾՈՎ
ՎՐԱՍՏԱՆ
ՊԱՐՍԿԱՍՏԱՆ
ՏԱՇԻՐ
ՍԱՄՍԱՐ
ԱՂՋԱՆ
ԱՐԱՐԱՏՅԱՆ ԴԱՇՏ
ՍՈՒՐՄԱՆ
ՎԱՆԻ
ԱՐԱՐԱՏՅԱՆ
ՍԱՄՍՈՒՆ
ՄՈՒՇԻ
ՍԱՍՈՒՆ
ՄԱՐԴԱՍՏԱՆ

նությունների դեպքում սահմանագիծը նշելու էին գլխավոր դաշնակից տերությունները: Ինչ վերաբերում է Կիլիկիային, ապա Սևրի պայմանագրով չէր նախատեսվում այն մտցնել ստեղծվող հայկական պետության կազմի մեջ: Այնուամենայնիվ, կարծես իրականանում էր հայ ժողովրդի դարավոր երազանքը, արդարացի լուծում էր ստանում Հայկական հարցը, ստեղծվում էր միացյալ և անկախ Հայաստանը:

Հայության կողմից երկար սպասված Սևրի պայմանագիրը, ցավոք, կյանքի չկոչվեց: Պատճառներից գլխավորն այն էր, որ պայմանագիրը ստորագրած Թուրքիայի սուլթանական կառավարությունն այլևս փաստացի իշխանություն չուներ երկրում. իշխանությունը պատկանում էր Մուստաֆա Քեմալի գլխավորած Անկարայի կառավարությանը: Վերջինս ոչ միայն չճանաչեց Սևրի պայմանագիրը, այլև դիմեց դիվանագիտական ու ռազմական բոլոր միջոցներին՝ այն տապալելու համար: Իսկ դաշնակից տերություններից ոչ մեկը ճնշում չգործադրեց քեմալականների վրա՝ ընդունել տալու պայմանագրի դրույթները, ավելին՝ երբեմնի հակաթուրքական դիրքորոշումը փոխարինվեց քեմալականների հետ համագործակցելու և բոլշևիկյան Ռուսաստանի դեմ նրանց ուղղորդելու քաղաքականությամբ: Խորհրդային Ռուսաստանը, որը չէր մասնակցում (հրավիրված չէր) Փարիզի խորհրդաժողովին, նույնպես հանդես եկավ Սևրի պայմանագրի դեմ:

Այսպիսով՝ մեծ տերությունները հերթական անգամ ձախողեցին Հայկական հարցի գործնական լուծումը: Այնուհանդերձ, ***1920 թ. նոյեմբերի 22-ին***, երբ թուրք-հայկական պատերազմում պարտված Հայաստանը կանգնած էր անկման եզրին, ԱՄՆ նախագահ Վ. Վիլսոնը վերջապես հայտնեց իր իրավարար որոշումը Էրզրումի, Տրապիզոնի, Վանի և Բիթլիսի նահանգներում հայ-թուրքական սահմանագծի վերաբերյալ: Որոշման համաձայն՝ Միացյալ Հայաստանը պետք է ստանար Վանի և Բիթլիսի նահանգների երկու երրորդը, գրեթե ամբողջ Էրզրումի նահանգը, Տրապիզոնի նահանգի մեծ մասը՝ ներառյալ նավահանգիստը: Ընդհանուր առմամբ այդ տարածքը կազմելու էր մոտ 90 հազար քառ. կմ: Միավորվելով Հայաստանի Հանրապետության հետ, որի տարածքը 1920 թ. կեսերին կազմում էր ավելի քան 70 հազար քառ. կմ, հայկական միացյալ պետությունն ունենալու էր ավելի քան 160 հազար քառ. կմ ընդհանուր տարածք՝ ելք ունենալով դեպի Սև ծով:

Ինչպես Սևրի պայմանագիրը, այնպես էլ նրանից բխող՝ Վիլսոնի իրավարար որոշումը հայ-թուրքական սահմանի վերաբերյալ թեև չիրագործվեցին, սակայն միջազգայնորեն ճանաչվեցին Արևմտյան Հայաստանի նկատմամբ հայ ժողովրդի իրավունքները:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչո՞ւ և ե՞րբ գումարվեց Փարիզի խորհրդաժողովը: Հայկական կողմը ի՞նչ պատվիրակություններով էր ներկայացված: Ի՞նչ տարաձայնություններ կային նրանց միջև, և ինչպե՞ս լուծվեցին դրանք: Ի՞նչ պահանջներ էին ներկայացված համատեղ Հուշագրում:
2. Ե՞րբ և որտե՞ղ առաջին անգամ ընդունվեց Միացյալ և անկախ Հայաստան հռչակելու որոշումը: Ձեր կարծիքով ինչո՞ւ հենց այդ ժամանակ ընդունվեց հիշյալ որոշումը: Ի՞նչ արձագանք ստացավ 1919 թ. մայիսի 28–ի «Միացյալ Հայաստանի անկախության հռչակագրի ակտը»:
3. Ինչո՞ւ էր Հարբորդն առաջարկում Հայաստանի և Անդրկովկասի համար սահմանել մեկ ընդհանուր ամերիկյան մանդատ: Ինչո՞ւ Սենատը մերժեց Հայաստանի մանդատը ստանձնելու առաջարկը: Ներկայացրեք Սան Ռեմոյի կոնֆերանսի արդյունքները:
4. Ներկայացրեք Սևրի պայմանագրի՝ Հայաստանին վերաբերող բաժինը: Ինչո՞ւ Սևրի պայմանագիրը չիրագործվեց: Արդիական ի՞նչ նշանակություն ունի այս պայմանագիրը:
5. Գրե՛ք ռեֆերատ Սևրի պայմանագրի նշանակության վերաբերյալ:

§ 5. ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԻԼԻԿԻԱՅՈՒՄ ԵՎ ԿԻԼԻԿԻԱՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Հայկական լեգեոնը: Դեռ Առաջին աշխարհամարտի ժամանակ՝ 1916 թ. հոկտեմբերի վերջին, դիվանագետներ Մ. Սայքսի ու Ժ. Պիկոյի և Հայոց ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբարի միջև Լոնդոնում ձեռք բերված համաձայնությամբ ստեղծվել էր հիմնականում հայ կամավորներից բաղկացած ***Արևելյան (Հայկական) լեգեոնը***: Ֆրանսիական կառավարությունը հոգում էր լեգեոնի կազմավորման և ապահովման ծախսերը: Նախատեսվում էր պատերազմի հաղթական ավարտից հետո այն դարձնել Ֆրանսիայի հովանավորությամբ ստեղծվելիք Կիլիկիայի ինքնավար հանրապետության զինված ուժերի հիմքը:

Ֆրանսիական զորքերի կազմում Հայկական լեգեոնը հատկապես աչքի ընկավ Պաղեստինում՝ ***1918 թ. սեպտեմբերի 19–ի Արարայի ճակատամարտում***: Մարտի ելքը վճռվեց հոգուտ ֆրանսիական զորքերի՝ շնորհիվ հայ մարտիկների խիզախության:

Մուդրոսի զինադադարից հետո լեգեոնը տեղափոխվեց Կիլիկիա և զինագրավեց երկրամասի ռազմավարական կարևոր կետերը: 1918 թ. նոյեմբեր–դեկտեմբեր ամիսներին լեգեոնի կազմում կար չորս գումարտակ՝ բաղկացած ավելի քան 5000 զինվորներից: Սևրի պայմանագրի ստորագրումից հետո, երբ մեծ տերությունները սկսեցին զիջումների գնալ և մերձենալ քեմալական Թուրքիայի

հետ, ֆրանսիական իշխանությունները, հրաժարվելով Կիլիկիային ինքնավարություն տալու մտադրությունից, 1920 թ. օգոստոսին Հայկական լեգեոնը լուծարեցին: Դրանով կիլիկիահայերը զրկվեցին թուրք-քրդական հրոսակներից և քեմալական զորքերից պաշտպանվելու իրական հնարավորությունից:

Կիլիկիահայության դրությունը և ինքնապաշտպանական մարտերը: Մուդրոսի զինադադարից հետո Կիլիկիան զինագրավվեց անգլիական զորքերի կողմից, իսկ 1919 թ. նոյեմբերին նրանց փոխարինեցին ֆրանսիական զորամասերը: Ցեղասպանությունից մազապուրծ և տեղահանված կիլիկիահայերը սկսեցին վերադառնալ հայրենի օջախները: Արդեն 1920 թ. սկզբներին Կիլիկիայում ապրում էր ավելի քան 150 000 հայ: Սակայն տեղում հաստատված ֆրանսիական վարչությունը որևէ գործուն միջոց չձեռնարկեց հայերի անվտանգությունն ապահովելու համար: Տեղերում իշխանության գլուխ մնացած թուրք պաշտոնյաները և թուրք-քրդական զինված խաժամուժն առիթը բաց չէին թողնում հալածելու երկրամասի քրիստոնյաներին, այդ թվում՝ կիլիկիահայերին: Վերջիններիս համար առավել լուրջ սպառնալիք դարձավ քեմալական շարժումը: Քեմալականները շարունակեցին քրիստոնյաների բնաջնջման համիդյան և երիտթուրքական քաղաքականությունը: Օգտվելով առիթից, որ 1920 թ. սկզբներին ֆրանսիական իշխանությունները սկսել էին դուրս բերել զորքերը Կիլիկիայից, քեմալականները 1920 թ. ընթացքում կոտորեցին կամ բռնագաղթի ենթարկեցին տեղի տասնյակ հազարավոր հայերի:

Քեմալականների առաջին թիրախը դարձավ հայաբնակ ***Մարաշը***, ուր նրանք անակնկալ ներխուժեցին 1920 թ. հունվարի կեսերին: Հայերն ինքնապաշտպանության դիմեցին, մի քանի տասնյակ հայ լեգեոնականների շուրջը միավորվեցին տղամարդիկ, կանայք և պատանիները: Սակայն բացակայում էր ընդհանուր հրամանատարությունը, անբավարար էին զենքն ու զինամթերքը: Թուրքական կանոնավոր ուժերը սրի քաշեցին տեղի 12 000 հայերի: Փրկվածները՝ մոտ 8000 մարդ, ստիպված էին լքել հայրենի օջախները և տեղափոխվել Սիրիա: Քաղաքում կրակի մատնվեցին քրիստոնյաների բոլոր տները, ավերվեցին հայկական հինգ եկեղեցիները:

Մարաշում թուրքական վայրագությունների և հայերի կոտորածի մասին հայտնի էր դարձել դաշնակից երկրներին: «Կիլիկիայի սարսափների» պատասխանատվությունը դնելով Մ. Քեմալի և Կ. Պոլսի օսմանյան կառավարության վրա՝ դաշնակիցները, սակայն, գործնական որևէ քայլ չկատարեցին թուրքերի հարձակումները դադարեցնելու համար:

Մարաշից հետո թուրքերը հարձակվեցին ***Հաճընի*** և ***Այնթապի*** վրա: Հայրենի օջախներ էր վերադարձել 1915 թ. տարագրված հայերի մի մասը. Հաճընը՝ շուրջ 8 000, Այնթապ՝ 18 000 մարդ: Թուրքական կանոնավոր զորքերի դեմ կիլիկիահայության ինքնա-

պաշտպանությունն այստեղ կազմակերպված բնույթ կրեց:

Հաճընում ինքնապաշտպանության բարձրագույն խորհրդի նախագահն էր տեղի հայոց հոգևոր առաջնորդ ***Պետրոս Սարաճյանը***: Պաշտպանության ուժերի հրամանատար նշանակվեց սպա ***Սարգիս Ճեպկեճյանը***, նրա տեղակալն էր ***Կայծակ Արամը (Թերզյան)***: Կազմավորվեց 4 վաշտ՝ մոտ 1200 երկրապահներով, և 60 հոգուց կազմված հեծյալ գունդ: Ստեղծվեցին պաշտպանությունն ապահովող այլ մարմիններ: 1920 թ. մարտի կեսերին ինքնապաշտպանության ղեկավարները վճռականորեն մերժեցին թուրքական հրամանատարության կողմից ներկայացված անձնատուր լինելու վերջնագիրը և պատրաստվեցին պաշտպանության: Ապրիլի սկզբին թուրքերը շրջապատեցին քաղաքը, բայց հաճընցիները շարունակում էին դիմադրությունը: Կատաղի կռիվների ընթացքում հայերը լուրջ կորուստներ պատճառեցին հակառակորդին, առգրավեցին զենք ու զինամթերք: Հաճընի պաշտպանությունը տևեց մինչև 1920 թ. հոկտեմբերի կեսերը, երբ համալրված թուրքական ուժերը գրավեցին քաղաքը: Նրանք կոտորեցին շուրջ 6000 հայ բնակիչների:

Օգտվելով ֆրանսիական զորամասերի մասնակի նահանջից՝ 1920 թ. ապրիլի 1-ին քեմալական զորքերը պաշարեցին նաև ***Այնթապը***: Ինքնապաշտպանության կազմակերպիչներից էր քահանա ***Ներսես Թավուզճյանը***: Ստեղծվեց շուրջ 750 հոգուց բաղկացած զորախումբ, որը կապ հաստատեց Այնթապի ֆրանսիական կայազորի հետ: ***1920 թ. մայիսի 30-ին Անկարայում*** ստորագրված ֆրանս-թուրքական զինադադարով ֆրանսիական զորամասերը պետք է վերջնականապես հեռանային Այնթապից: Միայնակ մնալով թշնամու դեմ՝ հայերը չընկճվեցին և շարունակեցին հերոսական ինքնապաշտպանությունը: Հենց դրա շնորհիվ այնթապցիները խուսափեցին կոտորածից, իսկ 1921 թ. սկզբներին ստիպված լքեցին քաղաքը:

Կիլիկիահայության դրությունը գնալով աղետալի էր դառնում: Հայ ազգային-քաղաքական շրջանակները շարունակում էին ուղիներ որոնել Կիլիկիայում հայկական պետականությունը վերականգնելու համար: Այդ նպատակով ***1920 թ. օգոստոսի 4-ին*** Ադանայում հռչակվեց Կիլիկիայի ինքնավարությունը Ֆրանսիայի հովանու ներքո: Ստեղծվեց ինքնավարության կառավարություն՝ Հայոց ազգային պատվիրակությունում Կիլիկիայի լիազոր ներկայացուցիչ ***Միհրան Տամատյանի*** գլխավորությամբ: Սևրի պայմանագրով Կիլիկիայի հովանավորությունը ստանձնած Ֆրանսիան, սակայն, կտրականապես դեմ արտահայտվեց ինքնավարությանը: Ֆրանսիական վարչությունը սկսեց ճնշումներ գործադրել կիլիկիահայերի վրա և, հայտարարելով ռազմական դրություն, դադարեցրեց հայկական ինքնավարության գործունեությունը:

Ծանր և օրհասական էր հայության դրությունը նաև ***Զեյթունում*** ու

նրա շրջակայքում: 1919 թ. այստեղ բնակվում էր շուրջ 1200 հայ, որոնք ստեղծել էին ինքնապաշտպանության կոմիտեներ, կազմավորել զինված ջոկատներ: Հայությունը պարբերաբար ենթարկվում էր թուրքական հարձակումների: 1920 թ. գարնանը Զեյթունն ամբողջությամբ շրջափակվեց: Ուժերը թեև անհավասար էին, սակայն զեյթունցիները կարողացան որոշ ժամանակով անառիկ պահել հայրենի երկրամասը: Դրությունը փոխվեց 1921 թ. ամռանը, երբ թուրքական հրամանատարությունը պահանջեց վայր դնել զենքը և տեղափոխվել Մարաշ: Զեյթունցիների մի մասը ենթարկվեց պահանջին, իսկ մոտ 500-ը ապաստանեց քաղաքի զորանոցում և, շարունակելով դիմադրությունը, փորձեց ճեղքել պաշարումը: Հերոսական ջանքերի շնորհիվ պաշարվածների մի մասը դուրս եկավ շրջապատումից և փրկվեց:

1921 թ. հոկտեմբերի 20-ին Անկարայում կնքված ֆրանս-թուրքական պայմանագրով հայաթափված Կիլիկիան հանձնվում էր Թուրքիային. ֆրանսիական զորամասերը 2 ամսվա ընթացքում լքելու էին երկրամասը: Անպաշտպան մնացած կիլիկիահայության վերջին բեկորները ստիպված էին արտագաղթել հարևան արաբական երկրներ ու Եվրոպա: Մինչև 1923 թ. սկիզբը Կիլիկիայից հեռացան նաև շուրջ 6000 ուրֆահայեր: Դրանով փաստորեն ավարտվեց երկրամասի հայաթափումը:

Այսպիսով՝ կիլիկիահայերի հերոսական դիմադրության և ինքնապաշտպանական մարտերի շնորհիվ էր միայն, որ նրանց մի մասը կարողացավ խուսափել բնաջնջումից:

Հարցեր և առաջադրանքներ

1. Վերհիշեք Սայքս-Պիկոյի համաձայնագիրը: Երբ և ո՞ւմ միջև կայացած համաձայնությամբ ստեղծվեց Ազգային (Հայկական) լեգեոնը: Ինչ դերակատարություն ունեցավ լեգեոնը Կիլիկիայում: Ինչո՞ւ ֆրանսիացիները լուծարեցին այն:
2. Որքա՞ն հայեր վերադարձան Կիլիկիա: Ձեր կարծիքով ինչո՞ւ էր Ֆրանսիան երկդիմի քաղաքականություն վարում կիլիկիահայերի հանդեպ: Ինչ հետևանքներ դա ունեցավ:
3. Հիմնավորե՛ք, որ քեմալականներն իրոք հայերի ցեղասպանության սուլթանական և երիտթուրքական քաղաքականության շարունակողներն էին: Ներկայացրե՛ք կիլիկիահայության ինքնապաշտպանական մարտերը: Ֆրանսիան ո՞ր պայմանագրով Կիլիկիան զիջեց Թուրքիային:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՅՈՒԹ

Կիլիկիայի «անկախ» քրիստոնեական հանրապետության հռչակման մասին 1920 թ. օգոստոսի 4–ի հայտարարությունից

Հիմնվելով մանավանդ ամեն ժողովրդի՝ իր ճակատագիրը ինքը որոշելու անկապտելի իրավունքին վրա, որի աղբյուրն ունի ֆրանսական հեղափոխության աննման սկզբունքներուն մեջ, մենք հանդիսավորապես կը հայտարարենք, թե՝ Կիլիկիան այս օրեն սկսյալ ազատ երկիր մըն է՝ Թուրքիայեն բոլորովին անկախ, օժտված տեղական քրիստոնյա ինքնավարությամբ մը և դրված ֆրանսական հոգատարության ներքո…:

«Յուշամատեան Մեծ եղեռնի» (1918–1965), Բեյրութ, 1965, էջ 911

ԳԼՈՒԽ 3. ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԿՈՒՄԸ

§ 1. ՀԱՅԱՍՏԱՆԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ: ՔԵՄԱԼԱ–ԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Խորհրդային Ռուսաստանի արևելյան քաղաքականությունը: Քեմալական շարժումը և Հայաստանը: Ռուսաստանի կենտրոնական մասերում խորհրդային իշխանությունն ամրապնդելուց հետո բոլշևիկյան վարչակարգը ձեռնամուխ եղավ նախկին Ռուսական կայսրության տարածքները, այդ թվում՝ Անդրկովկասը սեփական ազդեցության ոլորտ վերադարձնելու քայլերին:

Կարմիր բանակի ուժերով 1920 թ. ապրիլի 28–ին խորհրդայնացվում է Ադրբեջանը: Խորհրդային Ռուսաստանին օժանդակում էր Մուստաֆա Քեմալի գլխավորած՝ Թուրքիայի նորաստեղծ Ազգային մեծ ժողովի կառավարությունը: Ազգային մեծ ժողովի անունից Քեմալը 1920 թ. ապրիլի 26–ին նամակով դիմել էր ՌՍԴԽՀ ժողկոմխորհի նախագահ Վ. Լենինին: Փաստաթղթում առաջարկվում էր դիվանագիտական սերտ հարաբերություններ հաստատել երկու երկրների միջև և ռազմական դաշինք կնքել ընդդեմ «իմպերիալիստական Արևմուտքի»: Նշվում էր նաև, որ քեմալականները պատրաստ են ռազմական գործողություններ ծավալելու «իմպերիալիստական Հայաստանի դեմ»:

1920 թ. հունվարի 28–ին ընդունված «Թուրքական ազգային ուխտ» կոչվող փաստաթղթում քեմալականները «բուն թուրքական տարածք» էին հռչակում Արևմտյան Հայաստանը և Կիլիկիան, ինչպես նաև Կարսը, Արդահանը և Բաթումը: Նշվում էր նաև, որ հայկական կազմակերպված համայնքի ստեղծումը (Արևմտյան Հայաստանում) կանխելը պետք է լինի յուրաքանչյուր թուրքի սրբազան գործը, իսկ Հայաստանի ոչնչացումը՝ առաջնահերթ խնդիրը:

Ադրբեջանի խորհրդայնացումից անմիջապես հետո 11–րդ Կարմիր բանակի ղեկավարությունը շտապեց

վերջնագրեր ներկայացնել Հայաստանի կառավարությանը՝ Ղարաբաղից և Զանգեզուրից հայկական զորքերը դուրս բերելու պահանջով: Հակառակ դեպքում սպառնում էին դրանք գրավել զենքի ուժով: Տարածաշրջանում գտնվող բոլշևիկ գործիչները՝ Գ. Օրջոնիկիձեի գլխավորությամբ, Մոսկվայից պահանջում էին անհապաղ թույլատրել ռազմական միջոցներով խորհրդայնացնել Հայաստանը և Վրաստանը: Սակայն ՌԿ(բ)Կ կենտկոմի քաղբյուրոյի 1920 թ. մայիսի 25-ի որոշումով հանձնարարվեց. «Շարունակել բանակցությունները Հայաստանի կառավարության հետ և չստանձնել ռուսական զորքերի օգնությամբ անմիջապես խորհրդայնացնելու նախաձեռնությունը»:

Այս որոշումը չէր վերաբերում Ռուսաստանի համար ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող Ղարաբաղ—Զանգեզուր—Նախիջևան հատվածին, որով նախատեսվում էր անմիջական ցամաքային կապ հաստատել քեմալական Թուրքիայի հետ: Ուստի 1920 թ. մայիս-օգոստոսին խորհրդային զորքերը զինագրավել էին հայկական այդ տարածքները: Մոսկվայի կողմից քեմալական Թուրքիան և Խորհրդային Ադրբեջանը դիտվում էին որպես «իմպերիալիստական Արևմուտքի» դեմ պայքարող ուժեր և մուսուլմանական Արևելքում «համաշխարհային սոցիալիստական հեղափոխության» գաղափարները տարածող «առաջամարտիկներ»:

Հայ-ռուսական հարաբերությունները: Խորհրդային Ռուսաստանը չէր շտապում ճանաչել Հայաստանի անկախությունը և դիվանագիտական կապեր հաստատել նրա հետ: Ավելին՝ Հայաստանը համարվում էր հակառակորդ երկիր:

Հարաբերությունները կարգավորելու նպատակով 1920 թ. մայիսին Մոսկվա գործուղվեց Հայաստանի պատվիրակությունը՝ ՀՀ խորհրդարանի փոխնախագահ Լևոն Շանթի գլխավորությամբ (անդամներ՝ Լևոն Զարաֆյան և Համբարձում Տերտերյան): Պատվիրակության առջև խնդիր էր դրված հասնելու Ռուսաստանի կողմից Հայաստանի Հանրապետության (Լեռնային Ղարաբաղով հանդերձ) անկախության ճանաչմանը, խորհրդային կողմի համար սկզբունքորեն ընդունելի դարձնելու Արևմտահայաստանի միացումը Հայաստանի Հանրապետությանը և այլն: Բանակցությունների նախնական փուլում խորհրդային պատվիրակությունը, հանձինս ՌՍԴԽՀ արտաքին գործերի ժողովրդական կոմիսար Գեորգի Չիչերինի և նրա հայազգի տեղակալ Լևոն Կարախանի, պատրաստակամություն էր հայտնում պայմանագիր կնքելու և բարեկամական հարաբերություններ հաստատելու երկու պետությունների միջև: Պայման էր դրվում, որ Հայաստանը հրաժարվի արևմտյան կողմնորոշումից, Հայկական հարցը դուրս բերի Սևրի խորհրդաժողովի օրակարգից և լուծումը փոխանցի խորհրդային կառավարությանը:

Հայ-ռուսական բանակցությունները Մոսկվայում կողմերի հակադիր

դիրքորոշումների պատճառով դրական արդյունք չտվեցին և ընդմիջվեցին: Հայկական իշխանությունների հետ կապեր հաստատելու և բանակցությունները վերսկսելու նպատակով տարածաշրջան ժամանեց Հայաստանում Խորհրդային Ռուսաստանի կառավարության լիազոր ներկայացուցիչ նշանակված Բորիս Լեգրանի գլխավորած պատվիրակությունը:

1920 թ. օգոստոսի սկզբին Թիֆլիսում վերսկսվեցին բանակցությունները: Դրանք ավարտվեցին ՌՍԴԽՀ և ՀՀ միջև օգոստոսի 10-ին ստորագրված համաձայնագրով. Ռուսաստանը ճանաչում էր Հայաստանի Հանրապետության անկախությունը: Իսկ ՀՀ-ն համաձայնեց, որ խորհրդային զորքերը ժամանակավորապես զբաղեցնեն Ղարաբաղը, Զանգեզուրը և Նախիջևանը՝ մինչև խնդրի վերջնական կարգավորումը: Հայաստանի իշխանությունները համաձայնագրին կարևոր նշանակություն չէին տալիս, այն համարում էին «ձևական», իսկ արևմտյան դաշնակիցներին վստահեցնում էին, որ իրենք «շարունակում են մնալ հակաբոլշևիկ»:

Նշված ժամանակաշրջանում Հայաստանի կառավարությունը երկրի ապագան կապում էր Սևրի պայմանագրի հետ՝ համոզված, որ եվրոպական դաշնակիցների ջանքերով հայերի սպասելիքներն անպայման իրականանալու են: Ցավոք, այդ համոզմունքը մղում էր տարածաշրջանում Ռուսաստանի դերի թերագնահատմանը: Դա այն դեպքում, երբ օր օրի ամրապնդվում էր քեմալա-բոլշևիկյան հակահայ գործակցությունը:

Գեներալ Նազարբեկյանը (կենտրոնում) ֆրանսիական բանակի սպայակազմի հետ

Քեմալա-բոլշևիկյան համագործակցությունը: 1920 թ. ամռանը Մոսկվայում ընթացող քեմալա-բոլշևիկյան բանակցություններում կողմերի տարաձայնությունները հիմնականում կապված էին թուրք-հայկական խնդրի հետ: Այդ բանակցություններն ավարտվեցին օգոստոսի 24-ին Մոսկվայում՝ կողմերի միջև նախաստորագրված «Սրտագին և անկեղծ բարեկամության» պայմանագրով: Խորհրդային Ռուսաստանը ճանաչում էր «Թուրքական ազգային ուխտը», խոստանում ֆինանսական օգնություն, զենքի ու զինամթերքի մատակարարումներ:

Քեմալա-բոլշևիկյան մերձեցումն ամրապնդվեց Կոմունիստական III ինտերնացիոնալի (Կոմինտերն) գործադիր կոմիտեի նախաձեռնությամբ ***1920 թ. սեպտեմբերի 1-8-ը Բաքվում*** հրավիրված՝ Արևելքի ժողովուրդների առաջին համագումարում: Վերջինիս պատվիրակների թվում էր Հայոց ցեղասպանության գլխավոր կազմա-

կերպիչներից և իրականացնողներից Էնվեր փաշան:

Համագումարում հնչած ելույթներում և ընդունված փաստաթղթերում Արևելքի ժողովուրդներին կոչ էր արվում «սրբազան պատերազմ» ծավալելու «միջազգային իմպերիալիզմի», այդ թվում՝ նրա «դաշնակից» Հայաստանի դեմ: Իրենց հերթին, համագումարին մասնակցող կոմունիստ հայ պատվիրակները հանդես եկան խորհրդային հանրապետությունների օգնությամբ Հայաստանը խորհրդայնացնելու կոչով:

Համագումարի կողմից կազմավորված «Քարոզչության և գործողության խորհուրդը» մշակեց և սեպտեմբերի 18-ին ընդունեց «Մերձավոր Արևելքի քաղաքական ներկա պահի մասին» բանաձև-փաստաթուղթը: Վերջինիս դրույթներն ամբողջությամբ ուղղված էին Հայաստանի Հանրապետության և հայ ժողովրդի դեմ: Առաջարկվում էր հնարավոր բոլոր միջոցներով օգնել քեմալականներին և Հայաստանի վրա վերջիններիս ռազմարշավի միջոցով նպաստել երկրի խորհրդայնացմանը: Համաձայն ծրագրի՝ Ռուսաստանից պահանջվում էր հարմար պահի «թուրք-հայկական նոր կոտորածները» կանխելու պատրվակով որպես փրկարար ու հաշտարար մտնել Հայաստան և այնտեղ հաստատել խորհրդային վարչակարգ:

Դավադիր այս ծրագրի երևան գալուց ընդամենը մի քանի օր անց քեմալական Թուրքիան, առանց պատերազմ հայտարարելու, լայնածավալ ռազմական գործողություններ սկսեց Հայաստանի դեմ: Միևնույն ժամանակ Խորհրդային Ռուսաստանն էլ աշխուժացրեց իր քաղաքականությունը Հայաստանի խորհրդայնացման ուղղությամբ:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչո՞ւ Խորհրդային Ռուսաստանը ավելի շուտ չէր ձեռնարկում կայսրության նախկին տարածքներն իր ազդեցության ոլորտը վերադարձնելու գործը: Անդրկովկասի հանրապետություններից ո՞րն առաջինը խորհրդայնացվեց և ե՞րբ: Ի՞նչ է պարունակում «Թուրքական ազգային ուխտ» փաստաթուղթը: Ի՞նչ նշանակություն ուներ Ռուսաստանի համար Ղարաբաղ—Զանգեզուր—Նախիջևան հատվածը: Ի՞նչ դեր էր նախատեսում Ռուսաստանը Խորհրդային Ադրբեջանի և քեմալական Թուրքիայի համար:
2. Բնութագրե՛ք Խորհրդային Ռուսաստանի և Հայաստանի Հանրապետության հարաբերությունները: Ի՞նչ նպատակով 1920 թ. մայիսին Մոսկվա գործուղվեց Հայաստանի պատվիրակությունը: Ի՞նչ խոչընդոտներ առաջացան Մոսկվայի բանակցությունների ժամանակ: Ինչո՞վ ավարտվեցին այդ բանակցությունները:
3. Ե՞րբ և ինչո՞վ ավարտվեցին խորհրդա-քեմալական բանակցությունները: Վերհանե՛ք խորհրդա-քեմալական մերձեցման պատճառները:

4. Երբ և որտեղ է կայացել Արևելքի ժողովուրդների առաջին համագումարը: Քեմալա–բոլշևիկյան ինչ դավադիր ծրագիր մշակվեց ընդդեմ Հայաստանի:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՅՈՒԹ

ՌՍԴԽՀ Ժողկոմխորհի նախագահ Վ. Լենինին՝ Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կառավարության անունից Մ. Քեմալի 1920 թ. ապրիլի 26–ի նամակից

Մենք պարտավորություն ենք ստանձնում միավորել մեր ողջ գործունեությունը և ռազմական բոլոր գործողությունները ռուսական բոլշևիկների հետ, որոնք նպատակ ունեն պայքարելու իմպերիալիստական կառավարությունների դեմ: … թուրքական կառավարությունը պատրաստ է ռազմական գործողություններ վարելու իմպերիալիստական Հայաստանի դեմ և պարտավորվում է ստիպել Ադրբեջանական Հանրապետությանը մտնել խորհրդային պետությունների շրջանակը:

Документы внешней политики СССР, т. II, Москва, 1958, с. 725–729

Արևելքի ժողովուրդների Առաջին համագումարի (1920 թ. սեպտեմբերի 1–8, Բաքու) կողմից կազմավորված Արևելքի ժողովուրդների Քարոզչության և գործողության խորհրդի նախագահության սեպտեմբերի 18–ի «Եզրակացությունից»՝ ուղղված Կոմինտերնի գործկոմի նախագահությանը և ՌԿ(բ)Կ կենտկոմին (պատճենը՝ ՌՍԴԽՀ արտգործժողկոմատին)

Ամեն գնով և հրատապ օգնել Թուրքիայում մարող ազգայնական շարժմանը, …դրան հնարավոր է հասնել միայն թուրքական ազգայնական զորքերի հետ դաշինքում Հայաստանի վրա հարձակման միջոցով: …Թուրքական զորքերը կսկսեն հարձակումը Հայաստանի վրա, իսկ մենք մեր ամբողջ մամուլով և հրապարակայնորեն Եվրոպայում ահավոր աղմուկ կբարձրացնենք հայ–թուրքական նոր կոտորածների և դրանք մեկընդմիշտ դադարեցնելու անհրաժեշտության մասին, այդ կոտորածներին վերջ տալու պատրվակով մեր զորքերը կմտնեն Հայաստան, … որտեղ կհաստատվի խորհրդային իշխանություն…

Արևելքում հեղափոխությունը փրկելու համար անհրաժեշտ են խորհրդային զորքերի անհապաղ հարձակումը Հայաստանի վրա և Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումը:

Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 113, գ. 3, գ. 7, թթ. 1–2 և շրջեթես – 3

§ 2. 1920 ԹՎԱԿԱՆԻ ԹՈՒՐՔ–ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Պատերազմի սկիզբը և ռազմական գործողությունների ընթացքը: 1920 թ. աշնան սկզբին Հայաստանը շարունակում էր մնալ ռազմաքաղաքական բարդ դրության մեջ: Հայաստանի գլխավոր «դաշնակիցները»՝ Անգլիան ու Ֆրանսիան, որ խրախուսում էին հայկական կողմին շարունակել պայքարը բոլշևիկների և քեմալականների դեմ, նախկինի պես միայն օգնության խոստումներ էին տալիս և գործնական որևէ քայլի չէին

Համո Օհանջանյան

դիմում Սևրի պայմանագիրը կյանքի կոչելու համար: Խորհրդային Ռուսաստանը սկսել էր համագործակցել քեմալականների հետ: Ավելին՝ օգոստոսին Մոսկվայում կայացած ռուս-թուրքական համաձայնությամբ խորհրդային կողմը փաստորեն արտոնել էր թուրքական զորքերի առաջխաղացումը մինչև Շահթախտի—Սարիղամիշ գիծը՝ ռուսական և քեմալական բանակների միջև անմիջական շփում հաստատելու նպատակով: Նախատեսվում էր Շահթախտիի և Սարիղամիշի երկաթուղային կայարաններով ապահովել Խորհրդային Ռուսաստանի ռազմական բեռնափոխադրումները Թուրքիա:

Հայաստանի նկատմամբ թշնամաբար էր տրամադրված նաև Խորհրդային Ադրբեջանը, իսկ հյուսիսային հարևան Վրաստանը, քեմալա-վրացական գաղտնի պայմանավորվածությունների համաձայն, թուրք-հայկական պատերազմի դեպքում պահպանելու էր չեզոքություն:

Քեմալական Թուրքիան Հայաստանի սահմաններին էր կենտրոնացրել 50-հազարանոց բանակ: Թուրքական Արևելյան ռազմաճակատի հրամանատարն էր գեներալ Քյազիմ Կարաբեքիրը: Հայկական բանակում կար շուրջ 40 հազար զինվոր, որի գլխավոր հրամանատարն էր գեներալ Թովմաս Նազարբեկյանը: Ռազմաճակատների հրամանատարներն էին Մովսես Սիլիկյանը և Դրաստամատ Կանայանը (Դրո), պատերազմի կեսից՝ նաև Սեպուհը:

Հայաստանի Հանրապետության վրա թուրքական լայնածավալ հարձակումը սկսվեց 1920 թ. սեպտեմբերի 23-ի լույս 24-ի գիշերը: Ռազմական գործողություններն ընթանում էին երկու՝ Կարսի և Սուրմալուի ռազմաճակատներով: Այդ պատերազմում, Մուստաֆա Քեմալի խոստովանությամբ, Թուրքիայի նպատակն էր «ոչնչացնել հայկական բանակն ու հայկական պետությունը»:

Պատերազմը սկսվելուն պես Հայաստանի կառավարությունն օրենք ընդունեց երկրում ռազմական դրություն մտցնելու մասին: Հայտարարվեց զինապարտների և պահեստայինների համընդհանուր զորակոչ, պատիժներ սահմանվեցին (ընդհուպ մինչև գնդակահարություն) դասալքության և այլ հանցագործությունների համար, ստեղծվեց Հայրենիքի փրկության կոմիտե: Երկիրը պաշտպանելու կոչով իշխանությունները սեպտեմբերի 30-ին դիմեցին Հայաստանի

բնակչությանը, հասարակական-քաղաքական կազմակերպություններին: Օգնության կոչ ուղղվեց նաև եվրոպական մեծ տերություններին և ԱՄՆ-ին, սակայն որևէ արձագանք չեղավ:

Թուրքերին հաջողվեց սեպտեմբերի 29-ին գրավել Սարիղամիշը և Կաղզվանը, ապա՝ Մերդենեկը: Մինչև հոկտեմբերի վերջին օրերը հայկական զինված ուժերը կարողացան համախմբվել և կասեցնել թուրքերի հետագա առաջխաղացումը:

Թուրք-հայկական պատերազմի վճռական փուլը սկսվեց հոկտեմբերի 28-ին Կարսի ճակատում թուրքական զորքերի կատաղի հարձակմամբ: Հայկական զորքը, որ թվապես զիջում էր թուրքականին, անձնազոհ դիմադրում էր, հակահարձակման փորձեր կատարում: Սակայն թշնամուն հաջողվեց կոտրել հայերի դիմադրությունը: Հոկտեմբերի 30-ին Կարս քաղաքն իր անառիկ թվացող ամրոցով հանձնվեց թուրքերին: Ցավոք, թույլ էր հայ զինվորականության բարոյահոգեբանական և մարտական պատրաստվածությունը: Բացի այդ՝ բոլշևիկների կազմալուծող գործունեությունը նույնպես թուլացրել էր հայկական բանակը: Հայկական զորքի մեծ մասին թեև հաջողվեց նահանջել, սակայն գերի ընկածներն էլ քիչ չէին: Նրանց թվում էին գեներալներ Դ. Բեկ-Փիրումյանը, Ք. Արարատյանը և այլք: Թշնամուն մնաց մեծ քանակությամբ զենք և զինամթերք: Ռազմագերիներն ու ձերբակալվածները աքսորվեցին Էրզրում: Նրանց մի մասը ոչնչացվեց:

Կարսի անկումը, որը մեր պատմության ողբերգական դրվագներից մեկն է, կանխորոշեց պատերազմի ելքը:

Պատերազմի ավարտը: Նոյեմբերի 7-ին Ալեքսանդրապոլի (Գյումրի) անկումից հետո Հայաստանի կառավարությունը ստիպված ընդունեց թուրքական հրամանատարության կողմից ներկայացված զինադադարի պայմանները: Սակայն հաջորդ օրը՝ նոյեմբերի 8-ին, քեմալականները ներկայացրին զինադադարի նոր՝ ավելի ծանր պայմաններ, որոնք, ըստ էության, կապիտուլյացիայի (անձնատվության) պահանջ էին: Նոյեմբերի 10-ին Հայաստանի կառավարությունը մերժեց զինադադարի թուրքական պահանջները և միջնորդության խնդրանքով պաշտոնապես դիմեց Խորհրդային Ռուսաստանին: Վերջինս նոյեմբերի 11-ին հանդես եկավ հայտարարությամբ, ուր պատրաստակամություն հայտնեց միջնորդի դեր ստանձնելու պատերազմող կողմերի միջև: Սակայն թուրքական կողմը մերժեց ռուսական միջնորդությունը և շարունակեց ռազմական գործողությունները:

Սթափ գնահատելով պատերազմում Հայաստանի անհուսալի դրությունը և ձգտելով կասեցնել թուրքերի սկսած հարձակումը դեպի երկրի խորքերը՝ Հայաստանի կառավարությունը նոյեմբերի 18-ին ընդունեց թուրքական հրամանատարության ներկայացրած զինադադարի պահանջները: Նույն օրը ռազմական գործողությունները դադարեցին:

Թուրք–հայկական պատերազմում Հայաստանի պարտությունը պայմանավորված էր քեմալա–բոլշևիկյան համագործակցությամբ, երկրի անկայուն ներքին իրավիճակով, ռազմաճակատում հայ բոլշևիկների քայքայիչ գործունեությամբ ու բարոյահոգեբանական ծանր դրությամբ:

Ստեղծված ծանր դրությունը 1920 թ. նոյեմբերի կեսերին երկրում առաջ բերեց ներքաղաքական վերաձևումների անհրաժեշտություն: Խորհրդարանի նոյեմբերի 23–ի արտակարգ նիստում քննարկվեց և ընդունվեց Հ. Օհանջանյանի կառավարության ներկայացրած հրաժարականը, նոր նախարարապետ ընտրվեց Սիմոն Վրացյանը: Կառավարության նոր կազմում ընդգրկված էին «ձախ» դաշնակցականներ և սոցիալիստ–հեղափոխականներ, որոնց մի մասը բնութագրվում էր որպես «ռուսական կողմնորոշման ջատագով» (Դրաստամատ Կանայան, Համբարձում Տերտերյան): 1920 թ. նոյեմբերի 25–ին թուրք–հայկական հաշտության երկկողմ բանակցություններ սկսվեցին թուրքական զորքերի կողմից զինագրավված Ալեքսանդրապոլում: Ս. Վրացյանի ղեկավարած կառավարությունը ծանր պայմաններում աշխատեց ընդամենը մեկ տասնօրյակ և դարձավ Հայաստանի առաջին հանրապետության վերջին կառավարությունը:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչ դիրք էին գրավել Հայաստանի նկատմամբ 1920 թ. նրա անմիջական հարևանները: Ինչ աշխատանքներ էր տանում Թուրքիան 1920 թ. աշնանը՝ նախապատրաստվելով պատերազմի: Երբ սկսվեց թուրքական բանակի հարձակումը Հայաստանի Հանրապետության վրա: Ըստ Մուստաֆա Քեմալի՝ ինչ նպատակ էր հետապնդում թուրքական հրամանատարությունը:
2. Երկրի պաշտպանությունն ամրապնդելու համար ինչ ձեռնարկեցին Հայաստանի իշխանությունները: Ինչո՞ւ Կարսը հանձնվեց թուրքերին:
3. Ինչո՞վ ավարտվեց թուրք–հայկական պատերազմը: Վերհանեք Հայաստանի պարտության պատճառները: Ինչպիսի՞ն էր Սիմոն Վրացյանի գլխավորած կառավարության կազմը: Որքա՞ն ժամանակ գործեց Հայաստանի առաջին հանրապետության վերջին կառավարությունը:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՅՈՒԹ

Հայաստանի քաղաքացիներին՝ հայրենիքը պաշտպանելու համար սրբազան կռվի ելնելու մասին ՀՀ կառավարության 1920 թ. հոկտեմբերի 1–ի դիմումից

Քաղաքացիներ, օրերը պատմական են, հիշեցեք 1918–ի օրերը, մի՛ թերեք Սարդարապատն ու Ղարաքիլիսեն, նոր հերոսությունների հրավեր է կարդացվում: Ի զեն, քաղաքացիներ, ի զեն, անվարան և առավել քան երբեք ինքնավստահ: …

Ի զեն, քաղաքացիներ, դեպի ռազմաճակատ, դեպի հաղթանակ:

Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 200, ց. 1, գ. 625, թ. 33

§ 3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՅՆԱՑՈՒՄԸ

Հայ-ռուսական բանակցությունները Երևանում: Թուրք-հայկական պատերազմում հայկական բանակի անհաջողությունները հնարավորություն էին տալիս Խորհրդային Ռուսաստանին ավելի վճռականորեն իրագործելու Հայաստանը խորհրդայնացնելու ծրագիրը:

Բորիս Լեգրանի գլխավորած խորհրդային պատվիրակությունը Թիֆլիսից Երևան է ժամանում հոկտեմբերի 11-ին և անմիջապես վերջնագրի բնույթ կրող հուշագիր ներկայացնում Հայաստանի կառավարությանը: Հայ-ռուսական բանակցությունները վերսկսելու մի շարք նախապայմաններ են առաջարկվում. Հայաստանը պետք է հրաժարվի Սևրի պայմանագրից, Ռուսաստանին ազատ տարանցման իրավունք վերապահի դեպի Թուրքիա, հարևանների հետ տարածքային վեճերի լուծման խնդիրը հանձնի Ռուսաստանի իրավասությանը և այլն: 1920 թ. հոկտեմբերի 14-ին ՌԿ(բ)Կ կենտկոմի քաղբյուրոն որոշում է Հայաստանում խորհրդային իշխանություն հաստատելու համար դիմել վճռական գործողությունների:

Հայ-ռուսական երևանյան բանակցությունները սկսվեցին հոկտեմբերի 13-ին: Նույն ամսվա 28-ին Ռուսաստանի կառավարության կողմից լիազորված Բ. Լեգրանի և Հայաստանի պատվիրակությունը ներկայացնող Լ. Շանթի, Հ. Տերտերյանի ու Լ. Զարաֆյանի միջև նախաստորագրվեց «Եզրափակիչ որոշման արձանագրություն» և դրան կից «Հաշտության պայմանագիր»: «Արձանագրությունում» կողմերը պարտավորվում էին հնարավորինս սեղմ ժամկետներում ստորագրել «Հաշտության պայմանագիրը»՝ հետևյալ պայմանները կատարելու դեպքում. Ռուսաստանի և Ադրբեջանի կառավարությունները պետք է ճանաչեին Հայաստանի իրավունքները Նախիջևանի և Զանգեզուրի նկատմամբ, իր հերթին՝ Հայաստանի կառավարությունը պետք է պարտավորվեր հրաժարվել Ղարաբաղի նկատմամբ պահանջներից և ընդուներ ՌՍԴԽՀ կառավարության բարեկամական օժանդակությունը՝ Թուրքիայի հետ տարածքային հարցերը լուծելու խնդրում (այն դեպքում, եթե թուրքական զորքերը հետ քաշվեին մինչև 1914 թ. ռուս-թուրքական նախկին սահմանը): Ռուսաստանը պարտավորվում էր Հայաստանին տրամադրել 2,5 մլն ռուբլի (ոսկով) վարկ:

Հայ-ռուսական դիվանագիտական փաստաթղթերը 1920 թ. նոյեմբերի 4-ին քննարկվեցին Ադրբեջանի կոմկուսի և ՌԿ(բ)Կ կենտկոմի կովկասյան բյուրոյի՝ Բաքվում հրավիրված համատեղ նիստում, որին մասնակցում էր նաև ՌՍԴԽՀ ազգությունների ժողկոմ Ի. Ստալինը:

Քննարկելով Բ. Լեգրանի զեկուցումը՝ նիստի մասնակիցները կտրականապես դեմ արտահայտվեցին Նախիջևանը և Զանգեզուրը Հայաստանին թողնելու նախապայմանին:

Ռուբեն Տեր-Մինասյան

Երևանում Լեգրանը և Ռուսաստանի մյուս լիազոր ներկայացուցիչ Մդիվանին նոյեմբերի 19-ին հանդիպում են Հայաստանի նախարարապետ Համո Օհանջանյանի և զինվորական նախարար Ռուբեն Տեր-Մինասյանի հետ: Բանակցությունների ընթացքում Ռուսաստանի ներկայացուցիչները համոզում են, որ խորհրդային միջնորդությունը կարող է իրական արդյունքներ տալ միայն Հայաստանում ռուսական բանակի առկայության պայմաններում, և որ քեմալականները «Ռուսաստանի հետ Հայաստանի համար չեն պատերազմի»: Խորհրդայնացումն ընդունելու դիմաց Ռուսաստանի ներկայացուցիչները խոստանում էին նպաստել Հայաստանի 1914 թ. սահմանների վերականգնմանը: Սա, փաստորեն, Հայաստանը խաղաղ ճանապարհով խորհրդայնացնելու պահանջ էր:

Հայաստանի խորհրդայնացումը: 1920 թ. աշնան վերջին Հայաստանի խորհրդայնացման գործընթացը մտավ եզրափակիչ փուլ: ՌԿ(բ)Կ կովկասյան բյուրոյի կողմից Բաքվում կազմավորված Հայաստանի Ռազմահեղափոխական կոմիտեն, բոլշևիկ Սարգիս Կասյանի նախագահությամբ, 11-րդ Կարմիր բանակից առանձնացված հայկական «Հատուկ գնդի» ուղեկցությամբ նոյեմբերի 29-ին Ադրբեջանից մտնում է Հայաստանի տարածք (Իջևան) և «ապստամբ աշխատավոր ժողովրդի կամքով ու ցանկությամբ» երկիրը հռչակում «Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն»: Իրականում Հայաստանը հռչակվում էր խորհրդային ոչ թե «ժողովրդի կամքով ու ցանկությամբ», ոչ թե ժողովրդական ապստամբության ճանապարհով, այլ փոքրաթիվ մի ուժի՝ Հայաստանի կոմունիստական կուսակցության և Հայհեղկոմի անունից:

Հայաստանի հյուսիսում Հայհեղկոմի և կարմիր զորքերի գտնվելու փաստը խորհրդային կողմը որպես ճնշում օգտագործեց Երևանում շարունակվող հայ-ռուսական բանակցություններում: Դեկտեմբերի 1-ին զումարված հանրապետության Խորհրդարանի, կառավարության և դաշնակցության բյուրոյի միացյալ նիստում ռուսական կողմի ներկայացրած խորհրդայնացման վերջնագիրը «որոշ պայմաններով» ընդունվում է, իսկ նախարարներ Դրաստամատ Կանայանին և Համբարձում Տերտերյանին հանձնարարվում է հա-

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍԽՀ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ (02.12.1920 Թ.)


ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ
Հայաստանի Հանրապետության սահմանները 1920 թ. մայիսին
Այլ պետությունների սահմանները
Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության սահմանները ու տարածքը ըստ 02.12.1920 թ. երևանի համաձայնագրի
Հայկական տարածքներ, որոնք նույն համանմանությամբով չունեն ընդգրկվելու ՀՍԽՀ կազմում
Լոռու «չեզոք գոտի»
ԹՈՒՐՔԻԱ
ՎՐԱՍՏԱՆ
ԱԶԱՐԲԱՅՋԱՆ
ԳԵՈՐԳԻԱ
ՀԱՅԱՍՏԱՆ
ԵՐԵՎԱՆ
Սևանա լիճ
Գեղարքունիքի գավառ
Զանգեզուրի գավառ
Նախիջևանի գավառ
Լոռու գավառ
Ալեքսանդրապոլ
Գյումրի
Ղարաքիլիսա
Ղազախ
Ղարաբաղ
Նուխի (Շաքի)
Ջուլֆա
Նախիջևան
Սուրմալու
Դարալագյազ
Զանգեզուր
Գորիս
Կապան
Մեղրի
Ագուլիս
Ջուլֆա
Ալիստան
Ալիստանի գավառ
Ալիստանի գավառ
Ալիստանի գավառ

մապատասխան համաձայնագիր ստորագրել Ռուսաստանի կառավարության ներկայացուցչի հետ: Ի կատարումն կառավարության հանձնարարականի՝ 1920 թ. դեկտեմբերի 2-ին Երևանում ստորագրվում է ութ կետից բաղկացած հայ-ռուսական համաձայնագիր: Հայաստանը հայտարարվում է «Սոցիալիստական Խորհրդային անկախ Հանրապետություն»: Նախկին կառավարությունը հեռանում է իշխանությունից: Մինչև Ռազմհեղկոմի ժամանումը Երևան իշխանությունն անցնում է զինվորական հրամանատարությանը՝ Դրոյի և ՌՍԴԽՀ կոմիսար Օ. Սիլինի համատեղ ղեկավարությամբ:

Հայ-ռուսական համաձայնագրի որոշ դրույթներ (տե՛ս լրացուցիչ նյութը) թեև հետագայում անտեսվեցին խորհրդային իշխանությունների կողմից, այնուհանդերձ, համաձայնագրի նշանակությունը թերագնահատել չի կարելի: Հայաստանի կառավարությունն առանց դիմադրության՝ խաղաղ ճանապարհով զիջեց իշխանությունը: Համաձայնագրով Խորհրդային Ռուսաստանը և Հայաստանը դառնում էին դաշնակից պետություններ: Պատահական չէր, որ այդ համաձայնագիրը Թուրքիայի հավանությանը չարժանացավ: Վերջապես՝ համաձայնագիրն իրավական հիմք տվեց Հայաստանի և Ռուսաստանի խորհրդային իշխանություններին՝ մերժելու և չընդունելու Ալեքսանդրապոլի թուրք-հայկական բանակցությունների արդյունքում դեկտեմբերի 3-ի գիշերը ստորագրված պայմանագիրը:

Երևանի հայ-ռուսական համաձայնագրի ստորագրումից և Հայաստանի խորհրդայնացումից մի քանի ժամ անց այլևս գոյություն չունեցող Հայաստանի առաջին հանրապետության կառավարության կողմից լիազորված հայկական պատվիրակությունը (ղեկավար՝ Ա. Խատիսյան) Ալեքսանդրապոլում ստորագրեց թուրք-հայկական հաշտության պայմանագիր: Պայմանագրով, տարածքային զգալի կորուստներից բացի, Հայաստանը կրելու էր նաև ներքին ինքնուրույնության որոշակի սահմանափակումներ: Երկիրը զրկվելու էր ընդհանուր պարտադիր զինվորական ծառայություն մտցնելու և բանակ պահելու իրավունքից, կարող էր ունենալ միայն 1500 հոգուց բաղկացած մի զորամաս՝ 8 թնդանոթով և 20 գնդացիրով: Բարեբախտաբար, Ալեքսանդրապոլի պայմանագիրը ստորագրման իսկ պահից օրինական չէր և մնաց լոկ որպես փաստաթուղթ:

Այսպիսով՝ Հայհեղկոմի 1920 թ. նոյեմբերի 29-ի «Հռչակագրով», ինչպես նաև դեկտեմբերի 2-ի Երևանի հայ-ռուսական համաձայնագրով Հայաստանում տեղի ունեցավ իշխանափոխություն: Հայոց պետականության պատմության մեջ Հայաստանի առաջին հանրապետությունն իր տեղը զիջեց երկրորդ՝ Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությանը (ՀՍԽՀ):

Այսպիսով՝ Խորհրդային Ռուսաստանի որդեգրած՝ Հայաստանը խորհրդայնացնելու քաղաքականության, քեմալա-բոլշևիկյան հակահայ համագործակցության, 1920 թ. թուրք-հայկական պատերազմում Հայաստանի պարտության, Խորհրդային Ադրբեջանի թշնամական, Հայաստանի արևմտյան դաշնակիցների դատապարտելի անգործության պայմաններում Հայաստանի խորհրդայնացումն անխուսափելի էր:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչ դիրք էին գրավել Խորհրդային Ռուսաստանի իշխանությունները Հայաստանի նկատմամբ 1920 թ. թուրք-հայկական պատերազմի ժամանակ: Հայ-ռուսական բանակցությունները վերսկսելու ինչ նախապայմաններ էր առաջարկում Լեգրանի պատվիրակությունը:
2. Երբ կայացան հայ-ռուսական երևանյան բանակցությունները: Հաշտության պայմանագիրը ստորագրելու համար ինչ պայմաններ էին առաջ քաշվում: Պայմանագրի նախագիծն ինչո՞ւ մերժվեց:
3. Երբ Հայաստանի ռազմահեղափոխական կոմիտեն մտավ Հայաստանի տարածք: Գնահատե՛ք 1920 թ. դեկտեմբերի 2-ին Երևանում կնքված համաձայնագիրը: Ձեր կարծիքով ինչո՞ւ Ա. Խատիսյանի պատվիրակությունը ստորագրեց Ալեքսանդրապոլի պայմանագիրը:
4. Պարզաբանե՛ք՝ արդյոք անխուսափելի էր Հայաստանի խորհրդայնացումը:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՅՈՒԹ

1920 թ. դեկտեմբերի 2-ին Երևանում «ՌՍԴԽՀԼ հազորներկայացուցչի և Հայաստանի կառավարության միջև» ստորագրված համաձայնագրից

Հոդված 1. Հայաստանը հայտարարվում է անկախ Սոցիալիստական Հանրապետություն:

Հոդված 2. Մինչև Հայաստանի խորհուրդների համագումարի հրավիրումը կազմավորվում է ժամանակավոր Ռազմահեղափոխական կոմիտե, որին անցնում է ամբողջ իշխանությունը Հայաստանում:

...

Հոդված 4. Հայկական բանակի հրամանատարական կազմը չի ենթարկվում որևէ պատասխանատվության այն գործողությունների համար, որոնք կատարել է բանակի կազմում մինչև Հայաստանում խորհրդային իշխանության հռչակումը:

Հոդված 5. Դաշնակցության և Հայաստանի մյուս սոցիալիստական կուսակցությունների անդամները չեն ենթարկվելու բռնությունների կուսակցական պատկանելության համար:

Сборник действующих договоров, Вып. 3, Москва, 1922, N 79, с. 14–15

ԲԱԺԻՆ 2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

ԳԼՈՒԽ 1. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ 1920–1922 ԹԹ.

§ 1. ՀԱՅԱՍՏԱՆԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԱՄԻՍՆԵՐԻՆ

Խորհրդային վարչակարգի հաստատումը: 1920 թ. դեկտեմբերի 6–ին Երևան մտան 11–րդ Կարմիր բանակի զորամասերը, և իշխանությունն ամբողջությամբ ստանձնեց ՀՍԽՀ Ռազմհեղկոմը՝ Սարգիս Կասյանի նախագահությամբ:

Նոր իշխանություններն անտեսեցին Երևանի դեկտեմբերի 2–ի հայ–ռուսական համաձայնագիրը և երկրում հաստատեցին միակուսակցական վարչակարգ: Խախտվեց Հեղկոմի կազմի վերաբերյալ համաձայնագրի վեցերորդ հոդվածը, համաձայն որի՝ կոմիտեն պետք է ձևավորվեր կոալիցիոն հիմունքներով՝ հինգ անդամ Հայկոմկուսից և երկու անգամ ձախ դաշնակցություն խմբակցությունից: Հայ բոլշևիկները մտադիր չէին իշխանությունը կիսելու քաղաքական որևէ ուժի հետ:

Ընդօրինակելով Խորհրդային Ռուսաստանի պետական իշխանության փորձը՝ Ռազմհեղկոմը ձևավորեց գործադիր իշխանության նոր մարմիններ՝ ժողովրդական կոմիսարիատներ: Իշխանության տեղական գործադիր մարմիններ էին հեղկոմները, որոնք նշանակվի էին և ժամանակավոր: Դրանք կազմակերպվեցին ըստ երկրի վարչական բաժանումների՝ գավառների, շրջանների (գավառակների) և գյուղերի: Հանրապետությունում նահանգների փոխարեն ձևավորվեցին 9 գավառ և 39 շրջան:

Հայաստանի կոմկուսի կենտկոմը տեղերում կազմավորված կուսակցական կազմակերպությունների միջոցով ծավալուն աշխատանք կատարեց երկրի բնակչությանը խորհրդային իշխանության կողմը գրավելու համար, քանի որ այդ պահին բոլշևիկները քիչ հեղինակություն ունեին Հայաստանում:

Երկրի կառավարման գործը Հայհեղկոմն իրականացնում էր ՀՍԽՀ ***Ներքին գործերի ժողկոմատի*** և Ռազմհեղկոմի նախագահ Ս. Կասյանի դեկտեմբերի 6–ի դեկրետով (օրենքով) հիմնված Արտակարգ հանձնաժողովի (ռուսերեն ՎՔ՝ Չրեզվիչայնայա կոմիսիա՝ Չեկա) միջոցով:

Խորհրդային Հայաստանում մինչև սեփական օրենքների ընդունումը գործելու էին ՌՍԴԽՀ օրենքները՝ Հայաստանի Հեղկոմի կողմից արված լրացումներով: Դատական հին հա-

մակարգը փոխարինվում էր ժողովրդական դատարաններով:

Ամբողջ այս համակարգն օգտագործվում էր Հայաստանում խորհրդային վարչակարգը հաստատելու և ամրապնդելու, ժողովրդին «գաղափարապես կոփելու» և «հեղափոխական» այլ միջոցառումներն իրականացնելու համար: Խորհրդային Ռուսաստանի օրինակով Հայաստանում հաստատված պետական իշխանության ձևը բոլշևիկները համարում էին «բանվորագյուղացիական», «պրոլետարիատի դիկտատուրա»:

Ռազմական կոմունիզմի քաղաքականությունը Հայաստանում: 1920 թ. դեկտեմբեր — 1921 թ. փետրվար ամիսներին Խորհրդային Հայաստանում իրականացվում էր ռազմական կոմունիզմի քաղաքականությունը, որն առաջին անգամ ստեղծվել և կիրառվում էր Խորհրդային Ռուսաստանում: Ռազմական կոմունիզմը տնտեսական միջոցառումների համակարգ էր, որում տեղ չունեին ազատ շուկայական հարաբերությունները: Կենտրոնական միջոցառումը պարենամատակարարումն էր՝ հացահատիկի և այլ մթերքների ու ապրանքների բռնագրավումը: Գյուղացուն մնալու էր այնքան հաց ու մթերք, որքան անհրաժեշտ էր սնվելու և սերմացուի համար, մնացածը բռնագրավվում էր պետության կողմից՝ քաղաքային բնակչության և Կարմիր բանակի պահանջները բավարարելու պատճառաբանությամբ:

1920 թ. դեկտեմբերի 8-ին հրապարակվում է Հայհեղկոմի՝ «Պարենային

Սարգիս Կասյան

մթերքների և այլ նյութերի հայտնաբերման մասին» հրամանը, իսկ դեկտեմբերի 10-ին ՀԿ(բ)Կ կենտկոմը հայ գյուղացիությանը կոչ է անում «առանց հապաղելու հաց տրամադրել Կարմիր բանակին»: Շուտով տեղական հեղկոմները դիմում են բռնագրավումների, ունևոր գյուղացիների ձերբակալությունների: Հեղկոմների օրինակով կարմիրբանակայինները նույնպես թալանում են ժողովրդական զանգվածներին:

ՀՍԽՀ իշխանությունները պետականացնում են բանկերը, գործարանները, խանութները, հոգևոր հաստատություններին պատկանող կրթամշակութային օջախները, երկրի բնական հարստությունները և այլն:

Ռազմական կոմունիզմի քաղաքականությունը չէր համապատասխանում Հայաստանի սոցիալ-տնտեսական պայմաններին: Այն կիրառվում էր հապճեպ, բազմաթիվ չարաշահումնե-

րով, առանց նկատի առնելու Հայաստանի առանձնահատկությունները, ուստիև ծանր հետևանքներ ունեցավ երկրի համար՝ խիստ սրելով իշխանություն–հասարակություն հարաբերությունները:

Քաղաքական բռնությունների ալիքը: Խորհրդային իշխանությունները Հայաստանում բռնություններ էին գործադրում հայկական բանակի սպայական կազմի, Հայաստանի նախորդ կառավարության ու ազգային կուսակցությունների անդամների, մտավորականության և, ընդհանրապես, այլախոհների նկատմամբ:

Խորհրդային իշխանությունները հանդուրժեցին, որ ՀՍԽՀ բանակի հրամանատարական պաշտոններում մնան հայկական նախկին բանակի սպաները: Անգամ այն փաստը, որ ՀՍԽՀ բանակի հրամանատարի պաշտոնում էր Դրոն, չէր կանխում հայկական բանակի սպաների նկատմամբ բոլշևիկների ծրագրած բռնությունները: Ավելին՝ անկախ ՀՍԽՀ բանակից 1920 թ. դեկտեմբերին Բաքվում տեղակայված 11–րդ Կարմիր բանակի Հատուկ բաժնի անմիջական ցուցումով հեռացվում և երկրից աքսորվում են հարյուրավոր սպաներ: Քաղաքական բռնությունների կիրառմանն ընդդիմանում էին մեղմ քաղաքականության կողմնակիցներ Ս. Կասյանը, Ա. Մռավյանը և Ա. Բեկզադյանը: Սակայն նրանց չի հաջողվում կանխել դեպքերի ընթացքը, և 1921 թ. հունվարի սկզբներից բռնությունները զանգվածային բնույթ են ստանում:

ՀՍԽՀ բանակի հրամանատարի պաշտոնից ազատվում է Դրոն: Նա հունվարի 11–ին մի խումբ հայ սպաների հետ պարտադրված լքում է Հայաստանի սահմանները: Հայաստանի Կարմիր բանակում ղեկավար պաշտոնների են նշանակվում բոլշևիկ ռուս սպաներ: Բռնությունների իրականացման գործում առավել աչքի է ընկնում արտակարգ լիազորություններով Հայաստան գործուղված չեկիստ Գևորգ Աթարբեկյանը: Նա պահանջում է առանց քննության անխտիր ձերբակալել բոլոր սպաներին: Աթարբեկյանի քաղաքական կոշտ գիծը պաշտպանում էին ՀԿ(բ)Կ կենտկոմի քարտուղար Գ. Ալիխանյանը, ՀՍԽՀ ռազմգործժողկոմ Ա. Նուրիջանյանը (Ավիս), ներգործժողկոմ Ի. Դովլաթյանը, Չեկայի նախագահ Ն. Այվազովը և այլք:

Խորհրդային իշխանության առաջին ամիսների ընթացքում աքսորի ենթարկվեցին հայկական բանակի ավելի քան 1000 սպաներ և զինծառայողներ: Աքսորվածների մեջ էին գեներալներ Թ. Նազարբեկյանը, Մ. Սիլիկյանը, Ա. Հովսեփյանցը, Ա. Բեյ–Մամիկոնյանը, զգալի թիվ էին կազմում նաև այլազգի (հիմնականում՝ ռուս) սպաները: Զինված պահակախմբի հսկողության տակ, ծաղրուծանակի և թալանի ենթարկվելով՝ նրանք ձմռան սառնամանիքին Երևանից ոտքով հասան Աղստաֆա կայարան՝ մոտ 170 կմ, այստեղից էլ գնացքով ուղարկվեցին Բաքվի բանտերը:

Մոտ 500 սպաներ, որոնց թվում էին նաև Ադրբեջանում և Վրաստանում ձերբակալվածները, աքսորվեցին Ռուսաստանի Ռյազան քաղաքի համակենտրոնացման ճամբարները: Հայկական բանակի սպաների նկատմամբ բոլշևիկների կողմից գործադրված բռնությունների հետևանքով բանակը կորցրեց փորձառու հրամանատարական կազմին և զրկվեց ազգային նկարագրից:

Սպաների աքսորից հետո այլախոհների դեմ բոլշևիկյան բռնությունները Հայաստանում ավելի սանձարձակ դարձան: 1921 թ. հունվարի վերջերին «ձախերի» ճնշման տակ Հայկոմկուսի պլենումը որոշում է անհաշտ պայքար ծավալել ՀՅԴ–ի դեմ, ձերբակալել և մեկուսացնել կուսակցության ղեկավարներին, նախկին կառավարության անդամներին: Կասյանը և Մռավյանը, դեմ լինելով բռնություններին, շարունակում էին պնդել, որ այդ քաղաքականությունը հղի է ծանր հետևանքներով, «բնակչության աչքում ոչ միայն հեղինակազրկում է խորհրդային իշխանությունը, այլև կարող է հանգեցնել անկազմակերպվածության և անիշխանության»: Սակայն 1921 թ. փետրվարի 1–ին ՌԿ(բ)Կ կենտկոմի Կովկասյան բյուրոյից հայ կոմունիստներին հայտնում են, որ «Քաղաքական իրադրությունը հրամայաբար պահանջում է անողոք պայքար մղել Դաշնակցություն կուսակցությանը լիակատար վերացնելու համար»:

Ջանգվածային ձերբակալություններից զերծ չի մնում նաև հայ մտավորականությունը: ՀՍԽՀ Չեկայի նորանշանակ նախագահ Ծ. Ամիրխանյանը փետրվարի 13–ին Հայհեղկոմի նախագահին ուղղված զեկուցագրում տեղեկացնում է, որ արդեն ձերբակալվել է 106 մարդ՝ խոստովանելով, որ «նրանցից շատերն անմեղ են»:

Ձերբակալվածների թվում էին նախկին վարչապետներ Հովհաննես Քաջազնունին և Համո Օհանջանյանը, խորհրդարանի անդամներ Նիկոլ Աղբալյանը, Լևոն Շանթը, զորահրամանատարներ Համազասպ Սրվանձտյանն ու Նիկոլայ Ղորղանյանը և ուրիշներ: Վերջին երկուսը մի քանի տասնյակ այլ քաղբանտարկյալների հետ սպանվեցին Երևանի բանտում:

Հայաստանում իրականացված բռնաձնշումները հասունացրին ապստամբական տրամադրություններ, և շուտով ժողովրդական լայն զանգվածները դիմեցին զենքի:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ձեր կարծիքով ինչո՞ւ խորհրդային իշխանությունը խախտեց դեկտեմբերի 2–ի համաձայնագիրը: Ներկայացրեք գործադիր իշխանության նոր համակարգը: Ի՞նչ դեր էր խաղում Հայաստանի կոմկուսը երկրի քաղաքական կյանքում:

2. Ինչո՞ւ և ե՞րբ հայ բոլշևիկները ՀՍԽՀ-ում կիրառեցին ռազմական կոմունիզմի քաղաքականությունը: Վերհանե՛ք այդ քաղաքականության դրսևորումները և հետևանքները:
3. Քաղաքական ի՞նչ բռնություններ և ո՞ւմ նկատմամբ կիրառվեցին: Ովքե՞ր էին քաղաքական այդ ուղղության կողմնակիցները: Ձեր կարծիքով կա՞ր անհրաժեշտություն՝ իրականացնելու քաղաքական բռնաձնշումներ:

§ 2. 1921 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐՅԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ

Ապստամբության պատճառները և սկիզբը: Հայաստանի խորհրդայնացումից ընդամենը երկուսուկես ամիս անց՝ 1921 թ. փետրվարի կեսերին, երկրում ապստամբություն բռնկվեց:

Ս. Կասյանը հետագայում պիտի խոստովաներ՝ Հայաստանի բնակչությունը, որն «աննկարագրելի խանդավառությամբ ընդունեց մեզ դեկտեմբերին, ընդամենը մեկ ամսվա անգործիմաց քաղաքականության և անիշխանության պայմաններում կտրուկ շրջվեց մեզնից և նորից նետվեց դաշնակների գիրկը»:

Բռնությունների քաղաքականությունից դժգոհ՝ ժողովրդի ապստամբ զանգվածները, որոնց թվում էին հարյուրավոր արևմտահայ գաղթականներ՝ գնդապետ ***Կուռո (Սուրեն) Թարխանյանի***, նախկին խմբապետներ ***Մարտիրոսի*** (Մարտիրոս Աբրահամյան), ***Խնկոյի, Սմբատի*** և այլոց գլխավորությամբ, մի քանի օրում տապալեցին տեղական հեղկոմների իշխանությունը: 1921 թ. փետրվարի 16–18-ը ապստամբությունն արագ ընդգրկեց ՀԽՍՀ կենտրոնական մի շարք շրջաններ՝ Կոտայքը, Թալինը, Բաշ Գյառնին (Գառնի), Դարալագյազը (Վայոց ձոր), Բաշ Ապարանը (Ապարան) և այլն: Ապստամբներն ընդհուպ մոտեցան Երևանին:

Խորհրդային իշխանությունները խուճապի մեջ էին: Փետրվարի 17-ին ՀՍԽՀ Կարմիր բանակի հրամանատարությունը հաղորդում էր Բաքու՝ 11-րդ բանակի ռազմհեղխորհրդին. «Հայկական բանակի մեծ մասն անցել է խռովարարների կողմը»: Ինչ վերաբերում է ռուսական զորամասերին, ապա դրանք դուրս էին բերվել երկրից հարևան Վրաստանի խորհրդայնացման նպատակով:

Փետրվարի 18-ին ապստամբ ուժերը, գրեթե չհանդիպելով լուրջ դիմադրության, մտան մայրաքաղաք Երևան: ՀՍԽՀ պետական և կուսակցական մարմիններն իրենց հավատարիմ բանակային զորամասերի ուղեկցությամբ, «Ազատամարտ» ու «Վարդան զորավար» զրահագնացքների պաշտպանության ներքո նախօրոք լքել էին Երևանը և հեռացել դեպի Ղամարլու (Արտաշատ)—Վեդի—Բասար (Արարատ): Հայտնվելով ապստամբների շրջափակման օղակում՝ նրանք օգնության խնդրանքով դիմեցին Խորհրդային Ռուսաստանին: Խորհր-

դային իշխանությունը պահպանվեց նաև Հայաստանի հյուսիսային և հյուսիսարևելյան շրջաններում՝ Համամլուում (Սպիտակ), Ղարաքիլիսայում (Վանաձոր), Դիլիջանում, Շամշադինում (Տավուշ):

1921 թ. Փետրվարյան ապստամբության հաղթանակի շնորհիվ Երևանի և այլ վայրերի բանտերից անմիջապես ազատվեցին բոլշևիկների կողմից ձերբակալված և խոշտանգված հարյուրավոր մարդիկ:

Հայրենիքի փրկության կոմիտեի քաղաքականությունը: Ապստամբության ընդհանուր ղեկավարությունը ստանձնեց դաշնակցությունը: Մայրաքաղաքում ստեղծվեց իշխանության նոր մարմին՝ Հայրենիքի փրկության կոմիտե (ՀՓԿ)՝ Առաջին հանրապետության վերջին վարչապետ Սիմոն Վրացյանի նախագահությամբ: Կոմիտեն իրեն համարում էր Հայաստանի կառավարություն, իսկ տեղերում իշխանությունն իրականացնում էին շրջանային և գյուղական փրկության կոմիտեները: Մինչև փետրվարի վերջը ՀՓԿ-ի իշխանությունը տարածվեց Հայաստանի կենտրոնական և հարավային շրջաններում՝ Էջմիածնում, Աշտարակում, Ախտայում (Հրազդան), Նոր Բայազետում (Գավառ): Շարունակում էր ինքնավար մնալ Սյունիք-Զանգեզուրը:

ՀՓԿ-ի առաջին իսկ հրամաններով ազդարարվեց Հայաստանում խորհրդային իշխանությունը տապալելու և անխտիր բոլոր բոլշևիկներին ձերբակալելու մասին: Գիտակցելով, որ անհնար է միայնակ դիմակայել բոլշևիկյան Ռուսաստանին, որն, անշուշտ, ձգտելու էր վերականգնելու խորհրդային իշխանությունը Հայաստանում, ՀՓԿ-ն փորձեց համագործակցություն հաստատել Վրաստանի մենշևիկյան իշխանությունների և Կովկասի ժողովուրդների հետ: Սակայն 1921 թ. փետրվարի 25-ին Վրաստանի խորհրդայնացումը կանխեց այդպես էլ չկայացած հայ-վրացական համագործակցությունը:

Հայրենիքի փրկության կոմիտեն օգնության խնդրանքով դիմեց մինչև անգամ քեմալականներին: Խնդրանքը, սակայն, արդյունք չտվեց. քեմալականները թեև խրախուսեցին հայերի հակախորհրդային գործողությունները, սակայն չաջակցեցին նրանց իրենց դաշնակիցների՝ բոլշևիկների դեմ պայքարում:

Քաղաքացիական կռիվների ընթացքը: Ապստամբության պարտությունը: Փետրվարյան ապստամբությունը ճնշելու և Հայաստանի տարածքում խորհրդային իշխանությունը վերահաստատելու գործի ղեկավարումն իրականացնում է ՌԿ(բ)Կ կենտկոմի կովկասյան բյուրոն: Վերջինիս ցուցումով Հայաստանի հյուսիսային և հյուսիսարևելյան շրջաններում, ուր պահպանվում էր խորհրդային իշխանությունը, փետրվարի 26-ին ստեղծվում է կառավարման նոր մարմին՝ Ղարաքիլիսա-Դիլիջան գավառների ռազմահեղափոխական կոմիտե՝ Գ. Աթարբեկյանի նախագահությամբ: Սակայն Ղամարլու—Վեդի—Բասարի ճակատում պաշարված խորհրդային ուժերի դրությունը խիստ ծանր էր.

Ալեքսանդր Միասնիկյան

սպառվում էին սննդամթերքի և ռազմամթերքի պաշարները: Արձագանքելով օգնության խնդրանքներին՝ Ռուսաստանի կառավարությունը հատկացնում է 150 հազար ռուբլի ոսկով: Ինքնաթիռով պաշարվածներին հասցված 47 կգ ոսկին օգտագործվում է Իրանից անհրաժեշտ ապրանքներ գնելու համար:

Եթե ապստամբական ուժերի և խորհրդային զորքերի միջև ռազմական գործողությունների առաջին շրջանն ընթանում էր կողմերի փոփոխակի հաջողություններով, ապա Վրաստանում և Ադրբեջանում գտնվող կարմիրբանակային հիմնական զորամասերի՝ Հայաստան վերադառնալուց հետո ապստամբների վիճակը ծանրանում է:

Կարմիր բանակի Ռազմհեղխորհրդի անդամ Գ. Օրջոնիկիձեն, ձգտելով խուսափելու արյունահեղությունից, մարտի 20-ին դիմադրությունը դադարեցնելու վերջնագիր է ներկայացնում ՀՓԿ-ին: Օրջոնիկիձեի միջնորդությամբ մարտի 21-ին դիվանագիտական առաքելությամբ Թիֆլիսից Երևան է ժամանում հայ մեծանուն բանաստեղծ Հովհաննես Թումանյանը: Սակայն Օրջոնիկիձեի վերջնագիրը մնում է անպատասխան, իսկ Թումանյանի առաքելությունը՝ անարդյունք: Ուստի 1921 թ. մարտի 25-ից Խորհրդային Ռուսաստանի 11-րդ Կարմիր բանակի զորամասերն անցնում են վճռական հարձակման:

Ապրիլի 2-ին 11-րդ Կարմիր բանակի զորամասերը մտնում են Երևան: Շրջափակման մեջ չհայտնվելու, ավելորդ զոհեր չտալու համար ապստամբները մայրաքաղաքում դիմադրություն չեն ցուցաբերում տալիս և Հայրենիքի փրկության կոմիտեի գլխավորությամբ Բաշ Գյառնիով ու Դարալագյազով նահանջում են դեպի Զանգեզուր: Նահանջի միջանցքի անվտանգությունն ապահովել էին Գարեգին Նժդեհի զինված ուժերը:

Բոլշևիկյան ուժերը ճնշեցին Փետրվարյան ապստամբությունը և Հայաստանում (բացի Զանգեզուրից) վերահաստատեցին խորհրդային իշխանությունը: Նրանց թիկունքին կանգնած էր Խորհրդային Ռուսաստանը:

Փետրվարյան ապստամբությունը թեև պարտություն կրեց, սակայն սթափեցնող ներգործություն ունեցավ խորհրդային իշխանությունների վրա, ստիպեց առավել զգուշորեն գործել Հայաստանում: Հասարակության մեջ հանդուրժողականության մթնոլորտ

ստեղծելու նպատակով Հայհեղկոմի 1921 թ. ապրիլի 24–ի դեկրետով ապստամբության բոլոր մասնակիցներին, այդ թվում՝ ղեկավարներին, ներում շնորհվեց: Խորհրդային իշխանությունները ձեռնամուխ եղան նաև հայկական բանակի աքսորված սպաներին ազատ արձակելու և հայրենիք վերադարձնելու գործին: Վճռական քայլեր ձեռնարկվեցին երկրի սոցիալ–տնտեսական դրությունը բարելավելու ուղղությամբ:

Անցումը նոր տնտեսական քաղաքականությանը և արտաքին օգնությունը: Հայաստանում խորհրդային իշխանությունն ամրապնդելու նպատակով 1921 թ. գարնանը Հայաստան գործուղվեցին մի շարք փորձառու և հեղինակավոր պետական–կուսակցական գործիչներ՝ ***Ալեքսանդր Մյասնիկյանի*** և ***Սարգիս Լուկաշինի (Սրապիոնյան)*** գլխավորությամբ: Մայիսի 21–ին Հայհեղկոմը վերակազմավորվեց ՀՍԽՀ Ժողովրդական կոմիսարների խորհրդի՝ Ժողկոմխորհի, որի նախագահ և միաժամանակ ռազմական գործերի ժողկոմ նշանակվեց Ա. Մյասնիկյանը: Ս. Լուկաշինը դարձավ ՀՍԽՀ Ժողովրդական տնտեսության խորհրդի (ԺՏԽ) նախագահ և ընտրվեց ՀԿ(բ)Կ կենտկոմի քարտուղար: Ռազմական կոմունիզմի կործանարար քաղաքականության հետևանքով ավերված տնտեսության հետագա անկումը կասեցնելու գործում նշանակալի դեր խաղաց ***նոր տնտեսական քաղաքականությունը (նէպ)***: Այն մշակվել և ընդունվել էր Ռուսաստանում 1921 թ. մարտին տեղի ունեցած ՌԿ(բ)Կ 10–րդ համագումարի կողմից (տես նաև Բաժին 2. Գլուխ 2. § 1):

Հայաստանում անցումը նէպին տեղի ունեցավ աստիճանաբար: Հայհեղկոմի 1921 թ. ապրիլյան դեկրետներով արգելվեցին բոլոր տեսակի բռնագրավումները, սահմանվեց առևտրի և գների ազատականացում: ՀՍԽՀ Ժողկոմխորհի 1921 թ. հունիսի 24–ի հրամանով մտցվեց պարենհարկը:

Տնտեսական նոր քաղաքականությունը և երկրում հաստատված կայունությունը սոցիալ–տնտեսական խոր ճգնաժամը հաղթահարելու հնարավորություններ ընձեռեցին: Սակայն դա առանց արտաքին օգնության ծանր կլիներ:

1921 թ. գարնանից սկսած՝ Ռուսաստանի կառավարությունը գործուն միջոցներ ձեռնարկեց Խորհրդային Հայաստանին օգնություն հատկացնելու ուղղությամբ: Մինչև 1922 թ. սկիզբը ՀՍԽՀ–ն Ռուսաստանից ստացավ 3,5 միլիոն ռուբլի (ոսկով) և 2 միլիոն 895 հազար փութ կենսամթերք ու նավթամթերք, նաև խիստ անհրաժեշտ այլ ապրանքներ:

Արտաքին օգնության կազմակերպման գործում նշանակալից դերակատարում ունեցավ 1921 թ. սեպտեմբերին Երևանում հիմնված ***Հայաստանի օգնության կոմիտեն (ՀՕԿ)***, որի առաջին նախագահն էր բանաստեղծ ***Հովհաննես Թումանյանը:***

1920–1922 թթ. Հայաստանի բնակչությանը մեծ ծավալների մարդասիրական օգնություն էին տրամադրում

խորհրդային հանրապետությունում իրենց գործունեությունը շարունակող՝ Մերձավոր Արևելքում ամերիկյան և անգլիական նպաստամատույց կոմիտեները (Ամերկոմ, Անգլկոմ): Ամերկոմը Հայաստանում պահում էր 69 որբանոց, մի քանի տասնյակ հանրակրթական և արհեստագործական դպրոցներ: Կոմիտեները նյութական ամենամսյա օգնություն էին տրամադրում նաև տարածաշրջանում սփռված հարյուրհազարավոր արևմտահայ գաղթականներին: Անգլկոմի միջոցներով Միջագետքից Հայաստան տեղափոխվեցին մի քանի հազար հայ գաղթականներ:

1922 թ. վերջին նէպի և արտաքին օգնության շնորհիվ Հայաստանում գրեթե հաղթահարված էր սովը, վերականգնվում էին գյուղատնտեսությունն ու արդյունաբերությունը: Աշխուժանում էր մշակութային և գիտակրթական կյանքը:

Հարցեր և առաջադրանքներ

1. Պարզաբանեք Փետրվարյան համաժողովրդական ապստամբության պատճառները: Ովքե՞ր գլխավորեցին ապստամբությունը: Իշխանության ի՞նչ նոր մարմին ստեղծվեց: Նկարագրե՛ք ապստամբության ընթացքն ու ավարտը: Ինչո՞ւ այն պարտություն կրեց: Ի՞նչ նշանակություն ունեցավ Փետրվարյան ապստամբությունը:
2. Ե՞րբ ստեղծվեց ՀՍԽՀ Ժողկոմխորհը, ո՞վ գլխավորեց այն: Վերհիշե՛ք՝ ինչ էր նէպը: Հայաստանում ե՞րբ սկսվեց անցումը նէպին: Ձեր կարծիքով Խորհրդային Հայաստանը առանց արտաքին օգնության կարո՞ղ էր հաղթահարել ներքին ծանր վիճակը: Ո՞ր երկրները և ի՞նչ կազմակերպություններ էին օգնում Խորհրդային Հայաստանին:

§ 3–4. ՀՍԽՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ

Հայաստանի առաջին հանրապետությունից խորհրդային հանրապետությանն անցել էր հարևան չորս երկրներից երեքի՝ Թուրքիայի, Ադրբեջանի և Վրաստանի հետ տարածքային–սահմանային չլուծված խնդիրների «ժառանգությունը»: Բացառություն էր Իրանը, որի հետ սահմանային վեճեր չկային, և հաստատվել էին բարիդրացիական հարաբերություններ: Քեմալական Թուրքիայի կողմից բռնազավթված հայկական տարածքների հարցը որոշվելու էր ապագայում գումարվելիք խորհրդա–թուրքական կոնֆերանսում: Հայ–ադրբեջանական վիճելի տարածքներ էին համարվում Զանգեզուրը, Լեռնային Ղարաբաղը (Արցախը) և Նախիջևանը, իսկ հայ–վրացական՝ Լոռին և Ջավախքը՝ Ախալքալաքի գավառը: Հայ կոմունիստները փորձում էին հասնել սահմանների խնդրի արդարացի լուծ-

մանը, սակայն վճռորոշ եղավ Խորհրդային Ռուսաստանի դիրքորոշումը:

Լոռու և Ջավախքի հիմնախնդիրը: Հայաստանի խորհրդայնացումով նպաստավոր իրավիճակ էր ստեղծվել հայ-վրացական տարածքային խնդիրներից մեկը՝ ***«Լոռու չեզոք գոտու»*** խնդիրը, ՀՍԽՀ օգտին լուծելու համար: Հայաստանի խորհրդայնացումից հետո, երբ քեմալական զորքերի՝ Լոռի ներխուժելու վտանգը վերացել էր, Հայհեղկոմը Վրաստանի իշխանություններից պահանջեց վրացական զորքերը դուրս բերել «չեզոք գոտուց», սակայն ապարդյուն: Վրացական կողմը ձգտում էր Լոռին բռնակցելու Վրաստանին: Հայ-վրացական տարածքային վեճը հայտնվում է Խորհրդային Ռուսաստանի ուշադրության կենտրոնում: Հրատապ էր դարձել նաև Վրաստանի խորհրդայնացման հարցը, որի լուծման սկիզբն էր լինելու ՌԿ(բ)Կ կովկասյան բյուրոյի և ՀՍԽՀ իշխանությունների կողմից Լոռիում վրացական զինագրավման դեմ կազմակերպված ապստամբությունը: Այն ղեկավարելու համար Ղարաքիլիսայում (Վանաձոր) կազմավորված սպայակույտի պետ է նշանակվում ՀՍԽՀ ռազմգործժողկոմի տեղակալ Հովսեփ Լազյանը: Սպայակույտին կից կազմավորվում է Ղարաքիլիսայի հատուկ նշանակության ջոկատը (Լոռու պարտիզանական գունդ):

Ապստամբությունը սկսվում է 1921 թ. փետրվարի 11-ի լույս 12-ի գիշերը, երբ ***Արտաշես Ստեփանյանի*** գլխավորությամբ մի խումբ հայ պարտիզաններ ականազերծում են Շահալիի (Վահագնի) երկաթուղային կամուրջը: Ապստամբ խմբերին շուտով օգնության են հասնում հայկական և 11-րդ Կարմիր բանակների հեծելազորային գումարտակները: Եռօրյա համառ մարտերից հետո՝ փետրվարի 15-ին, ամբողջ «չեզոք գոտին» ազատագրվում է 7-հազարանոց վրացական զորամիավորումից: Գերի են ընկնում շուրջ 3 հազար զինվոր և սպա, առգրավվում է մեծ քանակությամբ զենք և զինամթերք: Լոռիում հաստատված խորհրդային իշխանությունն այսուհետ ենթարկվելու էր Խորհրդային Հայաստանին: Լոռու ազատագրումը հայ բնակչության միահամուռ ցանկությունն էր:

Ապստամբության հաղթական ավարտը հնարավորություն է ընձեռում Ռուսաստանին շարունակելու վճռական գործողությունները Վրաստանը խորհրդայնացնելու ուղղությամբ: Կոտրելով վրացական զորքերի դիմադրությունը՝ ***1921 թ. փետրվարի 25-ին*** ռուսական Կարմիր բանակի զորամասերը մտնում են Թիֆլիս: Մինչև մարտի կեսերը խորհրդային կարգեր են հաստատվում ամբողջ Վրաստանում:

Հայ-վրացական հարաբերություններում մեկ այլ տարածքային վիճելի հարց էր հայկական ***Ջավախքի*** խնդիրը: 1921 թ. փետրվարի վերջին և մարտի սկզբին Ախալքալաքի գավառը ենթարկվել էր քեմալական Թուրքիայի հարձակմանը, ինչը նոր զրկանքներ էր պատճառել ջավախահայությանը: Նրանց նկատմամբ շարունակվում էր նաև վրացական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍԽՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԸ 1921–1936 ԹԹ.

իշխանությունների խտրական քաղաքականությունը: Ստեղծված իրավիճակը ստիպում էր հայությանը պայքարել ՀՍԽՀ-ին միանալու համար: Վերջինիս իշխանությունները նույնպես խնդիրը բարձրացնելու առիթը բաց չէին թողնում:

1921 թ. հունիսի 25-ից 27-ը Թիֆլիսում ՌԿ(բ)Կ կովկասյան բյուրոյի որոշումով հրավիրված Անդրկովկասի հանրապետությունների ներքին սահմանները որոշելու հանձնաժողովի անդրանիկ նիստում Հայաստանի միակ ներկայացուցիչ ***Ա. Բեկզադյանն*** առաջարկում է ի թիվս Լոռու և Լեռնային Ղարաբաղի՝ ՀՍԽՀ-ին միացնել նաև գերազանցապես հայաբնակ Ախալքալաքի գավառը: Առա-

ջարկը, սակայն, կտրականապես մերժվում է հանձնաժողովի ադրբեջանցի և վրացի ներկայացուցիչների կողմից: Վրաց–ադրբեջանական հակահայկական գործակցությանն աջակցում էր նաև հանձնաժողովի նախագահ, Ռուսաստանի ներկայացուցիչ Ս. Կիրովը: Ստեղծված իրավիճակը ստիպում է Ա. Բեկզադյանին հրաժարվել հանձնաժողովի աշխատանքներին իր հետագա մասնակցությունից և պնդել, որ վիճելի բոլոր հարցերը փոխանցվեն Կովկասյան բյուրոյի պլենումի քննարկմանը:

Լոռու «չեզոք գոտու», ինչպես նաև Ախալքալաքի ու Խրամի (Ծալկայի) հայ–վրացական վիճելի տարածքների խնդիրն իր հանգուցալուծումը ստացավ Թիֆլիսում ***1921 թ. հուլիսի 2–7–ը*** գումարված ՌԿ(բ)Կ կենտկոմի կովկասյան բյուրոյի պլենումի հուլիսի 7–ի նիստում: Որոշվեց «Լոռու չեզոք գոտին» թողնել Հայաստանի կազմում, իսկ Ախալքալաքի և Խրամի շրջանների հարցը փոխանցել Վրաստանի կոմկուսի կենտկոմի քննարկմանը: Վերջինս հուլիսի 16–ին հաստատեց Լոռու մասին Կովկասյան բյուրոյի որոշումը: Հաշվի առնելով Ախալքալաքի և Խրամի շրջանների տնտեսական կապվածությունը Թիֆլիսի հետ՝ Վրաստանի կոմկուսի կենտկոմը այդ գավառների զիջումը Խորհրդային Հայաստանին համարեց աննպատակահարմար: Հայ–վրացական սահմանազատման մասին վերջնական համաձայնագիրը ստորագրվեց ***1921 թ. նոյեմբերի 6–ին*** Թիֆլիսում ՀՍԽՀ ժողկոմխորհի նախագահ Ա. Մյասնիկյանի և Վրաստանի հեղկոմի նախագահ Պ. Մդիվանու կողմից: Լոռին, բացառությամբ սահմանամերձ հայաբնակ մի քանի գյուղերի (Աղ–Քյորփի, Օփրեթ, Խոժոռնի և այլն), մնում էր Խորհրդային Հայաստանի, իսկ պատմական Ջավախքը՝ Վրաստանի կազմում:

Հետագա տարիներին հայկական կողմը փորձեց Ջավախքի և Հյուսիսային Լոռու հայության համար հասնել Վրաստանի կազմում գոնե տարածքային ինքնավարության, սակայն հաջողություն չունեցավ:

Զանգեզուրի, Լեռնային Ղարաբաղի և Նախիջևանի հիմնախնդիրը: Տարածքային սահմանազատման հարցերում առավել խոր հակասություններ գոյություն ունեին Հայաստանի և Ադրբեջանի միջև հարաբերություններում: Հայաստանի խորհրդայնացման կապակցությամբ Խորհրդային Ադրբեջանի հեղկոմը 1920 թ. նոյեմբերի 30–ին թեև հանդես էր եկել «Լեռնային Ղարաբաղը, Զանգեզուրը և Նախիջևանը Խորհրդային Հայաստանի Հանրապետության մաս ճանաչելու» հայտարարությամբ, սակայն հետագայում ոչ միայն հրաժարվեց իր իսկ հայտարարությունից, այլև գործի դրեց բոլոր միջոցները հայկական երկրամասերն Ադրբեջանին բռնակցելու համար:

Զանգեզուրցիների հերոսական պայքարի շնորհիվ ռուս–թուրք–թաթարական զորքերի զինագրավումից ազատագրված ***Զանգեզուրի երկրամասը*** Հայաստանի խորհրդայնացումից հետո պահպանում էր ինքնուրույնությունը: Թերահավատորեն

վերաբերվելով Խորհրդային Ադրբեջանի հեղկոմի՝ վերը նշված հայտարարությանը, ինչպես նաև այն փաստին, որ 1920 թ. դեկտեմբերի 2-ի Երևանի համաձայնագրով Խորհրդային Ռուսաստանը նույնպես Զանգեզուրը ճանաչել էր ՀՍԽՀ կազմում՝ ***դեկտեմբերի 25-ին Սյունիքի Տաթևի վանքում*** հրավիրված համազանգեզուրյան համագումարը երկրամասը հռչակեց ***«Ինքնավար Սյունիք»***, բանի դեռ քաղաքական իրադրությունը հնարավորություն չէր ընձեռել Հայաստանի Հանրապետությանը միանալու համար: Սյունիքի սպարապետ նշանակվեց երկրամասի ինքնապաշտպանական ուժերի գլխավոր հրամանատար ***Գարեգին Նժդեհը:***

Խորհրդային իշխանությունները Զանգեզուրի խորհրդայնացման խնդիրը փորձում էին լուծել բանակցությունների միջոցով: Այդ նպատակով 1921 թ. փետրվարի 2-ին դիվանագիտական առաքելությամբ Գորիս է ժամանում 11-րդ Կարմիր բանակի և Խորհրդային Հայաստանի ներկայացուցիչների միացյալ պատվիրակությունը: Գ. Նժդեհը Զանգեզուրի խորհրդայնացման մի շարք նախապայմաններ է դնում. քեմալական զորքերի հեռացում Հայաստանի զինագրավված շրջաններից, Նախիջևանի և Լեռնային Ղարաբաղի փաստացի միացում Հայաստանին և այլն: Բանակցությունները ձախողվում են:

Զանգեզուրի անվտանգությունն ապահովելու համար 1921 թ. փետրվարի 16-ին Նժդեհի զինակից Յապոնի (Հ. Պարոնյան) ջոկատը ազատագրում է Դարալագյազը: Կարմիր բանակի զորամասերը լուրջ դիմադրություն ցույց չեն տալիս, իսկ մոտ 400 կարմիրբանակայիններ գերի են հանձնվում: Զանգեզուրում մեծ ոգևորություն է առաջացնում նաև Փետրվարյան ապստամբության հաղթանակի լուրը: 1921 թ. մարտի 5-ին Յապոնի ուժերն ազատագրում են Նոր Բայազետը, սակայն Հայրենիքի փրկության կոմիտեին օգնության հասնելու և նրա զինված ուժերին միանալու ջանքերն ապարդյուն են անցնում:

Փետրվարյան ապստամբությունը ճնշելուց հետո Կարմիր բանակը, շարունակելով ապստամբների հետապնդումը և ապրիլի 15-ին գրավելով Դարալագյազը, ընդհուպ մոտենում է Սիսիանի ու Գորիսի սահմաններին: Կարմիր բանակի զորամասերին հաջողվում է ճնշել նաև Նժդեհի զինակից ***Թևանի (Ստեփանյան)*** գլխավորած ժողովրդական ապստամբությունը Ղարաբաղում: Թևանի ջոկատը նահանջում է դեպի Զանգեզուր, իսկ Արցախում հաստատվում է խորհրդային իշխանություն: Այսպիսով՝ 1921 թ. գարնան ու ամռան ամիսներին Զանգեզուրը մնացել էր անկախության միակ կղզյակն Անդրկովկասում և իր վրա էր սևեռել բոլշևիկների ամբողջ ուշադրությունը: Տաթևում հրավիրված համազանգեզուրյան 2-րդ համագումարը ***1921 թ. ապրիլի 27-ին*** Ինքնավար Սյունիքը հռչակում է ***«Լեռնահայաստան»*** և վարչապետ ընտրում Գ. Նժդեհին: Վերջինս պարգևատրվում է «Խուստուփյան արծիվ» շքանշանով: Շատ

չանցած՝ ***հունիսի 1-ին***, Լեռնահայաստանը վերանվանվում է Հայաստանի Հանրապետություն, վարչապետ է նշանակվում Սիմոն Վրացյանը, իսկ Նժդեհը պահպանում է զինվորական նախարարի և սպարապետի պաշտոնները:

Այնուհանդերձ, ՌԿ(բ)Կ կովկասյան բյուրոյի 1921 թ. հունիսի 3-ի որոշման համաձայն՝ ՀՍԽՀ կառավարությունը հունիսի 13-ին պայքարը դադարեցնելու և խորհրդայնացումն ընդունելու հերթական կոչն է ուղղում Զանգեզուրի կառավարությանը՝ նշելով, որ երկրամասը լինելու է Խորհրդային Հայաստանի կազմում: Սակայն զանգեզուրցիները չեն դադարեցնում պայքարը, ինչը ստիպում է խորհրդային կողմին խնդիրը լուծել ռազմական միջոցներով:

Կարմիր բանակը Զանգեզուրի վրա հարձակվում է ինչպես արևմուտքից՝ Երևանյան զորախմբի, այնպես էլ արևելքից՝ Ադրբեջանում տեղակայված խորհրդային բանակի ուժերով: Հունիսի 26-ին կարմիր զորքերը վերագրավում են Դարալագյազը, իսկ հունիսի 30-ին մտնում են Սիսիան: Վերջինիս անկումից հետո Նժդեհը որոշում է դադարեցնել պայքարը և Գորիսից նահանջում է դեպի Կապան՝ զորիսցիներին պատգամելով չդիմադրել հայ-ռուսական կարմիր զորքերին, բայց անխնա լինել, եթե հարձակում ձեռնարկեն ադրբեջանական ջոկատները: Զարգացնելով հարձակումը՝ Կարմիր բանակի զորամասերը հուլիսի 2-ին մտնում են Գորիս, հուլիսի 7-ին՝ Կապան, իսկ հուլիսի 13-ին՝ Մեղրի՝ դրանով ավարտին հասցնելով Զանգեզուրի խորհրդայնացումը:

Նժդեհը թողնում է Զանգեզուրի սահմանները և մի քանի հազար փախստականների հետ անցնում Արաքսի աջ ափը: Հայաստանում գտնվելու վերջին օրերին Հայրենիկոմին հղած հուզական նամակում Նժդեհը զգուշացնում է, որ ինքն ընդմիշտ չի հեռանում Լեռնահայաստանից, այլ կվերադառնա, եթե «Երևանի փոխարեն Բաքուն լինի Սյունիքի հողի վրա ոտք դնողը»: Այսպիսով՝ Գարեգին Նժդեհի գլխավորած հերոսական պայքարի շնորհիվ երկրամասը մնում է Խորհրդային Հայաստանի անբաժան մասը:

Քանի դեռ Զանգեզուրն անկախ էր, ***Լեռնային Ղարաբաղի*** հարցը կարծես լուծվում էր Խորհրդային Հայաստանի օգտին: ՌԿ(բ)Կ Կովկասյան բյուրոյի վերոհիշյալ՝ հունիսի 3-ի որոշումով ՀՍԽՀ կառավարությանը հանձնարարվել էր հռչակագրով հայտարարել «Լեռնային Ղարաբաղը Հայաստանին պատկանելու մասին»: ՀՍԽՀ Ժողկոմխորհի համապատասխան հայտարարությունը հրապարակվում է ***1921 թ. հունիսի 12-ին***: Ղարաբաղ է գործուղվում Ասքանազ Մռավյանը՝ որպես Հայաստանի արտակարգ կոմիսար: Այդ քայլն առաջ է բերում ադրբեջանցիների կատաղի դիմադրությունը:

Լեռնային Ղարաբաղի խնդիրն իր հանգուցալուծումն է ստանում ՌԿ(բ)Կ Կովկասյան բյուրոյի հուլիսյան պլենումում: ***Հուլիսի 4-ի*** նիստում, որին, Կովկասյան բյուրոյի անդամներից

բացի, մասնակցում էր նաև ՌԿ(բ)Կ կենտկոմի անդամ Ի. Ստալինը, քվեարկությամբ ընդունվում է միանգամայն արդարացի որոշում՝ Լեռնային Ղարաբաղը ՀՍԽՀ-ին միացնելու վերաբերյալ: Որոշմանը, սակայն, դեմ է արտահայտվում Ադրբեջանի կառավարության նախագահ Ն. Նարիմանովը: Նա պահանջում է հարցի վերջնական լուծումը փոխադրել Մոսկվա՝ ՌԿ(բ)Կ կենտկոմ: Բայց հաջորդ օրը՝ հուլիսի 5-ին, հրավիրված Կովկասյան բյուրոյի պլենումի արտահերթ նիստը հօգուտ Ադրբեջանի վերանայում է Ղարաբաղի հարցի վերաբերյալ նախորդ օրը կայացրած որոշումը: Առանց հարցը քվեարկության դնելու՝ պլենումը որոշում է «Լեռնային Ղարաբաղը թողնել Ադրբեջանական ՍԽՀ սահմաններում՝ նրան տալով մարզային լայն ինքնավարություն»: Նման որոշումը «հիմնավորվում էր» Ադրբեջանի հետ երկրամասի տնտեսական կապով: Ի տարբերություն Նարիմանովի՝ ՀՍԽՀ ներկայացուցիչ, Ժողկոմխորհի նախագահ Ա. Մյասնիկյանը, հավանաբար ենթարկվելով կոշտ ճնշումների, չի պահանջում խնդրի լուծումը փոխադրել ՌԿ(բ)Կ կենտկոմ, որի իրավունքը նա ուներ:

Այսպիսով՝ Կովկասյան բյուրոյի պլենումի հուլիսի 5-ի ոչ օրինական որոշումով խախտվեց միջազգային իրավունքի հիմնարար՝ ազգերի ինքնորոշման իրավունքի սկզբունքը, ոտնահարվեցին Լեռնային Ղարաբաղի բնակչության շուրջ 95 տոկոսը կազմող հայերի իրավունքները, անտեսվեցին Խորհրդային Հայաստանի շահերը: Ահա թե ինչու ՀԿ(բ)Կ կենտկոմը 1921 թ. հուլիսի 16-ին միանգամայն սխալ և անբավարար ճանաչեց ղարաբաղյան հարցի վերաբերյալ Կովկասյան բյուրոյի պլենումի որոշումները և բողոքեց դրանց դեմ: Խորհրդային Հայաստանի ղեկավարության և արցախահայության հաստատակամ ու հետևողական ջանքերի շնորհիվ և երկու տարվա համառ դիմադրությունից հետո Խորհրդային Ադրբեջանի իշխանությունները ստիպված էին ***1923 թ. հուլիսի 7-ի*** որոշումով Լեռնային Ղարաբաղին տրամադրել ինքնավար մարզի կարգավիճակ: Դրա շնորհիվ էր նաև, որ արցախահայությունը խորհրդային տարիներին միասնաբար դիմակայեց Ադրբեջանի սադրանքներին և ազգային խտրականության քաղաքականությանը:

Հայաստանի խորհրդայնացումից հետո ***Նախիջևանում*** ստեղծված դրությունը նպաստավոր չէր հայկական կողմի համար: Երկրամասում գտնվող մեծաթիվ թուրք-թաթարական (ադրբեջանական) զորձակալները ծավալել էին հակահայկական գործունեություն և ձգտում էին երկրամասն ամբողջությամբ անջատելու Խորհրդային Հայաստանից:

Հայկական տարածքների հարցը Մոսկվայի և Կարսի 1921 թ. պայմանագրերում: Հայաստանի խորհրդայնացումով տարածաշրջանում ստեղծված իրադրությունը հրատապ էր դարձրել խորհրդա-թուրքական նոր կոնֆերանս հրավիրելու հարցը: 1920 թ. դեկտեմբերի 9-ին քեմալականներին ուղղված հուշագրում

ՌՍԴԽՀ կառավարությունն անհրաժեշտ էր համարում նախատեսվող կոնֆերանսին Խորհրդային Հայաստանի (ինչպես նաև Ադրբեջանի) ներկայացուցիչների մասնակցությունը: Կոնֆերանսի հայկական պատվիրակությունը՝ Ա. Բեկզադյանի գլխավորությամբ, 1921 թ. հունվարի երկրորդ կեսին ուղևորվում է Մոսկվա՝ իր հետ վերցնելով փաստագրական անհրաժեշտ նյութերի մեծ փաթեթ: Փաստաթղթերը հիմնավորում էին հայկական կողմի այն մոտեցումը, որ ՀՍԽՀ սահմաններում պետք է լինեն 1920 թ. թուրք-հայկական պատերազմի նախօրյակի դրությամբ Հայաստանի Հանրապետությանը պատկանող տարածքները: Սակայն թուրքական կողմի համառ ջանքերի հետևանքով հայկական պատվիրակությանը չթույլատրվեց մասնակցել կոնֆերանսին:

Խորհրդային Ռուսաստանի և Հայաստանի դիվանագիտական համատեղ բոլոր ջանքերը՝ ազդելու քեմալականների վրա և փոխելու նրանց թշնամական վերաբերմունքը Հայաստանի նկատմամբ, որևէ արդյունք չտվեցին. կոնֆերանսը հայտարարվեց երկկողմ՝ ռուս-թուրքական: Թուրքական պատվիրակությունը (նախագահ՝ Յուսուֆ Քեմալ) Մոսկվա հասնելուց առաջ Բաքվում հանդիպումներ ունեցավ Ադրբեջանի ղեկավարության հետ: Մշակվեցին թուրք-ադրբեջանական համատեղ գործողությունների ծրագրեր: Կոնֆերանսի նախօրյակին Ադրբեջանի հեղկոմի նախագահ Ն. Նարիմանովը հակահայկական բովանդակությամբ բազմաթիվ նամակներ հղեց Վ. Լենինին՝ նախազգուշացնելով. «Թուրքական պատվիրակության հետ բանակցություններում Հայկական հարցը չպետք է դեր խաղա»: Հատկանշական է, որ Մոսկվայի ռուս-թուրքական կոնֆերանսի նախօրեին՝ 1921 թ. փետրվարի 23-ին, թուրքական պատվիրակությունը հանդիպել էր Ստալինի հետ, իսկ բացման օրը՝ ***փետրվարի 26-ին***, նրանց անձամբ ընդունեց Լենինը: Անդրկուլիսյան բանակցությունների արդյունքում խորհրդա-թուրքական տարածքային սահմանազատման վիճահարույց հարցերի հիմնական մասը հարթվեց Թուրքիայի օգտին՝ հայկական տարածքների հաշվին:

Խորհրդա-թուրքական սահմանի որոշման հարցը Ռուսաստանի իշխանությունները շարունակում էին կապել քեմալականների հետ հակաիմպերիալիստական դաշինք ստեղծելու խնդրին: Նրանք զգուշանում էին, որ նույն օրերին Լոնդոնում ընթացող միջազգային կոնֆերանսում քեմալականները կարող են «նետվել Անտանտի գիրկը», ինչը հակասում էր Ռուսաստանի շահերին: Միևնույն ժամանակ բոլշևիկները հայ ժողովրդին կոչ էին անում «հրաժարվել ոչ միայն Մեծ Հայաստանի..., այլև, հնարավոր է, նույնիսկ մշտապես հայկական անվանված հողատարածքների միավորման ավելի համեստ ցանկությունից: Հայաստանին... այլ ելք չի մնում,— ցինիկորեն եզրակացնում էին նրանք,— քան հաշտվել դրա հետ և համաշխարհային հեղափոխու-

թյան շահերին զոհաբերել և իր երբեմնի հողատարածքները, և իր ժողովրդի այնտեղ մնացած հատվածները»:

Ռուս–թուրքական մոսկովյան բանակցությունները թեև ընթացան բավականին լարված և փոխադարձ անվստահության մթնոլորտում, կողմերին, այնուհանդերձ, հաջողվեց հասնել փոխհամաձայնության: ***1921 թ. մարտի 16–ին*** Մոսկվայում կնքված ***«Ռուս–թուրքական բարեկամության և եղբայրության»*** պայմանագրով Խորհրդային Ռուսաստանը ճանաչեց քեմալականների ***«Ազգային ուխտը»***, որը թուրքական տարածք էր հռչակում ամբողջ Արևմտյան Հայաստանը: Թուրք–հայկական սահմանն անցնելու էր Ախուրյան և Արաքս գետերով՝ թուրքական կողմում թողնելով Կարսի մարզը, Սուրմալուի գավառը (հայոց խորհրդանիշ Արարատ լեռով), որը երբեք նրա կազմում չէր եղել (բոլշևիկները Սուրմալուն տվեցին թուրքերին Բաթումը պահելու դիմաց): Նախիջևանը՝ որպես «Նախիջևանի մարզ», ինքնավար տարածքի կարգավիճակով փոխանցվում էր Խորհրդային Ադրբեջանի խնամակալությանը՝ պայմանով, որ վերջինս այն չի զիջելու մի երրորդ պետության, այսինքն՝ Հայաստանին: Մոսկվայի կոնֆերանսում Հայաստանի շահերի անտեսման, հայ ժողովրդի իրավունքների ոտնահարման կապակցությամբ հայկական պատվիրակությունն ապրիլի 15–ին բողոքի հուշագիր ներկայացրեց ՌԿ(բ)Կ կենտկոմին և բոլշևիկների առաջնորդ Լենինին, սակայն դա որևէ ազդեցություն չունեցավ:

Այսպիսով՝ քեմալա–բոլշևիկյան գործարքով Հայաստանից խլվեց և Թուրքիային ու Խորհրդային Ադրբեջանին նվիրաբերվեց նրա պատմական տարածքների զգալի մասը: Ո՛չ Խորհրդային Ռուսաստանը, ո՛չ էլ քեմալական Թուրքիան որևէ իրավասություն չունեին առանց հայկական կողմի մասնակցության տնօրինելու հայկական տարածքների և հայ ժողովրդի ճակատագիրը: Ուստի հայ–թուրքական տարածքային սահմանազատմանը վերաբերող՝ մարտի 16–ի պայմանագրի դրույթները օրինական չեն:

Մոսկվայի պայմանագրով ՀՍԽՀ կազմում էր մնալու դեռևս քեմալականների կողմից զինազրավված ***Ալեքսանդրապոլի գավառը***: Սակայն թուրքերը չէին շտապում հեռանալ գավառից: Միայն Ռուսաստանի և 11–րդ Կարմիր բանակի ղեկավարության սպառնալից հայտարարություններից հետո քեմալական զորքերը 1921 թ. ապրիլի 22–ին լքեցին Ալեքսանդրապոլի գավառը: Թուրքական զինագրավումը ողբերգական հետևանքներ ունեցավ գավառի բնակչության համար: Քեմալական ղեկավարության կողմից արտոնված կոտորածների և ավերածությունների ահավոր պատկերը բացահայտվեց միայն գավառի ազատագրումից հետո: Դրանք ուսումնասիրելու համար ստեղծված ՀՍԽՀ պետական հանձնաժողովի պաշտոնական տվյալների համաձայն՝ 1920 թ. նոյեմբեր — 1921 թ. ապրիլ ամիսներին քեմալականները գավառում կոտորել էին մոտ 60 հա-

զար մարդու, այդ թվում՝ կանանց և երեխաների, գերության քշել՝ 25 հազարի (նրանց զգալի մասը ոչնչացվեց), սովամահ էր եղել ավելի քան 30 հազար մարդ:

Մոսկվայի պայմանագրի 15–րդ հոդվածով Խորհրդային Ռուսաստանը պարտավորվում էր անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել, որ Թուրքիայի և Անդրկովկասի խորհրդային հանրապետությունների միջև կնքվելիք պայմանագրում վերջիններս «պարտադիր կերպով ճանաչեն սույն պայմանագրի այն հոդվածները, որոնք անմիջականորեն վերաբերում են իրենց»:

Քեմալականների պահանջով խորհրդա–թուրքական նոր կոնֆերանսը հրավիրվեց նրանց կողմից բռնազավթված Կարսում: Կոնֆերանսի համար Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի միասնական ծրագրի դրույթները հաստատվեցին ՌԿ(բ)Կ կովկասյան բյուրոյի 1921 թ. սեպտեմբերի 3–ի՝ «Կարսի կոնֆերանսի մասին» որոշումով: Նրանում մասնավորապես նշվեց, որ անհրաժեշտ է խստորեն պահպանել Մոսկվայի պայմանագրի շրջանակները, «ոչ մի դեպքում թույլ չտալ Կովկասի հանրապետությունների մեկուսի ելույթները, բոլոր հարցերում լինել միահամուռ»: Կոնֆերանսի հետ կապված իր հարցերը նախապատրաստեց նաև ՀՍԽՀ կառավարությունը, որն առաջարկում էր Նախիջևանի մարզի խնամակալությունը հանձնել Խորհրդային Հայաստանին, իրեն տրամադրել Օլթիի և Կաղզվանի հանքավայրերի, Սարիղամիշի անտառների, Կարսի խոտհարքների, Կողբի աղահանքերի շահագործման իրավունքը: Առաջ էին քաշվում նաև Թուրքիայի և Հայաստանի միջև արտաքին ազատ առևտրի, արևմտահայ գաղթականների՝ հայրենի օջախները վերադառնալու, նրանց կրած վնասների փոխհատուցման, Թուրքիայում հայ բնակչության հավասար իրավունքների և այլ հարցեր: Այսպիսով՝ Խորհրդային Հայաստանի իշխանությունները, անտեսելով Մոսկվայի պայմանագրի դրույթները, փորձում էին հանդես գալ ոչ միայն որպես հայկական տարածքների պահանջատեր, այլև արևմտահայերի իրավունքների պաշտպան:

Կարսի կոնֆերանսը լարված պայմաններում ընթացավ ***1921 թ. սեպտեմբերի 26–ից մինչև հոկտեմբերի 13–ը***: Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցիչ ***Յակով Գանեցկու*** համաձայնությամբ հայկական պատվիրակությունը, որի նախագահն էր ՀՍԽՀ արտգործժողկոմ Ասքանազ Մռավյանը, թուրքերին առաջարկեց Խորհրդային Հայաստանին վերադարձնել միջնադարյան մայրաքաղաք Անիի ավերակները, Կողբի աղահանքերը, քեմալականների կողմից Ալեքսանդրապոլի դեպոյի թալանված գույքը և այլն: Սակայն թուրքական պատվիրակությունը, որի նախագահն էր Քյազիմ Կարաբեքիր փաշան, որևէ զիջման չգնաց:

Մի կողմից՝ Հայաստանի, Ադրբեջանի ու Վրաստանի խորհրդային հանրապետությունների, մյուս կողմից՝ Թուրքիայի միջև ՌՍԴԽՀ ներկայացուցչի մասնակցությամբ ***1921 թ.***

Աբգանաց Մռավյան

հոկտեմբերի 13-ին Կարսում ստորագրված «Բարեկամության պայմանագրով», ըստ էության, վերարտադրվում էր Մոսկվայի մարտի 16-ի ռուս-թուրքական պայմանագիրը՝ նույն սահմաններով: Հայկական կողմի միակ ձեռքբերումը կարելի է համարել այն, որ ՀՍԽՀ օգտին ուղղվեց Նախիջևանի մարզի հյուսիսարևմտյան սահմանը (նախկին Երևանի գավառի հարավային փոքր տարածքը՝ Արազդայանը՝ Գայլի դրունք վայրի մոտ, մնում էր ՀՍԽՀ սահմաններում) և Կարսի պայմանագրում տեղ չգտավ մարտի 16-ի պայմանագրի այն կետը, որով մարզի նկատմամբ խնամակալությունն Ադրբեջանն իրավունք չուներ զիջելու «մի երրորդ պետության»: Դրանով Ադրբեջանը զրկվեց ապագայում Նախիջևանի հետ կապված որևէ հարցով Թուրքիային դիմելու իրավական հնարավորությունից: Թուրքիան ճանաչում էր Հայաստանի ինքնիշխանությունը:

Այսպիսով՝ Ռուսաստանի պարտադրանքով Խորհրդային Հայաստանը ստորագրեց Մոսկվայի պայմանագիրը: Սակայն Հայաստանի իշխանությունները առիթը բաց չթողեցին իրենց դժգոհությունը հայտնելու համար: Փաստաթուղթը ստորագրած Ա. Մռավյանը նշում էր. «*Մենք չենք կարող երբևիցե հրաժարվել հողային պահանջներից, որոնք մեզ համար անհրաժեշտություն են, մեր կենսունակության և ապրելու կարելիության առաջին պայմանը*»:

Միջազգային իրավական նորմերի տեսանկյունից Կարսի պայմանագիրն ինքնուրույն փաստաթուղթ հանդիսանալ չի կարող, քանի որ անմիջականորեն բխում էր մարտի 16-ի ռուս-թուրքական պայմանագրից: Եվ քանի որ վերջինս ստորագրած կողմերն առանց որևէ լիազորության միջամտել էին պայմանագրի կողմ չհանդիսացող ինքնիշխան պետության (պետությունների) տարածքային ամբողջականության հարցերին, ուստի Կարսի պայմանագրի նկատմամբ նույնպես հայկական կողմն իրավական պարտավորություն կրել չի կարող:

Այսպիսով՝ ՀՍԽՀ սահմանների որոշման հարցում Խորհրդային Ռուսաստանի բոլշևիկյան ղեկավարության դիրքորոշումը հայանպաստ չէր. ոչ միայն Արևմտյան, այլև Արևելյան Հայաստանի տարածքների զգալի մասը դուրս մնաց Խորհրդային Հայաստանի սահմաններից:

Հանրապետության արտաքին կապերը: 1920-1922 թթ. Խորհր-

դային Հայաստանը ներքին և արտաքին քաղաքականության հիմնահարցերում թեև առաջնորդվում էր ՌԿ(բ)Կ կենտկոմի որոշումներով և հրահանգներով, այնուհանդերձ, մինչև Անդրդաշնության և ԽՍՀՄ կազմավորումն ուներ ինքնիշխան կարգավիճակ: Նա միջպետական հարաբերություններ ու առևտրատնտեսական կապեր էր հաստատել ինչպես խորհրդային հանրապետությունների, այնպես էլ արտասահմանյան մի շարք երկրների ու միջազգային կազմակերպությունների հետ:

ՀՍԽՀ արտաքին քաղաքական գործունեությունը սկզբնական շրջանում իրականացնում էր Ռազմհեղկոմը, ապա՝ արտաքին գործերի ժողկոմատը, որը 1920–1922 թթ. ղեկավարել են Ա. Բեկզադյանը և Ա. Մռավյանը:

Խորհրդային Ռուսաստանի հետ սերտ կապեր հաստատելու գործում մեծ էր Մոսկվայում հիմնված ՀՍԽՀ լիազոր ներկայացուցչության և նրա ղեկավար ***Սահակ Տեր-Գաբրիելյանի*** դերը: Մինչև 1921 թ. նոյեմբերի կեսերը, երբ կենտրոնական իշխանությունների պարտադրանքով հայկական կառավարությունը որոշում ընդունեց խորհրդային հանրապետություններում ՀՍԽՀ դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցչությունների վերացման մասին, դրանք գործում էին նաև խորհրդային հանրապետություններում՝ Վրաստանում, Ադրբեջանում, Ուկրաինայում և այլուր:

Խորհրդային Հայաստանը դիվանագիտական առնչություններ ուներ և առևտրական կապեր էր հաստատել իր անմիջական հարևաններ Իրանի և Թուրքիայի հետ: Վերջինիս հետ հարաբերությունները թեև խիստ լարված էին, սակայն Կ. Պոլսում գործում էր տնտեսական ներկայացուցիչ, որը կապեր էր հաստատել Եվրոպայի և Ամերիկայի հայկական շրջանների հետ՝ օգնություն հայթայթելու և Հայաստան ուղարկելու նպատակով: Կարսում հաստատվել էր ՀՍԽՀ ներկայացուցչությունը:

Իրանի հետ ՀՍԽՀ հարաբերությունները կրում էին բարիդրացիական բնույթ, առևտրատնտեսական սերտ կապեր էին հաստատվել Մակուի խանության հետ, կնքվել էր համապատասխան պայմանագիր: Երևանում իր գործունեությունն էր շարունակում պարսկական հյուպատոսությունը: 1921 թ. աշնան կեսերից Իրանի հայաշատ Թեհրան և Թավրիզ քաղաքներում սկսեցին գործել ՀՍԽՀ ներկայացուցչությունը և գլխավոր հյուպատոսությունը: Վերջիններս մեծ աշխատանք կատարեցին Իրանում ապաստանած հայ գաղթականներին ՀՍԽՀ տեղափոխելու գործում:

Խորհրդային Հայաստանում շարունակում էին գործել իտալական «Սագո» և շվեդական «Բալթիկ» առևտրական ընկերությունները, ամերիկյան և անգլիական նպաստամատույց կոմիտեները:

Այնուհանդերձ, խորհրդային բոլոր հանրապետությունների արտաքին կապերը և գործունեությունը սահմա-

նափակ էին և խստորեն հսկվում էին Խորհրդային Ռուսաստանի կողմից: ՌԿ(բ)Կ կենտկոմի քաղբյուրոյի 1921 թ. դեկտեմբերի 8-ի որոշումով խորհրդային հանրապետություններին արգելվում էր ստորագրել միջազգային որևէ պայմանագիր՝ «առանց ՌՍԴԽՀ արտգործժողկոմատի հետ նախապես համաձայնեցնելու», իսկ արտասահմանում հանրապետությունների բոլոր ներկայացուցիչները պետք է ենթարկվեին ՌՍԴԽՀ լիազոր ներկայացուցիչներին:

Ռուսաստանը ստանձնել էր նաև միջազգային ասպարեզում խորհրդային մյուս պետությունների շահերը ներկայացնելու և պաշտպանելու պարտավորությունը: 1922 թ. հունվարի սկզբին ստանալով Ջենովայի միջազգային կոնֆերանսին մասնակցելու հրավեր՝ ՌՍԴԽՀ կառավարությունն անհրաժեշտ համարեց ստեղծել խորհրդային բոլոր հանրապետությունների միասնական դիվանագիտական ճակատ: Միացյալ խորհրդային պատվիրակության անդամների թվում էր նաև ՀՍԽՀ ներկայացուցիչ Ա. Բեկզադյանը:

ԽՍՀՄ-ի ստեղծումով խորհրդային ազգային հանրապետությունների, այդ թվում՝ Հայաստանի ինքնուրույն արտաքին գործունեությունը և կապերն ավելի սահմանափակվեցին:

Հարցեր և առաջադրանքներ

1. Տարածքային-սահմանային ինչ խնդիրներ էին ծառացել Խորհրդային Հայաստանի առջև: Ինչ զարգացում ստացան դեպքերը «Լոռու չեզոք գոտու» շուրջ: Ինչ նպատակով Խորհրդային Ռուսաստանն օգնեց Լոռու ապստամբությանը: Ներկայացրեք Ջավախքի հիմնահարցը: Հայ-վրացական տարածքային սահմանազատումը ո՞ր համաձայնագրով կատարվեց:
2. Ինչո՞ւ Ադրբեջանի հեղկոմը հրաժարվեց 1920 թ. նոյեմբերի 30-ի իր որոշումից: Ներկայացրեք Զանգեզուրի ինքնապաշտպանության ընթացքը 1920 թ. վերջին և 1921 թ. ընթացքում: Ինչ նշանակություն ունեցավ Զանգեզուրի հերոսական պայքարը:
3. Լուսաբանեք Լեռնային Ղարաբաղի հարցի կարգավորման գործընթացը 1921 թ. հունիս-հուլիս ամիսներին: Ձեր կարծիքով ինչո՞ւ Ստալինը տեղի տվեց Ադրբեջանի ղեկավարության պահանջներին: Ե՞րբ է ստեղծվել Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը (ԼՂԻՄ):
4. Ինչո՞վ էր պայմանավորված ռուս-թուրքական նոր կոնֆերանսի հրավիրումը: Որո՞նք էին հայկական տարածքները թուրքերին զիջելու բոլշևիկների քաղաքականության պատճառները: Վերհանեք 1921 թ. մարտի 16-ի Մոսկվայի պայմանագրի հակահայ էությունը: Փաստերով հիմնավորեք, որ Կարսի կոնֆերանսում ևս ոտնահարվեցին Հայաստանի և հայերի իրավունքներն ու շահերը: Ինչ լուծում ստացավ Նախիջևանի հարցը: Ձեր կարծիքով իրա-

վական ուժ ունի՞ Կարսի պայմանագիրը Հայաստանի երրորդ հանրապետության համար:

5. Ո՞ր պետությունների հետ էր դիվանագիտական կամ առևտրային հարաբերություններ հաստատել Խորհրդային Հայաստանը: Ցո՛ւյց տվեք, որ ՀՍԽՀ ինքնուրույն արտաքին քաղաքականությունը սահմանափակված էր. ո՞րն էր դրա հիմնական պատճառը:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՅՈՒԹ

Մոսկվայի ռուս-թուրքական կոնֆերանսի հայկական պատվիրակության 1921 թ. ապրիլի 15-ի բողոք-հուշագրից՝ ուղղված ՌԿ(բ)Կ կենտկոմ և Վ. Լենինին

Կոնֆերանսի արձանագրություններից չի երևում, թե արվել է գոնե մի չնչին փորձ՝ պահպանելու այն հողերն ու շրջանները, որոնք կենսական նշանակություն ունեն երիտասարդ և փոքր Խորհրդային Հայաստանի համար:

Կարսի կոնֆերանսում ՌՍԴԽՀ ներկայացուցիչ Յա. Գանեցկու կողմից հոկտեմբերի 5-ին արտգործժողկոմ Գ. Չիչերինին ուղարկած հեռագրից

Կոնֆերանսի արդյունքներն ընդհանուր առմամբ գոհացուցիչ չեն, իսկ թուրքերի վարքագիծն այնպիսին է, որ ակամայից քեզ հարց ես տալիս. ինչո՞ւ էինք մենք նրանց համար այդքան զոհողությունների գնում:

Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 113, ց. 3, գ. 23, թ. 48

§ 5. ՀՍԽՀ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ: ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՈՒՄԸ

ՀՍԽՀ խորհուրդների ընտրությունները և առաջին համագումարը: Հայաստանում խորհրդային վարչակարգի ամրապնդումից հետո ժամանակավոր նշանակովի մարմիններին՝ հեղկոմներին, փոխարինեցին ընտրովի մարմինները՝ խորհուրդները:

ՀՍԽՀ խորհուրդների առաջին ընտրությունները կայացան ***1921 թ. դեկտեմբերին:*** Ընտրվեցին բանվորների, գյուղացիների և կարմիրբանակայինների պատգամավորների խորհուրդներ՝ որպես իշխանության տեղական մարմիններ: Քաղաքային խորհուրդներ ընտրվեցին միայն Երևանում և Ալեքսանդրապոլում:

ՀՍԽՀ խորհուրդների առաջին համագումարը բացվեց 1922 թ. հունվարի 30-ին Երևանի պետական թատրոնի սրահում ու տևեց մինչև փետրվարի 4-ը: Համագումարին մասնակցում էր 252 պատգամավոր: Գերակշիռ մասը՝ 218-ը, կոմկուսի անդամներ էին, մյուսները՝ անկուսակցականներ: Դա վկայում էր, որ խորհրդային ամենա-

տիրության պայմաններում ժողովրդավարությունը, բազմակուսակցությունն ու բազմակարծությունը տեղ չունեին: Խայտաբղետ էր պատգամավորների ազգային կազմը (հայ՝ 212, ռուս՝ 21, ադրբեջանցի՝ 14 և այլն), ընտրված պատգամավորներից 17–ը կանայք էին:

Համագումարը մի շարք կարևոր որոշումներ ընդունեց՝ Անդրդաշնության կազմավորման, ՀՍԽՀ Կարմիր բանակի, սոցիալական, տնտեսական, հողային և այլ հրատապ խնդիրների մասին: Սակայն ամենագլխավորը ՀՍԽՀ առաջին Սահմանադրության (հիմնական օրենքի) ընդունումն էր:

Համաձայն հաստատված Սահմանադրության՝ երկրի բարձրագույն օրենսդիր մարմինը խորհուրդների համագումարն էր: Առաջին համագումարը կազմավորեց Հայաստանի օրենսդիր իշխանության մարմին՝ Կենտրոնական գործադիր կոմիտեն, որը բարձրագույն օրենսդիր մարմինն էր խորհուրդների համագումարների միջև ընկած ժամանակամիջոցում: Կենտգործկոմն էլ կազմեց Ժողովրդական կոմիսարների խորհուրդը, որը երկրի բարձրագույն գործադիր իշխանությունն էր:

Համագումարի ավարտին պատգամավորները ողջույնի հատուկ ուղերձով դիմեցին «գաղութահայ աշխատավորությանը»: Հայկական Սփյուռքին կոչ էր արվում համախմբվելու Խորհրդային Հայաստանի շուրջը և նպաստելու հայրենիքի վերաշինությանը:

ՀՍԽՀ առաջին Սահմանադրությունը: ՀՍԽՀ հիմնական օրենքը՝ Սահմանադրությունը, ընդունվեց համագումարի ***1922 թ. փետրվարի 3–ի*** նիստում: Այն մշակված էր 1918 թ. հուլիսին ընդունված ՌՍԴԽՀ Սահմանադրության սկզբունքների համաձայն և հիմնական դրույթներով, փաստորեն, կրկնում էր այն:

Սահմանադրության մեջ նշվում էր, որ հանրապետության տարածքում ամբողջ իշխանությունը պատկանում է բանվորների, գյուղացիների և կարմիրբանակայինների պատգամավորական խորհուրդներին: Ամրագրվում էին աշխատավորների հավասար իրավունքները՝ անկախ ազգությունից ու դավանանքից: Աշխատանքը պարտադիր պարտականություն էր բոլորի համար՝ «Ով չի աշխատում, նա չի ուտում» սկզբունքով: «Շահագործող դասակարգի» ներկայացուցիչները զրկվում էին քաղաքական իրավունքներից: Հողը, նրա ընդերքը, անտառները, բանկերը, երկաթուղիներն ու խոշոր արդյունաբե-

ությունը հայտարարվում էին սոցիալիստական սեփականություն:

Սահմանադրությունն ամրագրում էր խոսքի, մամուլի, ցույցերի և այլ ազատություններ: Սակայն իրականում դրանք ձևական էին, քանի որ Խորհրդային Հայաստանում, ինչպես Խորհրդային Ռուսաստանում, օրենսդրությամբ ամրապնդվում էր «պրոլետարիատի», իրականում՝ կուսակցական վերնախավի «դիկտատուրան»: Եկեղեցին անջատվում էր պետությունից, դպրոցը՝ եկեղեցուց, միաժամանակ սահմանվում էր անվճար կրթություն ստանալու իրավունքը:

Կարևորվում էր ՀՍԽՀ Կարմիր բանակի տեղն ու դերը խորհրդային պետության կյանքում: Զինվորական ծառայությունը պարտադիր էր բոլորի համար: ՀՍԽՀ Կարմիր բանակը կոչված էր երկիրը պաշտպանելու արտաքին ու ներքին հակահեղափոխությունից:

Սահմանադրության մի հատվածը վերաբերում էր հանրապետության բյուջեին, մյուսը՝ պետական խորհրդանիշներին՝ զինանշանին և դրոշին:

ՀՍԽՀ առաջին Սահմանադրությունը գրեթե զուրկ էր ազգային բովանդակությունից: Այն թեև հոչակում էր ժողովրդավարության որոշ նորմեր, սակայն կոմունիստական ամբողջատիրության պայմաններում դրանց իրագործումը գործնականում անհնարին էր դառնում:

Այնուհանդերձ, ՀՍԽՀ Սահմանադրությունն առաջինն էր հայոց պետականության պատմության մեջ:

Հայաստանը Անդրդաշնության կազմավորման գործընթացում: Անդրկովկասի խորհրդային հանրապետությունների՝ Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի փոխհարաբերությունները հստակեցնելու համար այդ հանրապետությունների «կոմունիստ ընկերներին» ուղղված 1921 թ. ապրիլի 14-ի նամակ-հրահանգով հանդես եկավ Վ. Լենինը: Նամակն իր հետ տարածաշրջան բերեց Ալեքսանդր Մյասնիկյանը: Նրանում առաջ էր քաշվում խորհրդային հանրապետությունների միջև տնտեսական և ռազմաքաղաքական սերտ դաշինք հաստատելու գաղափարը: Միավորման ձև ընտրվեց խորհրդային դաշնությունը:

1921 թ. նոյեմբերին Բաքվում կայացած ՌԿ(բ)Կ կենտկոմի կովկասյան բյուրոյի պլենումն անհետաձգելի ու անհրաժեշտ համարեց հանրապետությունների միջև դաշնային միութենական պայմանագրի ստորագրումը: Միավորման գործընթացը, սակայն, հարթ չէր: Դիմադրություն էր ցուցաբերում Վրաստանի կոմկուսի ղեկավարության մի մասը՝ հեղկոմի նախագահ Պ. Մդիվանու գլխավորությամբ: Նրանց կարծիքով դաշնության կազմավորման համար չկային իրական նախադրյալներ, և այն պարտադրված էր կենտրոնական իշխանությունների կողմից: Պնդելով Անդրկովկասի հանրապետությունների իրական անկախությունը պահպանելու անհրաժեշտությունը՝ Մդիվանին և նրա կողմնակիցները հանդես էին գալիս հանրապետությունների միջև

երկկողմ պայմանագրային հարաբերություններ հաստատելու առաջարկությամբ: Վրացական կողմի այս դիրքորոշումը Ռուսաստանի կոմկուսի վերնախավի կողմից որակվեց որպես ազգայնական թեքում, որի դեմ անզիջում պայքար ծավալվեց:

Հայաստանի իշխանությունները կողմ էին Անդրկովկասյան Դաշնության (Անդրդաշնության) ստեղծմանը և դրանում տեսնում էին երկիրն ու ժողովրդին արտաքին վտանգներից պաշտպանելու, մեկուսացումից, հասարակական-տնտեսական ծանր վիճակից դուրս բերելու հնարավորություն:

1922 թ. մարտի 12-ին Թիֆլիսում հրավիրված Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի կենտգործկոմների ներկայացուցիչների լիազոր-կոնֆերանսը հաստատեց Անդրդաշնություն կազմելու մասին միութենական պայմանագիրը: Դրանով իրականություն էր դառնում ***Անդրկովկասի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Դաշնային Միությունը (ԱԽՍՀԴՄ)***: Կոնֆերանսն ամրագրում էր դաշնություն կազմող հանրապետությունների «լիակատար անկախությունը և ինքնուրույնությունը»: Սակայն գործնականում միութենական պայմանագիրը հնարավորություն էր ստեղծում զգալիորեն սահմանափակելու Անդրկովկասի հանրապետությունների ինքնիշխանությունը:

Անդրդաշնության ստեղծումը խորհրդային իշխանությունների համար ուներ զուտ քաղաքական նշանակություն: ԱԽՍՀԴՄ-ն գոյատևեց ընդամենը մի քանի ամիս: 1922 թ. դեկտեմբերի 10-13-ը Բաքվում կայացած Անդրկովկասի խորհուրդների առաջին համագումարում այն վերափոխվեց ***Անդրկովկասի Խորհրդային Դաշնային Սոցիալիստական Հանրապետության (ԱԽԴՍՀ)***: Միության վերածումը հանրապետության ավելի էր սահմանափակում երեք հանրապետությունների ինքնիշխան իրավունքները:

Համագումարն ընդունեց նաև ԱԽԴՍՀ Սահմանադրությունը և որոշեց խորհրդային մյուս հանրապետությունների՝ ՌՍԴԽՀ-ի (Ռուսաստան), ՈՒՍԽՀ-ի (Ուկրաինա) և ԲՍԽՀ-ի (Բելառուս) հետ միավորվել նոր ստեղծվող պետական կազմավորման՝ ԽՍՀՄ-ի (Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միություն) կազմում:

Անդրկովկասի Դաշնությունը գոյատևեց մինչև 1936 թվականը:

ԽՍՀՄ-ի կազմավորումը: 1922 թ. երկրորդ կեսից ՌԿ(բ)Կ կենտկոմը վճռական քայլեր ձեռնարկեց այդ ժամանակ նախկին ցարական կայսրության տարածքում առաջացած խորհրդային հանրապետությունների հետ Խորհրդային Ռուսաստանի միջպետական փոխհարաբերությունները կարգավորելու համար: Այդ նպատակով 1922 թ. օգոստոսին ստեղծվեց հատուկ հանձնաժողով՝ խորհրդային բոլոր հանրապետությունների ներկայացուցիչների մասնակցությամբ: Օգոստոսի վերջին հանձնաժողովի քննարկմանը ներկայացվեց հանձնա-

ժողովի անդամ և փաստացի ղեկավար Ի. Ստալինի մշակած «ՌՍԴԽՀ-ի և անկախ հանրապետությունների փոխհարաբերությունների մասին բանաձևի նախագիծը»: Համաձայն դրա՝ Հայաստանը, Ադրբեջանը, Վրաստանը, Բելառուսը և Ուկրաինան մտնելու էին ՌՍԴԽՀ-ի կազմի մեջ՝ ինքնավար հանրապետության կարգավիճակով: Նախագծի համաձայն, որը ստացավ «ստալինյան ինքնավարացման ծրագիր» անվանումը, խորհրդային ազգային հանրապետությունները կորցնելու էին իրենց ինքնիշխանությունը: Բացառությամբ Վրաստանի, որը պնդում էր հանրապետությունների անկախությունը պահպանելու անհրաժեշտության գաղափարը, խորհրդային բոլոր հանրապետությունների կոմկուսները հավանության արժանացրին ստալինյան նախագիծը:

Սակայն այդ նախագծի դեմ հանդես եկավ խորհրդային պետության ղեկավար Վ. Լենինը: Նա առաջարկեց հանրապետությունների միավորումն անցկացնել սկզբունքորեն այլ հիմքի վրա. բոլորին, այդ թվում՝ Խորհրդային Ռուսաստանին, միավորել նոր պետականության մեջ՝ պահպանելով նրանց ինքնիշխանությունը և միությունից դուրս գալու իրավունքը: Լենինի առաջարկի հիման վրա 1922 թ. հոկտեմբերի 6-ին ընդունվեց նոր նախագիծ, որի համաձայն՝ Ուկրաինայի, Բելառուսի, Անդրդաշնության և Ռուսաստանի միջև պետք է ստորագրվեր Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միություն (ԽՍՀՄ) կազմելու մասին պայմանագիր:

ԽՍՀՄ կազմավորման հարցն իր վերջնական լուծումը ստացավ 1922 թ. դեկտեմբերի վերջին Մոսկվայում հրավիրված խորհրդային չորս հանրապետությունների լիազոր-պատվիրակությունների կոնֆերանսում: Այստեղ հաստատվեցին ԽՍՀՄ-ի կազմավորման մասին Հռչակագրի և Միութենական պայմանագրի նախագծերը: ***Դեկտեմբերի 30-ին*** այդ նախագծերը ստորագրվեցին Խորհրդային Ռուսաստանի, Ուկրաինայի, Բելառուսի և Անդրդաշնության ներկայացուցիչների կողմից ու հաստատվեցին ԽՍՀՄ խորհուրդների՝ պետության բարձրագույն օրենսդիր մարմնի առաջին համագումարում: Այսպես կազմավորվեց ԽՍՀՄ-ը:

Խորհրդային Միությունը, որը գոյատևեց շուրջ 70 տարի և կազմալուծվեց 1991 թ. դեկտեմբերին, իրականում ոչ թե դաշնային միություն էր, այլ միաձույլ կենտրոնացված պետություն: Այդուհանդերձ, ԽՍՀՄ-ի կազմում խորհրդային հանրապետությունները, այդ թվում՝ Հայաստանը, արտաքին սպառնալիքներից որոշակիորեն պաշտպանված էին և տնտեսական, գիտակրթական ու մշակութային զարգացման լայն հնարավորություններ ունեին:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ե՞րբ կայացան ՀՍԽՀ խորհուրդների առաջին ընտրությունները: Ի՞նչ հարցեր քննարկվեցին ՀՍԽՀ խորհուրդների առաջին համագումարում:
2. Ե՞րբ է ընդունվել ՀՍԽՀ առաջին Սահմանադրությունը: Ըստ նոր Սահմանադրության՝ ո՞ւմ էր պատկանում իշխանությունը: Գծապատկերով ներկայացրեք ՀՍԽՀ իշխանության համակարգը: Վերհանեք ՀՍԽՀ առաջին Սահմանադրության նշանակությունը:
3. Ինչո՞ւ էր անհրաժեշտ, ըստ կոմկուսի, խորհրդային հանրապետությունների պետական միավորումը: Ի՞նչ որոշում կայացրեց 1921 թ. նոյեմբերին կայացած ՌԿ(բ)Կ կենտկոմի կովկասյան բյուրոյի պլենումը: Ի՞նչ դիրքորոշում ուներ դաշնության կազմավորման վերաբերյալ Վրաստանի կոմկուսի ղեկավարությունը: Ինչո՞ւ Հայաստանի կոմկուսի ղեկավարությունը հավանություն տվեց Անդրդաշնության կազմավորման հարցին:
4. Թվարկեք Անդրդաշնության ձևավորման նպատակով ստորագրված պայմանագրերը և դրանց հաստատման ժամանակն ու տեղը: Հիմնավորեք, որ ԱԽՍՀԴՄ-ի կազմում երեք հանրապետությունների ինքնիշխանությունը սահմանափակվեց: Ե՞րբ և ո՞ր համագումարը հաստատեց ԱԽԴՍՀ-ի ստեղծումը:
5. Ի՞նչ տեսակետի կողմնակից էր Ստալինը խորհրդային հանրապետությունների միավորման հարցում: Ինչո՞ւ Լենինը փոխել տվեց Ստալինի կազմած ծրագիրը: Ե՞րբ է ստեղծվել ԽՍՀՄ-ը:

ԳԼՈՒԽ 2. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ 1922–1941 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

§ 1. ՆՈՐ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՄԸ

Տնտեսության բնագավառում համակարգային փոփոխությունների անհրաժեշտությունը: Իշխանությունը կորցնելու վտանգը, երկրի աղետալի վիճակը բոլշևիկյան ղեկավարությանը ստիպեցին 1921 թ. գարնանը ռազմական կոմունիզմի քաղաքականությունից անցում կատարել դեպի ***նոր տնտեսական քաղաքականություն (նէպ)***: Այն պահանջում էր տնտեսության մեջ իրականացնել լուրջ համակարգային փոփոխություններ՝ կիրառել նոր հարկային քաղաքականություն, կարգավորել հողի օգտագործման հետ կապված խնդիրները, խթանել ցանքատարածությունների, բերքատվության, անասունների գլխաքանակի աճը: Արդյունաբերության բնագավառում անհրաժեշտ էր վերականգնել նախկին ձեռնարկությունները, կառուցել նորերը, ապազգայնացնել, այսինքն՝ իրենց հին տերերին վերադարձնել նախկինում ազգայնացված միջին և

մանր ձեռնարկությունները: Այն գործարանները և ֆաբրիկաները, որոնք գործունեություն ծավալելու համար անհրաժեշտ միջոցներ չունեին, կարող էին օտարերկրյա կապիտալի ներգրավմամբ ստեղծել համատեղ ձեռնարկություններ:

Տնտեսության զարգացման գործում կարևոր խթաններ կարող էին դառնալ ազատ առևտրի վերականգնումը, վարձու աշխատանքի կիրառումը: Պետությունը կատարեց այդ փոփոխությունները՝ իր ձեռքում պահելով խոշոր արդյունաբերությունը, ֆինանսները և արտաքին առևտրի մենաշնորհը:

Նէպը և գյուղացիությունը: Նէպին անցնելու առաջին միջոցառումներն իրականացվեցին գյուղատնտեսության ոլորտում: Արդեն ասվել է, որ համապատասխան դեկրետներով և հրամանագրերով արգելվեցին հացահատիկի և այլ մթերքների բռնագրավումները, վերացվեց պարենմասնատրումը, ընդունվեց պարենհարկի մասին օրենք: Պարենհարկը չպետք է ծանրաբեռներ գյուղացու տնտեսությունը, իսկ «սակավառուժ տնտեսությունները» պետք է ազատվեին դրանից: Պետության տուրքը վճարելուց հետո գյուղացին իրավունք ուներ ազատ տնօրինելու ստացած բերքի ավելցուկը: Հարկի չափը որոշվում էր մինչև ցանքսը և տարվա ընթացքում ենթակա չէր փոփոխության: Բնամթերքով գանձվող հարկը երեք անգամ պակաս էր պարենմասնատրման եղանակով գանձվող հարկից:

Անասնապահության ոլորտում կիրառվող հարկը տարածվում էր կաթնատու և մսատու անասունների վրա:

Հայաստանում պարենհարկը գանձվում էր բոլոր տեսակի գյուղատնտեսական ապրանքներից, ինչը զգալի անհարմարություններ էր ստեղծում և՛ հարկային մարմինների, և՛ գյուղացու համար: 1923 թ. շրջանառության մեջ մտավ գյուղատնտեսական միասնական հարկը: Միասնական հարկը գյուղացուն հնարավորություն էր տալիս պարենհարկը վճարելու ցանկացած ապրանքով: 1923 թ. միասնական հարկի գումարը կազմեց հողագործության արդյունքի 12 %-ը և անասնապահական արտադրանքի 2 %-ը:

Ծուկայական հարաբերությունների աշխուժացումը նպաստեց, որ միասնական հարկը գանձվի նաև դրամով, որը հնարավորություն տվեց 1924 թ. հենց սկզբից հրաժարվելու բնամթերային հարկաձևից:

1920-ական թվականներին գյուղի սոցիալ-տնտեսական վիճակի բարելավմանն էր ուղղված խորհրդային իշխանության հողային քաղաքականությունը: Խորհրդային Հայաստանում այդ քաղաքականությունն ուներ իր առանձնահատկությունները: Ի տարբերություն Ռուսաստանի և խորհրդային մյուս հանրապետությունների՝ Հայաստանը խիստ սակավահող երկիր էր: Կալվածատիրական հողատիրությունը չնչին տոկոս էր կազմում, ուստի Հայաստանում հողային հարցի լուծումը ենթադրում էր ոչ այնքան կալվածատիրական հողերի բռնա-

գրավում, որքան հողաշինարարության անցկացում:

Հողը բաժանվում էր պարբերական վերաբաժանման (9 տարին մեկ անգամ) և հավասարարության (ըստ ծխերի անդամների թվի) սկզբունքներով: Հողային ֆոնդի խիստ սահմանափակության պատճառով Հայաստանում հողի շնչաբաժինը սահմանվեց նվազագույն չափով: Արգելվում էին հողի առուվաճառքը, կտակելն ու գրավ դնելը: Թույլատրվում էին հողի աշխատավորական վարձակալությունը, ինչպես նաև օժանդակ վարձու աշխատանքի կիրառումը:

Խորհրդային իշխանության հողային բարենորոգումները շատ աննշան ավելացրին հայ գյուղացու հողաբաժինը: Նէպի տարիներին խնդիրն ամբողջությամբ հնարավոր չեղավ լուծել, և 1929 թ. շուրջ 40 հազար գյուղացիներ շարունակում էին մնալ հողազուրկ:

Արդյունաբերական ձեռնարկությունների վերականգնումը, նոր ձեռնարկությունների կառուցումը: Ազատական հարաբերություններ էին հաստատվում նաև տնտեսության մյուս բնագավառներում, մասնավորապես մանր և միջին արդյունաբերական արտադրության և արհեստագործության ոլորտներում: Բնակչության դրությունը բարելավելու, սպառման ապրանքների պահանջները բավարարելու նպատակով արգելվում էին մանր տնայնագործական ու արհեստավորական արդյունաբերական ձեռնարկությունների ազգայնացումն ու բռնագրավումը: Մանր ձեռնարկություններն իրավունք էին ստանում իրենց արտադրանքն ազատորեն փոխադրելու և վաճառելու հանրապետության ամբողջ տարածքում: Հատուկ դեկրետով նախկինում ազգայնացված մանր տնայնագործական ձեռնարկությունները, ջրաղացները պետք է վերադարձվեին նախկին տերերին:

Նէպի պայմաններում սկսեցին արդյունաբերական ձեռնարկությունների վերականգնումը և նորերի կառուցումը: 1923 թ. վերագործարկվեցին Երևանի գինու-կոնյակի «Արարատ», կաշվի երկու փոքր գործարանները և մի շարք այլ ձեռնարկություններ: 1923–1924 թթ. ընթացքում սկսվեցին Հայաստանի արդյունաբերության կարևորագույն ճյուղերից մեկի՝ պղնձարդյունաբերության վերականգնման աշխատանքները, ինչի շնորհիվ շուտով Ղափանում վերսկսվեց պղնձի ձուլումը: Այդ բնագավառում վերականգնողական աշխատանքները շարունակվեցին մինչև 1930-ական թվականների սկիզբը:

1924–1925 թթ. գործարկվեցին Երևանի և Սարդարապատի բամբակազտիչ գործարանները: Հիմնարար աշխատանքներ կատարվեցին երկաթուղային տրանսպորտի վերականգնման բնագավառում:

Մեծ ծավալի աշխատանք կատարվեց էլեկտրակայաններ կառուցելու ուղղությամբ: 1925 թ. գարնանը հանդիսավոր պայմաններում դրվեցին Երևանի և Լենինականի (Գյումրի) հիդրոէլեկտրակայանների հիմքերը:

Ռոզելի տարածքներն ավելացնելու համար կառուցվեցին Էջմիածնի, Երևանի, Շիրակի ջրանցքները:

Նէպի կենսագործման առաջին տարիներին արդյունաբերական ձեռնարկությունները պետության կողմից ստացան զգալի տնտեսական ինքնուրույնություն: Արտադրանքի վաճառքից ստացված ֆինանսական միջոցների զգալի մասը թողնվում էր հիմնարկությանը՝ բանվոր–ծառայողների աշխատավարձն ավելացնելու և սարքավորումները նորացնելու համար: Հավասար աշխատավարձի վճարման կարգի փոխարեն մտցվեց նոր՝ ըստ կատարած աշխատանքի քանակի ու որակի վարձատրման սկզբունքը:

Տնտեսության մեջ վարչահրամայական մեթոդների կիրառումը: Նէպի կասեցումը: Նոր տնտեսական քաղաքականության կենսագործումը նպաստեց երկրի սոցիալ–տնտեսական, քաղաքական ճգնաժամի հաղթահարմանը: Հայաստանում այդ քաղաքականության կենսագործման հետևանքով վերականգնվեց գյուղատնտեսությունը, սկսեցին դրվել արդյունաբերության հիմքերը, որոշ չափով բարելավվեց ազգաբնակչության կենսամակարդակը: 1928 թ. Հայաստանի տնտեսությունը հասավ նախապատերազմյան՝ 1913 թ. մակարդակին:

Թեև արձանագրվեցին որոշակի հաջողություններ, սակայն նէպը շուտով ստալինյան ղեկավարության կողմից կասեցվեց: Նէպի ձախողման ու վերացման պատճառներն առավելապես կապված էին ոչ թե տնտեսական, այլ քաղաքական և գաղափարախոսական խնդիրների հետ: Իշխանության նվաճումից հետո ո՛չ Լենինը, ո՛չ էլ նրա զինակիցները հստակ պատկերացումներ չունեին երկրում սոցիալիզմի կառուցման ուղիների վերաբերյալ: Իշխանությունը ներկայացնող պետական, քաղաքական գործիչների տարաբնույթ մոտեցումներն իրենց բացասական կնիքն էին թողնում երկրում իրականացվող ներքին քաղաքականության վրա: Երկիրը փորձադաշտ էր դարձել բարձրագույն քաղաքական իշխանության համար: Պետությունը տարեցտարի մեծացնում էր իր միջամտությունը երկրի տնտեսական կյանքին. վերահսկում էր գները, սահմանափակում ձեռնարկությունների ինքնուրույնությունը:

Պետության նախաձեռնությամբ երկու անգամ՝ 1923 և 1927 թվականներին, բարձրացվեցին արդյունաբերական ապրանքների գները, իսկ գյուղատնտեսական ապրանքների գները մնացին նույն մակարդակի վրա: Այսպես կոչված «մկրատի» (գների տարբերության) քաղաքականությունն առաջացրեց գյուղացիության դժգոհությունը, որն ավելի ցայտուն դրսևորվեց 1927–1928 թթ.: Գյուղացին հրաժարվեց հացահատիկը ցածր գնով վաճառելուց, ինչն անմիջապես ազդեց հացի շուկայի վրա: Իշխանությունները խնդիրը լուծելու համար դիմեցին բռնությունների: Վերակենդանացվեց ռազմական կոմունիզմի ժամանակների գործելակեր-

պը: Հետզհետե անցում կատարվեց կառավարման վարչահրամայական եղանակին, որն էլ կանխորոշեց նէպի վախճանը:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչո՞վ էր պայմանավորված անցումը նէպին: Ի՞նչ միջոցառումներ իրականացվեցին նէպին անցնելու քաղաքականության շրջանակներում:
2. Գյուղատնտեսության ոլորտում ի՞նչ միջոցառումներ իրականացվեցին: Ի՞նչ հետևանքներ ունեցան դրանք: Համեմատե՛ք ռազմական կոմունիզմի և նէպի քաղաքականությունները:
3. Ի՞նչ քայլեր ձեռնարկվեցին արդյունաբերության զարգացումը խթանելու ուղղությամբ: Աշխատավարձի վճարման ի՞նչ սկզբունք մտցվեց: Ձեր կարծիքով ո՞րն էր արդյունավետ. հիմնավորե՛ք ձեր պատասխանը:
4. Որո՞նք էին նէպի արդյունքները, դրա ձախողման և վերացման պատճառները: Գնահատե՛ք երկրի տնտեսական կյանքում պետության միջամտության մեծացման քաղաքականությունը:

§ 2. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱՑՈՒՄԸ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿՈԼԵԿՏԻՎԱՑՈՒՄԸ

Արդյունաբերացման գործընթացի սկիզբը: Հնգամյա ծրագրերը: 1920-ական թվականների երկրորդ կեսից ԽՍՀՄ բարձրագույն պետական, կուսակցական շրջաններում արդյունաբերության զարգացման հարցերի շուրջ բանավեճեր էին ընթանում: Գլխավոր խնդիրը սոցիալիզմի նյութատեխնիկական հիմքի ստեղծումն էր: Երկրի տեխնիկատնտեսական հետամնացությունն արագորեն վերացնելու նպատակով որոշվեց իրականացնել ***արդյունաբերացում*** *(ինդուստրացում)*:

Արդյունաբերացնել երկիրը նշանակում էր ստեղծել արդյունաբերական նոր ճյուղեր, կառուցել գործարաններ, ֆաբրիկաներ, հիդրոէլեկտրակայաններ, ընդլայնել երկաթուղիները: Խնդիր էր դրվում հասնելու այն վիճակին, որ համախառն արտադրանքի մեջ արդյունաբերական արտադրանքի ծավալը գերազանցեր գյուղատնտեսականին: Որոշվեց երկրի արդյունաբերացումը սկսել ոչ թե թեթև ու սննդի արդյունաբերություններից, ինչպես տեղի էր ունեցել Արևմուտքի զարգացած արդյունաբերական պետություններում, այլ ծանր արդյունաբերությունից: Նպատակը ԽՍՀՄ-ը մեքենաներ և սարքավորումներ ներմուծող երկրից արտադրող երկրի վերածելն էր: Դրանով կապահովվեր երկրի տնտեսական անկախությունն ու պաշտպանությունը:

Արագ արդյունաբերացման համար անհրաժեշտ միջոցները հնարավոր էր հայթայթել միայն երկրի ներսում: Ֆինանսավորման աղբյուր դարձան գյուղացիության վրա դրված խիստ ծանր հարկերը, վանքերի ու եկեղե-

ցիների ունեցվածքի, թանգարաններում պահվող ազգային հարստության բռնագրավումը: Աշխատավորներին տրվում էր չնչին աշխատավարձ:

Ծագեց հնգամյա ծրագրերի (պլաններ) անհրաժեշտությունը: Փաստորեն պետությունը ծրագրում էր տնտեսական, սոցիալական ոլորտում հինգ տարվա ակնկալվող արդյունքները: Հնգամյակներով կենտրոնացված ծրագրավորումը շարունակվեց նաև հետագայում՝ մինչև ԽՍՀՄ փլուզումը:

Արդյունաբերության նոր ճյուղերի ստեղծումը Հայաստանում: Հայաստանի արդյունաբերացման գործում վճռական տեղ ուներ էներգետիկ համակարգի ստեղծումը: Հանրապետության ջրային պաշարներն օգտագործվեցին էլեկտրակայաններ կառուցելու համար: Արդյունաբերացման ընթացքում շահագործման հանձնվեց Զորահէկը, որը բարդ ճարտարագիտական կառույց էր: Նրա ամբարտակի փականը այն ժամանակ աշխարհում ամենախոշորն էր: Առաջին հնգամյակի տարիներին սկսվեց ավելի հզոր՝ Քանաքեռհէկի շինարարությունը, որին հաջորդեց Հրազդան գետի վրա ևս մի քանի կայանների կառուցումը:

1929 թ. նախկին մեխանիկական արհեստանոցի հիմքի վրա կառուցվեց Երևանի Ձերժինսկու անվան մեխանիկական գործարանը:

ԽՍՀՄ ղեկավարության շրջանում տարածված էր այն թյուր կարծիքը, թե Հայաստանն ունի ջրային մեծ պաշարներ, և հանրապետությունում հնարավոր է ստեղծել էներգատար քիմիական արդյունաբերություն: Նման մոտեցումը հանգեցրեց նրան, որ միակողմանի զարգացավ քիմիական արդյունաբերությունը, դրա հետ կապված՝ լեռնահանքային արդյունաբերությունը, մասնավորապես՝ Ալավերդու և Ղափանի պղնձահանքերը և ձուլարանները: Զանգեզուրում հայտնաբերվեցին մոլիբդենի հանքավայրեր:

Բնակելի հին տների քանդումը Երևանի Աբովյան փողոցում, 1928 թ.

Քիմիական արդյունաբերության նոր կենտրոններ դարձան Ղարաքիլիսան (Վանաձոր) և Երևանը: Ղարաքիլիսայում կառուցվեց խոշոր քիմիական կոմբինատ՝ կարբիդի և այլ արտադրամասերով:

1933 թ. Երևանում սկսվեց արհեստական կաուչուկի խոշոր գործարանի կառուցումը, որը շահագործման հանձնվեց 1940 թ.: Տասնամյակներ շարունակ Հայաստանը բավարարում էր ԽՍՀՄ-ի կաուչուկի պահանջարկի մեծ մասը: Որոշակի առաջընթաց գրանցվեց նաև թեթև ու սննդի արդյունաբերությունների ճյուղերում: 1928 թ., երբ գործարկվեց Լենինակա-

Երևանի թիվ 1 կարի ֆաբրիկայի ընդհանուր տեսքը, 1940 թ.

Երևանի բետոնի գործարանի շինարարությունը, 1935 թ.

նի հէկը, շահագործման հանձնվեցին տեքստիլ գործարանի մի քանի բաժանմունքներ:

Հայաստանում շինանյութերի արդյունաբերությունը հենվում էր հարուստ հանքերի՝ տուֆի, մարմարի պաշարների վրա: Լենինական—Արթիկ երկաթուղու կառուցման շնորհիվ գործարկվեցին Արթիկտուֆի հանքավայրերը: Ցեմենտի խոշոր կոմբինատ հիմնադրվեց Դավալուում (Արարատ):

Շուտով Հայաստանում ձեռնամուխ եղան սեփական որակյալ կադրեր պատրաստելու գործին: Բարձրագույն կրթությամբ ճարտարագիտական, տեխնիկական կադրեր էր պատրաստում Երևանի պետական համալսարանի տեխնիկական ֆակուլտետը, իսկ հետո՝ համալսարանից անջատված և առանձին բուհ դարձած Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտը: Միջին օղակի տեխնիկական կադրեր էին պատրաստում միջնակարգ տեխնիկական հաստատությունները՝ տեխնիկումները: Որակյալ բանվորական կադրեր սկսեցին պատրաստել ֆաբրիկագործարանային ուսումնարանները:

Արդյունաբերացման արդյունքները: Արդյունաբերացման ընթացքում Հայաստանն աստիճանաբար ագրարային երկրից վերածվեց արդյունաբերական հանրապետության: Առաջին հնգամյակի ընթացքում՝ 1928–1932 թթ., Հայաստանում շահագործման հանձնվեց 18, իսկ երկրորդ հնգամյակում՝ 1933–1937 թթ.՝ 26 արդյունաբերական ձեռնարկություն:

Արդյունաբերացման ուղղակի արդյունք էր բանվոր դասակարգի և ճարտարագիտատեխնիկական անձնակազմի քանակական աճը: Բանվորների թիվը 1928–1940 թթ. ավելացավ 4,5 անգամ՝ հասնելով 92,4 հազարի: Նախապատերազմական հնգամյակների ընթացքում Հայաստանի տնտեսության մեջ արդեն առաջատար էր դարձել արդյունաբերությունը:

Արդյունաբերացումն առաջացրեց բնապահպանական խնդիրներ: Հրազդան գետի վրա կառուցված հիդրոէլեկտրակայաններն աշխա-

տում էին Սևանից բաց թողնվող ջրի հաշվին, որը հանգեցրեց լճի մակարդակի իջեցմանը: Շրջակա միջավայրին և մարդկանց առողջությանը զգալի վնաս հասցրին քիմիական և լեռնամետաղաձուլական ձեռնարկությունների թունավոր արտանետումները:

Գյուղատնտեսության կոլեկտիվացումը: Գյուղի վիճակը 1920-ական թվականների վերջերին: 1920-ական թվականների վերջերին Խորհրդային Հայաստանում կենսագործվող ագրարային բարենորոգումները դեռևս ամբողջությամբ չէին ավարտվել: Չլուծված խնդիրներին զումարվեց կառավարման վարչահրամայական եղանակին անցնելը, որը խիստ բացասաբար անդրադարձավ գյուղատնտեսության վրա:

Տասնամյակներ առաջ սկսված գյուղի շերտավորումը թեև դանդաղ, բայց շարունակվում էր: Գյուղը բաղկացած էր կուլակ (ունևոր գյուղացիներ), միջակ և չքավոր գյուղացիներից: Կուլակներն աշխատանքների ճիշտ կազմակերպման, քրտնաջան աշխատանքի շնորհիվ կարողացել էին ստեղծել կայուն, եկամտաբեր տնտեսություն: Ամենաատվար խավը միջակ գյուղացին էր: Գյուղացիության մի մասն էլ, չկարողանալով ճիշտ կազմակերպել իր տնտեսական գործունեությունը, մասամբ կամ ամբողջապես զրկվել էր հողակտորներից, անասուններից, աշխատանքային գործիքներից և դարձել էր չքավոր: Այս խավը պարզապես պահպանում էր գոյությունը՝ վարձու աշխատանք կատարելով ունևոր գյուղացիների տնտեսություններում:

1927-1928 թթ. դժվարություններ առաջացան հացամթերման բնագավառում: Հացի պակասը լրացնելու համար կոմկուսի ղեկավարության նախաձեռնությամբ սկսվեց կուլակների հացի պաշարների բռնագրավումը: 1929 թ. դեկտեմբերի վերջին Ստալինը հայտարարեց նոր տնտեսական քաղաքականությունից հրաժարվելու և կուլակությանը որպես դասակարգ վերացնելու քաղաքականությանն անցնելու մասին:

Համատարած բռնի կոլեկտիվացումը: Սկսվեց կոլեկտիվ տնտեսությունների կազմակերպումը:

Գյուղացու անհատական տնտեսությունը չէր սպառել զարգացման հնարավորությունները, երբ վրա հասան նոր ժամանակներ: Գյուղացուն զրկելու էին տասնամյակներ շարունակ երազած հողաբաժնից և հարկադրելու էին, որ հրաժարվի դարավոր կենցաղավարությունից՝ հօգուտ կոլեկտիվ աշխատանքի, հանուն գյուղի «սոցիալիստական» վերակառուցման: Փաստորեն գյուղացին օտարվում էր հողից: Երկրի տարբեր տարածաշրջանների համար հաստատվել էին ժամկետներ, որոնց ընթացքում պետք է իրականացվեր կոլեկտիվացումը: Սկզբում այդ գործընթացը պետք է ավարտվեր հացահատիկ արտադրող շրջաններում: Ենթադրվում էր, որ Հայաստանում կոլեկտիվացումը կավարտվի 1933 թ.: 1929 թ. վերջին Ստալինը, «Մեծ բեկման տարին» հոդվածում կեղծելով

իրականությունը, ներկայացրեց, որ իբր գյուղում տեղի է ունեցել արմատական բեկում կոլեկտիվացման օգտին. միջակ գյուղացին, որը գյուղացիության մեծամասնությունն է, արդեն նախընտրում է կոլտնտեսությունը: Հոդվածը, փաստորեն, կոլեկտիվացումն արագացնելու կոչ էր: Հետևելով հրահանգին՝ Հայաստանի ղեկավար մարմիններն անցան խնդրի իրականացմանը: Սակայն գյուղացին ցանկություն չուներ հրաժարվելու անհատական տնտեսությունից և մտնելու կոլտնտեսությունների մեջ: Ամեն տեսակի բռնություններ գործադրելով՝ միջակ և չքավոր գյուղացիներին ստիպում էին անդամագրվել կոլեկտիվ տնտեսություններին: Սրանով խախտվում էր կոլեկտիվացման կամավորության սկզբունքը:

Համատարած կոլեկտիվացումն արագացնելու նպատակով կուսակցության առաջադրանքով գյուղ մեկնեցին բանվորական խմբեր, որոնք իրենց հերթին ճնշում էին գործադրում գյուղացիների վրա: 1929 թ. դեկտեմբերից մինչև 1930 թ. փետրվար ամիսը «համատարած կոլեկտիվացում» անցկացվեց Երևանի ամբողջ գավառում, Լենինականի և Լոռու գավառների մեծ մասում և առանձին շրջաններում:

Բռնագրավելով ունևոր գյուղացու ունեցվածքը՝ նրան ամբողջ ընտանիքով վտարում էին գյուղից՝ բնակության տեղ հատկացնելով անբարենպաստ կլիմայական պայմաններ ունեցող շրջաններում: Գործընթացը ստացել էր ***կուլակաթափություն*** անվանումը: 1930 թ. ապրիլի դրությամբ որպես «կուլակ» ունեզրկվել էր շուրջ 1100 տնտեսություն:

Գյուղացիության պայքարը: Գյուղացին զինված դիմադրություն սկսեց՝ ի պատասխան բռնաճնշումների և հարկադրական կոլեկտիվացման: Հայաստանի առանձին շրջաններում՝ Դարալագյազ, Ծամշադին, Վեդի, Թալին, պայքարը կրում էր զինված բնույթ: 1930 թ. մարտից մինչև մայիս ամիսները Դարալագյազի ամբողջ շրջանը ապստամբած գյուղացիների ձեռքին էր: Պայքարը ղեկավարում էին նախկին խմբապետներ Մարտիրոսը և Ղարդաշխանը, որոնք մեծ խմբով այստեղ էին հասել Պարսկաստանից:

Առանձին շրջաններում, մասնավորապես Ծամշադինում շարժման մեջ ներթափանցեցին նաև իսկական ավազակախմբեր, որոնք նախկինում զբաղվում էին գյուղերի կողոպուտով:

Հակակոլտնտեսային շարժումն արտահայտվեց նաև գյուղացիների կողմից իրենց անասուններն անխնա կոտորելու ձևով՝ կոլտնտեսություններին չհանձնելու համար: Այդ պայմաններում Հայաստանում խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը կրճատվեց 30 %-ով, իսկ մանր եղջերավորներինը՝ կիսով չափ:

Գյուղացիական ելույթները ճնշելու համար պետությունը գործի դրեց բանակային զորամասեր, պետքաղվարչության, միլիցիայի ստորաբաժանումներ, կոմունիստներից կազմված զինված խմբեր: Գյուղացիության պայքարը ճնշվեց: Գնդակահարվե-

ցին և բանտարկվեցին հարյուրավոր մարդիկ:

Կոլեկտիվացման հետագա ընթացքը, արդյունքները, հետևանքները: Գյուղում ստեղծված դրությունը խորհրդային իշխանության համար հղի էր լուրջ վտանգներով: Իշխանությունները ստիպված էին հրաժարվել համատարած կոլեկտիվացման կարգախոսից: Շուտով Հայաստանում լուծարվեց հարկադրաբար ստեղծված կոլտնտեսությունների մեծ մասը, իսկ գյուղացիները հեռացան կոլտնտեսություններից: Որպես ճնշման միջոց սկսեց օգտագործվել հարկերի ավելացման քաղաքականությունը: Հարկերն ու մթերումները ծանր բեռ էին և՛ անհատական, և՛ կոլեկտիվ տնտեսությունների համար: Այդ ամենին ավելացավ 1932–1933 թթ. ահավոր սովը: Դրանից մեծապես տուժեց Սևանա լճի ավազանի բնակչությունը: 1933 թ. ապրուստի միջոց հայթայթելու համար այդ շրջանները լքեց շուրջ 6750 ընտանիք: Նման երևույթներ տեղի էին ունենում ԽՍՀՄ այլ հանրապետություններում: Գյուղացիների տեղաշարժերը կասեցնելու համար նրանցից խլեցին անձնագրերը, առանց որոնց հնարավոր չէր հաստատվել որևէ վայրում:

Հաջորդ տարիների ընթացքում մենատնտես գյուղացիությունը, ծանր հարկային բեռին չդիմանալով, ստիպված էր, այնուամենայնիվ, ընդգրկվել կոլեկտիվ տնտեսություններում: Հայաստանում գյուղացիության ճնշող մեծամասնությունը կոլտնտեսություններին անդամագրվեց 1935–1937 թթ.: 1930-ական թվականների վերջին հանրապետության ավելի քան 1000 կոլտնտեսություններում ընդգրկված էր շուրջ 180 հազար գյուղացիական տնտեսություն:

Գյուղատնտեսության կոլեկտիվացումը տնտեսական վերելք չապահովեց, ընդհակառակը, անկում ապրեցին նրա բոլոր ճյուղերը: Պատճառն այն էր, որ գործող խմբային սեփականության համակարգը, նյութական շահագրգռվածության բացակայությունը չէին կարող աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու խթան հանդիսանալ:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ո՞րն էր արդյունաբերացման քաղաքականության իրագործման նպատակը: Ինչ եղանակներով էին հայթայթվում անհրաժեշտ ֆինանսական միջոցները: Ձեր կարծիքով ինչո՞ւ էր արդյունաբերացման համար տևական ժամանակ պահանջվում: Արդյունաբերացման տարիներին ինչ հէկեր կառուցվեցին Հայաստանում:
2. Երբ և ինչ խոշոր գործարաններ կառուցվեցին Հայաստանում: Որո՞նք էին Հայաստանի լեռնահանքային, շինանյութերի և քիմիական արդյունաբերության խոշոր կենտրոնները:

3. Ինչ կադրային քաղաքականություն էր իրականացնում Հայաստանը արդյունաբերության զարգացման ուղղությամբ: Ներկայացրեք և գնահատեք արդյունաբերացման կարևոր արդյունքներն ու բացասական հետևանքները:
4. Ինչ խավերից էր բաղկացած գյուղացիությունը. համեմատեք այդ խավերը: Ինչ քայլեր ձեռնարկվեցին հացի պակասը լրացնելու ուղղությամբ: Ինչ հայտարարեց Ստալինը 1929 թ. վերջին:
5. Ներկայացրեք և գնահատեք կոլեկտիվացման էությունը: Ինչ միջոցներով էր իրականացվում կոլեկտիվացումը: Ինչ հետևանքներ ունեցավ բռնի կոլեկտիվացման քաղաքականությունը, և ինչպես դրսևորվեց հակակոլտնտեսային շարժումը:
6. Հետագայում ինչու՞ իշխանությունները հրաժարվեցին համատարած կոլեկտիվացման կարգախոսից: Ինչ արդյունքներ ու հետևանքներ ունեցավ կոլեկտիվացումը: Ձեր կարծիքով ինչու՞ նպատակին չհասավ կոլեկտիվացումը:

§ 3–4. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ–ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ

Կոմունիստական կուսակցության մենիշխանության հաստատումը: Հայաստանում խորհրդային իշխանության հաստատումից հետո պետական բարձր պաշտոնները գրավեց կառավարող բոլշևիկյան կուսակցությունը: Պետական իշխանության մարմինները հայտնվեցին նույն կուսակցության ձեռքում, որը քայլեր էր ձեռնարկում մյուս քաղաքական ուժերին երկրից դուրս մղելու ուղղությամբ: Այդ գործում առավել նպաստավոր պայմաններ ստեղծվեցին 1921 թ. Փետրվարյան ապստամբությունից հետո, երբ մի շարք կուսակցություններ Հայաստանում դադարեցրին գործունեությունը կամ անցան ընդհատակ: Կարճ ժամանակահատվածում երկրում հաստատվեց կոմունիստական կուսակցության մենիշխանությունը:

Հայաստանում ոչ կոմունիստական ուժերից էին Հայ հեղափոխական դաշնակցությունը, Սոցիալ–դեմոկրատական հնչակյան կուսակցությունը, սոցիալ–դեմոկրատական բանվորական (սպեցիֆիկներ), սոցիալիստ–հեղափոխականների ու սոցիալ–դեմոկրատ մենշևիկների կազմակերպությունները:

Հայաստանի իշխանությունները և կոմունիստական կուսակցությունը հատկապես վտանգավոր էին համարում դաշնակցությանը՝ ընդհատակ անցած իր կազմակերպությունների ցանցով և ժողովրդի մեջ պահպանած ազդեցությամբ:

Դաշնակցության կոմիտեների անունից մամուլում հայտարարություններ հրապարակվեցին՝ իբր կուսակցության անդամները ցանկանում են դադարեցնել իրենց աշխատանքը և այդ նպատակով համագումար են հրավիրել: Մի քանի ամիս տևած նախապատրաստա-

կան աշխատանքներից հետո 1923 թ. նոյեմբերին Երևանում գումարվեց դաշնակցության, այսպես կոչված, ինքնավերացման համագումարը: Այն հայտարարեց Հայաստանում իրենց կուսակցության վերացման մասին և կոչ ուղղեց արտասահմանի ընկերներին, որ հեռանան դաշնակցությունից և հարեն կոմունիստական ինտերնացիոնալի դիրքերում կանգնած տեղական կազմակերպություններին, այսինքն՝ տեղական կոմունիստական կուսակցություններին:

Համագումարի կոչին արտասահմանում չհետևեցին, իսկ Հայաստանում պահպանվեցին ընդհատակյա կազմակերպությունների կառույցները, որոնք վերացվեցին հետագա տարիներին՝ ստալինյան բռնությունների ժամանակաշրջանում:

Վերոհիշյալ եղանակով 1924 թ. փետրվարին կազմակերպվեց նաև դաշնակցության երիտասարդական միության «ինքնավերացման» համագումարը:

Հնչակյանների հարցը քննարկվել էր կոմունիստական կուսակցության միութենական և հանրապետական բարձրագույն մարմիններում ու Կոմինտերնի գործադիր կոմիտեի նախագահությունում: 1923 թ. փետրվարի 5–ին կայացված որոշմամբ կոմկուսի անդամ դառնալու համար հնչակյանների առաջ դրվեցին մի շարք պայմաններ: Այդ պայմանները կատարելուց հետո միայն նրանց ընդգրկեցին կոմունիստական կուսակցության մեջ: Կոմկուսի անդամ դարձավ նաև Հնչակյան կուսակցության առաջնորդներից Ա. Նազարբեկյանը: Փաստորեն 1924 թ. Հնչակյան կուսակցությունը ԽՍՀՄ տարածքում դադարեցրեց իր գործունեությունը: Հակառակ Կոմինտերնի ընդունած որոշման՝ կուսակցությունն իր գործունեությունը շարունակեց արտասահմանում:

Քաղաքական համակարգի բաղկացուցիչ մասերը: Խորհրդային Հայաստանի քաղաքական–հասարակական կյանքն ընթանում էր կոմունիստական կուսակցության մենիշխանության պայմաններում և նրա ղեկավարությամբ: Հայաստանի կոմկուսը, լինելով ՌԿ(բ)Կ, իսկ 1925 թվականից՝ Համամիութենական կոմունիստական (բոլշևիկյան) կուսակցության (ՀամԿ(բ)Կ) բաղկացուցիչ մասը, ըստ էության, զուրկ էր ինքնուրույն քաղաքականություն մշակելու և իրականացնելու հնարավորությունից:

1920–1930–ական թվականներին Հայաստանի կոմունիստական կուսակցության շարքերում հաշվվում էր 36 հազար անդամ: Պետական պաշտոնները վստահվում էին գերազանցապես կուսակցության անդամներին: Նույնիսկ տարբեր կարգի խորհուրդներում թեկնածուների առաջադրման իրավունքը բացառապես վստահված էր կուսակցական և նրանց կողմից ղեկավարվող հասարակական կազմակերպություններին:

Տեղերում կուսակցական մարմիններն ամրապնդելու համար 1930 թ. Հայաստանի գավառային բաժանումը վերացվեց, և ստեղծվեցին 25 շրջան-

ներ՝ իրենց կուսակցական կոմիտեներով:

ԽՍՀՄ և ազգային հանրապետությունների սահմանադրություններով պետության քաղաքական հիմքը խորհուրդներն էին: Փաստորեն երկրի պետական կառավարումը պետք է իրականացվեր խորհուրդների միջոցով, սակայն պետական ոչ մի օրենք չէր կարող ընդունվել առանց կուսակցության բարձրագույն մարմինների հավանության: Խորհուրդներում պաշտոններ ստանձնած կուսակցության անդամները պարտավոր էին անվերապահորեն կատարել կուսակցության վերնախավի որոշումները: Այդ պայմաններում խորհուրդները դարձան կոմկուսի կցորդն ու կամակատարը:

Ամենազանգվածային կազմակերպությունները երիտասարդական և արհեստակցական միություններն էին: Հայաստանի կոմունիստական երիտասարդական միությունը (ՀԿԵՄ) ստեղծվել էր 1921 թ., և արդեն 1930 թ. նրա շարքերում շուրջ 23 հազար երիտասարդ կար: Հաջորդ տասնամյակի ընթացքում այդ թիվը քառապատկվեց:

Ստեղծվեց մինչև անգամ մանկական կամ պիոներական կոմունիստական կազմակերպություն: Մյուս զանգվածային հասարակական կազմակերպությունն արհեստակցական միություններն էին: Նրանց գործունեությունը կենտրոնացնելու համար ստեղծվեց Հայաստանի արհեստակցական միությունների խորհուրդ (ՀԱՄԽ): Աշխատավորության մեծագույն մասն ընդգրկված էր այդ միություններում:

Ներկուսակցական պայքարը, անհատի պաշտամունքի ձևավորումը, քաղաքական բռնաճնշումները: 1920-ական թվականներին կոմունիստներն անզիջում պայքար էին մղում ոչ միայն ուրիշ կուսակցությունների, այլև կոմունիստական կուսակցության ներսում այն մարդկանց ու խմբերի դեմ, որոնք ընդհանուրից տարբերվող տեսակետ էին արտահայտում այս կամ այն հարցի վերաբերյալ: Դրանցից էր տրոցկիստական ընդդիմությունը, որը Լենինի մահից հետո հանդես եկավ ***Լ. Տրոցկու***, այնուհետև նրան միացած ***Գ. Զինովևի*** և ***Լ. Կամենևի*** գլխավորությամբ:

Հայաստանում ևս եղան Տրոցկու տեսակետների պաշտպաններ, չնայած այդպիսիք մեծ թիվ չէին կազմում: Տրոցկիստական կազմակերպություններ կային Լենինականի, Ղարաքիլիսայի երկաթուղայինների շրջանում և այլ հիմնարկություններում: Երևանի կոմերիտական կազմակերպության շարքերում գոյություն ուներ տրոցկիստական 2 խումբ, որոնք իրենց անվանում էին «Երիտասարդության տրոցկիստական միություն» և «Ուղղափառ մարքսիստներ»: Հայ տրոցկիստների առաջին ելույթը երեք կուսակցական գործիչների հրապարակած «Երեքի դեկլարացիան» էր, որը տպագրվեց մամուլում 1927 թվականին:

Ստալինն իր զինակիցների հետ կազմակերպեց տրոցկիստական ընդդիմության գաղափարական և կազմակերպական ջախջախումը: 1927 թ.

նույնը տեղի ունեցավ նաև Հայաստանում: Հաջորդ երկու տարիներին նույն ճակատագրին արժանացան ընդդիմության մյուս ներկայացուցիչները:

«Աջերի», տրոցկիստների ջախջախումից հետո ՀամԿ(բ)Կ ստալինյան ղեկավարությունը հաստատեց իր բացարձակ իշխանությունը: Սկսում էր ձևավորվել Ստալինի պաշտամունքը, որը բացահայտ դարձավ 1929 թ.՝ նրա ծննդյան 50-ամյակը նշելուց հետո: Ստալինի պաշտամունքը նրա դերի գերագնահատումն էր. նրան էին վերագրում ԽՍՀՄ ժողովուրդների ահռելի ջանքերով ձեռք բերված հաջողություններն ու հաղթանակները:

1928 թ. ՀԿ(բ)Կ կենտկոմի նախագահությունն անհրաժեշտ համարեց մեկուսացնել տրոցկիստական ընդդիմության վերնախավին, որն իրականացրեց Հայաստանի պետքաղվարչության «Հատուկ խորհրդակցությունը»:

1930-1932 թթ. շարունակվեցին դաշնակցության անդամների զանգվածային ձերբակալությունները, շատ դեպքերում՝ միայն կուսակցական պատկանելության համար: 1932 թ. սկզբին առանց դատաքննության և դատարանի վճիռների գնդակահարվեց շուրջ 500 մարդ, տարբեր ժամկետների ազատազրկման ենթարկվեց շուրջ 2100 մարդ:

Ամբողջատիրությունը՝ բոլշևիզմի օրինաչափ հետևանք: 1930-ական թվականների կեսերին Ստալինի պաշտամունքը հասավ գագաթնակետին: Երկրի ամբողջ ղեկավարումը կենտրոնացել էր Ստալինի և

Աղասի Խանջյան

նրա կամակատար շրջապատի ձեռքում: Իշխող վարչակարգն ամբողջությամբ իր շահերին էր ծառայեցնում երկրի հասարակական, քաղաքական, մշակութային, սոցիալական կյանքը: Երկրում հաստատվեց ***ամբողջատիրական (տոտալիտար) համակարգ***: Այդ համակարգի բնորոշ գծերն են՝ միակուսակցական համակարգի հաստատումը բռնության միջոցով, իշխող կուսակցության ներսում ընդդիմության ոչնչացումը, պետական իշխանության բռնազավթումը կուսակցության կողմից, օրենսդիր, գործադիր, դատական իշխանությունների տարանջատման համակարգի բացակայությունը, քաղաքացիական ազատությունների վերացումը և այլն:

1930-ական թվականների սկզբի քաղաքական իրադարձությունները: Խորհրդային երկրի կուսակցական կյանքի բնորոշ գծերից էր խմբակայնությունը, երբ պետական, կուսակցական բարձր պաշտոններ զբաղեցնող գործիչները, համախոհների խմբեր կազմած, պայքարում էին միմյանց դեմ: Խմբակայնությու-

նը սկզբունքային գաղափարական բնույթ չէր կրում և պայքար էր գործիչների միջև՝ ղեկավար պաշտոններ գրավելու համար: Ընչին զրպարտանքը դառնում էր մարդկանց ճակատագրի խեղման պատճառ:

Նման ճակատագրի արժանացավ 1930 թ. ՀԿ(բ)Կ կենտկոմի առաջին քարտուղար ընտրված ***Աղասի Խանջյանը***: Նրան մեղադրեցին ազգայնամոլության համար: Այդ արշավն ավելի մեծ թափ ստացավ, երբ Անդրկովկասի կուսակցական երկրամասային կոմիտեի առաջին քարտուղար դարձավ Լ. Բերիան: Նա Խանջյանի դեմ տրամադրեց կուսակցության մի խումբ կամակատարների:

Լենինգրադի կուսմարզկոմի առաջին քարտուղար Ս. Կիրովի սպանությունը (1934 թ. դեկտեմբեր) Ստալինն օգտագործեց իր նախկին զինակիցներից ազատվելու համար: Նրանք մեղադրվեցին Կիրովի սպանության կազմակերպման մեջ, ձերբակալվեցին և դատարանի վճռով գնդակահարվեցին: Երկրի պատժիչ մարմինների համար բացվեց գործունեության լայն ասպարեզ:

Զանգվածային ձերբակալություններն ու բռնությունները: 1936 թ. ԽՍՀՄ կառավարությունը Հայաստան ուղարկեց ստուգող հանձնաժողով, որն իբր լուրջ թերություններ բացահայտեց տնտեսության բնագավառում: Որոշվեց, որ Հայաստանի ղեկավարությունը ցուցաբերում է ազգայնամոլական մոտեցում և հանրապետության շահերը վեր է դասում ԽՍՀՄ ընդհանուր շահերից: 1936 թ. մայիսին ձերբակալվեց մարքսիզմ–լենինիզմի ինստիտուտի տնօրեն ***Ներսիկ Ստեփանյանը***: Շուտով եղան նոր ձերբակալություններ: 1936 թ. հուլիսին Բերիայի հրամանով Թիֆլիսում սպանվեց Աղասի Խանջյանը: Պաշտոնապես հայտարարվեց, որ նա ինքնասպան է եղել: ՀԿ(բ)Կ կենտկոմի նոր առաջին քարտուղար Ա. Ամատունու կարգադրությամբ այդ գործն իր անմիջական հսկողության տակ էր վերցրել Հայաստանի ներքին գործերի ժողկոմ Խաչիկ Մուղդուսին:

Զանգվածային ձերբակալությունների ու բռնությունների ալիքը գագաթնակետին հասավ 1937 թ.: Մոսկվայից Հայաստանի իշխանություններին կարգադրություն էր արվել՝ շարունակել «ժողովրդի թշնամիների» «արդյունավետ» որոնումները: Ձերբակալվեցին պետական, կուսակցական, մշակութային հարյուրավոր գործիչներ, բանվորներ, ծառայողներ, գյուղացիներ, զինվորականներ: Ձախ թեքման և այլ «հանցանքների» համար մեղադրվեցին Եղիշե Չարենցը, Ակսել Բակունցը, Գուրգեն Մահարին և ուրիշներ: Չարենցը մահացավ բանտում, Բակունցը մահապատժի ենթարկվեց, Մահարին Հայաստանից աքսորվեց:

Բացի դատարանով պատժվածներից՝ մեծ թիվ էին կազմում նաև նրանք, ում գործերը ձևակերպում էին արտադատարանային կարգով. դրանք իրականացնում էին պետքաղվարչության կոլեգիան, հատուկ խորհրդակցությունը: 1937 թ. օգոստոսին՝ հարցաքննության ժամանակ, երրորդ

հարկի լուսամուտից ցած նետվեց Հայաստանի ժողկոմխորհի նախկին նախագահ Սահակ Տեր-Գաբրիելյանը:

ՀԿ(բ)Կ կենտկոմի առաջին քարտուղար ընտրվեց Գրիգոր Հարությունյանը: Բռնությունները Հայաստանում շարունակվեցին մինչև 1939 թ.: Պատժիչ մարմինների աչքից չվրիպեցին ուսուցիչները, ուսանողները և նույնիսկ աշակերտները:

1938 թ., երբ սրվեց միջազգային դրությունը, իշխանությունները փոքր-ինչ մեղմացրին բռնությունները:

Որոշ հաշվարկներով՝ 1930-ական թվականներին Հայաստանում բռնությունների է ենթարկվել 15 հազար մարդ, որոնց մեկ երրորդը գնդակահարվել է:

Պետության անհանդուրժողական քաղաքականությունը կրոնի և եկեղեցու նկատմամբ: Խորհրդային Հայաստանի Սահմանադրությամբ եկեղեցին դառնում էր «հավատացյալների մասնավոր համայնք», իսկ բոլոր քաղաքացիներին իրավունք էր տրվում ազատորեն վարելու կրոնական և հակակրոնական քարոզչություն: Իրականում, սակայն, խիստ սահմանափակվեցին կրոնական քարոզչության հնարավորությունները, և ուժեղ պայքար ծավալվեց եկեղեցու դեմ:

Պետությունը եկեղեցու հետ հարաբերություններն իրականացնում էր իր ներկայացուցիչների միջոցով: Խորհրդային իշխանության համար Հայոց եկեղեցին և առանձին հոգևորականներ կապի միջոց էին Սփյուռքում գործելու համար:

Խորեն Մուրադբեգյան

Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից հետո իշխանության առաջին քայլը եկեղեցու դեմ նրան անշարժ և շարժական գույքից զրկելն էր: Ռուսաստանի սովյալ բնակչությանն օգնելու պատրվակով սկսվեց եկեղեցական գույքի և թանկարժեք իրերի բռնագրավումը: Գևորգ Ե կաթողիկոսը միաբաններին ուղղված կոնդակով դատապարտեց Էջմիածինը «քանդող» խորհրդային իշխանության քաղաքականությունը:

Պետությունը միջամտում էր եկեղեցու բոլոր գործերին: Արգելվել էր ճեմարանի վերաբացումը: Թույլատրվել էր միայն հոգևոր դպրոցի գործունեությունը՝ ծրագրից հանելով աշխարհիկ և հանրակրթական առարկաների ուսուցումը: 1926 թ. հատուկ որոշումով արգելվեց եկեղեցու կող-

մից Հայոց եղեռնի օրվա՝ ապրիլի 24–ի նշումը:

Պաշտոնական եկեղեցու դեմ պայքարում իշխանությունները փորձեցին օգտագործել այսպես կոչված «Ազատ եկեղեցական եղբայրությունը» կամ «Նոր եկեղեցին», որն, ըստ էության, աղանդավորական դրսևորում էր: Նրանք քարոզում էին, որ եկեղեցիները պետք է ինքնուրույն լինեն, չենթարկվեն հոգևոր կենտրոնին, կրճատեն ծիսական արարողությունները, հրաժարվեն կուսակրոնությունից: Պետությունը «Նոր եկեղեցուն» տրամադրել էր շենք և միջոցներ՝ հրատարակչական գործունեություն ծավալելու համար: 1926 թ. Ս. Էջմիածնի Գերագույն հոգևոր խորհուրդը դիմեց բոլոր թեմերին՝ դատապարտելով «Նոր եկեղեցի» կազմակերպության պառակտիչ գործունեությունը:

Հայոց եկեղեցու դեմ պայքարն ավելի սաստկացավ համատարած կոլեկտիվացման շրջանում. հոգևորականությունը դիտվեց որպես հակահեղափոխական և հակախորհրդային տարր:

1930 թ. մահացավ Գևորգ Ե կաթողիկոսը: Պետությունը խոչընդոտներ էր ստեղծում և ձգձգում նոր հայրապետի ընտրությունը: 1932 թ. նոր կաթողիկոս ընտրվեց ***Խորեն արքեպիսկոպոս Մուրադբեգյանը:***

Սկսած 1920–ական թվականներից՝ պետությունը փակում էր վանքերը, եկեղեցիները, դրանք ծառայեցնում որպես պահեստներ: 1937 թ. վերջին Հայաստանում փակված էր 800 եկեղեցի: Բռնությունների զոհ դարձան հարյուրավոր հոգևորականներ, նրանցից 91–ը գնդակահարվեց:

1930–ական թվականներին ԽՍՀՄ իշխանությունների կարգադրությամբ Երևանում և հանրապետության մյուս բնակավայրերում հիմնահատակ քանդվեցին մեծ թվով վանքեր և եկեղեցիներ:

1938 թ. ապրիլին Էջմիածնում խեղդամահ արվեց կաթողիկոս Խորեն Մուրադբեգյանը: Լուրջ վտանգ ստեղծվեց Հայոց եկեղեցու գոյության համար: ՀԿ(բ)Կ կենտկոմը 1938 թ. օգոստոսի 4–ին Էջմիածնի վանքը փակելու, կաթողիկոսությունը վերացնելու մասին որոշում ընդունեց: Մոսկվան չհաստատեց այդ որոշումը, բայց նաև մինչև Երկրորդ աշխարհամարտի ավարտը թույլ չտվեց անցկացնել կաթողիկոսի ընտրություններ:

Հայաստանը՝ միութենական հանրապետություն: Խորհրդային Միության կազմավորումից հետո երկրի բովանդակ կյանքում տեղի էին ունեցել արմատական փոփոխություններ, և անհրաժեշտություն էր առաջացել նոր Սահմանադրությամբ ամրապնդելու այդ տեղաշարժերը:

1920–1930–ական թվականներին ԽՍՀՄ–ում պարբերաբար իրականացվում էին ազգային վարչատարածքային վերաբաժանումներ, որոնց հետևանքով ազգային տարածքներն արհեստականորեն մտցվում էին մեկ այս, մեկ այն ինքնավար կամ հանրապետական պետական միավորման կազմի մեջ: Անհրաժեշտություն էր առաջացել հստակ որոշելու ազգային ինքնավարության կամ հանրապե-

տության կարգավիճակի և սահմանների հարցերը:

1936 թ. դեկտեմբերի 5-ին ԽՍՀՄ խորհուրդների 8-րդ համագումարում ընդունվեց երկրի նոր Սահմանադրությունը: Երկրի բարձրագույն օրենսդիր մարմինը ԽՍՀՄ Գերագույն խորհուրդն էր, որ կազմված էր երկու՝ Միության խորհրդի և Ազգությունների խորհրդի պալատներից (ատյաններից):

ԽՍՀՄ նոր Սահմանադրությամբ Անդրկովկասյան Դաշնությունը լուծարվեց, և մյուս 10 ազգային հանրապետությունների հետ Հայաստանը հռչակվեց միութենական հանրապետություն՝ Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն (ՀԽՍՀ): Այդ հանրապետությունները ԽՍՀՄ Սահմանադրության հիմքի վրա պետք է համապատասխան սահմանադրություն ունենային: Խորհրդային Հայաստանի նոր Սահմանադրությունն ընդունվեց 1937 թ. մարտին:

Նոր օրենքով 1937 թ. դեկտեմբերի 12-ին կայացան բարձրագույն իշխանության՝ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի ընտրությունները: Հայկական ԽՍՀ-ից ընտրվեց 4 պատգամավոր (ըստ բնակչության թվի) Միության պալատի և 25 պատգամավոր (որպես միութենական հանրապետություն) Ազգությունների պալատի համար:

1938 թ. հունիսին տեղի ունեցան Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի ընտրությունները:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչ փոփոխություններ կատարվեցին Հայաստանի հասարակական-քաղաքական կյանքում խորհրդային իշխանության հաստատումից հետո: Ոչ կոմունիստական ինչ ուժեր էին գործում Հայաստանում, և ինչ ճակատագիր նրանք ունեցան:
2. Ներկայացրեք և գնահատեք խորհուրդների և կոմունիստական կուսակցության փոխհարաբերությունները: Որոնք էին ամենախոշոր կազմակերպությունները և երբ էին ստեղծվել:
3. Հիմնական գծերով ներկայացրեք 1920-ական թվականների միջկուսակցական և ներկուսակցական պայքարը: Ինչ ավարտ և հետևանքներ ունեցավ այն:
4. Ներկայացրեք ամբողջատիրական վարչակարգի էությունը. համեմատեք ժողովրդավարական և ամբողջատիրական վարչակարգերը: Լրացուցիչ տվյալներ ներկայացրեք Ա. Խանջյանի վերաբերյալ և գնահատեք նրա գործունեությունը:
5. Համառոտ ներկայացրեք 1936-1939 թթ. Հայաստանում կիրառված բռնությունների և զանգվածային ձերբակալությունների քաղաքականությունը և դրա հետևանքները: Ձեր կարծիքով ինչ նպատակ էր հետապնդում այդ քաղաքականությունը:

6. Ձեր կարծիքով որո՞նք էին կրոնի և եկեղեցու նկատմամբ խորհրդային պետության անհանդուրժողականության պատճառները: Ի՞նչ միջոցներով էր պետությունը պայքարում Հայ եկեղեցու դեմ. ներկայացրե՛ք և գնահատե՛ք այդ պայքարի ընթացքն ու հետևանքները:
7. Որո՞նք էին ԽՍՀՄ նոր Սահմանադրության ընդունման պատճառները: Ե՞րբ և որտե՞ղ է ընդունվել այն: Ո՞րն էր երկրի բարձրագույն օրենսդիր մարմինը և ի՞նչ կառուցվածք ուներ: Ի՞նչ փոփոխություն կատարվեց Անդրկովկասում: Այլ աղբյուրներից ճշտե՛ք միութենական մյուս հանրապետությունների անվանումները: Ե՞րբ է ընդունվել Խորհրդային Հայաստանի նոր Սահմանադրությունը:

ԳԼՈՒԽ 3. ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1941–1945 ԹԹ.)

§ 1. ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ ՄԵԾ ՀԱՅՐԵՆԱԿԱՆՈՒՄ

Գերմանիայի հարձակումը ԽՍՀՄ-ի վրա: 1939 թ. սեպտեմբերի 1-ին Լեհաստանի վրա Գերմանիայի հարձակումով սկսվեց Երկրորդ համաշխարհային պատերազմը: Պատերազմի առաջին փուլում զավթելով Եվրոպայի զգալի մասը՝ Գերմանիան, 1941 թ. հունիսի 22-ին խախտելով 1939 թ. օգոստոսի 23-ին ԽՍՀՄ-ի հետ կնքած չհարձակման պայմանագիրը, հարձակվեց Խորհրդային Միության վրա: Սկսվեց ԽՍՀՄ ժողովուրդների Հայրենական մեծ պատերազմը (1941–1945 թթ.):

Գերմանիան նպատակ ուներ կայծակնային պատերազմի միջոցով մի քանի շաբաթվա ընթացքում գրավելու ԽՍՀՄ-ը և հասնելու համաշխարհային տիրապետության:

Երկրորդ աշխարհամարտում Թուրքիան գաղտնի գործակցում էր Գերմանիայի հետ: Դա նշանակում էր, որ հայ ժողովրդի համար առկա էր լուրջ վտանգ: Պատահական չէր, որ երբ ֆաշիստական զորքերը մոտենում էին Ստալինգրադին և Կովկասին, Թուրքիայում գլուխ բարձրացրին պանթյուրքիզմի գաղափարախոսները: Նրանց հրապարակած աշխատություններում և քարտեզներում ընդհանրապես բացակայում էր ***Հայաստան*** անունը: Գերմանիան, որպես դաշնակից, խրախուսում էր Թուրքիային:

Պատերազմի սկզբնական փուլում խորհրդային զորքերը մեծ կորուստներով նահանջում էին՝ թշնամուն թողնելով ընդարձակ տարածքներ:

Սակայն ԽՍՀՄ-ը Գերմանիայի դեմ պայքարում միայնակ չմնաց: ԱՄՆ-ը, Մեծ Բրիտանիան, ԽՍՀՄ-ը և այլ երկրներ միանալով կազմեցին հակաֆաշիստական միություն:

Խորհրդային Հայաստանի տնտեսության վերակառուցու-

մը պատերազմի պահանջներին համապատասխան: Պատերազմի հենց սկզբից հայ ժողովուրդը խորհրդային մյուս ժողովուրդների հետ ոտքի կանգնեց պաշտպանելու հայրենիքը: 1941 թ. հունիսի 23–ից Խորհրդային Հայաստանում ևս սկսվեց զորահավաքը: Հանրապետությունից պատերազմի տարիներին բանակ զորակոչվեց շուրջ 330 հազար մարդ, որից 300 հազարը՝ հայեր: Եվս 200 հազար հայեր զորակոչվեցին մյուս խորհրդային հանրապետություններից: Արտասահմանում ապրող հայերից պատերազմին մասնակցել են շուրջ 100 հազարը: Ընդհանուր առմամբ, երկրորդ համաշխարհային պատերազմին մասնակցեցին մոտ 600 հազար հայեր, որոնցից 200 հազարը զոհվեցին:

Թեպետ Հայաստանում ռազմական գործողություններ տեղի չունեցան, սակայն հայ ժողովուրդը թե՛ ռազմաճակատում, թե՛ թիկունքում հերոսական պայքար մղեց ֆաշիզմի դեմ:

Առաջնահերթ խնդիր էր Խորհրդային Հայաստանի տնտեսության վերակառուցումը պատերազմի պահանջներին համապատասխան: Ամենուր մարդիկ առաջնորդվում էին «Ամեն ինչ պատերազմի համար, ամեն ինչ հաղթանակի համար» նշանաբանով: Նրանց անձնվիրության շնորհիվ պատերազմի տարիներին հանրապետությունում ոչ միայն պահպանվեցին ու ամրապնդվեցին գործարանները, այլև շահագործման հանձնվեց շուրջ 30 արդյունաբերական նոր ձեռնարկություն՝ ավիացիոն, ավտոդողերի, կոմպրեսորների, ժամացույցի և այլ գործարաններ: Հանրապետությունում թողարկվում էր 300 նոր արտադրատեսակ, այդ թվում՝ 10 տեսակի զինամթերք, ականանետներ, ականներ, նռնակներ, ինքնաթիռներ, ռետինատեխնիկական իրեր և այլն:

Պատերազմի տարիներին Հայաստանը երկրին մատակարարում էր կաուչուկ, պղինձ, կարբիդ:

Դժվարին վիճակում հայտնվեց գյուղատնտեսությունը: Ռազմաճակատ մեկնած տղամարդկանց գյուղերում փոխարինեցին կանայք, թոշակառուները, պատանիները: Նրանց ջանքերով ընդարձակվեցին ցանքատարածությունները, հանրապետությունը հիմնականում ապահովվեց սեփական հացով, և դրսից հացի ներմուծումը հասցվեց նվազագույնի: Սկսեցին արտադրել մեծ քանակությամբ նոր տեխնիկական մշակաբույսեր՝ ծխախոտ, ճակնդեղ և կարտոֆիլ:

Պատերազմի տարիներին հսկայական աշխատանք կատարեցին Հայաստանի մտավորականները՝ գրականության, արվեստի, գիտության գործիչները: Չնայած պատերազմական դժվարություններին՝ ***1943 թ. նոյեմբերի 29–ին հիմնադրվեց ՀԽՍՀ Գիտությունների ակադեմիան:***

Պատերազմի տարիներին Հայաստանի բնակչության խնայողությունների հաշվին Կարմիր բանակի համար կազմվեցին «Խորհրդային Հայաստան», «Հայաստանի կոլտնտեսական», «Զանգեզուրի լեռնագործ», «Հայաստանի ֆիզկուլտուր-

նիկ», «Հայաստանի կոմերիտական» տանկային շարասյուները, «Խորհրդային Հայաստան», «Հաղթանակ», «Երիտասարդ գվարդիա» ավիաէսկադրաները և այլն:

Գերմանիայի դեմ տարած հաղթանակում զգալի ներդրում ունեցան ԽՍՀՄ պետական բարձրագույն մարմիններում, ռազմական արդյունաբերության և ժողովրդական տնտեսության տարբեր բնագավառներում աշխատող հայերը՝ Անաստաս Միկոյանը, որը ԽՍՀՄ Պաշտպանության պետական կոմիտեի (ՊՊԿ) անդամ էր, ԽՍՀՄ սև մետաղաձուլության նախարար Իվան Թևոսյանը, «ՄԻԳ» կործանիչ ինքնաթիռների կոնստրուկտորական բյուրոյի գլխավոր կոնստրուկտոր Արտեմ Միկոյանը, 92-րդ հրետանային գործարանի տնօրեն Համո Յոլյանը և ուրիշներ:

Հայրենիքին մատուցած ծառայությունների համար պատերազմի տարիներին 10 հայորդիներ արժանացան Սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչման: Հետագայում նրանցից երեքը՝ Արտեմ Միկոյանը, հրթիռամիջուկային վահանակի ստեղծման գլխավոր կոնստրուկտոր Սամվել Քոչարյանցը և ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանը, այդ կոչմանն արժանացան կրկնակի:

Հայկական ազգային դիվիզիաների կազմավորումը և նրանց մարտական ուղին: Հայ ռազմիկները պատերազմի ամբողջ ընթացքում մարտնչում էին տարբեր զորատեսակներում և բոլոր ռազմաճակատներում:

Հայ ժողովրդի ավելի քան 60 000 զավակներ պատերազմին մասնակցել են հայկական ազգային դիվիզիաների շարքերում: Առաջին ազգային դիվիզիան ***76-րդ լեռնահրաձգային դիվիզիան էր***, որը կազմավորվել էր Հայաստանում դեռ 1920–1922 թթ.՝ ՀՀ բանակի, ապա Հայկական կարմիր բանակի վերակառուցման արդյունքում: Դիվիզիան հատկապես աչքի ընկավ Ստալինգրադի ճակատամարտում և վերակազմավորվեց 51-րդ գվարդիական հրաձգային դիվիզիայի:

Հայկական զորամիավորումներից առաջինը ռազմաճակատ մեկնեց ***390-րդ դիվիզիան***: 1942 թ. մարտի սկզբներին դիվիզիան մասնակցեց Կերչի մարտերին, ունեցավ ծանր կորուստներ: Այդտեղ զոհվեց դիվիզիայի հրամանատար, գնդապետ ***Սիմոն Զաքյանը***: 1942 թ. հունիսի 14-ին դիվիզիան կազմացրվեց:

Աչքի ընկավ հայկական ***408-րդ հրաձգային դիվիզիան***, որը կազմավորվել էր Վաղարշապատում (Էջմիածին) և Երևանում: Դիվիզիան Նովոռոսիյսկ—Տուապսե շրջանում փակեց գերմանական զորքերի ճանապարհը դեպի Անդրկովկաս:

Հյուսիսային Կովկասի Մոզդոկ քաղաքի շրջանից մինչև Ռումինիա, Հունգարիա, Ավստրիա և Չեխոսլովակիա ձգվեց ***409-րդ հրաձգային դիվիզիայի*** մարտական ուղին: Դիվիզիան կազմացրվեց 1945 թ. հուլիսի 2-ին Հունգարիայում:

Կովկասյան նախալեռներից՝ Գրոզնու մատույցներից, Կուբանի,

Թամանի, Կերչի, Ղրիմի վրայով մինչև Գերմանիա հասավ ***Հայկական 89-րդ հրաձգային դիվիզիան***: Դիվիզիային շնորհվեց ***Թամանյան*** անունը՝ Թաման թերակղզու ազատագրմանն ունեցած հերոսական մասնակցության համար: Դիվիզիայի անձնակազմից 9 հոգի արժանացան ԽՍՀՄ հերոսի կոչման, այդ թվում՝ ***Հունան Ավետիսյանը*** և ***Սուրեն Առաքելյանը***, որոնք իրենց մարմնով փակեցին հակառակորդի հրակնատը: 1943 թ. փետրվարից դիվիզիայի հրամանատարը գեներալ-մայոր ***Նվեր Սաֆարյանն*** էր: 1945 թ. սեպտեմբերին դիվիզիան վերադարձավ Հայաստան և մինչև կազմացրվելը (1956 թ.) մնաց Անդրկովկասյան ռազմական օկրուգի կազմում:

Հայրենական մեծ պատերազմի տարիներին կազմավորված ազգային զորամիավորումներից միայն 261-րդ հրաձգային դիվիզիան չմասնակցեց մարտական գործողություններին: Դիվիզիայի հիմնական խնդիրը Խորհրդային Հայաստանի՝ Թուրքիայի հետ ունեցած պետական սահմանը պաշտպանելն էր, ինչպես նաև ռազմաճակատի համար երթային գումարտակներ պատրաստելը:

Խորհրդային Հայաստանում կազմավորվեցին կամ վերահամալրվեցին 61-րդ, 136-րդ, 138-րդ, 406-րդ և այլ դիվիզիաներ, որոնք թեպետ պաշտոնապես ազգային չէին, սակայն նրանց անձնակազմի մեծ մասը հայեր էին: Հայաստանը հանդերձավորեց և պարենավորեց նաև իր տարածքում գտնվող 349-րդ վրացական դիվիզիան:

Հայկական Թամանյան դիվիզիայի մարտիկների ժամանումը Լենինականի կայարան, 1945 թ.

Հայ ռազմիկները կռվում էին պատերազմի առաջին իսկ օրվանից՝ Բրեստի պաշտպանությունից մինչև Բեռլինի գրավումը: Մոսկվայի ճակատամարտում, որտեղ գերմանացիները կրեցին Երկրորդ համաշխարհային պատերազմի առաջին խոշոր պարտությունը, աչքի ընկան գեներալ-մայոր Հ. Բաղրամյանի, գեներալ-լեյտենանտ Մ. Պարսեղովի և այլոց ղեկավարած զորամասերը, բազմաթիվ հայ զինվորներ: Դիվիզիայի հրամանատար Սարգիս Մարտիրոսյանի ղեկավարած դիվիզիան ակտիվ մասնակցություն ունեցավ գեներալ Գուդերիանի 3-րդ տանկային դիվիզիայի ջախջախմանը, որի շնորհիվ ձախողվեց Տուլան շրջափակելու գերմանական ծրագիրը:

Ստալինգրադի ճակատամարտում ցուցաբերած անձնվիրության համար ԽՍՀՄ հերոսի կոչմանն արժանացավ կործանիչ ավիագնդի ավիաէսկադրիլիայի հրամանատար, ավագ լեյտենանտ ***Սերգեյ Բուռնազյանը***: Նրա ավիաջոկատը կատարել է 815 մարտական թռիչք՝ ոչնչացնելով թշնամու 65 ինքնաթիռ: Իսկ ինքն անձամբ

Նվեր Սաֆարյան Համազասպ Բաբաջանյան Սերգեյ Ագանով

«Յակ-1» կործանիչով իրականացրել է 224 մարտական թռիչք և կործանել թշնամու 22 ինքնաթիռ: Բալթիկայի համար մղվող մարտերից մեկում (1944 թ.) զոհվեց խիզախ օդաչու, ԽՍՀՄ հերոս ***Նելսոն Ստեփանյանը*** (հետմահու արժանացավ կրկնակի հերոսի կոչման): Հայորդիները մասնակցեցին նաև Կիևի, Լենինգրադի, Կուրսկի, Բեռլինի խոշոր ճակատամարտերին, ցամաքային, օդային ու ծովային կռիվներին:

Կովկասի ճակատամարտին ակտիվորեն մասնակցեց նավատորմի ծովակալ Հ. Իսակովը, որը, մարտերից մեկում ծանր վիրավորվելով, զրկվեց մեկ ոտքից: Կուրսկի ճակատամարտում աչքի ընկան նաև տանկիստները՝ բրիգադի հրամանատար Համազասպ Բաբաջանյանի գլխավորությամբ: Ուկրաինայի համար մղված մարտերում 21 հայորդիներ արժանացան ԽՍՀՄ հերոսի կոչման: Բելոռուսական գործողությանը սկզբից մինչև վերջ մասնակցեց բանակի գեներալ Հովհաննես Բաղրամյանը, որն ապա գլխավորեց Առաջին մերձբալթյան ռազմաճակատը: Հ. Բաղրամյանի ղեկավարած զորքերը ջախջախեցին թշնամու 6 դիվիզիա:

Լենինգրադի հերոսական պաշտպանության ժամանակ զոհվեց գեներալ-մայոր Բենիամին Գալստյանը: Ռուս գրող Նիկոլայ Տիխոնովը նշել է. «Գալստյանի անունը մենք կմտցնենք հերոսների՝ Լենինգրադի պաշտպանների անջնջելի ցուցակում և կհիշենք նրան ընդմիշտ»: Այժմ Սանկտ Պետերբուրգում Բ. Գալստյանի անունով փողոց կա:

Պատերազմի ավարտական փուլում քաջարի հայորդիներն ակտիվորեն մասնակցեցին Եվրոպայի երկրների ազատագրմանը, գրավեցին Բեռլինը, Ռայխստագի պատերին հաղթողի իրավունքով գրեցին անուններ և պարեցին հայկական քոչարին:

Ֆաշիզմի դեմ մղվող պայքարում կարևոր գործ կատարեցին անտեսանելի ճակատի մարտիկները՝ լե-

Նելսոն Ստեփանյան

Հովհաննես Բաղրամյան

Արմենակ Խանփերյանց

զենդար հետախույզներ գեներալ-լեյտենանտ ***Հայկ Հովակիմյանը***, գեներալ-մայոր ***Իվան Աղայանցը***, գնդապետ, ԽՍՀՄ հերոս ***Գևորգ Վարդանյանը***, նրա կինը՝ ***Գոհար Վարդանյանը***, և ուրիշներ: Նրանց գործունեությունը հասկանալի պատճառներով երկար ժամանակ չէր լուսաբանվում:

Պատերազմի հայ հերոսները և զորավարները: Պատերազմի տարիներին ցուցաբերած սխրանքների համար ԽՍՀՄ հերոսի կոչում է շնորհվել 108 հայի և Հայաստանում ծնված կամ ապրած 11 այլազգիների, ընդամենը՝ 119 մարդու: Հայերից չորսին հերոսի կոչում է շնորհվել 1939–1940 թթ. խորհրդա-ֆիննական պատերազմում: Երկրորդ համաշխարհային պատերազմում առաջին հայ հերոսը տանկիստ, շարքային ***Կարապետ Սիմոնյանն*** էր, ով այդ կոչմանն արժանացել էր 1940 թ. հունվարի 15-ին: Հայրենական մեծ պատերազմում առաջին հայ հերոսը օդաչու ***Լազր Չափչախյանն*** էր, որին այդ կոչումը շնորհվեց 1942 թ. հուլիսի 21-ին:

27 հայ ռազմիկներ, պարգևատրվելով Փառքի 3-րդ, 2-րդ և 1-ին աստիճանի շքանշաններով, դարձել են զինվորական այդ պատվավոր շքանշանի լրիվ ասպետներ:

Հաղթանակի գործում ծանրակշիռ դեր խաղացին խորհրդային բանակի հայ զորավարները: Պատերազմին մասնակցել է 64 հայ գեներալ, որոնցից 4-ը հետագայում դարձան մարշալներ: Հայ ժողովրդի հպարտությունն են ԽՍՀՄ մարշալ, կրկնակի հերոս ***Հովհաննես Բաղրամյանը***, նավատորմի ծովակալ, ԽՍՀՄ հերոս ***Իվան Իսակովը***, ավիացիայի մարշալ ***Արմենակ Խանփերյանցը (Սերգեյ Խուդյակով)***, զրահատանկային զորքերի գլխավոր մարշալ ***Համազասպ Բաբաջանյանը***: Իսկ պատերազմի մասնակից ***Սերգեյ Ազանովը (Ազանյան)*** փոխգնդապետից դարձավ ինժեներական զորքերի մարշալ:

Հայկական 89-րդ դիվիզիայի մարտիկները Բեռլինում քոչարի պարելիս, 1945 թ.

Իրենց անունը փառքով պսակեցին գեներալներ ***Միքայել Պարսեղովը, Սերգեյ Մարտիրոսյանը, Հայկ Մարտիրոսյանը, Բագրատ Առուշանյանը, Անդրանիկ Ղազարյանը, Ասքանազ Կարապետյանը, Աշոտ Ղազարյանը*** և ուրիշներ: Այդ թիվն ավելի մեծ կլիներ, եթե 1937 թ. ստալինյան բռնաճնշումների զոհը չդառնային Կարմիր բանակի մի շարք հայ զորավարներ:

Պատերազմի ժամանակ հայերից մեկը եղել է ռազմաճակատի (Հ. Բաղրամյան), 3-ը՝ բանակի, 6-ը՝ կորպուսի, 28-ը՝ դիվիզիայի, 25-ը՝ բրիգադի, իսկ ավելի քան 100 հայորդիներ՝ գնդի հրամանատարներ:

Հայերի մասնակցությունը պարտիզանական պայքարին: Երկրորդ համաշխարհային պատերազմում տարած հաղթանակում իրենց արժանի տեղն ունեցան նաև հայ պարտիզանները: Ուկրաինայում և Բելոռուսիայում մարտնչել են ավելի քան 2000, Ղրիմում և Հյուսիսային Կովկասում՝ 500, Մերձբալթիկայում, Լենինգրադի և Կալինինի մարզերում՝ 200 հայ պարտիզաններ: Հայերից էին գերազանցապես բաղկացած «Հաղթանակ», «Կարմիր աստղ», Ա. Միկոյանի անվան պարտիզանական ջոկատները, որոնց շարքերում կար 400 հայ պարտիզան:

Ֆրանսիայում հայ ռազմագերիներից բաղկացած պարտիզանական գնդում կար ավելի քան 1200, իսկ Հունաստանի «Ազատություն» ջոկատում՝ 1000 հայորդի: Տարբեր երկրներում իրենց խիզախությամբ աչքի են ընկել հայ պարտիզաններ ***Արամայիս Հովսեփյանը, Սերգեյ Հարությունյանը, Հովհաննես Պետոյանը, Մկրտիչ Դաշտոյանը, Գևորգ Քոլոզյանը*** և ուրիշներ:

ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

ԽՍՀՄ ՄԱՐՇԱԼ Հ. ԲԱՂՐԱՄՅԱՆԻ ՀՈՒՇԵՐԸ ՄՈՍԿՎԱՅԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԻ ՄԱՍԻՆ

Մոսկվայի տակ տարած հաղթանակը Հայրենական մեծ պատերազմի առաջին տարվա ռազմաքաղաքական վճռական իրադարձությունն էր... Վերջնականապես տապալվեց կայծակնային պատերազմի հիտլերյան պլանը, պսակազերծ եղավ հիտլերյան բանակի անհաղթելիության մասին եղած կեղծ առասպելը: Աշխարհի ժողովուրդներն առաջին անգամ հավատացին ագրեսորին սանձելու հնարավորությանը:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ե՞րբ են սկսվել Երկրորդ համաշխարհային և Հայրենական մեծ պատերազմները: Ո՞ր երկրներն էին ֆաշիստական Գերմանիայի դաշնակիցները. այդ դաշնակիցներից ո՞րն էր հատկապես վտանգավոր Հայաստանի համար. ինչո՞ւ:
2. Պատերազմի պահանջներին համապատասխան ի՞նչ փոփոխություններ կատարվեցին Խորհրդային Հայաստանի տնտեսության մեջ: Հայաստանի բնակչության խնայողությունների հաշվին Կարմիր բանակն ի՞նչ օգնություն ստացավ: Թվարկե՛ք հայ պետական պաշտոնյաների անունները, ովքեր զգալի ներդրում ունեցան հաղթանակում. ի՞նչ գիտեք նրանց մասին:
3. Ներկայացրե՛ք հայկական դիվիզիաների կազմավորման և անցած մարտական ուղու պատմությունը: Ո՞ր մարտերում աչքի ընկան հայ ռազմիկները: Կազմե՛ք ուրվագծային քարտեզ և նշե՛ք հայկական դիվիզիաների անցած մարտական ուղին ու նշանավոր ճակատամարտերը:
4. Քանի՞ հայ ռազմիկ է արժանացել ԽՍՀՄ հերոսի կոչման. նրանցից քանի՞սն են այդ կոչմանն արժանացել մինչև Հայրենական մեծ պատերազմը: Ովքե՞ր են Երկրորդ համաշխարհային և Հայրենական մեծ պատերազմի առաջին հայ հերոսները: Քանի՞ հայ մարտիկ է արժանացել Փառքի բոլոր երեք աստիճանի շքանշանների ասպետի կոչման: Քանի՞ հայ գեներալ է մասնակցել պատերազմին: Թվարկե՛ք հայ մարշալներին և նրանց զորատեսակները:
5. Ո՞ր տարածաշրջաններում և որքա՞ն հայեր են մարտնչել պարտիզանական ջոկատների կազմում: Գերազանցապես հայերից կազմված պարտիզանական ի՞նչ ջոկատներ կային: Գրե՛ք նշանավոր հայ պարտիզանների անուններ:
6. Գրե՛ք ռեֆերատ կամ զեկուցում Հայրենական մեծ պատերազմի հերոսներից մեկի մասին:

§ 2. ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՎ ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Սփյուռքահայության մասնակցությունը ֆաշիզմի ջախջախմանը: Սփյուռքահայերը նույնպես ակտիվ մասնակցություն ունեցան ֆաշիզմի դեմ պայքարին: Նրանց մեծամասնությունը համախմբվեց Ազգային ճակատի կազմակերպությունների մեջ՝ նյութական և բարոյական օգնություն ցուցաբերելով Կարմիր բանակին: Սփյուռքի հայերի հավաքած միջոցներով խորհրդային բանակի համար կազմվեցին «Սասունցի Դավիթ» և «Գեներալ Բաղրամյան» տանկային շարասյունները:

Սփյուռքահայերը մարտնչում էին Հայոց ցեղասպանությունից հետո իրենց հանգրվանած երկրների զինված ուժերի կազմում: Միայն ԱՄՆ-ի բանակում ծառայում էր 20 հազար հայ: Նրանցից լեյտենանտ ***Երվանդ Դերվիշյանն*** արժանացավ Ամերիկայի հերոսի՝ «Կոնգրեսի պատվո մեդալ» շքանշանի, որով պատերազմի տարիներին ԱՄՆ-ի բանակում պարգևատրվել է ընդամենը 87 զինվորական: Ամերիկյան բանակի գեներալներ դարձան ***Ջորջ Մարտիկյանը*** և ***Հայկ Շեքերջյանը:*** Ամերիկյան ռազմաօդային ուժերի խիզախ օդաչուներից էին Չարլզ Տերտերյանը, Քըրք Քըրքորյանը (ՀՀ ազգային հերոս) և շատ ուրիշներ: Ավելի քան 30 հազար հայ մարտնչում էր Անգլիայի և Ֆրանսիայի բանակներում, որոնց զգալի մասը զորակոչված էին Եգիպտոսից, Սիրիայից, Լիբանանից և այլ երկրներից:

Մեծ թվով սփյուռքահայեր մասնակցեցին Գերմանիայի կողմից նվաճված երկրների դիմադրական-պարտիզանական շարժմանը: Իր անունը փառքով պսակեց բանաստեղծ ***Միսաք Մանուշյանը,*** որը հետմահու արժանացավ Ֆրանսիայի դիմադրական շարժման հերոսի կոչման: Մանուշյանի խմբին և հայ ռազմագերիներին մեծ օգնություն ցուցաբերեցին հանրահայտ ***Շառլ Ազնավուրի*** ծնողները, քույրը և անձամբ երգիչը: Ֆրանսիայում հերոսի մահով ընկան ***Լուիզա (Լաս)*** և ***Արփիար Ասլանյանները:***

Ավելի քան 300 քաջ հայորդիներ զոհվեցին Հունաստանի պարտիզանական կռիվների ընթացքում: Այսօր էլ Բուլղարիայում հիշում են հերոսուհի պարտիզան ***Հերմինե Ռազգրադլյանի*** (Սաշկայի) անունը, որին գերմանացիները մատնությամբ բռնեցին և տանջամահ արեցին: «Ազատություն» հայկական պարտիզանական ջոկատը կռվում էր Հունաստանի ազատագրական բանակի շարքերում:

Պատերազմի սկզբից գերմանական հրամանատարությունը խորհրդային ռազմագերիներից կազմավորում էր ազգային լեգեոններ՝ ռազմաճակատ ուղարկելու համար: 1942 թ. կազմավորվեց հայկական լեգեոնը: Այդ գործին մասնակից դարձան նաև մի խումբ ազգային գործիչներ (***Դրո, Արտաշես Աբեղյան,***

Գարեգին Նժդեհ և ուրիշներ): Լեգեոնի միջոցով նրանք ծրագրում էին ֆաշիստական հնարավոր ձնշումներից պաշտպանել հայ ժողովրդին, եթե պատերազմն ավարտվեր Գերմանիայի հաղթանակով:

Հայկական լեգեոնում գործում էր նաև ընդհատակյա հակաֆաշիստական հայրենասիրական կազմակերպություն, որը ղեկավարում էր քաղաքական աշխատանքը և ռազմագերիների փախուստի գործը:

Ակտիվ հակաֆաշիստական աշխատանք կատարեցին սփյուռքահայ տարբեր գաղթօջախներում գործող ազգային խորհուրդները:

Պատերազմի տարիներին Հայ առաքելական եկեղեցին թիկունքի աշխատավորության կողքին էր, մասնակցում էր ռազմաճակատին օգնություն կազմակերպելու գործին:

1941 թ. հուլիսին Ամենայն հայոց կաթողիկոսի տեղապահ Գևորգ Չորեքչյանը դիմում է համայն հայությանը՝ համախմբվելու և հայ ժողովրդի հայրենիք Խորհրդային Հայաստանին սատարելու կոչով: Նրա կոչերն ու կոնդակները լայն արձագանք են գտնում թե՛ մայր հայրենիքում, թե՛ Սփյուռքում: Կաթողիկոսական տեղապահի անմիջական ջանքերով հանգանակություն է սկսվում արդեն հիշատակված «Սասունցի Դավիթ» տանկային շարասյունը կազմավորելու նպատակով: Առաջին հանգանակողն ինքը՝ Գևորգ Չորեքչյանն էր՝ 800 հազար ռուբլի ընդհանուր արժողությամբ պլատինե ու աղամանդե թանկարժեք իրերի նվիրաբերությամբ:

«Սասունցի Դավիթ» տանկային շարասյունը

1943 թ. սկզբին Գևորգ Չորեքչյանը, ստանալով Ի. Ստալինի համաձայնությունը, պետական բանկում համապատասխան հաշվեհամար է բացում տանկային շարասյան համար հանգանակություն կազմակերպելու:

Կարճ ժամանակամիջոցում սփյուռքահայության միջոցներով պատրաստվեց 21 տանկ և 1944 թ. ուղարկվեց ռազմաճակատ: Դրան հետևեց «Սասունցի Դավիթ» տանկային 2-րդ շարասյունը: Այն 1944 թ. մայիսին ուղարկվեց Հովհաննես Բաղրամյանի գլխավորած Առաջին մերձբալթյան ռազմաճակատ:

Հայ առաքելական եկեղեցու ազգանվեր գործունեությունը խորհրդային կառավարությանը ստիպեց մեղմացնել եկեղեցու նկատմամբ բռնաճնշումների քաղաքականությունը: 1943 թ. Հայաստանի կառավարությանը կից ստեղծվեց եկեղեցու գործերի խորհուրդ, որը միջնորդ էր հանդիսանալու եկեղեցու և պետության միջև: Իսկ 1943 թ. նոյեմբերին ԽՍՀՄ կառավարությունը որոշում ընդունեց

Գևորգ Զ Չորեքչյան

եկեղեցիների վերաբացման կարգի մասին:

Օգտվելով առիթից՝ կաթողիկոսական տեղապահը գործնական քայլերի դիմեց Էջմիածնի հոգևոր ճեմարանի վերաբացման, բռնաճնշումների ենթարկված ավելի քան 300 հոգևորականների ազատ արձակման համար: Հենց այս շրջանում վերականգնվեց Վրաստանի հայոց թեմը, վերաբացվեցին մի շարք եկեղեցիներ:

1945 թ. մարտին Գևորգ Չորեքչյանը դիմեց Ստալինին և Բերիային՝ խնդրելով թույլատրել տեղահանված և Ուրալում վերաբնակեցված 16 հազար ղրիմահայերին վերադառնալ իրենց նախկին բնակավայրերը կամ Հայաստան:

1945 թ. ապրիլի 19-ին ԽՍՀՄ կառավարության ղեկավար Ի. Ստալինը Մոսկվայում ընդունեց Գևորգ Չորեքչյանին և բարձր գնահատեց նրա հայրենանվեր գործունեությունը պատերազմի ընթացքում. կաթողիկոսական տեղապահը պարգևատրվեց «Կովկասի պաշտպանության համար» մեդալով: Նա, օգտվելով ընձեռված հնարավորությունից, Կրեմլում բարձրացրեց հայկական հողերի վերադարձի, սփյուռքահայերի հայրենադարձությունը թույլատրելու, Էջմիածնի հոգևոր ճեմարանի և տպարանի բացման, Զվարթնոցի տաճարի վերականգնման և այլ կենսական հարցեր:

Երկրորդ աշխարհամարտում Գերմանիայի դեմ տարած հաղթանակի մեջ ամենակարևոր դերը պատկանում է ԽՍՀՄ ժողովուրդներին: Պատերազմի ծանրության առյուծի բաժինն իր վրա վերցրեց խորհրդային բանակը: Դաշնակիցները՝ Մեծ Բրիտանիան և ԱՄՆ-ը, Գերմանիայի դեմ երկրորդ ճակատ բացեցին 1944 թ. հունիսին:

Հայրենական մեծ պատերազմը ԽՍՀՄ ժողովուրդներից խլեց 27 մլն մարդկային կյանք և ահռելի նյութական միջոցներ: Հայ ժողովրդի զավակներն անձնազոհաբար կռվեցին բոլոր ռազմաճակատներում, հաղթանակով մտան Բեռլին: 1945 թ. մայիսի 9-ին Գերմանիան ստորագրեց անվերապահ կապիտուլյացիայի ակտը: Դրանով ավարտվեց Հայրենական մեծ պատերազմը:

Պատերազմը շարունակվեց Հեռավոր Արևելքում: Շուտով ջախջախվեց նաև Գերմանիայի դաշնակից Ճապոնիան: Այդ պատերազմում աչքի ընկավ օդային բանակի հրամանատար Արմենակ Խանփերյանցը:

1945 թ. սեպտեմբերի 2-ին Ճապոնիան նույնպես ստորագրեց անվերապահ կապիտուլյացիայի ակտը, որով ավարտվեց Երկրորդ համաշխարհային պատերազմը:

Հարցեր և առաջադրանքներ

1. Սփյուռքահայերի հանգանակած միջոցներով ինչ օգնություն ցուցաբերվեց խորհրդային բանակին: Համառոտ ներկայացրեք սփյուռքահայերի մասնակցությունը Երկրորդ աշխարհամարտին. ովքե՞ր աչքի ընկան, ինչ գիտեք նրանց մասին: Ե՞րբ և ո՞ւմ մասնակցությամբ կազմավորվեց Հայկական լեգեոնը. ո՞րն էր նրա նպատակը:
2. Ներկայացրեք և գնահատեք Մայր Աթոռի գործունեությունը Երկրորդ աշխարհամարտի տարիներին. ինչ արդյունքներ ունեցավ այդ գործունեությունը:
3. Ե՞րբ են ավարտվել Հայրենական մեծ և Երկրորդ համաշխարհային պատերազմները: Գնահատեք ԽՍՀՄ-ի դերը Երկրորդ համաշխարհային պատերազմում:

ԳԼՈՒԽ 4. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1945–1985 ԹԹ.)

§ 1. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Արդյունաբերության վերակառուցումը և զարգացումը: Պատերազմի հաղթական ավարտից հետո անհրաժեշտ էր տնտեսությունը համապատասխանեցնել խաղաղ կյանքի պայմաններին: ԽՍՀՄ-ին պատերազմի հասցրած մարդկային և նյութական վնասները հսկայական էին: Պատերազմից անմիջապես հետո վերականգնվեց ութժամյա աշխատանքային օրը, վերացվեց պարտադիր արտաժամյա աշխատանքը, և թույլատրվեց աշխատողներին տրամադրել հերթական ու լրացուցիչ արձակուրդ:

Հայաստանում արդյունաբերության զարգացման տեմպերը չորրորդ հնգամյակում (1946–1950 թթ.) արագացան: Պետությունը հիմնական ուշադրությունը կենտրոնացրել էր ծանր արդյունաբերության զարգացման վրա, իսկ թեթև արդյունաբերությունը հետ էր մնում:

10 տարվա ընթացքում (1945–1955 թթ.) գունավոր մետաղների, մեքենաների և սարքավորումների արտադրությունը ավելացավ մոտ 10 անգամ:

1950-ական թվականների երկրորդ կեսին հանրապետությունում շարունակվեց հատկապես պղնձի, ալյումինի, մոլիբդենի արտադրության և քիմիական արդյունաբերության զարգացումը, կառուցվեցին էլեկտրա-

Դաշտային աշխատանքներ, 1950-ական թվականներ

տեխնիկական ու հաստոցաշինական գործարանները, քայլեր կատարվեցին ճշգրիտ մեքենաների արտադրություն ստեղծելու և ընդլայնելու ուղղությամբ: Հայաստանը դարձավ ԽՍՀՄ-ի զարգացած արդյունաբերություն ունեցող հանրապետություններից մեկը: Արդյունաբերական արտադրանքի շատ տեսակներ սկսեցին արտահանվել սոցիալիստական և զարգացող երկրներ:

Գյուղատնտեսության հիմնախնդիրները: Պատերազմից հետո գյուղատնտեսությունը գտնվում էր ծանր վիճակում: 1946 թ. հավաքվեց ընդամենը 39,6 միլիոն տոննա հացահատիկի համախառն բերք, որը բավականին ցածր էր նախորդ՝ 1945 թ. բերքից: Դա պայմանավորված էր ոչ միայն այդ տարվա աննախադեպ երաշտով, այլև գյուղատնտեսության կառավարման բնագավառում իրականացվող սխալ քաղաքականությամբ:

Հետպատերազմյան առաջին տարիներին խիստ բարձր էր պետական մթերումների չափաքանակը: Քաղաքաբնակների և զորքի պահանջները բավարարելու համար պետությունը հաճախ վերցնում էր կոլտնտեսությունների բերքի մեծ մասը, երբեմն էլ՝ ամբողջը: Երկրում հացահատիկի բերքատվությունը մնում էր ցածր: 1949 թ. Հայաստանում հացահատիկի հեկտարի միջին բերքատվությունը կազմեց մոտ 11 ցենտներ, որը 2–3 անգամ ցածր էր Արևմտյան Եվրոպայի և ԱՄՆ-ի հացահատիկի բերքատվությունից:

Հայաստանի գյուղատնտեսության ոլորտում դրական տեղաշարժեր, այնուամենայնիվ, կատարվում էին: Դա նկատելի էր գյուղատնտեսության մեքենայացման, էլեկտրաֆիկացման, ջրաշինարարական աշխատանքների, նոր հողերի յուրացման և այլ բնագավառներում:

Ստալինի մահից հետո ԽՍՀՄ նոր ղեկավարությունը Ն. Խրուշչովի գլխավորությամբ 1953 թ. սեպտեմբերին քննարկեց գյուղատնտեսության հետագա զարգացման հարցը: Կոլտնտեսություններին շահագրգռելու համար որոշում ընդունվեց բարձրացնելու նրանցից մթերվող մսի, կաթի, յուղի և հացահատիկի գները: Ձեռնարկված միջոցառումների շնորհիվ գյուղատնտեսության տևական անկմանը հաջորդեց որոշ վերելք, գյուղացիների եկամուտները սկսեցին աճել:

Սննդամթերքի արտադրության ավելացումը կառավարության գլխավոր խնդիրներից էր, ուստի ձեռնարկվում էին տարբեր բնույթի բարեփոխումներ: Գյուղատնտեսական

մեքենաները, որոնք կենտրոնացված էին շրջկենտրոններում, բաժանվեցին կոլտնտեսություններին, որին հետևեց մի քանի գյուղերի կոլտնտեսությունների միավորման միջոցով խոշոր և հզոր կոլտնտեսությունների ստեղծման իրականացումը: Սակայն երկու ձեռնարկումներն էլ ձախողվեցին և դրական արդյունք չտվեցին:

Խրուշչովյան բարեփոխումները կառավարման բնագավառում: Խրուշչովի ղեկավարման տասնամյակի ընթացքում տնտեսության կառավարումը բարելավելու համար հետևողականորեն իրականացվում էր կառավարման ապակենտրոնացման քաղաքականություն: 1957 թ. մայիսին ընդունվեց օրենք՝ արդյունաբերությունը և շինարարությունը հանրապետությունների ու մարզերի ժողովրդական տնտեսության խորհուրդների (ժողտնտխորհների) միջոցով կառավարելու մասին: Հայկական ԽՍՀ-ում ստեղծվեց ժողովրդական տնտեսության խորհուրդ, որի համակարգում գործում էր ավելի քան 250 արդյունաբերական և շինարարական ձեռնարկություն: Սակայն շուտով ի հայտ եկան նոր համակարգի թերությունները: Ժողտնտխորհները լուծարվեցին, վարկաբեկվեց «տարածքային կառավարում» հասկացությունը:

1959 թ. ԽՄԿԿ XXI համագումարն ընդունեց երկրի ժողովրդական տնտեսության զարգացման 1959–1965 թթ. յոթամյա պլանը, որով նախատեսվում էր «հասնել ու անցնել Ամերիկայից» և բնակչության մեկ շնչին ընկնող արտադրանքի ծավալով աշխարհում գրավել առաջին տեղը: Իրականում գյուղատնտեսության ոլորտում աճի տեմպերը նվազեցին: Խորհրդային Միության պատմության ընթացքում առաջին անգամ 1963 թ. երկիրը ստիպված էր արտասահմանից մեծ քանակությամբ հացահատիկ գնել:

1961 թ. ԽՄԿԿ XXII արտահերթ համագումարն ընդունեց ԽՍՀՄ-ում առաջիկա 2–3 տասնամյակի ընթացքում կոմունիստական հասարակության կառուցման ծրագիրը: Սակայն կոմունիստական ռոմանտիզմը չամրապնդվեց իրական գործերով: Ընդհակառակը, 1960-ական թվականների սկզբներին որոշումներ ընդունվեցին սննդամթերքի գների բարձրացման մասին՝ իբր «անասնապահական մթերքների արտադրության արագ աճին» օգնելու համար: Գների բարձրացման որոշումն անմիջապես դժգոհության ելույթներ հարուցեց Ռիգայում, Կիևում, Լենինգրադում: Դժգոհությունների բարձրակետը աշխատավորության ելույթներն էին Նովոչերկասկ քաղաքում, որտեղ բանվորների գործադուլը ճնշվեց զորքի միջոցով. եղան մարդկային զոհեր:

Բնակչության սոցիալական վիճակի փոփոխությունները: 1947 թ. բարենպաստ եղանակային պայմանների, լավ բերքի, ռազմական ծախսերի որոշ կրճատման և պետական պահուստների ավելացման շնորհիվ ստեղծվեցին նախադրյալներ, որպեսզի ԽՍՀՄ կառավարությունը որոշում ընդունի դրամական ռեֆորմ

անցկացնելու մասին: Ապրանքների բաշխման քարտային համակարգը, որ մտցվել էր պատերազմի սկզբին, վերացվեց: Կատարվելու էր ապրանքների ազատ վաճառք: Ռեֆորմի ընթացքում նախատեսվում էր շրջանառության մեջ եղած կանխիկ դրամի փոխանակումը նոր դրամով՝ տասին մեկ հարաբերակցությամբ: Աշխատավարձի և թոշակի չափերը մնացին անփոփոխ:

1950-ական թվականների կեսերից ԽՍՀՄ-ում իրականացվեց մեծածավալ սոցիալական քաղաքականություն: Բարձրացվեցին աշխատավարձերը, ավելացան հաշմանդամների և ծերության թոշակները: Մեծ թափով ընթացավ բնակարանային շինարարությունը:

Հետպատերազմյան տարիներին Հայկական ԽՍՀ բնակչության թվաքանակի կտրուկ աճի համար նպաստավոր պայմաններ ստեղծվեցին: Ընդ որում՝ աճի տեմպերը զգալիորեն բարձր էին ԽՍՀՄ միջին ցուցանիշից: 1945–1965 թթ., այսինքն՝ 20 տարվա ընթացքում, հանրապետության բնակչության թվաքանակը աճեց՝ հասնելով 2 միլիոն 134 հազարի: Հայաստանում բնակչության վերարտադրության հիմնական աղբյուրը բնական աճն էր: Բժշկական սպասարկման, նյութական, կենցաղային և այլ պայմանների բարելավման հետ կապված՝ մահացությունը հանրապետությունում զգալիորեն նվազեց:

Հայաստանի բնակչության մեխանիկական աճի համար կարևոր գործոն էր Սփյուռքից և ԽՍՀՄ հանրապետություններից բնակչության ներհոսքը Հայկական ԽՍՀ: Պատահական չէ, որ 1945–1965 թթ. խորհրդային Հայաստանում մեխանիկական աճը կազմեց 400 հազար մարդ, որն այդ տարիներին հանրապետության բնակչության քանակական աճի 40 տոկոսից ավելին էր: ԽՍՀՄ կազմում Հայաստանն այն եզակի հանրապետություններից էր, որը խորհրդային տարիներին պահպանում էր միատարր ազգային կազմը. 1965 թ. հայերը կազմում էին հանրապետության բնակչության 88,3 %-ը: Այլ ազգություններից ապրում էին հիմնականում եզդիներ, քրդեր, ադրբեջանցիներ, ռուսներ, հույներ, ասորիներ:

Նշված տարիներին Խորհրդային Հայաստանում դիտվել է քաղաքային բնակչության աճի, ուրբանիզացման բարձր մակարդակ, ինչը պայմանավորված էր նաև գյուղական բնակավայրերը քաղաքայինի վերափոխելու հանգամանքով: Քաղաքների ընդարձակման պատճառով նրանց տարածքի մեջ ընդգրկվեցին մեծ թվով գյուղական բնակավայրեր:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչ խնդիրներ էին ծառացած Խորհրդային Հայաստանի տնտեսության առջև Հայրենական մեծ պատերազմի ավարտից հետո: Լուսաբանեք արդյունաբերության վերականգնման ընթացքը: Թվերով և փաստերով ցույց

տվեք, որ ՀԽՍՀ արդյունաբերությունը 1950-ական թվականներին զարգացում ապրեց:

2. Ներկայացրեք գյուղատնտեսության բնագավառի հիմնախնդիրները, նշեք դրանց պատճառները: «Զնիպի տարիներին» ինչ առաջընթաց եղավ տնտեսության այս ճյուղում:
3. Ինչ նպատակ էին հետապնդում կառավարման բնագավառում խրուշչովյան բարեփոխումները: Ինչ էր նախատեսում ԽՄԿԿ XXII համագումարում ընդունված ծրագիրը: Իրատեսական էր այն, թե՞ ոչ. հիմնավորեք ձեր պատասխանը: 1962 թ. ժողովրդական դժգոհության ինչ ելույթներ և ինչո՞ւ տեղի ունեցան ԽՍՀՄ-ում:
4. Փաստերով և թվերով պարզաբանեք, որ ՀԽՍՀ-ում 1945-1965 թթ. բնակչության սոցիալական վիճակը և կենսամակարդակը բարելավվել էին:

§ 2. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ

Հայկական հարցի վերաբացումը միջազգային նոր պայմաններում: Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտին, երբ ակներև էր Գերմանիայի և նրա դաշնակիցների պարտությունը, հայ մտավորականությունը Սփյուռքում և Հայաստանում բարձրացրեց Կարսի մարզը, Սուրմալուի գավառը և Արևմտյան Հայաստանի որոշ շրջաններ Խորհրդային Հայաստանին վերադարձնելու, աշխարհասփյուռ հայերին իրենց հայրենիքում համախմբելու ազգային խնդիրները:

Պատերազմի տարիներին Թուրքիան թեև բացեիբաց ելույթ չունեցավ ԽՍՀՄ-ի դեմ, այդուհանդերձ նա Գերմանիայի փաստական դաշնակիցն էր: Երբ Գերմանիայի պարտությունը արդեն իրողություն էր, ***1945 թ. մարտի 19-ին*** ԽՍՀՄ կառավարությունը չեղյալ հայտարարեց (դենոնսացիայի ենթարկեց) 1925 թ. խորհրդա-թուրքական բարեկամության և չեզոքության պայմանագիրը: Հունիսին ԽՍՀՄ արտաքին գործերի ժողկոմ Վ. Մոլոտովը Թուրքիայի դեսպանին ներկայացրեց ԽՍՀՄ-ի տարածքային պահանջները: Թուրքիան իր դիրքերը պահպանելու համար դիմեց նախ Անգլիայի, ապա ԱՄՆ-ի օգնությանը: Մեծ տերությունների ղեկավարները 1945 թ. Պոտսդամի կոնֆերանսի հուլիսի 22-ի և 23-ի նիստերում քննարկեցին նաև հայկական տարածքների հարցը: Համոզվելով, որ Մեծ Բրիտանիայի վարչապետ Ուինսթոն Չերչիլը պաշտպանում է Թուրքիայի շահերը, իսկ ԱՄՆ-ի նախագահ Թրումանը փորձում է խնդիրը դարձնել խորհրդա-թուրքական երկկողմ քննարկման առարկա՝ Ստալինը գիջեց և հարցը հանեց քննարկումից: Սակայն հայկական տարածքների խնդրի քննարկումը շարունակվեց միջազգային այլ հարթակներում:

1946 թ. փետրվարի 1-ին ՀԿ(բ)Կ կենտկոմի առաջին քարտուղար ***Գրի-***

Գրիգոր Հարությունյան

գոր Հարությունյանը ընտրողների հետ հանդիպման ժամանակ հիմնականում խոսեց «Թուրքիայի կողմից զավթված հայկական մարզերի» մասին: Անդրադառնալով այդ հայկական հողերը Խորհրդային Հայաստանին վերադարձնելու խնդրին՝ Հարությունյանն ասաց. «Մենք հաստատակամորեն կձգտենք մեր առաջադրած հարցի դրական լուծմանը, որը կենսական նշանակություն ունի ամբողջ հայ ժողովրդի հետագա զարգացման համար»: Հայկական պահանջների պաշտպանության օգտին հանդես եկան արտասահմանյան մի շարք երկրների պետական և հասարակական գործիչներ, զանգվածային լրատվության միջոցներ:

Միջազգային նոր իրադրության պայմաններում՝ սառը պատերազմով, 1949 թ. Հյուսիսատլանտյան դաշինքի ստեղծումով և երեք տարի անց այդ ռազմական կազմակերպությանը Թուրքիայի անդամակցությամբ պայմանավորված՝ Խորհրդային Միությունը սկսեց հետ կանգնել իր պահանջներից: 1953 թ. մայիսի 30-ին խորհրդային կառավարությունը պաշտոնապես հայտարարեց, որ ԽՍՀՄ-ը Թուրքիայից տարածքային պահանջ չունի: Հայկական հարցը ներքաշվեց Արևելք—Արևմուտք առճակատումների ոլորտ ու մնաց չլուծված: Հայ ժողովրդի արդարացի պահանջները կրկին անտեսվեցին:

Ամբողջատիրական համակարգի հետագա ամրապնդումը: Հայրենական մեծ պատերազմից անմիջապես հետո կոմկուսի իշխող վերնախավը քաղաքական արշավ սկսեց մտավորականության դեմ՝ իբր պատերազմի տարիներին թուլացրած գաղափարական վերահսկողությունը վերականգնելու նպատակով: Սառը պատերազմի ծավալման պայմաններում կուսակցական ղեկավարության հատուկ ուշադրության առարկան դարձավ պայքարն ընդդեմ «Արևմուտքի ժամանակակից բուրժուական մշակույթի» տարածման:

Այդ ոգով Հայկոմկուսի ղեկավարությունը ևս միջոցառումներ իրականացրեց, որ, օրինակ, «վերհանվեն և վերացվեն հայ գրականության սխալներն ու թերությունները»: Իրականացված առաջին միջոցառումների թվում էին հանրապետության հրատարակչությունների կողմից պատմական թեմաներով ստեղծագործությունների տպագրության դադարեցումը և գրաքննության խստացումը: Հայաստանում աշխատանքից ազատեցին ճանաչված գիտնականներ Հ. Աճա-

ոյանին և Գ. Ղափանցյանին: Բազմաթիվ մտավորականներ մեղադրվեցին «օտարամոլության» համար և հալածանքների ենթարկվեցին:

1952 թ. հոկտեմբերին կայացած ՀամԿ(բ)Կ XIX համագումարում կուսակցությունը վերանվանվեց Խորհրդային Միության կոմունիստական կուսակցություն (ԽՄԿԿ): Երկրում ամրապնդվել էր մի համակարգ, որը հենվում էր կուսակցական ապարատի ու պատժիչ մարմինների վրա: Ստալինի ղեկավարման վերջին տարիներին ամբողջատիրական համակարգը հասել էր դրսևորման բարձրակետին:

Քաղաքական բռնաճնշումների նոր փուլը: 1949 թ. զանգվածային աքսորը: Քաղաքական բռնաճնշումները Խորհրդային Միությունում շարունակվում էին: Միայն պատերազմի տարիներին քաղաքական մեղադրանքով Հայաստանում բռնադատվել էր ավելի քան 5200, իսկ 1945–1952 թթ.՝ մոտ 3000 մարդ: 1945 թ. վերջերին հայրենիքի դավաճանության անհիմն մեղադրանքով ձերբակալվեց ավիացիայի մարշալ Սերգեյ Խուդյակովը (Արմենակ Խանփերյանցը): Մի քանի տարի ենթարկվելով անմարդկային տանջանքների՝ նա զնդակահարվեց 1951 թ. հունվարի 13–ին:

1949 թ. հունիսի 14–ին ԽՍՀՄ իշխանությունների որոշմամբ Անդրկովկասի հանրապետություններից հայ բնակչության մի հոծ զանգված՝ 3620 ընտանիք, որպես քաղաքականապես անհուսալի դաշնակցականներ, արտաքսվեց երկրի հեռավոր, ցրտաշունչ Ալթայի երկրամաս: 1946–1948 թթ. Հայաստան ներգաղթած սփյուռքահայերի շրջանում ևս խորհրդային պետական անվտանգության ծառայությունները «դաշնակցականներ գտան» և արտաքսեցին հանրապետությունից (350 ընտանիք՝ 1450 մարդ): Ընդհանուր առմամբ Հայաստանից, Վրաստանից, Ադրբեջանից ու Սև ծովի առափնյա շրջաններից 1949 թ. արտաքսումների հետևանքով երկրի հեռավոր շրջաններ, հիմնականում Ալթայի երկրամաս աքսորվեց մոտ 15 500 հայ: Քաղաքական բռնաճնշումներին վերջ տրվեց Ստալինի մահից հետո:

Անհատի պաշտամունքի հետևանքների հաղթահարումը: 1953 թ. մարտի 5–ին մահացավ Ի. Վ. Ստալինը: Հունիսի 26–ին ձերբակալվեց ներքին գործերի նախարար Լ. Բերիան: Հուլիսի 2–ին ԽՄԿԿ կենտկոմի լիագումար նիստը քննարկեց «Բերիայի հակակուսակցական և հակապետական հանցավոր գործունեության մասին» հարցը: Այդ նիստը շրջադարձային նշանակություն ունեցավ: Երկրում կուսակցական իշխանությունն անցավ Նիկիտա Խրուշչովին:

Հայաստանի ղեկավարությունը ևս փոփոխվեց: 1953 թ. նոյեմբերի 30–ին Գրիգոր Հարությունյանն ազատվեց կենտկոմի առաջին քարտուղարի պաշտոնից: Նոր քարտուղար ընտրվեց ***Սուրեն Թոքմաջյանը:***

1954–1955 թթ. ընթացքում աշխատանքներ կատարվեցին քաղաքական բռնաճնշումների ենթարկվածներին

Սուրեն Թովմասյանը ելույթ է ունենում ՀԿԿ XIX համագումարում, 1958 թ.

արդարացնելու, ողջ մնացածներին ազատ արձակելու, 1949 թ. Ալթայի երկրամաս արտաքսվածներին Հայաստան վերադարձնելու ուղղությամբ:

1956 թ. փետրվարին Մոսկվայում տեղի ունեցած ԽՄԿԿ XX համագումարում «Անհատի պաշտամունքի և նրա հետևանքների մասին» զեկուցումով հանդես եկավ Նիկիտա Խրուշչովը: Զեկուցումն ընթերցվեց դռնփակ նիստում միայն համագումարի պատգամավորների համար: Դա ստալինիզմի վերացման գործընթացի սկիզբն էր:

Ազգային գիտակցության զարթոնքը: 1960 թ. դեկտեմբերին ՀԿԿ կենտկոմի առաջին քարտուղար ընտրվեց ***Յակով Զարոբյանը:*** Նրա ղեկավարման շրջանում հանրապետությունում տեղի ունեցան զգալի դրական փոփոխություններ:

1965 թ. լրանում էր Մեծ եղեռնի 50-րդ տարելիցը: Յ. Զարոբյանը 1964 թ. հանձնարարեց մշակել այդ տարելիցը նշելու միջոցառումների նախագիծ: ՀԿԿ կենտկոմը ԽՄԿԿ կենտկոմ ուղարկեց ծավալուն մի նամակ, որտեղ ասված էր, թե 1915 թ.՝ Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ, Թուրքիայի 3 միլիոն հայ բնակչությունը տեղահանվել, հետապնդվել ու ոչնչացվել է: Նամակում նշված առաջարկությունները՝ Երևանում Եղեռնի զոհերի հուշահամալիրի կառուցում, Մեծ եղեռնին նվիրված պատմական ու գեղարվեստական գրականության հրատարակում և այլն, ժամանակի ընթացքում իրականացվեցին:

ԽՍՀՄ-ում Խրուշչովի կատարած փոփոխությունները շոշափելի արդյունք չտվեցին: Սասանվեց նրա հեղինակությունը: Բարձրագույն քաղաքական ղեկավարության ջանքերով 1964 թ. հոկտեմբերին Նիկիտա Խրուշչովը հեռացվեց կուսակցական և պետական ղեկավարությունից: Նրան փոխարինեց ***Լեոնիդ Բրեժնևը:***

Այլախոհությունը Հայաստանում: Ստալինի մահից հետո խորհրդային համակարգի ամբողջատիրական էությունը մնաց անփոփոխ: Սակայն այդ պայմաններում էլ երկրում կային մարդիկ, ովքեր բացահայտորեն չէին պահպանում խորհրդային երկրի պարտադրած կանոնները: Նրանցից ոչ բոլորն էին իրենց համարում քաղաքական ընդդիմություն, պարզապես իրենց անձնական, մասնագիտական և քաղաքացիական անկախությունն ավելի բարձր էին գնահատում և պատրաստ էին ամեն ինչ զոհելու այդ անկախության համար:

1960-ական թվականներին նրանց, ովքեր ընտրել էին խորհրդային իրա-

կանությունը փոփոխելու պայքարի ուղին, սկսեցին կոչել ***այլախոհներ***: Այլախոհներն ուժային միջոցներով չէին ընդդիմանում խորհրդային իշխանությանն ու նրա գաղափարախոսությանը, այլ գաղափարական պայքար էին մղում՝ անընդունելի համարելով խորհրդային օրենքները և պաշտոնապես հռչակված արժեքները:

Ասպարեզ եկան նաև մարդիկ, որոնք խորհրդային իշխանություններից պահանջում էին պահպանել օրենքները և ԽՍՀՄ Սահմանադրությունը, միաժամանակ պայքարում էին մարդու իրավունքների պաշտպանության համար: Նրանց կոչում էին իրավապաշտպաններ:

Հայաստանում այլախոհությունը հիմնականում կրում էր ազգային բնույթ: 1960-ական թվականների սկզբին ազգային զարթոնքի և կորցրած պատմական տարածքները վերադարձնելու գաղափարի շուրջ համախմբված այլախոհները Հայաստանում ստեղծեցին առաջին այլախոհական կազմակերպությունները: Խաչատուր Ամիրջանյանը, Խաչիկ Սաֆարյանը, Վիգեն Բաբայանը, Մերուժան Հովհաննիսյանը, Գրիգոր Եղյանը, Կարապետ Քիրամիջյանը և Էդուարդ Կակոսյանը 1964 թ. ազատազրկման դատապարտվեցին՝ մեղադրվելով «ազգայնական հակասովետական նպատակների իրականացման» համար:

1965 թ. ապրիլի 24-ին՝ Մեծ եղեռնի 50-ամյա տարելիցի օրը, Երևանում տեղի ունեցան զանգվածային ցույցեր ու հանրահավաքներ. խորհրդային

Յակով Զարոբյան

պատմության ընթացքում առաջին անգամ հասարակության լայն շերտերը Հայաստանում դուրս եկան իշխանությունների սահմանած թույլտվության շրջանակներից: Հատկանշական է, որ ապրիլյան ցույցերին չհետևեցին քաղաքական բանտարկություններ: Հասարակության շրջանում այդպիսի զանգվածային ելույթներ մինչև գորբաչովյան «վերակառուցման» շրջանն այլևս տեղի չունեցան:

1960-1970-ական թվականներին Հայաստանում ձևավորվեցին մի շարք գաղտնի խմբակներ և կազմակերպություններ: Հատկանշական է «Յոթ հայրենասերներ» անվամբ հայտնի «Հայկական երիտասարդական միության» գործունեությունը:

1966 թ. ապրիլի 24-ին Հայաստանում ստեղծվեց գաղտնի կազմակերպություն՝ Ազգային միացյալ կուսակցությունը (ԱՄԿ): 1967 թ. գաղտնի հրատարակվեց կուսակցության «Փարոս» թերթը, կազմվեցին

ծրագիրը, կանոնադրությունը և երդման տեքստը: Կազմակերպության հիմնադիրն էր Հայկազ Խաչատրյանը՝ Ստեփան Զատիկյանի և Շահեն Հարությունյանի հետ, ովքեր 1969 թ. դատապարտվեցին ազատազրկման: 1970 թ. դատապարտվեցին վերջիններիս կուսակիցներ Պարույր Հայրիկյանը, Աշոտ Նավասարդյանը և ուրիշներ, որոնք հրատարակում էին «Երկունք» թերթը: Նրանց մեղադրում էին, որ «ակտիվ ընդհատակյա գործունեություն են վարել՝ նպատակ ունենալով անջատելու Հայաստանը ԽՍՀՄ-ից և ստեղծելու անկախ հայկական պետություն»:

1970-ական թվականներին ինչպես ամբողջ Խորհրդային Միությունում, այնպես էլ Հայաստանում այլախոհական շարժումը վերելք էր ապրում: 1973 թ. ձևավորվեց ԱՄԿ ղեկավար նոր մարմինը՝ խորհուրդը (ղեկավար՝ Պարույր Հայրիկյան, անդամներ՝ Ազատ Արշակյան, Անդրանիկ Մարգարյան, Աշոտ Նավասարդյան), որը որդեգրեց «Անկախություն հանրաքվեի ճանապարհով» ռազմավարությունը:

1974 թ. հակախորհրդային գործունեության մեղադրանքով ազատազրկման և աքսորի դատապարտվեցին Ազատ Արշակյանը, Ռազմիկ Զոհրաբյանը, Քաջիկ Սահակյանը և Ռազմիկ Մարկոսյանը: 1975 թ. մարտին «հակախորհրդային գործունեության համար» երեք տարվա ազատազրկման դատապարտվեց Անդրանիկ Մարգարյանը: Նա 1967 թ. անդամագրվել էր «Շանթ» կոչվող գաղտնի խմբին, իսկ հաջորդ տարի՝ Ազգային միացյալ կուսակցությանը՝ դառնալով նրա ակտիվ անդամներից մեկը:

1950-1970-ական թվականներին հակախորհրդային գործունեության մեղադրանքով Հայաստանում դատապարտվեց ավելի քան 100 մարդ: Նրանց հիմնական նպատակը հայկական հողերի վերամիավորումն էր, կոմունիստների մենիշխանության վերացումը, լեզվի և մշակույթի անաղարտության պահպանումը, ինչպես նաև անկախ Հայաստանի ստեղծումը:

Խորհրդային Հայաստանում ծավալված այլախոհական շարժումը նպաստեց ազգային անկախ պետականության վերահաստատման գաղափարի կենսունակության պահպանմանը:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչո՞ւ ստալինյան վերնախավը հաղթական պատերազմից անմիջապես հետո վերսկսեց բռնաճնշումների քաղաքականությունը: Ի՞նչ դրսևորումներ այն ունեցավ Խորհրդային Հայաստանում:
2. Որո՞նք էին Երկրորդ աշխարհամարտի ավարտական փուլում Հայկական հարցի վերաբացման պատճառները: Ինչո՞ւ 1953 թ. ԽՍՀՄ կառավարությունը հետ կանգնեց Թուրքիային ներկայացրած տարածքային պահանջներից:

3. Ներկայացրեք քաղաքական բռնաճնշումների նոր փուլի և հայերի զանգվածային աքսորի ընթացքն ու արդյունքները: Ինչ հետևանքներ ունեցան դրանք հայ ժողովրդի համար: Երբ դադարեցվեցին բռնաճնշումները:
4. Ինչ դեր խաղաց ԽՄԿԿ XX համագումարը ստալինիզմի վերացման գործընթացում:
5. Փաստերով հիմնավորեք, որ 1960-ական թվականների առաջին կեսին Խորհրդային Հայաստանում սկսվեց ազգային ինքնագիտակցության զարթոնք: Փորձեք վերհանել դրա պատճառները: Ինչ է այլախոհությունը: Ներկայացրեք դրա դրսևորումները և առանձնահատկությունները Խորհրդային Հայաստանում: Նշեք հայտնի հայ այլախոհների:

§ 3. ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱՐԳԻ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՐՈՒՄԸ

Բրեժնևյան ղեկավարության տնտեսական քաղաքականությունը: 1960-ական թվականների կեսերին ԽՍՀՄ-ում սկսված սոցիալ-տնտեսական ճգնաժամը հաղթահարելու նպատակով ձեռնարկվեցին համալիր բարեփոխումներ: Եթե նախկինում պլանային առաջադրանքների կատարումը որոշվում էր թողարկված արտադրանքի քանակով, ապա այժմ՝ արտադրանքի իրացման ծավալով ու ստացված շահույթով: Ձեռնարկված միջոցառումները սկզբնական շրջանում տվեցին դրական արդյունքներ: Նշանակալից չափով 1965-1970 թթ. աճեց ՀԽՍՀ ինչպես համախառն ներքին արդյունքը, այնպես էլ աշխատանքի արտադրողականությունը:

Սակայն դրական տեղաշարժերը խորացնել չհաջողվեց: Տնտեսության զարգացումը նորից դանդաղեց, բարեփոխումները սկսեցին տեղապտույտ տալ: Հիմնական պատճառներից էին անհետևողականությունը և բարեփոխումների ոչ լիարժեք լինելը: Նպաստավոր պայմաններ չստեղծվեցին գիտատեխնիկական առաջընթացի համար:

Արդյունաբերության զարգացումը: 1960-1980-ական թվականներին Խորհրդային Հայաստանում շեշտը դրվեց արդյունաբերության աշխարհագրության ընդլայնման և գիտաարտադրական միավորումների ստեղծման վրա: Եթե մինչ այդ արդյունաբերությունը հիմնականում կենտրոնացած էր Երևան, Լենինական (Գյումրի), Կիրովական (Վանաձոր) քաղաքներում, ապա 1970-ական թվականներին արդյունաբերական ձեռնարկություններ հիմնվեցին փոքր քաղաքներում, քաղաքատիպ ավաններում և խոշոր գյուղերում: Նոր արդյունաբերական համալիրներ ստեղծվեցին Հրազդանում, Արթիկում, Չարենցավանում, Արարատում, Դիլիջանում, Կամոյում (Գավառ) և այլուր:

Ինչպես ամբողջ Խորհրդային Միությունում, այնպես էլ Հայաստանում 1960-1980-ական թվականներին հա-

Firefox https://ebooks.bonee.net/fumf/rrit/

ՀԿԿ կենտկոմի առաջին քարտուղար Անտոն Քոչինյան

ՀԿԿ կենտկոմի առաջին քարտուղար Կարեն Դեմիրճյանը բացում է Արփա—Սևան թունելը, 1981 թ.

տուկ ուշադրություն դարձվեց խոշոր գիտաարտադրական միավորումների ստեղծմանը: Հատկապես բարձր տեմպերով զարգացան արդյունաբերական նոր ճյուղերը՝ ռադիոէլեկտրոնիկան, գերճշգրիտ հաստոցաշինությունը, միկրոկենսաբանական, ավտոմոբիլային և այլ ճյուղեր: Այդ տարիներին արդյունաբերական աճի տեմպերով Հայաստանը Խորհրդային Միությունում գրավում էր երկրորդ տեղը: Սակայն պետք է նշել, որ արդյունաբերական արտադրանքը որակական ցուցանիշներով հետ էր մնում համաշխարհային մակարդակից:

Հայաստանում արդյունաբերական նոր ճյուղեր ստեղծելիս անտեսվում էին անհրաժեշտ հումքով, էներգիայով և նույնիսկ ջրի պաշարներով հանրապետության ապահովվածության ու բնապահպանական հարցերը: Շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցություն ունեցան հատկապես գունավոր մետաղաձուլության՝ Քանաքեռի ալյումինի գործարանը, Ալավերդու մետաղաձուլական, Քաջարանի պղնձամոլիբդենային, Հրազդանի լեռնաքիմիական և այլ ձեռնարկություններ: 1970–1980–ական թվականներին կառավարությունը որոշ միջոցառումներ մշակեց շրջակա միջավայրը աղտոտումից փրկելու համար: Փակվեցին թունավոր արտադրամասեր «Նաիրիտ» գիտաարտադրական միավորումում, Կիրովականի քիմիական կոմբինատում, դադարեցվեց Հրազդանի լեռնաքիմիական կոմբինատի շինարարությունը և այլն:

1960–ական թվականների կեսերից կարևոր փոփոխություններ տեղի ունեցան հանրապետության էներգետիկ ոլորտում: Սևան—Հրազդան կասկադը տալիս էր հանրապետության էլեկտրաէներգիայի համարյա ողջ մասը, որը դարձել էր Սևանա լճի մակարդակի կտրուկ իջեցման պատճառ: Կարող էր խախտվել սակավաջուր Հայաստանի ջրային հաշվեկշիռը: Հայաստանի կառավարությունը ձեռնարկեց Սևանը փրկելու համար միջոցառումներ, որոնք նպաստեցին Սևանի մակարդակի հետագա իջեցումը կասեցնելուն: Սևանա լճի

127 von 322 15.02.2021, 10:43

մակարդակը բնականին մոտ պահպանելու նպատակով դեռևս 1961 թ. Հայաստանի կառավարության միջնորդությամբ ԽՍՀՄ նախարարների խորհուրդը որոշեց Արփա գետի ջրերի մի մասը Սևան փոխադրելու համար կառուցել 48 կմ ջրատար թունել: Դա եզակի և բարդ կառույց էր, որի շինարարությունը տևեց շուրջ 20 տարի: 1981 թ. Արփա—Սևան թունելը շահագործման հանձնվեց, կասեցվեց Սևանի մակարդակի իջեցումը, ապա և սկսվեց լճի մակարդակի բարձրացումը: Սակայն անլուծելի մնացին բնապահպանական շատ հարցեր, որոնք բացասաբար անդրադարձան լճի մաքրության և կենսոլորտի վրա:

Հանրապետության տարեցտարի աճող էներգետիկ պահանջները լիովին բավարարելու նպատակով 1969 թ. սկսվեց ***Հայկական ատոմակայանի*** շինարարությունը, որի առաջին էներգաբլոկը գործարկվեց ***1976 թ.***, իսկ երկրորդը՝ ***1979 թ.***: Ատոմային էլեկտրակայանի կառուցման գործում մեծ ներդրում ուներ ՀԿԿ ԿԿ առաջին քարտուղար, պետական ականավոր գործիչ ***Անտոն Քոչինյանը***: Ատոմային էլեկտրակայանի շահագործման շնորհիվ հանրապետությունում արտադրված էլեկտրաէներգիան գերազանցեց ժողովրդական տնտեսության պահանջները:

Գյուղատնտեսության հիմնախնդիրները: 1960-ական թվականների կեսերին ԽՍՀՄ-ում քայլեր կատարվեցին գյուղատնտեսության բնագավառում թույլ տրված սխալները վերացնելու ուղղությամբ: Սակայն պետության նոր քաղաքականությունը չկարողացավ արմատապես շտկել գյուղատնտեսության զարգացման բացասական միտումները, քանի որ երկրում տիրապետողը կոլեկտիվ տնտեսության սկզբունքն էր:

Գյուղատնտեսության վատ վիճակը պահանջում էր առավել արմատական միջոցառումներ: Կատարված փոփոխություններից կարևորը ***ագրոարդյունաբերական համալիրների (ԱԱՀ)*** ստեղծումն էր: Մեկ տարածքում գտնվող խորհրդային և կոլեկտիվ տնտեսությունները, գյուղատնտեսության կարիքների համար աշխատող մեքենաշինական և քիմիական արտադրությունը, գյուղատնտեսական հումքի վերամշակման ձեռնարկությունները միավորվեցին տարածքային ԱԱՀ-ում: Սակայն գոյության ընթացքում այդ համալիրներն իրենց չարդարացրին, չդարձան կենսունակ տնտեսական մարմիններ:

Լճացման երևույթները սոցիալական բնագավառում: Տնտեսության ոլորտում հիվանդագին երևույթներն անմիջապես իրենց արտացոլումն էին գտնում սոցիալական գործընթացներում: Թափ հավաքող ուրբանիզացումը հանգեցնում էր քաղաքների թվի աճին և քաղաքատիպ ավանների ծավալի մեծացմանը: ՀԽՍՀ քաղաքային բնակչության թիվը 1970 թ. մեկուկես միլիոն էր, իսկ 1986 թ. հասավ 2 մլն 300 հազարի: Երևան քաղաքի բնակչությունը նույն ժամանակաշրջանում 775 հազարից հասավ 1 մլն 140 հազարի: Քաղաքային բնակչությունը կազմում էր

հանրապետության բնակչության 2/3–ից ավելին: Սրվում էր բնակարանային հիմնախնդիրը: 1981 թ. Հայաստանում մեկ մարդուն բաժին էր ընկնում 13 քառակուսի մետր ընդհանուր բնակտարածք: Մինչդեռ Արևմտյան Եվրոպայում և ԱՄՆ–ում այդ ցուցանիշը 3–4 անգամ ավելի էր:

Քաղաքային բնակչության աճի հետևանքով համընդհանուր կրթական մակարդակը բարձրացավ: 1985 թ. ՀԽՍՀ ժողովրդական տնտեսության մեջ զբաղվածների մեջ բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթություն ունեցողների տեսակարար կշիռը հասավ 25 %–ի: Սակայն գիտատեխնիկական հեղափոխության պայմաններում տեղի ունեցավ աշխատավարձի և նյութական բարիքների բաշխման հավասարեցում. որակյալ և ոչ որակյալ աշխատանքի վարձատրության չափը 1980–ական թվականների կեսերին համարյա հավասարվեց: Ընկնում էր բարձր որակավորման աշխատանքի վարկը:

Խորհրդային պետության ողջ պատմության ընթացքում մշտապես առկա էր սպառողական ապրանքների պակասը: Սպառողը կենցաղային գույք ձեռք բերելու համար պետք է հերթագրվեր և սպասեր ամիսներով, հաճախ տարիներով: Կենսամթերքի պակասի պատճառով 1980–ական թվականների սկզբին երկրում մտցվեց առաջին անհրաժեշտության մթերքների բաշխման կտրոնային համակարգ: Իհարկե, հետպատերազմյան, նույնիսկ 1960–ական թվականների համեմատ կյանքի ընդհանուր մակարդակը երկրում բարձրացել էր: Սակայն նրա աճի արագությունն անընդհատ հետ էր մնում հասարակական սպասելիքից և պահանջարկից: Եվ վերջապես՝ խորհրդային քարոզչությունը մոտալուտ երջանիկ ապագայի մասին, պաշտոնական և իրական կյանքի միջև առկա լուրջ խզումն առաջացնում էին մարդկանց դժգոհությունն ու անտարբերությունը:

Վարչահրամայական համակարգի նոր դրսևորումները: 1960–ական թվականների կեսերին խորհրդային հասարակությունը շարունակում էր կառավարվել բացառապես կուսակցական–պետական մարմինների կողմից: Կենտրոնը Մոսկվայում գտնվող ԽՄԿԿ կենտկոմն էր, որը վերահսկողության տակ էր պահում մարդկային գործունեության ցանկացած ոլորտ, քիչ թե շատ նշանակալից պաշտոն:

Կոմունիստական կուսակցության անդամների թիվը շարունակում էր աճել: Հայաստանում 1966–1985 թթ. կոմունիստների թիվը 110 հազարից հասավ 185 հազարի:

Համակարգի կառուցվածքային տարրերից էին հասարակական կազմակերպությունները: Դրանք հիմնականում պետական բյուջեից ֆինանսավորվող կազմակերպություններ էին, որոնց ղեկավար պաշտոնյաներն ընդգրկված էին կուսակցական–պետական անվանակարգում և կատարում էին կուսակցության հրահանգները:

1977 թ. ընդունվեց ***ԽՍՀՄ նոր Սահմանադրությունը***: Բրեժնևյան Սահմանադրության մեջ ամրագրված էր ԽՍՀՄ-ում «զարգացած սոցիալիստական հասարակություն» կառուցելու մասին միտքը: Սահմանադրությամբ հռչակված և երաշխավորված՝ խոսքի, մամուլի, ժողովների ազատություններն իրականացնելը գործնականում անհնար էր: Նոր Սահմանադրության մեջ քաղաքական իշխանությունում ԽՄԿԿ փաստացի մենաշնորհը ստացավ իրավաբանական ձևակերպում: Սահմանադրության 6-րդ հոդվածը կոմկուսը հայտարարում էր «խորհրդային հասարակության ղեկավար և ուղղորդող ուժ, նրա քաղաքական համակարգի միջուկը»:

ՀԽՍՀ Սահմանադրությունը, որն ընդունվեց ***1978 թ.***, առանձնապես չէր տարբերվում ԽՍՀՄ Սահմանադրությունից: Այդուհանդերձ, վերջին պահին, հաշվի առնելով Հայաստանում ծագած ժողովրդական դժգոհությունը, Մոսկվան համաձայնեց ներառել հայոց լեզվի պետական կարգավիճակի մասին հոդվածը: Ի դեպ՝ ազգային լեզվի կարգավիճակին վերաբերող հոդված ոչ բոլոր հանրապետությունների սահմանադրություններում տեղ գտավ:

ԽՄԿԿ-ի քաղաքական գործելակերպում ժողովրդավարություն չկար: Պարզորոշ զգացվում էր կոմունիստների շերտավորումը կուսակցական վերնախավի, ղեկավար շերտի և շարքային կուսակցական զանգվածի:

Այսպիսով՝ խորհրդային պետությունը կարիք ուներ արմատական քաղաքական, սոցիալ-տնտեսական և մշակութային-գաղափարախոսական բարեփոխումների, հասարակության բոլոր ոլորտների որակական փոփոխությունների:

Կուսակցության արտաքին և ներքին քաղաքականության նկատմամբ վստահության ճգնաժամն աճում էր: Այդ գործընթացը որոշ չափով կանգ առավ, երբ 1982 թ.՝ Լ. Բրեժնևի մահից հետո, ԽՄԿԿ կենտկոմի գլխավոր քարտուղար ընտրվեց ***Յուրի Անդրոպովը***: Երկրի քաղաքական առաջնորդի փոփոխությունը դրական տեղաշարժերի որոշակի հույս էր ներշնչում: Տարրական կարգուկանոնի հաստատման և աշխատանքային կարգապահության ամրապնդման համար խստագույն վարչական միջոցառումներ ձեռնարկվեցին: Սակայն 1984 թ. Յ. Անդրոպովը մահացավ: Նրա սկսած քաղաքականությունը չշարունակվեց: Երկրում խորացավ սոցիալ-տնտեսական ու քաղաքական ճգնաժամը:

Հարցեր և առաջադրանքներ

1. Տնտեսության բնագավառում ինչ բարեփոխումներ իրականացվեցին 1960-ական թվականների կեսերին: Ինչո՞ւ տնտեսական աճը դանդաղեց, ապա տեղի ունեցավ լճացում:

2. Ներկայացրեք Խորհրդային Հայաստանի արդյունաբերության զարգացման ընթացքը 1960–1980-ական թվականներին: Ինչ հաջողություններ եղան էներգետիկայի ոլորտում: Ձեր կարծիքով ճիշտ էր Հայաստանում ատոմային էլեկտրակայան կառուցելը. հիմնավորեք պատասխանը:
3. Որոնք էին գյուղատնտեսության ոլորտի հիմնախնդիրները: Ինչ միջոցառումներ իրականացվեցին դրանց հաղթահարման նպատակով, ինչ արդյունքներ ստացվեցին:
4. Ինչ նոր դրսևորումներ ունեցավ վարչահրամայական համակարգը: Ինչ առանձնահատկություններ ուներ 1977 թ. ԽՍՀՄ Սահմանադրությունը: ԽՍՀՄ իշխող կուսակցական-պետական վերնախավում ինչ փոփոխություններ եղան 1980-ական թվականների սկզբներին:

ԳԼՈՒԽ 5. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ

§ 1. ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Վերակառուցման նպատակները: 1980-ական թվականների սկզբին խորհրդային տնտեսավարման համակարգը ճգնաժամի մեջ էր: Խորհրդային Միությունը, հումքային հսկայական պաշարներ, աշխատասեր բնակչություն ունենալով հանդերձ, ավելի ու ավելի էր հետ մնում Արևմուտքի զարգացած երկրներից: Տնտեսության անարդյունավետությունը բացասաբար էր ազդում երկրի պաշտպանունակության վրա: 1980-ական թվականների սկզբին Խորհրդային Միությունը սկսեց կորցնել մրցունակությունը Արևմուտքի հետ ռազմական տեխնոլոգիաների ոլորտում:

Երկրի տնտեսական հենքը այլևս չէր համապատասխանում համաշխարհային մեծ տերության կարգավիճակին: Միակուսակցական համակարգի և պատժիչ մարմինների առկայության պայմաններում վերափոխումները կարող էին սկսվել միայն «վերևից»: Երկրի բարձրագույն ղեկավարները հասկանում էին, որ անհրաժեշտ են բարեփոխումներ, սակայն ԽՄԿԿ կենտկոմի քաղբյուրոյի պահպանողական մեծամասնությունը չէր ցանկանում իր վրա վերցնել պատասխանատվությունը: Ակնհայտ էր դառնում, որ բարեփոխումների համար անհրաժեշտ էր թարմացնել երկրի ղեկավարությունը:

Վերակառուցման քաղաքականության սկիզբը 1985 թ. գարնանը հռչակեց ԽՄԿԿ կենտկոմի նորընտիր գլխավոր քարտուղար ***Միխայիլ Գորբաչովը:***

Տնտեսական ծրագրի հիմքում դրվեց ***արագացման ռազմավարությունը:*** Ենթադրվում էր կենտրոնացնել բոլոր միջոցները արտադրության արդիականացման, աշխատանքի ար-

տադրողականության բարձրացման, մեքենաների և սարքավորումների թողարկումն ընդլայնելու համար:

Վերակառուցման տեղապտույտը և լճացման երևույթների խորացումը Հայաստանում: Վերակառուցման և հրապարակայնության զարգացմանն ուղղված գործընթացները Հայաստանում դանդաղում էին, մինչդեռ հանրապետության ղեկավարությունը՝ ***Կ. Դեմիրճյանի*** գլխավորությամբ, առաջ էր քաշում այն տեսակետը, թե վերակառուցմանը ձեռնամուխ է եղել վաղուց՝ 1975 թվականից: Հայաստանում շարունակվում էին լճացման երևույթներն ինչպես տնտեսական, այնպես էլ հասարակական–քաղաքական կյանքում: Հանրապետությունը գտնվում էր բնապահպանական աղետի եզրին: Ապրանքների անբավարարությունը և ցածր եկամուտը ծնեցին նաև անտարբեր, անպատասխանատու վերաբերմունք հասարակական սեփականության նկատմամբ:

Սոցիալիզմի նվաճումներից մեկը համարվում էր անվճար բուժսպասարկումը: Սակայն բարձրորակ բժշկական օգնություն ստանալու համար մարդիկ ստիպված էին վճարել բուժաշխատողներին: Խորանում էր կոռուպցիան:

Պաշտոնեական առաջխաղացման համար պարտադիր էր կոմկուսին անդամակցելը: Ցածր օղակների պաշտոնյաները «կոմունիստ դառնալու համար» դիմում էին ապօրինի միջոցների:

Վերափոխումները քաղաքական համակարգում: Գորբաչովի կառավարման առաջին շրջանի ռազմավարական կողմնորոշիչը 1986 թ. մարտին կայացած ԽՄԿԿ XXVII համագումարն էր, որտեղ կոչ արվեց վերադառնալու լենինյան գաղափարներին և կոմունիզմի ակունքներին, «ակտիվացնելու մարդկային գործոնը», նորից իրացնելու նեպի փորձը և այլն: Սակայն ճգնաժամը խորանում էր: Դրա բացահայտ և ողբերգական դրսևորումը 1986 թ. ապրիլին Չեռնոբիլի ատոմակայանի աղետն էր:

1987 թ. հունվարին Գորբաչովն առաջադրեց բարեփոխումների նոր հայեցակարգ և ռազմավարություն՝ սոցիալիզմի նոր՝ ***ժողովրդավարական տարաձև*** (մոդել) ստեղծելու համար: Հռչակվեց «Ավելի շատ ժողովրդավարություն» կարգախոսը: Մեկուկես տարի անց հռչակվեց ***իրավական պետության*** ստեղծման գործընթացը. պետությունը պետք է հիմնվեր ոչ թե իշխող դասակարգի ցանկության, այլ օրենքի և համամարդկային իրավունքի վրա: Սակայն այս որոշումը, շատ այլ որոշումների նման, իրականություն չդարձավ:

Վերակառուցման քաղաքականությունը և ազգային հարցը: Հրապարակայնության, ժողովրդավարության և այլ սկզբունքների հռչակման հետ ավելի ցայտուն դարձան ազգային ինքնագիտակցության ձնշման և ազգային–տարածքային ինքնավարությունների նկատմամբ խորհրդային խստրական քաղաքակա-

նության պատճառով առաջացած հակասությունները:

1986 թ. դեկտեմբերին Ալմա Աթայում ղազախ ուսանողները բողոքի ցույցի դուրս եկան ընդդեմ Ղազախստանի կոմկուսի ղազախ ղեկավարի փոխարեն ազգությամբ ռուս պաշտոնյայի նշանակման: Բողոքը ճնշվեց: 1987 թ. ամռանն ազգային շարժումներն ավելի կազմակերպված բնույթ ստացան: Սկսվեց Ղրիմի թաթարների շարժումը իրենց իրավունքների վերականգնման համար:

1988 թ. փետրվարին սկսվեց Լեռնային Ղարաբաղը Հայաստանին վերամիավորելու շարժումը:

1989 թ. մարտին Ուզբեկստանի Ֆերգանա քաղաքում ուզբեկների և մեսխեթցի թուրքերի միջև ազգամիջյան բախումը բազմաթիվ զոհերի պատճառ դարձավ:

Ղարաբաղյան շարժմանը հետևեցին աբխազական և օսական շարժումները: Աբխազները միութենական հանրապետության կարգավիճակ էին պահանջում: Վրաց–աբխազական արյունալի բախումներ տեղի ունեցան:

ԽՍՀՄ արևմտյան մասում ազգային–տարածքային սուր բախում տեղի ունեցավ ***1990 թ.*** Մերձդնեստրում, որը կազմում էր Մոլդավիայի տարածքի մոտ 20 տոկոսը, սակայն այնտեղ էր արտադրվում հանրապետության համախառն ներքին արդյունքի 35 տոկոսը:

Էստոնիայի, Լատվիայի և Լիտվայի ազգային ճակատները ձևավորվեցին 1988 թ. գարնանը: Իրենց հանրապետություններում 1940 թ. խորհրդային իշխանության հաստատումը նրանք անվանում էին բռնազավթում և հանրապետական իշխանություններից պահանջում էին որոշում ընդունել ԽՍՀՄ–ի կազմից դուրս գալու մասին:

1989 թ. մայիսին և հուլիսին «Պետական անկախության մասին» հռչակագրեր ընդունեցին համապատասխանաբար Լիտվան և Լատվիան: Ազգային հարցը դարձավ ԽՍՀՄ–ի փլուզման գլխավոր պատճառներից մեկը:

Հարցեր և առաջադրանքներ

1. Որո՞նք էին վերակառուցման քաղաքականության նպատակները: Ինչո՞ւ Խորհրդային Հայաստանում և մյուս խորհրդային հանրապետություններում վերակառուցումը տեղապտույտ ապրեց, և խորացավ սոցիալ–տնտեսական ճգնաժամը:
2. Քաղաքական համակարգում ի՞նչ բարեփոխումներ ձեռնարկվեցին: Ինչո՞ւ դրանք սպասված արդյունքը չտվին:
3. Ազգային հարցում ի՞նչ հիմնախնդիրներ կային Խորհրդային Միությունում: Վերակառուցման շրջանում ինչո՞ւ սրվեցին ազգամիջյան հարաբերությունները և ի՞նչ դրսևորումներ ունեցան: Քննարկե՛ք և վերհանե՛ք ազգային հարցի սրման գլխավոր պատճառները:

§ 2. ԱՐՑԱԽՅԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ

Արցախյան շարժման նոր փուլը: Գորբաչովյան վերակառուցման քաղաքականության շնորհիվ Արցախի բնակչությունը սկսեց ավելի համարձակ պայքարել ՀԽՍՀ–ին միանալու համար: 1987 թ. նոյեմբերին Մոսկվա ուղարկվեց Լեռնային Ղարաբաղը Հայաստանին վերամիավորելու պահանջագիր՝ համարյա բոլոր չափահաս արցախցիների ստորագրությամբ: 1988 թ. հունվարի 5–ին Մոսկվա մեկնեց արցախցիների պատվիրակությունը՝ երկրի ղեկավարությանն իր պահանջները ներկայացնելու համար: Արցախցիները պահանջում էին վերացնել պատմական անարդարությունը և ԼՂԻՄ–ը միացնել Հայաստանին:

1988 թ. փետրվարին տեղի ունեցան ԼՂԻՄ ժողովրդական պատգամավորների շրջանային և Ստեփանակերտի քաղաքային խորհուրդների նստաշրջաններ, որոնք պահանջեցին հրավիրել մարզխորհրդի արտահերթ նստաշրջան՝ Լեռնային Ղարաբաղը Հայաստանին վերամիավորելու օրակարգով:

Փետրվարի 20–ին ԼՂԻՄ–ի մարզխորհրդի մի քանի տասնյակ պատգամավորներ գրավոր պահանջեցին հրավիրել մարզխորհրդի արտահերթ նստաշրջան: Աշխատանքները սկսվեցին նույն օրը երեկոյան. 150 պատգամավորներից հավաքվել էին 110–ը: Նստաշրջանում քննարկվեց «Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի մարզային խորհրդի միջնորդությունը՝ մարզը Ադրբեջանական ԽՍՀ–ի կազմից հանելու և Հայկական ԽՍՀ–ի կազմի մեջ մտցնելու մասին» հարցը: Ելույթ ունեցավ 45 պատգամավոր: Նստաշրջանն ընդունեց հետևյալ պատմական որոշումը. *«Ընդառաջելով ԼՂԻՄ–ի աշխատավորների ցանկություններին՝ խնդրել Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհրդին՝ խոր ըմբռնման զգացում դրսևորել Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության իղձերին և ԼՂԻՄ–ը Ադրբեջանական ԽՍՀ–ի կազմից Հայկական ԽՍՀ–ի կազմ հանձնելու հարցի դրական լուծմանը»*:

Մարզխորհրդի շենքը շրջապատած հազարավոր արցախցիներ ցնծությամբ ընդունեցին այդ որոշումը: Հաջորդ օրը որոշումը տպագրվեց «Սովետական Ղարաբաղ» հայերեն և ռուսերեն մարզային թերթերում: Սկսվեց Արցախի բնակչության ծանր ու երկարատև պայքարն ազատության համար: Փետրվարի 23–ին տեղի ունեցավ կոմկուսի ԼՂԻՄ մարզկոմի լիագումար նիստը, որը Բ. Կևորկովին պաշտոնազրկեց և մարզկոմի առաջին քարտուղար ընտրեց ***Հենրիխ Պողոսյանին***:

Հանրահավաքներ Երևանում: Սումգայիթյան ողբերգությունը: 1988 թ. փետրվարի կեսերից Երևանում ամեն օր հանրահավաքներ էին անցկացվում: Փետրվարի 20–ին Թատերական (այժմ՝ Ազատության) հրապարակում հավաքված հազարավոր

Հանրահավաք Թատերական հրապարակում՝
Լեռնային Ղարաբաղը Հայաստանին վերամիավորելու պահանջով, 1988 թ.

ցուցարարներ հանդես եկան ի պաշտպանություն ՀԽՍՀ–ի և ԼՂԻՄ–ի վերամիավորման: Փետրվարի 22–ին Ղարաբաղյան շարժումը ղեկավարելու համար ստեղծվեց ***«Ղարաբաղ» կոմիտեն***, որի կազմում էին ***Իգոր Մուրադյանը, Վաչե Սարուխանյանը*** և այլք: Փետրվարի 25–26–ին Երևանում ցուցարարների թիվն անցնում էր 100 հազարից: ԽՍՀՄ պատմության մեջ դա աննախադեպ երևույթ էր:

Երկրի ղեկավարությանն անհանգստացրին Լեռնային Ղարաբաղում և ՀԽՍՀ–ում ընթացող զանգվածային ելույթները: Փետրվարի 21–ին ԽՄԿԿ կենտկոմի՝ «Լեռնային Ղարաբաղի իրադարձությունների մասին» որոշումով հայության արդարացի շարժումը որակվեց «ծայրահեղական»: Խորհրդային Միության ղեկավար Մ. Գորբաչովը փետրվարի 26–ին դիմեց «Ադրբեջանի և Հայաստանի աշխատավորներին, ժողովուրդներին», «ժողովուրդների իսկական եղբայրության և միասնության» կոչ արեց և խոստացավ Ադրբեջանում ու Հայաստանում կուտակված տնտեսական, սոցիալական, բնապահպանական և այլ հիմնահարցերի լուծում:

Փետրվարի 27–29–ը Բաքվից 25 կմ հեռավորության վրա գտնվող ***Սումգայիթ*** քաղաքում միլիցիայի և տեղական իշխանությունների լրիվ անգործության պայմաններում, ավելին՝ որոշ դեպքերում նրանց հանցակցությամբ, տեղի ունեցավ հայ բնակչության կոտորած (ջարդ)՝ թուրքական վայրագության բոլոր դրսևորումներով... Ըստ պաշտոնական տվյալների՝ զոհերի թիվը 27 է: Հազարավոր հայեր դարձան փախստական: Սումգայիթի եռօրյա ոճրագործությունը ցեղաս-

պանություն էր և կազմակերպվել էր արցախահայության ազատատենչությունը ճնշելու նպատակով:

Լեռնային Ղարաբաղում իրավիճակը խիստ լարվեց: Երկրի ղեկավարությունը փորձում էր ելք գտնել՝ շեշտը դնելով Ադրբեջանի կազմում ԼՂԻՄ-ի սոցիալ-տնտեսական զարգացման դրույթի վրա: ***1988 թ. մարտի 24-ին*** ԽՄԿԿ կենտկոմը և ԽՍՀՄ նախարարների խորհուրդը ընդունեցին «Ադրբեջանական ԽՍՀ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի սոցիալ-տնտեսական զարգացումը 1988-1995 թթ. արագացնելու միջոցառումների մասին» որոշումը: Այդ ծրագիրն իրականացնելու համար Ադրբեջանի իշխանություններին հատկացվելու էր 500 միլիոն ռուբլի: Արցախահայությունը մերժեց այդ որոշումը:

Երկրում հետզհետե սրվող ազգային հարցին գործնական լուծում տալու փոխարեն Մոսկվան վարում էր երկդիմի ու խուսանավելու քաղաքականություն: Հայ ժողովրդի բարձրացրած արդար պահանջը մերժվեց:

Շարժման հետագա վերելքը: Հայաստանում Արցախյան շարժումն օրեցօր ներառում էր ժողովրդական նորանոր զանգվածներ: Խորհրդային Հայաստանի բնակչությունը հանրապետության կոմունիստական ղեկավարությունից պահանջում էր կանգնել հայոց ազգային շահերի պաշտպանության դիրքերում: Հայաստանի կոմկուսի և պետական շատ ղեկավարներ աջակցում էին «Ղարաբաղ» կոմիտեին: Մայիսի 31-ի հանրահավաքի ժամանակ հայտարարվեց, որ «Ղարաբաղ» կոմիտեն համալրվել է նոր անդամներով՝ ***Լևոն Տեր-Պետրոսյան, Վազգեն Մանուկյան, Համբարձում Գալստյան, Աշոտ Մանուչարյան, Վանո Սիրադեղյան*** և ուրիշներ, ու վերանվանվել է «Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտե»:

1988 թ. մայիսի 21-ին Հայաստանի և Ադրբեջանի կոմկուսի կենտկոմների առաջին քարտուղարներ Կ. Դեմիրճյանին և Ք. Բաղիրովին փոխարինեցին համապատասխանաբար Սուրեն Հարությունյանը և Արդուռահման Վեզիրովը:

1988 թ. հունիսի 9-ին Միխայիլ Գորբաչովի հրավերով Մոսկվա մեկնեցին Լեռնային Ղարաբաղի մարզկոմի առաջին քարտուղար Հենրիխ Պողոսյանը, Հայաստանի և Ադրբեջանի կոմկուսի կենտկոմների նորընտիր առաջին քարտուղարները: Հայաստանի և Ադրբեջանի ղեկավարներին հանձնարարվեց իրենց հանրապետությունների Գերագույն խորհուրդներում քննարկել ԼՂԻՄ-ի մարզխորհրդի փետրվարի 20-ի որոշումը և ընդունել համապատասխան որոշումներ:

1988 թ. հունիսի 15-ին ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նստաշրջանը, քննարկելով ԼՂԻՄ մարզխորհրդի փետրվարի 20-ի որոշումը, համաձայնություն տվեց ԼՂԻՄ-ը Հայկական ԽՍՀ-ի կազմի մեջ մտնելուն և ԽՍՀՄ Գերագույն խորհրդին խնդրեց քննարկել ու դրական լուծում տալ ԼՂԻՄ-ը Ադրբեջանական ԽՍՀ կազմից Հայկական ԽՍՀ կազմի մեջ մտցնելու հարցին: Հակառակ որոշում ընդու-

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԵՎ ԼՂԻՄ (1936–1990 թթ.)


ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ
Պետությունների սահմանները
Խորհրդային հանրապետությունների սահմանները
Նախկին Դաղստանի ինքնավար մարզի սահմանները
ՀԽՍՀ, ԼՂԻՄ և Ադրբեջանի Խորհրդային
Ինքնավարությունների շրջանների սահմանները
Հայանպատակ շրջանների սահմանները
Նախիջևանի ինքնավար Հանրապետության սահմանները
Ադրբեջանական ինքնավար մարզերի սահմանները
1936–1940 թվականներին Հայկական ԽՍՀ-ում
և ԼՂԻՄ-ում գոյություն ունեցող վարչական միավորները
ՀԽՍՀ մայրաքաղաք
ԼՂԻՄ և Ադրբեջանի ԽՍՀ մայրաքաղաքներ
Խոշոր քաղաքներ
Հոդվածներում հիշատակվող
Այլ բնակավայրեր
Ինքնավար հանրապետությունների անվանումները
Թվերով նշված են 1. Ջուլֆայի շրջան, 2. Մեղրի շրջան,
3. Ճանգիբասարի շրջան, 4. Նուռնուսի շրջան,
5. Սանիրի շրջան, 6. Մարտակերտի շրջան
ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ
ԼՂԻՄ
ԵՐԵՎԱՆ
ՍԵՎԱՆԻ ԼԻՃ
ԳԱՆՁԱԿԱՆ
ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՍԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ
Մեծ Սևան
Սևանա լիճ
Ամուր գետ
Կուր գետ
Արաքս գետ
Գեղարքունիքի մարզ
Ղազախի շրջան
Ստեփանավանի շրջան
Թալինի շրջան
Ապարանի շրջան
Աշտարակի շրջան
Գեղարքունիքի շրջան
Մարտունու շրջան
Վարդենիսի շրջան
Ջերմուկի շրջան
Սիսիանի շրջան
Կապանի շրջան
Գորիսի շրջան
Մեղրու շրջան
Նուռնուսի շրջան
Ստեփանակերտի շրջան
Մարտակերտի շրջան
Հադրութի շրջան
Ասկերանի շրջան
Մարտունու շրջան
Գանձակ
Ելիզավետպոլ
Ղարաբաղ
Զանգեզուր
Նախիջևան
Սարիգյուղ
Ջուլֆա
Ղարաբուլաղ
Ղարաբաղ
Ղարաբաղ
Ղարաբ

նեց Ադրբեջանի Գերագույն խորհուրդը՝ հայտարարելով, որ ԼՂԻՄ մարզխորհրդի որոշումը հակասում է «հայ և ադրբեջանական ժողովուրդների շահերին» և չի համապատասխանում «մեր երկրի բոլոր ժողովուրդների բարեկամության ամրապնդմանը, վերակառուցման խնդիրներին»:

1988 թ. հուլիսի 18-ին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նիստը քննարկեց «Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ Հայկական ԽՍՀ և Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհուրդների որոշումների մասին» հարցը: Վճռական էր ***Հենրիխ Պոդոսյանի*** ելույթը: Նա հայտարարեց. *«Լեռնային Ղարաբաղը մշտնջենապես բնակեցված է եղել հայերով և նրանց հայրենիքի մի հատվածն է, որը, Ստալինի մեղքով հայտնվելով Ադրբեջանի կազմում, 65 տարի շարունակ ենթարկվել է ստորացման, վիրավորանքների ու ամեն տեսակի ճնշումների... Ստեղծված իրավիճակի միակ ճշմարիտ լուծումը կարող է լինել Լեռնային Ղարաբաղի դուրսբերումը Ադրբեջանի կազմից»*:

ԽՍՀՄ ԳԽ նախագահությունն ընդունեց որոշում, որտեղ ասված էր. «Անհնարին է Հայկական ԽՍՀ-ի և Ադրբեջանական ԽՍՀ-ի սահմանների և Սահմանադրության հիման վրա հաստատված նրանց ազգային-տարածքային բաժանման փոփոխումը»:

Օգոստոսի 19-ին երևանյան հանրահավաքում «Ղարաբաղ» կոմիտեն հրապարակեց պայքարի նոր ծրագիր, որը հաջորդ տարի դարձավ ***Հայոց համազգային շարժման (ՀՀՇ)*** առաջին համագումարում ընդունված ծրագրի հիմքը: ***Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեն վերակազմավորվեց Հայոց համազգային շարժման***, որի հիմնական նպատակն էր Լեռնային Ղարաբաղի միացումը Հայաստանին:

Նոյեմբերի 7-ին Հոկտեմբերյան հեղափոխության 71-րդ տարեդարձին նվիրված ամենամյա շքերթը Լենինի (այժմ՝ Հանրապետության) հրապարակում վերածվեց ՀԽՍՀ-ի հետ Արցախի վերամիավորման համար պայքարի նոր՝ հուժկու դրսևորման:

1988 թ. նոյեմբերի 22-ին Երևանում աշխատանքները սկսեց ՀԽՍՀ ԳԽ նստաշրջանը: Օրակարգում ընդգրկվեցին նաև Օսմանյան Թուրքիայում 1915 թ. հայերի ցեղասպանության դատապարտման, հանրապետության խորհրդային և տնտեսական մարմինների կողմից Լեռնային Ղարաբաղի մասին որոշումների կատարման ընթացքի, պետական կյանքի կարևոր խնդիրների համաժողովրդական քննարկման մասին հարցերը:

Այդ օրերին հայ-ադրբեջանական լայնամասշտաբ ընդհարումը շատ հավանական էր: Ահա այդպիսի պայմաններում, երբ քննարկվում էր Լեռնային Ղարաբաղի մասին հարցը, հանրապետության ԳԽ ղեկավարությունը նպատակահարմար համարեց հետաձգել նստաշրջանի աշխատանքները, որպեսզի տեղերում ապահովի հասարակական կարգի պահպանությունը: Նոյեմբերի 24-ին Թատերական հրապարակում տեղի ունեցած հանրահավաքին մասնակցում էր 150

հազար մարդ: Հանրահավաքի մասնակիցները պահանջում էին ՀԽՍՀ ԳԽ նստաշրջանը վերսկսել նույն օրը՝ երեկոյան: 171 պատգամավոր, հավաքվելով Օպերայի և բալետի թատրոնի դահլիճում, ընդհատված նստաշրջանը հայտարարեցին վերսկսված: Նրանք քննարկեցին օրակարգի հարցերը և ընդունեցին որոշումներ, որոնք, սակայն, հաջորդ օրը ԽՍՀՄ ԳԽ նախագահության որոշմամբ ճանաչվեցին անօրինական:

Նոյեմբերի 24-ին՝ ժամը 24:00-ից, Երևանում հայտարարվեց պարետային ժամ: Խորհրդային զորքը մտավ ՀԽՍՀ մայրաքաղաք: Հանրապետության 16 շրջաններում դեկտեմբերի 5-ից հատուկ դրություն մտցվեց: Բնակչությունը խիստ դժգոհ էր և պահանջում էր պարետային ժամը վերացնել թե՛ ՀԽՍՀ-ում, թե՛ Արցախում: Սակայն իրադրությունը փոխվեց 1988 թ. դեկտեմբերի 7-ին տեղի ունեցած Սպիտակի երկրաշարժի հետևանքով: Աղետի կապակցությամբ դեկտեմբերի 9-ին Երևան ժամանեց Միխայիլ Գորբաչովը:

Չնայած երկրաշարժի ծանր հետևանքներին՝ Արցախյան շարժումը չդադարեց: Երևան ժամանելու հաջորդ օրը Գորբաչովը հանձնարարեց ձերբակալել «Ղարաբաղ» կոմիտեի մի շարք անդամների: 1989 թ. հունվարի 9-ին նրանք կալանավորվեցին և տեղափոխվեցին Մոսկվա:

1989 թ. հունվարի 11-ին ԽՍՀՄ ԳԽ նախագահությունը Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում կառավարման հատուկ ձև սահմանեց. ստեղծվում էր ***Հատուկ կառավարման կոմիտե***, որի վրա էր դրվում մարզի պետական մարմինների ղեկավարումը: Մարզի տնտեսությունը կախվածության մեջ էր մնում Ադրբեջանից: Կոմիտեի նախագահ նշանակվեց ԽՄԿԿ կենտկոմի բաժնի վարիչ ***Արկադի Վոլսկին***:

Ղարաբաղի բնակչությունը դժգոհ էր Հատուկ կառավարման կոմիտեից, որի թողտվությամբ Ադրբեջանի իշխանությունները մարզի միայն ադրբեջանաբնակ վայրերում էին ծավալել բնակարանների, արդյունաբերական ձեռնարկությունների, սոցիալ-տնտեսական օբյեկտների լայնածավալ շինարարություն:

1989 թ. մայիսի 25-ին Մոսկվայում աշխատանքները սկսեց ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների 1-ին համագումարը: Հայաստանի բնակչության զանգվածային բողոքները ստիպեցին իշխանություններին թույլատրել ազատ հանրահավաքներն ու ցույցերը: Նոր թափ առած ժողովրդական շարժման պահանջով իշխանությունները մայիսի վերջին ազատ արձակեցին «Ղարաբաղ» կոմիտեի անդամներին:

Ստեփանակերտում չէին դադարում հանրահավաքները: Արդեն երկու ամիս չէին աշխատում մարզի արդյունաբերական ձեռնարկությունները: Արցախի վիճակը ծանրանում էր նրանով, որ օրեցօր ավելանում էր Ադրբեջանից մազապուրծ հայ փախստականների թիվը. հուլիսի 1-ին մարզում 18 500-ից ավելի փախստական կար:

Քանի որ Հատուկ կառավարման կոմիտեն չէր պաշտպանում արցախահայերի իրավունքները, ուստի որոշվեց ստեղծել ազգային նոր մարմին: ***1989 թ. օգոստոսի 16-ին*** Ստեփանակերտի պետական թատրոնի շենքում տեղի ունեցավ Լեռնային ***Ղարաբաղի ազգաբնակչության լիազոր ներկայացուցիչների համագումարը***: Համագումարում ընտրվեց 80 հոգուց բաղկացած ***Ազգային խորհուրդ***: Ազգային խորհուրդը գլխավորեց արցախցիների ազատագրական պայքարը: Հռչակվեց, որ Ազգային խորհուրդն անկախ է իր գործունեության մեջ, վերահսկելի՝ միայն համագումարի կողմից: Նրա որոշումները պարտադիր էին Լեռնային Ղարաբաղի ամբողջ տարածքում:

Կալանքից ազատված «Ղարաբաղ» կոմիտեի անդամները հայրենիք վերադառնալուց հետո նոր մարտավարությամբ ծավալեցին իրենց գործողությունները: ***1989 թ. նոյեմբերի 4-ին*** բացվեց Հայոց համազգային շարժման առաջին համագումարը, որին մասնակցում էին Խորհրդային Միության տարբեր հանրապետությունների ժողովրդական ճակատների, հայաշատ վայրերի, սփյուռքահայ համայնքների պատվիրակներ, զանգվածային լրատվության ներկայացուցիչներ: Համագումարում կազմակերպության խնդիրների մասին զեկուցեց ***Լևոն Տեր-Պետրոսյանը***: Համագումարն ընդունեց ՀՀՇ ծրագիրն ու կանոնադրությունը և ընտրեց ՀՀՇ վարչություն:

Զորի Բալայանի ելույթը Թատերական հրապարակում, 1988 թ.

Ավելի էին սրվում հայ-ադրբեջանական հարաբերությունները: Դրան նպաստում էր Մոսկվայի ոչ սկզբունքային դիրքորոշումը: 1989 թ. նոյեմբերի 28-ին ԽՍՀՄ Գերագույն խորհուրդը քննարկեց Լեռնային Ղարաբաղի հարցը: ԽՍՀՄ ԳԽ-ն որոշեց ԼՂԻՄ-ը թողնել Ադրբեջանի կազմում, իսկ Հատուկ կառավարման կոմիտեն վերացնել: Փոխարենը ստեղծվում էր Ադրբեջանի Հանրապետության կոմիտե:

Արցախում և ՀԽՍՀ-ում դժգոհ էին ԽՍՀՄ ԳԽ այդ որոշումից: Արցախը շարունակում էր մնալ Ադրբեջանի կազմում: Ստեղծված պայմաններում Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհուրդը և ՀՀՇ-ն պահանջեցին հրավիրել Հայաստանի Գերագույն խորհրդի ու Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհրդի համատեղ նիստ և վճռել Արցախը ՀԽՍՀ-ին վերամիավորելու հարցը:

1989 թ. նոյեմբերի 30-ին Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհրդի անդամների մասնակցությամբ Երևանի Ստեփան Շահումյանի անվան մշակույթի պալատում աշխատանքնե-

Թաթուլ Կրպեյան

Սիմոն Աչիքգյոզյան

ը սկսեց Հայաստանի Գերագույն խորհրդի արտահերթ նստաշրջանը: Դեկտեմբերի 1-ի երեկոյան ընդունվեց «Հայկական ԽՍՀ-ի և Լեռնային Ղարաբաղի վերամիավորման մասին» համատեղ որոշումը: ԽՍՀՄ ԳԽ նախագահությունը 1990 թ. հունվարի 10-ին բեկանեց ՀԽՍՀ-ի Գերագույն խորհրդի և ԼՂ Ազգային խորհրդի 1989 թ. դեկտեմբերի 1-ի համատեղ որոշումը: ԽՍՀՄ ԳԽ որոշման մեջ նշված էր նաև, որ Ադրբեջանը չի կատարել նոյեմբերի 28-ի որոշումը, չի վերականգնել մարզի ղեկավար մարմինները, չի մշակել մարզի կարգավիճակը բարելավելու միջոցառումներ:

Ադրբեջանում ***1990 թվականը*** սկսվեց նոր վայրագություններով: ***Հունվարի 13-20-ը Բաքվում*** իրականացվեց հայ բնակչության կոտորած և բռնի տեղահանություն, որի ընթացքում ազգային ճակատը և իշխանության մարմինները գործում էին համատեղ: Կողոպտված և խոշտանգումների ենթարկված հազարավոր հայեր լաստանավերով փոխադրվեցին Թուրքմենստանի Կրասնովոդսկ քաղաքը:

Լարված էր իրավիճակը նաև Հայաստանում: ՀՀՇ-ի առաջին համագումարից հետո կազմակերպության ղեկավարությունը գործում էր երկու ուղղությամբ՝ աջակցել Արցախի ազգային-ազատագրական պայքարին և հանրապետությունում իշխանությունը վերցնել իր ձեռքը: Թատերական հրապարակը դարձել էր կամավորական ուժերի կազմակերպման, նախընտրական քարոզչության և Արցախին նյութական ու ռազմական օգնության կազմակերպման վայր: Հունվարի 13-ի հանրահավաքում հայտարարվեց, որ ՀՀՇ-ի ինքնապաշտպանական ուժերը թե՛ շրջաններում, թե՛ Երևանում բերվել են ռազմական պատրաստության: Հանրապետության բնակչությանը կոչ արվեց ունեցած զենքը կամ հանձնելու «Ղարաբաղ» կոմիտեին, կամ զենքով ներկայանալու կոմիտե: Հայաստանի սահմանները պաշտպանող ջոկատները Երասխավանում և սահմանամերձ մյուս հատվածներում Ադրբեջա-

նի ժողովրդական ճակատի հրահրած ընդհարումների ժամանակ արժանի հակահարված հասցրին հակառակորդին:

1990 թ. սեպտեմբեր–հոկտեմբեր ամիսներին Արցախում վիճակն օրեցօր ծանրանում էր: ԽՍՀՄ ղեկավարության ոչ հայանպաստ ու Արցախի համար վտանգավոր դիրքորոշման դեմ բողոքի արտահայտություն էր Մոսկվայում սեպտեմբերի 9–ին գրող, հրապարակախոս ***Զորի Բալայանի*** կողմից հացադուլի հայտարարումը: Նրան միացան աշխարհահռչակ գիտնական Վիկտոր Համբարձումյանը, սիրված դերասան Սոս Սարգսյանը և Ղարաբաղի մի քանի պատգամավորներ: Սակայն այս ծայրահեղ քայլը միութենական ղեկավարության վրա ազդեցություն չգործեց: Հացադուլը դադարեցվեց սեպտեմբերի 29–ին Ամենայն հայոց Վազգեն Ա կաթողիկոսի խնդրանքով:

Խորհրդային բանակի և Ադրբեջանի հատուկջոկատայինների գործողությունները ԼՂԻՄ–ում: 1991 թ. Արցախի համար ավելի ծանր տարի էր: Շրջափակման պատճառով հիմնովին խաթարվել էր տնտեսությունը: ԽՍՀՄ և Ադրբեջանի իշխանություններն ավելի էին ուժեղացրել ճնշումներն ու բռնարարքները:

Խիստ մտահոգիչ էր վիճակը Հյուսիսային Արցախում: Դատարկվել էին Գետաբեկի, Թովուզի, Շամխորի և Դաշքեսանի շրջանների հայկական գյուղերը: Հերթը հասել էր Խանլարի շրջանին: Հյուսիսային Արցախի լիակատար հայաթափության համար 1991 թ. գարնանը Ադրբեջանի իշխանությունները, խորհրդային բանակի հետ համագործակցելով, մշակեցին «Կոլցո» («Օղակ») ռազմական գործողության ծրագիրը: Վիճակն ավելի ծանրացավ, երբ «Կոլցո» գործողության իրականացմանը միացան խորհրդային զորամասերը: Հրազենի տարբեր տեսակներից գնդակոծվում էին նաև Մարտունաշենը և Շահումյանի շրջանի մի շարք գյուղեր:

1991 թ. ապրիլի 30–ին սկսվեց «Կոլցո» գործողության իրականացումը: Գետաշեն ներխուժած խորհրդային զինվորականներին ուղեկցում էին ադրբեջանցի հատուկջոկատայիններ, որոնք դաժան հաշվեհարդար էին տեսնում գյուղի բնակչության հետ: Գետաշենցիների հերոսական պայքարը գլխավորում էր ***Թաթուլ Կրպեյանը***: Անհավասար մարտում զոհվեցին ***Թաթուլ Կրպեյանը, Արթուր Կարապետյանը,*** Մարտունաշենի պաշտպանության ղեկավար ***Սիմոն Աչիքգյոզյանը*** և ուրիշներ, այդ թվում՝ բազմաթիվ խաղաղ բնակիչներ:

1991 թ. մայիսի 7–ին երեք հազար մարդ՝ կանայք, երեխաներ, ծերեր, ռազմական ուղղաթիռներով տեղափոխվեցին Ստեփանակերտ, այնտեղից էլ՝ Հայաստանի տարբեր շրջաններ: Գետաշենում իրագործված «Կոլցո» գործողության ժամանակ զոհվեց 41, վիրավորվեց 70, պատանդ տարվեց 335 մարդ:

Չնայած խորհրդային բանակի օժանդակությամբ ադրբեջանական իշխանություններին հաջողվեց հայաթափել և Ադրբեջանին բռնակցել

Հյուսիսային Արցախի մի մասը, սակայն հայկական ինքնապաշտպանական ուժերն արժանի հակահարված տվեցին թշնամուն: Մարտերում ձեռք բերված փորձը հետագայում հաջողությամբ կիրառվեց Արցախյան ազատագրական պատերազմի ընթացքում:

Հարցեր և առաջադրանքներ

1. Արցախի հայությունը 1987 թ. վերջերից ինչո՞ւ կրկին բարձրացրեց Լեռնային Ղարաբաղը Հայաստանին վերամիավորելու հարցը: Ներկայացրեք 1988 թ. փետրվարյան իրադարձությունների ընթացքը Լեռնային Ղարաբաղում:
2. Երևանում ե՞րբ սկսվեցին հանրահավաքներն՝ ի պաշտպանություն ՀԽՍՀ-ի և ԼՂԻՄ-ի վերամիավորման: Ի՞նչ մարմին ստեղծվեց շարժումը ղեկավարելու համար, ովքե՞ր էին այն գլխավորում: Ինչո՞ւ ԽՍՀՄ ղեկավարությունը հենց սկզբից մերժողական մոտեցում դրսևորեց հայերի արդարացի պահանջի հանդեպ: Սումգայիթի հայ բնակչության նկատմամբ գործադրված ցեղասպանությունը ովքե՞ր էին կազմակերպել:
3. Ժամանակագրական սանդղակի տեսքով ներկայացրե՛ք 1988 թ. մայիսից մինչև 1991 թ. մարտ ժամանակահատվածի Արցախյան շարժման գլխավոր իրադարձությունները: Մ. Գորբաչովը և Ադրբեջանի ղեկավարությունը ի՞նչ ծայրահեղ միջոցառումներ իրականացրին Խորհրդային Հայաստանում և Լեռնային Ղարաբաղում: Ներքին և արտաքին ոչ բարենպաստ պայմանների պարագայում ինչո՞ւ հայ ժողովուրդը հետ չկանգնեց իր պահանջատիրությունից:
4. Լուսաբանե՛ք Հյուսիսային Արցախի ինքնապաշտպանության ընթացքը, «Կոլցո» գործողությունը և դրա հետևանքները: Ի՞նչ նշանակություն ունեցավ Գետաշենի, Մարտունաշենի և մյուս գյուղերի հայության հերոսական ինքնապաշտպանությունը:

§ 3. 1988 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 7-Ի ԵՐԿՐԱՇԱՐԺԸ

1988 թ. դեկտեմբերի 7-ին Հայաստանում տեղի ունեցավ հուժկու երկրաշարժ: Երկրաշարժի էպիկենտրոնում՝ Սպիտակ քաղաքում, ցնցումների ուժը հասավ 10 բալի: Պատմության մեջ այս աղետը մտավ ***«Սպիտակի երկրաշարժ»*** անունով:

Երկրաշարժի գոտում հայտնվեցին Հայաստանի տասնյակ քաղաքներ ու ավաններ: Հիմնահատակ ավերվեց 16 հազար բնակչություն ունեցող Սպիտակը: Ավերվեցին հանրապետության երկրորդ քաղաքի՝ 250 հազար բնակչություն ունեցող Լենինականի շինությունների մեծ մասը, Կիրովականի շինությունների համարյա կեսը: Տուժեց 400 գյուղ, 60-ն ավերվեց ամբողջությամբ: Երկրաշարժին զոհ գնաց 25 հազար մարդ, 17 հազարը վիրավորվեց, անօթևան մնաց մոտ 515 հա-

զարը: Աղետալի երկրաշարժի ծանր հետևանքների պատճառը ոչ միայն ցնցումների ուժգնությունն էր, այլև շենքերի նախագծման աղաղակող թերությունները և շինարարության ցածր որակը:

Հայաստանին պատուհասած ահավոր դժբախտության լուրն անմիջապես տարածվեց Խորհրդային Միությունում և ամբողջ աշխարհում: Դեկտեմբերի 8-ին Մոսկվայից ժամանեց բարձրակարգ բժիշկների խումբը՝ իր հետ բերելով դեղորայք և սարքավորումներ: Վրաստանից ժամանած բժիշկներն առաջին իսկ գիշերը մեքենաների լուսարձակների լույսի տակ կատարում էին անհետաձգելի վիրահատություններ: Բժիշկներ ու փրկարարներ էին ժամանում ԽՍՀՄ զանազան քաղաքներից և արտասահմանից: Անգնահատելի էր ռազմական բժիշկների կատարած գործը: Երկրաշարժի առաջին օրը նրանք որակյալ բժշկական օգնություն ցույց տվեցին 1200 տուժածի, որոնցից 600-ը տեղափոխվեց այլ վայրերի հիվանդանոցներ: Երկրորդ օրը ռազմական բժիշկներն օգնեցին 500 մարդու, ընդհանուր առմամբ նրանց դիմեցին 6 հազար տուժածներ:

Համամիութենական մակարդակով օգնության աշխատանքները համակարգելու համար ստեղծվեց հանձնաժողով՝ ԽՍՀՄ նախարարների խորհրդի նախագահ ***Նիկոլայ Ռիժկովի*** գլխավորությամբ: Դեկտեմբերի 8-ին հանձնաժողովի անդամները ժամանեցին Հայաստան և անհապաղ անցան աղետի գոտում աշխատանք-

1988 թ. դեկտեմբերի 7, Լենինական

ների իրականացմանը: Հայ ժողովուրդն ըստ արժանվույն գնահատեց Ն. Ռիժկովի գլխավորած հանձնաժողովի՝ որպես ղեկավար կենտրոնի դերն ու նշանակությունը:

Մեծ աշխատանք տարվեց աղետի գոտուց մարդկանց տարհանելու ուղղությամբ: 110 հազար մարդ՝ երեխաներ, կանայք, ծերեր, տեղափոխվեցին Խորհրդային Միության տարբեր առողջարաններ ու պանսիոնատներ:

ԽՍՀՄ-ը Հայաստանին հատկացրեց մեծ քանակությամբ տեխնիկական միջոցներ՝ փրկարարական աշխատանքներ իրականացնելու համար: Տուժածներին օգնելու նպատակով ուղարկված բեռներով Հայաստանում վայրէջք կատարեց 1000 ինքնաթիռ, ժամանեցին 31 հազար երկաթուղային վագոն, 8 հազար բեռնատար ավտոմեքենա:

Նյութական և տեխնիկական օգնություն ցուցաբերեցին արտասահմանյան 110 պետություն, բազմաթիվ միջազգային կազմակերպություններ: Օգնությունը Հայաստան էին հասցնում տրանսպորտային բոլոր ուղինե-

Նիկոլայ Ռիժկովը ՀԿԿ կենտկոմի առաջին քարտուղար Սուրեն Հարությունյանի հետ Սպիտակում, 1988 թ.

րով: Բժիշկներ և փրկարարներ ժամանեցին Շվեյցարիայից, Անգլիայից, Իսրայելից, Գերմանիայից, ԱՄՆ–ից և այլ պետություններից: Հայաստան էր ուղարկվում շինարարական տեխնիկա, դեղորայք, դոնորական արյուն: Հեռավոր Կուբայից ուղարկված դոնորական արյան խմբաքանակի մեջ էր նաև երկրի ղեկավար Ֆիդել Կաստրոյի արյունը: Ամբողջ աշխարհն էր կանգնել աղետյալ Հայաստանի կողքին:

Այդ ծանր օրերին Հայաստանում առանձնակի երախտագիտությամբ ընդունեցին աշխարհի տարբեր անկյուններում ապրող հայրենակիցների աջակցությունը: Ողբերգությունը համախմբել էր ամբողջ աշխարհի հայությանը: Հայտնի երգիչ Շառլ Ազնավուրը հիմնեց «Ազնավուրը՝ Հայաստանին» բարեգործական կազմակերպությունը, որը մեծ աշխատանք կատարեց Հայաստանին նյութապես և բարոյապես աջակցելու համար: Ամբողջ աշխարհում թևածում էր Ֆրանսիայում կայացած բարեգործական համերգի ժամանակ Ազնավուրի կատարած «Քեզ համար, Հայաստա՛ն» երգը:

Հայաստանում բարեգործական լայն գործունեություն ծավալեց աշխարհահռչակ ***Մայր Թերեզան***: Աղետի գոտի ժամանեցին այնպիսի հայտնի հասարակական–քաղաքական գործիչներ, ինչպիսիք են Մեծ Բրիտանիայի վարչապետ Մարգարետ Թեթչերը, ԱՄՆ կոնգրեսականներ Դոուլը, Ջեսի Ջեքսոնը, ԱՄՆ–ի նախագահ Ջորջ Բուշի որդին և թոռը, Ֆրանսիայի նախագահ Միտերանի տիկինը և շատ ուրիշներ: Աղետի գոտի ժամանեց և մեծ օգնություն ցուցաբերեց Իտալիայի վարչապետի տիկինը՝ Մարի Ֆանֆանին: Նրա աջակցությամբ Սպիտակում հիմնադրվեց «Իտալական ավանը»:

Միութենական կառավարության հատուկ որոշմամբ երկրաշարժից տուժած շրջանների տնտեսության վերականգնման համար սահմանվեց անհրաժեշտ ժամկետ՝ երկու տարի: 1989 թ. ամռանը շինարարական աշխատանքներին մասնակցում էր ավելի քան 150 հազար մարդ: Ավերված բնակավայրերը սկսեցին վերականգնվել:

ԽՍՀՄ–ի փլուզման հետևանքով միութենական ուժերով կատարվող վերականգնողական աշխատանքները դադարեցին: Հայաստանում իրադրությունը վատացավ պատերազմական իրավիճակի և Ադրբեջանի ու Թուրքիայի կողմից կազմակերպված շրջափակման հետևանքով:

Անկախության տարիներին Հայաստանի Հանրապետության կառավարությունը ձեռնարկեց միջոցառումներ, որոնք հնարավորություն տվեցին լուծելու շատ հարցեր՝ կապված բնակարանների, դպրոցների, հիվանդանոցների և այլ սոցիալական ենթակառուցվածքների վերականգնման հետ: 1998–2008 թթ. Շիրակի մարզում բնակարանով ապահովվեց մոտ 20 հազար, Լոռու մարզում՝ 15 հազար ընտանիք: Հասարակական կազմակերպությունների իրականացրած ծրագրերի շրջանակներում բնակարան ստացավ շուրջ վեց հազար ընտանիք:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ե՞րբ է տեղի ունեցել Սպիտակի երկրաշարժը: Թվերով ցո՛ւյց տվեք երկրաշարժի պատճառած մարդկային և նյութական կորուստները:
2. ԽՍՀՄ–ը, արտասահմանյան երկրները, սփյուռքահայությունը և անհատ մարդիկ ի՞նչ օգնություն ցուցաբերեցին Հայաստանին և երկրաշարժից տուժածներին: Ինչո՞ւ այդ օժանդակությունը 1990–ական թվականների սկզբին կրճատվեց կամ դադարեցվեց:
3. Պատրաստե՛ք ելույթ աղետի գոտում որևէ անհատ գործչի, հասարակական կազմակերպության կամ երկրի մարդասիրական գործունեության վերաբերյալ և ներկայացրե՛ք դասարանին:

§ 4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽԱՅՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Շրջադարձային փոփոխություններ հանրապետության քաղաքական կյանքում: 1990 թ. գարնանը Հայաստանում նախապատրաստվում էին ՀԽՍՀ Գերագույն խորհրդի ընտրություններին: Հայկոմկուսը, ՀՀՇ–ն և մյուս քաղաքական ուժերն առաջադրել էին իրենց թեկնածուներին: Ընտրատարածքներ էին ստեղծվել նաև ԼՂԻՄ–ում:

Քաղաքական ընդհանուր վիճակը հանրապետությունում մնում էր լարված: Կոմկուսն իրեն սպառել և զրկվել էր հիմնական հենարանից՝ ժողովրդի վստահությունից: Գաղափարական պայքարում ՀՀՇ–ին հեղինակություն և համակրանք էին բերում անկախության և Արցախի ազատագրության գաղափարները:

1990 թ. ապրիլի 6–ին Հայկոմկուսի կենտկոմի պլենումը առաջին քարտուղար ընտրեց Վլադիմիր Մովսիսյանին:

1990 թ. մայիսի 20–ին տեղի ունեցան ՀԽՍՀ Գերագույն խորհրդի ընտրությունները, որոնք խորհրդային Հայաստանի պատմության մեջ առաջին ժողովրդավարական և այլընտրանքային ընտրություններն էին: Ընտրողների ձայները համարյա հավասարապես բաժանվեցին Հայկոմկուսի և ՀՀՇ–ի թեկնածուների միջև:

Հայաստանի անկախության մասին հռչակագիրը: Նորընտիր Գերագույն խորհրդի նստաշրջանը սկսվեց հուլիսի 20-ին: Օգոստոսի 4-ին ՀՀՇ վարչության նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանն ընտրվեց Հայաստանի Գերագույն խորհրդի նախագահ, մի քանի օր անց նախարարների խորհրդի նախագահ նշանակվեց Վազգեն Մանուկյանը: Վերջ դրվեց կոմունիստական կուսակցության մենիշխանության մոտ յոթանասունամյա շրջանին:

1990 թ. օգոստոսի 23-ին ԳԽ-ն քննարկումից հետո ընդունեց ***«Հռչակագիր Հայաստանի անկախության մասին»*** փաստաթուղթը, որով հռչակվում էր անկախ պետականության հաստատման գործընթացի սկիզբը: 12 հոդվածից բաղկացած այդ հիմնարար փաստաթուղթը նախանշում էր Հայաստանի քաղաքական, տնտեսական, մշակութային զարգացման ուղիները:

Փաստաթղթի քաղաքական բաժնում նշվում էր, որ ***ՀԽՍՀ-ն վերանվանվում է Հայաստանի Հանրապետություն:*** Հայաստանի պատմության մեջ սկսվում էր երրորդ հանրապետության շրջանը:

Հռչակագրում հատուկ հոդվածով ընդունվում էր հանրապետության օրենքների գերակայությունը ԽՍՀՄ օրենքների նկատմամբ: Եթե ԽՍՀՄ օրենքը հաստատված չէր ՀՀ Գերագույն խորհրդի կողմից, հանրապետությունում չէր գործելու:

Հայաստանը պետք է վարեր ակտիվ արտաքին քաղաքականություն, ունենար իր դիվանագիտական ներկայացուցչությունները տարբեր երկրներում:

Հռչակագրի տնտեսական բաժնում նշվում էր, որ Հայաստանի տարածքում հողը, ընդերքը, ձեռնարկությունները համարվում են բացառապես հայ ժողովրդի սեփականությունը: Երկրի տնտեսության հիմքում պետք է ընկած լինեն մասնավոր սեփականատիրական և ազատ շուկայական հարաբերությունները: Հողն իբրև մասնավոր սեփականություն պետք է տրվի գյուղացուն: Ձեռնարկությունների մի մասը ենթակա է սեփականաշնորհման:

Հատուկ կետով արձանագրվում էր, որ Հայաստանը պետք է ունենա իր մասնաբաժինը ԽՍՀՄ զինված ուժերի սպառազինությունից, պիտի հասնի սեփական դրամական միջոցների ստեղծմանը:

Հռչակագրի մշակութային բաժնում հատուկ ուշադրություն էր հատկացվում հայերենի՝ իբրև պետական լեզվի կիրառման հիմնահարցին: Հանրապետությունում ամբողջ գործավարությունը կատարվելու էր միայն հայերենով:

Հռչակագիրն արտոնում էր մարդու իրավունքների պաշտպանություն, խղճի, կուսակցությունների, ժողովների, խոսքի ազատություն: Վերականգնվում էին Հայ առաքելական եկեղեցու ոտնահարված իրավունքները:

Առանձին հոդված կար ***1915 թ. Հայոց ցեղասպանության և հայկական տարածքների մասին:*** Հռչակագիրը հաստատում էր նաև ՀՀ վճռա-

կանությունն Արցախն իր տարածքի անբաժանելի մասը ճանաչելու վերաբերյալ:

Մինչև նոր Սահմանադրության՝ երկրի հիմնական օրենքի ընդունումը Հռչակագիրը ծառայում էր որպես պետության իրավական կարգավիճակը որոշող փաստաթուղթ:

ԽՍՀՄ-ի պահպանման փորձերը: 1991 թ. գարնանը ԽՍՀՄ-ը գտնվում էր փլուզման եզրին: Երկրի ղեկավարությունը ջանքեր էր գործադրում Միությունը փրկելու համար: Այդ նպատակով որոշվեց մարտի 17-ին հանրաքվե անցկացնել բարեփոխված ԽՍՀՄ-ի պահպանման վերաբերյալ: Հանրաքվեն անտեսվեց մերձբալթյան երկրների՝ Լիտվայի, Լատվիայի և Էստոնիայի, ինչպես նաև Վրաստանի, Մոլդավիայի և Հայաստանի կողմից: Մնացած խորհրդային հանրապետություններում բնակչության մեծամասնությունը կողմ քվեարկեց ԽՍՀՄ-ի պահպանմանը:

Մ. Գորբաչովը 1991 թ. ապրիլին բանակցային գործընթաց սկսեց խորհրդային Ինքնիշխան Հանրապետությունների Միություն ստեղծելու մասին պայմանագիր մշակելու համար: Պայմանագրի հանդիսավոր ստորագրումը նշանակվեց օգոստոսի 20-ին:

1991 թ. օգոստոսյան խռովությունը: Գորբաչովի արձակուրդ մեկնելուց հետո երկրի պահպանողական ղեկավարները ձեռնամուխ եղան հեղաշրջում նախապատրաստելուն՝ ուղղված բարեփոխումների կասեցմանը, ԽՄԿԿ լիակատար իշխանության վերականգնմանը, սեփական իշխանության պահպանմանը:

Օգոստոսի 18-ին հեղաշրջման կազմակերպիչները Ղրիմում հանդիպեցին Գորբաչովին, որը տատանողական կեցվածք ընդունեց: ***Օգոստոսի 19-ի*** առավոտյան հայտարարվեց, թե Մ. Գորբաչովը վատառողջության պատճառով չի կարող կատարել երկրի նախագահի պարտականությունները, և դրանք անցնում են փոխնախագահ Գ. Յանաևին: Երկրի կառավարման համար ստեղծվեց ***Արտակարգ դրության պետական կոմիտե (ԱԴՊԿ)***: Օգոստոսի 19-ի առավոտյան զորքը մտավ Մոսկվա:

Ռուսաստանի նախագահ ***Բորիս Ելցինը*** երկրի քաղաքացիներին ուղղված դիմումի մեջ կատարվածը համարեց «հակասահմանադրական հեղաշրջում»: Օգոստոսի 21-ին խռովարարները ձերբակալվեցին:

Մ. Գորբաչովը Ղրիմից վերադարձավ Մոսկվա:

Խռովությունը սկսվեց որպես ԽՍՀՄ-ի, ԽՄԿԿ-ի, հին պետական-կուսակցական վերնախավի իշխանությունը պահպանելու համար կազմակերպված հեղաշրջում, սակայն հետո վերածվեց հակակոմունիստական ***«թավշյա հեղափոխության»***: Այն կործանեց միութենական պետական համակարգը, ԽՄԿԿ-ի իշխանությունը և խորհրդային հանրապետությունների «անխախտ ու հավերժ միությունը»: Խռովությունը արագացրեց ԽՍՀՄ-ի փլուզումը:

ԽՍՀՄ-ի փլուզումը, ԱՊՀ-ի ստեղծումը: Մինչև նոյեմբերի կե-

սերը նոր ինքնիշխան պետությունների ղեկավարները քննարկում էին միութենական պայմանագրի տարբերակները: Բանակցությունների մասնակիցների կողմից ինքնիշխան պետությունների միությունը դիտվում էր որպես համադաշնություն: Պայմանագրի նախագծի վերջնական տարբերակում նոր միությունը բնութագրվում էր որպես «համադաշնային ժողովրդական պետություն»:

1991 թ. դեկտեմբերի 8-ին Ռուսաստանի նախագահ Բորիս Ելցինը, Ուկրաինայի նախագահ Լեոնիդ Կրավչուկը և Բելոռուսիայի Գերագույն խորհրդի նախագահ Ստանիսլավ Շուշկևիչը, տեղյակ չպահելով Մ. Գորբաչովին, հավաքվեցին Բելոռուսիայի ***Բելովեժյան արգելանոց-անտառում***, հայտարարեցին ԽՍՀՄ-ի վերացման և ***Անկախ Պետությունների Համագործակցության (ԱՊՀ)*** ստեղծման մասին:

Հայտարարության մեջ նշվում էր, որ Համագործակցությունը բաց է այն պետությունների համար, որոնք ցանկանում են նրան միանալ: Համաձայնագրի դեմ կտրուկ հանդես եկավ միայն Միխայիլ Գորբաչովը: Սակայն նրա կարծիքը չպաշտպանեց ոչ մի հանրապետություն: Ընդհակառակը՝ նրանք, բացառությամբ մերձբալթյան հանրապետությունների և Վրաստանի, մի քանի օրվա ընթացքում ԱՊՀ-ին միանալու ցանկություն հայտնեցին: ***Դեկտեմբերի 21-ին Ալմա Աթայում*** նախկին խորհրդային հանրապետությունները, այժմ՝ անկախ պետությունները, հայտարարեցին Համագործակցություն ստեղծելու մասին, որը խորհրդակցական-համաձայնեցման գործառույթներ պիտի ունենար և օժտված չէր լինելու օրենսդրական, գործադիր ու դատական լիազորություններով:

Այսպիսով՝ ԽՍՀՄ-ի կազմավորման 69-ամյակի նախօրյակին առանց որևէ բռնության բոլշևիկների ստեղծած խորհրդային տերությունը փլուզվեց: Միխայիլ Գորբաչովը 1991 թ. դեկտեմբերի 25-ին հրապարակած դիմումում հայտարարեց ԽՍՀՄ-ի նախագահի լիազորությունները կամավոր վայր դնելու մասին: Այսպես ԽՍՀՄ-ը դադարեց գոյություն ունենալուց:

Հարցեր և առաջադրանքներ

1. 1990 թ. գարնան դրությամբ Հայկոմկուսը հեղինակազրկվել էր, իսկ ՀՀՇ-ն մեծ ազդեցություն էր ձեռք բերել Հայաստանի ներքաղաքական կյանքում. որո՞նք էին դրա պատճառները:
2. Ի՞նչ արդյունքներ արձանագրեցին առաջին ժողովրդավարական և այլընտրանքային ընտրությունները Հայաստանում: Ո՞վ ընտրվեց Հայաստանի ԳԽ նախագահ:

3. Վերհանեք «Հռչակագիր Հայաստանի անկախության մասին» փաստաթղթի առանցքային դրույթները: Ցո՛ւյց տվեք Հռչակագրի պատմական նշանակությունը:
4. Խորհրդային տերությունը փրկելու ի՞նչ քայլեր ձեռնարկեց ԽՍՀՄ ղեկավարությունը 1991 թ. առաջին կեսին: Ներկայացրեք օգոստոսյան խռովության հետևանքները: Ձեր կարծիքով պահպանողական ուժերն ինչո՞ւ պարտվեցին: Վերհանեք ԽՍՀՄ-ի փլուզման գլխավոր պատճառները: Ե՞րբ և ինչպե՞ս ստեղծվեց ԱՊՀ-ն:

ԲԱԺԻՆ 3

ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԴԻ ՓՈՒԼՈՒՄ

ԳԼՈՒԽ 1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

§ 1. ԱՆԿԱԽ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Հայաստանի Հանրապետության անկախության հռչակումը: Հայոց խորհրդարանը 1991 թ. մարտի 1-ին որոշեց ***1991 թ. սեպտեմբերի 21-ին*** հանրապետությունում անցկացնել հանրաքվե՝ հիմք ընդունելով Հայաստանի անկախության մասին հռչակագրի դրույթներն ու նպատակները: Քվեարկության դրվեց հետևյալ հարցը. «Համաձայն եք, որ Հայաստանի Հանրապետությունը լինի անկախ ժողովրդավարական պետություն ԽՍՀՄ-ի կազմից դուրս»: Հանրապետության բնակչության ձնշող մեծամասնությունը՝ 2 մլն 43 հազար մարդ (քվեարկության իրավունք ունեցողների 94,39 տոկոսը), կողմ քվեարկեց: Հանրաքվեի արդյունքների հիման վրա ***1991 թ. սեպտեմբերի 23-ին*** հանրապետության ***Գերագույն խորհուրդը Հայաստանը հռչակեց անկախ պետություն:***

1991 թ. հոկտեմբերի 16-ին Հայաստանում առաջին անգամ անցկացվեցին նախագահական համաժողովրդական, ուղղակի, այլընտրանքային ընտրություններ: Առաջադրվել էին վեց թեկնածուներ: Արդյունքում՝ ձայների ձնշող մեծամասնությամբ (83 տոկոս) հանրապետության նախագահ ընտրվեց ՀՀ Գերագույն խորհրդի նախագահ ***Լևոն Տեր-Պետրոսյանը***, իսկ փոխնախագահ՝ ՀՀ Գերագույն խորհրդի նախագահի տեղակալ ***Գագիկ Հարությունյանը:***

Այսպիսով՝ 1988 թվականի փետրվարյան ազգային ժողովրդավարական շարժումով ոտքի կանգնած հայ ժողովուրդը ավելի քան 70-ամյա ընդմիջումից հետո կրկին վերականգնեց Հայաստանի անկախ պետականությունը:

Անկախության հռչակումից կարճ ժամանակ անց ՀՀ-ն ստացավ համընդհանուր միջազգային ճանաչում: Սկսվեց հայոց անկախ հանրապետության պետական շինարարությունը:

Անկախության հռչակագրի ընդունումից մեկ տարի հետո քաղաքական, պետաիրավական և վարչական ոլորտների վերափոխումների շնորհիվ ստեղծվել էին հայոց անկախ պետականության կայացման բոլոր նախադրյալները:

ՀՀ Սահմանադրության ընդունումը: Գործող՝ 1978 թ. Սահմանադրությունը հակասում էր Անկախության հռչակագրի սկզբունքներին: ՀՀ խորհրդարանը ստիպված էր անընդհատ սահմանադրական փոփոխություններ ու շտկումներ կատարել:



1991 թ. սեպտեմբերի 23-ին տոնում են անկախության հռչակումը

1990 թ. դեկտեմբերին ընդունված առաջին սահմանադրական օրենքով մինչև նոր Սահմանադրության ընդունումը դադարեցվել էր այն դրույթների գործողությունը, որոնք հակասում էին Հռչակագրի հիման վրա ընդունված օրենքներին: 1990 թ. նոյեմբերի 15-ին ստեղծվել էր ՀՀ Գերագույն խորհրդի սահմանադրական հանձնաժողովը, որը զբաղվում էր նոր Սահմանադրության նախագծի մշակմամբ:

Գերագույն խորհրդի հավանությանն արժանանալուց հետո Սահմանադրությունը դրվեց հանրաքվեի՝ ***1995 թ. հուլիսի 5-ի*** խորհրդարանական ընտրությունների հետ միաժամանակ: Նոր Սահմանադրությունը կարևոր առաջադիմական երևույթ էր: Այն դրեց ամբողջատիրական և ավտորիտար համակարգից դեպի ժողովրդավարական պետություն անցնելու իրավական հիմքը:

ՀՀ Սահմանադրությունն իրավական ձևակերպում տվեց քաղաքական նոր համակարգին, սահմանեց Հայաստանի Հանրապետության քաղաքացիների իրավունքներն ու պարտականությունները: Ըստ Սահմանադրության՝ Հայաստանի Հանրապետությունը ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական և իրավական պետություն է: Սահմանադրությամբ հռչակվում էր, որ պետությունը երաշխավորում է սեփականության բոլոր ձևերի ազատ զարգացումը, հավասար իրավական պաշտպանվածությունը, տնտեսական գործունեության ազատությունը:

ՀՀ Սահմանադրությամբ հաստատվեցին Հայաստանի երրորդ հանրապետության խորհրդանիշները՝ դրոշը, զինանշանը և օրհներգը: Դեռևս 1990 թ. օգոստոսի 24-ից հանրապետության պետական դրոշ էր

ճանաչվել եռագույնը՝ Առաջին հանրապետության դրոշը:

Սահմանադրությամբ հռչակվեցին կառավարմանը ժողովրդի մասնակցության սկզբունքները և ժողովրդավարական ազատությունները:

Պետության ղեկավարը հանրապետության *նախագահն* է, ընտրվում է հինգ տարի ժամկետով, ոչ ավելի, քան երկու անգամ անընդմեջ: Նախագահն ուներ լայն լիազորություններ, օրինակ՝ նշանակում էր և ազատում վարչապետին և վերջինիս առաջարկությամբ՝ կառավարության մյուս անդամներին, վավերացնում կառավարության որոշումները, կարող էր լուծարել Ազգային ժողովը, գլխավորում էր Արդարադատության խորհուրդը, նշանակում և ազատում էր գլխավոր դատախազին: Բարձրագույն օրենսդիր մարմինը՝ Գերագույն խորհուրդը, վերանվանվեց *Ազգային ժողով*:

1995 թ. դեկտեմբերին կատարվեցին վարչատարածքային փոփոխություններ: Հանրապետության շուրջ չորս տասնյակի հասնող շրջանների միավորման միջոցով ստեղծվեցին *10 մարզեր*՝ Արագածոտնի, Շիրակի, Սյունիքի, Գեղարքունիքի, Լոռու, Կոտայքի, Արարատի, Արմավիրի, Վայոց ձորի, Տավուշի: Քաղաքամայր Երևանը ստացավ հատուկ կարգավիճակ:

Հիմք դրվեց դատական նոր համակարգին, որի ձևավորումը հիմնականում ավարտվեց 1999 թվականին: Հունիսի 12-ին ներդրվեց եռաստիճան դատական համակարգը, սկսեց գործել վերաքննության ինստիտուտը, որը չէր եղել խորհրդային ժամանակաշրջանում: Նոր դատական համակարգում սկսեցին գործել առաջին ատյանի, վերաքննիչ, վճռաբեկ, ինչպես նաև սահմանադրական, տնտեսական, վարչական դատարանները:

Հետագայում հանրապետության քաղաքական և սոցիալ-տնտեսական կյանքի զարգացումներն առաջացրին Սահմանադրության մեջ բարեփոխումներ կատարելու անհրաժեշտություն: ՀՀ սահմանադրական փոփոխությունների առաջին տարբերակը հաստատվեց *2005 թ. նոյեմբերի 27-ին* կայացած համաժողովրդական հանրաքվեով:

Սահմանադրական փոփոխություններով վերանայվեց ՀՀ նախագահի գերիշխող դիրքը իշխանության ճյուղերի նկատմամբ, բարձրացվեց խորհրդարանի դերը իշխանության մարմինների համակարգում:

«Քաղաքացիության մասին» ՀՀ օրենքում ամրագրվեց երկքաղաքացիության վերաբերյալ դրույթը, որը հնարավորություն է տալիս երկրի կյանքին ներգրավելու սփյուռքահայությանը:

Սահմանադրական փոփոխությունների դրական քայլերից էր նաև Ազգային ժողովի և տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների ժամկետի երկարացումը մեկական տարով (դարձավ 5 և 4 տարի):

2005 թ. սահմանադրական բարեփոխումներով կրճատվեցին հանրապետության նախագահի լիազորությունները, և ավելի շատ իշխանություն վերապահվեց Ազգային ժողովին:

Սահմանադրությունը պահպանեց կիսանախագահական կառավարման համակարգը:

Հաշվի առնելով կառավարման այդ համակարգի վտանգները, մարդու իրավունքների անկատարությունը, դատական իշխանության անկախության պակասը՝ որոշվեց իրականացնել սահմանադրական բարեփոխումներ՝ կիսանախագահական կառավարման համակարգից անցում կատարելով կառավարման խորհրդարանական համակարգին:

Սահմանադրության երկրորդ փոփոխությունները հաստատվեցին 2015 թ. դեկտեմբերի 6-ի սահմանադրական համաժողովրդական հանրաքվեով:

Նորացված Սահմանադրությամբ գործադիր իշխանությունն ամբողջությամբ պատկանում է կառավարությանը, որտեղ վարչապետն ունի բավականին ուժեղ դիրք: Գործադիր իշխանությունը մշտապես խորհրդարանական վերահսկողության ներքո է և պատասխանատու է միայն խորհրդարանի առջև: Խորհրդարանական ընդդիմության իրավունքների ընդլայնումը դրսևորվում է խորհրդարանական վերահսկողությանը նրա մասնակցությամբ: Բոլոր հաջողությունների և առանձնապես անհաջողությունների, ձախողումների պատասխանատվությունն առաջին հերթին կրում է կառավարությունը և իշխող կուսակցությունը: Վարչապետին անվստահություն կարելի է հայտնել նրա նշանակումից ոչ շուտ, քան 1 տարի անց, նոր վարչապետ ընտրելու միջոցով: Այսպիսով՝ կառավարման կիսանախագահական ձևը փոխարինվում է խորհրդարանականով:

Հայոց ազգային բանակի կազմավորումը: ՀՀ անկախության գործընթացի սկսվելու պահից առաջնահերթ նշանակություն ստացավ պետության անվտանգության և անկախության պահպանման հարցը, որի երաշխիքը կարող էր լինել մարտունակ բանակը:

Անկախության հռչակագիրը իրավական ու գործնական հեռանկարներ բացեց ազգային բանակի ստեղծման համար: 1990 թ. սեպտեմբերին Հայաստանի Գերագույն խորհրդի որոշմամբ հանրապետության ՆԳՄ (ՆԳՆ) կառույցում ստեղծվեց ***Հատուկ գունդ,*** որը տարբեր շրջաններում ուներ 26 վաշտ: 1991 թ. ապրիլին հանրապետության նախարարների խորհուրդը հաստատեց «ՀՀ երկրապահ զինապարտի ժամանակավոր կանոնակարգը»: Այն տարածվում էր մինչև 50 տարեկան այն քաղաքացիների վրա, ովքեր ցանկանում էին կամավոր սկզբունքով մասնակցել հանրապետության պաշտպանության գործին: Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ ստեղծվեց ***պաշտպանության պետական կոմիտե (ՊՊԿ),*** որի հիմքի վրա հետագայում ձևավորվեց պաշտպանության նախարարությունը:

1991 թ. դեկտեմբերի 5-ին պաշտպանության առաջին նախարար նշանակվեց ***Վազգեն Սարգսյանը: 1992 թ. հունվարի 28-ին*** կառավարությունն ընդունեց «ՀՀ պաշտպանության նա-

Հայկական բանակի զինվորները զորավարժությունների ժամանակ

խարարության մասին» պատմական որոշումը: Հենց այս փաստաթուղթն էլ իրավական տեսակետից ազդարարեց ազգային բանակի ձևավորման սկիզբը: Հայոց բանակի ակունքներում կանգնած էին Հատուկ գունդը և մի շարք ինքնապաշտպանական վաշտեր:

1992 թ. մայիսին պաշտպանության նախարարությունը «Զինապարտության մասին» օրենքով հիմք դրեց բանակը ժամկետային զինծառայողներով համալրելու կայուն ավանդույթին: Նոր կազմավորված զորամասերի անձնակազմը 1992 թ. մայիսի 28–ին Հանրապետության հրապարակում հանդիսավոր պայմաններում տվեց առաջին զինվորական երդումը:

Արձագանքելով պաշտպանության նախարարության կոչին՝ Հայաստան վերադարձան հարյուրավոր հայազգի սպաներ, որոնք մինչ այդ ծառայում էին ԽՍՀՄ զորամիավորումներում: Նրանք լծվեցին բանակաշինության, հայրենիքի անվտանգության ապահովման գործին: Նրանց թվում էին գեներալներ ***Գ. Դալիբալթայանը, Մ. Հարությունյանը, Ն. Տեր–Գրիգորյանցը, Յ. Խաչատուրովը, Ա. Տեր–Թադևոսյանը (Կոմանդոս)*** և շատ ուրիշներ:

Կազմակերպական հետևողական աշխատանքների շնորհիվ հայոց նորաստեղծ բանակը, 1992 թ–ից Ղարաբաղում մասնակցելով պատերազմական լայնածավալ գործողություններին, կամավորական ջոկատների հետ կռեց առաջին ռազմական հաղթանակները: Դրանք շարունակվեցին նաև հաջորդ տարիներին՝ պատերազմը հասցնելով հաղթական ավարտին:

Ստեղծվեցին սպայական կադրերի պատրաստման բարձրագույն դպրոցներ: Հայոց ազգային բանակի ստեղծման գործում մեծ է պաշտպանության նախարարներ ***Վազգեն Մանուկյանի, Վազգեն Սարգսյանի*** և ***Սերժ Սարգսյանի*** դերը:

Հայոց բանակն աստիճանաբար զինվեց ժամանակակից ռազմական տեխնիկայով և ամուր պատվար դարձավ անկախության պաշտպանության գործում:

Քառօրյա պատերազմը: Շուրջ 22 տարի ադրբեջանական կողմը մշտապես խախտում էր 1994 թ. զինադադարը՝ պարբերաբար ռմբակոծելով ղարաբաղա–ադրբեջանական սահմանային հայկական դիրքերն ու ՀՀ սահմանամերձ գյուղերը:

Այս ամենին հայկական կողմը հաճախ պատասխանում էր պատժիչ գործողություններով: 2016 թ. ապրիլի 1–ի լույս 2–ի գիշերը՝ ժամը 3–ի սահմաններում, ադրբեջանական կողմը

Զորահանդես Հանրապետության հրապարակում

դիմեց աննախադեպ լայնամասշտաբ հարձակման Լեռնային Ղարաբաղի դեմ շփման գծի ողջ երկայնքով՝ կիրառելով սպառազինությունների ողջ համալիրը, այդ թվում՝ զրահատեխնիկա, ծանր հրետանի և օդուժ: Գործողությունների առաջին իսկ ժամերից հակառակորդի թիրախ դարձան նաև խաղաղ բնակավայրերն ու քաղաքացիական անձինք, այդ թվում՝ դպրոցական երեխաները: Թշնամու գազանաբարո վայրագության դրսևորումները՝ անդամահատումը, գլխատումը և այլն, հուշում են, որ նա դարձյալ հույսը դրել էր ահաբեկչության վրա: Հայկական կողմը իր հայրենիքը պաշտպանելու վճռականությամբ ու բարոյամարտական բարձր ոգով լուրջ հակահարված հասցրեց ադրբեջանական ուժերին:

Զավթիչ Ադրբեջանի ռազմաքաղաքական ղեկավարությունը հույսը դրել էր արդիական սպառազինության և տեխնիկայի կիրառման վրա, որը ձեռք էր բերել հիմնականում Ռուսաստանի Դաշնությունից, Ուկրաինայից, Իսրայելից:

Ծավալված մարտական գործողությունները առավել թեժ էին ռազմաճակատի վերածված առաջնագծի հյուսիսարևելյան (Թալիշ—Մատաղիս—Մարտակերտ) և հարավային (Հադրութ) ուղղություններում: Ապրիլի 4-ին թշնամին սկսեց կիրառել ծանր հրետանային համակարգեր, ընդլայնել հարվածային անօդաչու թռչող սարքերի և այլ զերժամանակակից տեխնիկայի օգտագործումը:

Ադրբեջանի հանկարծակի, կայծակնային հարձակումը՝ «բլիցկրիգը», տապալվեց՝ և թուրք-ադրբեջանական տանդեմը խայտառակ կրախի մատնվեց: ՀՀ նախագահ, ԶՈՒ գերագույն գլխավոր հրամանատար Ս. Սարգսյանը ապրիլի 4-ին՝ ԵԱՀԿ անդամ պետությունների դեսպանների հետ կայացած հանդիպման ժամանակ՝ հստակորեն բացահայտեց

Թուրքիայի խիստ բացասական դերը Ադրբեջանի սանձազերծած պատերազմում:

Հայրենիքի մերօրյա հերոս պաշտպանները՝ քաջարի դիրքապահները, ինչպես միշտ, իրենց սպաների հրամանատարությամբ սառնասրտորեն դիմակայեցին հակառակորդի մինչև ատամները զինված հատուկ ջոկատայիններին և կանոնավոր զորամասերին:

Ծավալվեցին արյունահեղ մարտեր ամեն մի թիզ հողի համար: Թշնամին, հույսը դնելով հատկապես Թուրքիայում հատուկ պատրաստություն անցած հարյուրավոր գրոհայինների վրա, անակնկալի եկավ՝ հանդիպելով 18–20 տարեկան հայ զինվորների համառ դիմադրությանը: Հայ զինծառայողները ցուցաբերեցին հերոսության անկրկնելի օրինակներ:

Մինչ ռազմաճակատի ողջ երկայնքով մարտական գործողությունները շարունակվում էին, մեր հայրենիքի տարբեր շրջաններից հազարավոր կամավորներ և ազատամարտիկներ շտապում էին առաջնագիծ՝ անվարան կանգնելու իրենց կրտսեր ընկերների և որդիների կողքին:

Ապրիլի 3–ին հակառակորդի գերազանցող ուժերի առաջին հարվածն իրենց վրա վերցրին հյուսիսարևելյան ուղղության հրաձգային վաշտերից մեկի քաջարի մարտիկները՝ աննկուն հրամանատար Արմենակ Ուրֆանյանի գլխավորությամբ: Կատաղի մարտերի ընթացքում կապիտան Ա. Ուրֆանյանը նռնականետի դիպուկ կրակոցով շարքից հանեց հակառակորդի մեկ տանկ, ոչնչացրեց մեկ տասնյակից ավելի զինյալների: Կրակով ապահովելով իր զինվորների տեղաշարժը՝ կապիտան Ուրֆանյանը մինչև վերջին փամփուշտը կռվեց, ապա գերեվարումից խուսափելու համար նռնակը պայթեցրեց՝ ընկնելով հերոսի մահով, իր հետ ոչնչացնելով մոտեցող հակառակորդի զինվորներին: Սիրված հրամանատարի կողքին էր ազգությամբ եզդի, 20–ամյա շարքային զինվոր Քյարամ Սլոյանը, որը, չենթարկվելով նահանջի հրամանին, մինչև վերջ մնաց իր հրամանատարի կողքին, կռվեց ոսոխի դեմ և հերոսաբար զոհվեց:

Իր անձնուրաց հերոսությամբ աչքի ընկավ նաև 19–ամյա Ռոբերտ Աբաջյանը: Նա հակառակորդի հետ կռիվ տվեց մինչև վերջին փամփուշտը, չհանձնվեց ու չնահանջեց, իսկ վերջում իր մոտ եղած միակ նռնակով պայթեցրեց իրեն և հակառակորդի մոտ տասնյակ զինվորների: Անձնազոհ հայորդին հետմահու արժանացավ «Արցախի հերոս» ԼՂՀ բարձրագույն կոչմանը:

Հերոսի մահով զոհվեց հետախույզ–գնդացրորդ Սասուն Մկրտչյանը, որի հուղարկավորության ժամանակ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը «Եռաբլուր» զինվորական պանթեոնում շեշտեց. «Մեր հոգիները ցավում են ամեն մի անմահացման դեպքում, բայց մեր սրտերը գոտեպնդվում են մեր հերոսների վարքով, մեզ հաղորդում վճռականություն ու հաստատականություն»: Քառօրյա մարտերում հակառակոր-

դը հուժկու հակահարված ստացավ և խնդրեց նոր զինադադար. ապրիլի 5-ին՝ ժամը 12:00-ին, հաստատվեց հրադադար դարաբաղա-ադրբեջանական շփման գծի ողջ երկայնքով:

Ապրիլի 2-5-ն ընկած ժամանակահատվածում հայրենիքի սահմանների պաշտպանության գործում դրսևորած բացառիկ խիզախության և անձնվիրության համար ՀՀ պետական պարգևներով պարգևատրվեցին երեք տասնյակից ավելի զինծառայողներ: ԼՂՀ պարգևների արժանացան 50-ից ավելի հայորդիներ:

Արցախյան պատերազմի այս նոր փուլն ապացուցեց, որ հայ ժողովուրդն իր համախմբվածությամբ, զինվորի ու բանակի կողքին կանգնելու հաստատակամությամբ անպարտելի է և պատրաստ է միշտ ինքնակազմակերպվելու, զինվորագրվելու հայրենիքի պաշտպանության սուրբ գործին և շարունակելու Արցախյան պատերազմի մեր հաղթարշավը:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ներկայացրեք Հայաստանի անկախացման գործընթացը: Ինչ օրենքներ ընդունեց ՀՀ-ն: Իշխանության կառուցվածքային ինչ փոփոխություններ կատարվեցին:
2. Երբ և ինչպես ընդունվեց ՀՀ Սահմանադրությունը. ինչու՞ էր կարևոր և ինչ նշանակություն ունեցավ Սահմանադրության ընդունումը: Ինչ փոփոխություններ են կատարվել Սահմանադրության մեջ և երբ: ՀՀ Սահմանադրության ո՞ր հոդվածն եք կարևորում. հիմնավորեք ձեր պատասխանը:
3. Ներկայացրեք բանակաշինության գործընթացը ՀՀ-ում: Ինչ զորատեսակներից է բաղկացած հայկական բանակը: Հիմնավորեք ՀՀ ազգային բանակի անհրաժեշտությունը:
4. Ներկայացրեք քառօրյա պատերազմի արդյունքները: Որո՞նք են հայկական կողմի հաղթանակի պատճառները:

§ 2-3. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Տնտեսական կացությունը: Հայաստանն անկախություն ձեռք բերեց սոցիալ-տնտեսական դժվարին պայմաններում: 1988 թ. երկրաշարժի հետևանքով տնտեսությունը կազմալուծվել էր հանրապետության տարածքի 1/3-ում: Հանրապետությունը հայտնվել էր տրանսպորտային շրջափակման մեջ:

Խորհրդային պետության փլուզումից հետո նախկին հանրապետությունները ներքաշվեցին հակամարտությունների մեջ: Վրաստանում սկսվեց քաղաքացիական պատերազմ, և Հայաստանը, մի շարք երկրների կողմից ցուցաբերվող ոչ մեծ օգնությունը չհաշված, իր ծանր հոգ-

սերի հետ մնաց միայնակ: Դրան գումարվեց Ադրբեջանի կազմակերպած լիակատար շրջափակումը, որին 1990-ական թվականների սկզբից փաստորեն մասնակցում էր նաև վերջինիս անվերապահորեն աջակցող Թուրքիան: Էական ազդեցություն թողեց Ադրբեջանի սանձազերծած պատերազմը Հայաստանի սահմանային շրջաններում ու Լեռնային Ղարաբաղում:

Նման պայմաններում գլխավոր խնդիրը ոչ միայն բնակչության անվտանգության, այլև նվազագույն կենսապայմանների ապահովումն էր: Այս կարևոր խնդիրների լուծման համար անկախության ուղին բռնած Հայաստանի Հանրապետությունը ծրագրեց տնտեսության արմատական բարեփոխումներ: ***Խորհրդային պլանային տնտեսությունը պետք է ձևափոխվեր ազատ շուկայական տնտեսության:***

Շուկայական տնտեսակարգի ձևավորումը, տնտեսավարման ազատական համակարգի ներդրումը Հայաստանում հիմնականում ծավալվեց 1990-1995 թթ.: Դրան մեծապես նպաստեց 1990 թ. սեպտեմբերի 10-ին ընդունված «Հայաստանի Հանրապետության պետական սեփականության մասին» օրենքը, ըստ որի՝ ՀՀ տարածքում գտնվող բոլոր պետական ձեռնարկությունների և կազմակերպությունների ունեցվածքը հայտարարվեց հանրապետության սեփականություն: Կառավարությունը սկսեց մասնավորեցնել գյուղատնտեսական հողերը, պետական (հանրային) բնակարանային ֆոնդն ու ձեռնարկությունները, անավարտ շինարարական օբյեկտները:

Շուկայական տնտեսությանն անցնելու հիմնական բաղադրիչ համարվեց գների ազատականացումը, որը հանգեցրեց գների կտրուկ աճի և բնակչության սոցիալական դրության վատթարացման: 1992 թ. դեկտեմբերին նախորդ տարվա համեմատ սպառողական գներն աճեցին 13 անգամ: Գների ազատականացումը համահունչ չէր տնտեսության նախկին պետական-մենաշնորհային համակարգին, ինչը հանգեցրեց ոչ թե բարեփոխման, այլ գործող համակարգի փլուզման:

1991 թ. ընթացքում սեփականաշնորհվել էր գյուղատնտեսության հիմնական միջոցների զգալի մասը, որի հետևանքով մասնավոր հատվածի տեսակարար կշիռը գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալում կազմում էր մոտ 68 %: Նույն թվականին իրականացվել էր շուրջ 300 փոքր օբյեկտների սեփականաշնորհումը: Սա թույլ տվեց 1992 թ. փոքր-ինչ մեղմել գների ազատականացմամբ պայմանավորված սղաճի ծավալները:

1990-ական թվականներին իրականացված բարեփոխումներով մասնավոր հատվածի բաժինը կազմեց երկրի համախառն ներքին արդյունքի գերակշիռ մասը: Եթե 1990 թ. ՀՆԱ-ի միայն 9 %-ն էր ապահովվում մասնավորի հաշվին, ապա 2008 թ.՝ 85 %-ը:

1990-ական թվականներին սկսված ու մինչև այժմ շարունակվող բարեփոխումներով հնարավոր եղավ

ստեղծել կայուն և կանխատեսելի տնտեսական միջավայր, ինչը հիմք դարձավ տնտեսական աճի տարեցտարի արագացման համար:

Այսպիսով՝ անկախության տարիներին հանրապետությունում իրականացված տնտեսական բարեփոխումները, չնայած առաջին տարիներին առկա օբյեկտիվ ու սուբյեկտիվ դժվարություններին, ապահովեցին տնտեսական որոշակի աճ, գների կայունացում, ներդրումային ավելի բարենպաստ միջավայրի ստեղծում: Մինչև 2008 թ. սկսված համաշխարհային տնտեսական ճգնաժամի ներթափանցումը Հայաստան՝ գնաճի ցածր մակարդակը, փոխարժեքի ազատական ռեժիմը, իրական տոկոսադրույքների անկումը երկրի տնտեսության կայունության նախադրյալներն էին:

Արդյունաբերությունը: Նախկինում Հայաստանը հիմնականում մասնագիտացած էր էլեկտրամեքենաշինության, քիմիայի, էլեկտրոնիկայի, թեթև ու սննդի արդյունաբերության բնագավառներում: Թողարկվող արտադրանքը գլխավորապես արտահանվում էր խորհրդային տնտեսական տարածք: ԽՍՀՄ-ի փլուզումից հետո Հայաստանի արդյունաբերությունը, զրկվելով ներմուծվող էժան հումքից ու էներգիայից, հայտնվեց խոր ճգնաժամի մեջ: 1992 թ. արդյունաբերական արտադրանքի ծավալը կազմեց նախորդ տարվա 51,8 %-ը:

Ամբողջ տնտեսության ճգնաժամային վիճակի հիմնական պատճառներից մեկը էներգետիկ ճգնաժամն էր, որն արդյունք էր Հայկական ատոմակայանի փակման, շրջափակման հետևանքով մազութի ու բնական գազի մատակարարման ընդհատումների: Ճգնաժամի առաջին ձմռանը (1991–1992 թթ.) կաթվածահար եղավ բնակչության ջերմամատակարարման համակարգը: Դրա հետևանքով անտառների և այգիների ամբողջ զանգվածներ հատվեցին և օգտագործվեցին որպես վառելափայտ: Տրանսպորտը փաստորեն դադարեց գործելուց: 1992–1993 թթ. կենցաղային կարիքների ապահովման համար բնակչությանը օրական միայն 2–3 ժամ էր էլեկտրաէներգիա տրվում:

Հայկական ատոմային էլեկտրակայանը

Այսպիսի պայմաններում կենսական խնդիր էր Հայկական ատոմային էլեկտրակայանի (ԱԷԿ) վերագործարկումը (1996 թ.) և Հրազդանի ջէկի 5-րդ բլոկի ամբողջական շահագործումը (2011 թ.): ԱԷԿը վերագործարկվեց Ռուսաստանի Դաշնության տնտեսատեխնիկական ներդրումներով: 2011–2015 թթ. վերակառուցվեցին Քանաքեռ հէկի երկու ագրեգատները, կառուցվեցին միջին հզորության նոր

հէկեր, և յուրացվեց փոքր հէկերի ներուժը: Արդիականացվեց Տաթև հէկը:

Սեփականաշնորհվող օբյեկտների արժեքի 30 %-ի չափով ազգաբնակչությանը բաժանվեցին սեփականաշնորհման սերտիֆիկատներ՝ նպատակ ունենալով նրանց մասնակից դարձնելու սեփականաշնորհման գործընթացին:

1997 թ. դրությամբ հազարից ավելի ձեռնարկություններ և հինգ հազարից ավելի օբյեկտներ սեփականաշնորհվել էին: Ընդհանուր առմամբ սեփականաշնորհվել էր պետական ձեռնարկությունների շուրջ 70 %-ը:

Սեփականաշնորհման արդյունքում, թերություններով ու սխալներով հանդերձ, արդյունաբերությունն աստիճանաբար տնտեսական աճ ապահովեց: Ընդ որում՝ աճի տեմպեր ապահովող հիմնական ճյուղերն են հանքահումքային, մետաղագործական, շինանյութերի, մեքենաշինական, քիմիական արդյունաբերությունները: Սրանք ոլորտներ են, որոնց զարգացումը Հայաստանին հնարավորություն ընձեռեց հումք և կիսաֆաբրիկատներ արտադրող երկրից անցում կատարելու վերջնական արտադրանք թողարկող արդյունաբերական երկրի:

1996-2016 թթ. վերազործարկվեցին ու առավել հզորացան շուրջ 80 խոշոր ընկերություններ, հիմնվեցին ավելի քան 3500 միջին և փոքր արդյունաբերական ընկերություններ:

Վերազործարկվեցին մի շարք մեքենաշինական ձեռնարկություններ՝ «Հրազդանմաշ» ՓԲԸ, «Հայէլեկտրամեքենա», «Ավտոդողերի», Երևանի հաստոցաշինական գործարանները: Քիմիական արդյունաբերության ոլորտում զարգացումն ընթացավ «մեծ քիմիայից» «փոքր քիմիայի» անցնելու քաղաքականության շրջանակներում: Վերազործարկվեցին «Նաիրիտ» ՓԲԸ-ն, «Հայքիմմեքենա» արտադրական միավորումը և այլն: Վերազինվեցին հանքարդյունաբերության, մետաղագործական և շինանյութերի արդյունաբերական ձեռնարկությունները:

Վերջին տարիներին մեծ զարգացում ապրեցին ադամանդագործության և ոսկերչության ոլորտները: 1997-2007 թթ. ընթացքում ՀՀ-ում արտադրվել է մոտ 1,65 մլրդ ԱՄՆ դոլարի արտադրանք, որը գրեթե ամբողջությամբ արտահանվել է: Նույն ժամանակահատվածում ոլորտում զբաղվածների թիվը աճել է 3-4 անգամ:

2000 թվականից տեղեկատվական տեխնոլոգիաների արդյունաբերությունը ՀՀ-ի տնտեսության զարգացման գերակա ճյուղ է հռչակվել: Եթե 1992 թ. ՀՀ-ում գործում էին ոլորտի մոտ 70 ձեռնարկություններ, ապա 2008 թ.՝ ավելի քան 230, իսկ 2015 թ.՝ 350: Ոլորտի մասնագետների թիվը Հայաստանում 2008 թ. հասնում էր 6500-ի, իսկ 2011 թ. հեռուստահաղորդակցության ճյուղի հետ միասին՝ 10 000-ի: Այս ոլորտում հայաստանյան մասնաճյուղեր են հիմնում և գործունեությունն ընդլայնելու ծրագրեր իրագործում մի շարք օտարերկրյա ընկերություններ՝ «Մայքրոսոֆթ»,

«Սինոփսիս», «Ալկաթել», «Լայքս» և այլն:

Գյուղատնտեսությունը: Հայաստանը նախկին ԽՍՀՄ հանրապետություններից առաջինն էր, որ 1991 թ. կարճ ժամանակամիջոցում սեփականաշնորհեց հողը: Դա պայմանավորված էր հանրապետության սոցիալական ծանր վիճակով, երբ առաջնահերթ նշանակություն էր ստանում բնակչությանը պարենով ապահովելը: Հողը մշակողին վերադարձնելու և նրա մասնավոր սեփականատիրական գործունեությունը խրախուսելու նպատակով հանրապետության խորհրդարանը ***1991 թ. հունվարի 29-ին ընդունեց «Գյուղացիական և գյուղական կոլեկտիվ տնտեսությունների մասին»*** օրենքը: 1991-1992 թթ. լուծարվեցին հանրապետությունում եղած 865 կոլտնտեսություններն ու պետական տնտեսությունները, որոնք թողարկում էին գյուղատնտեսական արտադրանքի ավելի քան 90 %-ը: Դրանց փոխարեն ձևավորվեցին 320 հազարից ավելի անհատական տնտեսություններ: Իբրև սեփականություն՝ նրանց փոխանցվեց հողերի 66 %-ը, անասունների 80 %-ը:

Հողի սեփականաշնորհումը, որն իրականացվեց տնտեսական ճգնաժամի պայմաններում, գյուղական բնակչությանն ապահովեց աշխատանքով, մեղմեց գյուղատնտեսական ապրանքների պակասուրդը: Որոշ չափով բարձրացավ գյուղացիության նյութական շահագրգռվածությունը: Հող ստացավ նաև փախստականների մի մասը: Գյուղատնտեսական արտադրությունը սկզբնական շրջանում զգալիորեն նվազեց, բայց այնպիսի խոր ճգնաժամ չապրեց, ինչպես արդյունաբերությունը կամ շինարարությունը:

ՀՀ-ում հողի սեփականաշնորհումն իրականացվեց 1991-1993 թթ.: Դրական համարելով հողի մասնավոր սեփականության գաղափարը և դրա իրականացումը՝ նշենք, որ այդ վերափոխումների ընթացքում թույլ տրվեցին մի շարք սխալներ ու բացթողումներ, որոնք, ի վերջո, բացասական ազդեցություն ունեցան ՀՀ ագրոպարենային համակարգի զարգացման վրա:

Շնորհիվ ագրարային վերափոխումների Հայաստանը դարձավ առաջին պետությունն ԱՊՀ-ում, որտեղ արդեն 1995 թ. սկսվեց գյուղատնտեսական արտադրանքի աճ, որը 1990 թ. մակարդակը գերազանցեց 14 %-ով: ՀՀ-ում ագրարային ոլորտի ծառայությունների ու ենթակառուցվածքների զարգացումը դեռևս անմիջական պետական աջակցություն է պահանջում, մասնավորապես ոռոգման համակարգերի զարգացման, սննդի անվտանգության ապահովման, բույսերի պաշտպանության, գյուղական վարկավորման և գյուղմթերքների իրացման խնդիրների լուծման գործում:

2009 թ. ոռոգման համակարգում տեղադրվել են 300 կմ ջրամատակարարման խողովակներ, իսկ 2010 թ. կառուցվել է մոտ 500 կմ ջրագիծ:

2011 թ. վերակառուցվեցին Արմավիրի մայր ջրանցքի 83 կմ երկարությամբ հատվածները:

Ագրարային բարեփոխումների քաղաքականության արդյունքում գյուղատնտեսությունն աստիճանաբար ապահովեց նկատելի տնտեսական աճ: 1997–2007 թթ. գյուղատնտեսության համախառն արտադրանքի ընդհանուր աճը կազմել է 90 %:

2008 թ. սկսված համաշխարհային տնտեսական ճգնաժամը խիստ բացասաբար անդրադարձավ ՀՀ գյուղատնտեսության ոլորտի վրա: Այստեղ անկումն ամենամեծն էր՝ 15 %, որը բացատրվում էր նաև օբյեկտիվ և բնակլիմայական անբարենպաստ պայմաններով: 2011 թ. մարտին ՀՀ գյուղատնտեսության ոլորտը գերակա ճյուղ հայտարարվեց: Մշակվեց գյուղատնտեսության զարգացման ազգային ծրագիր:

Դրա իրականացման շնորհիվ Հայաստանում գյուղատնտեսության ոլորտը 2015 թ. տպավորիչ արդյունքներ արձանագրեց: Շարունակական են դարձել այս ոլորտում ՀՀ կառավարության կողմից իրականացվող պետական աջակցության ծրագրերը: Մեր երկրում նոր հիմքի վրա դրվեց նորագույն տեխնոլոգիաներով աշխատող ջերմոցային տնտեսությունների զարգացման մշակույթը: 2015 թ. Հայաստանի Հանրապետությունում 83,7 հա ջերմոցներ են գործում, որոնք ապահովում են կայուն բերք:

2003 թ. փետրվարի 5–ին ՀՀ–ն դարձավ Առևտրի համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) լիիրավ անդամ, որը հնարավորություն տվեց ԱՀԿ անդամ երկրների հետ ամրապնդելու երկկողմ առևտրատնտեսական հարաբերությունները, մեծացնելու հայկական ծագում ունեցող ապրանքների մուտքը արտասահմանյան շուկա, որն էլ ուղղակիորեն ազդեց ՀՀ արտահանման և ներմուծման ծավալների աճի ավելացման վրա:

Ֆինանսավարկային համակարգը: Արդյունաբերության անկման հետևանքով ծանր կացության մեջ էր հայտնվել Հայաստանի ֆինանսավարկային համակարգը: Մինչև 1993 թ. հանրապետությունը կրում էր Ռուսաստանի տնտեսական քաղաքականության ազդեցությունը միասնական դրամական համակարգի առկայության պայմաններում: ***1993 թ. նոյեմբերին*** շրջանառության մեջ դրվեց ***հայկական ազգային դրամը:*** Դա կարևոր նշանակություն ունեցավ ինքնուրույն դրամավարկային քաղաքականություն վարելու գործում: Ազգային դրամի գործածումը անկախ պետականության դրսևորման ձևերից մեկն է:

Սեփական դրամը շրջանառության մեջ դնելը կառուցվածքային լուրջ տեղաշարժեր առաջացրեց հանրապետության ֆինանսական համակարգում: Ստեղծվեց Հայաստանի կենտրոնական բանկը, ձևավորվեցին շուրջ 60 առևտրային դրամատներ ու մասնավոր բանկեր: 2010 թ. արդեն գործում էր 21 բանկ:

Տնտեսական բարեփոխումները, կոշտ ֆինանսավարկային քաղաքականությունը, արտահանման

խրախուսումը կտրուկ նվազեցրին դրամի արժեզրկման թափը և կայունացրին նրա փոխարժեքը: Աշխուժացավ արտադրությունը, նվազեց զբաղվածության մակարդակի անկումը, ավելացավ ոչ բյուջետային ոլորտի աշխատողների իրական աշխատավարձը: Բարելավվեց նաև առևտրային հաշվեկշիռը, ինչը ձեռնարկություններին հնարավորություն տվեց կուտակելու արժութային միջոցներ:

Սակայն հանրապետության նախկին արտադրական կարողությունների օգտագործման մակարդակը դեռևս չափազանց ցածր էր և բավարար չէր արտադրության այնպիսի ծավալի ապահովման համար, որը հնարավորություն կտար էապես կրճատելու արտաքին պարտքի ծավալը:

Բնակչության սոցիալական վիճակը: Հանրապետությունում սոցիալ–տնտեսական ծանր վիճակը կտրուկ փոխեց հասարակության ճնշող մեծամասնության կենսապայմանները: Չնայած տարեցտարի պաշտոնապես արձանագրվող 5–6 %–անոց տնտեսական աճին, այնուամենայնիվ շուկայական «բարեփոխումների» պտուղներից առավելապես օգտվում էր բնակչության փոքրամասնությունը:

Տասնյակ տարիների ընթացքում երաշխավորված աշխատատեղին և աշխատավարձին սովոր, աշխատասեր ժողովրդի մի ակտիվ մաս հայտնվեց գործազուրկի կարգավիճակում:

Աշխատանքային շուկայում առաջացած վիճակը հանգեցրեց նրան, որ աշխատավարձի միջին մակարդակն այլևս չէր ապահովում բնակչության հսկայական զանգվածների նույնիսկ նվազագույն կենսապայմանները: 2003 թ. ՀՀ կառավարությունը մշակեց և իրագործեց «Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիրը» (ԱՀՌԾ): Աղքատության մակարդակը 1999 թ. համեմատությամբ 2005 թ. կրճատվեց մոտ 1,9 անգամ, իսկ ծայրահեղ աղքատությունը՝ 4,6 անգամ: Բայց համաշխարհային տնտեսական նոր ճգնաժամի պայմաններում աղքատությունը նորից աճի միտում ձեռք բերեց: Այս ամենի հետևանքով հանրապետությունից սկսվեց նոր արտագաղթ: Արտագաղթողների մեծ մասը մեկնում է Ռուսաստան, միայն 25–30 %–ն է հանգրվանում այլ երկրներում:

Համաշխարհային տնտեսական ճգնաժամի ազդեցությունը: Հայաստանի Հանրապետության տնտեսության վրա բացասական ազդեցություն գործեցին արտաքին ցնցումները, հատկապես Ռուսաստանի 1998 թ. ֆինանսական և 2008 թ. սկսված համաշխարհային տնտեսական ճգնաժամերը:

Վերջին տասնամյակում զգալիորեն արագացան գլոբալացման (համաշխարհայնացման) գործընթացները համաշխարհային տնտեսության մեջ, հատկապես ֆինանսական ոլորտում: 2008 թ. սեպտեմբերին ԱՄՆ–ում սկիզբ առած և այնուհետև ամբողջ աշխարհում տարածված ֆինանսատնտեսական ճգնաժամը բացասական լուրջ հետևանքներ ունեցավ նաև ՀՀ տնտեսության համար:

Ճգնաժամի հետևանքով կրճատվեց կամ լրիվ վերացավ ՀՀ ձեռնարկությունների զգալի մասի արտադրանքի նկատմամբ պահանջարկը: Ֆինանսական ճգնաժամի արդյունքում զգալիորեն նվազեցին նաև արտասահմանում աշխատող կամ բնակվող հարազատների կողմից Հայաստանի բնակչությանը փոխանցվող կանխիկ դրամական միջոցները:

ՀՀ կառավարությունը մեծ ջանքեր է գործադրում՝ մեղմելու գլոբալ ֆինանսական ճգնաժամի հետևանքները ՀՀ տնտեսությունում: Փորձ է արվում դրամական լուրջ միջոցներ ներգրավելու տնտեսական գործունեության մեջ, որպեսզի պետությունն ավելի մեծ հնարավորություն ունենա կարգավորելու ճգնաժամի հետևանքները տնտեսական և սոցիալական ոլորտներում: Պետության կողմից իրականացվող միջոցառումները որոշակիորեն մեղմել են ճգնաժամի ազդեցությունը, սակայն շատ բան դեռ կախված է համաշխարհային տնտեսական ճգնաժամի լիակատար հաղթահարումից, միջազգային ֆինանսական շուկայում կայունության հաստատումից: Չնայած 2010 թ. ճգնաժամն իր բացասական ազդեցությունն էր թողել ՀՀ տնտեսության վրա, այնուամենայնիվ տնտեսությունը դանդաղ աճ գրանցեց նախորդ տարվա համեմատ, որը կազմեց 2,2 %, սակայն աղքատության մակարդակը շարունակում էր աճել:

Հարցեր և առաջադրանքներ

1. ԽՍՀՄ փլուզման և Հայաստանի շրջափակման հետևանքով ինչ իրավիճակում հայտնվեց ՀՀ տնտեսությունը: Տնտեսական իրավիճակը կարգավորելու նպատակով ինչ քայլեր ձեռնարկվեցին ՀՀ-ում, և ինչ հետևանքներ ունեցան դրանք:
2. Ինչո՞ւ ՀՀ արդյունաբերությունը հայտնվեց ճգնաժամային իրավիճակում, այն հաղթահարելու նպատակով ինչ քայլեր ձեռնարկվեցին: Ներկայացրե՛ք սեփականաշնորհման ընթացքն ու հետևանքները: Ո՞րն էր ՀՀ-ում էներգետիկ ճգնաժամի պատճառը: Ե՞րբ և ինչի՞ շնորհիվ բարելավվեց էլեկտրամատակարարումը:
3. Ինչո՞ւ նորանկախ ՀՀ-ում գյուղատնտեսությունը դիտվեց որպես տնտեսության կարևորագույն բնագավառներից մեկը: Ներկայացրե՛ք հողի սեփականաշնորհման գործընթացը և հետևանքները:
4. Ներկայացրե՛ք բնակչության սոցիալական վիճակը: Ինչ ազդեցություն է ունեցել 2008 թ. համաշխարհային տնտեսական ճգնաժամը ՀՀ տնտեսության վրա: ՀՀ կառավարությունն ինչ քայլեր է ձեռնարկում ճգնաժամից դուրս գալու համար:

§ 4–5. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ–ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ

Բազմակուսակցական համակարգի ձևավորումը: Անկախության հռչակումից անմիջապես հետո Հայաստանի Հանրապետությունում քայլեր ձեռնարկվեցին հասարակական կյանքի ժողովրդավարացման և նոր հարաբերությունների հաստատման ուղղությամբ:

1990 թ. նոյեմբերի 5-ին ՀԽՍՀ Գերագույն խորհուրդը որոշում ընդունեց հանրապետության պետական մարմինները, ձեռնարկությունները, կազմակերպությունները, ուսումնական հաստատությունները և զինվորական ստորաբաժանումները ապաքաղաքականացնելու վերաբերյալ: Միաժամանակ ընդունած որոշումով արգելվեց հասարակության մեջ ցանկացած զաղափարական պարտադրանք:

Հաջորդ տարվա փետրվարի 26-ին խորհրդարանն ընդունեց օրենք («Հասարակական-քաղաքական կազմակերպությունների մասին»), որով հանրապետությունում ստեղծվում էր բազմակուսակցական համակարգ: Օրենքով ՀՀ քաղաքացիներին թույլատրվում էր կամավորության սկզբունքով ազատորեն հիմնել հասարակական կազմակերպություններ: Երկարամյա ընդմիջումից հետո հայրենիքում ազատորեն գործելու իրավունք ստացան ազգային ավանդական կուսակցությունները՝ Հայ հեղափոխական դաշնակցությունը, Հայ ռամկավար ազատական և Սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցությունները: Նրանք արագորեն ներգրավվեցին նորանկախ հանրապետության հասարակական-քաղաքական կյանքի մեջ:

Առաջացան նոր կուսակցություններ, հասարակական-քաղաքական կազմակերպություններ ու միություններ՝ Ազգային ինքնորոշում միավորումը (ԱԻՄ), Հայաստանի հանրապետական կուսակցությունը (ՀՀԿ) և այլն: Ավելի ուշ հիմնվեցին Հայաստանի ժողովրդական (ՀԺԿ), Օրինաց երկիր (ՕԵԿ), Ժառանգություն, Բարգավաճ Հայաստան (ԲՀԿ) կուսակցությունները և այլն: Հետզհետե կուսակցությունների թիվն աճեց՝ հասնելով մի քանի տասնյակի:

1990-ական թվականների սկզբին հետխորհրդային առաջին բազմակուսակցական Գերագույն խորհրդում ամենամեծ խմբակցությունն ուներ Հայոց համազգային շարժումը (ՀՀՇ): Խորհրդարանում ներկայացված էին ՀՅԴ-ն, Հայաստանի կոմունիստական կուսակցությունը (ՀԿԿ), Հայաստանի ռամկավար ազատական կուսակցությունը (ՀՌԱԿ): Կուսակցությունների մի մասը վերաձևավորվեց կամ մասնատվեց:

1994 թ. դեկտեմբերի վերջին կուսակցությունների վերաբերյալ օրենքը խախտելու ամբաստանությամբ կասեցվեց դաշնակցության գործունեությունը Հայաստանում: Կուսակցությունը չկարողացավ մասնակցել ընթացիկ խորհրդարանական ընտրություններին: Հասարակական կյանքից քաղաքական ուժի մեկուսացումը հակաժողովրդական քայլ էր և

բացասաբար անդրադարձավ երկրում ժողովրդավարական վերափոխումների ընթացքի ու քաղաքական իրավիճակի վրա:

Հասարակական-քաղաքական կյանքը հանրապետությունում աշխուժացավ 1995 թ. հուլիսի 5-ի խորհրդարանական ընտրությունների ժամանակ: Ընդդիմադիր հիմնական կուսակցություններն առաջադրեցին իրենց թեկնածուներին, իսկ ՀՀՇ-ն, իր շուրջը համախմբելով մի շարք կուսակցություններ և հասարակական կազմակերպություններ, ձևավորեց «Հանրապետություն» քաղաքական միավորումը: Նախընտրական պայքարն ընթանում էր «Հանրապետություն» միավորման և ընդդիմության միջև: Ընդդիմադիր հիմնական կուսակցությունները համախմբվեցին Ազգային ժողովրդավարական միության (ԱԺՄ) շուրջը: Ընտրությունների արդյունքում «Հանրապետություն» միավորումը խորհրդարանի 191 պատգամավորական տեղերից նվաճեց 114-ը՝ կազմելով բացարձակ մեծամասնություն: Ընդդիմադիրները ստացան ընդամենը 15 տեղ:

Հասարակական-քաղաքական կյանքն ավելի աշխուժացավ ***1996 թ. սեպտեմբերի 22-ի*** նախագահական ընտրությունների ժամանակ: Ընտրություններն անցան քաղաքական թեժ պայքարի պայմաններում: «Հանրապետություն» միավորումն առաջադրեց ՀՀ նախագահ ***Լևոն Տեր-Պետրոսյանի*** թեկնածությունը, իսկ ընդդիմադիր մի քանի կուսակցություններ միավորվելով առաջադրեցին ԱԺՄ նախագահ ***Վազգեն Մանուկյանի*** թեկնածությունը:

Ըստ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի հրապարակած պաշտոնական տվյալների՝ Լ. Տեր-Պետրոսյանի օգտին քվեարկել էր ընտրության մասնակիցների 51,75 %-ը, իսկ Վ. Մանուկյանի օգտին՝ 41,29 %-ը: Դժգոհելով նախագահական ընտրությունների արդյունքներից, այն համարելով կեղծված՝ մարդիկ դուրս եկան հանրահավաքների և ցույցերի՝ պահանջելով անցկացնել կրկնակի ընտրություններ: 1996 թ. սեպտեմբերի 25-ի հանրահավաքի մասնակիցները ներխուժեցին խորհրդարանի շենք: Բողոքի այս պոռթկումը կասեցվեց: Սկսվեցին ընդդիմության առաջնորդների ու առավել ակտիվ ներկայացուցիչների ձերբակալությունները, տեղի ունեցան քաղաքական դատավարություններ, հանրապետությունում արգելվեց հանրահավաքներ և ցույցեր կազմակերպելը: Այս ընտրություններից հետո խորացած քաղաքական ճգնաժամը հանգեցրեց ***1998 թ. փետրվարին*** երկրի նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի հրաժարականին: Դրան նպաստեց նաև արցախյան հիմնահարցի վերաբերյալ իրարամերժ տեսակետների առկայությունը և հիմնահարցի չլուծված մնալը:

1998 թ. մարտին՝ արտահերթ նախագահական ընտրությունների ժամանակ, հիմնական պայքարն ընթանում էր Հայաստանի Հանրապետության վարչապետ Ռոբերտ Քոչարյանի և քաղաքական ասպարեզ վերադարձած՝ ՀԿԿ կենտկոմի նախ-

ՀՀ նախագահներ Լևոն Տեր-Պետրոսյան, Ռոբերտ Քոչարյան, Սերժ Սարգսյան

կին առաջին քարտուղար Կարեն Դեմիրճյանի միջև: Հանրապետության նախագահ ընտրվեց Ռոբերտ Քոչարյանը:

Ներքաղաքական զարգացումները 1999-2010 թթ.: Արտահերթ նախագահական ընտրություններից հետո ՀՅԴ-ն, որի պաշտոնական կարգավիճակը վերականգնվեց Լևոն Տեր-Պետրոսյանի հրաժարականից հետո, դադարեցրեց ընդդիմադիր պայքարը և սատարեց նախագահ Ռ. Քոչարյանին:

Ակտիվ քաղաքական պայքարի մթնոլորտում անցան ***1999 թ. մայիսի 30-ի*** խորհրդարանական ընտրությունները: Նախընտրական շրջանում ձևավորվեց «Միասնություն» դաշինքը, որի մեջ մտան Հայաստանի հանրապետական կուսակցությունը, Հայաստանի ժողովրդական կուսակցությունը և Երկրապահ կամավորականների միությունը: Ընդդիմադիր կուսակցությունները չմիավորվեցին, և լուրջ ընդդիմադիր ուժ չկազմավորվեց: Ընտրություններում հաղթեց «Միասնություն» դաշինքը: Ազգային ժողովի նախագահ ընտրվեց Կարեն Դեմիրճյանը, վարչապետ նշանակվեց Վազգեն Սարգսյանը:

1999 թ. հոկտեմբերի 27-ին Ազգային ժողով — ՀՀ կառավարություն հարց ու պատասխանի ժամանակ, ինքնաձիգներով զինված 5 ահաբեկիչներ ներխուժեցին ԱԺ նիստերի դահլիճ և կրակ բացեցին ներկաների վրա: Ահաբեկչությանը զոհ դարձան ԱԺ նախագահ Կարեն Դեմիրճյանը, վարչապետ Վազգեն Սարգսյանը, ԱԺ փոխնախագահներ Յուրի Բախշյանը, Ռուբեն Միրոյանը, ԱԺ պատգամավորներ Հենրիկ Աբրահամյանը, Արմենակ Արմենակյանը, Միքայել Քոթանյանը, նախարար Լեոնարդ Պետրոսյանը: Տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ ստացան 6 պատգամավոր և մեկ նախարար:

Հոկտեմբերի 27-ի ահաբեկչությունը ծանրացրեց հանրապետության վիճակը, հանգեցրեց ներքաղա-

քական իրավիճակի կտրուկ սրման: Սակայն հանրապետության ղեկավարությունը կարողացավ խուսափել ներքաղաքական ցնցումներից և աստիճանաբար կայունացնել քաղաքական իրավիճակը:

Հայաստանի Հանրապետության նախագահական չորրորդ ընտրություններն անցկացվեցին ***2003 թ.***: Ընտրությունների երկրորդ փուլի արդյունքում նախագահ վերընտրվեց Ռոբերտ Քոչարյանը: ***2003 թ. մայիսի 25-ին*** տեղի ունեցան Ազգային ժողովի հերթական ընտրությունները, որոնց արդյունքում կուսակցություններից ոչ մեկին չհաջողվեց բացարձակ մեծամասնություն կազմել խորհրդարանում և միայնակ ձևավորել կառավարություն: Հայաստանի անկախ հանրապետության պատմության մեջ առաջին անգամ առավել շատ ձայներ ստացած երեք կուսակցություններ՝ ՀՀԿ-ն, ՕԵԿ-ը և ՀՅԴ-ն, քաղաքական կոալիցիա կազմեցին և համատեղ ձևավորեցին ՀՀ կառավարությունը: Վարչապետ նշանակվեց 2000 թվականից այդ պաշտոնը զբաղեցնող՝ Հայաստանի հանրապետական կուսակցության խորհրդի նախագահ Անդրանիկ Մարգարյանը:

2007 թ. մայիսի 12-ի խորհրդարանական ընտրություններում համամասնական ընտրակարգով մեծամասնություն ստացավ ՀՀԿ-ն, որին պատգամավորական տեղերի թվով հաջորդեցին ԲՀԿ-ն և ՀՅԴ-ն: Ստորագրվեց համաձայնագիր Հայաստանի հանրապետական և Բարգավաճ Հայաստան կուսակցությունների միջև՝ քաղաքական կոալիցիա կազմելու վերաբերյալ: Քաղաքական կոալիցիան իր հերթին դաշնակցության հետ համագործակցության համաձայնագիր ստորագրեց: Այս երեք կուսակցություններն էլ կոալիցիոն նոր կառավարություն ձևավորեցին: Վարչապետ նշանակվեց Սերժ Սարգսյանը:

Հայաստանի Հանրապետության նախագահական հինգերորդ ընտրություններն անցկացվեցին ***2008 թ. փետրվարի 19-ին***: Նախագահի 9 թեկնածուների մեջ էին ՀՀ առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը և վարչապետ ***Սերժ Սարգսյանը***: ՀՀ նախագահ ընտրվեց Սերժ Սարգսյանը: Չընդունելով ընտրության արդյունքները՝ ընդդիմության արմատական թևը Լևոն Տեր-Պետրոսյանի ղեկավարությամբ փետրվարի 20-ից 10 օր անընդմեջ շարունակվող հանրահավաքներ սկսեց: Ապակայունացած իրավիճակը Երևան քաղաքում մարտի 1-2-ին հանգեցրեց ողբերգական դեպքերի: Տեղի ունեցան բախումներ ոստիկանության և հանրահավաքի մասնակիցների միջև: Զոհվեց 10 մարդ: Եղան վիրավորներ: Երկրում մտցվեց 20-օրյա արտակարգ դրություն:

Հանրապետության բազմակուսակցական համակարգի ձևավորման գործում իր դերակատարությունն ունի «Ժառանգություն» կուսակցությունը, որն, Ազգային ժողովի 4-րդ գումարման ընտրություններում հաղթահարելով անհրաժեշտ 5 %-անոց շեմը, խորհրդարանում ապահովեց 7 պատ-

զամավորական տեղ: Հանրապետության ընդդիմադիր դաշտի մի խումբ կուսակցություններ ու հասարակական կազմակերպություններ միավորվելով կազմեցին Հայ ազգային կոնգրեսը (ՀԱԿ), որը ձևավորվեց 2008 թ. օգոստոսին ՀՀ առաջին նախագահի ղեկավարությամբ:

ՀՀ նախագահի առաջարկությամբ 2008 թ. աշնանը ստեղծվեց հանրային խորհուրդ, որի կազմում ընդգրկվեցին հասարակական կյանքի գրեթե բոլոր ոլորտներն ընդգրկող մասնագետներ, մտավորականության ներկայացուցիչներ: Հանրային խորհրդի նախագահ ընտրվեց ՀՀ նախկին վարչապետ Վազգեն Մանուկյանը: 2011 թ-ից ՀՀ քաղաքական կյանքում սկսեց ձևավորվել նոր՝ փոխադարձաբար ավելի հանդուրժող մթնոլորտ:

2012 թ. մայիսի 6-ին տեղի ունեցան հերթական խորհրդարանական ընտրությունները, որտեղ հաղթանակ տարավ Հայաստանի հանրապետական կուսակցությունը: Ընտրություններից հետո ԲՀԿ-ն, որը խորհրդարանում ստացավ շատ ձայներ և երկրորդ տեղն էր զբաղեցնում ստացած ձայների քանակով, հրաժարվեց կոալիցիայի մեջ մտնելուց: ՀՀԿ-ն ՕԵԿ-ի հետ կազմեց կոալիցիա: Վարչապետ նշանակվեց Տիգրան Սարգսյանը, որին 2014 թ. ապրիլից փոխարինեց Հովիկ Աբրահամյանը: 2014 թ. ապրիլից ՕԵԿ-ը դուրս եկավ կոալիցիոն կառավարությունից՝ ընդունելով ընդդիմադիր կեցվածք: 2015 թ. ապրիլին ՀՀ նախագահի կողմից հայ-թուրքական արձանագրությունների հետևանչումը խորհրդարանից, ինչպես նաև ՀՀ սահմանադրական փոփոխություններով խորհրդարանական համակարգին անցումը, որը բխում էր ՀՅԴ-ի առաջարկներից, հնարավորություն ընձեռեց կուսակցությանը 2016 թ. փետրվարի 25-ին քաղաքական համագործակցության համաձայնագիր ստորագրելու ՀՀԿ-ի հետ և մտնելու կոալիցիայի մեջ:

Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Ա

ՀՀ նախագահական վեցերորդ ընտրություններն անցկացվեցին 2013 թ. փետրվարի 19-ին: ՀՀ նախագահի յոթ թեկնածուներից առավել շատ ձայներ ստացան ՀՀ գործող նախագահ Սերժ Սարգսյանը (58,64 %) և «Ժառանգություն» կուսակցության նախագահ Ռաֆֆի Հովհաննիսյանը: ՀՀ նախագահ վերընտրվեց Սերժ Սարգսյանը:

Հայ առաքելական եկեղեցին Երրորդ հանրապետության շրջանում: Հայոց եկեղեցին ժողովրդի կողքին էր ողջ ազատագրական պայ-

Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին

քարի ընթացքում, հանրապետության կայացման դժվարին ճանապարհին:

Հայ առաքելական եկեղեցին ազգային եկեղեցի ճանաչելու գործում կարևոր նշանակություն ունեցավ ՀՀ Գերագույն խորհրդի կողմից ընդունված ***«ՀՀ-ում խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին»*** օրենքը: Դրանով Հայոց եկեղեցուն իրավունք էր տրվում վերստեղծելու իր թեմերն ու համայնքները, կառուցելու նոր եկեղեցիներ և նպաստելու հոգևոր կյանքի զարգացմանը: ***Վազգեն Ա*** կաթողիկոսը հաստատեց ներքին թեմերի եկեղեցական կանոնադրությունը: Վերականգնվեցին խորհրդային տարիներին արգելված եկեղեցասեր կազմակերպություններն ու միությունները, կրոնական երգչախմբերը, աշխուժացավ կիսաքանդ եկեղեցիների նորոգման և նորերի կառուցման գործընթացը:

1994 թ. օգոստոսին վախճանվեց Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ն: 1995 թ. ապրիլին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում բացվեց ազգային-եկեղեցական պատգամավորական ժողովը: Ամենայն հայոց կաթողիկոս ընտրվեց Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Գարեգին Բ-ն: Նա օծվեց ***Գարեգին Ա*** անվամբ: Գարեգին Ա-ի կարճատև, բայց եռանդուն գործունեության տարիներին (1995-1999) ընդարձակվեց եկեղեցաշինությունը, ստեղծվեցին հոգևոր-եկեղեցական նոր կառույցներ, սերտացան միջեկեղեցական կապերը: Երևանի պետական համալսարանում հիմնվեց Աստվածաբանության ֆակուլտետը:

Գարեգին Ա-ի մահից հետո Մայր Աթոռ Ս. Էջմիածնում 1999 թ. հոկտեմբերին տեղի ունեցած ազգային-եկեղեցական ժողովում Ամենայն հայոց կաթողիկոս ընտրվեց Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ ***Գարեգին արքեպիսկոպոս Ներսիսյանը***: Հայոց 132-րդ հայրապետը գահ բարձրացավ երկրի համար ծանր իրավիճակում. հոկտեմբերի 27-ին Ազգային ժողովում տեղի էր ունեցել ահաբեկչություն:

Հայ առաքելական եկեղեցին անդամակցել է Եկեղեցիների համաշխարհային խորհրդին: Էջմիածնում միջեկեղեցական հարաբերությունների գրասենյակ է բացվել: Գարեգին Բ-ն ձեռնամուխ եղավ եկեղեցական ներքին կյանքի կարգավորմանն ու կազմակերպմանը, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հոգևոր կրթարանների վերաշխուժացմանը: ՀՀ կառավարությունը Գևորգյան հոգևոր ճեմարանը ճանաչեց որպես բարձրագույն ուսումնական հաստատություն՝ Աստ-

վածաբանական համալսարան, իսկ Վազգենյան դպրանոցը դարձավ նրա մասնաճյուղը: 2000-ական թվականներին վերաբացվեցին Գեղարդի, Խոր Վիրապի, Ս. Գայանե, Ս. Հռիփսիմե վանքերը: Մայր Աթոռի «Ավետ և Մարի Մանուկյան» գանձատանը հիմնվեց Գարեգին Ա-ի անվան Աստվածաբանական-հայագիտական կենտրոնը, որի նախաձեռնությամբ կազմակերպվում են գիտաժողովներ, պատրաստվում և հրատարակվում են աստվածաբանական ու հայագիտական ուսումնասիրություններ:

2001 թ. մեծ շուքով պետականորեն տոնվեց քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հռչակելու 1700-ամյա հոբելյանը: 2000 թ. դեկտեմբերի 31-ին՝ տարեմուտի գիշերը, Հայոց հայրապետը և հանրապետության նախագահ Ռոբերտ Քոչարյանը Խոր Վիրապից Մայր Աթոռ բերեցին Լուսավորչի կանթեղը, որի լույսը տարածվեց մոմավառության միջոցով, և ազդարարվեցին Հայաստանում քրիստոնեության ընդունման 1700-ամյա հոբելյանն ու երրորդ հազարամյակի սկիզբը: Հոբելյանական տարվա ընթացքում կազմակերպվեցին ուխտագնացություններ, գիտաժողովներ, կրթամշակութային միջոցառումներ: ***2001 թ. սեպտեմբերի 23-ին*** օծվեց աշխարհում ամենամեծ հայկական եկեղեցին՝ ***Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչը:***

2015 թ. ապրիլի 12-ին Վատիկանի Սուրբ Պետրոսի տաճարում Նորին Սրբություն Հռոմի պապ Ֆրանցիսկոսի կողմից մատուցվեց Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված պատարագ: Այս միջոցառումը համաշխարհային նշանակության երևույթ էր: Առաջին անգամ էր, որ նման մեծածավալ պատարագ էր մատուցվում Կաթոլիկ եկեղեցու հովվապետի կողմից: Հռոմի պապը չխորշեց իրերն իրենց անուններով կոչելուց՝ հայերի հետ կատարվածը անվանելով ցեղասպանություն: Հռոմի պապը կոչ արեց միջազգային հանրությանը՝ անվերապահորեն ճանաչելու Հայոց ցեղասպանությունը: Առաջին անգամ հնչեց հայոց կաթողիկոսների համատեղ աղոթքը կաթոլիկ եկեղեցում, որը մեծ խորհուրդ է պարունակում: Կարևոր իրադարձություն էր նաև այն, որ հայոց մեծագույն մտածող և հոգևոր գործիչ Գրիգոր Նարեկացին հռչակվեց տիեզերական եկեղեցու վարդապետ:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչ քայլեր ձեռնարկվեցին հասարակական կյանքի ժողովրդավարացման ուղղությամբ: Ներկայացրեք բազմակուսակցական համակարգի ձևավորման գործընթացը: Ինչ հետևանք ունեցավ դաշնակցության գործունեության կասեցումը: Ինչպես ընթացան և ինչ ավարտ ունեցան 1995 թ. խորհրդարանական, 1996 թ. և 1998 թ. նախագահական ընտրությունները:

2. Ինչ մթնոլորտում անցան և ինչ ավարտ ունեցան 1999 թ. մայիսի 30–ի խորհրդարանական ընտրությունները: Ներկայացրեք 1999 թ. ներհանրապետական ձգնաժամն ու ներքաղաքական զարգացումները մինչև 2016 թվականը:
3. Ինչ ներդրում ունի Հայ առաքելական եկեղեցին նորանկախ ՀՀ–ի կայացման գործում: Ինչ նշանակություն ունեցավ «ՀՀ–ում խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» օրենքի ընդունումը: Ինչ գիտեք Երրորդ հանրապետության շրջանի Ամենայն հայոց կաթողիկոսների գործունեության մասին:

§ 6–7. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Նորանկախ հանրապետության միջազգային ճանաչումը: Անկախության կարևորագույն չափանիշներից մեկն էլ Հայաստանի Հանրապետության միջազգային ճանաչումն էր ու նրա հետ դիվանագիտական կապերի հաստատումը: ՀՀ–ի անկախության վերականգնումով նա դարձավ միջազգային հարաբերությունների լիիրավ անդամ: Դրությունը բարդանում էր նրանով, որ լինելով ԽՍՀՄ–ի կազմում՝ հասկանալի պատճառներով Հայաստանը չուներ միջազգային շփումների փորձ, միջազգային քաղաքականության հայեցակարգ և գործելակերպի չափանիշներ:

ՀՀ արտաքին քաղաքականության հիմնական խնդիրը բոլոր պետությունների և առաջին հերթին հարևանների հետ բարիդրացիական փոխշահավետ հարաբերությունների հաստատումն էր: Դեռևս ԽՍՀՄ վերջնական կազմալուծման նախաշեմին Հայաստանը նախկին միութենական հանրապետությունների հետ տնտեսական ու մշակութային կապերից բացի՝ աստիճանաբար հաստատում էր քաղաքական հարաբերություններ: Նորանկախ Հայաստանը միջազգայնորեն ճանաչվեց 1991 թ. վերջերից: 1991 թ. նոյեմբերի 21–ին ՀՀ անկախությունը առաջինը ճանաչեց և նրա հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատեց նորանկախ Լիտվայի Հանրապետությունը: Հաջորդը դեկտեմբերին Ուկրաինան և Ռուսաստանը ճանաչեցին ՀՀ անկախությունը: Ռուսաստանի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատվեցին 1992 թ. ապրիլին: 1991 թ. դեկտեմբերի 25–ին ԱՄՆ նախագահ Ջորջ Բուշը հայտարարեց, որ իր երկիրը պաշտոնապես ճանաչում է Հայաստանի Հանրապետությունը՝ որպես ինքնիշխան պետություն: 1992 թ. հունվարի 7–ից ՀՀ–ի և ԱՄՆ–ի միջև հաստատվեցին դիվանագիտական հարաբերություններ:

1991 թ. դեկտեմբերի 16–ին ՀՀ–ի անկախությունը ճանաչեց Թուրքիան, բայց դիվանագիտական հարաբերություններ չհաստատեց նրա

ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը ՀԱՊԿ Հավաքական անվտանգության խորհրդի նիստին մասնակցելիս

հետ, և Անկարան Հայաստանի իշխանություններին նախապայմաններ ներկայացրեց. չարձարձել Հայոց ցեղասպանության հարցը, հրաժարվել պահանջատիրությունից, ձնշում գործադրել Լեռնային Ղարաբաղի վրա՝ դադարեցնելու պայքարը: Միաժամանակ պահանջեց, որ Հայաստանը զերծ մնա Թուրքիայի շահերին հակասող գործողություններից և ամեն կերպ չեզոքացնի սփյուռքահայության պահանջատիրական գործունեությունը: Հայաստանի ղեկավարությունը մերժեց այս նախապայմանները: Այնուամենայնիվ, Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի գործարարների տնտեսական հարաբերությունները որոշ չափով աշխուժացան:

Անկախացած Հայաստանի Հանրապետության ճանաչման գործընթացը մեծ չափով շարունակվեց նաև 1992 թ.: Նույն տարում աշխարհի տարբեր կողմերից ՀՀ-ն ճանաչեցին Իտալիան, Հունաստանը, Եթովպիան, Արգենտինան, Ուրուգվայը, Իսպանիան, Ավստրիան և այլն: 1992 թ. ՀՀ անկախությունը ճանաչած երկրների թիվը հասել էր 101-ի, որոնցից 42-ի հետ հաստատվել էին դիվանագիտական հարաբերություններ:

ՀՀ-ի անդամակցությունը միջազգային կազմակերպություններին: ***1992 թ. մարտի 2-ին*** Հայաստանը դարձավ Միավորված ազգերի կազմակերպության լիիրավ անդամ. ՀՀ առաջին արտգործնախարար Ռաֆֆի Հովհաննիսյանը ՄԱԿ-ի գրասենյակի առջև բարձրացրեց Հայաստանի պետական դրոշը: ՀՀ-ն անդամագրվեց նաև միջազգային այլ կազմակերպությունների, այդ թվում՝ Սևծովյան տնտեսական համագործակցությանը (ՍԾՏՀ):

2013 թ. սեպտեմբերի 3-ին Մոսկվայում ընդունվեց Հայաստանի և Ռուսաստանի նախագահների համատեղ հայտարարությունը, որտեղ

նշվեց Մաքսային միությանը միանալու ՀՀ որոշման մասին:

2015 թ. հունվարից Հայաստանը դարձավ Եվրասիական տնտեսական միության լիիրավ անդամ և իր ակտիվ մասնակցությունը բերեց կազմակերպության կայացման գործընթացին: Եվրասիական տնտեսական միության (ԵՏՄ) հիմնադրման պայմանագիրը ՌԴ–ի, Բելառուսի և Ղազախստանի նախագահների կողմից ստորագրվել էր Աստանայում 2014 թ. մայիսի 29–ին: Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2015 թ. հոկտեմբերի 16–ի որոշմամբ 2016 թ. փետրվարի 1–ից Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի նախագահությունը 4 տարի ժամկետով ստանձնեց ՀՀ ներկայացուցիչ, նախկին վարչապետ Տիգրան Սարգսյանը:

Հարաբերությունները ԱՊՀ երկրների հետ: ՀՀ արտաքին քաղաքականության հիմնական առաջնահերթություններից մեկը Անկախ Պետությունների Համագործակցության (ԱՊՀ) երկրների հետ հարաբերությունների զարգացումն է, որը Հայաստանի համար նախ և առաջ ռազմաքաղաքական նշանակություն ունի: Հայաստանը մասնակցում է ԱՊՀ համակարգող մարմինների աշխատանքներին և երկկողմ հարաբերություններ զարգացնում համագործակցության անդամ երկրների հետ: ԱՊՀ երկրների հետ ՀՀ ռազմաքաղաքական համագործակցությունը ընթանում է Հայաստանի անվտանգության կարևոր բաղադրիչ հանդիսացող ՀԱՊԿ (Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպություն) շրջանակներում: 2012 թ. ընդունվեցին մի շարք փաստաթղթեր՝ նվիրված ռազմական ոլորտում, արտակարգ իրավիճակների և տեղեկատվական անվտանգության ասպարեզում առկա համագործակցության սերտացմանը, ՀԱՊԿ օպերատիվ արձագանքմանն ու խաղաղապահ ուժերի ամրապնդմանը: ՀԱՊԿ անդամ երկրները, վերահաստատելով ԼՂՀ–ի խնդրի բացառապես խաղաղ կարգավորման անհրաժեշտությունը, ընդգծում են ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում հարցի լուծման կարևորությունը: 2012–2016 թթ. Հայաստանը շարունակել է մասնակցությունը Աֆղանստանում և Կոսովոյում խաղաղապահ առաքելություններին, Լիբանանում իրականացվող ՄԱԿ–ի խաղաղապահ առաքելությանը:

Հայաստանի համար ռազմավարական տեղ են գրավում ուղղակի հարաբերությունները Ռուսաստանի Դաշնության հետ: 1995 թ. մարտի 16–ին Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև կնքվեց պայմանագիր, իրավական հիմքի վրա դրվեց Հայաստանում ռուսական ռազմական ուժերի տեղակայման հարցը, որը կարևոր նշանակություն ունի հանրապետության անվտանգությունն ապահովելու գործում:

Երկու երկրների հարաբերությունները որակական նոր փուլ թևակոխեցին ***Հայաստանի և Ռուսաստանի*** միջև բարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության մա-

սին ***1997 թ. օգոստոսի 29-ին կնքված պարմանագրով***:

ՌԴ-ից ՀՀ առաքվում են բնական գազ, ՀԱԷԿ-ի միջուկային վառելիքը, նաև բնական ալմաստներ, որոնց մշակումը ՀՀ տնտեսության կարևոր ճյուղերից է: 2016 թ. ՀՀ-ում գործում է ռուսական կապիտալի մասնաբաժնով 1300 ընկերություն: Հայաստանի տնտեսության մեջ ՌԴ-ի ներդրումները մինչև 2011 թ. կազմել են 2,5 մլրդ դոլար: Ռուսաստանը շարունակում է մնալ Հայաստանի Հանրապետության արտաքին առևտրատնտեսական հիմնական գործընկերը: 2016 թ. տվյալներով ապրանքաշրջանառության ծավալը կազմել է ավելի քան 1 մլրդ 250 հազ. դոլար: ՀՀ տնտեսությունում կապիտալ ներդրումների 50 %-ից ավելին ռուսական ներդրումներն են:

ՌԴ նախագահ Դմիտրի Մեդվեդևը 2010 թ. օգոստոսի 19-20-ը երկրորդ պաշտոնական այցով եղավ ՀՀ-ում: Ստորագրվեց նոր պայմանագիր՝ ՀՀ-ում գտնվող ռուսական ռազմակայանի տեղակայման ժամկետը երկարացնելու, ինչպես նաև սոցիալ-տնտեսական ոլորտում համագործակցության վերաբերյալ:

Հայաստանը բարիդրացիական հարաբերություններ է հաստատել Ուկրաինայի, Բելառուսի և Մոլդովայի հետ: Միջին Ասիայում Հայաստանի արտաքին քաղաքականության գլխավոր գործընկերը Թուրքմենստանն է. հանրապետության տնտեսության կենսապահովումը կախված է նաև թուրքմենական գազի առաքումներից:

Հայաստանն առևտրատնտեսական և մշակութային բազմաթիվ համաձայնագրեր է կնքել Ղազախստանի, Ուզբեկստանի և Տաջիկստանի հետ:

2012-2015 թթ. բազմաթիվ քայլեր ձեռնարկվեցին Բելառուսի հետ հարաբերությունների հետագա խորացման ուղղությամբ: ՀՀ և Բելառուսի միջև ստորագրվեցին համաձայնագրեր առևտրատնտեսական փոխգործակցության, հումանիտար ոլորտում հարաբերությունների խորացման, ինչպես նաև երկու երկրների մարզերի միջև համագործակցության ընդլայնման ուղղությամբ:

Վերջին տարիներին հետևողական քայլեր ձեռնարկվեցին Ուկրաինայի հետ հարաբերությունների հետագա խորացման ու ընդլայնման, նոր համատեղ ծրագրերի մշակման ու դրանց իրագործման ուղղությամբ: 2014 թ. հունիսի 7-ին Ուկրաինայի հեղափոխությունից հետո նորընտիր նախագահ Պ. Պորոշենկոյի երդմնակալության արարողությանը մասնակցեց ՀՀ պատվիրակությունը: Հայաստանի կողմից քայլեր ձեռնարկվեցին Ուկրաինայի հետ հարաբերությունների հետագա զարգացման ուղղությամբ:

2011-2015 թթ. հայ-ղազախական հարաբերությունները շարունակվեցին բնականոն զարգացում ապրել: Ամրապնդվեցին նաև ՀՀ և Ղրղզստանի կապերը:

Հարաբերությունները հարևան երկրների հետ: Հատկապես

կարևոր է ***Վրաստանի*** հետ հարաբերությունների ամրապնդումը, որի տարածքով շրջափակված Հայաստանը կապվում է արտաքին աշխարհի հետ: Վրաստանը Հայաստանի համար կարևորվում է նաև այդ երկրում բնակվող մեծաթիվ վիրահայության, Ջավախքի հայության, ինչպես նաև հայկական մշակույթի բազմաթիվ հուշարձանների առկայությամբ: Գործում են շուրջ 70 համաձայնագիր ու պայմանագիր, որոնցից առանձնանում է 2001 թ. կնքված «Բարեկամության, համագործակցության և փոխադարձ անվտանգության մասին» պայմանագիրը:

2012–2015 թթ. հայ–վրացական հարաբերությունները շարունակվեցին վերընթաց զարգացում ապրել: Երկու երկրների միջև զգալիորեն աշխուժացան տարբեր մակարդակի փոխայցելություններն ու քաղաքական երկխոսությունները:

Սերտ հարաբերություններ են հաստատվել հարևան երկրի՝ ***Իրանի*** հետ: Իրանը, ինչպես Վրաստանը, զգալիորեն նպաստել և նպաստում է շրջափակված Հայաստանի իրավիճակի մեղմացմանը: Արաքսի վրա կառուցված կամուրջը հնարավորություն է տալիս աշխուժացնելու երկու երկրների տնտեսական համագործակցությունը: Իրանը Հայաստանի կարևոր առևտրային գործընկերներից է:

Հայ–իրանական հարաբերությունները շարունակում են զարգանալ փոխվստահության ու փոխըմբռնման մթնոլորտում: XXI դարասկզբի առաջին մեկուկես տասնամյակում Հայաստան—Իրան բազմաբնույթ համագործակցությունը որակապես նոր փուլ թևակոխեց: Ստորագրվել են մեկ տասնյակից ավելի փոխըմբռնման հուշագրեր և համաձայնագրեր Իրան—Հայաստան զազամուղի շինարարության, Քաջարանի թունելի կառուցման, Արաքս գետի վրա հէկ կառուցելու և շահագործելու բնագավառում սոցիալ–տնտեսական առևտրական և շինարարության ոլորտի, էներգետիկայի, կապի համակարգի, գիտակրթական ու մշակութային և այլ ոլորտների վերաբերյալ:

Հայաստանի համար շատ դրական զարգացում էր Իրանի միջուկային ծրագրի շուրջ համաձայնության ձեռքբերումը: Հարևան Իրանի նկատմամբ պատժամիջոցների վերացման հանգամանքը նոր հնարավորություններ է բացում Հայաստանի գործարարների համար: ՀՀ–ն Իրանի հետ էներգետիկ ու տրանսպորտային համատեղ ծրագրեր է իրականացնում: Կառուցվում է երկրի հյուսիսը հարավին միացնող ժամանակակից մայրուղին: 2016 թ. սկզբից հայ–իրանական կողմի հետ քննարկվում է Հայաստան—Իրան երկաթգծի շինարարության վերաբերյալ հարցերը: ՀՀ–ն ակտիվ ներգրավված է ԵԱՏՄ—«Մետաքսի ճանապարհ» համատեղ տնտեսական ծրագրերի իրականացման գործընթացում, որով փորձում է մեղմել իր արևելյան և արևմտյան հարևանների (Թուրքիայի և Ադրբեջանի) կողմից տասնամյակներ շարունակ իրականացվող ապօրինի շրջափակման վնասները:

Հայաստանի Հանրապետությունը ձգտում է սերտ, բարեկամական հարաբերություններ հաստատելու Մերձավոր և Միջին Արևելքի արաբական երկրների հետ: Եգիպտոսի, Սիրիայի, Լիբանանի հետ մի քանի տասնյակ համաձայնագրեր ու պայմանագրեր են ստորագրվել: Արաբական երկրների հետ բարեկամական կապերի ամրապնդումը նպաստում է նաև այդ երկրների հայկական համայնքների գործունեության աշխուժացմանը:

ՀՀ-ն Եվրախորհրդի անդամ: ՀՀ—Եվրամիություն փոխհարաբերությունները: Հայաստանը դիվանագիտական հարաբերություններ է հաստատել Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Ավստրիայի, Բելգիայի, Շվեյցարիայի, Իսպանիայի, Իտալիայի հետ: Ամրապնդվում են Հայաստանի տնտեսական և մշակութային կապերը Հունաստանի, Բուլղարիայի, Ռումինիայի և Հարավարևելյան Եվրոպայի մյուս երկրների հետ: Կարևորելով համագործակցության հետագա ծավալումը ԱՊՀ երկրների հետ՝ ՀՀ-ն միաժամանակ շեշտը դրել է իր արտաքին քաղաքականության ամերիկյան ու եվրոպական ուղղությունների վրա:

Հայաստանը հարաբերություններ է հաստատել նաև Կանադայի, Արգենտինայի, Ուրուգվայի, Չինաստանի, Ճապոնիայի, Հնդկաստանի և այլ երկրների հետ:

Անկախության առաջին օրերից Հայաստանը ձգտում է միասնացվելու եվրոպական կառույցներին: Այդ ուղղությամբ կատարված կարևորագույն քայլերից է ՀՀ անդամակցումը ***Եվրախորհրդին***: Եվրախորհրդին Հայաստանի Հանրապետության լիիրավ անդամակցությունը, որը տեղի ունեցավ ***2001 թ. հունվարի 25-ին***, ընդլայնեց եվրոպական երկրների հետ համագործակցության շրջանակները:

Ամուր հիմքերի վրա են դրված Հայաստանի Հանրապետության ու ***Եվրամիության*** փոխհարաբերությունները: Հայաստանի Հանրապետության ու Եվրամիության հարաբերությունների որակապես նոր փուլի սկիզբը եղավ ՀՀ-ի և ԵՄ-ի միջև գործընկերության և համագործակցության համաձայնագրի կնքումը 1996 թ., որը գործողության մեջ մտավ 1999 թ-ից: Համաձայնագիրը հնարավորություն տվեց ԵՄ-ի հետ սերտ համագործակցություն զարգացնելու քաղաքական, տնտեսական և մշակութային ոլորտներում՝ նպատակ ունենալով Հայաստանին աջակցելու շուկայական տնտեսության անցումային փուլն արագ հաղթահարելու գործում, ներդրումների միջոցով նպաստելու տնտեսության զարգացմանն ու տարբեր ոլորտների բարեփոխումներին:

Հայաստանն ընդգրկվել է ԵՄ այնպիսի կարևոր նախաձեռնության մեջ, ինչպիսին է Եվրոպական հարևանության քաղաքականությունը, որն ապագայում այդ կառույցին Հայաստանի անդամակցության իրական հնարավորություն է տալիս:

Հաջողված համագործակցություն է ծավալվել ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպու-

ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի աշխատանքային այցը ԱՄՆ

թյան, Արդյունաբերության զարգացման կազմակերպության, Եվրոպական տնտեսական հանձնաժողովի, Արժույթի միջազգային հիմնադրամի, Համաշխարհային բանկի, Եվրասիական տնտեսական ընկերակցության, ինչպես նաև Սևծովյան տնտեսական համագործակցության շրջանակներում, որտեղ ՀՀ-ի ներգրավվածությունը զգալիորեն աճել է:

Զարգացել են ***Հայաստան—ՆԱՏՕ*** հարաբերությունները: 2004 թ. փետրվարից Հայաստանի 34-հոգանոց խաղաղապահ դասակը հունական ուժերի կազմում մասնակցում է Կոսովոյում ՆԱՏՕ-ի կողմից իրականացվող խաղաղապահ գործողությանը: 2005 թ. դեկտեմբերին Հյուսիսատլանտյան խորհուրդը հաստատել է ՀՀ անհատական գործընկերության գործողությունների ծրագիրը: Ծրագիրը կարևորում է ՆԱՏՕ-ի հետ համագործակցությունը ռազմաքաղաքական, գիտական, արտակարգ իրավիճակների, քաղաքացիական պաշտպանության, խաղաղապահ գործողությունների իրականացման ոլորտներում և այլն:

XXI դարասկզբին Եվրամիության հետ հարաբերությունները շարունակում են մնալ Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության առաջնային ուղղություններից մեկը: Զարգանում և ամրապնդվում էին երկկողմ և բազմակողմ համագործակցությունն ու հարաբերությունները եվրոպական երկրների հետ: 2014 թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտավ ԵՄ-ի հետ մուտքի արտոնագրային ռեժիմի դյուրացման մասին համաձայնագիրը: 2015 թ. նախաստորագրվել է ԵՄ-ի նորարարության, «Հորիզոն 2020» և շրջանակային ծրագիրը:

Մինչև 1990-ական թվականների վերջը հայ-ֆրանսիական հարաբերություններում տնտեսական ուղղությունը շատ մեծ տեղ էր զբաղեցնում:

ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի ելույթը Ստրասբուրգում

Տնտեսական կապերը աշխուժացան՝ գագաթնակետին հասնելով 2007–2008 թթ., որին խթանեց Ֆրանսիայում Հայաստանի տարվա անցկացումը: Հետագայում սկսեցին գործել ֆրանսիական կապիտալի մասնակցությամբ բազմաթիվ ձեռնարկություններ: Արդյունքում 2011–2012 թթ. Ֆրանսիան դարձավ Հայաստանի երկրորդ գործընկերը արտաքին ներդրումների ծավալով: ՀՀ հարաբերությունները Ֆրանսիայի հետ բարձր մակարդակի վրա են և վերջին տարիներին այնպիսի վերընթաց են ունեցել, որ կարելի է բնութագրել որպես առանձնահատուկ հարաբերություններ:

Գերմանիայի Դաշնությունը Հայաստանի Հանրապետության երկրորդ և թիվ մեկ առևտրային գործընկերն է Եվրամիության երկրների շարքում: Վերջին վեց տարիների ընթացքում երկու երկրների միջև առևտրաշրջանառության ծավալները տատանվել են 350–450 մլն դոլարի սահմաններում: ՀՀ–ում գործում են մի քանի տասնյակ գերմանական կապիտալով ընկերություններ, որոնք իրենց ներդրումն են բերում մեր երկրի զարգացման գործում: Հայ–գերմանական համագործակցությունը ներառում է թե՛ բազմոլորտ երկկողմ հարաբերությունների շրջանակ, թե՛ փոխգործակցություն Հայաստան—Եվրամիություն, Հայաստան—ՆԱՏՕ և խաղաղապահ առաքելությունների շրջանակներում:

Հայ–ամերիկյան հարաբերությունները: Հայաստանի Հանրապետության և Ամերիկայի Միացյալ Նահանգների հարաբերությունների զարգացումը պայմանավորված է ոչ միայն համաշխարհային, տարածաշրջանային, ռազմաքաղաքական ու տնտեսական գործընթացներում և միջազգային հարաբերություններում ԱՄՆ–ի կարևոր դերակատարությամբ, այլև վերջինիս ազդեցիկ

հայկական համայնքի աշխույժ գործունեությամբ:

ԱՄՆ-ի և ՀՀ-ի միջև դիվանագիտական հարաբերություններ են հաստատվել ***1992 թ. հունվարի 7-ին***: Երևանում նույն թվականի փետրվարին բացվել է ԱՄՆ-ի դեսպանությունը. այն Հայաստանում բացված առաջին օտարերկրյա դեսպանությունն է:

Հարաբերությունները ԱՄՆ-ի հետ ընդգրկում են քաղաքական, տնտեսական ու մշակութային ոլորտները: Դժվարին տարիներին ԱՄՆ-ը Հայաստանին հատկացրել է մարդասիրական մեծ օգնություն:

Ժողովրդավարական զարգացմանը միտված բարեփոխումների իրականացման բնագավառում ևս ՀՀ-ն սերտորեն համագործակցում է ԱՄՆ-ի հետ:

Հայ-ամերիկյան տնտեսական հարաբերությունների զարգացման նպատակով ստորագրվել են առևտրային կապերի զարգացման, երկկողմ ներդրումների և դրանց խրախուսման ու պաշտպանության մասին համաձայնագրեր: Հայաստանում գործում են ԱՄՆ-ի սեփականություն հանդիսացող մի շարք ընկերություններ: ԱՄՆ-ը Հայաստանի երկրորդ առևտրային գործընկերն է, նրա հետ առևտուրը կազմում է Հայաստանի առևտրի ընդհանուր ծավալի 11 տոկոսը:

150-ից ավելի երկրների հետ Հայաստանի Հանրապետությունը հաստատել է դիվանագիտական հարաբերություններ, աշխարհի երեք տասնյակից ավելի երկրներում գործում են ՀՀ դեսպանությունները, ներկայացուցչություններն ու հյուպատոսությունները:

Այսպիսով՝ հանրապետության արտաքին քաղաքականությունը միտված է երկրի անվտանգության ամրապնդմանը, տնտեսական զարգացմանը և թելադրված է նրա աշխարհաքաղաքական վիճակով:

Հայ-ամերիկյան գործընկերությունը երկկողմ հարաբերությունների պատմության մեջ ամենաբարձր մակարդակի վրա է, որի մասին են վկայում նաև վերջին տարիների տարբեր մակարդակի փոխայցելությունները: Հատկապես գնահատելի է ԱՄՆ օժանդակությունը՝ ուղղված ՀՀ տնտեսական զարգացման տարբեր ոլորտներում իրականացվող բարեփոխումներին:

Այժմ էլ կարևոր է ԱՄՆ-ի դերակատարումը տարածաշրջանային անվտանգության և կայունության պահպանման գործում, հատկապես ԱՄՆ-ի ակտիվ ներգրավվածությունը ԼՂ հիմնախնդրի խաղաղ կարգավորման հարցում:

Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը: Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության գլխավոր ուղղություններից մեկը Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումն է: Այդ գործընթացը XX դարի վերջին և XXI դարի սկզբին ծավալվեց նոր ուժով: 1998 թ. ՀՀ արտաքին քաղաքականության օրակարգում հաստատուն տեղ զբաղեցրեց Հայոց ցեղասպանության միջազգային ճա-

նաչման հարցը: ՀՀ–ի մոտեցումը հստակ է. նման ոճիրը ոչ թե մի ժողովրդի ողբերգությունն է, այլ մարդկության դեմ կատարված ծանրագույն հանցանք: Դրա անպատժելիությունը խրախուսել է հետագա նման ողբերգությունները: ՀՀ–ի նման դիրքորոշումը լայն ճանաչում ու աջակցություն է ստացել տարբեր երկրների ու միջազգային կազմակերպությունների կողմից ընդունված բանաձևերում:

Եթե մինչև Հայաստանի անկախությունը Հայոց ցեղասպանությունը ճանաչել ու դատապարտել էին ընդամենը մի քանի երկրներ ու միջազգային կազմակերպություններ, ապա 1990–ական թվականներին դրանց թիվն ավելացավ: 2000 թ. նոյեմբերի 10–ին Վատիկանն իր հայտարարության մեջ Հայոց ցեղասպանությունը համարեց XX դարի հետագա բոլոր ցեղասպանությունների սկիզբը:

1990–ական թվականների երկրորդ կեսին մի շարք երկրներ, այդ թվում՝ Ռուսաստանը, Կանադան, Կիպրոսը, Հունաստանը, Բելգիան, Լիբանանը, Արգենտինան և այլք, իրենց խորհրդարանների որոշումներով ճանաչեցին ու դատապարտեցին Հայոց ցեղասպանությունը, իսկ 2000–ական թվականներին նման որոշումներ կայացրին Ֆրանսիայի, Արգենտինայի, Շվեյցարիայի, Իտալիայի, Սլովակիայի, Նիդերլանդների, Լեհաստանի, Գերմանիայի, Լիտվայի, Վենեսուելայի, Չիլիի, Շվեդիայի խորհրդարանները: Մի քանի երկրներում Հայոց ցեղասպանության ճանաչումը օրենքի ուժ ստացավ:

Ցեղասպանությունը ճանաչած և դատապարտած պետությունների թիվը շուրջ 2,5 տասնյակ է: Այն ճանաչել են նաև ԱՄՆ–ի 4 տասնյակից ավելի նահանգները և տարբեր քաղաքների քաղաքապետարանները: ԱՄՆ Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովը 2010 թ. մարտին, ինչպես որ 2000 թ., 2005 թ. և 2007 թ., ընդունել է Հայոց ցեղասպանությունը ճանաչող բանաձևը, սակայն Կոնգրեսը, Սենատը, քաղաքական խնդիրներից ելնելով, վճռականություն չեն ցուցաբերել և ճանաչման որոշում չեն կայացրել:

Նախկինում Հայոց ցեղասպանությունը ճանաչելու գործընթացում ակնհայտ էր տվյալ երկրի հայ համայնքի ազդեցության հանգամանքը: Լիտվայի, Սլովակիայի ճանաչումից հետո սկսվել է մի փուլ, երբ Հայոց ցեղասպանությունը ճանաչում են այնպիսի երկրներ, որտեղ հայ համայնքը գրեթե բացակայում է: Պետությունները հետևում են մարդկության դեմ գործված ծանրագույն հանցագործությունը դատապարտելու առաջադեմ մոտեցմանը:

Հայոց ցեղասպանության ճանաչման անհրաժեշտությունն ավելի հստակեցվում է Եվրամիությանը Թուրքիայի լիիրավ անդամակցության գործընթացում՝ որպես «սեփական պատմության հետ հաշտվելու» պահանջ: Այս դրույթն ամրագրվել է 2005 թ. սեպտեմբերի 28–ին Եվրախորհրդի «Թուրքիայի առաջընթացի զեկույցում», որտեղ հստակ նշվում է,

Հրանտ Դինքի թաղման թափորը. հունվարի 23, 2007 թ.

թե «որպես ԵՄ լիիրավ անդամակցության նախապայման»՝ Թուրքիան պետք է ճանաչի Հայոց ցեղասպանության փաստը:

Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը որոշակի ազդեցություն ունեցավ նաև Թուրքիայում հասարակական կարծիքի փոփոխման վրա: Այդ հարցը դադարեց «տաբու»՝ արգելված թեմա լինելուց այդ երկրում և դարձավ ամենաքննարկվող հիմնահարցերից մեկը, սերտորեն կապվեց Թուրքիայի ընդհանուր ժողովրդավարացման գործընթացի հետ: ***2007 թ. հունվարի 19-ին*** Ստամբուլում ահաբեկչության զոհ դարձավ «Ակոս» թերթի խմբագիր, հայտնի հասարակական գործիչ ***Հրանտ Դինքը***: Նրա թաղման արարողությունը վերածվեց բազմահազարանոց ցույցի: Կատարվածը մեծ ազդեցություն ունեցավ թե՛ Թուրքիայի, թե՛ միջազգային հասարակական կարծիքի վրա: Թուրք հանրության առաջադեմ ներկայացուցիչները փողոց դուրս եկան «Մենք հայ ենք», «Մենք Հրանտ Դինքն ենք» կարգախոսներով:

Սակայն պաշտոնական Թուրքիան շարունակում է Հայոց ցեղասպանության ժխտողական քաղաքականությունը: Թուրքիայի կառավարությունը Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման դեմ պայքարը հոչակել է երկրի արտաքին քաղաքականության կարևորագույն ուղղություններից մեկը: Թուրքերը նյութական և մարդկային մեծ միջոցներ են ծախսում ԱՄՆ-ում և Հայոց ցեղասպանությունը չճանաչած այլ երկրներում այդ գործընթացը կասեցնելու համար:

Թուրքիան մինչև օրս չի բացել ՀՀ-ի հետ պետական սահմանը, որ փակել էր ղարաբաղա-ադրբեջանական պատերազմի օրերին՝ 1993 թ. ապրիլին: Հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման ուղղությամբ քայլեր ձեռնարկեց ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը՝ Թուրքիայի նախագահ Աբդուլահ Գյուլին 2008 թ. սեպտեմբերի 6-ին հրավիրելով Հայաստանի և Թուրքիայի ֆուտբոլային հավաքականների հանդիպմանը: ՀՀ նախագահի նախաձեռնությունը միջազգային հանրության կողմից անվանվեց «ֆուտբոլային դիվանագիտություն»: Աշխարհի շատ երկրներում հետաքրքրությամբ հետևում էին, թե այդ «ֆուտբոլային դիվանագիտությունն» ինչ արդյունք է տալու:

2009 թ. հոկտեմբերի 10-ին Յուրիխում Հայաստանի Հանրապետու-

թյան և Թուրքիայի միջև ստորագրվեցին «Երկկողմ դիվանագիտական հարաբերությունների հաստատման և զարգացման մասին» արձանագրությունները: Դրանցով նախատեսվում էր բացել երկու երկրների սահմանը և կարգավորել միջպետական հարաբերությունները: Արձանագրություններն ուժի մեջ պետք է մտնեին միայն երկու երկրների խորհրդարանների կողմից վավերացվելուց հետո: Թուրքիայի խորհրդարանն անհարկի ձգձգումներով չէր վավերացնում արձանագրությունները, իսկ երկրի ղեկավարները հանդես էին գալիս նախապայմանների մասին հայտարարություններով: Ելնելով իրավիճակից՝ ՀՀ նախագահը 2010 թ. ապրիլի 22-ի հրամանագրով կասեցրեց արձանագրությունների վավերացման գործընթացը: Հիմնական պատճառն այն էր, որ թուրքական կողմը հրաժարվում էր առանց նախապայմանների, խելամիտ ժամկետում արձանագրությունները վավերացնելու պարտավորությունից՝ խնդիրը կապելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն—Ադրբեջան հակամարտության հետ: 2015 թ. փետրվարին ՀՀ—Թուրքիա հարաբերությունների արձանագրությունը ՀՀ նախագահը հետ կանչեց Ազգային ժողովից:

Այսօր Թուրքիայի իշխանությունները ավելի ագրեսիվ կեցվածք են որդեգրել, սակայն թուրքական հասարակությունը ավելի շատ է խոսում Հայոց ցեղասպանության մասին: Թուրքիայում մտավորականության մի սերունդ է աճում, որն ի վերջո սե-

Ռուսաստանի, Հայաստանի և Ադրբեջանի նախագահների հանդիպումը Սոչիում 2011 թ. մարտի 5-ին

փական իշխանություններին պարտադրելու է ասել ճշմարտությունը:

Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումներն ամբողջ աշխարհում անցկացվեցին «Հիշում եմ և պահանջում» կարգախոսի ներքո: Այդ միջոցառումների ամենակարևոր հենասյուներից մեկը դարձավ ՀՀ ձգտումը՝ իր ներդրումն ունենալու ցեղասպանության՝ իբրև հանցագործության դեմ միջազգային պայքարի գործում: 2015 թ. ապրիլին Երևանում կայացավ ընդդեմ ցեղասպանության հանցագործության գլոբալ միջազգային ֆորումը, որտեղ ՀՀ-ն ստանձնեց ցեղասպանության՝ իբրև մարդկության դեմ կատարված հանցագործության պայքարի առաջատար դերը:

Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործում չափազանց մեծ կարևորություն ուներ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին օսմանյան կայսրության դաշնակից Գերմանիայի Դաշնության կողմից 2016 թ. հունիսի 2-ին Բուն-

դեսթազի ընդունած բանաձևը, որտեղ ոչ միայն դատապարտվում է Հայոց ցեղասպանությունն իբրև XX դարի առաջին ցեղասպանություն, այլև ընդունվում է Գերմանիայի մեղսակցությունը այդ ցեղասպանության մեջ: Այս խնդիրը կարևորվում է այն տեսակետից, որ Հայոց ցեղասպանությունն ընդունում և դատապարտում է մի երկիր, որն ամենամեծ մեղսակցությունն է ունեցել և Թուրքիայի դաշնակիցն է եղել Առաջին աշխարհամարտի ժամանակ:

Ցեղասպանությունն իրականացնողների կամ նրանց ժառանգների կողմից ժխտողականության ալիքը ամենամեծ հարվածն է վերապրածների համար: Ինչպես իրավացիորեն ասել է Հոլոքոստը վերապրած Նոբելյան մրցանակակիր Էլի Վիզելը. «Ժխտել նշանակում է սպանել զոհերին երկրորդ անգամ»:

Այսօր աշխարհը ճանաչում և դատապարտում է այդ ոճիրը, սակայն չափազանց կարևոր է Թուրքիայի կողմից ճանաչումը և սեփական պատմությանն առերեսվելը:

Հեռանկարում հարցը միջազգային ատյաններում բարձրացնելու համար պետք է միջազգային իրավունքում ամրագրել ցեղասպանության ճանապարհով հայ ժողովրդին հայրենազրկելու համար նախատեսված պատասխանատվությունը: Դրանով է Հայոց ցեղասպանությունը տարբերվում բոլոր համանման ոճիրներից, որովհետև թուրքական կառավարությունն այն իրականացրել է հայերին հայրենազրկելու նպատակով: Այսօր *ճանաչում* և *դատապարտում* պահանջներին պետք է ավելացվի հետևանքների վերացումը:

2015 թ. հունվարի 29-ին տեղի ունեցավ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումները համակարգող պետական հանձնաժողովի 5-րդ նիստը, որտեղ առաջին անգամ ընդունվեց համազգային նշանակության մի փաստաթուղթ՝ «Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի համահայկական հռչակագիրը»: Փաստաթուղթը բացառիկ է իր ձևով ու բովանդակությամբ, քանզի կազմվել է հայ ժողովրդին ներկայացնող բոլոր հիմնական կառույցների ներգրավմամբ:

Փաստաթղթում ոչ միայն մատնանշվում են Հայոց ցեղասպանության ճանաչման, դատապարտման ու պահանջատիրության պատմական ու իրավական հիմքերը, այլև ուղիներն ու սպասելիքները, պատգամները ապագա սերունդներին:

Հայոց ցեղասպանության միջազգայնացման գործընթացին մեծապես նպաստեց 2015 թ. ապրիլի 12-ին Վատիկանի Սուրբ Պետրոսի տաճարում Հռոմի պապ Ֆրանցիսկոսի կողմից Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված աղոթքի՝ պատարագի ժամանակ ասված խոսքը: Հռոմի պապը հայերի զանգվածային սպանությունները բնութագրեց «որպես 20-րդ դարի առաջին ցեղասպանություն» և այն համարեց մարդկության դեմ կատարված հանցագործություն: «Զարիք թաքցնելը կամ ժխտելը հավասարազոր է արյու-

նահոսող վերքն առանց վիրակապի թողնելուն»,— ասել է պապը՝ առաջացնելով ժամանակակից Թուրքիայի հանրապետության զայրույթը, որի կառավարությունը երկար ժամանակ շարունակում է պնդել, որ իր նախնիները զբաղված էին ոչ թե ցեղասպանությամբ, այլ ծանր կռիվներով:

1915 թ. ապրիլի 22–23–ին Հայոց ցեղասպանության 100–րդ տարելիցի միջոցառումների շրջանակում Երևանում անցկացվեց «Ընդդեմ ցեղասպանության հանցագործության» գլոբալ հասարակական–քաղաքական միջազգային ֆորումը, որին մասնակցում էին ավելի քան 600 խորհրդարանականներ, քաղաքական գործիչներ, դիվանագետներ, գիտնականներ, ականավոր ցեղասպանագետներ 5 տասնյակ երկրներից: Ֆորումը ընդունեց հռչակագիր, որտեղ ընդգծվում էր, որ «ցեղասպանությունը անդառնալի հետևանք ունեցող ծանրագույն հանցագործություն է, և բոլոր պետություններին կոչ էր արվում աջակցելու ցեղասպանության կանխարգելման մեխանիզմների ամրապնդմանը»: Ֆորումը ողջունում էր ՄԱԿ–ի Մարդու իրավունքների խորհրդում 2015 թ. մարտի 27–ին «Ցեղասպանության կանխարգելում» բանաձևի ընդունումը, միաժամանակ ճանաչում էր, որ ժխտողականությունը, հատկապես պետական մակարդակով, անընդունելի է, և ընդգծում էր, որ ցեղասպանությունների անհապաղ դատապարտումն ու դրանց հետևանքներին արդյունավետորեն անդրադառնալն ի զորու են ծառայելու որպես կանխարգելման և հաշտեցման կարևոր միջոցներ:

Առանձնակի հանդիսավորությամբ նշվեց Հայոց ցեղասպանության 100–ամյա տարելիցը: Ապրիլի 24–ին ավելի քան 60 երկրների և միջազգային տասնյակ կառույցների պատվիրակություններ Հայաստանի, Ռուսաստանի, Ֆրանսիայի, Սերբիայի ու Կիպրոսի նախագահների հետ մասնակցեցին Ծիծեռնակաբերդում տեղի ունեցած միջազգային մեծ ծավալի արարողությանը: Նման մեծ ու հանդիսավոր միջոցառում Հայաստանում երբեք չէր եղել: Ապրիլքսանչորսյան գլխավոր միջոցառման հանդիսավոր անցկացումն անշուշտ նպաստեց Հայոց ցեղասպանության միջազգայնացման գործընթացի նոր ուժով ծավալմանը:

«Ընդդեմ ցեղասպանության հանցագործության» երկրորդ գլոբալ համաժողովը՝ «Ցեղասպանության վերապրած վկաները» խորագրով, տեղի ունեցավ 2016 թ. ապրիլի 23–ին: Ֆորումի ավարտին ընդունվեց հայտարարություն, որտեղ վերհանված էին ցեղասպանությունների կանխարգելման առկա հիմնախնդիրները, մշակված էին դրանց լուծման ուղիները և կոչված էին համախմբելու քաղաքակիրթ մարդկության ներուժը՝ 21–րդ դարում մարդկության դեմ հանցագործությունների նկատմամբ վճռական հաղթանակ տանելու նպատակով ցեղասպանության անթույլատրելիության մասին բացարձակ գիտակցություն արմատավորել մարդկության մեջ՝ նմանօրինակ

աղետներից պաշտպանվելու համար: Ֆորումից հետո մեկնարկեցին «100 կյանք» նախաձեռնությունը և «Ավրորա» մրցանակաբաշխությունը Հայոց ցեղասպանությունը վերապրածների անունից և ի երախտագիտություն նրանց, ովքեր այդ դժվարին օրերին փրկության ձեռք մեկնեցին հայ ժողովրդին:

Սկիզբ է դրվել գործընթացի մի նոր փուլի, երբ ցեղասպանության միջազգային ճանաչման խնդիրը քաղաքական դաշտից տեղափոխվում է միջազգային իրավունքի, պահանջատիրության դաշտ, ընդ որում՝ փոխհատուցումը կարող է լինել քաղաքական, տնտեսական, նաև տարածքային:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ո՞րն էր ՀՀ արտաքին քաղաքականության հիմնական խնդիրն անկախացումից հետո: Ներկայացրեք ՀՀ միջազգային ճանաչման գործընթացը: Ինչո՞ւ Թուրքիայի հետ դիվանագիտական հարաբերություններ չհաստատվեցին:
2. Ո՞ր բնագավառներում են համագործակցում ՀՀ-ն և ՌԴ-ն: Ի՞նչ հարաբերություններ ունի ՀՀ-ն ԱՊՀ մյուս պետությունների, Իրանի, եվրոպական և արաբական երկրների հետ:
3. Ներկայացրեք ՀՀ-ի՝ եվրոպական միասնացմանն ուղղված քայլերը, Եվրամիության հետ փոխհարաբերությունները, տնտեսական միասնացման գործընթացը: Ձեր կարծիքով ի՞նչ կտա մեր երկրին Եվրոպական հարևանության քաղաքականության մեջ ընդգրկվելը:
4. Համառոտ ներկայացրեք հայ-ամերիկյան հարաբերությունների անցած ճանապարհը: Ի՞նչ ոլորտներ է ընդգրկում այդ համագործակցությունը: Ընդհանուր գծերով ներկայացրեք ՀՀ արտաքին քաղաքականության հիմնական միտումները:
5. Ձեր կարծիքով ինչո՞ւ է կարևորվում Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման հարցը: Աղյուսակով ներկայացրեք Հայոց ցեղասպանությունը ճանաչած և դատապարտած երկրներն ու կազմակերպությունները: Ինչո՞ւ է Թուրքիան շարունակում Հայոց ցեղասպանությունը ժխտելու քաղաքական ուղեգիծը:
6. Ներկայացրեք Հայոց մեծ եղեռնի 100-րդ տարելիցի հետ կապված կարևոր միջոցառումները: Ի՞նչ նշանակություն ունեցան դրանք: Ո՞րն է հայության գլխավոր խնդիրն այդ ուղղությամբ մոտակա ժամանակաշրջանում:
7. Ձեր կարծիքով հնարավո՞ր է Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումը. դա ի՞նչ հետևանքներ կունենա:

ԼՐԱՏՈՒՏԻՉ ՆՅՈՒԹ

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ 100-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀՈՒՇԱԿԱԳԻՐԸ

Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումները համակարգող պետական հանձնաժողովը, համախորհուրդ Սփյուռքում գործող տարածաշրջանային հանձնախմբերի հետ՝

- արտահայտելով հայ ժողովրդի միասնական կամքը,
- հենվելով 1990 թվականի օգոստոսի 23-ի՝ Հայաստանի անկախության մասին հռչակագրի և Հայաստանի Հանրապետության Սահմանադրության վրա,
- վկայակոչելով ՄԱԿ-ի 1948 թվականի դեկտեմբերի 10-ի՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, որի համաձայն՝ «մարդկության ընտանիքի բոլոր անդամներին հատուկ արժանապատվության և հավասար ու անօտարելի իրավունքների ճանաչումն աշխարհի ազատության, արդարության և խաղաղության հիմքն է»,
- ղեկավարվելով ՄԱԿ-ի գլխավոր վեհաժողովի 1946 թվականի դեկտեմբերի 11-ի 96 (1) բանաձևի, 1948 թվականի դեկտեմբերի 9-ի «Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի, 1968 թվականի նոյեմբերի 26-ի «Պատերազմական հանցագործությունների և մարդկության դեմ ուղղված հանցագործությունների նկատմամբ վաղեմության ժամկետ չկիրառելու մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի, ինչպես նաև 1966 թվականի դեկտեմբերի 16-ի «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի և մարդու իրավունքների վերաբերյալ բոլոր այլ միջազգային ակտերի համապատասխան սկզբունքներով և դրույթներով,
- հաշվի առնելով, որ «Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին» կոնվենցիան ընդունելիս ՄԱԿ-ը հատուկ կարևորել է այդ հանցատեսակի դեմ պայքարում միջազգային համագործակցությունը,
- շեշտելով ցեղասպանության հանցակազմում պարունակվող արարքների համար անպատիժ մնալու անթույլատրելիությունն ու այդ հանցագործության վաղեմության ժամկետ չունենալու հանգամանքը,
- դատապարտելով 1894-1923 թվականների Օսմանյան կայսրության և Թուրքիայի տարբեր վարչակարգերի կողմից ծրագրված ու հայ ժողովրդի դեմ շարունակաբար իրականացված ցեղասպանական քայլերը, հայրենազրկումը, հայության ոչնչացմանն ուղղված զանգվածային կոտորածները, էթնիկ զտումները, հայկական ժառանգության ոչնչացումը, ինչպես նաև ցեղասպանության ժխտումը, պատասխանատվությունից խուսափելու, կատարված հանցագործություններն ու դրանց հետևանքները լռության մատնելու կամ արդարացնելու բոլոր փորձերը՝ որպես հանցագործության շարունակություն և նոր ցեղասպանություններ իրականացնելու քաջալերանք,
- համարելով նաև 1919-1921 թվականներին Օսմանյան ռազմական արտակարգ ատյանների կողմից «Իրավական և մարդկային օրենքների դեմ» այդ ծանր ոճրի ուղղությամբ կայացված դատավճիռները եղելության իրավական գնահատականը,
- արժևորելով 1915 թվականին միջազգային հանրության կողմից Անտանտի պետությունների մայիսի 24-ի համատեղ հռչակագրով հայ ժողովրդի դեմ իրականացված ծանրագույն հանցագործությունը պատմության մեջ առաջին անգամ որպես «մարդկության և քաղաքակրթության

դեմ իրականացված հանցագործություն» որակումը և օսմանյան իշխանություններին պատասխանատվության կանչելու հանգամանքի շեշտադրումը, ինչպես նաև 1920 թվականի օգոստոսի 10–ի Սևրի հաշտության պայմանագրի և 1920 թվականի նոյեմբերի 22–ի ԱՄՆ–ի նախագահ Վուդրո Վիլսոնի Իրավարար վճռի դերը և նշանակությունը Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հարցում.

1. Ոգեկոչում է Հայոց ցեղասպանության մեկուկես միլիոն անմեղ զոհերի հիշատակը և երախտագիտությամբ խոնարհվում կյանքի ու մարդկային արժանապատվության համար պայքար մղած նահատակ և վերապրած հերոսների առջև:

2. Վերահաստատում է Հայաստանի և հայ ժողովրդի հանձնառությունը՝ շարունակելու միջազգային պայքարը ցեղասպանությունների կանխարգելման, ցեղասպանության ենթարկված ժողովուրդների իրավունքների վերականգնման և պատմական արդարության հաստատման համար:

3. Շնորհակալություն է հայտնում այն պետություններին, միջազգային, կրոնական և հասարակական կազմակերպություններին, որոնք քաղաքական խիզախություն ունեցան ճանաչելու և դատապարտելու Հայոց ցեղասպանությունը՝ որպես մարդկության դեմ ուղղված սոսկալի ոճրագործություն, և այսօր էլ շարունակում են այդ ուղղությամբ իրավական քայլեր ձեռնարկել, նաև կանխել ժխտողականության վտանգավոր դրսևորումները:

4. Երախտագիտություն է հայտնում այն ազգերին, կառույցներին և անհատներին, որոնք, հաճախ իրենց վտանգելով, մարդասիրական տարաբնույթ օգնություն ցուցաբերեցին, փրկեցին լիակատար ոչնչացման վտանգի առջև կանգնած բազմաթիվ հայերի, ապահով և խաղաղ պայմաններ ստեղծեցին ցեղասպանություն վերապրած հայության համար՝ մեծ թափ հաղորդելով որբահնամ գործունեությանը և միջազգային հայասիրական շարժմանը:

5. Դիմում է ՄԱԿ–ի անդամ պետություններին, միջազգային կազմակերպություններին, բարի կամքի տեր բոլոր մարդկանց՝ անկախ ազգային և կրոնական պատկանելությունից, միավորել իրենց ջանքերը պատմական արդարությունը վերականգնելու և Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը հարգելու համար:

6. Արտահայտում է Հայաստանի և հայ ժողովրդի միասնական կամքը Հայոց ցեղասպանության փաստի համաշխարհային ճանաչման հասնելու և ցեղասպանության հետևանքների հաղթահարման հարցում, ինչի համար մշակում է իրավական պահանջների թղթածրար՝ դիտելով այն անհատական, համայնքային և համազգային իրավունքների և օրինական շահերի վերականգման գործընթացի մեկնարկ:

7. Դատապարտում է Թուրքիայի Հանրապետության կողմից Հայաստանի Հանրապետության ապօրինի շրջափակումը, միջազգային հարթակներում ցուցաբերվող հակահայկական կեցվածքը և միջպետական հարաբերությունների կարգավորման համար նախապայմանների առաջադրումը՝ դրանք գնահատելով որպես Հայոց ցեղասպանության, Մեծ եղեռնի մինչ օրս անպատիժ մնալու հետևանք:

8. Կոչ է անում Թուրքիայի Հանրապետությանը՝ ճանաչել և դատապարտել Օսմանյան կայսրության կողմից իրականացված Հայոց ցեղասպանությունը և մարդկության դեմ իրագործված այդ սոսկալի ոճրի զոհերի հիշատակը ոգեկոչելու միջոցով առերեսվել սեփական պատմության ու հիշողության հետ՝ հրաժարվելով կեղծարարության, անհերքելի իրողության ժխտման և հարաբերականացման քաղաքականությունից: Ջորակցում է Թուրքիայի քաղաքացիական

հասարակության այն հատվածին, որի ներկայացուցիչներն այսօր արդեն համարձակություն են դրսևորում այդ հարցում՝ ի հակադրություն իշխանությունների պաշտոնական դիրքորոշման:

9. Հույս է հայտնում, որ Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումը և դատապարտումը կարևոր մեկնակետ կդառնան հայ և թուրք ժողովուրդների պատմական հաշտեցման գործընթացի համար:

10. Հպարտությամբ է արձանագրում, որ ցեղասպանությունից վերապրած հայ ժողովուրդը վերջին հարյուրամյակի ընթացքում՝

– դրսևորեց անկոտրում կամք ու ազգային ինքնագիտակցություն, վերականգնեց դարեր առաջ կորցրած ինքնիշխան պետականությունը,

– պահպանեց և զարգացրեց ազգային արժեքները, հասավ ազգային մշակույթի, գիտության և կրթության վերածննդի՝ ուրույն ներդրում ունենալով համաշխարհային ժառանգության զարգացման գործում,

– ստեղծեց հայկական Սփյուռքի հոգևոր և աշխարհիկ կառույցների հզոր և արդյունավետ ցանց, ինչը նպաստեց աշխարհասփյուռ հայ համայնքներում հայապահպանության, հայի՝ հարգանք և համակրանք վայելող կերպարի կերտմանը, հայ ժողովրդի արդար իրավունքների պաշտպանությանը,

– համազգային գործակցության և հայրենադարձության ընդարձակ ծրագրով համախմբեց և վերստեղծեց ցեղասպանության հետևանքով վերացման վտանգի առջև հայտնված ազգային գենոֆոնդը,

– Առաջին և Երկրորդ աշխարհամարտերում բերեց իր արժանի ներդրումը միջազգային անվտանգության և խաղաղության հաստատման գործում, փառավոր հաղթանակներ տարավ Սարդարապատի և արցախյան հերոսամարտերում:

11. Դիտարկում է Հայոց ցեղասպանության 100–րդ տարելիցը որպես կարևոր հանգրվան պատմական արդարության համար մղվող պայքարը «Հիշում եմ և պահանջում» կարգախոսով շարունակելու գործընթացում:

12. Կոչ է անում հայորդիների գալիք սերունդներին՝ հայրենասեր, գիտակից և ուսյալ կեցվածքով պաշտպան կանգնելու հայրենի սրբազան ժառանգությանը, աննահանջ պայքարով ծառայելու հանուն՝

– առավել հզոր հայրենիքի՝ ազատ և ժողովրդավար Հայաստանի Հանրապետության,

– անկախ Արցախի առաջընթացի ու զորացման,

– աշխարհասփյուռ հայության գործուն համախմբման,

– համայն հայության դարավոր նվիրական նպատակների իրականացման:

29 հունվարի, 2015 թ., ք. Երևան

ԳԼՈՒԽ 2. ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

§ 1–2. ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀՌՉԱԿՈՒՄԸ: ԱՐՑԱԽՅԱՆ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Անկախության հռչակումը և պետականության ձևավորումը: Սոցիալ-տնտեսական ծանր կացության մեջ հայտնված Հայաստանի Հանրապետությունն իր ունեցած բոլոր հնարավոր միջոցներով օգնում էր Արցախին Ադրբեջանի դեմ մղվող ազատագրական պայքարում:

Օգտվելով ԽՍՀՄ ղեկավարության բացարձակ աջակցությունից՝ ադրբեջանական իշխանությունները շարունակում էին զավթել հայկական գյուղերը և բնակիչներին արտաքսել իրենց բուն հայրենիքից: ***1991 թ. ապրիլ–մայիս*** ամիսներին ադրբեջանական միլիցիայի հատուկ նշանակության ջոկատները (ռուսերեն՝ ՕՄՕՀ) խորհրդային բանակի աջակցությամբ բացահայտ պատերազմ սկսեցին Շահումյանի շրջանի և Գետաշենի ենթաշրջանի հայ բնակչության դեմ:

Փաստորեն ***1991 թ. մայիսին Ադրբեջանի կողմից հրահրվեց ղարաբաղա-ադրբեջանական պատերազմ:***

1991 թ. հուլիսին ստեղծվեցին ինքնապաշտպանության ընդհատակյա կոմիտե և ինքնապաշտպանական ուժերի շտաբ: Մարզի բոլոր շրջաններում կազմակերպվեցին զինված ջոկատներ: Հետագայում՝ 1992 թ. փետրվարին, ԼՂՀ Գերագույն խորհուրդը հատուկ որոշում ընդունեց ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերի մասին, որով բոլոր զինված ջոկատները կոչվեցին ԼՂՀ ինքնապաշտպանական ուժեր և համախմբվեցին մեկ միասնական հրամանատարության ներքո: Այդ ուժերի հրամանատար նշանակվեց գնդապետ ***Արկադի Տեր-Թադևոսյանը (Կոմանդոսը)***: Կազմակերպվեց նաև ԼՂՀ պաշտպանության խորհուրդ՝ ***Արթուր Մկրտչյանի*** նախագահությամբ:

1991 թ. օգոստոսի 30-ին Բաքվում տեղի ունեցած՝ Ադրբեջանի Գերագույն խորհրդի արտահերթ նստաշրջանն ընդունեց անկախության վերականգնման մասին հռչակագիրը: Դա նշանակում էր, որ Ադրբեջանը դուրս էր գալիս ԽՍՀՄ կազմից: Հռչակագրում ասված էր, որ Ադրբեջանի Հանրապետությունն ընդգրկված է լինելու 1918–1920 թթ. մուսավաթական Ադրբեջանի Հանրապետության սահմաններում: Փաստորեն Բաքուն հրաժարվեց Խորհրդային Ադրբեջանի իրավահաջորդը լինելուց: Դա նշանակում էր, որ նրա կազմում չէին կարող լինել ոչ Նախիջևանը, ոչ Լեռնային Ղարաբաղը: Բացի այդ՝ 1991 թ. հոկտեմբերի 18-ի Անկախության մասին սահմանադրական ակտով Ադրբեջանը անվավեր ճանաչեց իրեն վերաբերող Սովետական Միության գոյության ժամանակ ընդունված ակտերը: Դրանով իսկ Ադրբեջանը անվավեր ճանաչեց նաև բոլոր ակտերը, որոնք

վերաբերում էին Լեռնային Ղարաբաղին:

1991 թ. սեպտեմբերի 2-ին Ստեփանակերտում տեղի ունեցավ Լեռնային Ղարաբաղի պատգամավորների մարզային և Շահումյանի շրջանային խորհուրդների համատեղ նստաշրջանը: Ընդունվեց ***«Հռչակագիր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակման մասին»*** որոշում: Նախկին ԼՂԻՄ-ի և Շահումյանի շրջանի տարածքում հռչակվեց անկախ հայկական պետություն՝ ***Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը (ԼՂՀ)***:

Անգամ պատերազմը և Ադրբեջանի հակահայկական գործողությունները չկարողացան ազդել հանրաքվեի վրա: Նույն թվականի ***դեկտեմբերի 10-ին*** տեղի ունեցավ անկախության հանրաքվե, որը հաստատեց Լեռնային Ղարաբաղի անկախությունը: Այդ օրը, չնայած պատերազմական դժվարին վիճակին, ԼՂՀ-ի բնակչության ձայնի իրավունք ունեցողների 80 %-ը մասնակցեց հանրաքվեին, իսկ քվեարկողների 99 %-ից ավելին ձայն տվեց անկախության օգտին: Հանրաքվեն անցկացվեց միջազգային դիտորդների ներկայությամբ և միջազգային իրավունքի ու ժողովրդավարության սկզբունքների պահպանմամբ: Անկախության հռչակումից հետո սկսվեց ԼՂՀ իշխանության մարմինների կազմավորումը:

1991 թ. դեկտեմբերի 28-ին տեղի ունեցան բարձրագույն օրենսդիր մարմնի՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Գերագույն խորհրդի (հետագայում՝ Ազգային ժողով) պատգամավորների ընտրություններ:

Արթուր Մկրտչյան

1992 թ. հունվարի 8-ին ԼՂՀ Գերագույն խորհրդի բարձրագույն օրենսդիր մարմնի առաջին նախագահ ընտրվեց 33-ամյա պատմաբան ***Արթուր Մկրտչյանը***: Հետագայում ԼՂՀ Ազգային ժողովի բոլոր ընտրությունները տեղի են ունեցել իրավական և ժողովրդավարական պետությանը բնորոշ ընթացակարգով: Ստեղծվեց Բարձրագույն գործադիր մարմինը՝ ԼՂՀ նախարարների խորհուրդը (հետո՝ կառավարություն)՝ Օլեգ Եսայանի վարչապետությամբ: Հետագայում ԼՂՀ-ում մտցվեց նախագահական կառավարում: 1994 թ. դեկտեմբերին ԼՂՀ Գերագույն խորհրդի կողմից Ռ. Քոչարյանը ընտրվեց հանրապետության նախագահ, իսկ 1996 թ. նոյեմբերից պաշտոնավարեց համաժողովրդական ընտրությամբ:

1992 թ. հունիսի 2-ին ԼՂՀ Գերագույն խորհուրդը հաստատեց պետական դրոշը, իսկ նոյեմբերի 17-ին՝ երկրի զինանշանն ու օրհներգը: ԼՂՀ դրոշը եռագույն է՝ կարմիր, կապույտ,

ԱՐՑԱԽՅԱՆ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ (1988–1994 ԹԹ.)


ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ
Պետությունների սահմանները
Նախկին ԼՂՄՍ սահմանները
Բաղձահավաքաման ցույցերը և սաստկությունը
Լեռնային հարությունի ՂեմԱԿ-ին վերանվանելու արարողության պահանջի
Արցեթավանան ԽՍՀ քաղաքներ, ուր 1988–1990 թթ. տեղի են ունեցել հայկական ջարդեր
Արցեթավանից հայ բնակչության բռնագաղթի հիմնական ուղղությունները
1991.20.02
Լեռնային Ղարաբաղի Ռազմաքաղաքական հոլովակը
Արցեթավանան բանակի ագրեսիան ԼՂՀ-ի դեմ և պատերազմը (1991–1994 թթ.)
Արցախի ազատ հանրապետությունները
Արցեթավանան բանակի հեծանիվների ոչնչացումներ
ԿԱՍՊԻՑ ԾՈՎ
Սևանա լիճ
Սևանի
Սևանա լիճ
Սևանի
Սևանի
Սևանի

նարնջագույն՝ սպիտակ գույնի հնգատամ սանդղանման զարդանախշով: ԼՂՀ պետական զինանշանի կենտրոնում՝ ԼՂՀ պետական դրոշի և Քիրս լեռան պատկերի ֆոնին, «Մենք ենք, մեր սարերը» հուշարձանի պատկերն է: Վերևի կիսաշրջանում կա հայերեն մակագրություն՝ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն՝ Արցախ»:

ԼՂՀ պետական իշխանության ձևավորումը նպաստավոր պայմաններ ստեղծեց արցախյան շարժման հաջող ընթացքի և ավարտի, ինչպես նաև պատերազմական գործողություններին վերջ տալու համար: Աստիճանաբար կազմավորվեց դատական համակարգը՝ Հայաստանի Հանրապետության օրինակով:

Մարտերի բովում կազմավորվեց ԼՂՀ բանակը, որն ազատագրական պայքարում իրեն պսակեց հաղթանակների փառքով:

Առաջնային համարվեց ղարաբաղյան հակամարտության գոտում խաղաղ բանակցությունների գործընթացը: Սակայն ադրբեջանցիներն իրենց ռազմակայաններից սկսեցին անընդհատ ռմբակոծել Արցախի բնակավայրերը: Խոջալուից, Շուշիից և Աղդամից ամեն օր ռմբակոծում էին Ստեփանակերտը՝ ավերածություններ և բազում մարդկային զոհեր պատճառելով: Առանց հակառակորդի ռազմական հենակետերի վերացման հնարավոր չէր ապահովել բնակչության անվտանգությունը:

Արցախյան ազատագրական պատերազմի ծավալումը: ԼՂՀ անկախության հռչակումից հետո հանրապետությունում գործող քաղաքական ուժերը ձեռնամուխ եղան պետականության կայացման գործընթացին:

1991 թ. սեպտեմբերին դրվեց ազգային բանակի ստեղծման հիմնաքարը: Ու սկսեց գրվել մարտական փայլուն կենսագրություն, որի առաջին էջը դարձավ Ստեփանակերտը շրջապատող կրակակետերի վերացման ռազմական գործողությունների հաջող իրականացումը:

1992 թ. հունվարի 11-ին հայ մարտական ուժերը լուրջ հարված հասցրին Մալիբեյլուին և Ղուշչուլարին, որտեղի կրակակետերից ոչ միայն Ստեփանակերտն էին ռմբակոծում, այլև Ասկերանի շրջանի մի շարք գյուղեր: Ստեփանակերտը ռմբակոծվում էր հատկապես Կրկժան թաղամասից, որտեղի կրակակետը լռեցնելու համար կենտրոնացվեցին մի քանի կամավորական ջոկատներ: Հայ մարտիկները փոքրաթիվ ուժերով 1992 թ. հունվարի 19–20-ը լիովին ազատագրեցին Կրկժանը: Այդ հաղթանակը քաղաքական և հոգեբանական կարևոր նշանակություն ունեցավ:

1992 թ. հունվարին թեժ մարտեր տեղի ունեցան ***Քարինտակի*** մատույցներում: Շուշիի բարձունքից ադրբեջանցիները գրոհում էին, բայց ներքևում գտնվող հերոսական գյուղը մնում էր անառիկ: Կարծես կրկնվում էր 1905–1906 թթ. պատմությունը, երբ ադրբեջանցիները, չնայած մեծ ջանքեր գործադրելուն, չկարողացան գրավել Քարինտակը: Այդ գյու-

ղի ինքնապաշտպանական ջոկատի հրամանատարն էր ԼՂՀ Գերագույն խորհրդի պատգամավոր Վ. Առուշանյանը: Ադրբեջանի ազգային բանակն այդ ուղղությամբ նոր լայնածավալ հարձակում սկսեց 1992 թ. հունվարի 25-ի լույս 26-ի գիշերը: Երբ մինչև ատամները զինված 250 ադրբեջանցիներ զրահամեքենաներով մոտեցան բնակավայրի մատույցներին, գյուղի պաշտպանները ստիպված նահանջեցին առաջավոր դիրքերից: Քարինտակին օգնության հասավ Շուշի ինքնապաշտպանական ջոկատը՝ Ս. Հայրյանի հրամանատարությամբ: Ադրբեջանցիները 12-ժամյա արյունահեղ մարտում պարտություն կրեցին և, մարտադաշտում թողնելով 74 սպանված ու 70 վիրավոր, նահանջեցին:

Քարինտակում հայերի հաղթանակը ահ ու սարսափ առաջացրեց ադրբեջանցիների շրջանում: Քարինտակը հետագայում կարևոր հենակետ դարձավ Շուշիի կրակակետերը լռեցնելու գործում:

ԼՂՀ պաշտպանական ուժերը, փետրվարի 11-ին և 12-ին անցնելով հարձակման, վնասազերծեցին Ստեփանակերտի մոտակա ադրբեջանական հենակետերը: Կրակակետերի ոչնչացմանը ակտիվորեն մասնակցեցին նաև Երևանի, Պոռշյան գյուղի և Աբովյանի ազատամարտիկները:

Թշնամին շարունակում էր ռմբակոծել Ստեփանակերտը հրթիռային կայանքներից: Միայն 1992 թ. փետրվարի 19-ին ԼՂՀ մայրաքաղաքի վրա արձակվեց 300 հրթիռ:

Ստեփանակերտի համար ամենավտանգավորը Խոջալուն էր, որը փակում էր Ստեփանակերտ—Ասկերան մայրուղին: ԼՂՀ ինքնապաշտպանական ջոկատները, 1992 թ. փետրվարի 15-ին դիրքավորվելով Խոջալուի արևմտյան մասի երկարությամբ, ադրբեջանական կողմից պահանջեցին թողնել և հեռանալ: Ի պատասխան՝ ադրբեջանցիները սկսեցին ռմբակոծել Ստեփանակերտը:

Ադրբեջանում ներքին քաղաքական անկայունություն էր տիրում: Ժողովրդական ճակատը, ձգտելով տապալելու Ա. Մութալիբովի իշխանությունը, գործում էր հաշվենկատ ու նպատակասլաց: Նա մտածում էր Խոջալուն հանձնել, դրա համար մեղադրել Ա. Մութալիբովին ու զրկել իշխանությունից:

Խոջալուի կրակակետերը լռեցնելու համար ԼՂՀ ռազմական ուժերը որոշեցին առաջին հերթին հսկողության տակ վերցնել օդանավակայանը, որտեղ վաղուց իշխում էին հատուկջոկատայինները: 1992 թ. փետրվարի 25-ի լույս 26-ի գիշերը հայկական ջոկատները ***Աշոտ Ղուլյանի (Բեկոր)*** գլխավորությամբ հասան առաջավոր դիրքերին: Անակնկալի եկած հակառակորդը նահանջեց:

Հայ ազատամարտիկներն առանց զոհերի առաջացան դեպի օդանավակայան: Նրանք գլխավոր ճանապարհի կողմից միջանցք էին թողել, որպեսզի Խոջալուի բնակիչները հեռանային Աղդամ: ***Փետրվարի 26-ին*** մի քանի ժամվա ընթացքում հայ ինքնապաշտպանական ուժերը, տալով

Շուշի. 1992 թ. մայիսի 9

8 զոհ և 20 վիրավոր, լիովին ջախջախեցին Խոջալուում տեղակայված ադրբեջանական ուժերը և լռեցրին նրանց կրակակետերը: Ադրբեջանի Ազգային ճակատի կողմից իշխանությունը գրավելու նպատակով կազմակերպվեց և իրականացվեց Խոջալուի խաղաղ բնակչության կոտորածը: Իրենց իսկ ձեռքով իրականացրած այդ գործողության մեղքն ադրբեջանական իշխանությունները փորձեցին բարդել հայկական կողմի վրա: Խոջալուն ադրբեջանցիների առաջին խոշոր պարտությունն էր: Հաջորդը Շուշին էր: Վերականգնվեց Ստեփանակերտ—Ասկերան մայրուղու բնականոն գործունեությունը:

Շուշիի և Լաչինի ազատագրումը: 1992 թ. մայիսի սկզբին ԼՂՀ մայրաքաղաքում և այլ բնակավայրերում օրհասական դրություն էր: Մայրաքաղաքը սովի եզրին էր: Բնակիչները միջին հաշվով օրական ստանում էին 11 գ ալյուր և 2,5 գ շաքարավազ: Քաղաքում չկար հեղուկ վառելիք, իսկ մայիսի 1-ից լրիվ անջատվել էր էլեկտրաէներգիան: Ստեփանակերտի և հարակից բնակավայրերի անվտանգության ապահովման համար Շուշին պետք է ազատագրվեր:

Մեծ դեր ուներ ոգու ուժը: Ամբողջ հայ ժողովուրդը պատրաստ էր ազատագրելու Շուշին: Շուշիի ազատագրման գործողությունների ծրագիրը մշակվել էր խիստ գաղտնի պայմաններում: Ծրագիրը կազմելու և իրագործելու պատասխանատվությունը դրված էր ԼՂՀ ինքնապաշտպանական ուժերի հրամանատար ***Արկադի Տեր-Թադևոսյանի*** վրա: Նրա գերխնդիրը Շուշիի ազատագրման միջոցով ՀՀ-ի հետ ճանապարհային ուղիղ կապ ապահովելն էր:

1992 թ. մայիսի 4-ին որոշվեց իրագործել Շուշիի գրավման ***«Հարսանիք լեռներում»*** գործողությունը: Ռազմական գործողությունները ղեկավարում էր գնդապետ Ա. Տեր-

Հայ ազատամարտիկները Շուշիի Ս. Ամենափրկիչ եկեղեցու մոտ. մայիսի 9, 1992 թ.

Թաղևոսյանը, նրա կողքին էին գեներալ Գ. Դալիբալթայանը, շտաբի պետ Ֆ. Գզողլյանը և ուրիշներ:

Թշնամին ուներ 2300 զինյալ, իսկ գրոհող հայկական ուժերի թիվը հասնում էր 1700-ի: Շուշիի ազատագրման գործողություններին մասնակցում էր մոտ 60 ջոկատ: Մանրամասն հաշվի էին առնվել յուրաքանչյուր ջոկատի հնարավորությունները: Գլխավոր ուղղությունների պատասխանատուներ էին նշանակվել քաջարի հրամանատարներ Արկադի Կարապետյանը, Աշոտ Ղուլյանը, Դուշմանը (Վարդան), Սամվել Բաբայանը, Վիտալի Չիթչյանը, Յուրա Հովհաննիսյանը, Սեյրան Օհանյանը, Վալերի Բալայանը, Նվեր Զախոյանը և ուրիշներ: Հարձակումը կազմակերպվել էր չորս ուղղություններով:

Մայիսի 8-ի գիշերը՝ 2-ն անց 30-ին, հրետանային կրակի ներքո բոլոր չորս ուղղություններով սկսվեց ընդհանուր գրոհը: Հակառակորդը դիրք էր գրավել Շոշի կամրջից ոչ հեռու: Աշոտ Ղուլյանը վիրավոր էր, բայց մնում էր առաջին գծում: Առավոտյան՝ ժամը 6-ն անց 30-ին, նա Ա. Տեր-Թադևոսյանին հաղորդեց, որ նատած է Շուշիի բերդի պատին և շուտով կմտնի քաղաք:

Մայիսի 8-ի կեսօրին Շուշիի պաշտպանությունը ճեղքված էր հյուսիսից և արևելքից: Քաղաք մտած ջոկատները կռվում էին շուկայի շրջակայքում և կենտրոնական թաղամասերում: Ժամը 18-ին հայ ազատամարտիկներն ազատագրեցին քաղաքի կենտրոնը և ադրբեջանցիների հսկողության տակ թողեցին միայն հարավային հատվածը: Նրանք փողոցային մարտերով մոտենում էին Ս. Ամենափրկիչ (Ղազանչեցոց) եկեղեցուն, որը թշնամու կողմից վերածվել էր զինապահեստի: Մայիսի 9-ի կեսօրին մարտերը մղվում էին միայն հենակենտրոնի մոտ: Թշնամին դիմեց խուճապահար փախուստի: Շուշիում կռիվների ժամանակ հակառակորդը տվեց 300 զոհ, 600-700 վիրավոր, 13 գերի: Թշնամուց առգրավվեցին կամ ոչնչացվեցին մոտ 10 զրահատեխնիկա, հարյուրավոր հրթիռներ ու արկեր: Հայկական կողմն ունեցավ 70 զոհ և 120 վիրավոր:

Շուշիի ազատագրումով և հակառակորդի մյուս կրակակետերի լռեցումով Ստեփանակերտը և հարևան բնակավայրերը շունչ առան: Երկու օրում թշնամու դիմադրությունը կոտրվեց:

Շուշիի ազատագրումից հետո ռազմական գործողություններն ընդունեցին ԼՂՀ-ի և Ադրբեջանի միջև սահմանային պատերազմի բնույթ, իսկ ԼՂՀ անկախությունը դարձավ ամբողջական ու անշրջելի: Շուշիի

ռազմական գործողությունները լուրջ մարտական մկրտություն էին ԼՂՀ ինքնապաշտպանական ուժերի համար և իրենց արժանի տեղը գտան հայ ազգային-ազատագրական պայքարի պատմության տարեգրությունում:

Արցախի հինավուրց մայրաքաղաքի ազատագրումն ամրապնդեց հայ ժողովրդի հավատը հաղթանակի հանդեպ, բարոյահոգեբանական հարված հասցրեց թշնամուն, որը հետագայում չկարողացավ ազատվել պարտվողի հոգեբանությունից: Խոսելով Շուշիի հաղթանակի կարևորության մասին՝ Ա. Տեր-Թադևոսյանը հպարտությամբ նշում է, որ դա հնարավոր եղավ մեր մարտիկների սխրանքների ու ոգու արիության շնորհիվ:

Պատերազմի հաղթական ավարտը: ԼՂՀ ինքնապաշտպանական ուժերի առջև խնդիր դրվեց մի քանի օրվա ընթացքում բացելու կենսական հույժ կարևորություն ունեցող Շուշի—Լաչին—Գորիս ճանապարհը, որը հնարավորություն կտար վերացնելու Արցախի շրջափակումը և ապահովելու հանրապետության բնակչության նորմալ կենսագործունեությունը: Հայ ազատամարտիկները մայիսի 15-ին ազատագրեցին Լիսագորը, իսկ մայիսի 17-ին՝ Բերդաձորի ենթաշրջանը:

Հետապնդելով խուճապահար հակառակորդին ու զարգացնելով ռազմական գործողությունները՝ ղարաբաղյան ուժերն առաջ շարժվեցին և ***մայիսի 18-ին մտան Լաչին***: Դրանով իսկ ճեղքվեց շրջափակման օղակը, և Արցախը ցամաքային ճանապարհով միացավ Հայաստանի Հանրապետությանը: Լաչինի հումանիտար միջանցքով սկսվեց Արցախին սննդամթերքի, վառելանյութի, դեղորայքի և այլ անհրաժեշտ ապրանքների առաքումը: Բացվեց «կյանքի ճանապարհը», և Արցախը հավերժ կապվեց մայր հայրենիքին: Այս հաղթանակները խթանեցին ԼՂՀ պաշտպանության բանակի կազմավորման գործընթացը:

Շուշիի Ս. Ամենափրկիչ եկեղեցին

Պատերազմի հետագա ընթացքը: 1992 թ. ամռանն ադրբեջանական բանակը օտարերկրյա վարձկանների աջակցությամբ և թալանչիական ջոկատների ուղեկցությամբ լայնածավալ հարձակում սկսեց ԼՂՀ հյուսիսային մասում և գրավեց Ճահումյանի շրջանն ու Մարտակերտի շրջանի մի մասը: Ռազմակալված տարածքներում սկսվեցին հայ բնակչության կողոպուտը, խոշտանգումները, սպանությունները, բնակավայրերի ավերումները:

Այս շրջաններից մազապուրծ փախստականների նոր հոսք ուղղվեց դեպի Հայաստանի Հանրապետություն: Ադրբեջանցիների գրաված տարածքներում սկսվեց պարտիզա-

նական շարժում: ***1992 թ. ամռանը*** ռազմական դրություն հայտարարվեց ԼՂՀ ողջ տարածքում: ***Օգոստոսի 15-ին*** ստեղծվեց ***Պաշտպանության պետական կոմիտե՝ Ռոբերտ Քոչարյանի*** գլխավորությամբ: Սկսեց կարգավորվել տնտեսական վիճակը: Կազմակերպվեց մարտունակ բանակ: 1993 թ. ապրիլին հայկական զորքերն ազատագրեցին ռազմավարական նշանակություն ունեցող Քարվաճառի (Քելբաջար) շրջանը: Ադրբեջանական Լաչին-Քելբաջար խմբավորման ջախջախման շնորհիվ անվտանգ երթևեկություն ապահովվեց «կյանքի ճանապարհով»:

1993 թ. առաջին կիսամյակի մարտական գործողությունների եզրափակիչ փուլը ***Մարտակերտ*** քաղաքի ազատագրումն էր (հունիսի 28): 1993 թ. հուլիսի 23-ին հայկական ուժերին հաջողվեց թշնամուն պարտության մատնել ***Աղդամի*** մոտ: Աղդամի խմբավորման ջախջախումից հետո թշնամին ուժ ու միջոցներ կուտակեց Ֆիզուլիի և Ջաբրաիլի շրջաններում: Հակահարձակման անցնելով՝ ԼՂՀ ԻՊՈԻ ստորաբաժանումները ջախջախեցին թշնամուն և ազատագրեցին Ֆիզուլիի (օգոստոսի 22), Ջաբրաիլի (օգոստոսի 23), Կուբաթլիի (օգոստոսի 31) և Զանգելանի (Կովսական) (նոյեմբերի 1) շրջանները: Իսկ նույն թվականի հոկտեմբերի 24-ին մի քանի ուղղություններով սկսված հարձակման արդյունքում ճնշվեցին Հորադիզի երկաթուղային հանգույցի կրակակետերը, և ազատագրվեց Հորադիզի շրջանը (Հորադիզ քաղաքը և երկաթուղային կայարանը): Ադրբեջանական ստորաբաժանումները խուճապահար փախչում էին ռազմական գործողությունների շրջաններից՝ մեծ թվով զոհեր տալով և ռազմադաշտում թողնելով բազմաքանակ տեխնիկա:

ԼՂՀ ռազմական հաջողությունները Ադրբեջանում հանգեցրին հերթական իշխանափոխության: Ադրբեջանի նախագահ դարձավ Հ. Ալիևը: Նա սաստկացրեց հակահայկական քարոզչությունը, արտասահմանից նոր վարձկաններ հավաքագրեց: 1993 թ. դեկտեմբերի կեսերին Ադրբեջանը լայնածավալ հարձակում սկսեց ռազմաճակատի ամբողջ երկայնքով՝ փորձելով վերադարձնել կորցրած տարածքները, բեկում մտցնել պատերազմում: Ադրբեջանական բանակը համալրվեց օտարերկրյա ժամանակակից տեխնիկայով: Նրանց բանակի շարքերում կռվում էին աֆղան, թուրք, հյուսիսկովկասցի վարձկաններ:

Ազատատենչ արցախցիները կարողացան կասեցնել հակառակորդի բոլոր հարձակումները և, առանձին վայրերում հակահարձակման անցնելով, հսկողության տակ վերցնել նոր տարածքներ: Ավելի քան մեկամսյա համառ մարտերի ընթացքում հակառակորդը չկարողացավ որևէ հաջողության հասնել:

1994 թ. փետրվարի 18-ին Քելբաջարի շրջանի հյուսիսային մասի և Օմարի բարձրադիր լեռնանցքի ազատագրումով, երբ մարտական գործողություններն ընթանում էին 3000 մ և ավելի բարձրլեռնային շրջաններում

30° սառնամանիքի պայմաններում, ապահովվեց Մարտակերտի շրջանում ազատագրական մարտեր մղող պաշտպանական ուժերի թիկունքը: Աղդամի շրջանի և Միրբաշիրի (Թարթառի) ուղղությամբ ձեռնարկված լայնածավալ գործողությունները լիակատար խուճապի մատնեցին ադրբեջանցիներին:

Չկարողանալով ռազմական ուժի օգնությամբ իր օգտին լուծել ղարաբաղյան հիմնահարցը՝ հետագա խայտառակությունից խուսափելու համար ադրբեջանական իշխանությունները հարկադրված էին Ռուսաստանի Դաշնության միջնորդությամբ և Մինսկի խմբի օգնությամբ 1994 թ. մայիսին զինադադար խնդրել: ***1994 թ. մայիսի 12-ի*** համաձայնագրով հրադադար հաստատվեց: Դադարեցվեցին ռազմական գործողությունները, և սկսվեց ԼՂՀ հակամարտության կարգավորման բանակցային փուլը, որը 2016 թ. դրությամբ դեռ շարունակվում է:

Արցախյան ազատամարտի արդյունքում հայոց հինավուրց Արցախը թոթափեց ադրբեջանական 70-ամյա ատելի տիրապետությունը: Ընդ որում՝ պատերազմի ընթացքում ազատագրվեցին ոչ միայն նախկին ԼՂԻՄ-ի տարածքը (4,4 հազ. կմ²), այլ նաև արցախյան այն տարածքների զգալի մասը, որոնք ինքնավար մարզի կազմավորման ժամանակ (1923 թ.) ադրբեջանական «ինտերնացիոնալիստների» կողմից միտումնավոր կերպով դուրս էին թողնվել նրա սահմաններից: Այսպիսով՝ Արցախի ազատագրված տարածքն ընդհանուր առմամբ կազմում է 12 000 կմ², որն ամրագրված է ԼՂՀ Սահմանադրությամբ:

Ցավոք, պատերազմի ընթացքում հայկական կողմն ունեցավ նաև տարածքային կորուստներ: Մինչ օրս ադրբեջանական օկուպացիայի տակ են ԼՂՀ Շահումյանի շրջանը (600 կմ²), Մարտակերտի ու Մարտունու շրջանների որոշ փոքրիկ տարածքներ, դաշտային Արցախի մի մասը և վերջապես Արծվաշենը:

Պատերազմի արդյունքում Ադրբեջանը կրեց ջախջախիչ պարտություն և ունեցավ սպառազինության և մարդկային մեծ կորուստներ: Ընդ որում՝ հակառակորդի հաշվին հայկական կողմը զգալիորեն համալրեց իր զինանոցը՝ հատկապես զրահատեխնիկայի և թեթև հրազենի առումով: Ադրբեջանի մարդկային կորուստներն այդ պատերազմում տարբեր տվյալներով կազմեցին 20–25 հազար սպանված և ավելի քան 50 հազար վիրավոր: Հայկական կողմը տվեց ավելի քան 6,5 հազար սպանված և ավելի քան 15 հազար վիրավոր:

Հաղթելով Արցախյան ազատամարտում՝ արցախահայությունը և ընդհանրապես համայն հայությունն ապացուցեցին, որ կարելի է հաղթել փոքր ուժերով՝ ունենալով աներեր հավատ հաղթանակի նկատմամբ, ազգային միասնական կամք և զերազանց կազմակերպվածություն: Ապացուցեցին, որ հանուն պատմական արդարության, հանուն ազգային վեհ գաղափարների, հանուն իր հինավուրց հայրենիքի ոտքի կանգնած



Մոնթե Մելքոնյան

ժողովրդին անհնար է պարտության մատնել:

Հայ ժողովուրդը խորին երախտագիտությամբ և ակնածանքով է հիշում Արցախյան ազատամարտի բոլոր հերոս մասնակիցներին:

Սփյուռքահայության մասնակցությունը Արցախյան պատերազմին: Արցախյան ազատագրական պատերազմին անմասն չմնաց սփյուռքահայությունը: Նրանց օգնությունը դրսևորվեց ռազմական, տնտեսական ու բարոյական բնագավառներում: Սփյուռքի մեր հայրենակիցների ավանդը մեծ էր նաև ազատամարտիկների մարտավարական ու բարոյահոգեբանական մակարդակը բարձրացնելու առումով:

Սփյուռքահայերից ոմանք ոչ միայն մասնակցեցին ռազմական գործողություններին, այլև ծանրակշիռ ներդրում ունեցան զինվորական կադրերի պատրաստման, մարտական ջոկատների և պաշտպանական շրջանների ձևավորման գործում: Արցախի պաշտպանական մարտերին մասնակցում էին սփյուռքահայերից կազմված ջոկատներ:

Սփյուռքահայ քաջերի մի մասը՝ ***Վիգեն Զաքարյանը, Միհր Ջուլհաձյանը, Մոնթե Մելքոնյանը, Կարո Քահքեջյանը*** և այլք, զոհվեցին:

Ջոկատի քաջարի հրամանատար ***Կարապետ Քահքեջյանը*** ծնվել է 1962 թ. Հալեպում: Ավարտել է Ֆրանկֆուրտի ճարտարագիտական համալսարանը, մասնակցել Բեյրութի հայկական թաղամասի ինքնապաշտպանությանը: 1991–1993 թվականներին մասնակցել է ՀՀ Արարատի (Երասխ), Տավուշի և ԼՂՀ Ասկերանի, Մարտակերտի ու Քելբաջարի պաշտպանական մարտերին: 1992 թ. մայիսին կազմավորվեց խաչակիրների ջոկատը, որի հրամանատարն էր Քահքեջյանը: Խաչակիրների ջոկատը հաղթական մարտեր է մղել Դրմբոնում, Քելբաջարում, Ասկերանի և Մարտակերտի շրջաններում:

Զոհվել է 1993 թ. հունիսի 26-ին Մարտակերտի շրջանում:

Հայ ազատամարտի նվիրյալ, ՀՀ ազգային հերոս ***Մոնթե Մելքոնյանը (Ավո)*** ծնվել է 1957 թ. Վայսիլիայում՝ Ֆրեզնոյի մոտ (Կալիֆոռնիա, ԱՄՆ): Նա ավարտել է Բերկլիի (Կալիֆոռնիա) համալսարանի հին ասիական ժողովուրդների պատմության և հնագիտության բաժինը (1978 թ.): Նույն թվականին ընդունվել է Օքսֆորդի համալսարան, սակայն չի ավարտել, մեկնել է Լիբանան, 3 տարի մասնակցել քաղաքացիական պատերազմին, Բեյրութի հայկական թաղամասի պաշտպանությանը:

1990 թ. հոկտեմբերից զինվորագրվել է Արցախի պաշտպանությանը: 1991 թ. սկզբին հիմնել է «Հայրենասիրական» ջոկատը: Մոնթեն մասնակցել է ՀՀ Իջևանի, Ճամբարակի, ԼՂՀ Շահումյանի, Մարտակերտի, Մարտունու, Քարվաճառի շրջանների ինքնապաշտպանությանը և ազատագրական մարտերին: 1992 թ. սեպտեմբերից ղեկավարել է Մարտունու ուղղությամբ մարտնչող հայկական զորամասերը: 1993 թ. հունիսի 12-ին զոհվել է Մարզիլու գյուղում (Աղդամի մոտ):

Շուշիի առանձնակի գումարտակը միավորում էր Հայաստանից, Արցախից ու Սփյուռքի տարբեր օջախներից, աշխարհի տարբեր մասերից եկած հայության բաջակորով զավակներին: Գումարտակը ճանաչվել է լավագույններից մեկը Արցախի բանակի հրամանատարության կողմից:

Սփյուռքահայ ազատամարտիկներից մուսալեռցի ***Լևոն Թաշճյանը*** 1993 թվականի սեպտեմբերից մինչև 1994 թ. հունվարը մասնակցել էր Ֆիզուլիի, Ջանգելանի, Ջաբրաիլի, Մարտակերտի, Կուբաթլիի շրջանների ազատագրական մարտերին:

Այսպիսով՝ հայ ժողովուրդն իր միասնության և աննկուն ոգու շնորհիվ իրեն պարտադրված պատերազմից հաղթականորեն դուրս եկավ և ազգային երկրորդ պետությունը ստեղծեց Հայաստանի ազատագրված հատվածում:

Հարցեր և առաջադրանքներ

1. Համառոտ ներկայացրեք ԼՂՀ անկախության հռչակման և պետականության ձևավորման գործընթացը: Ինչ անհետաձգելի լուծում պահանջող խնդիրներ էին ծառացել ԼՂՀ-ի առաջ:
2. Ներկայացրեք Արցախյան ազատագրական պատերազմի սկիզբն ու ծավալումը: Ինչ գիտեք Շուշիի ազատագրման գործողության մասին: Ինչ նշանակություն ունեցան Շուշիի և Լաչինի հաղթական գործողությունները: Ներկայացրեք պատերազմի հետագա ընթացքն ու ավարտը: Երբ, ում խնդրանքով և ում միջնորդությամբ կնքվեց զինադադարը (օգտվեք նաև լրացուցիչ նյութից):
3. Ներկայացրեք սփյուռքահայերի մասնակցությունն Արցախյան ազատամարտին: Սփյուռքահայ նշանավոր ազատամարտիկներից ում կարող եք հիշատակել. որ կռիվներում են նրանք աչքի ընկել: Պատրաստեք և դասարանին ներկայացրեք սփյուռքահայ ազատամարտիկներից մեկի վերաբերյալ հակիրճ զեկուցում:
4. Արցախյան ազատամարտին և ազատամարտիկներին նվիրված ինչ հայրենասիրական երգեր գիտեք: Ովքեր են այդ երգերի հեղինակները:

ԼՐԱՏՈՒՏԻՉ ՆՅՈՒԹ

1994 Թ. ՄԱՅԻՍԻ 12-Ի ԶԻՆԱԴԱԴԱՐԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ

Արձագանքելով 1994 թվականի մայիսի 5-ի Բիշքեկյան արձանագրության մեջ շարադրված՝ կրակի դադարեցման կոչին, հիմնվելով 1994 թվականի փետրվարի 18-ի Արձանագրության վրա՝ հակամարտող Կողմերը համաձայնեցին հետևյալում.

1. Ապահովել կրակի և ռազմական գործողությունների լրիվ դադարեցումը՝ 1994 թվականի մայիսի 12-ի 00 ժամ 01 րոպեից:

Հրադադարի մասին համապատասխան հրամանները կտրվեն և դրանց կատարման համար պատասխանատու զինվորական կազմավորումների հրամանատարներին կհասցվեն 1994 թվականի մայիսի 11-ից ոչ ուշ:

Մինչև մայիսի 12-ի 23:00-ն Կողմերը փոխանակում են հրադադարի մասին իրենց հրամանների տեքստերը՝ դրանց հնարավոր լրացման և համանման փաստաթղթերի հիմնադրույթների հետագա միասնականացման նպատակով:

2. Խնդրել Ռուսաստանի Դաշնության պաշտպանության նախարարին Մոսկվայում ս. թ. մայիսի 12-ից ոչ ուշ գումարել Ադրբեջանի, Հայաստանի պաշտպանության նախարարների և Լեռնային Ղարաբաղի բանակի հրամանատարի շտապ խորհրդակցություն՝ զորքերի հետքաշման բնագծերի, այլ անհետաձգելի ռազմատեխնիկական հարցերի համաձայնեցման և միջազգային դիտորդների առաջավոր խմբի տեղաբաշխման նախապատրաստման նպատակով:

3. Սույն պայմանավորվածությունը կօգտագործվի առաջիկա 10 օրերին՝ բանակցություններն ավարտելու և զինված հակամարտության դադարեցման մասին Համաձայնագիրը ս. թ. մայիսի 22-ից ոչ ուշ կնքելու համար:

4. Սույն պայմանավորվածությունն ուժի մեջ կմտնի այն բանից անմիջապես հետո, երբ Միջնորդը կտեղեկացնի, որ ինքը հակամարտող ուժերից ստացել է լիազորված ներկայացուցիչների ստորագրած լրիվ նույնական փաստաթղթեր:

ՄՏՈՐՈՒՄ Է ՄՈՆԹԵ ՄԵԼՔՈՆՅԱՆԸ

Նոյեմբերի 25-ը ՀՀ ազգային հերոս, Արցախի հերոս, «Հայրենիք» և «Ոսկե արծիվ» շքանշանակիր Մոնթե Մելքոնյանի (Ավո) ծննդյան օրն է:

- «Ինքներս մեզնից կերտելով նոր տիպի անհատի կերպար՝ մենք կդառնանք կազմակերպորեն ավելի հզոր՝ վերածվելով շատ ավելի ահարկու սպառնալիքի մեր թշնամիների և շատ ավելի արժեքավոր դաշնակցի՝ մեր բարեկամների համար»:
- «Ամեն բանից ավելի մեր ժողովուրդը կարիք ունի զինվորի՝ ֆիդայիների... Զինյալ պայքարի նախապատրաստումը միակ միջոցն է մեր ապագան մեր ձեռքերում պահելու համար: Միակ միջոցն է Սփյուռքից դուրս գալու և Հայրենիք մտնելու...»:
- «Ներկայիս մշակույթն այն հայրենիքն է, որ մեզ իրար է կապում: Այն ընդհանուր հող է մեզ համար, ուր էլ որ գտնվենք՝ Ուրուգվայում, Կանադայում, Սիրիայում թե Հնդկաստանում»:
- «Եթե մենք կորցնենք Արցախը, կշրջենք մեր պատմության վերջին էջը»:
- «Ժամանակը մեր օգտին չի աշխատում: Ինչքան հետաձգենք պայքարի համար մեր ժողովրդի զորաշարժը, այնքան քիչ հայեր կլինեն Արևմտյան Հայաստանում վերահաստատվելու համար, և այնքան քիչ ազդեցություն կունենանք: Մենք պետք է մեզ կազմակերպենք և պայքա-

ռենք, որ մեր ժողովուրդը սկսի քաղաքականանալ և հետո մնա քաղաքականապես արթուն, որպեսզի ավելի կապված զգա Հայաստանին, քան ԱՄՆ-ին, Ֆրանսիային կամ Արգենտինային...»:

- «Պետք է հիմա մեր ամբողջ ուժը դնենք աս գործին մեջ, հաղթենք ու վերջ: Խաղաղություն պիտ ըլլա միայն մեր հաղթանակով: Անկարելի է խաղաղության հասնիլ առանց մեր հաղթանակին»:

§ 3. ՆՈՐԱԿԱԶՄ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԿՅԱՆՔԸ

Սոցիալ-տնտեսական վիճակը 1990-ական թվականների սկզբին: Ադրբեջանի կազմում Լեռնային Ղարաբաղի տնտեսությունը զրկված էր համաչափ զարգացման հնարավորությունից և լիովին կախված էր Բաքվի քմահաճույքից: Կապիտալ ներդրումները մարզում երկու անգամ պակաս էին Ադրբեջանական ԽՍՀ մնացած տարածքներում կատարվող համանման ներդրումներից:

ԼՂՀ անկախության հռչակումից հետո Ադրբեջանի սանձազերծած ռազմական գործողությունների հետևանքով ավերվել էին մի քանի տասնյակ գյուղեր, գրեթե բոլոր արդյունաբերական ձեռնարկությունները, կրթամշակութային բազմաթիվ հիմնարկներ: Տնտեսությունը գրեթե ամբողջությամբ կազմալուծվել էր, բնակչության զգալի մասը՝ արտագաղթել: Նորաստեղծ հանրապետությունը ենթարկվել էր տրանսպորտային շրջափակման, որը շարունակվում է առ այսօր:

Տնտեսության վերականգնումը և զարգացումը: Պատերազմի ընթացքում ԼՂՀ տնտեսությունը վերակառուցվել էր ռազմական պահանջներին համապատասխան: Տնտեսական կյանքի վերականգնումը սկսվեց 1994 թ. զինադադարից հետո: Լաչին—Գորիս մայրուղով միանալով Հայաստանի Հանրապետությանը՝ Արցախը դուրս եկավ շրջափակումից: ԼՂՀ-ն էլեկտրահաղորդման բարձր լարման գծով միացավ ՀՀ էներգահամակարգին:

ԼՂՀ ներկա տնտեսական վիճակի համար բնորոշ են անցյալ տասնամյակներում սկսված և շարունակվող թեև դանդաղ, բայց կայուն առաջընթացը, արտադրության ծավալների աճը, նոր ճյուղերի ու արտադրությունների ստեղծումը, սպասարկման ոլորտի ծավալումն ու որակական բարելավումը:

Անկախության ավելի քան երկու տասնամյակում արդյունաբերության հիմնական ճյուղերն են դարձել սննդի ու թեթև արդյունաբերությունը:

Արցախի իշխանությունները չիրապուրվեցին սեփականաշնորհման արագ կենսագործմամբ՝ հնարավոր սխալներից խուսափելու նպատակով: Պետությունն ակտիվ մասնակցություն ունեցավ տնտեսության կազմակերպման գործին: Դրա շնորհիվ պետական ունեցվածքն ավերումների ու փոշիացման չենթարկվեց:

ԼՂՀ Գերագույն խորհուրդը ***1995 թ.*** հատուկ օրենքով ամբողջ հո-

ղը հայտարարեց պետական սեփականություն, որը կարող էին վարձակալական հիմունքներով օգտագործել ինչպես կոլտնտեսությունները, այնպես էլ առանձին անհատներ: Պատերազմի և տնտեսական ճգնաժամի պայմաններում դա ճիշտ որոշում էր:

1998 թ. սեպտեմբեր–հոկտեմբեր ամիսներին ընդունվեցին «Սեփականության մասին», «Հողի սեփականաշնորհման մասին» և այլ օրենքներ, ստեղծվեց հողի սեփականաշնորհման օրենսդրական դաշտը: Գյուղատնտեսության տեսակարար կշիռը ՀՆԱ–ի մեջ վերջին տարիներին աճեց՝ կազմելով 27 տոկոս:

ԼՂՀ–ում մեծ թափ է առել ռազմավարական նշանակություն ունեցող ճանապարհաշինությունը: Կենսական նշանակություն ունի հուսալի տրանսպորտային հաղորդակցությունը Հայաստանի Հանրապետության և արտաքին աշխարհի հետ, հատկապես Գորիս—Բերձոր (նախկին Լաչին)—Ստեփանակերտ ավտոճանապարհը, որը հիմնովին վերակառուցված և բարեկարգված է: Մեծ ծավալի շինարարական աշխատանքներ են ընթանում Արցախի հյուսիսը հարավի հետ կապող մայրուղու կառուցման գործում: Արցախի ճանապարհաշինական աշխատանքներին ֆինանսական միջոցներով աջակից է սփյուռքահայությունը:

XXI դարասկզբին Արցախում սկսվեց նոր հիդրոկայաններ կառուցելու գործընթացը: 2008 թ. սկսվեց «Թրղե–1», 2009 թ.՝ «Թրղե–2» հէկերի շինարարությունը: Նրանք գործարկվեցին 2011 թ. և Սարսանգի հետ մեկտեղ թողարկում են 150–160 մլն կվտ/ժ էլեկտրաէներգիա, որը կազմում է երկրի պահանջարկի գրեթե 70 %–ը: 2012 թ. «Արցախ հէկ»–ը ձեռնամուխ եղավ «Մատաղիս–1» և «Մատաղիս–2» հէկերի շահագործմանը: Դրանց հաջորդեց «Թրղե–3»–ի շինարարությունը:

Համաձայն ԼՂՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների՝ վերջին տարիներին ԼՂՀ–ում արձանագրվել է շարունակական տնտեսական աճ՝ միջինը 10 %, որը բարելավել է երկրի կայուն զարգացումը և բնակչության կենսապայմանները:

Սոցիալական ոլորտը: ԼՂՀ–ում իրականացվում են նաև սոցիալական բարեփոխումներ: Սոցիալական հիմնախնդիրները լուծելու նպատակով մշակվել ու ընդունվել են մի շարք օրենքներ սոցիալական ապահովագրության, սոցիալական աջակցության, կենսաթոշակային, բնակչության զբաղվածության ապահովման, աշխատանքի և աշխատավարձերի համակարգերի կատարելագործման վերաբերյալ:

ԼՂՀ սոցիալական քաղաքականությունը նպատակաուղղված է զբաղվածության ապահովմանը, նոր աշխատատեղերի ստեղծմանը, բնակչության եկամուտների ավելացմանը:

ԼՂՀ կառավարությունը որոշակի միջոցառումներ է իրականացնում նաև առողջապահության ոլորտի խնդիրները կարգավորելու ուղղությամբ: Այստեղ մասնավոր բուժօգնության հետ միասին պետության աջակցությամբ իրականացվում է անվճար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ


ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ
Ռեսուրսների սահմանները
ՀՀ մարզերի և ԼՂՀ շրջանների սահմանները
Արդեշամի բռնակցված նախիջևանի նոր սահմանի (գծագրվում՝ ամրագրված) սահմանները ու սահմանը
ՀՀ-ի և ԼՂՀ-ի տարածքային ամբողջականությունը ոչ ամբողջությունը
1988 թ. դեկտեմբերի Սպիտակի ավերիչ երկրաշարժի հետևանքով հարթեցված սահմանները և բնակավայրերի հարթեցված սահմանները
Մասշտաբը
Ցույցնելու հայ բնակչությունը ենթարկվել է բռնագաղթի
Սարգարապատ
ՀՀ մարզերի և ԼՂՀ շրջանների վարչական կենտրոնները
Այլ բնակավայրեր
ՍԵՎԱՆԱԿԵՐՏ
ԵՐԵՎԱՆ
ՄԱՍԻՍ
ԱՐԱՐԱՏ
ՇԱՐՈՒՐ
ԱՐԱԳԱԾՈՏՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ
ՎԱՅՈՑ ՁՈՐ
ԶԱՆԳԵԶՈՒՐ
ԼՈՌԻ
ՏԱՎՈՒՇ
ԿՈՏԱՅՔ
ՍՅՈՒՆԻՔ
ԱՐԱՐԱԾՈՏՆ
ԱՐՄԱՎԻՐ
ԳԱՌՆԻ
ՍԵՎԱՆ
ՍԱՐԱՏՈՎ
ՍՈՉԻ
ՍԱՄԱՐԱ
ՍՈՉԻ
ՍԱՄԱՐԱ
ՍՈՉԻ
ՍԱՄԱՐԱ

«Մենք ենք, մեր սարերը». քանդակագործ՝ Սարգիս Բաղդասարյան

բուժօգնություն: Սոցիալական հիմնախնդիրների լուծման գործում ԼՂՀ-ին էական աջակցություն են ցուցաբերում «Հայաստան» համահայկական հիմնադրամը, տարբեր մարդասիրական կազմակերպություններ՝ Լիբանանի «Արցախի օգնության մարմինը», «Վիտա» ընկերությունը, Համաշխարհային քրիստոնեական կազմակերպությունը և այլն:

Հասարակական-քաղաքական կյանքը: Ազատագրական պատերազմից հետո աշխուժացավ ԼՂՀ հասարակական-քաղաքական կյանքը: 1991-1994 թթ. Արցախյան ազատագրական պատերազմի տարիներին հանրապետությունում գործող բոլոր կուսակցությունները միակամ էին հաղթանակի հասնելու գործում, ուստի անկախ գաղափարական տարաձայնություններից գործեցին միասնաբար և հաղթանակի հասնելու վճռականությամբ:

Անցում կատարվեց բազմակուսակցական համակարգին: Սկսեցին գործել ***Հայ հեղափոխական դաշնակցություն*** և ***Արցախի արմենական*** կուսակցությունները: Առաջացան նոր կուսակցություններ ու քաղաքական միավորումներ՝ «Ազատ հայրենիք», «Սոցիալական արդարություն», «Մեր տունը Հայաստանն է», «ՀՀԴ-Շարժում-88 դաշինք», «Արցախի ժողովրդավարական կուսակցություն»:

1996 թ. նոյեմբերին կայացան ԼՂՀ առաջին նախագահական ընտրությունները: Հանրապետության նախագահ ընտրվեց ***Ռոբերտ Քոչարյանը:*** Հաջորդ տարի Ռ. Քոչարյանը նշանակվեց Հայաստանի Հանրապետության վարչապետ, ուստի ***1997 թ. սեպտեմբերին*** ԼՂՀ-ում տեղի ունեցան արտահերթ նախագահական ընտրություններ, և ԼՂՀ նախագահ ընտրվեց ***Արկադի Ղուկասյանը:***

2015 թ. մայիսի 3-ին տեղի ունեցավ ԼՂՀ վեցերորդ գումարման Ազգային ժողովի ընտրությունները: 33 ընտրատարածքներում համամասնական ընտրակարգով ամենաշատ ձայներ ստացավ «Ազատ հայրենիք» կուսակցությունը (47,3 %), որին հաջորդեցին «Արցախի ժողովրդավարական կուսակցությունը» (19,1 %), «Հայ հեղափոխական դաշնակցությունը» (18,8 %) և «Շարժում-88»-ը (6,9 %):

Արցախում կայացած վեցերորդ խորհրդարանական ընտրություններին ժամանած բազմաթիվ միջազգային դիտորդներ այն գնահատել են դրական:

2007 թ. հուլիսի 20-ին տեղի ունեցան ԼՂՀ նախագահական հերթական ընտրությունները: Առաջադրված էին չորս թեկնածուներ: ԼՂՀ նախագահ ընտրվեց ***Բակո Սահակյա-***

նը: Նա երկրորդ անգամ վերընտրվեց 2012 թ. հուլիսի 19-ին տեղի ունեցած ԼՂՀ նախագահական հերթական ընտրություններում: Խորհրդարանական ընտրությունների նմանությամբ նախագահական բոլոր ընտրությունները ևս համարվել են միջազգային չափանիշներին համապատասխան:

ԼՂՀ Սահմանադրությունը: Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հասարակական-քաղաքական կյանքի կարևոր իրադարձություններից էր Սահմանադրության ընդունումը ***2006 թ. դեկտեմբերի 10-ին*** համաժողովրդական հանրաքվեի միջոցով: Դեռևս միջազգային ճանաչում չստացած, սակայն փաստացի անկախ հանրապետության հիմնական օրենքը իրավական ձևակերպում տվեց հասարակական կյանքի բոլոր բնագավառներում կատարված փոփոխություններին, սահմանեց ԼՂՀ քաղաքացիների իրավունքները, ազատություններն ու պարտականությունները: Սահմանադրության առաջին հոդվածն ազդարարում է, որ ԼՂՀ-ն ինքնիշխան, ժողովրդավարական, իրավական, սոցիալական պետություն է, որ ***ԼՂՀ*** և ***Արցախի Հանրապետություն*** անվանումները նույնական են: ԼՂՀ Սահմանադրությունն ամրագրեց հայկական երկրորդ պետության իրավական հիմքերը:

Կրթամշակութային կյանքը: Լեռնային Ղարաբաղում ստեղծվեց կրթական ու մշակութային նոր համակարգ:

ԼՂՀ հռչակումից հետո սկսվեցին հանրակրթության ոլորտի բարեփոխումները: Մշակվեցին ազգային դպրոցի ստեղծման սկզբունքները, կազմվեցին ուսումնական նոր ծրագրեր ու դասագրքեր: ԼՂՀ ԱԺ-ն օրենք ընդունեց, որով հայ երեխաների ուսումնառությունը պետք է կատարվի հայկական դպրոցներում: 2005-2006 ուսումնական տարում ԼՂՀ-ում գործում էր 182 հանրակրթական դպրոց: Առաջնահերթ նշանակություն է տրվում սովորողների ազգային դաստիարակությանը, հասարակական ակտիվությանը, գիտելիքների, կարողությունների, ստեղծագործական ունակությունների ձևավորմանն ու զարգացմանը:

Արցախ. հատված Տիգրանակերտի պարիսպներից

2004-2005 ուսումնական տարվանից ԼՂՀ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսուցումն իրականացվում է երկաստիճան համակարգով՝ բակալավրի և մագիստրոսական ծրագրերով: 1992 թ. վերակազմավորվեց Լեռնային Ղարաբաղի պետական համալսարանը (1995 թ-ից՝ Արցախի պետական համալսարան), որը հանրապետության կրթության և գիտության մայր

հաստատությունն է: Արցախում գործում են մեկ տասնյակից ավելի մասնավոր բուհեր:

2010–2011 ուսուցման դրությամբ ԼՂՀ–ում բուհերի թիվը հասնում էր 7–ի, որից 2–ը՝ պետական, 5–ը՝ ոչ պետական: Ուսանողների թիվը բուհերում հասնում էր 6096–ի: Պետական միջին մասնագիտական հաստատություններում (5) սովորողների քանակը հասնում էր 1619–ի:

Հրատարակչական գործի զարգացման հետ ընդլայնվում է գրադարանների ցանցը, ավելանում՝ գրքային ֆոնդը: Լուրջ ուշադրություն է դարձվում թանգարանների ստեղծմանը, արվեստի՝ թատերարվեստի, երաժշտության և պարարվեստի զարգացմանը, ինչպես նաև պատմամշակութային հուշարձանների պահպանության գործին:

ԼՂՀ–ում գործում են 18 թատերահամերգային կազմակերպություններ: Արցախի արվեստի վարպետները ելույթներով հանդես են գալիս ԱՊՀ և արտասահմանյան բազմաթիվ այլ երկրներում՝ Հոլանդիայում, Ֆրանսիայում, ԱՄՆ–ում, Հունաստանում և այլուր:

Միջազգային մշակութային համագործակցության կարևոր մասն են կազմում Հայաստանի Հանրապետություն—Սփյուռք—Արցախ մշակութային կապերը, որոնք իրականացվում են «Մեկ ազգ, մեկ մշակույթ» համահայկական փառատոնի և շատ այլ ծրագրերի շրջանակներում:

Ստեփանակերտին առանձին վեհություն է հաղորդում հայտնի քանդակագործ Սարգիս Բաղդասարյանի «Մենք ենք, մեր սարերը» կոթողը, որը դարձել է Արցախ աշխարհի խորհրդանիշը:

Հանրապետության տարածքում հաշվվում են բազմահազար հուշարձաններ, որոնց զգալի մասը եկեղեցիներն ու խաչքարերն են: Վերջին տարիներին հայ հնագետների կատարած պեղումների արդյունքում բացվեց Տիգրան Մեծի հիմնադրած Տիգրանակերտը (Արցախի Տիգրանակերտ), որը մեկ անգամ ևս փաստեց հայերի վաղնջական ներկայությունը, բնիկությունը Արցախում:

Անկախ Արցախի մշակույթը զարգացման փուլում է՝ արձանագրելով նորանոր ձեռքբերումներ, որոնք նրա պետականության կայացման լավագույն վկայություններն են:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ի՞նչ հետևանքներ ունեցան ԼՂ–ի տնտեսության համար շրջափակումն ու էներգետիկ ճգնաժամը:
2. Ի՞նչ արդյունք տվեց պետության ակտիվ մասնակցությունը տնտեսական զարգացման գործում: Ներկայացրե՛ք հողի սեփականաշնորհման գործընթացն Արցախում. որո՞նք էին դրա առանձնահատկությունները: Ի՞նչ գործոններ նպաստեցին Արցախի տնտեսական կյանքի վերելքին:

3. Սոցիալական ոլորտի հիմնախնդիրների լուծման նպատակով ինչ քայլեր ձեռնարկվեցին ԼՂՀ-ում: Ինչ արդյունքներ տվեցին դրանք:
4. Ներկայացրեք ԼՂՀ-ի հասարակական-քաղաքական կյանքը: Ինչ կուսակցություններ են գործում:
5. Երբ է ընդունվել ԼՂՀ Սահմանադրությունը:
6. Ներկայացրեք ԼՂՀ կրթական նոր համակարգը: Մշակութային ինչ օջախներ են գործում: Ըստ ձեզ՝ որն է Արցախի ամենանշանավոր հուշարձանը, ուրիշ ինչ հուշարձաններ գիտեք:

§ 4. ԼՂՀ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Արցախյան հիմնախնդրի շուրջ բանակցային գործընթացը: Արցախյան շարժումը հենց սկզբից գրավեց միջազգային հանրության և պետությունների ուշադրությունը: ԽՍՀՄ գոյության շրջանում Արցախյան շարժմանը Մոսկվայի և Բաքվի տված սուբյեկտիվ գնահատականները երբեմն իրենց ազդեցությունն էին թողնում միջազգային կառույցների վրա: 1993 թ. ընթացքում ԼՂՀ-ի խնդրով ՄԱԿ-ում ընդունվել է երեք բանաձև: Այդ ուղղությամբ հիմնահարցի խաղաղ լուծման համար ՄԱԿ-ը հետագայում ևս շարունակեց իր գործունեությունը: Ջինաղադարի կնքումից հետո շարունակվեց Արցախյան հիմնախնդրի կարգավորման բանակցային գործընթացը: Այն դարձավ Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) քննարկման առարկա 1992 թ. հունվարից, երբ ՀՀ-ն անդամակցեց ԵԱՀԿ-ին: Ադրբեջանի իշխանությունները, մերժելով Լեռնային Ղարաբաղի ինքնորոշման իրավունքը և խնդրի քաղաքական կարգավորմանն ուղղված ամեն մի առաջարկ, շարունակում էին առաջ քաշել երկրամասը կրկին իրենց ենթարկելու պահանջ:

ԵԱՀԿ-ն առաջին անգամ դարձավ միջազգային առձակատման լուծման միջնորդ: Հենց սկզբից ԵԱՀԿ ձևաչափով ստեղծվեց արցախյան հիմնախնդրի լուծման հիմնական կառույցը՝ ԵԱՀԿ Մինսկի խումբը՝ Ռուսաստանի, ԱՄՆ-ի և Ֆրանսիայի համանախագահությամբ:

Սկզբնական փուլում ԵԱՀԿ Մինսկի խմբի բանակցություններում Հայաստանը որդեգրել էր հետևյալ սկզբունքը. «Հայաստանի Հանրապետությունը կվավերացնի յուրաքանչյուր փաստաթուղթ, որն ընդունելի կլինի Ղարաբաղի ժողովրդի համար և ստորագրված՝ ԼՂՀ ղեկավարության կողմից»: Լեռնային Ղարաբաղի հայությունն էլ բացառում է որևէ ենթակայություն Ադրբեջանին և կախվածություն նրանից:

ԼՂՀ-ն հանդես էր գալիս միմյանց նախապայմաններ չթելադրելու դիրքերից՝ առաջարկելով բանակցություններ սկսել կարգավիճակի սկզբունքային հիմքերի ճշտման նպատակով: Միայն Ադրբեջան—Ղա-

ռաբաղ ուղղակի բանակցությունների միջոցով հնարավոր կդառնա սահմանել հակամարտող կողմերի փոխզիջումների շրջանակը և քննել խնդրի քաղաքական կարգավորման երկուստեք ընդունելի տարբերակ: Հակառակ սրան՝ Ադրբեջանը համառորեն չի ճանաչում ԼՂՀ-ն որպես հակամարտող կողմ:

1996 թ. վերջին ԵԱՀԿ Լիսաբոնի գագաթաժողովում փորձ արվեց Արցախյան խնդրի լուծումը կապելու Ադրբեջանի տարածքային ամբողջականության հետ: Դա անընդունելի էր հայկական կողմի համար: Բանակցությունները մտան փակուղի: 1997 թ. ԵԱՀԿ մի քանի անգամ գումարած համաժողովներում քննարկումներն արդյունք չտվեցին:

Բանակցությունների նոր փուլը: 1998 թ. փետրվարի 3-ին ՀՀ-ում կատարվեց իշխանափոխություն: Մարտ ամսին ընտրվեց հանրապետության նոր նախագահ՝ Ռոբերտ Քոչարյանը: Սկսվեց ղարաբաղյան բանակցությունների նոր փուլը: Հայաստանի Հանրապետության ղեկավարությունը, կարևորելով բանակցությունների նշանակությունը խնդրի կարգավորման հարցում, ՄԱԿ-ի 53-րդ նստաշրջանում (1998 թ.) հայտարարեց, որ բանակցություններն արդյունքի չեն հասնի, քանի դեռ գործընթացին չեն մասնակցում Արցախի ներկայացուցիչները: 1998 թ. ԵԱՀԿ համանախագահները մի քանի անգամ այցելեցին Հայաստանի Հանրապետություն, Ադրբեջան և ԼՂՀ:

Ադրբեջանի ղեկավարությունը համառորեն հրաժարվում էր բանակցությունների վերսկսումից: Սակայն ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների ջանքերով 1999 թ. սկսվեցին Հայաստանի և Ադրբեջանի նախագահների ուղղակի շփումները, որոնք մինչ այժմ շարունակվում են:

Հայաստանի Հանրապետության և Արցախի ղեկավարները նորանոր ուղիներ են փնտրում տարածաշրջանում կայուն վիճակ ստեղծելու, հակամարտությունը կարգավորելու համար:

Ընդհատված բանակցությունները շարունակվեցին 2001 թ. սկզբին: 2001 թ. ապրիլին կազմվեց Քի Ուեստի փաստաթուղթը, որը որոշակի առաջընթաց արձանագրեց: Այն ամրագրում էր Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման իրավունքը:

2010 թվականից բանակցությունների քննարկման փուլում է ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում մշակված մադրիդյան սկզբունքների նորացված տարբերակը: Ղարաբաղյան խնդրով բանակցությունների ժամանակ Հայաստանի Հանրապետությունը շարունակում է պաշտպանել այն սկզբունքը, որ վերջնական համաձայնությունը կամ փաստաթուղթը անվիճելիորեն պետք է ստանա ղարաբաղյան հակամարտության կարգավորման առանցքային կողմի՝ ԼՂՀ-ի հավանությունը: ՀՀ-ի համար խնդրի կարգավորման հիմքը շարունակում են մնալ ԼՂՀ ժողովրդի ինքնորոշման իրավունքի ամրագրումն ու դրա միջազգային ճանաչումը, ԼՂՀ բնակչության անվտանգության մի-

ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանն ընդունել է ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներին, 2010 թ.

ջազգային երաշխիքների ապահովումը:

Խնդրի լուծման ուղղությամբ որոշակի հույսեր էին կապված 2011 թ. հունիսի 24–ին Թաթարստանի մայրաքաղաք Կազանում եռակողմ՝ Ռուսաստանի նախագահ Դ. Մեդվեդևի, Հայաստանի նախագահ Ս. Սարգսյանի և Ադրբեջանի նախագահ Ի. Ալիևի հանդիպման հետ, որը, սակայն, չարդարացրեց այդ հույսերը: Որևէ համաձայնություն հիմնարար սկզբունքների շուրջ Կազանում ձեռք չբերվեց, որն էլ ի չիք դարձրեց այն ակնկալիքները, որ կազանյան հանդիպումը կարող էր դառնալ բեկումնային: Բոլոր դեպքերում բանակցությունները շարունակվում են՝ հույս ներշնչելով, որ դրանք կարող են երկուստեք ընդունելի տարբերակների հանգեցնել, և հակառակորդ կողմը ի վերջո կհասկանա, որ ինքը որևէ իրավունք չունի Ղարաբաղի նկատմամբ:

Ադրբեջանի կողմից հրադադարի պարբերական խախտումները, սադրիչ գործողությունները Արցախի հետ շփման գծում և Հայաստանի հետ սահմանին լրջորեն վնասեցին ոչ միայն Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի շուրջ բանակցային գործընթացին, այլև վտանգեցին տարածաշրջանային անվտանգությունն ու կայունությունը: Բանակցային գործընթացին լրջագույն վնաս հասցրին ադրբեջանա–հունգարական տխրահռչակ գործարքի արդյունքում ադրբեջանցի մարդասպան Սաֆարովի ազատ արձակումն ու հերոսացումը: Այդ սադրիչ քայլին միջազգային հանրության միահամուռ բացասական արձագանքը և դատապարտումը վկայեցին Ադրբեջանի ղեկավարության որդեգրած ուղեգծի սնանկության ու անհեռանկարայնության մասին:

2016 թ. ապրիլի սկզբին իր արկածախնդրական գործողություններով

Ադրբեջանը հարված հասցրեց տարածաշրջանային անվտանգությանն ու կայունությանը:

Ապրիլյան քառօրյա պատերազմից հետո ՀՀ–ն հստակորեն հայտնել է իր դիրքորոշումը, որ պատերազմի վերսկսման դեպքում ոչ միայն Ադրբեջանին արժանի հակահարված կհասցնի, այլև կճանաչի Արցախի Հանրապետության (ԼՂՀ) անկախությունը:

Հարցեր և առաջադրանքներ

1. Արցախյան հիմնախնդրի կարգավորմամբ միջազգային ո՞ր կառույցներն են զբաղվում:
2. Ներկայացրեք հակամարտող կողմերի տեսակետները հարցի կարգավորման վերաբերյալ:
3. Ո՞րն է ՀՀ տեսակետը հիմնախնդրի կարգավորման վերաբերյալ: Ձեր կարծիքով ինչպիսի՞ն պետք է լինի հիմնախնդրի լուծումը:

ԲԱԺԻՆ 4

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԸ 1920 ԹՎԱԿԱՆԻՑ ՄԻՆՉԵՎ ՄԵՐ ՕՐԵՐԸ

ԳԼՈՒԽ 1. ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԸ 1920–1939 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

§ 1. ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ 1920–1939 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ԵՎ ՀԱՅՐԵՆԻՔ—ՍՓՅՈՒՌՔ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սփյուռքի առաջացումը: Ցեղասպանությունից փրկված հայության մեծ մասը, զրկվելով հայրենիքում, բնօրրանում ապրելու հնարավորությունից, սփռվեց աշխարհի տարբեր երկրներում՝ կազմավորելով հայկական Սփյուռքը: Հայաստանի այն մասում, որտեղ 1918 թ. վերականգնվեց և պահպանվեց պետականությունը, ավելի քիչ հայ բնակչություն կար, քան նրա սահմաններից դուրս:

Հայ գաղթականներն առաջին հերթին ձգտում էին հաստատվելու այն երկրներում, որտեղ կային հայկական գաղթավայրեր՝ ակնկալելով իրենց ազգակիցների օժանդակությունը: Հետագայում հայկական համայնքներ ձևավորվեցին նաև այլ երկրներում (շուրջ 50 երկիր):

1920–ական թվականների սկզբին ամենամարդաշատ հայկական գաղթօջախները Սիրիայում և Լիբանանում էին, որտեղ արաբ ժողովրդի բարեկամական վերաբերմունքի շնորհիվ ապաստան գտան հարյուրհազարավոր հայեր:

Խոշոր գաղթօջախ ձևավորվեց Ամերիկայում (ԱՄՆ և Կանադա)՝ շուրջ 130 հազար հայերով: Հայաշատ էին բալկանյան երկրները՝ Բուլղարիան, Ռումինիան և Հունաստանը: Զգալի թվով հայեր հաստատվեցին Ֆրանսիայում, ինչպես նաև Աֆրիկայի և Ասիայի տարբեր երկրներում: Միայն Իրանում հաշվվում էր մոտ 100 հազար հայ: Թուրքիայում ապրող ավելի քան 2,5 միլիոն հայերից մնացել էր 280 հազարը, որի կեսից ավելին Կ. Պոլսում էր:

Արևմտահայ գաղթականության մի զգալի հատված ապաստանեց Ռուսաստանում: Շուրջ 600 հազար գաղթականներ էին հանգրվանել Վրաստանում, Ադրբեջանում և Հյուսիսային Կովկասում:

Սփյուռքի ձևավորման գործընթացը տևեց շուրջ մեկուկես տասնամյակ՝ ուղեկցվելով բազում դժվարություններով: Հայկական գաղթօջախներում բնակչության սոցիալ–տնտեսական պայմանները շատ ծանր էին: Նրանց մեծ մասը չուներ մասնագիտական որակավորում, չգիտեր տեղական լեզուները և հարկադրված կատարում էր բարձր որակավորում չպահանջող ու ցածր վարձատրվող ծանր աշխատանք:

Սփյուռքահայությունը հիմնականում բնակվում էր քաղաքներում, զբաղվում արհեստներով ու առևտրով: Նրանք երբեմն կառուցում էին առանձին թաղամասեր, ինչը կարևոր նշանակություն ունեցավ համայնքների կրթամշակութային և հասարակական կյանքի կազմակերպման համար:

Հատկապես կարևոր դեր խաղացին հայրենակցական և բարեգործական միությունները: 1906 թվականին կազմակերպված Հայկական բարեգործական ընդհանուր միությունը (ՀԲԸՄ) նյութական մեծ օժանդակություն ցուցաբերեց արևմտահայ գաղթականներին, Սփյուռքի կրթական գործին, հայրենադարձության կազմակերպմանը, ինչպես նաև Խորհրդային Հայաստանի տնտեսական և մշակութային զարգացմանը: 1910 թ. գործում էր ***Հայ օգնության միությունը (ՀՕՄ)***, որը նույնպես մեծ օգնություն ցուցաբերեց:

Սփյուռքում հայապահպանության համար կարևոր դեր ուներ Հայ առաքելական եկեղեցին: Նա միավորող և համախմբող ուժ էր: Դրա համար էլ հայ համայնքային կյանքի կազմակերպումն անհրաժեշտաբար ուղեկցվում էր եկեղեցիների կառուցումով: Որպես կանոն՝ համայնքները կազմակերպվում էին եկեղեցու շուրջը, որը իշխանությունների կողմից ճանաչվում էր իբրև համայնքի ղեկավար մարմին:

Հայապահպանության և Հայ դատի լուծման գործում զգալի դեր էին խաղում հայ ազգային քաղաքական կուսակցությունները՝ Հայ հեղափոխական դաշնակցությունը (ՀՅԴ), Հնչակյան (ՍԴՀԿ) և Ռամկավար ազատական (ՌԱԿ) կուսակցությունները: Սփյուռքում գործող կուսակցությունների միջև ընթանում էր նաև քաղաքական պայքար:

Այնուամենայնիվ, ավանդական կուսակցությունները, քննադատելով հանդերձ Հայաստանի խորհրդային իշխանությանը, Խորհրդային Հայաստանը համարում էին հայության հայրենիքը, փորձում նպաստ բերել նրա բարգավաճմանը:

Հայկական հարցը և սփյուռքահայությունը: Սփյուռքահայության բոլոր խավերն ուշադրությամբ և մեծ հույսերով էին հետևում այն միջազգային համաժողովներին, որտեղ քննարկվում էր Հայկական հարցը: Խորհրդային իշխանությունը 1921 թ. Մոսկվայի և Կարսի պայմանագրերով, ըստ էության, հրաժարվեց Հայկական հարցից: Համազգային այդ խնդրի ամբողջ ծանրությունն իր վրա վերցրեց Սփյուռքը: Դիվանագիտական պայքարը շարունակում էին Ազգային պատվիրակությունը՝ Պ. Նուբարի, ապա՝ Գաբրիել Նորատունկյանի գլխավորությամբ, և տակավին իր գոյությունը շարունակող նախկին Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը՝ Ա. Ահարոնյանի նախագահությամբ:

Հայկական պատվիրակությունները մասնակցեցին մեծ պետությունների ***Լոնդոնի կոնֆերանսին*** (1921 թ. փետրվարի 21—մարտի 14): Այստեղ Սևրի պայմանագիրը ստորագրած տերությունները փաստորեն գործնա-

կանում հրաժարվեցին իրենց ստորագրություններից և վերանայեցին մոտեցումները Հայկական հարցի լուծման վերաբերյալ:

Լոնդոնում Կ. Պոլսի և Անկարայի թուրքական միացյալ պատվիրակությունը պահանջեց Թուրքիային վերադարձնել Կիլիկիան և հրաժարվել Սևրի պայմանագրից: Հայկական պատվիրակությունները պահանջում էին կատարել Սևրի պայմանագիրը և Կիլիկիային տրամադրել ինքնավարություն: Կոնֆերանսն այդ հարցում որոշման չհանգեց: Իսկ 1921 թ. հոկտեմբերի 20–ին Անկարայում Թուրքիայի և Ֆրանսիայի միջև կնքված պայմանագրով ֆրանսիական կառավարությունը Կիլիկիան հանձնեց թուրքերին:

Լոնդոնի կոնֆերանսում, ինչպես նաև հետագա մի շարք միջազգային դիվանագիտական հանդիպումներում հայկական պետության վերականգնման փոխարեն նշվում էր Թուրքիայի որևէ տարածքում, մասնավորաբար Կիլիկիայում կամ հյուսիսարևելյան վիլայեթներում գաղթական հայերին բնակվելու հնարավորություն տալու մասին: Դրա վերաբերյալ որոշում ընդունվեց նաև Ազգերի լիգայում (1921 թ. սեպտեմբերի 21–22), համաձայն որի՝ հայերի համար պետք է ստեղծվեր ***«ազգային օջախ»***:

Վերջին անգամ Հայկական հարցը քննարկվեց ***Լոզանի կոնֆերանսում*** (1922 թ. նոյեմբերի 20 — 1923 թ. հուլիսի 24): Լոզան ժամանած ՀՀ պատվիրակությանը չթույլատրեցին մասնակցել Լոզանի կոնֆերանսին: Այն միացավ Ազգային պատվիրակությանը՝ Գ. Նորատունկյանի գլխավորությամբ, որն էլ ներկայացրեց հայերի պահանջները: Հենց այստեղ էլ, փաստորեն, Սևրի պայմանագրի փոխարեն քննարկվեց միայն «ազգային օջախի» ստեղծման հարցը: Սակայն թուրքական պատվիրակության նախագահ, արտգործնախարար Իսմեթ փաշան խստորեն մերժեց Թուրքիայում հայերի «ազգային օջախ» ստեղծելու առաջարկը՝ ասելով, որ հայերի հողային պահանջներն արդեն լուծված են Արևելյան Հայաստանում:

Դրանից հետո Հայկական հարցն առժամանակ միջազգային դիվանագիտության քննարկման առարկա չդարձավ: Այն փոխարինվեց հայ գաղթականությանը որևէ կերպ բնակեցնելու և օգնություն ցույց տալու հարցով: Հայ ժողովուրդը միայնակ մնաց աշխարհի ուժեղների առջև: Խորհրդային իշխանության տարիներին Հայ դատի և պահանջատիրության խնդիրներով հիմնականում զբաղվում էր Սփյուռքը, որովհետև Խորհրդային Հայաստանը զրկված էր ինքնուրույն արտաքին քաղաքականություն վարելու հնարավորությունից:

Խորհրդային Հայաստան—Սփյուռք հարաբերությունները: Սփյուռքի կենսունակության հիմնական գրավականը մայր հայրենիքի հետ կապերի ամրապնդումն էր, որոնք սկզբնավորվել էին Սփյուռքի ձևավորման առաջին իսկ տարիներին: 1918–1920 թթ. Հայաստանի Հանրապետությունը ժամանակ չունեցավ գաղթօջախների հետ լուրջ

կապեր հաստատելու: Այնուամենայնիվ, «Անկախության փոխառություն» կազմակերպելու կոչով Ալ. Խատիսյանի կառավարությունը դիմեց գաղթօջախներին և հանգանակեց ավելի քան 20 մլն դոլար: Սփյուռքի հետ կապերի ամրապնդման գործը փոխանցվեց Խորհրդային Հայաստանին: Այդ նպատակով 1920–1930–ական թվականներին մեծ ջանքեր գործադրեցին Սփյուռքի և Հայաստանի մշակութային գործիչները (Հ. Թումանյան, Ե. Չարենց, Ա. Իսահակյան, Ա. Չոպանյան, Ե. Օտյան և ուրիշներ):

Հայրենիք—Սփյուռք կապերի ամրապնդման գործում մեծ դեր խաղաց ***Հայաստանի օգնության կոմիտեն (ՀՕԿ)***, որը մասնաճյուղեր ուներ բոլոր հայաշատ գաղթօջախներում: ՀՕԿ–ի խնդիրն էր ամուր կապեր հաստատել սփյուռքահայության հետ, հայությանը համախմբել Խորհրդային Հայաստանի շուրջը, օգնել նրա տնտեսական զարգացմանը, իրականացնել հայրենադարձություն: ՀՕԿ–ն օգտագործվեց նաև հակախորհրդային ուժերի, հատկապես ՀՅԴ–ի դեմ պայքարելու համար:

1920–ական թվականների սկզբին ՀՕԿ–ը սփյուռքում ուներ 200 մասնաճյուղ՝ 10 հազար անդամներով: Նրանք մեծ օգնություն ցուցաբերեցին Հայաստանին: Իր հերթին ՀՕԿ–ը Սփյուռք էր ուղարկում գրականություն, կինոժապավեններ, գիտաքարոզչական այլ նյութեր:

ՀՕԿ–ի վարչության առաջին նախագահը Հ. Թումանյանն էր: Նրա գլխավորած պատվիրակությունը մեկնեց Կ. Պոլիս: 1924 թ. Եվրոպայի գաղթօջախներում եղավ ՀՕԿ–ի կենտրոնական վարչության նախագահ Ա. Երզնկյանի գլխավորած պատվիրակությունը: Զգալի գումար հավաքվեց Խորհրդային Հայաստանի վերաշինության համար: Ամերիկայում Անդրանիկը պատվիրակությանը նվիրեց իր սուրը՝ այն Հայաստանի պատմության պետական թանգարան հանձնելու համար:

ՀՕԿ–ը երկարատև գործունեություն չունեցավ: 1930–ական թվականներին քաղաքական բռնաճնշումների շրջանում նրա ղեկավարները որակվեցին որպես «ժողովրդի թշնամիներ, լրտեսներ ու դիվերսանտներ»: 1937 թ. վերջին ընդունված որոշմամբ ՀՕԿ–ը վերացվեց:

1920–ական թվականներին Խորհրդային Հայաստանին շարունակում էր մեծ օգնություն ցույց տալ նաև Մերձավոր Արևելքի օգնության ամերիկյան կոմիտեն: Ամերկոմը Հայաստանում պահում էր որբանոցներ, հիվանդանոցներ, դպրոցներ: 1928 թ. խորհրդային իշխանությունները որոշում ընդունեցին մեկ տարվա ընթացքում Ամերկոմը փակելու մասին:

«Ազգային օջախի» հարցը Լոզանի կոնֆերանսում տապալելուց հետո մեծ տերությունները հայ գաղթականների վերաբնակեցման հարցը հանձնեցին Ազգերի լիգային: 1924 թ. հարցի ուսումնասիրությունը հանձնարարվեց նորվեգացի հայտնի բևեռախույզ, մեծ մարդասեր ***Ֆրիտյոֆ Նանսենին***: Նա 1925 թ. հունիսին եղավ Խորհրդային Հայաստանում, որտեղ ծանո-

թացավ երկրի ու ժողովրդի վիճակին: Այնուհետև Նանսենը գրեց «Հայաստանը և Մերձավոր Արևելքը» գիրքը, որի գերմաներեն հրատարակությունը վերնագրված է «Խաբված ժողովուրդ»:

Ֆ. Նանսենի ջանքերն ապարդյուն անցան: Նա հարկադրված դիմեց Ազգերի լիգային՝ վերջնական որոշում կայացնելու համար: 1929 թ. սեպտեմբերի 1-ի որոշումով իննամյա ձգձգումից հետո հարցը հանվեց օրակարգից: Պատահական չեն Ֆ. Նանսենի հետևյալ խոսքերը. «Վա՜յ հայերին, որ երբևէ ներքաշվել են եվրոպական քաղաքականության մեջ: Ավելի լավ կլիներ, եթե Հայաստան անունը երբեք արտասանված չլիներ եվրոպական որևէ դիվանագետի կողմից»: Սակայն մեծ հումանիստի ջանքերով հարյուրհազարավոր տարագիր հայեր ստացան այսպես կոչված «Նանսենյան» անձնագիր, ինչը բնակվելու և աշխատելու իրավունք տվեց նրանց:

Սփյուռքահայերի հայրենադարձությունը: Խորհրդային Հայաստանն իր գոյության առաջին իսկ տարիներից վարում էր տարբեր երկրներում ցրված հայությանը Հայաստան տեղափոխելու քաղաքականություն: 1920-ական թվականներից սկսած՝ տնտեսական ծանր պայմաններում գտնվող հազարավոր հայեր վերադարձան հայրենիք:

Հայրենադարձությունը սկսվել էր դեռևս Հայաստանի առաջին հանրապետության օրոք: Հայկական պետականության վերականգնումը մեծ ոգևորությամբ ընդունվեց սփյուռքահայության կողմից: Հայաստան եկան

Ֆրիտյոֆ Նանսեն

գիտնականներ, բարձրորակ մասնագետներ, ռուսական բանակի հայազգի սպաներ ու մասնակցեցին հայրենիքի վերաշինությանը:

1921 թ. դեկտեմբերին Միջագետքի (Իրաք) բրիտանական իշխանություններն այնտեղի հատուկ ճամբարներում ապաստանած հայ գաղթականների առաջին խումբը (շուրջ 3-հազար մարդ, հիմնականում՝ վասպուրականցիներ) նավերով տեղափոխեցին Բաթում, այնտեղից՝ Հայաստան: 1922 թ. հունվարի 10-ին Բաթում ժամանեց Միջագետքում ապաստանած հայերի երկրորդ՝ ևս 3 հազարանոց խումբը: Նույն տարում Կ. Պոլսից Հայաստան ներգաղթեց 3,5 հազար մարդ: Սկիզբ դրվեց հայրենադարձությանը, որն ընդհատումներով շարունակվեց հետագայում:

1923-1925 թթ. Հայաստան ներգաղթեցին Սիրիայից, Հունաստանից, Ֆրանսիայից, Թուրքիայից և այլ երկրներից: ***1921-1936 թթ. ներգաղթածների ընդհանուր թիվը ավելի քան 42 հազար էր:***

Հայրենադարձության կազմակերպման գործում մեծ դեր խաղացին հայրենակցական կազմակերպությունները: Նրանք միջոցներ տրամադրեցին ներգաղթողների համար նոր ավաններ ու գյուղեր կառուցելու նպատակով: Դրանց մի մասը (Նոր Արաբկիր, Նոր Բութանիա, Նոր Սեբաստիա, Նոր Մարաշ, Նուբարաշեն) հետագայում ներառվեց Երևանի վարչական տարածքի մեջ: Մայր հայրենիքում Արևմտյան Հայաստանի քաղաքների ու բնակավայրերի անունների վերակենդանացումը հարգանքի տուրք էր ցեղասպանության ենթարկվածների հիշատակին, ծննդավայրի, հայրենի հողի կարոտի փարատման փորձ էր ու վերադարձի ակնկալիք:

1936 թ. ԽՍՀՄ կառավարությունը և ՀամԿ(բ)Կ կենտկոմը որոշում ընդունեցին հայրենադարձների կյանքի պայմանները բարելավելու մասին: Հայրենադարձների ավաններում կազմակերպված կոլտնտեսություններին տրվեցին մի շարք արտոնություններ:

1930-ական թվականների երկրորդ կեսին խորհրդային երկրում ծավալված քաղաքական բռնաճնշումները, Հայաստանում ՀՕԿ-ի և ՀԲԸՄ-ի գործունեության արգելումը վերջ դրեցին Սփյուռքի հետ առանց այն էլ խիստ սահմանափակ հարաբերություններին, և հայրենադարձությունն ընդհատվեց: Խորհրդային երկրում հաստատված շատ հայրենադարձներ ենթարկվեցին բռնությունների, նրանց նկատմամբ եղան խտրական վերաբերմունքի դրսևորումներ:

Սփյուռքի հետ հարաբերությունները մասնակիորեն վերականգնվեցին միայն Հայրենական մեծ պատերազմի տարիներին՝ հակաֆաշիստական ընդհանուր ճակատի ստեղծման ընթացքում:

ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

Ս. ՏԵՐ-ԳԱԲՐԻԵԼՅԱՆԻ՝ 1931 Թ. ՓԱՐԻԶԻ «ՄԵՐ ՈՒՂԻՆ» ԹԵՐԹՈՒՄ ԱՐԱԾ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Բոլոր հայ աշխատավորները պետք է գիտենան, որ ներգաղթի խնդրում մենք պետք է ղեկավարվենք դասակարգային սկզբունքով, այսինքն՝ պիտի ներգրավենք միմիայն աշխատավոր տարրեր՝ բանվորներ ու գյուղացիներ:

Հարցեր և առաջադրանքներ

1. Վերհիշեք, թե երբ և ինչ պատմական պայմաններում է առաջացել հայկական Սփյուռքը: Ո՞ր երկրներում ձևավորվեցին խոշոր հայկական համայնքներ: Ինչ պայմաններում էին ապրում սփյուռքահայերը և ինչ խնդիրների առջև կանգնեցին:
2. Ներկայացրեք Հայոց եկեղեցու և ազգային քաղաքական ու հասարակական կազմակերպությունների դերը հայապահպանության գործում:

3. Հայաստանի Հանրապետության խորհրդայնացումից հետո ո՞ւմ բաժին ընկավ Հայկական հարցի լուծման համար պայքարի շարունակումը: Ինչո՞ւ Լոնդոնի և Լոզանի կոնֆերանսներում Անտանտի տերությունները վերանայեցին իրենց մոտեցումները Հայկական հարցի նկատմամբ: Ի՞նչ է «ազգային օջախը»:
4. Ներկայացրե՛ք հայրենիք—Սփյուռք կապերի ձևավորումն ու ամրապնդումը 1920-ական թվականներին: Վերհանե՛ք ՀՕԿ-ի դերը այդ կապերի ամրապնդման գործում: Պատրաստե՛ք զեկույց Ֆ. Նանսենի հայանպաստ գործունեության վերաբերյալ:
5. Ինչո՞ւ խորհրդային պետությունը կազմակերպեց հայերի հայրենադարձությունը: Որքա՞ն հայ ներգաղթեց Հայաստան 1921-1936 թթ.: Ի՞նչ դեր խաղացին հայրենակցական միությունները: Որո՞նք էին հայրենադարձության գործընթացի ընդհատման պատճառները:

ԳԼՈՒԽ 2. ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԸ 1945-1991 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

§ 1. ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆԸ

1946-1948 թվականների զանգվածային հայրենադարձությունը: Երկրորդ աշխարհամարտում տարած հաղթանակը սփյուռքահայության շրջանում բարձրացրել էր Խորհրդային Միության, այդ թվում նաև Խորհրդային Հայաստանի հեղինակությունը: Վստահության աճն ուներ նաև այլ պատճառ՝ հայկական հողերը Թուրքիայից պահանջելու և Հայաստանին միացնելու մտայնությունը: Նման պայմաններում շեշտակի աճեց Հայաստան ներգաղթելու ցանկությունը:

Աշխարհի տարբեր երկրներում ապաստանած հայերը դիմում էին ՀԽՍՀ իշխանություններին՝ Հայաստան ներգաղթելու ցանկությամբ: Խորհրդային Հայաստանի կառավարությունն առանց միութենական կառավարության որոշման ոչինչ չէր կարող ձեռնարկել, մինչդեռ արտասահմանից ստացվում էին հազարավոր, մեկը մյուսից հուզական դիմումներ:

ԽՍՀՄ կառավարությունը ***1945 թ. նոյեմբերի 21-ին*** որոշում ընդունեց սփյուռքահայության ներգաղթը Խորհրդային Հայաստան իրականացնելու մասին: Հանրապետության կառավարությանն առընթեր կազմվեց ***Արտասահմանից ներգաղթող հայերի ընդունման կոմիտե:*** Սփյուռքի գրեթե բոլոր համայնքներում կազմվեցին հայրենադարձությանը նպաստող հանձնաժողովներ: ԽՍՀՄ-ի արտասահմանյան ներկայացուցչությունների և Սփյուռքի հայկական կոմիտեների տվյալներով ներգաղթելու համար ցուցակագրվել էր 360 հազար մարդ:

Սփյուռքահայ բազմաթիվ կազմակերպություններ, առաջնորդվելով հայ ժողովրդի վերամիավորման հայրենասիրական գաղափարով, իրենց

Բեյրութի և Դամասկոսի հայրենադարձ հայերի առաջին խմբի ժամանումը Բաթում, 1946 թ.

ջանքերն ուղղեցին ներգաղթի կազմակերպմանը:

Հայրենադարձության խնդրին փոքր-ինչ այլ մոտեցում ուներ դաշնակցությունը: Չմերժելով հայրենադարձության կարևորությունը՝ կուսակցությունը նաև տագնապում էր, որ զանգվածային ներգաղթը կարող է վնասել խոշոր և կայացած գաղթօջախներին: Նման մոտեցումը պայմանավորված էր մի քանի հանգամանքներով. նախ Խորհրդային Հայաստանը զրկված էր ինքնուրույն արտաքին քաղաքականություն վարելու հնարավորությունից, իսկ ԽՍՀՄ-ը մտադիր չէր հանդես գալ Հայկական հարցի լուծման օգտին, ուստի Հայ դատի, հայ պահանջատիրության միակ արծարծողը մնում էր սփյուռքահայությունը: Ներգաղթի հետևանքով գաղթօջախների թուլացումը, ըստ դաշնակցականների, կվտանգեր հայության համար առաջնային այդ խնդիրների կենսագործումը: Մյուս կարևոր հանգամանքը ԽՍՀՄ-ում մոլեգնող ստալինյան բռնատիրությունն էր:

Սփյուռքահայ գաղթօջախներում և Խորհրդային Հայաստանում ձեռնարկված միջոցառումները հնարավորություն ընձեռեցին 1946 թ. ամռանն ընդունելու հայրենադարձների առաջին քարավանը: ***1946 թ. հունիսի 23-ին*** հայրենադարձների առաջին խումբը «Տրանսիլվանիա» շոգենավով դուրս եկավ Բեյրութի նավահանգստից և չորս օր անց ժամանեց Բաթում: Այստեղից գնացքով նրանց տեղափոխեցին Երևան: Հայրենադարձությունը շարունակվեց մինչև հոկտեմբեր:

1946 թ. Լիբանանից, Իրանից, Սիրիայից, Հունաստանից, Բուլղարիայից, Ռումինիայից Հայաստան ժամանեց մոտ 51 հազար մարդ:

ԽՍՀՄ կառավարության որոշմամբ 1947 թ. Խորհրդային Հայաստան պետք է ներգաղթեին ևս շուրջ 63 հազար սփյուռքահայեր, սակայն մի շարք պատճառներով հանրապետությունը կարողացավ ընդունել միայն 25 հազար մարդու: Նկատի ունենալով առաջացած դժվարությունները՝ ՀԿ(բ)Կ կենտկոմի բյուրոն 1948 թ. որոշեց ընդունել 10 հազար մարդու:

Հետպատերազմյան շրջանում սկսված սառը պատերազմը, տնտեսական դժվարությունները, ԽՍՀՄ-ի ամբողջատիրական համակարգի նոր բացասական դրսևորումները սփյուռքահայերի հայրենադարձության կասեցման պատճառ դարձան: Առիթը դժվար չէր գտնել: 1948 թ. սեպտեմբերի 1-ին «Պոբեդա» ջերմանավի վրա հրդեհ բռնկվեց: Պատճառաբանվեց, թե «հայրենադարձվող հայերի մեջ անկասկած կան ամերիկյան լրտեսներ»: 1948 թ. սեպտեմբերի 14-ին եղավ ԽՍՀՄ կառավարության որոշումը՝ սփյուռքահայերի ներգաղթը դադարեցնելու մասին: Այսպիսով՝ 1946-1948 թթ. ընթացքում աշխարհի 12 երկրներից հայրենադարձված հայերի ընդհանուր թիվը կազմեց շուրջ 90 հազար: Հաղթահարելով սոցիալ-տնտեսական ու քաղաքական կյանքի շատ դժվարություններ՝ հայրենադարձներն աստիճանաբար ներգրավվեցին Հայաստանի տնտեսության, գիտության ու մշակույթի զարգացման գործընթացի մեջ՝ իրենց նպաստը բերելով երկրի առաջընթացին: Մեծ հայրենադարձությունը խոշոր նշանակություն ունեցավ ՀԽՍՀ ժողովրդագրական իրավիճակի բարելավման համար:

Հայրենադարձությունը 1950-1980-ական թվականներին: 1949 թ. օգոստոսին ՀԽՍՀ նախարարների խորհրդին առընթեր ներգաղթի կոմիտեն դադարեցրեց իր գործունեությունը: Չնայած այդ հանգամանքին՝ սփյուռքահայությունը շարունակում էր դիմումներ հղել ՀԽՍՀ կառավարությանը՝ խնդրելով թույլատրել ներգաղթը հանրապետություն:

Թեև 1950-ական թվականների ընթացքում չհաջողվեց կազմակերպել զանգվածային նոր հայրենադարձություն, բայց տարբեր երկրներից անհատական կարգով Խորհրդային Հայաստան ներգաղթեց շուրջ 4 հազար սփյուռքահայ:

Ընդհանուր առմամբ, 1962-1982 թթ. անհատական կարգով, առանձին խմբերով Հայաստան ներգաղթեց մոտ 32 հազար մարդ աշխարհի երեսուն երկրներից:

Հետագա տարիներին հայրենադարձությունը չշարունակվեց, ծայր առավ հակառակ գործընթացը: Սոցիալ-տնտեսական և քաղաքական դրդապատճառներով հայրենադարձների մի մասը և նրանց հարազատները հեռացան Հայաստանից:

Սփյուռքահայ կենտրոնները: Երկրորդ աշխարհամարտից հետո սփյուռքահայության խոշոր կենտ-

րոններ էին Լիբանանի, Իրանի, Սիրիայի, Իրաքի, Եգիպտոսի, ԱՄՆ-ի, Թուրքիայի, Ֆրանսիայի հայկական գաղթօջախները: Մեծ թվով հայեր ապրում էին Արգենտինայում, Բրազիլիայում, Բալկանյան և այլ երկրներում:

Երկրորդ աշխարհամարտին հաջորդած մի քանի տասնամյակների ընթացքում ձևավորվեցին նոր հայաշատ գաղթօջախներ, մասնավորապես Ավստրալիայում, Կանադայում, Շվեդիայում:

Թեև աշխարհի հայկական գաղթօջախներն ունեն շատ ընդհանրություններ, սակայն զգալի են նաև նրանց տարբերությունները, որոնք պայմանավորված են տվյալ պետության ու ժողովրդի զարգացման աստիճանով, ավանդույթներով, համաշխարհային պատմության մեջ և ներկա ժամանակաշրջանում ունեցած դերակատարմամբ:

Հայկական համայնքները Արևմուտքի երկրներում: Երկրորդ աշխարհամարտից հետո Արևմուտքի երկրներում հաստատված տարագիր հայության նոր սերունդները մեծ մասամբ կարողացան ձերբազատվել գաղթական լինելու բարդույթից: Ի տարբերություն գաղթական առաջին սերնդի՝ նոր սերունդը, տիրապետելով երկրի լեզվին, կրթություն և մասնագիտություն ստանալով, արագորեն հարմարվում էր տվյալ ժողովրդի նիստուկացին, դառնում հասարակության լիիրավ անդամ: Արևմուտքի երկրների հայերի՝ որպես հասարակության արժանապատիվ քաղաքացիների ինքնահաստատմանը նպաստեց նաև այն, որ նրանք արիաբար մարտնչեցին ֆաշիստական Գերմանիայի դեմ մղված պատերազմում:

Արևմուտքի պետություններում մեծացած ու կրթություն ստացած հայերը ներգրավված էին այդ երկրների սոցիալ-տնտեսական, քաղաքական և մշակութային ոլորտներում: Նրանք գիտնականներ էին, գիտատեխնիկական տարբեր ոլորտներ սպասարկող մասնագետներ, պետական ծառայողներ, ձեռներեցներ և այլն: Նշված հաջողություններով հանդերձ՝ Արևմուտքի երկրներում վտանգվում էր հայության ազգային ինքնությունը: Բնիկ ժողովուրդների կենսաձևի և սոցիալ-մշակութային արժեքների որդեգրումը սահմանափակում էր հայ ազգային ավանդական մշակույթի դրսևորումները: Հատկապես երիտասարդության մեծամասնությունը լավագույն դեպքում սկսեց տիրապետել խոսակցական հայերենին: Ազգային ինքնության պահպանումը դժվարացավ այլազգիների հետ հայերի ամուսնության մշտական աճի պատճառով:

Արևմուտքի երկրների հայությունն աշխուժացում ապրեց, երբ Արևելքի երկրներից 1960-ական թվականներին սկսվեց հայերի նոր հոսք, իսկ 1980-ական թվականների վերջից՝ նաև Հայաստանից: Նորեկների նախաձեռնության և ջանքերի շնորհիվ սկսեցին ավելի արդյունավետ գործել համայնքային կազմակերպությունները: Բայց ցավալի էր, որ Արևմուտքի հայկական գաղթօջախների հետագա

ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅԵՐԻ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆԸ



ամրապնդումը տեղի էր ունենում հայրենիքից և Արևելքի ավանդական համայնքներից արտագաղթի հաշվին:

Հայկական համայնքները Արևելքի երկրներում: Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո էլ Իրանի, Սիրիայի, Լիբանանի հայ համայնքները շարունակում էին մնալ սփյուռքահայ կարևոր կենտրոններ: Արևելքի երկրներում ապրող հայերի շրջանում զգալիորեն աճեց բարձրակարգ մասնագետների, ծառայողների, գործարանատերերի, առևտրականների թիվը: ***Լիբանանում*** տնտեսական վերելքի շրջանում՝ 1960-ական թվականներին, հայերին էին պատկանում երկրի խոշոր արդյունաբերական ձեռնարկությունների 18 %-ը և մանր արհեստավորական ձեռնարկությունների 43 %-ը: Երկար ժամանակ զգալի էր հայ կապիտալի տեսակարար կշիռը ***Իրանի*** տնտեսության մեջ: Այդ երկու երկրներում հայ ազգաբնակչությունը ճանաչված է որպես ազգային-կրոնական համայնք, ուստի ներկայացուցիչներ ունի օրենսդիր և գործադիր մարմիններում:

Արևելքի երկրներում հայկական համայնքներն ավելի քիչ են ենթարկված ազգային ինքնությունը կորցնելու վտանգին: Ապրելով մահմեդական երկրներում՝ նրանք իրենց կրոնի, մշակույթի, ապրելակերպի, ազգային հոգեբանության առանձնահատկություններն ավելի նախանձախնդիր, աչալուրջ են պահպանում: Այդ երկրներում ապրող հայերի ազգային ինքնագիտակցությունն ամբողջ Սփյուռքում ազգապահպանման կարևոր գրավականներից է:

Սփյուռքահայության տեղաշարժերը: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո սկսվեց սփյուռքահայերի տեղաշարժերի նոր շրջանը: Միայն 1947-1951 թթ. ԱՄՆ տեղափոխվեցին շուրջ 4,5 հազար հայեր, հիմնականում հայ ռազմագերիներ՝ ԽՍՀՄ նախկին քաղաքացիներ, որոնք, եթե հայրենիք վերադառնային, կհայտնվեին ստալինյան ճամբարներում: Զգալի թվով հայեր ստիպված էին հեռանալ Արևելյան Եվրոպայի երկրներից (Բուլղարիա, Ռումինիա), որտեղ հաստատվել էին կոմունիստական վարչակարգեր: Նրանք համալրեցին ԱՄՆ-ի, Ավստրալիայի, Կանադայի հայկական գաղթօջախները:

1950-ական թվականների տեղաշարժերը պայմանավորված էին Եգիպտոսում սկսված հեղափոխությամբ, արաբա-իսրայելական պատերազմով: Իսկ 1960-1980-ական թվականների տեղաշարժերը հետևանք էին արաբա-իսրայելական նոր պատերազմների, Լիբանանում բռնկված քաղաքացիական կռիվների, Իրանում իսլամական հեղափոխության և իրաք-իրանյան պատերազմի: 1974 թ. Թուրքիայի կողմից Կիպրոսի հյուսիսային մասի բռնազավթումն այնտեղ բնակվող հայության մի մասի արտագաղթի պատճառ դարձավ: Կիպրոսահայերի մի մասը հաստատվեց Ֆրանսիայում, Կանադայում, Անգլիայում, ԱՄՆ-ում, իսկ մյուս մասը՝ Շվեդիայում, Շվեյցարիայում, Գերմանիայում:

1988–1990 թթ. Ադրբեջանի իշխանությունների կողմից կազմակերպված կոտորածների ու բռնի տեղահանությունների հետևանքով շուրջ 400 հազար հայեր հեռացան այդ հանրապետությունից: Նրանց մի մասը հաստատվեց Հայաստանում, մյուսները՝ Ռուսաստանում և այլ երկրներում:

Հարցեր և առաջադրանքներ

1. Որո՞նք էին Երկրորդ աշխարհամարտից հետո հայերի զանգվածային հայրենադարձության պատճառները: Ե՞րբ սկսվեց և որքա՞ն տևեց զանգվածային ներգաղթը, ի՞նչ մարմիններ էին զբաղված այդ գործի կազմակերպմամբ: Ի՞նչ մոտեցում ուներ դաշնակցությունն այդ հարցում: Որքա՞ն հայ և ո՞ր երկրներից ներգաղթեց Խորհրդային Հայաստան: Ինչո՞ւ կասեցվեց հայրենադարձությունը:
2. Ի՞նչ պայմաններում վերսկսվեց հայերի ներգաղթը հայրենիք: Ներկայացրե՛ք 1950–1980-ական թվականների ներգաղթի արդյունքները:
3. Ցո՛ւյց տվեք Արևմուտքի և Արևելքի երկրների սփյուռքահայ կենտրոնների վիճակը սառը պատերազմի շրջանում:
4. Երկրորդ աշխարհամարտից հետո ի՞նչ տեղաշարժեր եղան հայկական համայնքներում. նշե՛ք դրանց պատճառները:

§ 2. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ–ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ: ՀԱՅՐԵՆԻՔ—ՍՓՅՈՒՌՔ ԿԱՊԵՐԸ

Հասարակական-քաղաքական կյանքը: Սփյուռքահայ համայնքներում գործող ազգային կազմակերպություններից շատերը համահայկական կառույցներ են: Դրանցից իր բացառիկ նշանակությամբ առանձնանում է ***Հայ առաքելական եկեղեցին***: Սփյուռքահայության մեծ մասը Հայ առաքելական եկեղեցու հետևորդ է: Հետպատերազմյան ժամանակաշրջանում՝ սառը պատերազմի տարիներին, քաղաքական, զաղափարական առճակատումից չկարողացան խուսափել նաև Սփյուռքի հոգևոր-եկեղեցական կառույցները: Արդյունքում որոշ թեմեր ԱՄՆ-ում, Հունաստանում, Մերձավոր Արևելքի մի շարք երկրներում 1956 թ. հրաժարվեցին Ս. Էջմիածնի հոգևոր գերագույն իշխանությունը ճանաչելուց և ենթարկվեցին Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսությանը, որի կենտրոնն Անթիլիասն է (Լիբանան):

Սփյուռքի համայնքների մեծ մասում գործում են նաև հայ կաթողիկե (կաթոլիկ) և ավետարանական եկեղեցիները:

Հետպատերազմյան ժամանակաշրջանում սփյուռքահայության հասարակական-քաղաքական կյանքում շարունակում են զգալի դեր կատարել ***Հայ հեղափոխական դաշնակցություն, Ռամկավար ազատական*** և ***Սոցիալ-դեմոկրատական հնչակյան***

կուսակցությունները: Թեև Սփյուռքում նրանք գործում են առանձին, այնուհանդերձ, հայության համար բախտորոշ պահերին, օրինակ՝ 1970–ական թվականների Լիբանանյան ճգնաժամի ժամանակ, նրանք համախմբվեցին ու գործեցին միասնաբար:

Սփյուռքի երիտասարդությանը հայրենասիրության ոգով դաստիարակելու գործում մեծ աշխատանք են կատարում Համազգային հայ կրթական, Թեքեյան, «Նոր սերունդ» մշակութային միությունները, ինչպես նաև Հայ մարմնակրթական ընդհանուր միությունը, Հայ երիտասարդաց ընկերակցությունը և մի շարք այլ կազմակերպություններ:

Պատերազմից հետո Սփյուռքում իր բազմաթիվ մասնաճյուղերով արդյունավետ գործունեություն էր ծավալել ***Հայ բարեգործական ընդհանուր միությունը***, որի կենտրոնը 1939 թ–ից դարձավ Նյու Յորքը: Միությունը զգալի միջոցներ տրամադրեց դպրոցական գործի կազմակերպմանը: Նրա տնօրինության տակ են ուսումնական հաստատություններ, հիվանդանոցներ, ծերանոցներ: Բարեգործական միությունը շոշափելի ֆինանսական միջոցներով 1946–1947 թթ. օժանդակեց հայրենադարձության գործին: Միությունն այդ ժամանակ աշխարհի 20 երկրներում ուներ 185 մասնաճյուղ՝ շուրջ 30 հազար անդամներով:

Հայ օգնության միությունը (ՀՕՄ), պատերազմի ընթացքում համագործակցելով միջազգային Կարմիր խաչի հետ, զգալի օգնություն ցուցաբերեց հակահիտլերյան խմբավորման երկրների քաղաքացիներին և ռազմագերիներին:

1960–ական թվականներից ՀՕՄ–ը հիմնական ուշադրությունը սևեռեց դպրոցաշինության գործի վրա: 1980–ական թվականներին միության կողմից ֆինանսավորվում էր շուրջ 90 միջնակարգ դպրոց, իսկ բազմահազար ուսանողների հատկացվում էր կրթաթոշակ:

Բարեգործական կազմակերպություններից արդյունավետ գործունեություն էին ծավալել Կյուլպենկյան հիմնադրամը, Հովարդ Կարակյոզյան հիմնարկությունը և այլն:

Հայրենիք—Սփյուռք կապերը: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ավելի ամրապնդվեցին հայրենիքի և Սփյուռքի կապերը: Դրան նպաստում էր դեռևս 1944 թ. հիմնադրված՝ Արտասահմանի հետ կուլտուրական կապի հայկական ընկերությունը, որը 1958 թ. վերակառուցվեց որպես Արտասահմանյան երկրների հետ բարեկամության ու մշակութային կապերի հայկական ընկերություն: Այնուհետև ստեղծվեցին ընկերության՝ Արաբական Արևելքի, Լատինական Ամերիկայի, Ասիայի, Աֆրիկայի ու այլ երկրների հետ բարեկամության և մշակութային կապերի հայկական բաժանմունքներ:

Արտասահմանյան երկրների մի շարք կազմակերպությունների ու հաստատությունների հետ կապեր ստեղծեցին Հայաստանի մշակութային կազմակերպությունները, Գիտությունների ակադեմիան, Երևանի

պետական համալսարանը, գրողների, կոմպոզիտորների, նկարիչների, ճարտարապետների միությունները: Այդ բոլոր կազմակերպությունները նպաստում էին մայր հայրենիքի հետ սփյուռքահայերի կապերի ամրապնդմանը:

1964 թ. Խորհրդային Հայաստանում ստեղծվեց ***Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտե,*** որը հաջորդ տարվա կեսերից սկսեց հրատարակել «Հայրենիքի ձայն» շաբաթաթերթը:

1964 թ. հայրենիքի հետ կապեր էին հաստատել 415 կազմակերպություններ ու անհատ գործիչներ, իսկ 1970–ական թվականների վերջերին՝ շուրջ հազար կազմակերպություններ և 5 հազար անհատ գործիչներ:

Խորհրդային Հայաստանում մեծ ծավալի աշխատանք էր տարվում սփյուռքահայությանն օգնելու համար: Կազմակերպվեց սփյուռքահայ դպրոցների համար դասագրքեր հրատարակելու գործը: Սփյուռք ուղարկվեցին մեծ քանակությամբ գրականություն, մարզական պարագաներ, լաբորատոր սարքավորումներ, քարտեզներ, երաժշտական գործիքներ:

Ամեն տարի Սփյուռքի հայկական դպրոցների տասնյակ ուսուցիչներ Հայաստանում կատարելագործում էին իրենց մասնագիտական ունակությունները: Հայաստանի տարբեր բուհերում բարձրագույն կրթություն էին ստանում հարյուրավոր սփյուռքահայ երիտասարդներ: Սփյուռքահայ երեխաների առանձին խմբեր ամռան ամիսներին իրենց հանգիստն էին անցկացնում Կիրովականի «Հայկական Արտեկ» և այլ ճամբարներում: Կազմակերպվում էին սփյուռքահայ նկարիչների ցուցահանդեսներ, գրողների հոբելյանական երեկոներ: Պարբերաբար Սփյուռք էին գործուղվում հանրապետության արվեստի կոլեկտիվներ, հանրաճանաչ դերասաններ, գրողներ, գիտնականներ:

1988 թ. աղետալի երկրաշարժի օրերին մայր հայրենիքին մեծ օգնություն ցուցաբերեց սփյուռքահայությունը: Ստեղծվեցին տասնյակ կազմակերպություններ: Մեծ էր նրանց նյութական և բարոյական օժանդակությունը: Բազմաթիվ սփյուռքահայեր եկան Հայաստան՝ իրենց հետ բերելով դեղորայք, սնունդ, վրաններ, տրանսպորտի ու կապի միջոցներ և այլ անհրաժեշտ ապրանքներ: Սփյուռքահայերից շատերը՝ բժիշկներ, հոգեբաններ, շինարարներ, ճարտարապետներ, մնացին Հայաստանում և անմիջականորեն մասնակցեցին փրկարարական ու վերականգնողական աշխատանքներին:

Ամենայն հայոց Վազգեն Ա կաթողիկոսը և Մեծի Տանն Կիլիկիո Գարեգին Բ կաթողիկոսը, միասին շրջելով հայկական գաղթօջախներում, հանգանակություն կազմակերպեցին, որն ուղղվեց աղետի գոտու խնդիրների լուծմանը:

Հարցեր և առաջադրանքներ

1. Վերհիշեք, թե ինչ ազգային կառույցներ էին գործում հայկական Սփյուռքում: Ի՞նչ դեր է խաղում Հայ առաքելական եկեղեցին: Ներկայացրեք ազգային կուսակցությունների և կազմակերպությունների գործունեությունը սառը պատերազմի շրջանում:
2. Ի՞նչ գործոններ նպաստեցին հայրենիք—Սփյուռք կապերի ամրապնդմանը 1940–1980-ական թվականներին: Ե՞րբ է ստեղծվել և ի՞նչ գործունեություն է ծավալել Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեն: Ինչպիսի՞ օգնություն էր ցուցաբերում Խորհրդային Հայաստանը սփյուռքահայ համայնքներին: 1988 թ. երկրաշարժից հետո ի՞նչ աջակցություն ցուցաբերեց սփյուռքահայությունը:

§ 3. ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅԵՐԻ ՊԱՅՔԱՐԸ ՀԱՅ ԴԱՏԻ ՀԱՄԱՐ

Սփյուռքահայության պայքարը Հայ դատի համար պատերազմի ավարտական փուլում: Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին հայկական Սփյուռքը կանգնած էր հակաֆաշիստական միության երկրների պաշտպանության դիրքերում:

Պատերազմի ավարտական փուլում սփյուռքահայության մեծ մասը Հայկական հարցի արդարացի լուծման գործում որոշակի հույսեր էր կապում ԽՍՀՄ-ի հաղթանակի հետ: Տարբեր երկրներում կազմակերպվել էին ազգային խորհուրդներ, որոնց խնդիրն էր բոլոր միջոցներով օժանդակել ֆաշիզմի դեմ պայքարող երկրների հաղթանակին: Այդ կազմակերպությունները սկսեցին քայլեր ձեռնարկել, որպեսզի Թուրքիայի կողմից բռնազավթված հայկական տարածքները միացվեն Խորհրդային Հայաստանին: Սփյուռքահայությանը զգալի հույսեր ներշնչեց 1945 թ. մարտի 19-ին խորհրդա-թուրքական բարեկամության և չեզոքության պայմանագրի դադարեցման մասին ԽՍՀՄ կառավարության որոշումը:

1945 թ. ապրիլին Հայ փախստականների կենտրոնական կոմիտեն, Հայկական ազգային կոմիտեն և այլ կազմակերպություններ հայկական տարածքների վերադարձի խնդրանքով դիմումներ հղեցին ԽՍՀՄ կառավարությանը և անձամբ Ստալինին:

Սփյուռքահայ կազմակերպությունները հատկապես մեծ հույսեր էին կապում 1945 թ. ապրիլին Սան Ֆրանցիսկոյում գումարվող՝ Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) հիմնադիր կոնֆերանսի աշխատանքների հետ: Հայկական հարցի արդարացի լուծման խնդրանքով կոնֆերանսի մասնակիցներին հուշագրեր ներկայացրին ***Հայկական ազգային կոմիտեն (ղեկավար՝ Ս. Վրացյան)*** և ***Ամերիկայի Հայկական ազգային***

խորհուրդը: Մայիսի 28–ին ՀՀ նախկին վարչապետ Հ. Օհանջանյանը դիմեց Ստալինին, Թրումանին, Չերչիլին և խնդրեց ջանքեր գործադրել հայ ժողովրդին հուզող հարցը լուծելու համար:

Հայկական Սփյուռքն անհամբեր սպասում էր տերությունների ղեկավարների Պոտսդամի կոնֆերանսի գումարմանը: Ամերիկայի Հայկական ազգային խորհուրդը ***հուլիսի 19–ին*** հեռագիր ուղարկեց երեք տերությունների ղեկավարներին՝ Հայկական հարցը կոնֆերանսի օրակարգում ընդգրկելու խնդրանքով:

1945 թ. սեպտեմբերին ԱՄՆ–ի բազմաթիվ ազդեցիկ հայկական կազմակերպություններ դիմեցին ՄԱԿ–ի Անվտանգության խորհրդի 5 մշտական անդամ երկրների արտաքին գործերի նախարարների՝ Լոնդոնում ընթացող խորհրդակցությանը՝ պահանջելով Թուրքիային բռնակցված հայկական տարածքները վերադարձնել և միացնել Խորհրդային Հայաստանին:

Համաշխարհային հայկական կոնգրեսը: Պատերազմի ավարտից հետո ևս սփյուռքահայությունը շարունակեց պայքարը Հայկական հարցի արդարացի լուծման ուղղությամբ: 1946 թ. ԱՄՆ–ի տասնվեց հայկական կազմակերպություններ ուղերձով դիմեցին ՄԱԿ–ի գլխավոր քարտուղարին: Նրանք խնդրում էին Անվտանգության խորհրդի օրակարգ մտցնել Հայկական հարցը, աջակցել հայ ժողովրդի պահանջների կատարմանը, հայերին հնարավորություն տալ վերադառնալու հայրենիք և ապրելու ազատ ու անվտանգ:

Հայկական տարածքների վերադարձի օգտին հանդես եկան արտասահմանյան մի շարք երկրների պետական ու հասարակական գործիչներ, զանգվածային լրատվության միջոցներ: Հայկական Սփյուռքն իր նպատակին հասնելու համար փորձեց օգտագործել նաև միջազգային քրիստոնեական եկեղեցիների կառույցները:

Կարևոր քայլ էր Ամերիկայի Հայկական ազգային խորհրդի նախաձեռնությամբ ***1947 թ. ապրիլի 30–ից մայիսի 4–ը*** Նյու Յորքում կայացած ***Հայկական համաշխարհային կոնգրեսը:*** Մասնակցում էին 22 երկրների 715 պատգամավորներ, որոնք ներկայացնում էին 70 սփյուռքահայ կազմակերպություններ, 31 եկեղեցական թեմեր:

Կոնգրեսի մասնակիցներին ողջունեց ԱՄՆ–ի սենատոր Չ. Թոբին: Նա նշեց Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում հայերի մատուցած ծառայությունները, արտահայտվեց հօգուտ Հայկական հարցի արդարացի լուծման և տերություններին կոչ արեց հայկական խնդիրն այլևս չծառայեցնել իրենց շահադիտական նպատակներին:

Համաշխարհային հայկական կոնգրեսը, ներգաղթի կազմակերպման, հայրենիք—Սփյուռք կապերի ամրապնդման հարցերը քննարկելուց բացի, փաստաթուղթ պատրաստեց հայկական հողային պահանջների վերաբերյալ: Մայիսի 12–ին կոնգրե-

Մեծ եղեռնի զոհերի հիշատակի հուշահամալիրը Ծիծեռնակաբերդում

սի առաջարկով կազմված պատվիրակությունը ԱՄՆ պետքարտուղարի տեղակալին ներկայացրեց հայերի պահանջների վերաբերյալ հուշագիր: Հուշագիրը հանձնվեց նաև ՄԱԿ-ի քարտուղարություն:

Սակայն այդ իրադարձություններից մեկ ամիս առաջ ԱՄՆ-ում ընդունվել էր այսպես կոչված «Թրումանի դոկտրինը», որը «կոմունիստական վտանգից» պաշտպանվելու պատրվակով նախատեսում էր Թուրքիային ֆինանսական օգնություն ցուցաբերել՝ երաշխավորելով նրա տարածքային ամբողջականությունը: Դրա հետ մեկտեղ՝ միջազգային իրավիճակի սրումը, Հյուսիսատլանտյան խմբավորման կազմավորումը և Թուրքիայի՝ այդ դաշինքին անդամակցումը ԽՍՀՄ քաղաքական ղեկավարությանը ստիպեցին հրաժարվել նախկինում առաջ քաշած տարածքային պահանջներից:

Սփյուռքահայերի հետագա պայքարը Հայկական հարցի լուծման և ցեղասպանության միջազգային ճանաչման համար: Սառը պատերազմի տարիներին՝ մինչև Հայաստանի երրորդ հանրապետության հռչակումը, հայկական Սփյուռքը շարունակում էր լինել հայոց պահանջատիրության միակ արտահայտիչը: Սփյուռքահայության նոր սերունդները ժամանակակից մոտեցումներ մշակեցին Հայկական հարցի լուծման գործում:

Հայ ավանդական կուսակցությունների գործունեության առաջնային թիրախները Հայկական հարցի լուծումը և ցեղասպանության միջազգային ճանաչումն էին: Առանձին դեպքերում մի կողմ դնելով տարաձայնությունները՝ հայ քաղաքական կուսակցությունները գործում էին միասնաբար: 1974 թ. հայ ազգային երեք կուսակցություններն առաջին անգամ կազմեցին համազգային կենտրոնական մարմին՝ գործողության միասնական ծրագիր մշակելու համար: Նորաստեղծ մարմինը մեծ ծավալի աշխատանք կատարեց համաշխարհային հանրությանը 1915-1923 թթ. Թուրքիայի իրականացրած հանցագործ քաղաքականությանը ծանոթացնելու ուղղությամբ:

Դաշնակցությունը ԱՄՆ-ում ստեղծեց ***Հայկական ազգային կոմիտե***

(հայտնի է որպես ***Հայ դատի հանձնախումբ***), որի նպատակն էր հարաբերություններ հաստատել ԱՄՆ դաշնային ու տեղական իշխանությունների հետ՝ հայ ազգաբնակչության շահերը, առաջին հերթին՝ հայոց պահանջատիրության հարցը պաշտպանելու նպատակով: Վաշինգտոնում, Բոստոնում, Լոս Անջելեսում, Սան Ֆրանցիսկոյում, Ֆրեզնոյում կոմիտեն ստեղծեց իր գրասենյակները: Հայկական ազգային կոմիտեի նպատակը Արևելյան և Արևմտյան Հայաստանների միավորումն ու ոչ միայն Վիլսոնի նախանշած սահմաններում, այլ նաև ժամանակին Խորհրդային Հայաստանից արհեստականորեն անջատված բոլոր տարածքներում միացյալ պետության կազմավորումն էր: Հետագայում Հայ դատի հանձնախմբեր ստեղծվեցին նաև Եվրոպայի մի շարք երկրներում, Մերձավոր Արևելքի և Լատինական Ամերիկայի հայկական գաղթօջախներում:

Համաամերիկյան հայկական կազմակերպություններից է ***Ամերիկայի հայկական համագումարը***, որը ստեղծվել է ***1972 թ.***: Նրա նպատակներն են՝ ԱՄՆ կառավարության և ԱՄՆ հայ համայնքի միջև կապի հաստատումը, ամերիկյան և համաշխարհային հասարակության ուշադրության կենտրոնացումը Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության ճանաչման վրա: Ամերիկայի հայկական համագումարը պայքարում է, որպեսզի ԱՄՆ կառավարությունը ցեղասպանությունը ճանաչի որպես անհերքելի պատմական իրողություն:

Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործում կարևոր ազդակ էին 1965 թ. իրադարձությունները: Իրականացված ցեղասպանությունից անցել էր 50 տարի: Սփյուռքի համայնքներում հարյուրհազարավոր հայեր նորից բարձրացրին իրենց բողոքի ձայնը: Հայ քաղաքական կուսակցությունները, հասարակական կազմակերպությունները բազմաթիվ դիմումներ հղեցին տարբեր երկրների խորհրդարաններին և կառավարություններին:

1965 թ. հոկտեմբերին Կիպրոսի արտաքին գործերի նախարար Ս. Կիպրիանուն ՄԱԿ-ի ամբիոնից կոչ արեց քննարկելու Հայկական հարցը: ***1967 թ. ապրիլին*** Մոնտեվիդեոյում գումարված Լատինական Ամերիկայի միջխորհրդարանական համագումարում որոշում ընդունվեց ՄԱԿ-ում օժանդակել Հայոց հարցի քննարկմանը, իսկ 3 տարի անց Ուրուգվայի խորհրդարանը հանձնարարեց իր կառավարությանը և արտաքին գործերի նախարարին Հայկական հարցը ներկայացնել ՄԱԿ-ի քննարկմանը:

1983 թ. օգոստոսին Եկեղեցիների համաշխարհային խորհուրդը 6-րդ համագումարում ճանաչեց Թուրքիայի իրականացրած Հայոց ցեղասպանության փաստը և, դիմելով ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին, առաջարկեց ճանաչել այդ իրողությունը:

1984 թ. ապրիլին Փարիզում գործող «Ժողովուրդների մշտական ատյան» կազմակերպությունը Թուրքիայի ներկայացուցիչների մասնակցությամբ

քննարկեց Հայոց ցեղասպանության հարցը: Կազմակերպությունը մեղավոր ճանաչեց Օսմանյան կայսրությանը և համապատասխան որոշում ներկայացրեց ՄԱԿ:

1987 թ. հունիսի 18-ին Եվրախորհրդարանը դատապարտեց 1915 թ. հայերի ցեղասպանությունը՝ կոչ անելով Թուրքիայի կառավարությանը ճանաչելու ցեղասպանության փաստը:

Հետագա տարիներին Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման համար ստեղծվեցին ավելի նպաստավոր պայմաններ:

Հարցեր և առաջադրանքներ

1. Երկրորդ աշխարհամարտի ավարտական փուլում սփյուռքահայությունն ինչո՞ւ աշխուժացրեց Հայ դատի համար պայքարը: Ո՞ւմ կողմից և ե՞րբ դիմումներ հղվեցին Ստալինին հայկական տարածքների վերադարձի խնդրանքով: ՄԱԿ-ի հիմնադիր կոնֆերանսի և Պոտսդամի կոնֆերանսի օրերին հայկական կազմակերպություններն ի՞նչ հարցադրումներ արեցին:
2. Հայկական հարցը ՄԱԿ-ի օրակարգ մտցնելու նպատակով 1946 թ. ո՞ւմ դիմեցին ԱՄՆ-ի հայկական կազմակերպությունները: Ե՞րբ է ստեղծվել Հայկական համաշխարհային կոնգրեսը: Ի՞նչ հարցեր քննարկեց կոնգրեսը: Ինչո՞ւ հայկական տարածքների վերադարձի հարցը պաշտպանություն չգտավ ԱՄՆ-ի կողմից:
3. Ինչո՞ւ էր Սփյուռքը դարձել հայոց պահանջատիրության միակ արտահայտիչը: Ո՞ւմ կողմից է ստեղծվել Հայկական ազգային կոմիտեն (Հայ դատի հանձնախումբը). ներկայացրե՛ք կոմիտեի նպատակները և գործունեությունը: Ե՞րբ է ստեղծվել ու ի՞նչ գործունեություն է իրականացրել Ամերիկայի հայկական համագումարը: Փաստերով հիմնավորե՛ք, որ 1965 թ. շրջադարձային էր Հայ դատի համար մղվող պայքարի պատմության մեջ: Ցո՛ւյց տվեք Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ուղղությամբ 1965-1980-ական թվականներին ձեռք բերված հաջողությունները:

ԳԼՈՒԽ 3. ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԸ ԱՐԴԻ ՓՈՒԼՈՒՄ

§ 1. ՀԱՅՐԵՆԻՔ—ՍՓՅՈՒՌՔ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հարաբերությունների կարգավորումը: Հայաստանի անկախացումը կարևոր փուլ նշանավորեց հայրենիք—Սփյուռք հարաբերություններում: Հայաստանը պետք է նպաստեր Սփյուռքի հայապահպանման գործին: Սփյուռքն էլ նպաստելու էր Հայաստանի անկախության ամրապնդմանն ու տնտեսական զարգացմանը: Հայ ժողովուրդը հա-

մոզվեց, որ հայրենիքն ու Սփյուռքն առանձին-առանձին գոյություն ունենալ չեն կարող, նրանց փոխհարաբերությունները պետք է խարսխվեն ***«Մեկ հայրենիք, մեկ ազգ»*** կարգախոսի վրա:

Հայրենիք—Սփյուռք կապերի սերտացման համար հզոր խթան էր Արցախի ազատագրական պայքարը, որն արձագանք գտավ բոլոր գաղթօջախներում: Մարտնչող Արցախին սատար կանգնեց ողջ հայությունը: Հայրենիքի հետ կապերն ավելի ամրապնդվեցին 1988 թ. դեկտեմբերյան ավերիչ երկրաշարժի հետևանքները վերացնելու համար ծավալված համազգային շարժման ընթացքում:

Հայրենիք—Սփյուռք հարաբերություններն արդյունավետ կազմակերպելու գործում կարևոր նշանակություն ունեցավ Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի աշխատանքների վերակառուցումը: Որոշ ժամանակ անց, սակայն, կոմիտեն լուծարվեց: Դրա փոխարեն 1996 թ. Հայաստանի Հանրապետության կառավարության կազմում ստեղծվեց Սփյուռքի հետ կապերի ստորաբաժանում:

Հայրենիք—Սփյուռք հարաբերությունները որակական նոր բարձրության հասան ***2008 թ. հոկտեմբերից,*** երբ ստեղծվեց ՀՀ Սփյուռքի նախարարությունը:

Հայրենիք—Սփյուռք մշակութային հարաբերությունների ամրապնդումը: Հայաստան—Սփյուռք հարաբերություններում կարևոր էր մշակութային կապերի ամրապնդումը, միասնական ծրագրերի մշակումն ու կենսագործումը:

Անհրաժեշտ էր զարկ տալ հայ ժողովրդի ինքնագիտակցության զարգացման և հայապահպանման առաջնահերթ գործոն հանդիսացող՝ մատաղ սերնդին մայրենի լեզվով կրթելու գործին:

Տարբեր գաղթօջախներից Հայաստանի բուհերում սովորելու էին գալիս մեծ թվով սփյուռքահայ երիտասարդներ, որոնք բուհերն ավարտելուց հետո հիմնականում վերադառնում էին իրենց բնակավայրերը, աշխատանքի անցնում գաղթօջախներում:

1996 թ. Երևանի Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում հիմնվեց ***«Սփյուռք»*** գիտաուսումնական կենտրոնը, որը զբաղվեց նաև սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստման, հայագիտական առարկաների ուսուցիչների պատրաստման հարցերով:

Մշակույթի ոլորտում հայրենիք—Սփյուռք առնչությունները դրսևորվեցին տարբեր մակարդակներում. պաշտոնական, պետական, անհատական-նախաձեռնական, ինքնագործ և սիրողական:

Սփյուռքից Հայաստան վերադարձվեցին բազում մշակութային արժեքներ, այդ թվում՝ հայ մտավորականների արխիվներն ու գրադարանները: Երևանի Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանը գաղթօջախներից ստացավ մի քանի հազար ձեռագրեր,

ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի հանդիպումը Սփյուռքի ներկայացուցիչների հետ

գրքեր, ձայնագրություններ, այդ թվում՝ Ա. Ահարոնյանի, Ն. Աղբալյանի, Ա. Չոպանյանի և այլոց անտիպ ստեղծագործությունները, նամակները, նյութերը:

Հայ ժողովրդի երկու հատվածների միջև հարաբերությունները սերտացնելու, առավել արդյունավետ ու փոխշահավետ դարձնելու նպատակով Հայաստանի իշխանությունների նախաձեռնությամբ, Սփյուռքի բոլոր համայնքների պատվիրակությունների մասնակցությամբ Երևանում կայանում են ***«Հայաստան—Սփյուռք» համահայկական խորհրդաժողովներ***:

1999 թ. սեպտեմբերին Երևանում կայացավ Հայաստան—Սփյուռք առաջին խորհրդաժողովը: Խորհրդաժողովը հստակեցրեց երեք հիմնախնդիր. ազգային պետականության ամրապնդումն ու զարգացումը, Արցախյան հարցի արդարացի լուծումը, Սփյուռքում ազգային ինքնության և արժեհամակարգի առավելագույն պահպանումը:

2002 թ. մայիսին Երևանում անցկացվեց Հայաստան—Սփյուռք երկրորդ խորհրդաժողովը՝ ըստ մասնագիտական բնագավառների: Դա հնարավորություն տվեց հետագա տարիներին Հայաստան—Սփյուռք գործակցությունը ծավալելու ըստ համապատասխան ոլորտների:

2006 թ. սեպտեմբերին Երևանում հրավիրվեց Հայաստան—Սփյուռք երրորդ խորհրդաժողովը: Այն ընդունեց համագործակցության հեռանկարային և ռազմավարական նոր ուղղություն՝ Հայաստանի գյուղերի վերականգնման ու բարեշինության համալիր ծրագիր: Դրա համակարգման աշխատանքներին ձեռնամուխ եղան «Հայաստան» համահայկական հիմնադրամը, Հայաստանի արտ-

Համահայկական 5-րդ խաղերը Երևանում

գործնախարարությունը, Սփյուռքի զանազան կառույցներ:

2014 թ. սեպտեմբերին Երևանում հրավիրված Հայաստան—Սփյուռք հինգերորդ համաժողովը քննարկեց ***Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման, դատապարտման և հետևանքների վերացման գործընթացի հարցը***: Առանձնացվեց Մեծ եղեռնի 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումների ծրագիրը, որի մեծ մասը իրականացվեց Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի միջոցառումները համակարգող տարածաշրջանային հանձնախմբերի, համահայկական և տեղական համայնքային կառույցների հետ համատեղ: Կարևորվեցին նաև սիրիահայ համայնքի ներկա մարտահրավերները, սիրիահայերի ինտեգրման գործընթացը Հայաստանի Հանրապետությունում: 2012–2014 թթ. ընթացքում ՀՀ Սփյուռքի նախարարությունը համակարգեց ողջ աշխատանքները և ՀՀ կառավարության տասնյակ որոշումներով օժանդակեց Հայաստան ժամանած շուրջ 18 հազար սիրիահայերի:

2004 թ. օգոստոսին Երևանում 30 երկրների կրթական հաստատությունների շուրջ 200 ներկայացուցիչների մասնակցությամբ անցկացվեց համահայկական կրթական առաջին համաժողովը: Քննարկվեցին կրթական համակարգի, Հայաստան—Սփյուռք կրթական կապերի ամրապնդման, համագործակցության խորացման հարցերը: Կարևորելով Հայաստանի Հանրապետության կողմից Սփյուռքի յուրաքանչյուր կրթական հաստատությանը աջակցություն ցույց տալու խնդիրը՝ որոշվեց ՀՀ ԿԳՆ-ում ստեղծել կրթական խորհուրդ, իսկ համաժողովները դարձնել ավանդական:

Մշակույթի բնագավառում Հայաստան—Սփյուռք հարաբերությունների զարգացման համար կարևոր է ***«Մեկ ազգ, մեկ մշակույթ»*** ծրագրի շրջանակներում կազմակերպվող փառատոների ու հավաքների դերը:

2004 թ. օգոստոսին 27 երկրներից Սփյուռքի շուրջ 1500 ներկայացուցիչների (համույթներ, անհատ կատարողներ, մշակույթի գործիչներ, հյուրեր) մասնակցությամբ անցկացվեց «Մեկ ազգ, մեկ մշակույթ» առաջին համահայկական փառատոնը: Հայկական կինոարվեստի զարգացմանն էր ուղղված ***2004 թ. հուլիսին*** Երևանում կայացած ***«Ոսկե ծիրան»*** միջազգային կինոփառատոնը, որն ամենամյա է դարձել և տարեցտարի ընդլայնում է շրջանակները:

2015 թ. օգոստոսի 2–13–ը Երևանում բարձր մակարդակով անցկացվեցին համահայկական՝ արդեն թվով 6–րդ մարզական խաղերը բազմահազար սփյուռքահայ մարզիկների մասնակցությամբ: Մասնակիցների թիվը աննախադեպ էր՝ 6352: Միջոցառումը ընթանում էր Հայոց ցեղասպանության 100–ամյա տարելիցի ոգեկոչման միջոցառումներով բնորոշվող կարգախոսով՝ «Հիշում ենք և պահանջում»: Հանդիսավոր արարողությանը մասնակցում էին Մայր Հայաստանի, Արցախի և Սփյուռքի տարբեր օջախների երիտասարդ սերնդի ներկայացուցիչները, հատկապես Արևմտյան Հայաստանի մայրաքաղաք Վանի, նշանավոր նահանգային կենտրոններ Բիթլիսի, Դիարբեքիրի և այլ քաղաքների պատվիրակություններ, սասունցի բազմաթիվ հայ մարզիկներ:

Համահայկական խաղերի երեք ջահերը, որոնք վառվել էին Շուշիում, Լիբանանում՝ Անթիլիասում և Վանում, միավորվել էին մեկում՝ Երևանում: Խաղերի կրակը վառեց հայկական մարմնամարզության և համաշխարհային սպորտի լեգենդ, օլիմպիական խաղերի կրկնակի չեմպիոն Ալբերտ Ազարյանը:

Հայաստան—Սփյուռք կապերը տարեցտարի դառնում են առավել համակարգված, դինամիկ ու հեռանկարային:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչպե՞ս դրսևորվեցին հայրենիք—Սփյուռք հարաբերությունները ՀՀ անկախացումից հետո: Ի՞նչ նշանակություն ունեցավ Արցախի ազատագրական պայքարը հայրենիք—Սփյուռք հարաբերություններում:
2. Ձեր կարծիքով ՀՀ–ն ինչպե՞ս պետք է նպաստի Սփյուռքի հայապահպանման գործին:
3. Սփյուռքի աճող սերնդի հայեցի դաստիարակությանը և կրթությանը նպաստելուն ուղղված ի՞նչ քայլեր ձեռնարկվեցին Հայաստանում: Գիտաուսումնական և ուսումնադաստիարակչական ի՞նչ կենտրոններ են նպաստում հայապահպանությանը:

4. Ներկայացրեք հայրենիք—Սփյուռք համագործակցությունն արվեստի բնագավառում: Ձեր կարծիքով ի՞նչ դեր են խաղում գաղթօջախներում կազմակերպվող մշակութային միջոցառումները, Հայաստանում անցկացվող համահայկական խորհրդաժողովները, փառատոները, կրթական համաժողովներն ու մարզական խաղերը:

§ 2–3. ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԸ ԱՐԴԻ ՓՈՒԼՈՒՄ

1990-ական թվականներին մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով՝ էներգետիկ ճգնաժամ, գործազրկություն, ցածր կենսամակարդակ, հանրապետության լիակատար շրջափակում, պատերազմ Լեռնային Ղարաբաղում և Հայաստան բռնագաղթած փախստականների դժվարին դրություն, նորանկախ հանրապետությունից արտագաղթ տեղի ունեցավ դեպի արտերկիր՝ Ռուսաստան, ԱՄՆ, Եվրոպայի տարբեր երկրներ և այլուր:

Այդ տարիներին Արևելքի երկրներում քաղաքական անկայուն վիճակը, երկարատև պատերազմները ստիպեցին, որ հայերը Մերձավոր Արևելքի գաղթօջախներից արտագաղթեն հիմնականում Եվրոպա ու Ամերիկա՝ ստվարացնելով այնտեղի հայկական գաղթօջախները:

Սփյուռքի հասարակական-քաղաքական կյանքը: Հայրենիք—Սփյուռք հարաբերությունների մեջ առաջնային տեղ էր վերապահված ավանդական, հատկապես համասփյուռքյան կազմակերպություններին: Ավելի քան կեսդարյա ընդմիջումից հետո ՀԲԸՄ-ն 1990 թ. վերաբացեց իր գրասենյակը Երևանում:

ՀԲԸՄ-ն նյութապես օժանդակում է Մայր աթոռ Ս. Էջմիածնին, Մատենադարանին, Գիտությունների ազգային ակադեմիային, ԵՊՀ-ին, բժշկական և ճարտարագիտական համալսարաններին և կրթական, մշակութային այլ հաստատություններին: Միությունը մասնաճյուղեր ունի սփյուռքահայ գրեթե բոլոր համայնքներում և իր նպաստն է բերում ազգապահպանման գործին:

Հայ օգնության միությունը 1991 թ. հիմնեց իր շրջանային կազմակերպությունը Հայաստանում՝ «Հայ օգնության խաչը», որի մասնաճյուղերը գործում են ավելի քան 40 բնակավայրերում: 1996 թ. Լեռնային Ղարաբաղում ՀՕՄ-ը հիմնեց «Հայ կին» կազմակերպությունը: Միությունն աշխույժ գործունեություն է ծավալում նաև սփյուռքահայ համայնքներում, որտեղ ունի 200-ից ավելի մասնաճյուղեր:

Բարեգործական կազմակերպությունների շարքում յուրահատուկ տեղ է գրավում ***«Հայաստան» համահայկական հիմնադրամը, որը հիմնվեց 1992 թ. մարտին Երևանում:*** Հիմնադրամն ունի երկու տասնյակ մասնաճյուղեր արտերկրի հայ համայնքներում:

Հայրենիքի հետ սերտորեն համագործակցել են Սփյուռքի մի շարք կազմակերպություններ, որոնցից են «Լինսի հիմնադրամը», «Հայաստանի օգնության ֆոնդը», «Ազնավուրը՝ Հայաստանին» և այլն: Հայ օգնության ֆոնդը (ՀՕՖ), որի կենտրոնական գրասենյակը Նյու Յորքում է, մասնաճյուղեր ունի Սփյուռքի համայնքներում: Այն 1993 թ–ից գրանցվել է որպես անկախ կառույց:

Սփյուռքում գործում են Արևմտյան Հայաստանի բնակավայրերի՝ Զեյթունի, Աղանայի, Կեսարիայի, Մարաշի, Մալաթիայի, Սասունի, Տարոնի, Տիգրանակերտի, Քեսապի, Մուսա լեռան անուններով հայրենակցական միություններ, որոնք ավանդական կուսակցությունների հետ հանդես են գալիս Հայ դատի պաշտպանությամբ:

Հայաստանի անկախությունից հետո ***ՀՅԴ–ն, ՌԱԿ–ը, ՍԴՀԿ–ն*** հնարավորություն ստացան վերսկսելու իրենց գործունեությունը հայրենիքում: Կարճ ժամանակում երկրի տարբեր շրջաններում նրանք հիմնեցին տեղական կուսակցական կազմակերպություններ, ծավալեցին աշխույժ գործունեություն: Կարևոր դեր խաղաց այն հանգամանքը, որ Սփյուռքում անցած տասնամյակների ընթացքում ազգային կուսակցությունների հիմնական գործառույթը դարձավ սփյուռքահայերի համախմբումն ազգային արժեքների շուրջը:

Սփյուռքում ՀՅԴ հովանավորությամբ են գործում Հայ օգնության միությունը, Համազգային մշակութային միությունը (ՀՄՄ), Հայ մարմնակրթական ընդհանուր միությունը (ՀՄԸՄ), ուսանողական, երիտասարդական և այլ կազմակերպություններ, ինչպես նաև դպրոցներ, մարզական ու մշակութային ակումբներ:

Արտերկրի հայ համայնքներում Սոցիալ–դեմոկրատական հնչակյան կուսակցության (ՍԴՀԿ) հովանավորության տակ են ***«Նոր սերունդ»*** մշակութային միությունը, ***«Հայ մարմնամարզական միությունը»***, որոնք մասնաճյուղեր ունեն գրեթե բոլոր խոշոր հայ համայնքներում:

Ռամկավար ազատական կուսակցության (ՌԱԿ) նախաձեռնությամբ Սփյուռքում ստեղծվել և գործում են մեծ թվով մշակութային, բարեգործական, կրթական հաստատություններ: ՌԱԿ–ը իր տեղական կազմակերպություններն ունի ԱՄՆ–ում, Ֆրանսիայում, Լիբանանում, Եգիպտոսում և այլ երկրներում: Նրա հովանու տակ է գործում ***Թեքեկյան մշակութային միությունը (ԹՄՄ)***:

Հայոց անկախ պետականության ստեղծումով ցեղասպանության միջազգային ճանաչման համար պայքարը թևակոխեց նոր փուլ: Սփյուռքի հայ ազգային, ավանդական կուսակցությունների, կազմակերպությունների, Հայ դատի հանձնախմբերի ջանքերով և ՀՀ իշխանությունների հետ համագործակցությամբ Հայոց ցեղասպանությունը դատապարտող որոշումներ ընդունեցին շուրջ 25 երկրների խորհրդարաններ:

Եկեղեցին: Հայ գաղթօջախներում, հատկապես ոչ քրիստոնեական

երկրներում, համայնքի անդամներին միավորող կարևոր կառույցը եղել ու մնում է Հայ եկեղեցին, որը գրեթե ամենուր ներկայացված է առաքելական, կաթողիկե և ավետարանական ուղղություններով:

Հոգևոր գործունեությունից բացի՝ նրանք նպաստում են հայապահպանությանը և սատարում սփյուռքահայության կյանքի կազմակերպման գործին. ունեն իրենց դպրոցները, մամուլը՝ հոգևոր, գիտական, մշակութային ուղղության թերթեր, ամսագրեր, հանդեսներ:

Անկախության տարիներին նշանակալի, պատմական առաքելություն բաժին ընկավ Մայր Աթոռ Ս. Էջմիածնին: Վազգեն Ա կաթողիկոսի կոչը 1988 թ. դեկտեմբերին ոտքի հանեց սփյուռքահայությանը՝ երկրաշարժից ավերված հայրենիքին օգնության շտապելու, ապա Արցախյան ազատագրական պատերազմին իրենց մասնակցությունն ապահովելու և հայոց անկախ պետականության շինարարությանն աջակցելու համար: Ամենայն հայոց հայրապետների այցելությունները հայկական գրեթե բոլոր համայնքներ արդյունավետորեն նպաստեցին Սփյուռքը և հայրենիքը համախմբելու գործին:

Հայկական համայնքները Մերձավոր և Միջին Արևելքի երկրներում: Մերձավոր Արևելքի համայնքներից առանձնանում է ***Լիբանանի*** հայ համայնքը: Տեղի հայության թիվը քաղաքացիական երկարատև պատերազմի և դրա հետևանքով առաջացած անապահովության ու տնտեսական ճգնաժամի հետևանքով զգալիորեն նվազել է և 2010 թ. հասել 120 հազարի: Նրանց հիմնական մասը գաղթել է ԱՄՆ, Կանադա, Ֆրանսիա, Ավստրալիա, Հայաստանի Հանրապետություն:

Լիբանանի հայ համայնքը՝ կրոնական–սահմանադրական համայնքի կարգավիճակով, ներկա խորհրդարանում ունի պատգամավորական վեց ամրագրված տեղ և երկու նախարարական աթոռ՝ կառավարությունում:

Լիբանանում է Սփյուռքում գործող միակ՝ Հայկազյան համալսարանը: Լիբանանի տնտեսության, հատկապես արդյունաբերության, շինարարության և առևտրի բնագավառներում շարունակում են կարևոր դիրքեր զբաղեցնել հայազգի Նազարյան, Պարսումյան, Տեմիրճյան, Տանձիկյան, Այանյան ընտանիքները, Աբրահամ Տետեյանը, Նուպար Վարդանյանը և ուրիշներ: Լիբանանում հրատարակվող պարբերականներից են «Ազդակը», «Արարատը», «Զարթօնքը», «Նաիրին», «Շիրակը», «Բազինը» և այլն:

2012–2016 թթ. Սիրիայում ընթացող քաղաքացիական պատերազմի հետևանքով մեծ վնաս կրեց 100–հազարանոց հայ համայնքը, ոչնչացվեցին հայկական պատմական հուշարձաններից շատերը, իսկ սիրիահայերի մի հոծ զանգված՝ 17 հազար մարդ, ապաստան գտավ մայր հայրենիքում, մի քանի տասնյակ հազար սիրիահայեր ապաստանեցին աշխար-

հի տարբեր երկրներում: Քայքայվեց հզոր սիրիահայ համայնքը:

Պատերազմական ծանր պայմաններում անգամ Սիրիայում գործում են հայ ավանդական կուսակցությունների տեղական մարմինները, Համազգային հայ կրթական և մշակութային միության, Թեքեյան մշակութային միության, «Նոր սերունդ» մշակութային միության, ՀՄԸՄ-ի, ՀՄՄ-ի մասնաճյուղերը և հայրենասիրական ու մշակութային այլ միություններ:

2015 թ. ***Թուրքիայի*** հայ համայնքում, ըստ պաշտոնական տվյալների, շուրջ 70 հազար մարդ կա: Ջգալի թիվ են կազմում (տարբեր տվյալների համաձայն՝ 500 հազարից 1 միլիոն) իսլամացված հայերը, ովքեր կենտրոնացված են Մերձևսնծովյան շրջաններում (Խոփա, Համշեն, Տրապիզոն և այլն) և Արևմտյան Հայաստանի հյուսիսարևմտյան հատվածներում: Գավառներում բնակվող հայերի մեծ մասը թրքախոս կամ քրդախոս է: Թուրքիայում բնակվում են նաև մոտ 2500 կաթոլիկ և 500 ավետարանական հայեր:

Գործում է Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարքությունը, որը Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու նվիրապետական աթոռներից է և Թուրքիայի հայ համայնքի հոգևոր ներկայացուցչությունը:

Պոլսում գործում են մոտ 35 հայկական եկեղեցի, 18 հայկական կրթական հաստատություն, որոնցից 14-ը պատկանում է Հայ առաքելական, 4-ը՝ Հայ կաթողիկե համայնքներին: Վերջին տասնամյակների ընթացքում հայկական դպրոցների թիվը Թուրքիայում պակասել է՝ կապված աշակերտների թվաքանակի նվազման հետ:

Պոլսահայ համայնքն ունի իր պարբերականները՝ «Ժամանակ», «Մարմարա» օրաթերթերը և երկլեզու (հայերեն, թուրքերեն) «Ակոս» շաբաթաթերթը: 1996 թվականից ***Հրանտ Դինքի*** խմբագրությամբ «Ակոս» երկլեզու շաբաթաթերթը (թուրքերեն և հայերեն ներդիրով) համարձակություն ունեցավ շոշափելու նաև թուրքական իշխանությունների կողմից արգելված թեմաներ, այդ թվում՝ Հայոց ցեղասպանության հարցը:

Այժմ ***Իրանում*** բնակվում է շուրջ 80 հազար հայ: Գործում է մի քանի տասնյակ հայկական դպրոց: Երկրի Սահմանադրության համաձայն՝ Իրանի հայ համայնքն ունի կրոնական փոքրամասնության կարգավիճակ, որին շնորհվել է ներքին մշակութային, համայնքային և կրոնական ինքնավարություն: Իրանահայերին Մեջլիսում (290 պատգամավոր) հատկացված է կրոնական փոքրամասնություններին տրամադրված 5 տեղերից 2-ը: Իրանում գործող ազգային քաղաքական կազմակերպություններն են ՀՅԴ-ի տեղական մարմինը և Հայկական ժողովրդական միությունը (ՀԺՄ): Համայնքում զգալի աշխատանք են կատարում նաև ՀԲԸՄ-ի, ՀՕՄ-ի, Համազգային հայ կրթական և մշակութային միության, Հայ դատի, Հայ երիտասարդաց ընկերակցության մասնաճյուղերը, ինչպես նաև մշակութային, մարզական և կրթական

կազմակերպություններ: Համայնքի գլխավոր տպագիր թերթը «Ալիքն» է: Հրատարակվում են նաև «Լույս», «Արաքս», «Ապագա» պարբերականները:

ԱՊՀ երկրների հայ համայնքները: Սփյուռքում իր ուրույն տեղն ունի ***Ռուսաստանի*** հայ համայնքը, որտեղ վերջին տարիներին հիմնավորվել են հարյուրհազարավոր հայեր: 2010 թ. պաշտոնական տվյալներով ՌԴ–ում բնակվում էր 2–2,5 մլն հայ: Ռուսաստանի մի շարք շրջաններում՝ Կրասնոդարի և Ստավրոպոլի երկրամասերում, Ռոստովի մարզում, հայերն իրենց թվով երկրորդ տեղն են զբաղեցնում ռուսներից հետո:

Ռուսաստանի հայ համայնքը մեծ ակտիվություն է ցուցաբերում եկեղեցաշինության, կիրակնօրյա դպրոցների բացման, մարզական համահայկական խաղերին մասնակցության, ռուսական կենտրոնական և տարածաշրջանային հեռուստալիքներով հայկական հաղորդումների հեռարձակման գործում:

Ռուսաստանի Դաշնության տարածքում գործում է շուրջ 40 հայկական եկեղեցի: Հայ առաքելական եկեղեցին ՌԴ–ում ունի երկու թեմ: Ռուսաստանի հայ համայնքը հիմնականում համախմբված է «Ռուսաստանի հայերի միություն» կազմակերպության շուրջը: Մոսկվայում լույս են տեսնում «Արմենիա ի միր», «Արմյանսկի վեստնիկ», «Պրո Արմենիա», «Հյուսիսափայլ» երկլեզվյան (ռուսերեն և հայերեն) հանդեսները, Կրասնոդարում՝ «Երկրամաս» ամսաթերթը, Սանկտ Պետերբուրգում՝ «Հավատամք» ամսաթերթը, «Մաշտոց» թերթը և այլն:

2010 թ. ոչ պաշտոնական տվյալներով ***Բելառուսում*** բնակվում է շուրջ 30 հազար հայ: Հայերը նկատելի դեր են խաղում Բելառուսի տնտեսական, հասարակական և մշակութային կյանքի տարբեր բնագավառներում: Բելառուսում հայ համայնքային կառույցներ սկսել են ձևավորվել 1990–ական թվականներին: Առաջինը Մշակույթի բելառուսական ֆոնդին կից Մինսկի քաղաքային «Հայաստան» մշակութային–լուսավորական ընկերությունն է, որը համախմբել է Բելառուսի ճանաչված հայերին:

Այսօր ***Ուկրաինայում*** ապրում է ավելի քան 140 հազար հայ, որից 40 հազարը՝ Կիևում: Սկսած 1988 թվականից և ԽՍՀՄ–ի փլուզումից հետո ուկրաինական գրեթե բոլոր մարզերում և քաղաքներում հիմնվել են հայկական հասարակական կազմակերպություններ: Աչքի են ընկնում Կիևի, Խարկովի, Օդեսայի, Ժիտոմիրի, Լվովի հայ համայնքները: Ուկրաինայում գործում է հայ համայնքին վերադարձված, վերանորոգված կամ նոր կառուցված ավելի քան քսան հայկական եկեղեցի:

2001 թ. հիմնադրված «Ուկրաինայի հայերի միությունը» (ՈւՀՄ) համախմբում է համայնքները Հայ առաքելական սուրբ եկեղեցու շուրջը: ՈւՀՄ–ի հովանու ներքո գործում են բազմաթիվ կիրակնօրյա դպրոցներ, երգի ու պարի համույթներ, տպագրվում են թերթեր: Ուկրաինայում ստեղծվել է Հայագիտության կենտրոն, տպա-

գրվում է «Հայագիտական հետազոտությունները Ուկրաինայում» գիտական պարբերականը:

Վրաստանի այսօրվա տարածքում հայերը հոծ բնակեցված են Սամցխե–Ջավախք նահանգում, մայրաքաղաք Թբիլիսիում: Վրաստանում (առանց Աբխազիայի և Հարավային Օսիայի) հայերի ընդհանուր թիվն, ըստ պաշտոնական տվյալների, կազմում է շուրջ 250 հազար, իսկ ոչ պաշտոնական տվյալներով՝ մինչև 350 հազար:

Թբիլիսիում բնակվում է շուրջ 150 հազար հայ (ըստ 2015 թ. պաշտոնական տվյալների՝ 82 հազար): Գործում են վեց հայկական դպրոց, Պետրոս Ադամյանի անվան հայկական դրամատիկական թատրոնը: Թբիլիսիում է նաև հայ մեծանուն գրողների և հասարակական գործիչների՝ Խոջիվանքի պանթեոնը, որտեղ ամփոփված են Րաֆֆու, Թումանյանի, Սունդուկյանի, Աղայանի, Պռոշյանի, Մուրացանի, Նար–Դոսի, Ջիվանու և հայազգի այլ մեծերի աճյունները:

Սամցխե–Ջավախք նահանգում, ներառյալ Քվեմո Քարթլի նահանգի Ծալկայի շրջանը, հայերի թիվն, ըստ պաշտոնական տվյալների, կազմում է շուրջ 125 հազար: Գործում են 118 հայկական դպրոցներ, մշակութային կենտրոն, գրադարան, հայերեն հաղորդումներ հեռարձակող տեղական հեռուստաընկերություններ, լույս են տեսնում հայալեզու «Ակունք», «Արշալույս», «Հարավային դարպաս» թերթերը, գործում են շուրջ երկու տասնյակ հայկական հասարակական կազմակերպություններ:

1992 թվականի վրաց–աբխազական պատերազմի հետևանքով ***Աբխազիայից*** արտագաղթել է մոտ 30 հազար հայ: Հայերի թիվն Աբխազիայում, ըստ 2015 թ. պաշտոնական տվյալների, կազմում է 45 հազար, գործում է 32 հայկական դպրոց:

1988 թ. սկսած՝ Ղարաբաղյան ազատագրական պայքարի շրջանում Սումգայիթի, Կիրովաբադի, Խանլարի շրջանների, Բաքվի հայությունը ենթարկվեց կոտորածների, ցեղասպանության: Այդ պատճառով դատարկվեցին հայաբնակ քաղաքները, շուրջ 400–հազարանոց հայկական համայնքն ***Ադրբեջանում*** դադարեց գործելուց: Բնակչությունը ենթարկվեց բռնազաղթի: Այսօր Ադրբեջանում հայկական համայնք գոյություն չունի:

Ղազախստանում այժմ բնակվում է շուրջ 50 հազար հայ: Աստանայում, Ալմա Աթայում, Կարագանդայում և այլ քաղաքներում գործում է 14 հայկական ազգային, մշակութային կազմակերպություն: Հանրապետությունում գործող շուրջ մեկ տասնյակ կիրակնօրյա դպրոցներում սովորում է 300–500 աշակերտ:

Եվրոպայի հայ համայնքները: ***Ֆրանսիայում*** բնակվում է շուրջ 500 հազար հայ: Նրանք կենտրոնացված են Փարիզում, Մարսելում, Լիոնում, Վալանսում, Կաննում և այլ քաղաքներում: Աշխույժ գործունեություն են ծավալում հայ ազգային կուսակցությունների տեղական կազմակերպությունները, ՀԲԸՄ–ը,

ՀՄԸՄ-ը, Թեքեյան, Համազգային հայ կրթական և մշակութային միությունները, Հայ դատի Ֆրանսիայի հանձնախումբը և այլն: Ֆրանսիայում հաշվվում է մոտ 500 հայկական կազմակերպություն:

Ֆրանսահայությանը հաջողվել է համազգային հարցերի շուրջը միավորվել և ստեղծել «Ապրիլ 24» կոմիտեն, որը 2001 թ. վերակազմավորվել է Ֆրանսահայ կազմակերպությունների համակարգող խորհրդի:

Ֆրանսիայում հրատարակվում են «Հառաջ» օրաթերթը, «Աշխարհ» շաբաթաթերթը, «Ապագա», «Անահիտ» թերթերը, «Ֆրանս Արմենի», «Անդաստան» ամսագրերը:

Գերմանիայում ոչ պաշտոնական տվյալներով բնակվում է շուրջ 40 հազար հայ: Հիմնականում զբաղված են արդյունաբերության, շինարարության, գիտության, առողջապահության բնագավառներում: Բեռլինում, Մայնցում, Մյունխենում, Շտուտգարդում, Քյոլնում, Համբուրգում և այլ քաղաքներում ձևավորվել են հայ համայնքներ:

Իտալիայի հայ համայնքը տնտեսապես բարգավաճ է: Կան բժիշկներ, առևտրականներ, գործարանատերեր: Իտալիայի Հայոց միության, ինչպես նաև միլանահայերի հանդիպումների հավաքատեղին «Հայ տունն» է, որտեղ կազմակերպվում են թատերական ներկայացումներ, ազգային և մշակութային հանդեսներ: Միլանի Ս. Ամբրոզիո տաճարի մոտակայքում տեղադրված է Մեծ եղեռնի զոհերի

Սփյուռքահայերի բողոքի ցույց ԱՄՆ-ում

հիշատակը հավերժացնող հայկական խաչքար:

2000 թ. Հռոմի պապ Հովհաննես Պողոս II-ը Ս. Գրիգոր Լուսավորչի մասունքները հանձնել է Հայ առաքելական եկեղեցուն:

2003 թ. դրությամբ ***Մեծ Բրիտանիայում*** հայերի թիվը կազմել է 15-20 հազար մարդ: 8-10 հազարը բնակվում էր Լոնդոնում: Գաղութի համախմբման և ազգային կյանքի կազմակերպման գործում կարևոր դեր է խաղում Բրիտանահայ համայնքային և եկեղեցական խորհուրդը, որը կազմված է հայ ազգային կուսակցությունների և հասարակական կազմակերպությունների 17 ներկայացուցիչներից: Խորհուրդը համայնքի միակ ներկայացուցչական ընտրովի մարմինն է, որի գլխավոր նպատակը բրիտանահայության ազգային ինք-

նագիտակցության պահպանումն ու գաղութի միասնականության, տարբեր կազմակերպությունների համագործակցության ապահովումն է:

Ամերիկայի Միացյալ Նահանգների հայ համայնքը: ԱՄՆ-ում բնակվում է շուրջ 1 միլիոն 500 հազար հայ: Նրանց գրեթե կեսը կենտրոնացած է Լոս Անջելես, Նյու Յորք, Դետրոյտ, Բոստոն, Չիկագո, Ֆիլադելֆիա քաղաքներում:

ԱՄՆ-ում գործում են ազգային երեք կուսակցությունների տեղական մարմինները: Գրեթե բոլոր հայաշատ քաղաքներում մասնաճյուղեր ունեն համասփյուռքյան նշանակություն ունեցող բարեգործական ու կրթամշակութային կազմակերպությունները:

ԱՄՆ-ի մի շարք նահանգների՝ Կալիֆոռնիա (Լոս Անջելես, Սան Ֆրանցիսկո, Ֆրեզնո), Միչիգան, Կոլումբիա, Փենսիլվանիա, համալսարաններում գործում են հայագիտական ամբիոններ և դասընթացներ: ԱՄՆ-ում լույս են տեսնում «Հայրենիք», «Նոր օր», «Նոր կյանք», «Նոր գիր», «Ասպարեզ» թերթերը, «Առագաստ» ամսագիրը, «Այգ» եռամսյա պարբերականը:

Արգենտինայի հայ համայնքը: 2009 թվականի տվյալներով Արգենտինայում բնակվում էր ավելի քան 100 հազար հայ, որոնց մեծ մասը (շուրջ 90 հազար) կենտրոնացած է Բուենոս Այրեսում և արվարձաններում: Հայ ազգային կուսակցությունների տեղական կազմակերպություններն իրենց գործունեությունն իրականացնում են մշակութային, հայրենակցական, բարեգործական և մարզական միությունների, պարբերականների միջոցով:

2003 թվականի օգոստոսի 20-ին Հայոց ցեղասպանության փաստը վերաճանաչել է Արգենտինայի Խորհրդարանը, իսկ 2005 թվականի ապրիլի 20-ին՝ Սենատը:

Բուենոս Այրեսի Պալերմո թաղամասի Արմենիա փողոցում 1998 թվականին կառուցվել է Սարդարապատի հերոսամարտի հուշարձան-կոթող: 2009 թվականի հոկտեմբերի 1-ին Արգենտինայի մայրաքաղաքի «Հայ կենտրոնի» տարածքում տեղադրվել է Արցախյան ազատամարտում նահատակված հայ մարտիկների հիշատակը հավերժացնող՝ Սփյուռքում առաջին խաչքար-հուշակոթողը:

Ավստրալիայի հայ համայնքը: 2009 թվականի տվյալներով Ավստրալիայում բնակվում էր շուրջ 60 հազար հայ: Գերակշիռ մասը Սիդնեյ (42 հազար) և Մելբուռն (13 հազար) քաղաքներում է: Այդ քաղաքներում գործում են Հայ առաքելական, Հայ կաթողիկե և Հայ ավետարանական եկեղեցիներ, երեք ամենօրյա և վեց մեկօրյա վարժարան: Ազգային կյանքը կազմակերպում են ավանդական կուսակցությունների տեղական մարմինները, համահայկական հայտնի կրթական և մշակութային միությունների մասնաճյուղերը: Ավստրալահայ համայնքի մեծ մասը հայախոս է:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ի՞նչ հետևանքներ ունեցավ ՀՀ–ից բնակչության արտագաղթը: Ներկայացրե՛ք արտագաղթի նկատմամբ ձեր վերաբերմունքը, հիմնավորե՛ք ձեր տեսակետը:
2. Ի՞նչ դեր են խաղում սփյուռքահայ կազմակերպություններն ու հայ ավանդական կուսակցությունները: Ինչպե՞ս են ստեղծվում նրանց հիմնադրամները և ի՞նչ նպատակով են օգտագործվում: Սփյուռքում գործող ի՞նչ նշանավոր կազմակերպություններ գիտեք: Ներկայացրե՛ք նրանց գործունեությունը:
3. Գնահատե՛ք եկեղեցու դերն ու գործունեությունը սփյուռքահայության կյանքում:
4. Համառոտ ներկայացրե՛ք Մերձավոր և Միջին Արևելքի, ԱՊՀ–ի, եվրոպական երկրների, Ամերիկայի ու Ավստրալիայի հայության ներհամայնքային կյանքը: Հայաշատ ուրիշ ի՞նչ երկրներ ու քաղաքներ գիտեք: Աղյուսակով ներկայացրե՛ք այդ համայնքները՝ նշելով երկիրը, հայերի թվաքանակը, հայաշատ քաղաքները, գործող հայկական կազմակերպությունները և լրացուցիչ այլ կարևոր փաստեր: Ինչպե՞ս եք պատկերացնում սփյուռքահայության ապագան:

§ 4. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴՈՒՄԸ

Համատեղ աշխատանքներ գիտության բնագավառում: ԽՍՀՄ–ի փլուզումից հետո ստեղծված նոր իրավիճակում կարևոր նշանակություն ստացավ Հայաստանի և Սփյուռքի գիտական ուժերի համախմբումը: Հայաստանում և Սփյուռքում հաճախակի գիտական նստաշրջաններ են հրավիրվում, որտեղ քննարկվում են համատեղ հետաքրքրություն ներկայացնող հարցեր, ընդունվում՝ համապատասխան որոշումներ:

2003 թ. սեպտեմբերին Երևանում հրավիրվեց հայագիտական միջազգային առաջին համաժողովը, որտեղ արժեքավոր զեկուցումներով հանդես եկան Հայաստանի և արտերկրի բազմաթիվ հայագետներ, քննարկվեցին հայագիտության զարգացման հեռանկարները:

2013 թ. հոկտեմբերին տեղի ունեցավ Հայագիտության 2–րդ միջազգային համաժողովը: Այն որոշեց ստեղծել հայագիտության զարգացման հիմնադրամ, հիմնել հայագիտական աշխատանքները համակարգող կենտրոն ՀՀ և արտասահմանյան հայագետների մասնակցությամբ, լույս ընծայել պատմաբանասիրական, տեղեկատվական բնույթի միջազգային պարբերական ամսագիր, օգնել հայագիտական գրականության հրատարակմանը և այլն:

Ազգանվեր բարեգործությունը: Անկախության տարիներին հայ-

Ալեք Մանուկյան

րենիք—Սփյուռք հարաբերություններում շատ կարևոր նշանակություն ստացավ տնտեսական համագործակցությունը:

Սկզբնական շրջանում, մանավանդ երկրաշարժից հետո, մեծ էր սփյուռքահայությունից ստացված օգնության դերը:

Անգնահատելի է հասարակական կազմակերպությունների և առանձին բարեգործների ազգանվեր գործունեությունը: Ազգային բարեգործների առաջին շարքում է ***Ալեք Մանուկյանը***: 1964 թ. հիմնված Ալեք Մանուկյանի և նրա տիկնոջ՝ Մարի Մանուկյանի հիմնադրամը կարևոր դեր խաղաց հայկական համայնքներում դպրոցաշինության, մշակութային նոր օջախների բացման, հայ ուսուցիչների կենցաղային պայմանների բարելավման գործում: Հիմնադրամի միջոցներով դպրոցներ և մշակույթի տներ, հիվանդանոցներ, ծերանոցներ կառուցվեցին բազմաթիվ երկրներում:

Ա. Մանուկյանի գործունեությունը, ազգանվեր աշխատանքը բարձր են գնահատվել հայրենիքում և Սփյուռքում, նա արժանացել է ***Հայաստանի ազգային հերոսի*** կոչմանը:

Հայրենիք—Սփյուռք կապերի ամրապնդման գործում մեծ է ֆրանսահայ երգիչ ***Շառլ Ազնավուրի*** դերը: Հայրենիքին մատուցած մեծ ծառայությունների համար աշխարհահռչակ երգչին շնորհվել է ***Հայաստանի ազգային հերոսի*** կոչում:

Երկրաշարժի հետևանքների վերացումը համազգային գործ էր դարձել, և ամբողջ Սփյուռքը ոտքի էր կանգնել հայրենակիցներին օգնելու համար: Սփյուռքում հանգանակված միջոցները կենտրոնացվեցին մեծ վստահություն վայելող Քըրք Քըրքորյանի հիմնադրած Լինսի հաստատությունում: Հիմնադրամի անդամ դարձան ամերիկահայ բարեգործական կազմակերպությունները, եկեղեցական թեմերը: Հիմնադրամը և անձամբ ***Քըրք Քըրքորյանը*** տարեցտարի խոշոր հատկացումներ կատարեցին Հայաստանը տնտեսական ծանր վիճակից դուրս բերելու համար: Լինսի հիմնադրամի օժանդակությամբ կառուցվել ու նորոգվել են մշակութային-տնտեսական հիմնարկներ, ճանապարհներ, թանգարաններ, բնակելի շենքեր և այլն: Քըրք Քըրքորյանը նույնպես արժանացել է ***Հայաստանի ազգային հերոսի*** կոչման:

Հայաստանին օգնելու գործում բեղուն աշխատանք է կատարել ***Հայ օգնության ֆոնդը (ՀՕՖ)***, որը, մեծաքանակ սննդամթերք ու դեղամիջոցներ բերելով հայրենիք, անվճար բաժանում էր կարիքավորներին: ՀՕՖ-ի հովանավորությամբ մեծ թվով

Հանդիպում Գերմանիայի հայ համայնքի ներկայացուցիչների հետ

հայ բժիշկներ են վերարակավորվել ԱՄՆ-ում, շատ հիվանդանոցներ ապահովվել են բուժսարքավորումներով:

Շվեյցարացի բարերար և հասարակական գործիչ ***Սարգիս Իզմիրլյանը*** մեծ միջոցներ նվիրեց Երևանի պետական համալսարանի գրադարանի վերակառուցման, գրքային ֆոնդի հարստացման համար: Ի նշան երախտագիտության՝ 1997 թ. համալսարանի գրադարանն անվանակոչվեց Սարգիս Իզմիրլյանի և նրա կնոջ՝ Մարի Իզմիրլյանի անունով:

Հայաստանում հոգևոր-եկեղեցական և գիտական բեղուն գործունեություն ծավալեց ***Մեսրոպ արքեպիսկոպոս Աշճյանը:***

Սփյուռքի կողմից հայրենիքին աջակցելու վառ օրինակ է ***Գալուստ Կյուլպենկյան հիմնադրամի*** գործունեությունը: Հիմնադրամը խոշոր միջոցներ է տրամադրում Հայաստանի գիտության և բժշկության կարիքներին, ընդհանրապես հանրապետության տնտեսությանը: Կյուլպենկյան հիմնադրամը մեծ աշխատանքներ է կատարում նաև Սփյուռքում:

Բացի առանձին բարեգործներից և բարեգործական կազմակերպություններից՝ հայրենիք—Սփյուռք հարաբերությունների ամրապնդման գործին մասնակից են ամբողջ համայնքներ: Դրանցից ամենախոշորը ամերիկահայ գաղութն է:

Այսպիսով՝ հայրենիք—Սփյուռք հարաբերություններում նոր՝ ավելի կայուն ու գործնական փուլ նշանավորեց Հայաստանի Հանրապետության ծնունդը: Ազգային զարթոնքը, մեկ միասնական ազգ լինելու ձգտումը համակեցին բոլորին: Հայերը քաջ

գիտակցում են, որ միայն հզոր Հայաստանի գոյությամբ կբարգավաճի Սփյուռքը, կունենա ամուր հենարան: Մյուս կողմից՝ Սփյուռքը հսկայական դեր ունի Հայաստանի առաջադիմության գործում:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչո՞ւ է կարևոր հայրենիքի և Սփյուռքի գիտական ուժերի համախմբումը: Ներկայացրեք հայրենիք—Սփյուռք համագործակցությունը գիտության բնագավառում: Սփյուռքահայ ինչ նշանավոր գիտնականներ գիտեք:
2. Ներկայացրեք սփյուռքահայ բարեգործների և հասարակական կազմակերպությունների ազգանվեր գործունեությունը: Սփյուռքահայ ինչ նշանավոր բարեգործների և բարեգործական կազմակերպություններ գիտեք: ՀՀ-ում բարեգործների պատվին անվանակոչված ինչ կառույցներ գիտեք:
3. Ձեր կարծիքով ինչո՞ւ է հզոր Հայաստանի գոյությունն անհրաժեշտ Սփյուռքին: Ինչպե՞ս եք պատկերացնում սփյուռքահայության ապագան: Եթե դու լինեիր ՀՀ նախագահ, ինչ կձեռնարկեիր հայրենիք—Սփյուռք կապերի սերտացման նպատակով:

ԲԱԺԻՆ 5

ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆՈՒՄ

ԳԼՈՒԽ 1. ՄՇԱԿՈՒՅԹԸ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ

§ 1. ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔԸ

1918 թ. անկախության հռչակումից հետո գոյություն ունեին բազմաթիվ դժվարություններ, բայց նաև որոշակի քայլեր էին կատարվում մշակույթը զարգացնելու ուղղությամբ:

Նախ և առաջ միջոցառումներ ձեռնարկվեցին ***դպրոցական համակարգը*** վերականգնելու և ազգային նոր դպրոց ստեղծելու համար: Թուրքական զորքերի հեռանալուց հետո ռազմական կազմակերպությունների, հիվանդանոցների ու որբանոցների տնօրինության տակ գտնվող դպրոցական շինություններն աստիճանաբար սկսեցին վերադարձվել կրթական հաստատություններին:

Պետությունն իր վրա վերցրեց կրթության կազմակերպման գործը: Հայաստանի խորհրդարանում ստեղծվեց դպրոցական հանձնաժողով, որի ջանքերով ***1918 թ. սեպտեմբերին*** ընդունվեց ***«Դպրոցի կառավարման մասին»*** օրենքը: Համաձայն օրենքի՝ հանրապետության տարածքում գործող նախկին պետական, եկեղեցական–ծխական և այլ տիպի դպրոցներն ազատ գործելու հնարավորություն ստացան:

Դպրոցական համակարգը երկաստիճան էր՝ տարրական և միջնակարգ: 1919 թ. վերջին հանրապետությունում գործում էր 450 տարրական դպրոց՝ 1000–ից ավելի ուսուցիչներով ու 41 հազար աշակերտներով, և 20 միջնակարգ դպրոց՝ շուրջ 300 ուսուցիչներով ու 5200 աշակերտներով:

Այս շրջանում դպրոցական կրթության կազմակերպման գործում անուրանալի դեր խաղացին հանրային կրթության և արվեստի նախարար ***Նիկոլ Աղբալյանն*** ու նշանավոր մանկավարժ ***Գուրգեն Էդիլյանը:***

Նախարարների խորհուրդը պետական միջոցներ տրամադրեց դպրոցաշինությանը: Հանրային կրթության նախարարությունը շրջանային տեսուչներին տրամադրում էր վարկ՝ շենքերի վերանորոգման, դպրոցական կահույքի և գրենական պիտույքների ձեռքբերման համար:

Պետական դպրոցներում ուսումնական գործընթացն ազգայնացված էր: Ռուսերենը դասվում էր օտար լեզուների շարքին: Զգացվում էր դպրոցական դասագրքերի կարիք, որոնց պակասը լրացվում էր Թիֆլիսի հայկական դպրոցների օգնությամբ:

Հիմնվեցին մասնագիտացված դպրոցներ: ***Նոր Բայազետում*** և ***Դիլիջանում*** բացվեցին ***գյուղատնտեսական***

Նիկոլ Աղբալյան

դպրոցներ, իսկ ***Ալեքսանդրապոլում՝ տեխնիկական միջնակարգ դպրոց***:

Կառավարության ջանքերով տարբեր գավառներում՝ Երևանում, Կարսում, Լոռիում, Փամբակում և այլուր, բացվում էին դպրոցներ ազգային փոքրամասնությունների՝ թուրք-ադրբեջանցիների, ռուսների և հույների համար: Միևնույն ժամանակ անապահով վիճակում էին հարևան հանրապետություններում՝ Վրաստանում և Ադրբեջանում գտնվող հայկական դպրոցները: Միայն Վրաստանում գործում էր 80 հայկական դպրոց: Հայաստանի կառավարությունը որոշակի նպաստ բերեց այդ երկրներում գործող հայկական դպրոցների ամրապնդմանը:

Ուսուցչական կադրեր պատրաստելու նպատակով 1919 թ. սեպտեմբերին բացվեց ուսուցչական սեմինարիա:

Հայաստանի մշակութային կյանքում կարևոր իրադարձություն էր համալսարանի հիմնումը, որի մասին որոշում ընդունվեց ***1919 թ. մայիսի 16-ին***: Համալսարանի հանդիսավոր բացումը տեղի ունեցավ ***1920 թ. հունվարի 31-ին Ալեքսանդրապոլում***, որտեղ էլ կայացան առաջին կիսամյակի պարապմունքները: Սկզբում գործում էր միայն պատմալեզվաբանական բաժանմունքը՝ 261 ուսանողով և ունկնդրով: ***1920 թ. հունիսին համալսարանը փոխադրվեց Երևան***: Նախատեսվում էր բացել նաև իրավաբանական և բժշկական բաժանմունքներ:

1919 թ. համալսարանի առաջին տեսուչ էր հաստատվել պրոֆեսոր ***Յ. Ղամբարյանը***, իսկ 1920 թ. համալսարանի աշխատանքները ղեկավարում էր ***Դ. Զավրյանը***: Համալսարանը Հայաստանի ազգային կադրերի պատրաստման դարբնոցն էր:

Հնագիտական հուշարձանների պահպանության և գիտական ուսումնասիրության նպատակով ճանաչված գիտնականների ու ճարտարապետների մասնակցությամբ ***1919 թ. հուլիսին*** ստեղծվեց ***Հնությունների պահպանության կոմիտե***, որի ստեղծման գործում մեծ դեր խաղաց հայ ականավոր ճարտարապետ ***Ա. Թամանյանը***: 1920 թ. հուլիսին կազմավորվեց գիտական մեծ արշավախումբ Հայաստանի հնագիտական քարտեզը կազմելու նպատակով, իսկ ճարտարապետ ***Թ. Թորամանյանը*** օգոստոսից վերսկսեց Անիի ընդհատված պեղումները:

Գրական կյանքում առաջին խոշոր իրադարձությունը 1919 թ. մար-

Երևանի պետական համալսարանը, 1920 թ.

տին խորհրդարանի դահլիճում ամենայն հայոց բանաստեղծ Հ. Թումանյանի ծննդյան 50-ամյա հոբելյանի նշումն էր: Իսկ 1919 թ. հուլիսի 4-ին գրողների նախաձեռնությամբ գումարվեց Հայաստանի գրական ընկերության հիմնադիր ժողովը, որտեղ Ն. Աղբալյանի գլխավորությամբ ընտրվեց վարչություն:

1919 թվականից զարգացում ունեցավ նաև երաժշտական կյանքը: Մայիսի վերջին մի խումբ երաժշտասերների նախաձեռնությամբ հիմնվեց «Կոմիտաս» երաժշտական ընկերությունը, որի նպատակն էր նյութապես օգնել Փարիզի հոգեբուժարաններից մեկում գտնվող մեծանուն Կոմիտասին: 1920 թ. օգոստոսի 9-ին նախարարների խորհուրդն օրենք ընդունեց Երևանում բարձրագույն երաժշտական դպրոց հիմնելու մասին:

Այսպիսով՝ Հայաստանի առաջին հանրապետությունում մշակութային կյանքն աշխուժանում էր: Գաղթօջախներից մայր հայրենիք վերադարձան մշակույթի բազմաթիվ գործիչներ, որոնք խորհրդային շրջանում ձեռք բերեցին համաշխարհային ճանաչում:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ներկայացրեք Առաջին հանրապետության կրթական համակարգը: Ներկայացրեք համալսարանի ստեղծման պատմությունը: Ովքե՞ր էին աչքի ընկնում կրթության կազմակերպման գործում:
2. Հիմնավորեք կրթամշակութային կյանքում ՀՀ-ի իրականացրած ձեռնարկումների անհրաժեշտությունը:

ԳԼՈՒԽ 2. ՄՇԱԿՈՒՅԹԸ 1920–1941 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

§ 1. ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ

Առաջին միջոցառումները կրթության և մշակույթի բնագավառում: 1920–1941 թվականներին Խորհրդային Հայաստանում իրականացված մշակութային շինարարության պատմությունը բաժանվում է երկու փուլի: ***Առաջին փուլը*** սկսվեց Հայաստանում խորհրդային իշխանության հաստատմամբ և ավարտվեց 1930 թ., երբ արդեն հնարավոր դարձավ հանրապետությունում մտցնել ընդհանուր պարտադիր ուսուցում:

Մշակութային շինարարության ***երկրորդ փուլը*** սկսվեց 1930-ական թվականների սկզբին: Հիմնական խնդիրը սոցիալիստական նոր մշակույթի զարգացումն էր: Կոմունիստական կուսակցությունը և խորհրդային իշխանությունը մշակույթը համարում էին ժողովրդի վրա ներգործելու կարևոր միջոց ու ամեն ինչ անում էին այն ամբողջովին կոմունիստական գաղափարախոսությանը ենթարկելու համար:

Խորհրդային իշխանությունը սկզբում որոշակի անվստահություն էր ցուցաբերում մտավորականության նկատմամբ. սահմանափակվում էին նրանց իրավունքները: Բարեբախտաբար, այս ծայրահեղ մոտեցումը հետագայում աստիճանաբար հաղթահարվեց, և Հայաստանի մշակութային կյանքն ընթացավ բնականոն հունով: Մտավորականության հին սերնդի կողքին աճեց նոր սերունդը:

Մշակույթի զարգացման հիմնական նախադրյալը անգրագիտության վերացումն էր: ***1921 թ. սեպտեմբերի 21-ին*** ՀԽՍՀ Ժողկոմխորհը դեկրետ ընդունեց չափահաս բնակչության անգրագիտությունը վերացնելու մասին: Կազմվեց հատուկ հանձնաժողով, որի ղեկավարությամբ ամբողջ հանրապետությունում ստեղծվեցին անգրագիտության վերացման կայաններ (լիկկայաններ), և կազմակերպվեցին տարբեր կարգի դասընթացներ: 1924 թ. ստեղծվեց անգրագիտության վերացմանն աջակցող ընկերություն, որը հետագայում անվանվեց «Կորչի անգրագիտությունը»: Անգրագիտությունը հաղթահարելու ուղղությամբ մեծ աշխատանք ծավալեցին ուսուցիչներն ու հասարակական կազմակերպությունները:

Սկզբում լիկկայաններում ընդգրկվեցին 16–39 տարեկան, իսկ 1928 թվականից՝ 16–49 տարեկան քաղաքացիները: Համազգային ջանքերով 1920–1940 թթ. անգրագիտության վերացման խնդիրը հանրապետությունում հիմնականում լուծվեց: Գրագետ էր դարձել բնակչության մոտ 84 %-ը: Դա կարճ ժամանակամիջոցում մեծ նվաճում էր: Ուշադրություն դարձվեց նաև ազգային փոքրամասնությունների անգրագիտության վերացմանը: Հայաստանում բնակվող աղրբեջանցիների 94 %-ը

Պետթատրոնի շենքը Շահուլյան փողոցում

անգրագետ էր: Մինչև խորհրդայնացումը ադրբեջանցիների կրթության գործը հանձնված էր մզկիթներին: Քրդերն առհասարակ գիր չունեին: 1922 թ. լուսժողկոմատին կից ստեղծվեց ազգային փոքրամասնությունների բյուրո:

Կրթական նոր համակարգը: Խորհրդային իշխանությունն առանձին ուշադրություն էր դարձնում ժողովրդական կրթության զարգացմանը: Հատուկ դեկրետով դպրոցն անջատվեց եկեղեցուց, փակվեցին մասնավոր դպրոցները, կրթությունը դարձավ անվճար: 1921 թ. ՀՍԽՀ լուսժողկոմատը որոշում ընդունեց Հայաստանում առաջնահերթ ստեղծել հանրակրթական ***երկու տիպի դպրոց՝ տարրական*** և ***յոթամյա***: Դասավանդումը պետք է անցկացվեր մայրենի լեզվով:

Պետական միջոցներով և տեղական համայնքների օժանդակությամբ բոլոր բնակավայրերում սկսվեց դպրոցական շենքերի կառուցումը: 1926 թ. նպատակահարմար համարվեց քաղաքում ունենալ եռաստիճան դպրոց՝ տարրական, յոթամյա, լրիվ միջնակարգ, իսկ գյուղական վայրերում հիմնականը տարրական դպրոցն էր:

1926–1932 թթ. ավելի քան 480 դպրոցական շենք կառուցվեց, աճեց սովորողների թիվը: 1940–1941 ուսումնական տարում հանրապետությունում աշակերտների թիվը հասավ 353 հազարի: Դպրոցական ցանցի ընդլայնումը նախադրյալներ ստեղ-

Երևանի սուրվարակիչ հիվանդանոցի շենքը

ծեց Հայաստանում ընդհանուր պարտադիր ուսուցման անցնելու համար: Օրախնդիր էր նաև մանկավարժական կադրերի պատրաստումը. 1920-ական թվականների սկզբներին Հայաստանի դպրոցներում ուսուցիչների քանակը պահանջվածից երեք անգամ պակաս էր: Դասավանդում էին հիմնականում ուսուցչական հին կադրերը: 1921 թ. հոկտեմբերին Երևանի պետական համալսարանում բացվեց մանկավարժական ֆակուլտետ: Տարբեր ժամանակներում մանկավարժական տեխնիկումներ բացվեցին Երևանում, Լենինականում (Գյումրի), Ստեփանավանում, Գորիսում, Դիլիջանում, Նոր Բայազետում (Գավառ): 1924 թ. տեղի ունեցավ Հայաստանի ուսուցիչների 1-ին համագումարը: 1930 թ. Հայաստանի կառավարությունը հաստատեց ***հանրապետության վաստակավոր ուսուցչի*** պատվավոր կոչումը, որին առաջինն արժանացավ ***Սիմակ Սահակյանը***: 1927-1928 ուսումնական տարում Հայաստանի դպրոցներում աշխատում էր մոտ 2600 ուսուցիչ, որոնցից միայն 10 %-ն ուներ բարձրագույն կրթություն: 1932 թ. հանրապետության ուսուցիչների թիվը հասավ 4500-ի:

Զգալի աշխատանք տարվեց բարձրագույն կրթության կազմակերպման ուղղությամբ: Հաջողությամբ գործում էր Երևանի պետական համալսարանը՝ իր բնագիտական և հասարակագիտական ֆակուլտետներով: Հանրապետության երկրորդ բուհը դարձավ ***1923 թ.*** հիմնադրված ***Երևանի կոնսերվատորիան***: Այդ գործում մեծ դեր խաղաց նշանավոր կոմպոզիտոր և մանկավարժ ***Ռոմանոս Մելիքյանը***: 1928 թ. Երևանում բացվեց Անդրկովկասյան անասնաբուժական-անասնաբուծական ինստիտուտը: 1928 թ. Երևանի պետական համալսարանին կից բացվեց ասպիրանտու-

Ս. Շահումյանի անվան դպրոցի շենքը Սունդուկյան փողոցում, 1920-ական թվականներ

րա՝ գիտական կադրեր պատրաստելու նպատակով:

Ժողովրդական տնտեսության վերականգնման ու վերակառուցման պահանջներին համապատասխան աճեց բարձրորակ կադրերի դերը: ***1930 թ.*** ԵՊՀ ֆակուլտետներից մի քանիսը վերակազմավորվեցին որպես առանձին ինստիտուտներ: Բացվեցին ***պոլիտեխնիկական, գյուղատնտեսական, բժշկական, մանկավարժական ինստիտուտները***: 1940 թ. հանրապետությունում գործում էր 9 բուհ՝ ավելի քան 11 հազար ուսանողներով: Հանրապետությունը լիովին բավարարված էր բարձրագույն որակավորում ունեցող մասնագետներով:

Հասարակական գիտությունների զարգացումը: Գիտական մտքի զարգացման հիմնական կենտրոնը Երևանի պետական համալսարանն էր, որտեղ կենտրոնացված էր գիտական հիմնական ներուժը:

Ստեղծվեցին նաև առաջին գիտահետազոտական հիմնարկները: 1921 թ. Էջմիածնում հիմնվեց մշակութային-պատմական ինստիտուտ, որը ***1925 թ.*** վերափոխվեց ***Գիտության և արվեստի ինստիտուտի***: Այն գործում էր ակադեմիական սկզբունքներով, նրա մեջ մտնում էին երեք տարով ընտրված իսկական և թղթակից անդամներ: Ինստիտուտի բարձրագույն մարմինը նրա անդամների ընդհանուր ժողովն էր: Կար նաև ինստիտուտի խորհուրդ, ինչպես նաև գիտության տարբեր ճյուղերի գծով բաժանմունքներ: Ինստիտուտի խնդիրը հանրապետությունում բնական, տեխնիկական և հումանիտար գիտությունները զարգացնելն էր:

Ինստիտուտում էին աշխատում պատմաբաններ Լեոն, Հակոբ Մանանդյանը, Աշոտ Հովհաննիսյանը, լեզվաբաններ Հրաչյա Աճառյանը և Գրիգոր Ղափանցյանը, գրականա-

Անասնաբուժական–անասնաբուծական ինստիտուտի շենքը. Երևան, 1930 թ.

գետներ Մանուկ Աբեղյանը, Արսեն Տերտերյանը, բժիշկներ Գրիգոր Արեշյանը, Համբարձում Քեչեկը, Վահան Արծրունին, նկարիչ Մարտիրոս Սարյանը, ճարտարապետ Ալեքսանդր Թամանյանը, կոմպոզիտորներ Ալեքսանդր Սպենդիարյանը, Ռոմանոս Մելիքյանը և ուրիշներ:

Ինստիտուտը գործեց մինչև 1930 թվականը և հիմնականում զբաղվում էր հասարակական գիտությունների հիմնահարցերով: Դրա հիմնական պատճառն այդ բնագավառի անվանի գիտնականների առկայությունն էր և հայագիտության՝ գոյություն ունեցող հարուստ ավանդույթները:

Խորհրդային Հայաստան վերադարձած հայագետները բեղմնավոր գործունեություն ծավալեցին: 1926 թ. Երևանի պետական համալսարանը հրատարակեց Հրաչյա Աճառյանի բազմահատոր «Հայերեն արմատական բառարանը», որն առ այսօր չի կորցրել իր բացառիկ նշանակությունը: Մանուկ Աբեղյանը և Կարապետ Մելիք–Օհանջանյանը մշակեցին ու հրատարակեցին «Սասունցի Դավիթ» էպոսի համահավաք տեքստը:

Լուրջ ուշադրություն հատկացվեց հնագիտական հուշարձանների ուսումնասիրությանը: Թորոս Թորամանյանի ջանքերով վերականգնվեց Զվարթնոց տաճարի հատակագիծը: Ամբերդ ամրոցի պեղումները գլխավորում էր ակադեմիկոս Հովսեփ Օրբելին: 1939 թ. Բ. Պիոտրովսկու ղեկավարությամբ սկսվեցին Կարմիր բլուրի՝ ուրարտական քաղաք–ամրոց Թեյշեբաինիի պեղումները:

1933 թ. հանրապետությունում գործում էին շուրջ 40 ինքնուրույն գիտահետազոտական հիմնարկներ:

Կիրառական և բնական գիտությունների զարգացումը: Մեծ աշխատանք կատարվեց նաև տեխ-



Ռոմանոս Մելիքյան



Հովսեփ Օրբելի

նիկական և բնական գիտությունների բնագավառում 1920-ական թվականների վերջերին: Խորհրդահայ գիտնականների առաջնահերթ խնդիրը գիտական միտքը տնտեսությանը ծառայեցնելն էր: Քիմիական արտադրությունը զարգացնելուն էին ուղղված նշանավոր քիմիկոսներ ***Ստեփան Ղամբարյանի*** և ***Լևոն Ռոտինյանի*** գլխավորած գիտնականների խմբերի հետազոտությունները: Նրանց ջանքերով սկիզբ դրվեց սինթետիկ կաուչուկի արտադրությանը:

Հայ նշանավոր ճարտարագետ-էներգետիկ ***Հովսեփ Տեր-Անտոնյանը*** գլխավորում էր Հայաստանի հիդրոտեխնիկական շինարարությունը: Երկրաբաններ ***Հովհաննես Կարապետյանի*** և ***Տիգրան Ջրբաշյանի*** գլխավորությամբ հսկայական աշխատանքներ կատարվեցին կիրառական երկրաբանության բնագավառում:

1925 թ. հայ գիտնական ***Հովհաննես Աղամյանը*** աշխարհում առաջինը ստեղծեց և Երևանում ցուցադրեց եռագույն հեռուստատեսության և լուսահեռագրության սարքը:

Գիտական մտքի զարգացումը, գիտահետազոտական հիմնարկների թվաքանակը պահանջում էին աշխատանքների լուրջ համակարգում և միասնական գիտական կենտրոնի ստեղծում: Այդ նպատակով ***1935 թ.*** բացվեց ***ԽՍՀՄ Գիտությունների ակադեմիայի հայկական մասնաճյուղը՝ Արմֆանը***, որի առաջին նախագահ հաստատվեց նշանավոր երկրաբան ***Ֆրանց Լևինսոն-Լեսինգը***: 1938 թ. Արմֆանի նախագահ նշանակվեց հայտնի արևելագետ, ակադեմիկոս ***Հովսեփ Օրբելին***:

1941 թ. Արմֆանի կազմում գործում էին 11 գիտահետազոտական հիմնարկներ՝ 180 գիտաշխատողներով: Ընդլայնելով իրենց հետազոտությունների շրջանակները՝ նրանք ձեռնամուխ եղան գիտական նոր ուղղությունների զարգացմանը:

Խորհրդահայ գիտության զարգացմանը մեծապես նպաստեցին նաև ԽՍՀՄ ականավոր գիտնականներ

Ն. Մառը, Ի. Մեշչանինովը, Ն. Վավիլովը, Բ. Պիոտրովսկին և ուրիշներ:

Հայրենական մեծ պատերազմը նոր խնդիրներ առաջադրեց գիտահետազոտական հիմնարկներին: Գիտական լուրջ աշխատանքներ կատարվեցին ռազմական պատվերների կատարման, երկրի պաշտպանունակության ամրապնդման ուղղությամբ: Ականավոր աստղաֆիզիկոս Վիկտոր Համբարձումյանն առաջ քաշեց մութ միջավայրում լույսի ստիման նոր տեսությունը, որը կիրառական նշանակություն ուներ ռազմական գործում:

ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

ՀՍԽՀ ԺՈՂԿՈՄԽՈՐՀԻ ԴԵԿՐԵՏԸ «ՀՍԽՀ-ՈՒՄ ԱՆԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

16–50 տարեկան հասակ ունեցող բոլոր անգրագետները և կիսագրագետները, դրանց թվում և կարմիրբանակայինները պարտավոր են գրագիտություն սովորել մայրենի լեզվով հատուկ դպրոցներում, որ կազմակերպում են քաղլուսվարն ու նրա տեղական օրգանները:

Հարցեր և առաջադրանքներ

1. Քանի՞ փուլերի է բաժանվում Խորհրդային Հայաստանի 1920–1941 թթ. մշակույթի պատմությունը: Մշակույթի զարգացման ճանապարհին ի՞նչ խոչընդոտներ կային: Ե՞րբ սկսվեց անգրագիտության վերացման քաղաքականությունը. ներկայացրե՛ք այդ գործընթացի արդյունքները:
2. Հանրակրթության բնագավառում ի՞նչ քայլեր ձեռնարկվեցին: Թվերով և փաստերով հիմնավորե՛ք, որ Խորհրդային Հայաստանում 1920–1941 թթ. ձևավորվեց ու զարգացավ ամբողջական կրթական համակարգ:
3. Գիտական մտքի զարգացման ի՞նչ կենտրոններ կային Խորհրդային Հայաստանում: Արժեքավոր ի՞նչ աշխատանքներ կատարվեցին հայագիտության բնագավառում:
4. Ինչո՞ւ մեծ ուշադրություն դարձվեց կիրառական և բնական գիտությունների զարգացմանը: Ո՞ր նշանավոր գիտնականներն էին աշխատում այս ոլորտում: Ներկայացրե՛ք հայ գիտնականների նվաճումները: Ե՞րբ և ի՞նչ նպատակով ստեղծվեց Արմֆանը: Ովքե՞ր են գիտական այդ կենտրոնի ստեղծողները:
5. Պատրաստե՛ք ռեֆերատ հայ նշանավոր գիտնականներից մեկի այս ժամանակաշրջանի գործունեության վերաբերյալ և ներկայացրե՛ք դասարանում:

§ 2. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐՎԵՍՏԸ

Խորհրդահայ գրականությունը: 1920-ական թվականների սկզբին գրական հին սերնդի (Հ. Թումանյան, Հ. Հովհաննիսյան, Ա. Իսահակյան, Ա. Շիրվանզադե, Նար-Դոս, Դ. Դեմիրճյան և ուրիշներ) կողքին հանդես եկան նորերը (Ե. Չարենց, Ա. Բակունց,

Եղիշե Չարենց

Վարդան Աճեմյան

Գ. Մահարի, Ա. Վշտունի, Ն. Զարյան, Վ. Ալազան և ուրիշներ): Հանրապետությունում գործում էին գրական տարբեր խմբակներ ու միություններ, որոնք պարբերաբար բանավեճեր էին կազմակերպում գրականության և գրական ժառանգության հարցերի շուրջ, մշակում նոր տեսակետներ:

1920-ական թվականներին Հայաստանում ծավալվեց պրոլետարական գրական շարժումը (պրոլետկուլտը): ***1922 թ.*** կազմավորվեց ***«Երեքի» խմբակը՝ Ե. Չարենց, Գ. Ալրով, Ա. Վշտունի***: Հրատարակվեց խմբակի հռչակագիրը՝ գրական առաջին մանիֆեստը: Այն առաջադրում էր գրականությունը հեղաշրջելու, նոր արտահայտչաձևեր մշակելու, գրականության և արդիականության կապը խորացնելու պահանջ: Սակայն սխալ էր «Երեքի հռչակագրի» պահանջը՝ նախահեղափոխական գրական ժառանգությունն ամբողջությամբ մերժելու մասին, որը ռուսական պրոլետկուլտի ազդեցության հետևանքն էր:

Հայաստանի կոմկուսի կենտկոմի ***1932 թ.*** որոշմամբ գրական խմբակները միավորվեցին ***Հայաստանի գրողների միության*** մեջ: Սոցիալիստական ռեալիզմի պարտադրված սկզբունքը ծանր պայմանների մեջ դրեց գրողներին: Այնուամենայնիվ, այդ տարիներին լույս տեսան բազմաթիվ գրական ստեղծագործություններ, որոնք առ այսօր չեն կորցրել իրենց նշանակությունը:

Եղիշե Չարենցն իր ստեղծագործություններում մարմնավորեց ժողովրդի, կյանքի և պոեզիայի միասնությունը: Նա մշակեց նոր ելակետ՝ պատմական անհատի և ժողովրդական զանգվածների փոխհարաբերության վերաբերյալ:

1920–1930-ական թվականներին զգալի հաջողությունների հասավ գրական արձակը: Այդ բնագավառում հանդես եկան ***Ակսել Բակունցը (1899–1937), Դերենիկ Դեմիրճյանը (1877–1956), Ստեփան Զորյանը (1889–1967)*** և ուրիշներ: Ա. Բակունցն իր պատմվածքներում պատկերեց հայ



Մարտիրոս Սարյան

Արամ Խաչատրյան

գյուղն ու նրա անցյալը, մարդկային ողբերգությունները և գեղջուկ մարդկանց հոգու գեղեցկությունը: Դ. Դեմիրճյանը «Քաջ Նազար» կատակերգությամբ մնայուն տեղ գրավեց հայ գրողների առաջին շարքում:

Հայրենական պատերազմի տարիներին շարունակվեց հայ գրականության վերելքը: Հիշարժան է հատկապես Հ. Շիրազի «Էքսպրոմտը»: Ստեղծվեցին Դ. Դեմիրճյանի «Վարդանանք» և Ստ. Զորյանի «Պապ թագավոր» նշանավոր պատմավեպերը:

Թատրոնը և կինոարվեստը: ***1922 թ. հունվարի 25-ին*** Գաբրիել Սունդուկյանի «Պեպո» պիեսի բեմադրությամբ բացվեց հանրապետության ***առաջին պետական դրամատիկական թատրոնը***, որը հետագայում կոչվեց Գ. Սունդուկյանի անունով: Թատրոնի առաջին գլխավոր ռեժիսոր ***Լևոն Քալանթարյանի*** ղեկավարությամբ աշխատում էին անվանի դերասաններ Հասմիկը, Հովհաննես Աբելյանը, Արուս Ոսկանյանը, Վահրամ Փափազյանը, Հրաչյա Ներսիսյանը, Վաղարշ Վաղարշյանը և ուրիշներ:

Թատերական կյանքում մեծ դեր կատարեց 1928 թ. հիմնադրված Լենինականի (Գյումրի) պետական թատրոնը՝ երիտասարդ ռեժիսոր ***Վարդան Ամերյանի*** ղեկավարությամբ: Նույն՝ 1928 թ. Ամո Խարազյանի ղեկավարությամբ կազմակերպվեց պետական շրջիկ թատրոն: Շուտով դրամատիկական թատրոններ հիմնվեցին նաև Ղարաքիլիսայում (Վանաձոր), Ստեփանավանում, Արտաշատում, Ալավերդիում և այլուր: 1929 թ. բացվեց պատանի հանդիսատեսի թատրոնը, այնուհետև տիկնիկային թատրոններ բացվեցին Երևանում և Լենինականում: 1937 թ. հիմնադրվեց ռուսական դրամատիկական թատրոնը, իսկ 1942 թ.՝ երաժշտական կոմեդիայի թատրոնը: Մինչև Հայրենական մեծ պատերազմը Հայաստանում գործում էր 36 թատրոն: 1920–1930-ական թվականներին Հայաստանի հիմնական թատերական կենտրոնները Երևանն ու Լենինականն էին:

Ալեքսանդր Սպենդիարյան

Ալեքսանդր Թամանյան

Խորհրդահայ մշակույթի մեջ ուրույն տեղ էր գրավում ***կինոարվեստը***: 1920-ական թվականներին հիմնադրվեց ազգային կինեմատոգրաֆը: Երևանի նորաստեղծ կինոստուդիան թողարկում էր վավերագրական և գեղարվեստական կինոնկարներ: ***1925 թ.*** ցուցադրվեց ***հայկական կինեմատոգրաֆի առաջնեկը՝ «Նամուսը»***, որտեղ իր առաջին դերակատարումով հանդես եկավ Հրաչյա Ներսիսյանը: Այնուհետև երկու տարվա ընթացքում էկրան բարձրացան «Զարե» և «Խաստիուշ» կինոնկարները: 1934 թ-ին «Գիքոր» կինոնկարով ամփոփվեց Հայկինոյի համր շրջանը: ***1935 թ.*** էկրան բարձրացավ ***«Պեպո» հայկական առաջին հնչյունային կինոնկարը***, որը բեմադրեց ճանաչված կինոռեժիսոր ***Համո Բեկնազարյանը***: Նրա անունով էլ հետագայում կոչվեց Հայկինոն:

Հայրենական պատերազմի տարիներին ստեղծվեցին մի շարք վավերագրական ֆիլմեր՝ նվիրված հայորդիների մասնակցությամբ ռազմական գործողություններին, Թամանյան դիվիզիայի մարտական ուղուն և այլն:

Կերպարվեստը և երաժշտությունը: Բարդ և հակասական ուղի անցավ խորհրդահայ կերպարվեստը: 1920-ական թվականներին ստեղծա-

Երևանի Հանրապետության հրապարակը

Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնի շենքը

գործում էին Մարտիրոս Սարյանը, Սեդրակ Առաքելյանը, Եղիշե Թադևոսյանը, Ստեփան Աղաջանյանը, Հակոբ Կոջոյանը: Նրանց գործերը մեծ ազդեցություն էին ունենում երիտասարդ նկարիչների վրա: 1922 թ. Երևանում հիմնադրվեց գեղարվեստի դպրոց: 1935 թ. կազմակերպվեց Հայաստանի կերպարվեստի թանգարանը (այժմ՝ Հայաստանի ազգային պատկերասրահ): 1932 թ. ստեղծվեց Հայաստանի խորհրդային կերպարվեստագետների միությունը, ուր միաձուլվեցին գոյություն ունեցող խմբերն ու ընկերությունները, համախմբվեցին բոլոր նկարիչներն ու քանդակագործները: Խորհրդահայ կերպարվեստի զարգացման գործում առանձնապես մեծ է ***Մարտիրոս Սարյանի (1880–1972)*** դերը: Հայ քանդակագործների ավագ սերնդից էին ***Սերգեյ Մերկուրովը, Արա Սարգսյանը, Երվանդ Քոչարը:***

1920–1930-ական թվականներին վերելք ապրեց նաև երաժշտական կյանքը: 1921 թ. դեկտեմբերին ստեղծված երաժշտական ստուդիայի հիման վրա մի քանի տարի անց սկսեց գործել պետական կոնսերվատորիան:

1924 թ. Ղրիմից Հայաստան տեղափոխվեց մեծանուն կոմպոզիտոր ***Ալեքսանդր Սպենդիարյանը (1871–1928)***: Նա դրեց հայկական ազգային սիմֆոնիզմի հիմքը, գրեց «Երևանյան էտյուդներ» սիմֆոնիկ ստեղծագործությունը, «Ալմաստ» օպերան:

1932 թ. կազմակերպվեց պետական ֆիլհարմոնիան: ***1938 թ.*** «Ալմաստ» օպերայի ներկայացմամբ ***բացվեց*** Ա. Սպենդիարյանի անվան ***օպերայի և բալետի պետական թատրոնը:***

Հայ երաժշտական արվեստի զարգացման գործում հսկայական է Արամ Խաչատրյանի (1903–1978) վաստակը: Համաշխարհային ճանաչում

ունեն նրա «Սպարտակ», «Գայանե» բալետները:

Ժամանակի նշանավոր երգիչներից էին Հայկանուշ Դանիելյանը, Շարա Տալյանը և ուրիշներ: Հ. Դանիելյանին առաջինը շնորհվեց ԽՍՀՄ ժողովրդական արտիստուհու կոչում: Նա երգել է Թիֆլիսի օպերային թատրոնում, մասնակցել Լենինականի օպերա-օպերետային խմբի ներկայացումներին, մեներգել Երևանի Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնում:

1938 թ. Թաթուլ Ալթունյանի գլխավորությամբ ստեղծվեց հայկական ժողովրդական երգի-պարի պետական անսամբլը, որը լայն ժողովրդականություն ձեռք բերեց:

Ճարտարապետությունը: Խորհրդահայ ճարտարապետության առաջատարն էր ակադեմիկոս ***Ալեքսանդր Թամանյանը (1878-1936)***: 1924 թ. նա կազմեց Երևանի գլխավոր հատակագիծը, համաձայն որի՝ 15 տարվա ընթացքում Երևանի բնակչությունը 30 հազարից հասնելու էր 150 հազարի: Ժամանակի ընթացքում մայրաքաղաք Երևանը գերազանցեց Թամանյանի նախատեսած բնագծերը, այդուհանդերձ, առ այսօր թամանյանական ձեռագիրը մնում է անկրկնելի: Մեծանուն ճարտարապետի նախագծով կառուցվեցին Երևանի առաջին հէկը, օպերայի և բալետի թատրոնի, ՀԽՍՀ կառավարության տան, հանրային գրադարանի, մի շարք բուհերի շենքեր և այլն: Օպերայի և բալետի թատրոնի շենքի նախագիծը 1936 թ. Փարիզի համաշխարհային ցուցահանդեսում արժանացավ ոսկե մեծ մեդալի («Գրան պրի»):

Նշանավոր ճարտարապետներ էին նաև Մարկ Գրիգորյանը, Կարո Հալաբյանը, Գևորգ Քոչարը, Նիկողայոս Բունիաթյանը, Միքայել Մազմանյանը և ուրիշներ: 1932 թ. ստեղծվեց ճարտարապետների միությունը: Հայ ճարտարապետների ուժերով Երևանում և հանրապետության մյուս բնակավայրերում վեր խոյացան բազմաթիվ կառույցներ, մշակվեցին գյուղական բնակավայրերի նախագծեր:

Այսպիսով՝ 1920-1941 թթ. հայկական մշակույթը հասավ հաջողությունների: Դրանք ավելին կլինեին, եթե 1930-ական թվականներին խորհրդային երկրում չմոլեգնեին ստալինյան քաղաքական բռնաճնշումները, որոնց զոհը դարձան նաև մեծ թվով մտավորականներ, մշակույթի գործիչներ:

Հարցեր և առաջադրանքներ

1. Գրական նոր սերնդի ո՞ր ներկայացուցիչներն են կարևոր դեր ունեցել խորհրդահայ գրականության ստեղծման գործում: Ովքե՞ր էին կազմել «Երեքի» խմբակը և ի՞նչ մոտեցումներ ունեին: Ե՞րբ է ստեղծվել Հայաստանի գրողների միությունը:

2. Ներկայացրեք հայ թատրոնի և կինոարվեստի նշանավոր գործիչներին, նրանց նվաճումները: Թվարկեք Խորհրդային Հայաստանում 1920–1930-ական թվականներին հիմնադրված թատրոնները:
3. Աղյուսակով ներկայացրեք խորհրդահայ կերպարվեստի և երաժշտության ձեռքբերումները 1920–1930-ական թվականներին:
4. Ո՞ր նշանավոր ճարտարապետներն էին գործում Խորհրդային Հայաստանում 1920–1930-ական թվականներին: Ներկայացրեք նրանցից մեկի գործունեությունը:
5. Ձեր ընտրությամբ ելույթ պատրաստեք հայ նշանավոր գրողներից կամ արվեստագետներից մեկի մասին և ներկայացրեք դասարանում:

§ 3. ՍՓՅՈՒՌՔԻ ՀՈԳԵՎՈՐ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔԸ

Սփյուռքահայությանը վիճակված էր մաքառումներով պահպանել մայրենի լեզուն, ազգային դիմագիծը, հիմնել դպրոցներ, զարգացնել ազգային գրականությունն ու արվեստը: Սփյուռքահայ կազմակերպությունների առաջին հոգսը մատաղ սերնդին հայեցի կրթելն ու դաստիարակելն էր: Մերձավոր Արևելքի մի շարք երկրներում՝ Իրան, Եգիպտոս, Սիրիա, Լիբանան, Իրաք, բացվեցին տասնյակ դպրոցներ՝ նախակրթարանից մինչև միջնակարգ: Սակայն Ֆրանսիայում և Ամերիկայում դպրոցական գործի կազմակերպումը գնալով դժվարանում էր, որովհետև տեղի հայերը սկսել էին նախապատվություն տալ այլ լեզուներով կրթություն ստանալուն:

Կենսունակ գաղթօջախ էր ***Եգիպտոսը***: Կահիրե և Ալեքսանդրիա քաղաքներում գործում էին մի քանի հայկական դպրոցներ: Դրանցից ամենահինը ***Գալուստյան վարժարանն*** էր, որը հիմնադրվել էր 1854 թ.: 1924 թ. Կահիրեից ոչ հեռու՝ Հելիոպոլիս քաղաքում, բացվեց Նուպարյան ազգային վարժարանը: Կահիրեում գործում էին Պերպերյան, իսկ Ալեքսանդրիայում՝ Պողոսյան, Պալյան վարժարանները:

Սիրիայում, Իրաքում և ***Լիբանանում*** հայկական դպրոցներն ավելի շատ էին: 1920-ական թվականների վերջերին Բեյրութում գործում էին 10-ից ավելի հայկական դպրոցներ: Լիբանանում հաստատված 10 որբանոցներում պատսպարվել էին ավելի քան 7 հազար հայ որբեր: Հայկական դպրոցներ էին հիմնվել Լիբանանի գրեթե բոլոր այն քաղաքներում ու գյուղերում, որտեղ բնակություն էին հաստատել թեկուզ փոքրաթիվ հայ գաղթականներ: 1922–1926 թթ. Հայ առաքելական եկեղեցին Լիբանանում ուներ 15, կաթոլիկ եկեղեցին՝ 8, ավետարանականը՝ 6 դպրոց:

Սփյուռքահայության կյանքում նկատելի դեր կատարեց Կիպրոսի Մելգոնյան (Մելքոնյան) վարժարանը:

1930 թ. Մխիթարյանները Սևրում (Ֆրանսիա) վերաբացեցին ***Մուրադյան վարժարանը***: Իսկ 1932 թ. Փա-

Սուրբ Ղազար կղզին



Վիլյամ Սարոյան

րիզի Ռեմսի արվարձանում բացվեց Սամուել-Մուրատ վարժարանը: Փարիզում էր գործում Դպրոցասեր տիկնանց վարժարանը: Հետագայում՝ 1948 թվականից, ֆրանսիական կառավարությունն այն ճանաչեց որպես պետական միջնակարգ վարժարան:

ԱՄՆ-ում կային միայն կիրակնօրյա հայկական դպրոցներ:

1920-ական թվականներին Սփյուռքում շարունակում էին ստեղծագործել Տիգրան Կամսարականը, Լևոն Բաշալյանը, Երվանդ Օտյանը, Զապել Եսայանը, Համաստեղը, Հակոբ Օշականը, Ավետիս Ահարոնյանը, Լևոն Շանթը և ուրիշներ:

Սփյուռքահայ գրողների երիտասարդ սերնդի ներկայացուցիչներ էին Շահան Շահնուրը, Զարեհ Որբունին: Բանաստեղծություններ էին տպագրում Վազգեն Շուշանյանը, Լևոն-Զավեն Սյուրմելյանը, Կարապետ Սիտալը և ուրիշներ: Ստեղծագործում էին արևմտահայ գրականության ականավոր ներկայացուցիչներ Վահան Թեքեյանը, Արշակ Չոպանյանը և ուրիշներ:

Ամերիկայում 1920-ական թվականներից ի վեր ծաղկում ապրեց անգլագիր գրականությունը, որի միջոցով անգլախոս հայերի մի ստվար զանգվածի հասու էին դարձնում ազգային կենսական խնդիրները: 1920-ական թվականներին Եվրոպայում և Ամերիկայում մեծ համբավ էր վայելում Բուլղարիայում ծնված անգլիագիր գրող ***Մայքլ Առլենը (Տիգրան Գույումջյան)***: 1924 թ. նրա մի շարք ստեղծագործությունների հիման վրա նկարահանված ֆիլմեր հանրաճանաչ են դարձել աշխարհում:

1930-ական թվականներին ԱՄՆ-ում գրական գործունեություն սկսեց հետագայում համաշխարհային գրական բարձունքի հասած ***Վիլյամ Սարոյանը (1908-1981)***՝ բարի և առաքինի խենթերի երգիչը:

Որոշակի հաջողությունների հասավ սփյուռքահայ ***երաժշտությունը***: Հիանալի երգիչ էր ***Արմենակ Շահմուրադյանը***: Ժողովրդական երգեր հա-

Փանոս Թերլեմեզյան. «Աշունը Երևանում»

Հակոբ Գյուրջյան. «Սալոմե»

վաքելու, մանկավարժական ու խմբավարական մեծ աշխատանք կատարեց կոմպոզիտոր ***Գրիգոր Սյունին***: Տևական գործունեություն ունեցող թատերախմբեր չստեղծվեցին. մեծ մասամբ կազմակերպվում էին շրջիկ ներկայացումներ:

Ուրույն զարգացում ունեցավ կերպարվեստը՝ նկարչությունն ու քանդակագործությունը: Կերպարվեստում աչքի ընկան ***Էդգար Շահինը, Փանոս Թերլեմեզյանը, Հակոբ Գյուրջյանը*** և ուրիշներ:

Սփյուռքում զարգացում ապրեց նաև ***հայագիտությունը***: Պատմագրության բնագավառում աչքի ընկան ***Արշակ Ալպոյաճյանը, Գարեգին Հովսեփյանը, Կարո Սասունին***: Հայոց նորագույն պատմության հարցերին նվիրված արժեքավոր հուշագրություններ թողեցին Սիմոն Վրացյանն ու Վահան Փափազյանը (Կոմս):

1929 թ. Փարիզում ՀԲԸՄ-ի հովանավորությամբ և Պողոս Նուբար փաշայի բարերարությամբ ***հիմնադրվեց Նուպարյան մատենադարանը***: Այնտեղ պահվում են ինչպես հայ, այնպես էլ այլ ժողովուրդների պատմությանն ու մշակույթին նվիրված ***մոտ 25 հազար արժեքավոր հրատարակություններ*** հայերեն և օտար լեզուներով:

Գրականագիտության, լեզվաբանության զարգացման ուղղությամբ իրենց շնորհակալ աշխատանքն էին շարունակում Մխիթարյան միաբանության գիտնականները:

Սփյուռքի հոգևոր-մշակութային կյանքի աշխուժացումն առաջին հերթին անհրաժեշտ էր ազգապահպանության համար: Մեծ եղեռնից փրկված հայ գաղթականության համար հիմնական նեցուկը Հայոց եկեղեցին ու դպրոցն էին: Սփյուռքում, հատկապես Լիբանանի հայության կյանքում կարևոր դեր էր կատարում Կիլիկիո կաթողիկոսությունը: Լիբանանահայերը Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության հովանու ներքո իրենց ներհամայնքային գործերը վարում էին 1863 թ. Ազգային սահմանադրության բարեփոխված տարբերակի հիման վրա:

Շնորհիվ անդուլ, ազգանվեր գործունեության՝ դժվարին պայմաններում սփյուռքահայությունը պահպանեց իր ազգային դիմագիծը:

Հարցեր և առաջադրանքներ

1. Սփյուռքի հայկական համայնքների առջև կրթական և մշակութային ինչ խնդիրներ էին ծառացած:
2. Կրթական ինչ հաստատություններ էին գործում սփյուռքահայ կենտրոններում:
3. Ներկայացրեք սփյուռքահայ նշանավոր գրողներին և արվեստագետներին: Գիտության բնագավառում ինչ ձեռքբերումներ եղան, հայտնի ո՞ր գիտնականներին կարող եք նշել:
4. Վերհանեք սփյուռքահայ մշակույթի դերը ազգապահպանության գործում:

ԳԼՈՒԽ 3. ՄՇԱԿՈՒՅԹԻ ՎԵՐԵԼՔԸ (1945–1991 ԹՎԱԿԱՆՆԵՐ)

§ 1. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԸ

Մշակույթի զարգացման հիմնական միտումները: Հետպատերազմյան առաջին տարիներին մշակույթի զարգացմանը խոչընդոտեցին մտավորականության նկատմամբ ստալինյան ղեկավարության իրականացրած նոր բռնաճնշումները. բազմաթիվ մտավորականների ներկայացվեց օտարամոլություն դրսևորելու կեղծ մեղադրանք:

Ստալինի մահից հետո բարենպաստ պայմաններ ստեղծվեցին մշակույթի զարգացման համար: ԽՄԿԿ XX համագումարում անհատի պաշտամունքի քննադատությունը, աքսորավայրերից և բանտերից հարյուրհազարավոր բռնադատվածների, այդ թվում՝ ստեղծագործող մտավորականների վերադարձը, գրաքննության թուլացումը դրականորեն ազդեցին մշակույթի զարգացման վրա: Այս ամենը հանգեցրեց 1960-ական թվականների ազատամիտ մշակույթի առանձին երևույթների հանդես գալուն, այսպես կոչված՝ ***«վաթսունականների»*** շարժմանը:

1950-ական թվականների կեսից մինչև 1960-ական թվականների կեսը ԽՍՀՄ պատմության մեջ մտավ ***«ձնհալ»*** անվամբ: «Ձնհալին» հետևեց 20-ամյա ***«լճացումը»***, որը մշակույթի բնագավառում բնորոշվեց հակասական միտումներով. մի կողմից շարունակվում էր գիտության ու մշակույթի զարգացումը, մյուս կողմից ուժեղանում էր ստեղծագործող մտավորականության գաղափարական հսկողությունը իշխանությունների կողմից:

Սոցիալիզմի համակարգի բարեփոխման քաղաքականությունը, որը սկսեց Մ. Գորբաչովը 1985 թ., ազդեց մշակույթի բոլոր բնագավառների վրա: Վերակառուցման ընթաց-

քում սկսվեց սոցիալ-մշակութային կյանքի տարբեր ուղղություններում ձևավորված կարծրատիպերի վերանայումը: Մինչ ԽՍՀՄ փլուզումը՝ վեց տարվա ընթացքում, մշակութային կյանքը փոխվեց, դարձավ համեմատաբար ավելի բազմազան և բազմաշերտ: Մասնակիորեն փոխվեցին պաշտոնական գաղափարախոսության դրույթները: «Սոցիալիստական մշակույթը» իր տեղը սկսեց զիջել համամարդկային արժեքների գնահատմանը:

Կրթական համակարգը: Հետպատերազմյան տարիներին ԽՍՀՄ-ում, այդ թվում՝ Հայաստանում, ընդլայնվում էր դպրոցական ցանցը. արագորեն աճում էր աշակերտների թվաքանակը, որը կրճատվել էր պատերազմի տարիներին: Հետպատերազմյան տարիներին հաջողությամբ շարունակվեց անցումը համընդհանուր պարտադիր յոթամյա կրթության, որը վերջնականապես իրագործվեց 1948-1949 ուսումնական տարում: 1959 թ. մտցվեց ութամյա պարտադիր կրթություն, միջնակարգ հանրակրթական դպրոցը դարձավ 11-ամյա: Ծավալվեց դպրոցաշինությունը: Տարեցտարի ավելանում էր միջնակարգ դպրոցների քանակը: 1966-1967 ուսումնական տարում անցում կատարվեց ընդհանուր միջնակարգ կրթության՝ 10-ամյա ուսուցմամբ: 1985-1986 թթ. հանրապետությունում գործում էր մոտ 1500 հանրակրթական դպրոց՝ ավելի քան 600 հազար սովորողներով:

Մինչև 1959 թ. Հայաստանում կար 15 ուսումնարան: 1959 թ. այդ ուսումնական հաստատությունները վերակառուցվեցին պրոֆտեխնիկական ուսումնարանների՝ ութամյա կրթության հիման վրա 1-2 տարվա ուսուցմամբ, և տեխնիկական ուսումնարանների՝ միջնակարգ կրթության հիման վրա: 1986 թ. հանրապետությունում արդեն գործում էր 100 պրոֆտեխուսումնարան:

ՀԽՍՀ-ում միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունների հիմնական տեսակներն էին տեխնիկումները՝ արդյունաբերական, շինարարական, գյուղատնտեսական, տնտեսագիտական, և ուսումնարանները, որոնք պատրաստում էին բժշկական, մանկավարժական, գեղարվեստի և այլ ոլորտների մասնագետներ: 1986 թ. հանրապետությունում արդեն կար 65 միջնակարգ մասնագիտական հաստատություն:

Հայրենական մեծ պատերազմի ավարտից հետո հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողների թիվն անընդհատ աճեց: 1950-1951 ուսումնական տարում հանրապետության 15 բուհերում սովորում էր 15 հազար, 1957-1958 ուսումնական տարում 11 բուհերում՝ արդեն ավելի քան 20 հազար ուսանող:

Հարցեր և առաջադրանքներ

1. Որո՞նք էին Խորհրդային Հայաստանի մշակույթի զարգացման հիմնական միտումները 1945–1991 թվականներին:
2. Ներկայացրե՛ք Խորհրդային Հայաստանի կրթական համակարգը. ի՞նչ ձեռքբերումներ արձանագրվեցին:

§ 2. ԳԻՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Գիտություն: Հետպատերազմյան տարիներին Հայկական ԽՍՀ Գիտությունների ակադեմիան դարձավ երկրի գիտական առաջատար կենտրոններից մեկը: ***1947 թ.*** Գիտությունների ակադեմիայի նախագահ ընտրվեց ականավոր գիտնական, աստղաֆիզիկոս, ակադեմիկոս ***Վիկտոր Համբարձումյանը***:

1950–ական թվականներից խորհրդային երկիրը թևակոխեց գիտատեխնիկական հեղաշրջման նոր ժամանակաշրջան: Այդ հանգամանքն իր կնիքը դրեց նաև Հայաստանում գիտության բազմաթիվ ճյուղերի զարգացման վրա: Լուրջ տեղաշարժեր կատարվեցին նաև տեխնիկայի բնագավառում, սկսեցին առաջատար դեր խաղալ ավտոմատիկան ու կիբեռնետիկան:

Գիտական աշխատանքի ծավալումը և նոր ուղղությունների առաջացումը թելադրեցին գիտական կադրերի արագ աճի, որակավորման բարձրացման անխուսափելի պահանջ: Ընդլայնվեց գիտահետազոտական հիմնարկների ցանցը: 1958 թ. Հայաստանում գործում էր 69 գիտահետազոտական հիմնարկ, իսկ 1967 թ.՝ 112: 1967 թվականին գիտական հիմնարկներում ընդգրկված աշխատողների ընդհանուր թիվն անցնում էր 20 հազարից, որից ավելի քան 8 հազարը գիտական աշխատողներ էին:

Աստղաֆիզիկայի բնագավառում Հայաստանում կատարված ուսումնասիրությունները համաշխարհային ճանաչում են վայելում: ***Բյուրականի աստղաֆիզիկական աստղադիտարանը***, որի առաջին աշխատանքային շենքերը սկսեցին կառուցվել Հայրենական մեծ պատերազմից անմիջապես հետո, հետագա 20 տարիներին դարձավ աստղագիտության այդ ոլորտի գիտահետազոտական խոշոր կենտրոններից մեկն աշխարհում:

Բյուրականի աստղադիտարանի գիտական ուսումնասիրությունները, որոնք ղեկավարում էր աշխարհահռչակ աստղաֆիզիկոս Վիկտոր Համբարձումյանը, 1950–1960–ական թվականներին ընթանում էին երկու հիմնական ուղղություններով՝ գալակտիկայի կառուցվածքի օրինաչափությունների, աստղերի և աստղային համակարգությունների ծագման ու զարգացման և տիեզերական նյութի հետազոտությունների գծով:

1950–1960–ական թվականներին Բյուրականում կառուցվեցին գիտական օբյեկտների մի ամբողջ համալիր և աստղագետների ավան: 1956 թ. սեպտեմբերին, երբ ավարտ-

Հայաստանի Գիտությունների ազգային ակադեմիան

վել էր հիմնական շենքերի շինարարությունը, տեղի ունեցավ Բյուրականի աստղադիտարանի հանդիսավոր բացումը՝ խորհրդային և արտասահմանյան ճանաչված գիտնականների մասնակցությամբ: Ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանը 1962–1965 թթ. զբաղեցրեց Աստղագետների միջազգային միության նախագահի պատվավոր պաշտոնը:

Գիտահետազոտական կենտրոններ: Հետպատերազմյան ժամանակաշրջանում Հայաստանում կարևոր հաջողություններ ձեռք բերվեցին ֆիզիկայի բնագավառում: 1958 թ. ֆիզիկայի ինստիտուտում սկսվեցին ԽՍՀՄ խոշորագույն՝ 6 միլիարդ էլեկտրոն–վոլտ էներգիայով էլեկտրոնային արագացուցչի նախագծումը և կառուցումը: Աշխատանքները կատարվում էին ԽՍՀՄ Գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ ***Արտեմ Ալիխանյանի*** ղեկավարությամբ: ***1967 թ. էլեկտրոնային արագացուցչի կառուցումն ավարտվեց***: Դրա շահագործմամբ Հայաստանի և Խորհրդային Միության շատ ֆիզիկոսներ հնարավորություն ստացան բարդ փորձեր կատարելու միջուկային ֆիզիկայի բնագավառում:

Արագածի և Նոր Ամբերդի կայաններում շարունակվեցին հետազոտությունները տիեզերական ճառագայթների ուսումնասիրման ասպարեզում:

Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի բնագավառում Բյուրականի աստղադիտարանում սկսված ուսումնասիրությունները հետագա զարգացում ստացան ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտում, որը հիմնադրվեց 1960 թ.:

1956 թ. ստեղծվեց Գիտությունների ակադեմիայի նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտը, որը ակադեմիկոս ***Արմենակ Մնջոյանի*** գլխավորությամբ մեծ հաջողությունների հասավ դեղանյութերի ստեղծման, կենսաբանական ակտիվ միացությունների սինթեզման ասպարեզում:

Բյուրականի աստղադիտարանը

Կիբեռնետիկայի, էլեկտրոնիկայի զարգացումը: 1950–ական թվականների կեսերից Հայաստանում մեծ հաջողություններ գրանցվեցին մաթեմատիկայի գծով տարվող հետազոտական աշխատանքների բնագավառում: Այդ ասպարեզում ձեռք բերված առաջին հաջողությունները կապված էին ակադեմիկոսներ ***Արտաշես Շահինյանի*** և ***Սերգեյ Մերգելյանի*** անունների հետ:

1950–ական թվականների վերջերից հետազոտական աշխատանքներ ծավալվեցին հաշվողական մաթեմատիկայի և կիբեռնետիկայի ոլորտներում: Գիտնականներն ու ճարտարագետները նախագծեցին «Հրազդան», «Նաիրի» և այլ տիպի էլեկտրոնային հաշվիչ բարդ մեքենաները:

Հայագիտության զարգացումը: Հետպատերազմյան տարիներին, հատկապես 1940–ական թվականների վերջերին և 1950–ական թվականների սկզբներին, անհատի պաշտամունքի պատճառով հայագիտության զարգացումն ընթանում էր ծանր պայմաններում: Ստալինյան բռնաճնշումների մթնոլորտը խոչընդոտում էր պատմական, տնտեսագիտական և փիլիսոփայական գիտությունների բնականոն զարգացումը: Խորհրդահայ պատմաբանները ստիպված էին պատմական դեպքերն ու իրադարձությունները հարմարեցնել այն ժամանակ տիրապետող կարծրատիպերին: Հայ ժողովրդի պատմության մի շարք կարևոր ժամանակաշրջաններ սխալ, կանխակալ կերպով էին լուսաբանվում, իսկ հիմնախնդիրների մի ամբողջ շարք առհասարակ անտեսվում և չէր ներկայացվում:

Կոմունիստական կուսակցության XX համագումարից հետո վիճակը փոխվեց: 1950–1960–ական թվականներին պատմագիտության բնագավառում ուսումնասիրություններ ծավալվեցին հայ ժողովրդի պատմության, հնագիտության, ազգագրության ու արևելագիտության գծով: Հետագա տարիներին խորհրդահայ պատմա-

Վիկտոր Համբարձումյան

Աշոտ Հովհաննիսյան

բանները զգալի հաջողությունների հասան: Մշակվեցին հայ ժողովրդի պատմության մի շարք հանգուցային հիմնախնդիրներ՝ Ուրարտական (Արարատյան) պետության ծագումն ու պատմությունը, օտարերկրյա զավթիչների դեմ հայ ժողովրդի մղած ազգային-ազատագրական պայքարի պատմությունը, Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին և այլն: Պատմագիտության զարգացման գործում մեծ դեր խաղացին ակադեմիկոսներ ***Աշոտ Հովհաննիսյանը, Արզար Հովհաննիսյանը, Մկրտիչ Ներսիսյանը, Սուրեն Երեմյանը*** և ուրիշներ: Հայ ժողովրդի պատմության տարբեր դարաշրջանների վերաբերյալ ստեղծվեցին մի շարք ընդհանրացնող աշխատություններ: 1960-1980-ական թվականներին հրատարակվեց ***«Հայ ժողովրդի պատմություն» ութհատորյակը***, որն արժանացավ պետական մրցանակի:

1950-1960-ական թվականներին զգալի հաջողությունների հասավ հնագիտությունը: Արդյունավետ էին համաշխարհային ճանաչում ստացած ուրարտական (Թեյշեբաինի, Էրեբունի) և հելլենիստական շրջանի հուշարձանների (Գառնի) պեղումները: Հնագիտության ասպարեզում հայտնի անուններ դարձան Բ. Պիոտրովսկին, Բ. Առաքելյանը, Կ. Ղաֆադարյանը և ուրիշներ:

1950-1960-ական թվականները բարենպաստ էին հայ գրականագիտության զարգացման համար: Հաղթահարվեցին գրական ժառանգության գնահատման հարցում թույլ տրված սխալները: Գրականագետները գրեցին մի շարք ընդհանրացնող աշխատություններ հայ գրականության պատմության վերաբերյալ: Մասնավորապես 1960-ական թվականներին հրատարակվեցին «Հայ նոր գրականության պատմության» երեք հատորները, «Սովետահայ գրականության պատմության» երկհատորյակը և այլ աշխատություններ: Հայկական ԽՍՀ Գիտությունների ակադեմիայի գրականության ինստիտուտը իրականացրեց հայ գրա-

կանության դասականների՝ Հակոբ Պարոնյանի, Ռափայել Պատկանյանի, Մանուկ Աբեղյանի, Միքայել Նալբանդյանի, Եղիշե Չարենցի, Հովհաննես Հովհաննիսյանի և այլոց երկերի հրատարակությունները:

1950-ական թվականներին լուրջ ձեռքբերումներ եղան լեզվաբանության բնագավառում, որի զարգացման գործում գիտական մեծ վաստակ ունեն ակադեմիկոսներ ***Արարատ Ղարիբյանը, Գուրգեն Սևակը, Էդուարդ Աղայանը, Գևորգ Ջահուկյանը*** և ուրիշներ:

Նկատելի նվաճումներ եղան նաև արվեստագիտության, փիլիսոփայության և հումանիտար մյուս գիտությունների բնագավառներում:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ե՞րբ է հիմնվել Հայկական ԽՍՀ Գիտությունների ակադեմիան, և ո՞վ էր առաջին նախագահը: Խորհրդահայ գիտության ի՞նչ նշանավոր կենտրոններ գիտեք. ե՞րբ են հիմնադրվել:
2. Գիտության ո՞ր բնագավառները զարգացան: Նշե՛ք խորհրդահայ գիտության կարևոր նվաճումները: Ովքե՞ր էին խորհրդահայ գիտության նշանավոր ներկայացուցիչները, ի՞նչ գիտեք նրանց մասին:
3. Ի՞նչ ընթացք ունեցավ հայագիտության զարգացումը Խորհրդային Հայաստանում: Խորհրդահայ նշանավոր պատմաբաններից և հնագետներից ո՞ւմ գիտեք: Ի՞նչ ձեռքբերումներ արձանագրվեցին հայագիտության բնագավառում: Գրե՛ք ռեֆերատ նշանավոր հայագետներից մեկի կյանքի և գիտական գործունեության վերաբերյալ:

§ 3. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆԸ, ԹԱՏՐՈՆԸ ԵՎ ԿԻՆՈՆ

Գրականությունը: Հետպատերազմյան առաջին տարիներին խորհրդային գրականության խնդիրները իշխանությունների ուշադրության կենտրոնում էին: Ստեղծագործական մտավորականությունից պահանջվում էր նկարագրել միայն խորհրդային հասարակության ձեռքբերումները: ՀԽՍՀ իշխանությունները մի շարք միջոցառումներ ձեռնարկեցին հանրապետությունում այդ քաղաքականությունը կենսագործելու համար: 1946 թ. սեպտեմբերի 25-ին բացված Հայաստանի խորհրդային գրողների համագումարում հայ գրողները ճարահատյալ ընդունում էին իրենց «սխալները գաղափարագուրկ ստեղծագործություններ լույս ընծայելու հարցում»: Համագումարի հետևանքները, գրողներին վերագրված մեղադրանքները որոշ ժամանակ խաթարեցին հայ գրականության բնականոն զարգացումը և ստիպեցին հանդես գալ մտացածին, գրական որակից զուրկ, իշխանություններին հաճո ստեղծագործություններով:

Պարույր Սևակ

Համո Սահյան

Հետպատերազմյան տարիներին գրական ասպարեզ եկավ երիտասարդ գրողների նոր սերունդ, որը թարմ շունչ բերեց: Համաժողովրդական սիրո արժանացան Հովհաննես Շիրազը, Պարույր Սևակը, Համո Սահյանը, Սիլվա Կապուտիկյանը, Գևորգ Էմինը, Վահագն Դավթյանը, Սերո Խանզադյանը և ուրիշներ: Իրենց ստեղծագործական հարուստ ուղին էին շարունակում Ավետիք Իսահակյանը, Դերենիկ Դեմիրճյանը, Ստեփան Զորյանը, Նաիրի Զարյանը, Հրաչյա Քոչարը և ուրիշներ: Հեռավոր Սիբիրի կալանավայրերում տևական տառապանք կրելուց հետո Հայաստան վերադարձան Գուրգեն Մահարին, Մկրտիչ Արմենը, Վահրամ Ալազանը, Վաղարշակ Նորենցը:

Ստալինի մահից և ԽՄԿԿ XX համագումարից հետո խորհրդահայ գրականության զարգացումն ընթացավ նոր հունով: Սկսեցին վերականգնվել պատմականության և ժողովրդայնության սկզբունքները, ուշադրության կենտրոնում հայտնվեց մարդ–անհատը՝ իր անձնական կյանքով, խոհերով ու ապրումներով:

Ստեղծագործական բուռն կյանք ապրեց ***Պարույր Սևակը***, որի այդ տարիների վաստակն ամփոփված է հատկապես «Անլռելի զանգակատուն», «Մարդը ափի մեջ», «Եղիցի լույս» գրքերում: Նրա ստեղծագործության մեջ հառնեց իրական մարդը՝ իր դրամատիկ, հարուստ ներաշխարհով, պատմական հիշողությամբ, ժամանակի հանդեպ ունեցած պատասխանատվությամբ, բազմապիսի խոհերով ու ապրումներով:

Հովհաննես Շիրազի ստեղծագործություններում ծանրակշիռ տեղ էին գրավում Հայոց մեծ եղեռնի, բռնազավթված հայրենիքի խորհրդանիշ Արարատ լեռան, մայրության և այլ թեմաներ:

1960–1970–ական թվականներին ծնվեց «գյուղական արձակը»: ***Հրանտ Մաթևոսյանը, Մուշեղ Գալշոյանը*** և մյուսները ոչ միայն արձանագրում էին գյուղի մարդու գիտակցության և բարոյականության խոր

Տեսարան Ա. Խաչատրյանի «Սպարտակ» բալետից՝ բեմադրված Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնում. Սպարտակ՝ Վիլեն Գալստյան

փոփոխությունները, այլև ցույց էին տալիս այդ փոփոխությունների դրամատիկ կողմերը, որոնցից էին սերունդների կապի խզումը, մարդու և բնության փոխհարաբերությունների խաթարումը և այլն:

1980-ական թվականների երկրորդ կեսին խորհրդային հասարակությունում և մշակույթում հակասությունների սրումն արձագանք գտավ նաև գրական ստեղծագործություններում: Վերակառուցման քաղաքականության և հրապարակայնության գաղափարների զարգացման ընթացքում գրողների մի մասը հանդես եկավ ստեղծագործական գործընթացներին կուսակցության և պետության միջամտության դեմ:

Երաժշտությունը: Հետպատերազմյան տարիներին մեծ տեղաշարժեր եղան երաժշտական արվեստի բնագավառում: Համաշխարհային երաժշտարվեստում իր լուրջ ներդրումն ունեցավ ***Արամ Խաչատրյանը:*** Նրա «Սպարտակ» բալետում մարմնավորվել է ազատության համար մղվող հերոսական պայքարի թեման: Հայ երաժշտական արվեստում խոշոր ավանդ էին Գրիգոր Եղիազարյանի, Ալեքսանդր Հարությունյանի, Առնո Բաբաջանյանի, Էդվարդ Միրզոյանի, Էդգար Հովհաննիսյանի ստեղծագործությունները:

Թատրոնը: ՀամԿ(բ)Կ կենտկոմը 1946 թ. օգոստոսի 26-ին ընդունեց հատուկ որոշում, որով թատրոնների խաղացանկերի վիճակը միան-

Վիլյամ Սարոյան. «Իմ սիրտը լեռներում է», բեմադրությունը՝ Վարդան Աճեմյանի, գլխավոր դերերում՝ Հրաչյա Ներսիսյան, Բաբկեն Ներսիսյան, Վարդուհի Վարդերեսյան

շանակ «անբավարար» էր գնահատվում: Ժամանակակից թեմաներով բեմադրված ներկայացումների նշանակալից մասը որակվում էր որպես «հակագեղարվեստական, պարզունակ և անգրագետ»:

Դրամատուրգներին պարտադրեցին աշխատավորներին դաստիարակելու համար ակտիվորեն քարոզել խորհրդային պետության քաղաքականությունը: Թատրոնների խաղացանկերից հանվեցին «գաղափարազուրկ» և «ցածր որակի» տասնյակ ներկայացումներ:

Հայ թատրոնի հետպատերազմյան առաջին տասնամյակի աչքի ընկնող երևույթներից էր Նաիրի Զարյանի «Արա Գեղեցիկ» ողբերգության բեմադրությունը: 1960–1980-ական թվականներին հայ հեղինակների պիեսների հիման վրա թատրոններում բեմադրվեցին հանդիսատեսի կողմից ջերմ ընդունելության արժանացած շատ ներկայացումներ:

Սկսվեց հայ բեմարվեստի սերնդափոխության բարդ ընթացքը: Մեծ վարպետներ Օլգա Գուլազյանի, Վաղարշ Վաղարշյանի, Ավետ Ավետիսյանի կողքին բեմում իրենց խոսքն էին ասում Վարդան Աճեմյանը, Գուրգեն Ջանիբեկյանը, Դավիթ Մալյանը, Բաբկեն Ներսիսյանը: Բեմում հաստատուն տեղ էին գրավում Մետաքսյա Սիմոնյանը, Խորեն Աբրահամյանը, Միհեր Մկրտչյանը, Սոս Սարգսյանը և ուրիշներ: Այս անունների հետ են կապվում թատրոնում և ժամանակակիցների կերպարների

«Հայրիկ». գլխավոր դերերում՝ Մհեր Մկրտչյան, Ազատ Շերենց, Վարդուհի Վարդերեսյան

անկրկնելի մեկնաբանությունները, և դասական կերպարների նորովի անձնավորումները:

Ժամանակակից բեմարվեստի զարգացմանը նպաստելու առումով մեծ նշանակություն ունեցավ Երևանի դրամատիկական թատրոնի հիմնադրումը ռեժիսոր Հրաչյա Ղափլանյանի ղեկավարությամբ:

Կինոն: Հայրենական մեծ պատերազմն ընդհատեց կինոարվեստի զարգացումը: Պատերազմի սկզբից Հայաստանում նկարահանվել էր ընդամենը երկու գեղարվեստական կինոնկար, որոնցից հայտնի է «Դավիթ Բեկ»-ը: 1945-1954 թթ. Հայֆիլմ կինոստուդիայում նկարահանվեց ընդամենը 2 գեղարվեստական ֆիլմ՝ «Անահիտ» և «Արարատյան դաշտի աղջիկը» (ռեժիսոր՝ Համո Բեկնազարյան):

Հայկական կինոարվեստի զարգացման նոր՝ ժամանակակից փուլը սկսվեց 1950-ական թվականների կեսից: Նկարահանվեց ***«Նվազախմբի տղաները»*** ֆիլմը, որը մեծ հաջողություն ունեցավ: ***«Ոսկե ցլիկ», «01-99»*** և ***«Տժվժիկ»*** կարճամետրաժ ֆիլմերն անմիջապես սիրվեցին իրենց հումորով, հյութեղ, արտահայտիչ կերպարներով:

1960-1970-ական թվականները խորհրդահայ կինոարվեստի վերելքի ժամանակաշրջանն էր: Ստեղծվեցին կինոնկարներ, որոնք այսօր էլ համաժողովրդական սեր են վայելում, և ժամանակի ընթացքում չի խամրում նրանց գեղարվեստական ար-

Դրվագ «Եռանկյունի» ֆիլմից

ժեքը: Այդ ֆիլմերից են *«Բարև, ես եմ»*, *«Եռանկյունի»*, *«Մենք ենք, մեր սարերը»*, *«Սարոյան եղբայրներ»*, *«Նոան զույնը»* և այլն, որոնք ներկայացնում են հայկական կինոյի «նոր ալիքը»:

Նկատելի տեղաշարժ եղավ ժամանակակից կատակերգության ժանրում: Սիրված կինոկատակերգություններից են *«Հայրիկ»*, *«Հարսնացուն հյուսիսից»* և *«Տղամարդիկ»* կինոնկարները:

Հաջորդ տասնամյակը (1976–1985 թթ.) առանձնանում է կինոարտադրանքի ընդհանուր որակական մակարդակի վերելքով: Այդ շրջանի առավել նշանավոր գործերից են «Երկունք» և «Նահապետը» կինոնկարները: Առաջինը պատմական ֆիլմի ժանրը հարստացնում է լայն էպիկական շնչով, երկրորդը բանաստեղծականությամբ և զգացմունքային մեծ ուժով հաստատում է մարդասիրության և պատմական արդարության գաղափարները:

Հարցեր և առաջադրանքներ

1. Խորհրդահայ գրականության նշանավոր ներկայացուցիչներից ո՞ւմ գիտեք. թվարկեք նրանց ստեղծագործությունները: Դրանցից ի՞նչ եք կարդացել: Ո՞ր ստեղծագործությունը կամ գրական ո՞ր հերոսին եք նախընտրում. ինչո՞ւ: Բնութագրե՛ք այդ հերոսին:

2. Թվարկեք խորհրդահայ նշանավոր կոմպոզիտորների և նրանց ստեղծագործությունները: Դրանցից որո՞նք եք ունկնդրել:
3. Խորհրդային իշխանությունները ի՞նչ միջոցառումներ իրականացրին թատերական կյանքում: Խորհրդահայ նշանավոր թատերագիրներից և դերասաններից ո՞ւմ գիտեք:
4. Թվարկեք խորհրդահայ նշանավոր կինոգործիչների և նրանց գործերը: Դրանցից որո՞նք եք դիտել և ի՞նչ տպավորություն եք ստացել:

§ 4. ԿԵՐՊԱՐՎԵՍՏԸ ԵՎ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Կերպարվեստը: Հայրենական մեծ պատերազմի սկզբից ՀԽՍՀ նկարիչների միությունն իր գործունեությունն ուղղորդեց պատերազմական թեմաներով գործերի ստեղծմանը: Պատերազմից հետո նկարիչները տարվեցին բնանկարի և նատյուրմորտի ժանրերով:

Հետստալինյան ժամանակաշրջանում կերպարվեստի զարգացման համար ավելի ազատ պայմաններ ստեղծվեցին: 1950-ական թվականներին հայկական արվեստի վերելքը պայմանավորվեց նաև 1945 թ. Երևանի գեղարվեստական ինստիտուտի հիմնադրումով: Ապարեզ մտավ նոր սերունդ, որը ձգտում էր նորովի արտահայտելու հասարակությանը հուզող խնդիրները:

Մարտիրոս Սարյանի ստեղծագործության մեջ նոր ուժով ներկայացան բնության ընդհանրացված պատկերները, աշխատանքի դրվագները, լիառատ նատյուրմորտները: 1950-ական թվականներին ստեղծված էպիկական բնապատկերների շարքը («Արարատը՝ Դվինից» և այլն) 1961 թ. արժանացավ ԽՍՀՄ բարձրագույն՝ Լենինյան մրցանակի: Մ. Սարյանը՝ Վարպետը, դարձավ ազգային կերպարվեստի դպրոցի նահապետը:

Թեմատիկ պատկերարվեստի զարգացման գործում մեծ էր ***Հովհաննես Զարդարյանի*** ներդրումը: Հայ

Մարտիրոս Սարյան. «Հայաստան»

Գրիգոր Խանջյան. «Հայոց այբուբեն»

Երվանդ Քոչար. «Սասունցի Դավիթ

լուսավորիչ Խաչատուր Աբովյանին նվիրված «Նախաշավիղ» խորհրդանշական բնույթի կտավում նա գեղանկարչական արվեստին հաղորդել է պատմական թեմայի նորաշունչ մեկնություն:

1940-ական թվականների վերջին արվեստի վարպետների շարքը համալրեցին հայրենադարձ նկարիչները: Ծանրակշիռ էր ***Հարություն Կալենցի*** և ***Հակոբ Հակոբյանի*** դերը նուրբ գույների ներդաշնակությամբ գեղանկարչական նոր դպրոցի կազմավորման գործում:

1950-1970-ական թվականներին հայկական գեղանկարչության բնորոշ գծերն էին ավանդական ժանրերի միաձուլումը, մարդկանց և բնապատկերի համադրումը: 1950-ական թվականների կեսին ***Սարգիս Մուրադյանի*** և ***Գրիգոր Խանջյանի*** ստեղծագործական պաթոսի հիմքում XX դարի սկզբի ողբերգական իրադարձություններն էին: Ուշագրավ են Ս. Մուրադյանի «Կոմիտասի վերջին գիշերը», Գ. Խանջյանի «Իմ ժողովրդի պատմության տարեթվերից» նկարաշարերը, Պ. Սևակի «Անլռելի զանգակատուն» պոեմի պատկերազարդումը:

1950-ական թվականներից քանդակի դասական ոճը զարգացում ապրեց ***Երվանդ Քոչարի*** «Սասունցի Դավիթը», ***Արտաշես Հովսեփյանի*** «Ալեքսանդր Թամանյան», ***Նիկողայոս Նիկողոսյանի*** «Միքայել Նալբանդյան» մոնումենտալ ստեղծագործություններում, որոնք նոր տեսք տվեցին Երևանի կենտրոնական փողոցներին:

Ազգային ժողովի շենքը. ճարտարապետ՝ Մարկ Գրիգորյան

Գեղանկարչության մեջ ուրույն տեղ զբաղեցրեց ***Մինաս Ավետիսյանը***: Նա նորովի մեկնաբանեց սարյանական մեթոդի հնարավորությունները: Մ. Ավետիսյանի կտավները («Ջաջուռ», «Ծնողներս», «Սպասում»), որմնանկարները կյանքը բացահայտում են հավերժական արժեքներով, խոսում անհատի ճակատագրի դրամատիզմի, տոկունության և գեղեցկության մասին:

1980-ական թվականների սկզբին պատմական թեմաներին յուրովի անդրադարձավ Գ. Խանջյանն իր «Հայոց այբուբեն», «Վարդանանք» որմնազորգերում (գոբելեն):

Ճարտարապետությունը: Հետպատերազմյան շրջանում կառուցվել են հասարակական շենքերի համալիրներ, որոնք արժեքավոր ներդրում են խորհրդահայ ճարտարապետության մեջ: Լավագույնը Ալեքսանդր Թամանյանի նախագծած՝ Երևանի Լենինի հրապարակի (Հանրապետության հրապարակի) ճարտարապետական համալիրն է: Կառավարական տունը, «Արմենիա» հյուրանոցը, արհեստակցական միությունների ու կապի նախարարության, պատմության պետական թանգարանի շենքերը վկայում են հայ ավանդական ճարտարապետության ժառանգության վրա հիմնված նոր քաղաքաշինական արվեստի աննախադեպ վերելքի մասին:

Հայ ճարտարապետության նվաճումներից դարձան նաև ներկայիս ՀՀ Ազգային ժողովի շենքը, Կենտրո-

Մատենադարանի շենքը. ճարտարապետ՝ Մարկ Գրիգորյան

նական ծածկած շուկան, Մատենադարանը և այլն: Այս ստեղծագործությունները բնորոշ են խորհրդահայ ճարտարապետության 1940–1950–ական թվականների ոճական ուղղությանը:

Երկաթբետոնի արտահայտչական հնարավորությունների օգտագործման, նոր խնդիրների լուծման և «սոցիալիստական ճարտարապետության» ազգային ու ինքնատիպ ընկալման օրինակներ են 1960–ական թվականներին նախագծված մի շարք կառույցներ Երևանում՝ Սունդուկյանի անվան թատրոնի, «Ռոսիա» կինոթատրոնի, Կամերային երաժշտության տան շենքերը և այլն:

1960–1980–ական թվականներին կառուցվել են պատմության նշանավոր դեպքերն ու դեմքերը հավերժացնող հուշարձաններ, որոնցից են Հայրենական մեծ պատերազմի զոհերին նվիրված հուշարձանները հանրապետության գրեթե բոլոր բնակավայրերում, Մեծ եղեռնի զոհերի հուշահամալիրը Ծիծեռնակաբերդում, Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիրը, «Մայր Հայաստան» հուշարձանը Լենինականում և այլն:

Հարցեր և առաջադրանքներ

1. Որո՞նք էին կերպարվեստի զարգացման պայմանները հետպատերազմյան շրջանում: Թվարկե՛ք նշանավոր խորհրդահայ կերպարվեստագետներին, նշե՛ք նրանց գործերը:
2. Ներկայացրե՛ք խորհրդահայ ճարտարապետության նվաճումները. ի՞նչ նշանավոր կառույցներ գիտեք, ո՞ւմ նախագծով են կառուցվել:

§ 5. ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ԴՊՐՈՑԸ, ՄԱՄՈՒԼԸ, ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Սփյուռքահայ դպրոցը: Սփյուռքահայ կյանքի կարևորագույն բաղադրամաս հանդիսացող դպրոցները երկու տիպի էին՝ ամենօրյա և մեկօրյա: Վերջիններիս լայն ցանց կար ԱՄՆ-ում, Ֆրանսիայում, Անգլիայում և Ավստրալիայում: ԱՄՆ-ում այդ դպրոցները գործում էին եկեղեցիներին կից և գլխավորապես կիրակնօրյա վարժարաններ էին:

1945–1990 թթ. հայերի թիվը ստվարանում էր Գերմանիայում, Շվեյցարիայում, Ավստրիայում, Շվեդիայում, Հոլանդիայում, Արաբական թերակղզու մի շարք քաղաքներում: Այն վայրերում, որտեղ հիմնավորվում էր թեկուզ 10–20 հայ ընտանիք, ստեղծվում էր մեկօրյա վարժարան: Երեխաները տարրական գիտելիքներ էին ստանում հայոց լեզվից, հայ ժողովրդի պատմությունից, սովորում էին հայ երգարվեստ:

Դպրոցական ցանցը ավանդույթի ուժով պահպանվում էր ***Թուրքիայում:*** Ստամբուլում ապրող հայերի ճնշող մեծամասնության երեխաները, սկզբնական կրթությունը ստանալով ազգային նախակրթարաններում, մեծ մասամբ շարունակում էին սովորել հայկական միջնակարգ դպրոցներում, լիցեյներում, երբեմն՝ ֆրանսիական և ամերիկյան, հազվադեպ՝ թուրքական դպրոցներում:

Իրանում ապրող հայերն ունեին շուրջ վեց տասնյակ դպրոց: Որոշ թվով հայ աշակերտներ ուսում էին ստանում օտար դպրոցներում, մասնավորապես ֆրանսիական և ամերիկյան լիցեյներում: Հայկական նախակրթարաններն ավարտողների մի մասը նույնպես շարունակում էր սովորել օտար դպրոցներում:

Սփյուռքահայ կրթական կյանքի կենտրոնը ***Լիբանանն*** էր: XX դ. երկրորդ կեսին Բեյրութի գրեթե բոլոր դպրոցների համար կառուցվել էին հարմարավետ շենքեր: Բեյրութի բազմաթիվ միջնակարգ դպրոցներ ու մանկապարտեզ-նախակրթարաններ համընդհանուր ճանաչում ունեին: Դպրոցական տարիքի գրեթե բոլոր աշակերտներն ընդգրկված էին հայկական դպրոցներում:

Կազմակերպված դպրոցական համակարգ ուներ ***սիրիահայ*** գաղութը: Հալեպի ճեմարանները և վարժարանները Սփյուռքի լավագույն միջնակարգ դպրոցներից էին: Մեծ համբավ

ուներ Կիպրոսի Մելգոնյան կրթական հաստատությունը, որը, միջնակարգի ծրագրից բացի, երկամյա դասընթացով պատրաստում էր ուսուցիչներ, լրագրողներ ու այլ մասնագետներ:

ԱՄՆ-ում հայկական դպրոցաշինությունն ընդամենը կեսդարյա պատմություն ունի: Առաջին ամենօրյա դպրոցը բացվել է 1963 թ. Լոս Անջելեսում: 1982 թ. Լոս Անջելեսում կար 8 ամենօրյա դպրոց, նախակրթարաններ կային Նյու Յորքում, Ֆիլադելֆիայում, Սան Ֆրանցիսկոյում, Ֆրեզնոյում, Նյու Ջերսիում, Դետրոյտում: Մոնրեալում և Տորոնտոյում (Կանադա) գործում էին 4-ական ամենօրյա հայկական վարժարաններ:

Սփյուռքահայ կրթական հաստատությունների մեջ առանձնահատուկ տեղ ունեին բարձրագույն դպրոցները: ***Բեյրութի Հայկազյան համալսարանի*** շրջանավարտները ստանում էին արվեստի պսակավորի (բակալավր) և գիտության պսակավորի (մագիստրոս) տիտղոսներ, որոնք հավասար էին լիբանանյան համալսարանների շրջանավարտներին շնորհվող աստիճաններին:

Ամերիկահայ միջազգային քոլեջը հիմնվել է 1976 թ. Կալիֆոռնիայի Լա Վեռն համալսարանին կից: Քոլեջում ուսանում էին սփյուռքահայ զանազան գաղթավայրերից, ինչպես և ԱՄՆ-ի քաղաքներից եկած միջնակարգ կրթությամբ երիտասարդներ: Քոլեջը գործեց մինչև 1992 թ.:

Սփյուռքահայ մամուլը: Սփյուռքի պայմաններում մամուլը շարունակում էր մնալ ազգային կյանքի զարգացման հիմնական սյուներից մեկը. այն բազմաբնույթ էր ու բազմաբանակ: Գրեթե ամեն քաղաքական կուսակցություն, ուսումնական հաստատություն, եկեղեցական, հասարակական, հայրենակցական, բարեխնամ, մշակութային ու մարզական կազմակերպություն ուներ իր պարբերականը:

1961 թ. Սփյուռքում լույս էր տեսնում ***134 անուն*** պարբերական, որից 16-ը օրաթերթ էր: ***1985 թ.*** դրանց թիվը հասել էր ***225-ի***: Ամերիկահայ գաղութն ուներ 30-ից ավելի թերթ ու ամսագիր: Ֆրանսահայ գաղթօջախում հրատարակվում էին 10-ից ավելի հայերեն պարբերականներ:

Լիբանանահայ մամուլը ուղղություն էր տալիս սփյուռքահայ կյանքին: 1946 թ. Բեյրութում սկսեց հրատարակվել ***«Անի»*** ամսագիրը՝ բանաստեղծ ***Վահե Վահյանի*** խմբագրությամբ: Հեղինակություն վայելող այդ պարբերականի էջերում տպագրվեցին մնայուն արժեք ներկայացնող գեղարվեստական, բանասիրական, քննադատական գործեր:

Նկատելի փոփոխություններ կատարվեցին ֆրանսահայ մամուլում: Պատերազմի առաջին օրերին փակվեց ***Արշակ Չոպանյանի «Անահիտը»***: Պատերազմից հետո՝ մինչև 1949 թ. վերջնականապես փակվելը, լույս տեսավ «Անահիտի» մի քանի համար: Պարբերաբար լույս էին տեսնում ***«Յառաջ»*** օրաթերթը և գրական-հասարակական ***«Աշխարհ»*** շաբաթաթերթը:

Նախկին պարբերականների կողքին («Ժամանակ», «Նոր լուր», «Մար-

մարա» օրաթերթեր, «Սուրբ Փրկիչ» տարեգիրք) հետպատերազմյան տարիներին *Ստամբուլում* ապարեզ եկան մի քանի նոր թերթեր ու հանդեսներ:

Շարունակում էին լույս տեսնել հայագիտական երկու հանդեսները՝ *«Բազմավեպը»* Վենետիկում, *«Հանդես ամսօրյան»* Վիեննայում:

Սփյուռքահայ գրականությունը: Սփյուռքահայ գրականությունն ունեցել է զարգացման մի քանի փուլ: Առաջինի համար բնորոշ էր հայրենի հողի կարոտի թեման, որն ուներ ընդգծված գյուղագրական միտում: Երկրորդ փուլում տիրապետող էին դառնում այլ ազգերին ձուլվելու վտանգը և այն հաղթահարելու մտահոգությունը: Երկրորդ աշխարհամարտի և հետպատերազմյան տարիներին դրվեցին պայքարի, հայրենասիրության և ստեղծագործական վերելքն արտահայտող սփյուռքահայ նոր գրականության հիմքերը: Այն դառնում էր համամարդկային ինքնատիպ դիմագծեր ունեցող գրականություն:

Գրական կյանքն անհամեմատ աշխույժ էր ԱՄՆ-ում, Ֆրանսիայում, Լիբանանում, մասամբ՝ Թուրքիայում և Իրանում: Ամերիկայի Միացյալ Նահանգներում հետպատերազմյան տասնամյակներին հրատարակվեցին բազմազան գրքեր՝ հուշագրություններ, պատմաբանասիրական աշխատություններ, գրական-գեղարվեստական երկեր:

Հետպատերազմյան տարիներին հայ հեղինակների կողմից Ֆրանսիայում հրատարակվում էին հարյուրավոր գրքեր: Միջին սերնդի գրողներից *Հրաչ Զարդարյանը* հրատարակեց Սփյուռքը պատկերող ծավալուն վեպ՝ «Որբացող մարդիկ», իսկ *Զարեհ Որբունին*՝ «Վարձու սենյակ» պատմվածքների ժողովածուն: Որբունին XX դարի երկրորդ կեսի սփյուռքահայ գրականության աչքի ընկնող դեմքերից էր:

1930-ական թվականներին լիբանանահայ գրականության ասպարեզ եկած գրողները գրական հասունացում ապրեցին հետպատերազմյան տարիներին:

Վահե Վահյանը «Ոսկե կամուրջ» գրքում գտավ իր գրական ուղին: Նա դարձավ սփյուռքահայ մի ամբողջ գրական հոսանքի առաջամարտիկներից մեկը թե՛ իր խմբագրած «Անի» ամսագրով, թե՛ գեղարվեստական ստեղծագործություններով ու քննադատական-հրապարակախոսական հոդվածներով: *Անդրանիկ Ծառուկյանը* գրական դժվարին ճանապարհն անցավ պատվով: Նրա «Մանկություն չունեցող մարդիկ» գիրքը պատկերում է Մեծ եղեռնից փրկված որբերի ծանր ու դժվարին ճանապարհը: 1940-1950-ական թվականներին ասպարեզ եկան նոր գրողներ՝ *Վահե Օշականը, Գառնիկ Աղդարյանը* և ուրիշներ:

Սփյուռքահայ գրական կյանքի կարևոր դեմքերից է բանաստեղծ-դրամատուրգ *Մուշեղ Իշխանը*: Նրա ստեղծագործության հիմքում տարագիր հայի պայքարն է ուծացման վտանգի դեմ՝ հանուն սեփական դիմագծի պահպանման, ազգային և հա-

մամարդկային գաղափարների կենսագործման:

Իրանահայ գրական դեմքերից է բանաստեղծ-նկարիչ ***Դևը (Մարգար Ղարաբեկյան)***, որի ստեղծագործություններն աչքի են ընկնում հայրենասիրությամբ, առաջադիմական գաղափարներով:

Թուրքիայում քաղաքական խիստ վարչակարգի պայմաններում, ըստ էության, անհետանում էր հին գրական սերունդը: Այդ սերնդից Ստամբուլում ստեղծագործում էր միայն Հակոբ Մնձուրին (Տեմիրճյան): Նա արևմտահայ արձակի լավագույն ավանդները պահպանող գրող է:

Հայազգի գրողների մի մասը Սփյուռքում ստեղծագործում էր օտար լեզուներով: Հետպատերազմյան ժամանակաշրջանում շարունակում էին ստեղծագործել ու իրենց համաշխարհային ճանաչումն ամրապնդել ***Վիլյամ Սարոյանը, Լևոն-Զավեն Սյուրմելյանը:***

Սարոյանի ստեղծագործությունների շատ հերոսներ ներկայացնում են հայկական միջավայրը՝ ազգային ավանդույթներով ու բարքերով, «հին հայրենիքի» հիշողությամբ:

Կալիֆոռնիայի համալսարանի պրոֆեսոր, գրող Լևոն-Զավեն Սյուրմելյանը սկսել է ստեղծագործել հայերեն, տպագրվել հայ մամուլում, ապա գրել է անգլերեն՝ շարունակելով պահպանել հայի ոգին:

Սփյուռքահայ պատմագրությունը: Հետպատերազմյան շրջանում Սփյուռքում լույս տեսան հայ ժողովրդի պատմությանը նվիրված մի շարք աշխատություններ, որոնց նպատակը նոր սերնդին հայ ժողովրդի անցյալի հիշարժան դրվագներին իրազեկելն էր: Սփյուռքահայ պատմաբաններից է ***Հրանտ Արմենը***, որն ապրում և ստեղծագործում էր ԱՄՆ-ում: Նա ճանաչված էր դեռ 1940 թվականին հրատարակած «Մեծն Տիգրան» ուսումնասիրությամբ: Տպագրվել էին նրա բազմաթիվ հոդվածները հայ ժողովրդի պատմության վաղ շրջանի վերաբերյալ: Ուշագրավ է Հրանտ Արմենի «Մարզպանը և Սպարապետը» հետազոտությունը, որտեղ ևս քննության է առնվում հայ պատմագրությունը երկար տասնամյակներ զբաղեցրած՝ Վասակի և Վարդանի պատմական դերի գնահատման հարցը:

Պատմագրության բնագավառում բեղմնավոր աշխատանք է կատարել ***Արշակ Ալպոյաճյանը***: Նա հետպատերազմյան երեք տասնամյակների ընթացքում հրատարակել է տասից ավելի ստվարածավալ երկեր: Դրանց մեջ արժեքավոր է հատկապես «Պատմություն հայ գաղթականության» բազմահատոր ուսումնասիրությունը (Կահիրե, 1941–1961 թթ.):

Հայրենակցական միությունների ջանքերով հրատարակված պատմագիտական գրքերի թիվը հասնում էր մոտ հարյուրի: Կարելի է հիշատակել «Հաճընի ընդհանուր պատմությունը», «Երզնկան», «Պատմություն Եվդոկիո հայոց», «Պատմություն Մալաթիո հայոց», «Ամիտայի արձագանքները», «Խարբերդ և անոր ոսկեղեն դաշտը», «Կարինապատումը» և այլն:

Կալիֆոռնիայի համալսարանի պրոֆեսոր ***Ռիչարդ Հովհաննիսյանը*** արժեքավոր ու բազմահատոր աշխատություն հրապարակեց Հայաստանի առաջին հանրապետության պատմության մասին:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ի՞նչ փոփոխություններ տեղի ունեցան սփյուռքահայ կրթական կյանքում: Փաստերով հիմնավորե՛ք, որ դպրոցական կյանքը վերելք էր ապրում: Թվարկե՛ք Սփյուռքի նշանավոր ուսումնական հաստատություններ: Աղյուսակով ներկայացրե՛ք սփյուռքահայ կրթական հաստատությունները:
2. Ի՞նչ դեր էր խաղում մամուլը սփյուռքահայության կյանքում: Սփյուռքահայ ի՞նչ նշանավոր պարբերականներ գիտեք, որտե՞ղ էին դրանք հրատարակվում:
3. Սփյուռքահայ գրականության նշանավոր ներկայացուցիչներից ո՞ւմ գիտեք. թվարկե՛ք նրանց ստեղծագործությունները: Դրանցից ո՞րն եք կարդացել:
4. Սփյուռքահայ ո՞ր նշանավոր պատմաբաններին գիտեք. թվարկե՛ք նրանց պատմագիտական ուսումնասիրությունները: Բնութագրե՛ք և համեմատե՛ք այդ ուսումնասիրությունների պատմական գործիչներին:

§ 6. ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ԱՐՎԵՍՏԸ

Սփյուռքահայ կերպարվեստը: Սփյուռքահայ կերպարվեստին ու քանդակագործությանը բնորոշ է ազգային ավանդույթների հենքի վրա սեփական դիմագծի կերտումը:

Եվրոպայում ստեղծագործող նշանավոր նկարիչներից էր ***Ժիրայր Օրագյանը***, որն ապրում և ստեղծագործում էր Իտալիայում: Նրա ստեղծագործություններից ճանաչված են «Որբեր», «Եղեռնը» և այլ կտավներ:

Իրանում հայտնի էին մի շարք շնորհալի հայ նկարիչներ: Առավել ճանաչված են Դարվիշը (Անտրե Սևրուկյան) և Աբրահամ Գուրգենյանը: Երկուսն էլ ծնվել են Իրանում, հետևել պարսկական մանրանկարչական արվեստին, դարձել այդ բնագավառի ականավոր դեմքեր:

Ֆրանսիական արդի գեղարվեստի խոշոր դեմքերից է ***Գառզուն (Գառնիկ Զուլումյան)***: Նա սովորել է Կահիրեի Գալուստյան վարժարանում, ապա՝ ֆրանսիական լիցեյում: 1924 թ. մեկնել է Փարիզ, ավարտել ճարտարապետական դպրոցը, հաճախել Մոնպառնասի «ազատ ակադեմիաները»: Գառզուն միջազգային համբավ է ձեռք բերել 1953 թ., երբ Փարիզի «Դրուան Դավիդ» սրահում բացվեց նրա վենետիկյան բնանկարների ցուցահանդեսը: Նշանավոր են Գառզուի «Հայտնություն», «Ապոկալիպսիս», «Երկրային դրախտ» ու այլ նկարաշարեր, ինչպես և գրքերի նկարազարդումներ ու բազմաթիվ գրաֆիկական գործեր (վիմագրություններ): 1979 թ. Գառզուն ընտրվել է Ֆրանսիայի գեղարվեստի ակադեմիայի անդամ:



Գառզու. «Երազների կանչը», 1968

Ֆրանսիական արդի արվեստի ականավոր դեմքերից է նաև ***Ժանեմը (Հովհաննես Սեմերջյան)***: Նա սովորել է Մոնպառնասի «ազատ ակադեմիաներում», 1939 թ. ավարտել Փարիզի դեկորատիվ արվեստի բարձրագույն դպրոցը: Ժանսեմն արժանացել է բազմաթիվ մրցանակների և միջազգային ճանաչման: Նրա ստեղծագործության վրա իրենց կնիքն են թողել Մեծ եղեռնի արհավիրքները՝ տխուր մանկության հիշատակները:

XX դարի ամերիկյան արվեստում բացառիկ տեղ է գրավում ***Արշիլ Գորկին (Ոստանիկ Ադոյան)***: Ծնվել է Վանի Խորգոմ գյուղում: Մեծ եղեռնը, որին ականատես է եղել պատանի հասակում, խոր հետք է թողել նրա կյանքի ու ստեղծագործության վրա: 1920 թ. հաստատվել է ԱՄՆ-ում: «Ինչպես մորս ասեղնագործ գոգնոցը բացվում է իմ կյանքում» (1944), «Արորը և երգը» (1947) ու այլ կտավներ նկարչի ողբերգական մահից հետո համաշխարհային հռչակ են բերել նրան՝ դարձնելով ***գերիրապաշտական էքսպրեսիոնիզմի*** սկզբնավորողը: Արշիլ Գորկու ստեղծագործությունը ամբողջովին ներթափանցված է հայկական ոգով, Վանա լճի անկրկնելի գույների՝ կապույտի, դեղինի, ծիրանու արձագանքներով:

Քանդակագործ և նկարիչ ***Խորեն Տեր-Հարությանի*** հարուստ ստեղծագործությունը ներշնչված է հայրենասիրությամբ, մարդասիրությամբ ու ազատության համար պայքարի ոգով: Նրա գործերից հայտնի են «Սասունցի Դավիթը», «Փոքր Միհրը»: «Փոքր Միհր» հուշարձանը տեղադրված է

Firefox https://ebooks.bonee.net/fumf/rrit/



Ժանսեմ. «Խաչվառներ հրեշտակներով», 1986

Արշիլ Գորկի. «Նկարիչը և իր մայրը», 1926–1934

Ֆիլադելֆիայի գեղարվեստի ակադեմիայի զբոսայգում: Խորեն Տեր–Հարությանը 1983 թ. Հայաստան է բերել և նվիրել մեծ քանակությամբ քանդակներ, գրաֆիկական և գեղանկարչական գործեր: Նա ԱՄՆ–ի արվեստի ինստիտուտի պատվավոր անդամ էր, նրա անունը գրանցված է «XX դարի լավագույն քանդակագործներ» գրքում: Երևանի Օղակաձև զբոսայգում է Տեր–Հարությանի «Վերածնված Հայաստան» խորհրդանշական կոթողը:

Սփյուռքահայ երաժշտությունը: Սփյուռքահայ երաժշտական արվեստը զարգանում էր երկու ուղղությամբ: Մի կողմից՝ շատ հայ երգահաններ, մեծ մասամբ Կոմիտասի աշակերտներն ու այդ դպրոցի ներկայացուցիչները, ստեղծագործում էին՝ հավատարիմ մնալով ազգային երաժշտական ավանդներին՝ ներշնչման աղբյուր ունենալով հայկական ժողովրդական երգարվեստը: Մյուս կողմից՝ օտար դաստիարակությամբ կյանք մտած հայ արվեստագետները հիմնականում ստեղծագործում էին եվրոպական երաժշտության ազդեցության ներքո՝ հազվադեպ դիմելով մայր ժողովրդի երաժշտությանը:

Որպես երգահան և խմբավար–դիրիժորներ՝ Սփյուռքում հայտնի են ***Համբարձում Պերպերյանը, Աշոտ Պատմագրյանը, Օննիկ Պերպերյանը*** և ուրիշներ: Նրանց ներշնչման աղբյուրն էր հայ ժողովրդական երաժշտությունը: Ա. Պատմագրյանը ավելի քան քառասուն տարի երգչախումբ էր ղեկավարում, համերգներ տալիս սփյուռքահայ գաղթօջախներում:

290 von 322 15.02.2021, 10:43

Ալան Հովհաննես

Շառլ Ազնավուր

Իրանահայ երաժշտական կյանքում նկատելի դեր է կատարել ***Նիկոլ Գալանտերյանը*** թե՛ որպես ստեղծագործող և թե՛ որպես խմբավար: Երաժշտական կյանքի եռուզեռ կար նաև Ստամբուլում: Մեծ աշխատանք էին կատարում ***Բարսեղ Կանաչյանը***, դիրիժոր ***Հովհաննես Չեքիջյանը*** և ուրիշներ:

Չնայած բազմաթիվ դժվարություններին՝ հայկական երաժշտությունը Սփյուռքում զարգանում էր ազգապահպանման ճանապարհով:

Սփյուռքահայ թատրոնը: Լիբանանում, Ֆրանսիայում, Ամերիկայի Միացյալ Նահանգներում, Եգիպտոսում 1950–1960–ական թվականներին կանոնավոր հայկական թատերախմբեր էին գործում: Այլ երկրներում գործում էին առավելապես սիրողական թատերական խմբեր:

1950–ական թվականներից Բեյրութում ասպարեզ եկան հայկական 4–5 թատերախմբեր, որոնցից բացառիկ հաջողություն ուներ 1959 թ. հիմնադրված ***«Փափազյան թատերախումբը»***:

1950–1960–ական թվականներին Հալեպում գործում էին մի քանի հայկական թատերախմբեր, որոնցից ամենանշանավորը 1961 թ. հիմնված «Ադամյան թատերախումբն» էր: Խումբը 50 տարի կանոնավոր ներկայացումներ է տվել՝ աստիճանաբար դառնալով ոչ միայն տվյալ գաղութի, այլև սիրիական թատրոնի կենսունակ հատվածներից մեկը:

Սփյուռքահայ գաղթավայրերից ոչ մեկում հայերեն թատերական ներկայացումներն այնքան տարողություն, աշխարհագրական շառավիղ չեն ունեցել, որքան ԱՄՆ–ում: Ինքնագործ կամ սիրողական խմբերի թիվը հասնում էր հարյուրների. նրանք նպաստում էին ազգապահպանման գործին:

Ինչպես գրականության մեջ, արվեստի բնագավառում ևս կան տաղանդաշատ մարդիկ, որոնք, դուրս գալով հայկական շրջանակներից, հասել են համաշխարհային ճանաչ-

ման: Նրանցից է ***Շառլ Ազնավուրը***՝ խոշոր տաղանդի տեր աշխարհահռչակ արվեստագետը: Նա ծնվել է հայ թատրոնին ծառայող ընտանիքում, մանկուց լսել է հայ երգն ու երաժշտությունը, մասնավորապես Սայաթ-Նովայի երգերը: Շ. Ազնավուրը աշխարհում հայտնի է որպես ֆրանսիացի երգիչ, բայց նրա երգարվեստում մեծ տեղ ունի նաև հայկական մեղեդին: Շ. Ազնավուրը սերտորեն կապված է մայր հայրենիքին, ծառայում է իր ժողովրդին որպես դիվանագետ, բարեգործ, մեծ արվեստագետ և, վերջապես, անկրկնելի երգիչ ու մարդ:

Երգչուհի ***Լուսին Ամարան*** նույնպես հռչակված և ճանաչված էր ամբողջ աշխարհում: Տարբեր լեզուներով հարյուրավոր թերթեր և պարբերականներ գովերգել են Լ. Ամարայի տաղանդը:

Օտար երկնակամարի տակ է համբավ ձեռք բերել երգահան ***Ալան Հովհաննեսը***: Ամերիկայում ծնված հայորդին մեծացել է որպես ամերիկացի, հետևել ամերիկյան երաժշտությանը, գրել բազմաթիվ ստեղծագործություններ: Հայկական մեղեդին ցնցել է նրան և ստիպել, որ ուսումնասիրի արևելյան երաժշտությունը: Հայտնի են Ալան Հովհաննեսի «Անահիտ», «Վահագն» ստեղծագործությունները:

Ռուբեն Մամուլյան

Համաշխարհային կինոարվեստի ականավոր ներկայացուցիչներից ***Ռուբեն Մամուլյանը*** ևս ծնվել է հայ արվեստին ծառայողի ընտանիքում: Մոսկվայում կրթություն ստացած և ռուսական ռեալիստական թատրոնի ավանդներով զինված Ռ. Մամուլյանն իր տաղանդի շնորհիվ հասել է միջազգային ճանաչման:

Այսպիսով՝ տարբեր քաղաքական ու սոցիալական պայմաններում սփյուռքահայ մշակույթը ունեցել է գոյատևման տարբեր հնարավորություններ, ընթացել է զարգացման տարբեր ուղիներով:

Հարցեր և առաջադրանքներ

1. Նշանավոր սփյուռքահայ կերպարվեստագետներից ո՞ւմ գիտեք: Թվարկե՛ք նրանց գործերը:
2. Զարգացման ի՞նչ ուղի է անցել սփյուռքահայ երաժշտությունը: Ովքե՞ր էին սփյուռքահայ երաժշտարվեստի ականավոր ներկայացուցիչները: Սփյուռքահայ երգահանների ո՞ր ստեղծագործություններն եք ունկնդրել:

3. Համառոտ ներկայացրեք սփյուռքահայ թատերական կյանքը: Գնահատեք սփյուռքահայ մշակութային գործիչների դերը համաշխարհային մշակույթում:

ԳԼՈՒԽ 4. ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՐԴԻ ՎԻՃԱԿԸ

§ 1. ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔԸ

Մշակույթի վիճակը: Անկախության հռչակումից հետո վերացվեցին գաղափարական այն կապանքները, որոնք կաշկանդում էին մշակույթի, մասնավորապես ազգային մշակույթի զարգացումը: Ստեղծվեցին ազատ ստեղծագործելու հնարավորություններ: Բայց առկա սոցիալ-տնտեսական դժվարին իրադրությունը բացասական ազդեցություն ունեցավ հոգևոր կյանքի վրա: Ճգնաժամ ապրեցին հայ թատրոնը և կինոն, կրճատվեց գրատպությունը, խախտվեցին մշակութային կապերը, ծանր վիճակում հայտնվեց գիտությունը:

Մշակույթի շատ կոթողներ, ճարտարապետական հուշարձաններ, թատրոնի և կինոյի շենքեր հայտնվեցին անմխիթար վիճակում: Արվեստի որոշ հիմնարկների սեփականաշնորհման հետևանքով ստեղծագործական որոշ խմբեր անգործության մատնվեցին: Այդուհանդերձ, շարունակվող սոցիալ-տնտեսական ծանր ճգնաժամը լիովին չարգելակեց մշակույթի զարգացումը: Այդ բնագավառի շատ աշխատողներ շարունակում էին գործել ժամանակի պահանջներին համահունչ: Պատահական չէ, որ Հայաստանի թատերական ու երաժշտական խմբերը, երգի և պարի համույթները ունեցան նաև լուրջ ձեռքբերումներ:

Կրթական վերափոխումների բաղաքականությունը: Հայաստանի անկախ հանրապետության հռչակումից հետո սկսվեցին կրթամշակութային ոլորտի բարեփոխումները: Խորհրդային Հայաստանում ձեռք էր բերվել որոշակի բարձր կրթական մակարդակ: Բայց անկախությունից հետո կրթական ոլորտը հայտնվեց ճգնաժամի մեջ: Կրթության նախկին համակարգը, որն ընդգրկում էր երեք հիմնական աստիճան (միջնակարգ, միջնակարգ-մասնագիտական և բարձրագույն), փոխարինվեց բազմաստիճան համակարգով:

Դպրոցների համար հրատարակվեցին նոր դասագրքեր, որոնցից ոչ բոլորն էին համապատասխանում հայ ազգային դպրոցի առջև դրված խնդիրներին: Ջեռուցման բացակայության պատճառով ուսումնական տարվա և դասաժամերի տևողության կրճատումը, լավագույն ուսուցիչների արտահոսքը, դասագրքերի, մեթոդական և օժանդակ գրականության պակասը, գրենական պիտույքների թանկությունը և այլ հանգամանքներ դժվարացրին ուսումնական գործընթացը: Ծանր վիճակում էր դպրոցների նյութատեխնիկական բազան, շի-

նությունները չէին վերանորոգվում, դրանց հետագա շահագործումը դառնում էր վտանգավոր:

Բարձրագույն կրթությամբ շատ ուսուցիչներ, հիմնականում տղամարդիկ, սոցիալական ծանր վիճակի պատճառով հեռանում էին դպրոցից:

Դրական տեղաշարժեր ևս կատարվեցին, օրինակ՝ միջնակարգ դպրոցները ստացան որոշակի ազատություն հատկապես բարձր դասարաններում լրացուցիչ առարկաներ անցնելու, այլընտրանքային ծրագրեր և ուսումնական ձեռնարկներ ընտրելու հարցերում:

Միջնակարգ կրթությունը բաժանվեց ***երեք աստիճանի***՝ տարրական (4 տարի), միջին (5 տարի) և ավագ (3 տարի) դպրոցներ: Ուսուցումը հանրակրթական դպրոցներում և ուսումնական բոլոր հաստատություններում ազատվեց կոմունիստական գաղափարախոսության կապանքներից: Պետությունը չէր խոչընդոտում տարբեր տեսակի, այդ թվում՝ մասնավոր դպրոցների ստեղծմանը:

Փոփոխություններ կատարվեցին հանրապետության բարձրագույն կրթության ոլորտում: Բուհերի ուսումնական ծրագրերից հանվեցին անցյալում բոլոր բուհերի համար պարտադիր գաղափարախոսական առարկաները՝ կոմունիստական կուսակցության պատմությունը, մարքս–լենինյան փիլիսոփայությունը, գիտական կոմունիզմը, գիտական աթեիզմը և այլն:

Միջազգային կրթական համակարգի մեջ ներգրավվելու նպատակ էր հետապնդում կառավարության 1995 թ.

Երևանի բժշկական համալսարանը

հունիսի 12–ի որոշումը բուհերում ուսուցման նոր՝ եռաստիճան համակարգի անցնելու մասին. բակալավրիատ՝ 4 տարի, մագիստրատուրա՝ 2 տարի (բարձր որակավորման մասնագետների պատրաստում), և ասպիրանտուրա (կադրերի պատրաստում բուհերի և գիտահետազոտական հիմնարկների համար):

Քայլեր արվեցին բուհերի ինքնուրույնությունն ընդլայնելու ուղղությամբ, աշխուժացավ նրանց համագործակցությունն արտասահմանյան ուսումնական և գիտական հաստատությունների հետ:

Բժշկական, պոլիտեխնիկական (ճարտարագիտական), մանկավարժական և այլ ինստիտուտներ վերան-

վանվեցին ու դարձան համալսարաններ կամ ակադեմիաներ: ***1991 թ.*** հիմնադրվեց ***Հայաստանի ամերիկյան համալսարանը (ՀԱՀ)***՝ որպես Կալիֆոռնիայի (ԱՄՆ) համալսարանի մասնաճյուղ:

Եթե 1990–ական թվականների շեմին Հայաստանում գործում էր պետական 13 բուհ, որտեղ կադրեր էին պատրաստվում 103 մասնագիտությունների գծով, ապա 2000 թ.՝ 15 պետական բուհ՝ ավելի քան 158 մասնագիտություններով:

Նոր տնտեսական համակարգի պայմաններում բացվեցին բազմաթիվ ոչ պետական համալսարաններ ու քոլեջներ: Մեծ մասի մակարդակը շատ ցածր էր բուհերին ներկայացվող պահանջներից, և այդ կարգի շատ ուսումնական հաստատություններ ժամանակի ընթացքում փակվեցին:

Գիտության վիճակը: ԽՍՀՄ–ի գոյության պայմաններում Հայաստանի գիտությունը և կրթությունը խորհրդային տերության երբեմնի հզոր ու միասնական գիտական համալիրի օրգանական բաղադրիչն էին: Հայաստանը գիտության զարգացման ցուցանիշներով առաջնակարգ դիրքեր էր գրավում նախկին միութենական հանրապետությունների շարքում:

Անկախացումից հետո ստեղծված տնտեսական ծանր վիճակը, նյութական և ֆինանսական միջոցների անբավարարությունը, երկրի տնտեսական շրջափակումը, գիտական կապերի խզումը, գիտական տեղեկատվության սղությունը հանգեցրին Հայաստանում գիտական կյանքի լճացմանը: Խզվեցին հիմնարար ու կիրառական գիտությունների և արտադրության միջև գոյություն ունեցող փոխադարձ կապերը, տկարացան ժամանակին մեծ համբավ ձեռք բերած գիտական դպրոցները, խաթարվեց գիտական և գիտամանկավարժական կադրերի վերարտադրության՝ տասնամյակների ընթացքում ձևավորված համակարգը: Գիտությունը դիտարկվում էր որպես չափազանց ծախսատար բնագավառ և պետական միջոցներից ֆինանսավորվում էր նվազագույն չափով:

Հայաստանի ճյուղային գիտահետազոտական ինստիտուտների մեծ մասը՝ մոտ 80 %–ը, որ նախկինում կուտակել էր նյութատեխնիկական զգալի պաշարներ, գիտական և ինժեներատեխնիկական կադրեր, թուլացավ, մնացածներն էլ նախկին միութենական գործընկերների հետ համատեղ կատարվող մշակումների ֆինանսավորման շնորհիվ հազիվ կարողացան գոյատևել:

Հանրապետության գիտական համալիրի քայքայումը հանգեցրեց գիտական կադրերի («ուղեղների») արտահոսքի: Ռազմավարական և ազգային հետազոտությունների կենտրոնի հարցումների համաձայն՝ միայն ՀՀ ԳԱԱ–ի համակարգից 1991–1995 թթ. հեռացել էր 800 գիտաշխատող, որոնցից 200–ը մշտական բնակության էր մեկնել արտասահմանյան երկրներ: Մեկնածների մեջ զգալի թիվ էին կազմում ազգային գիտության օժտված ներկայացուցիչ-

ներ, հատկապես երիտասարդ և միջին տարիքի գիտնականներ:

Գիտության ոլորտում կադրային տեղաշարժ էր կատարվում նաև, այսպես կոչված, «ներքին արտահոսքի» միջոցով: Գիտնականներից շատերը, որոնք միջոցներ չունեին արտասահման մեկնելու, թողնում էին գիտական աշխատանքը և տեղափոխվում գործունեության այլ ասպարեզներ, որտեղ հնարավոր էր ապահովել կյանքի քիչ թե շատ տանելի պայմաններ:

Բայց և այնպես, անկախության պայմաններում հնարավոր դարձավ կապեր հաստատել աշխարհի առաջատար գիտական կենտրոնների հետ, ուսումնասիրել և կիրառել գիտության կազմակերպման համաշխարհային փորձը: Հատկանշական է, որ Հայաստանի գիտական ներուժի օգտագործման հարցում հետաքրքրություններ էին հանդես բերում ոչ միայն Արևմուտքի համալսարաններն ու գիտահետազոտական կենտրոնները, այլև ռազմական բնույթի, մասնավորապես Հյուսիսատլանտյան դաշինքի (ՆԱՏՕ) կառույցները: Հայաստանի գիտնականների արտասահմանյան երկարաժամկետ գործուղումների մի մասը ֆինանսավորում էին «Հումբոլդտի» (ԳԴՀ), «Բենջամին Ֆրանկլինի» (ԱՄՆ), «Սորոսի» (ԱՄՆ) և այլ հիմնադրամներ:

Հայ գիտնականները լուրջ ուսումնասիրություններ են կատարում բնական գիտությունների, բժշկության, տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտներում:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ներկայացրեք անկախության սկզբնական շրջանում մշակույթի ճգնաժամի պատճառները: Ձեր կարծիքով ինչ է անհրաժեշտ մշակութային կյանքը զարգացնելու համար:
2. Անկախության առաջին տարիներին ինչ փոփոխություններ տեղի ունեցան կրթության բնագավառում: Փորձեք վերհանել կրթական մակարդակի անկման պատճառները: Ներկայացրեք ՀՀ արդի կրթական համակարգը:
3. Ինչո՞ւ գիտությունը հայտնվեց դժվարին վիճակում: Ինչ հետևանքներ ունեցավ գիտական կադրերի («ուղեղների») արտահոսքը: Պետության կողմից ինչ քայլեր են ձեռնարկվում գիտության զարգացման նպատակով:

§ 2. ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐՎԵՍՏԸ

Գրականությունը: Հայաստանի երրորդ հանրապետության հռչակումից հետո ստեղծագործական գործունեությունը շարունակեցին հայ գրողները: Չափածո երկերի նոր ժողովածուներով ու շարքերով հանդես եկան նշանավոր բանաստեղծներ Համո Սահյանը, Վահագն Դավթյանը, Սիլվա Կապուտիկյանը, Ռազմիկ Դավոյանը:

Սիլվա Կապուտիկյան



Հրանտ Մաթևոսյան

Գրական կյանքի զարգացմանը մասնակցություն բերեցին ավագ սերնդի ականավոր ներկայացուցիչներ Հրանտ Մաթևոսյանը, Աղասի Այվազյանը, Զորայր Խալափյանը և ուրիշներ:

Ժամանակակից մարդու հոգեբանությանը, հասարակական բարդ խնդիրների քննությանն են նվիրված Լևոն Խեչոյանի «Խնկի ծառեր», Գուրգեն Խանջյանի «Շարժասանդուղք» և «Ստվերներ խամաճիկների փողոցում», Արմեն Շեկոյանի «Մետաքսի ճանապարհը» ժողովածուները:

Անկախության շրջանում զարգացում ապրեց վեպի ժանրը: Ազգային, հասարակական և հոգեբանական խնդիրներ են շոշափում Գուրգեն Խանջյանի «Հիվանդանոց», «Սպանել փրկչին», Լևոն Խեչոյանի «Սև գիրք, ծանր բզեզ» վեպերը:

Ժամանակակից արձակագիրներին շարունակում է հուզել Մեծ եղեռնի թեման: Գրվել են մի քանի վեպեր, որոնցից Վահագն Գրիգորյանի «Ժամանակի գետը» ստեղծագործությունն արժանացել է պետական մրցանակի:

1990–2000-ական թվականները հայաստանյան թարգմանական գրականության բեղուն տարիներից են: Առանց գաղափարական-գեղագիտական կաշկանդումների, առավելապես բնագրերից թարգմանվել են եվրոպական, ԱՄՆ, ռուս, լատինամերիկյան գրականության հայերեն չթարգմանված լավագույն ստեղծագործություններ, որոնք տպագրվել են ինչպես առանձին գրքերով, այնպես էլ մամուլում:

Նկարչությունը և քանդակագործությունը: Հետխորհրդային առաջին տարիներին դժվարին վիճակում հայտնվեցին նաև ազգային կերպարվեստն ու ճարտարապետությունը:

Մայրաքաղաքում տարերայնորեն ձևավորվող գեղարվեստական շուկան կենտրոնացավ Մարտիրոս Սարյանի հուշարձանի շուրջը՝ այսպես կոչված «Վերնիսաժում»:

Երևանի «Վերնիսաժի» տարածքը

Գարեգին Նժդեհին նվիրված հուշահամալիրը Կապանում

Ազգային արվեստն աշխարհին ներկայացնելու տեսակետից նշանակալից էր Գերմանիայի Բոխում քաղաքում ***1995 թ. հունվարին*** բացված ու մոտ երեք ամիս տևած ***«Հայաստան. հին մշակույթի վերագտնված երկիր»*** ցուցահանդեսը, որտեղ ներկայացված էին նախապատմական շրջանից ցայսօր հայերի ստեղծած մշակութային արժեքներ: Նույն թվականին Մոսկվայում և Կիպրոսում ներկայացվեցին ժամանակակից հայ կերպարվեստին նվիրված ցուցահանդեսներ: 1997 թ. աշնանը Սալոնիկում (Հունաստան) կազմակերպվեց XIX–XX դարերի հայ գեղանկարիչների և գրաֆիկների շուրջ 60 աշխատանք ներկայացնող «Հայաստանի գույներ» ցուցահանդեսը, որը մեծ արձագանք գտավ արտերկրում:

Գեղարվեստական կյանքում որոշ աշխուժություն մտցրին մասնավոր պատկերասրահները: Այսօր Հայաստանում գործող մասնավոր պատկերասրահներից է «Մկրտչյան» պատկերասրահը, որի ուշադրության կենտրոնում XIX–XX դարերի հայ դասական կերպարվեստն է: Սփյուռքահայ նկարչուհի ***Սոնիա Պալասանյանի*** նախաձեռնությամբ ***1994 թ.*** Երևանում կազմակերպվեց ***Նորարար փորձառական արվեստի կենտրոնը (ՆՓԱԿ)*** սեփական պատկերասրահով: ՆՓԱԿ-ի ջանքերով 1995 թվականից կազմակերպվեց Հայաստանի



Հովհաննես Բաղրամյանի ձիարձանը Երևանում

մասնակցությունը Վենետիկի համաշխարհային արվեստի փառատոներին:

Խոշոր ցուցահանդես կազմակերպվեց 2002 թ. Հայաստանի նկարիչների միության 70-ամյակի առթիվ, որին մեկական գործերով մասնակցեցին 400 արվեստագետներ:

1990-ական թվականներին ևս, ինչպես խորհրդային շրջանում, հայ կերպարվեստի առաջատար ճյուղը գեղանկարն էր: Այդ ասպարեզում աչքի ընկան Սարգիս Մուրադյանը («Զարթոնք»), Փարավոն Միրզոյանը («Նատյուրմորտ դաշտային ծաղիկներով»), Ռուդոլֆ Խաչատրյանը («Բազմաչափ օբյեկտ»), Սոնիա Պալասանյանը («Անվերնագիր»):

Օհան Դուրյան

Պետպատվերների սակավության պայմաններում 1990-ական թվականները կոթողային արձանագործության համար դժվարին տարիներ էին: Այնուամենայնիվ, այդ ժամանակ Հայաստանում ստեղծվեցին Սպիտակի երկրաշարժի զոհերի և զոհված ազատամարտիկների հիշատակը հավերժացնող մի շարք հուշարձաններ:

Դարասկզբի առաջին տասնամյակում Երևանում կանգնեցված հուշարձաններից հայտնի են ***Արա Շիրազի*** «Զորավար Անդրանիկ» (2002), ***Նորայր Կարգանյանի*** «Հովհաննես Բաղրամյան» (2003), ***Յուրի Պետրոսյանի*** «Հովհաննես Այվազովսկի» (2003), ***Դավիթ Բեջանյանի*** «Առնո Բաբաջանյան» (2003), ***Գևորգ Գևորգյանի*** «Ծովակալ Իսակով» (2006) արձանները և այլն: Վերջին տարիների ստեղծագործություններից են Գյումրիում տեղադրված Մեր Մկրտչյանի հուշարձանը (Ա. Շիրազ), ***Գարեգին Նժդեհին նվիրված հուշահամալիրը Կապանում*** (Գ. Գևորգյան) և այլն:

Երաժշտությունը: Անկախության առաջին տարիներին երաժշտական խմբերը և անհատ ստեղծագործողները ինքնուրույն պիտի լուծեին նյութական ու կազմակերպչական բազմաթիվ խնդիրներ: Շատ խմբեր, չհարմարվելով նոր պայմաններին, լուծարվեցին: Սակայն ժամանակի ընթացքում իրավիճակը սկսեց կարգավորվել:

Սփյուռքահայ շատ արվեստագետներ եկան Հայաստան, մասնակցեցին մշակութային վերաշինության գործին:

Առաջիններից էր դիրիժոր և կոմպոզիտոր ***Լորիս Ճգնավորյանը,*** որը մինչև 2000 թ. ստանձնեց Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախմբի ղեկավարությունը: 1991 թ. նա հիմնեց Գյումրիի մշակութային կենտրոնը: Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախումբը (դիրիժոր՝ Էդուարդ Թոփչյան) այսօր էլ աչքի է ընկնում ակտիվ գործունեությամբ՝ հետաքրքիր, բարձրակարգ

Էդգար Հովհաննիսյան

կատարումներով ներկայանալով ինչպես Հայաստանի, այնպես էլ արտերկրի երաժշտասերներին:

Հայաստանում վերսկսեց իր գործունեությունը աշխարհահռչակ դիրիժոր ***Օհան Դուրյանը:***

Սփյուռքահայ հանրահայտ երաժիշտներից ***Արամ Ղարաբեկյանը*** ստանձնեց Հայաստանի պետական

Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախումբը

Արամ Ղարաբեկյանի ղեկավարած՝ Հայաստանի պետական կամերային նվագախումբը

կամերային նվագախմբի ղեկավարությունը՝ բարձրացնելով այն նոր աստիճանի, հանդես գալով աշխարհի տարբեր երկրներում:

Անկախությունը նաև հոգևոր մշակույթի զարթոնքն ապահովեց: Համերգասրահների բեմերից անարգել հնչեցին միջնադարյան հոգևոր երաժշտության գոհարները՝ «Շարական» (գեղարվեստական ղեկավար՝ Դանիել Երաժիշտ), «Տաղարան» (գեղարվեստական ղեկավար՝ Ս. Երկանյան) համույթների կատարմամբ: ՀՀ մշակույթի նախարարությանը կից ստեղծվեց Հոգևոր երաժշտության կենտրոն, որը հոգևոր երաժշտության համերգաշարերի նախաձեռնողներից է:

Բալետների և օպերաների հեղինակ, ճանաչված կոմպոզիտոր ***Էդգար Հովհաննիսյանը (1930–1998 թթ.)***, որի ստեղծագործությունը հիմնականում կապված է մեր ժողովրդի պատմության և արդի կյանքի հետ, նոր իրականությունն իմաստավորեց խոհափիլիսոփայական երկերով («Գողգոթա» սիմֆոնիկ պոեմ, 1993 թ., «Գրիգոր Նարեկացի» օրատորիա, 1995 թ.):

Անկախության տարիներն արդյունավետ էին նոր իրականության գաղափարներով խանդավառված կոմպոզիտոր ***Տիգրան Մանսուրյանի*** համար, որի ստեղծագործությունը համաեվրոպական երաժշտական մշակույթի լավագույն ավանդույթների համադրումն է՝ հիմնված կոմիտասյան սկզբունքների վրա: Տ. Մանսուրյանի ինքնատիպ ստեղծագործությունները հնչում են արտերկրներում,

«Ոսկե ծիրան» միջազգային կինոփառատոնի բացումը Երևանում, 2011 թ.

հայտնի երաժիշտների կատարմամբ (վոկալ շարք՝ «Գարնան երգեր»):

Հանրությանն այսօր ժամանակակից բեմադրություններով է ներկայանում Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնը: Երկարատև ընդմիջումից հետո թատրոնի երկացանկում հայտնվեց Ա. Խաչատրյանի «Սպարտակ» բալետը, 2010 թ. կայացավ Ջ. Վերդիի «Այիդա» օպերայի շքեղ բեմադրությունը, 2011 թ.՝ Սերգեյ Պրոկոֆևի «Ռոմեո և Ջուլիետ» բալետի բեմադրությունը:

Նոր ժամանակները պահանջեցին մշակութային հաղորդակցման նոր ձևեր, և այդ ասպարեզում էլ հաջողություններ եղան:

Թատրոնը: Հայ թատրոնի վերջին քսանամյակն առանձնանում է հիմնարար փոփոխություններով: Երկրի սոցիալ-տնտեսական վիճակի կայունացման հետ թատրոնների աշխատանքն աստիճանաբար կարգավորվեց:

1990-ականների սկզբին պետական թատրոնների կողքին հայտնվեցին մասնավոր թատերական խմբեր: 1991 թ. ստեղծվեց Համազգային թատրոնը, որը կազմակերպվեց իբրև խաղացանկային թատրոն՝ մշտական թատերախմբով: Տասնամյա գործունեությունից հետո այս թատրոնը դարձավ պետական:

1990-ականների վերջերից Հայաստանում սկսեցին կազմակերպվել թատերական փառատոներ՝ հանրապետական ու միջազգային: Միջազգային փառատոների շրջանակում Հայաստան են ժամանում արտերկրի

հայտնի թատերախմբեր, բեմադրիչներ ու դերասաններ:

Կինոն: Անկախության առաջին տասնամյակի շատ բարդ պայմաններում Հայաստանում նկարահանվել են տասնյակ լիամետրաժ ու կարճամետրաժ խաղարկային ֆիլմեր և բազմաթիվ վավերագրական կինոնկարներ: Այդ տարիներին հիմնվեցին մի շարք անկախ ստուդիաներ: Ֆիլմերի մի մասը ոճի առումով մեր կինոյի ավանդական հիմքի վրա է ստեղծված (Առնոլդ Աղաբաբով՝ «Որտե՞ղ էիր, մա՛րդ Աստծո», Արման Մանարյան՝ «Ընկեր Փանջունի», Դմիտրի Կեսայանց՝ «Անիծվածները», «Աղետ» և այլն), մյուս մասը առավել նոր կինոմտածողության կրողն է (Սուրեն Բաբայան՝ «Արյուն», Միքայել Դովլաթյան՝ «Լաբիրինթոս», Հարություն Խաչատրյան՝ «Վերադարձ ավետյաց երկիր», Վիգեն Չալդրանյան՝ «Ձայն բարբառոյ...», «Տէ՛ր, ողորմեա՛»): Նոր սերնդի նկարահանած ֆիլմերից են Էդգար Բաղդասարյանի «Խաղերը», «Սև պատը», Տիգրան Խզմալյանի «Սևը և սպիտակը»: 1990-ականներին նկարահանված վավերագրական ֆիլմերից են Ռուբեն Գևորգյանցի «Փարաջանով. վերջին կոլաժը», Կարեն Գևորգյանի «Խաչը մեր», «Երկընտրանք» ֆիլմերը: «Վերջ» և «Կյանք» բանաստեղծական-մոնտաժային երկերգությունում իր ստեղծագործությանը հատուկ տիեզերական տեսանկյունից մարդկային գոյության խորհուրդն է վերաիմաստավորում կինոյի դասական դարձած Արտավազդ Փելեշյանը:

2000-ական թվականներին Հայաստանում նկարահանվել են մոտ 60 լիամետրաժ և կարճամետրաժ գեղարվեստական խաղարկային ֆիլմ և մեծ թվով վավերագրական կինոնկարներ:

Հայ ռեժիսորների ֆիլմերը ներկայացվում են միջազգային կինոփառատոներում: Հայաստանում նույնպես կազմակերպվում են կինոփառատոներ, որոնց մեջ առաջնությունը, իբրև մշակութային իրադարձություն, պատկանում է «Ոսկե ծիրան» ամենամյա միջազգային կինոփառատոնին:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչ առանձնահատկություններով է զարգանում արդի հայ գրականությունը: Ընդհանուր գծերով ներկայացրե՛ք արդի հայ գրականության հիմնական ուղղությունները, նշանավոր ներկայացուցիչներին և նրանց ստեղծագործությունները: Այդ գործերից որո՞նք եք կարդացել. ներկայացրե՛ք ձեր տպավորությունները:
2. Հակիրճ ներկայացրե՛ք արդի հայ արվեստի զարգացման միտումները, ներկայացուցիչներին ու նրանց գործերը: Գնահատե՛ք այդ գործերից մի քանիսը: Բերե՛ք փաստեր, որոնք վկայում են մշակութային կյանքի զարգացման մասին:

§ 3. ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԹԸ ԱՐԴԻ ՓՈՒԼՈՒՄ

Հայրենի երկրից հեռու՝ օտար ափերում ապրող հայությունը, հարմարվելով և ներգրավվելով իր բնակության երկրի հասարակական կյանքի մեջ, մշտապես մտահոգվել է ազգային ինքնությունը պահպանելու խնդիրներով: Համաշխարհայնացման (գլոբալացման) գործընթացի պայմաններում առավել, քան երբևէ կարևորվում է հայապահպանության խնդիրը: Մեծ դեր է վերապահված Սփյուռքում գործող ազգային, հոգևոր և մշակութային բոլոր կառույցներին:

Դպրոցը: Հայկական դպրոցներն այսօր էլ, հատկապես մեծ գաղթօջախներում, կարևորագույն դեր են կատարում հայապահպանության գործում: Դրանց մի մասն ունի միայն տարրական դասարաններ: Կան լրիվ միջնակարգ ուսուցման, ինչպես նաև կիրակնօրյա դպրոցներ: Բարձրագույն կրթական հաստատություններ են Հայկազյան համալսարանը, Համազգային մշակութային և կրթական միության հայագիտական բարձրագույն հիմնարկը (Բեյրութ): Հայագիտական ամբիոններ են գործում աշխարհի տարբեր համալսարաններում (Կալիֆոռնիա, Միչիգան, Հարվարդ, Օքսֆորդ, Փարիզ և այլն):

Սփյուռքի դպրոցներից նշանավոր են Սահակյան—Լևոն Մկրտիչյան քոլեջը, Կարմիրյան, Դարուհի Հովակիմյան, Վահան Թեքեյան վարժարանները, Համազգային մշակութային և կրթական միության ճեմարանը (Բեյրութ), Ազգային Ջավարյան, Հայկազյան ազգային վարժարանները (Հալեպ), Գալուստյան և Նուբարյան ազգային վարժարանները (Կահիրե), ԱՄՆ-ում՝ Մեսրոպյան ազգային (Մոնթեբելո), Ալեք Մանուկյան (Միչիգան) և այլն: Դպրոցների թիվը մեծ է հատկապես Լիբանանում (30-ից ավելի), Իրանում (20-ից ավելի), ԱՄՆ-ում (25-ից ավելի ամենօրյա վարժարան), Սիրիայում (25-ից ավելի):

Գրականությունը: Հայաստանի անկախության, Հայաստան—Սփյուռք կապերի ամրապնդման, համաժողովների, գրողների համատեղ համագումարների մթնոլորտում սփյուռքահայ գրականությունը ստանձնել է նոր խնդիրներ:

Այն ստեղծվել է աշխարհի տարբեր երկրներում, քաղաքական տարբեր պայմաններում, հետևաբար զարգացման տարբեր հնարավորություններ ու ազդակներ է ունեցել: Եթե Եվրոպայի, Ամերիկայի ու արաբական երկրների գաղթօջախներում, քաղաքական ազատության պայմաններում սփյուռքահայ գրողները կարող էին ազատորեն արտահայտվել եղեռնի, թուրքական բարբարոսության, կորցրած հայրենիքի, ոտնահարված արդարության մասին, ապա պոլսահայ, շատ տարիներ նաև պարսկահայ գաղթօջախում նրանք ազատ խոսքի հնարավորություն չունեին: Մյուս կող-

մից, եթե մուսուլմանական երկրներում այլակրոնության պայմանը ստիպեց հայությանն ավելի ամուր պահել հայ ընտանիքը, մայրենի լեզուն ու հայ դպրոցը՝ ապահովելով հայ գրողի հայերեն գիրքը կարդացող զանգված, ապա Եվրոպայի քրիստոնեական երկրներում նույնակրոնության, մշակույթի զարգացման բարձր աստիճանի պատճառով ազգայինի պահպանումն առաջնահերթ խնդիր չդարձավ, հայ դպրոցների թիվը կամաց-կամաց նվազեց, պակասեց հայալեզու ընթերցողը:

Շատ գրողներ Արևելքի երկրներում տիրող քաղաքական անկայուն վիճակի, անվերջ պատերազմների պատճառով ստիպված տեղափոխվեցին Եվրոպա ու Ամերիկա:

Պոլսահայ գրական կյանքում աշխուժացում մտցրեց գրական նոր սերունդը, թեպետ իշխանություններն արգելքներ էին հարուցում ազգային թեմաներով ստեղծագործողների ճանապարհին: Գրական կյանքում առանձնանում էին Սոնա Թընկըրյանը, Զահրատը, Զարեհ Խրախունին, Ռոպեր Հատտեճյանը, Իգնա Սարըալանը և ուրիշներ՝ փորձառու Հակոբ Մնձուրու հետ միասին: Նրանց մի մասը դարավերջին և XXI դարասկզբին ստիպված եղավ հեռանալու Պոլսից:

1980-1990-ական թվականներին ***իրանահայ բանաստեղծությունն*** աչքի էր ընկնում ինչպես թեմատիկ, այնպես էլ ձևի բազմազանությամբ: Սերը Հայաստանի նկատմամբ ոգեշնչման աղբյուր էր դարձել իրանահայ բանաստեղծների տարբեր սերունդների՝ Դևի, Արամ Գառոնեի, Հովհաննես Մարդի, Գալուստ Խանենցի, Զորայր Միրզոյանի և այլոց ստեղծագործություններում: Տարագիր բանաստեղծների հոգում հայրենիքը մշտական գոյություն է, սիրո ու ներշնչանքի առարկա: Իրանահայ գրականության մեջ XX դարի վերջին տասնամյակում և XXI դարասկզբին ավելացան նոր անուններ:

Լիբանանահայ նշանավոր գրողներից են ***Ժիրայր Դանիելյանը, Պեպո Սիմոնյանը*** և ուրիշներ: Սփյուռքահայ բանաստեղծության դիմագիծը ամբողջացնում են բանաստեղծներ ***Բյուզանդ Թոփալյանը, Վազգեն Շուշանյանը*** և ուրիշներ: Նրանց բանաստեղծական ժողովածուներում տառապանքին, ջարդերին, աքսորին ու տարագրությանը հակադրվում է ժողովրդի վերածնության գաղափարը, ավերումին՝ ստեղծման ոգին, բարձրանում է բանաստեղծական զուլալ ձայնը, որ բխում է արևմտահայ դասական պոեզիայի ակունքներից:

Վերջին երկու տասնամյակի սփյուռքահայ բանաստեղծությունն աչքի է ընկնում ոճական-արտահայտչական ձևերի նորացմամբ, ազգային ու եվրոպական բանաստեղծության խաչաձևման փորձերով, բովանդակության մեջ համամարդկային երակի հարստացմամբ:

Արվեստը: Վերջին տասնամյակներում զարգացում է ապրում սփյուռքահայ արվեստը: Կազմակերպվել է հայ արվեստին նվիրված շուրջ 60 գիտաժողով Վենետիկում, Փարիզում,

Վիեննայում, Մյունխենում, Լիսաբոնում, Բուենոս Այրեսում և այլուր:

«Հայ ճարտարապետության հետազոտություն» խորագրով լույս են տեսել 50-ից ավելի գործեր: Հրատարակվել է հայ ժողովրդի պատմությունը և մշակույթը ներկայացնող գեղատիպ հատոր 4 լեզուներով:

1990-ական թվականներին ***իտալահայ համայնքի*** հայտնի գեղանկարիչներից էին Լևոն Մինասյանը, Արտաշես Ղարիբյանը, արվեստաբաններից՝ Էդուարդ Արսլանը, ճարտարապետներից՝ Արմեն Մանուկյանը և ուրիշներ: Կինոյի բնագավառում ճանաչված էր կինոռեժիսոր Երվանդ Ջանիկյանը: Կինոգիտական հոդվածներով հայտնի էր Գլաուկո Վիացին (Հուսիկ Աշրաֆյան):

Սկյուռքահայ թատրոնի զարգացման գործում որոշակի ներդրում է ունեցել իրանահայ համայնքը: Համայնքում գործում են մի քանի թատերախմբեր:

Մեծ է իրանահայ երաժիշտների ներդրումը հայ ազգային և իրանական ժողովրդական երաժշտության մեջ: Թեհրանի օպերային թատրոնում երգել են Հ. Կարախանյանը, Ս. Աղաբաբյանը, Շ. Մակարյանը: Գործող հայկական երգչախմբերից են «Գողթան», «Գուսան», «Անի» և այլն:

Հայտնի են Իրանի «Ջամբազյան» պարարվեստի դպրոցը, Թեհրանի պարախմբերը, նկարիչներ Մ. Շահբազյանը, Մ. Ղարաբեկյանը, Մ. Գրիգորյանը, մանրանկարիչներից՝ Կլարա Աբգարը և այլք:

Ատոմ Էգոյան

Արդի կինոգործիչ Վարուժան Քարիմ Մասիհիի (Գրիգորյան) «Վերջին արար» ֆիլմը 1991 թ. շահել է 9 մրցանակ:

Թատրոնի ու կինոարվեստի ոլորտում իրենց ներդրումն ունեն լիբանանահայերը: Լիբանանահայ թատերական կյանքում կարևոր ավանդ ունի Ժիրայր Խաչերյանը: Աչքի ընկնող բեմադրություններով է հանդես գալիս «Գասպար Իփեկյան» թատերախումբը: Կինոարվեստի բնագավառում աչքի է ընկնում Լիբանանում առաջին դերասանական քայլերն արած, Եգիպտոսում հռչակ ձեռք բերած դերասանուհի ***Լիզ Սարգիսյանը (Իման)***: Լիբանանում նկարահանվել է հայերեն գեղարվեստական կինոնկար՝ «Երազի ճամփովը» (ռեժիսոր՝ Հ. Սարգսյան):

ԱՄՆ-ում վերջին շրջանում գործում են Նյու Յորքի «Համազգային», Բոստոնի «Պարոնյան», Լոս Անջելեսի «Վարդան Աճեմյան» և այլ թատե-

ռախմբեր: Տեղի հայկական համայնքի ազգային կյանքի շրջանակներում նշանակալի դերակատարում ունեն մի շարք երգչախմբեր:

ԱՄՆ-ի կերպարվեստի զարգացման մեջ մեծ ներդրում ունեն ամերիկահայ նկարիչներ Վ. Սամվելյանը, Վ. Ամատունին, Լ. Ժամկոչյանը:

Ամերիկահայ կինոյի նշանավոր դերասաններից է ***Ջոն Քյուրքչյանը***: Վավերագրական, հատկապես Հայոց ցեղասպանության մասին ֆիլմերի պատրաստման գործում գնահատելի է Հայկական ֆիլմի հաստատության ղեկավար ***Մայքլ Հակոբյանի*** կատարած աշխատանքը:

Ինչպես Հայաստանում, այնպես էլ աշխարհում մեծ ճանաչում են ունեցել Հայոց ցեղասպանության թեմայով աշխարհահռչակ ռեժիսոր ***Անրի Վեռնոյի «Մայրիկ»*** և կանադահայ ռեժիսոր ***Ատոմ Էգոյանի «Արարատ»*** ֆիլմերը:

Հարցեր և առաջադրանքներ

1. Որո՞նք են Սփյուռքի գոյության հիմնական հենասյուները: Դրանցից ո՞րն եք կարևորում, ինչո՞ւ: Սփյուռքահայ ի՞նչ նշանավոր կրթական հաստատություններ գիտեք:
2. Սփյուռքում հրատարակվող ի՞նչ պարբերականներ գիտեք:
3. Հայ գրականությունն ի՞նչ առանձնահատկություններով ու ընդհանրություններով էր զարգանում սփյուռքահայ կենտրոններում: Սփյուռքահայ նշանավոր գրողներից ու բանաստեղծներից ո՞ւմ կարող եք հիշատակել: Նրանց ո՞ր ստեղծագործություններին եք ծանոթ: Գրե՛ք ռեֆերատ սփյուռքահայ գրողներից մեկի կյանքի և ստեղծագործության մասին:
4. Համառոտ ներկայացրե՛ք սփյուռքահայ արվեստի զարգացման միտումները, հայտնի գործիչներին ու ստեղծագործությունները:
5. Աղյուսակով ներկայացրե՛ք արդի սփյուռքահայ մշակույթը:

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1918 թ. մայիսի 28 — Հայաստանի Հանրապետության հռչակումը. հայկական անկախ պետականության վերականգնումը

1918 թ. հունիսի 4 — Առաջին աշխարհամարտի Կովկասյան ճակատում թուրք-հայկական պատերազմի ավարտը. Բաթումի հաշտության պայմանագրի ստորագրումը

1918 թ. հունիս — սեպտեմբերի 15 — Բաքվի հայության հերոսական ինքնապաշտպանությունը

1918 թ. հունիսի 7 — Հ. Քաջազնունու ընտրվելը կառավարության նախագահ (վարչապետ)

1918 թ. հուլիսի 19 — ՀՀ կառավարության և Հայոց կենտրոնական ազգային խորհրդի ժամանումը Երևան

1918 թ. հուլիսի 22-26 — Արցախահայության առաջին համագումարը Շուշիում

1918 թ. օգոստոսի 1 — Հայաստանի խորհրդի առաջին նիստը

1918 թ. սեպտեմբերի 19 — Արարայի ճակատամարտը

1918 թ. նոյեմբեր — 1919 թ. հունիս — ՀՅԴ—ՀԺԿ կոալիցիոն կառավարությունը

1918 թ. դեկտեմբեր — Վրաց-հայկական 20-օրյա պատերազմը

1919 թ. հունվարի 9-17 — Հայ-վրացական հաշտության կոնֆերանսը Թիֆլիսում

1919 թ. փետրվարի 6-13 — Արևմտահայերի երկրորդ համագումարը Երևանում

1919 թ. փետրվարի 12 — Հայկական երկու պատվիրակությունների համատեղ հուշագրի ստորագրումը Փարիզում

1919 թ. փետրվարի 24 — ապրիլի 22 — Հայոց ազգային համագումարը Փարիզում

1919 թ. մայիսի 16 — ՀՀ-ում համալսարան հիմնելու վերաբերյալ որոշման ընդունումը

1919 թ. մայիսի 28 — «Միացյալ Հայաստանի անկախության հռչակագրի ակտի» ստորագրումը և հռչակումը

1919 թ. հունիսի 21-23 — ՀՀ խորհրդարանի առաջին ընտրությունները

1919 թ. սեպտեմբեր — նոյեմբեր — ՀՅԴ 9-րդ ընդհանուր ժողովի (համագումար) գումարումը

1919 թ. դեկտեմբերի 26 — Պետական լեզվի մասին ՀՀ օրենքի ընդունումը

1920 թ. հունվարի 19 — Հայաստանի կառավարության դե ֆակտո ճանաչումը ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի և Ճապոնիայի ղեկավարների Փարիզյան վեհաժողովի նիստում

1920 թ. հունվարի 31 — Համալսարանի հանդիսավոր բացումը Ալեքսանդրապոլում (1920 թ.

հունիսին փոխադրվեց Երևան)

1920 թ. — Հայաստանի կոմունիստական կուսակցության ձևավորումը

1920 թ. ապրիլի 19–26 — Սան Ռեմոյի խորհրդաժողովը

1920 թ. ապրիլի 23 — ՀՀ–ի դե ֆակտո ճանաչումը ԱՄՆ–ի կառավարության կողմից

1920 թ. ապրիլի 25 — Ղարաբաղի հռչակումը ՀՀ անբաժանելի մաս

1920 թ. մայիսի 10 — Հայ բոլշևիկների Մայիսյան ապստամբության սկիզբը

1920 թ. մայիս — ՀՀ վարչատարածքային նոր բաժանումը (4 նահանգ)

1920 թ. հուլիսի 23 — Զինանշանի մասին ՀՀ օրենքի հաստատումը

1920 թ. օգոստոսի 4 — Ինքնավար Կիլիկիայի հռչակումը Ադանայում

1920 թ. օգոստոսի 10 — Սևրի պայմանագրի ստորագրումը

1920 թ. օգոստոսի 10 — ՌՍԴԽՀ–ի և ՀՀ–ի միջև համաձայնագրի ստորագրումը Թիֆլիսում

1920 թ. սեպտեմբերի 1–8 — Արևելքի ժողովուրդների առաջին համագումարը Բաքվում

1920 թ. սեպտեմբերի 23 — նոյեմբերի 18 — Թուրք–հայկական պատերազմը

1920 թ. հոկտեմբերի 30 — Կարսի գրավումը թուրքերի կողմից

1920 թ. նոյեմբերի 22 — ԱՄՆ–ի նախագահ Վիլսոնի իրավարար որոշումը հայ–թուրքական սահմանագծի վերաբերյալ

1920 թ. նոյեմբերի 24 — ՀՀ–ի վերջին՝ 4–րդ կառավարության՝ ՀՅԴ–էսէռներ կոալիցիոն կազմի հաստատումը խորհրդարանում

1920 թ. նոյեմբերի 29 — Հայաստանի ռազմհեղկոմի մուտքը Քարվանսարա (Իջևան) և խորհրդայնացման մասին հայտարարությունը

1920 թ. նոյեմբերի 30 — Ադրբեջանի հեղկոմի՝ «Լեռնային Ղարաբաղը, Զանգեզուրը և Նախիջևանը Խորհրդային Հայաստանի Հանրապետության մաս ճանաչելու» հայտարարության հրապարակումը

1920 թ. դեկտեմբերի 2 — Երևանի համաձայնագրի ստորագրումը և Հայաստանի խորհրդայնացումը

1920 թ. դեկտեմբերի 8 — Հայհեղկոմի «Պարենային մթերքների և այլ նյութերի հայտնաբերման մասին» հրամանի հրապարակումը

1920 թ. դեկտեմբերի 25 — Համազանգեզուրյան առաջին համագումարը Տաթևի վանքում. «Ինքնավար Սյունիքի» հռչակումը

1920 թ. դեկտեմբեր — 1921 թ. փետրվար — Ռազմական կոմունիզմի քաղաքականության

իրականացումը Հայաստանում

1921 թ. փետրվարի 16 — ապրիլի 2 — Փետրվարյան ապստամբությունը

1921 թ. մարտ — 1922 թ. հուլիս — Հայոց ցեղասպանության պատասխանատուների հատուցման «Նեմեսիս» ծրագրի իրագործումը հայ վրիժառուների կողմից

1921 թ. փետրվարի 21 — մարտի 14 — Մեծ տերությունների Լոնդոնի կոնֆերանսը

1921 թ. փետրվարի 26 — մարտի 16 — Մոսկվայի ռուս-թուրքական երկրորդ կոնֆերանսը

1921 թ. մարտի 16 — Ռուս-թուրքական «Բարեկամության և եղբայրության մասին» պայմանագրի կնքումը Մոսկվայում

1921 թ. ապրիլի 27 — Համազանգեզուրյան երկրորդ համագումարը Տաթևի վանքում. «Լեռնահայաստանի» հռչակումը

1921 թ. մայիսի 21 — ՀՍԽՀ Ժողկոմխորհի կազմավորումը. Ա. Մյասնիկյանի նշանակվելը Ժողկոմխորհի նախագահ

1921 թ. հունիսի 1 — Լեռնահայաստանի վերանվանումը Հայաստանի Հանրապետության

1921 թ. հունիսի 3 — Լեռնային Ղարաբաղը ՀՍԽՀ-ի անբաժան մաս հռչակելու մասին դեկրետի ընդունումը

1921 թ. հուլիսի 4 — ՌԿ(բ)Կ Կովկասյան բյուրոյի որոշումը Լեռնային Ղարաբաղը ՀՍԽՀ-ին միացնելու մասին. հուլիսի 5-ին որոշումը փոխվեց հօգուտ Ադրբեջանի

1921 թ. սեպտեմբեր — Հայաստանի օգնության կոմիտեի (ՀՕԿ) հիմնումը (վերացվեց 1937 թ.)

1921 թ. սեպտեմբերի 21 — ՀՍԽՀ Ժողկոմխորհի դեկրետը չափահաս բնակչության անգրագիտությունը վերացնելու մասին

1921 թ. սեպտեմբերի 26 — հոկտեմբերի 13 — Կարսի կոնֆերանսը

1921 թ. հոկտեմբերի 13 — Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի և Թուրքիայի միջև պայմանագրի ստորագրումը Կարսում

1921 թ. հոկտեմբերի 20 — Ֆրանս-թուրքական պայմանագրի կնքումը. Կիլիկիայի հանձնումը Թուրքիային Ֆրանսիայի կողմից

1921 թ. նոյեմբերի 6 — Հայ-վրացական սահմանազատման մասին համաձայնագրի ստորագրումը Թիֆլիսում

1921 թ. դեկտեմբեր — ՀՍԽՀ խորհուրդների առաջին ընտրությունները

1922 թ. հունվարի 25 — Խորհրդային Հայաստանի առաջին պետական դրամատիկական թատրոնի բացումը

1922 թ. հունվարի 30 — ՀՍԽՀ խորհուրդների առաջին համագումարի բացումը

1922 թ. փետրվարի 3 — ՀՍԽՀ առաջին Սահմանադրության ընդունումը

1922 թ. մարտի 12 — Անդրդաշնություն կազմելու մասին պայմանագրի հաստատումը Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի կենտգործկոմների ներկայացուցիչների լիազոր կոնֆերանսում

1922 թ. նոյեմբերի 20 — 1923 թ. հուլիսի 24 — Լոզանի կոնֆերանսը

1922 թ. դեկտեմբերի 10–13 — Անդրկովկասի խորհուրդների առաջին համագումարը. Անդրկովկասի Խորհրդային Դաշնային Սոցիալիստական Հանրապետության (ԱԽԴՍՀ) ստեղծումը

1922 թ. դեկտեմբերի 30 — ԽՍՀՄ-ի կազմավորման մասին հռչակագրի և միութենական պայմանագրերի ստորագրումը

1922 թ. — Գեղարվեստի դպրոցի հիմնադրումը Երևանում

1923 թ. — Պետական կոնսերվատորիայի հիմնումը

1923 թ. — Երևանի առաջին հէկի հիմնադրումը

1923 թ. հուլիսի 7 — Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի (ԼՂԻՄ) ստեղծումը

1923 թ. նոյեմբեր — Դաշնակցության ինքնավերացման համագումարը Երևանում

1925 թ. — Հ. Աղամյանի ստեղծած եռագույն հեռուստատեսության և լուսահեռագրության սարքի ցուցադրումը Երևանում

1925 թ. — Հայկական առաջին գեղարվեստական կինոնկարի՝ «Նամուսի» ցուցադրությունը

1928 թ. — Լենինականի հէկի գործարկումը

1930–1936 թթ. — ՀԿ(բ)Կ կենտկոմի առաջին քարտուղար Ա. Խանջյանի պաշտոնավարությունը

1930 թ. — Գևորգ Ե կաթողիկոսի մահը

1932–1938 թ. ապրիլ — Ամենայն հայոց կաթողիկոս Խորեն Ա Մուրադբեգյանի գահակալությունը

1932 թ. — Հայաստանի գրողների միության ստեղծումը

1932 թ. — Պետական ֆիլհարմոնիայի կազմակերպումը

1933–1940 թթ. — Երևանի արհեստական կաուչուկի գործարանի կառուցումը

1935 թ. — ԽՍՀՄ Գիտությունների ակադեմիայի հայկական մասնաճյուղի (Արմֆան) հիմնումը

1935 թ. — Հայկական առաջին հնչյունային կինոնկարի՝ «Պեպոյի» ցուցադրությունը

1935–1937 թթ. — Հայաստանի գյուղացիության ճնշող մեծամասնության ընդգրկումը կոլտնտեսությունների մեջ

1936 թ. դեկտեմբերի 5 — ԽՍՀՄ-ի նոր Սահմանադրության ընդունումը

1937 թ. մարտ — Խորհրդային Հայաստանի նոր Սահմանադրության ընդունումը

1938 թ. օգոստոսի 4 — ՀԿ(բ)Կ կենտկոմի որոշումը Էջմիածնի վանքը փակելու և կաթողիկոսությունը վերացնելու մասին

1938 թ. — Երևանի Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական թատրոնի բացումը

1939 թ. սեպտեմբերի 1 — 1945 թ. սեպտեմբերի 2 — Երկրորդ աշխարհամարտը

1940 թ. հունվարի 15 — Կ. Սիմոնյանի արժանանալը հերոսի կոչման. Երկրորդ աշխարհամարտի առաջին հայ հերոսը

1941 թ. հունիսի 22 — 1945 թ. մայիսի 9 — Հայրենական մեծ պատերազմը

1942 թ. — Հայկական լեգեոնի կազմավորումը

1942 թ. հուլիսի 21 — Լ. Չափչախյանի արժանանալը ԽՍՀՄ հերոսի կոչման. Հայրենական մեծ պատերազմի առաջին հայ հերոսը

1943 թ. նոյեմբերի 29 — ՀԽՍՀ Գիտությունների ակադեմիայի հիմնադրումը

1944 թ. մայիս — «Սասունցի Դավիթ» տանկային շարասյան ուղարկվելը ռազմաճակատ

1945 թ. մարտի 19 — ԽՍՀՄ կառավարության՝ 1925 թ. դեկտեմբերի 17-ի խորհրդա-թուրքական բարեկամության և չեզոքության պայմանագրի չեղյալ հայտարարումը

1945 թ. ապրիլի 19 — ԽՍՀՄ կառավարության ղեկավար Ի. Ստալինի և կաթողիկոսական տեղապահ Գևորգ Չորեքչյանի հանդիպումը Մոսկվայում

1945 թ. հուլիսի 22-23 — Հայկական տարածքների հարցի քննարկումը Պոտսդամի կոնֆերանսում

1946-1948 թթ. — Զանգվածային հայրենադարձությունը. աշխարհի 12 երկրներից շուրջ 90 հազար հայերի վերադարձը հայրենիք

1947 թ. ապրիլի 30 — մայիսի 4 — Հայկական համաշխարհային կոնգրեսի գումարումը Նյու Յորքում

1949 թ. հունիսի 14 — Հայ բնակչության հոծ զանգվածի արտաքսումն Ալթայի երկրամաս

1953 թ. մայիսի 30 — Խորհրդային կառավարության պաշտոնական հայտարարությունը Թուրքիայից տարածքային պահանջ չունենալու մասին

1956 թ. փետրվար — ԽՄԿԿ XX համագումարը Մոսկվայում

1956 թ. — Նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտի ստեղծումը

1960 թ. — Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտի հիմնադրումը

1964 թ. հունիսի 25 — Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի ստեղծումը

1967 թ. — Երևանի էլեկտրոնային արագացուցչի կառուցման ավարտը
1972 թ. — Ամերիկայի հայկական համագումարի ստեղծումը
1976 թ. — Հայկական ատոմակայանի առաջին էներգաբլոկի գործարկումը
1978 թ. — ՀԽՍՀ նոր Սահմանադրության ընդունումը
1983 թ. օգոստոս — Օսմանյան Թուրքիայի իրականացրած Հայոց ցեղասպանության փաստի ճանաչումը Եկեղեցիների համաշխարհային խորհրդի 6-րդ համագումարում
1985 թ. մարտ — Վերակառուցման քաղաքականության սկիզբը ԽՍՀՄ-ում
1987 թ. հունիսի 18 — Հայոց ցեղասպանության դատապարտումը Եվրախորհրդարանի կողմից
1988 թ. փետրվար — Ղարաբաղյան շարժման սկիզբը
1988 թ. փետրվարի 20 — ԼՂԻՄ-ի մարզխորհրդի պատմական որոշման ընդունումը
1988 թ. փետրվարի 22 — «Ղարաբաղ» կոմիտեի ստեղծումը
1988 թ. փետրվարի 27-29 — Սումգայիթի հայության կոտորածը
1988 թ. հունիսի 15 — ՀԽՍՀ Գերագույն խորհրդի որոշումը ԼՂԻՄ-ի մարզխորհրդի որոշմանը դրական պատասխան տալու վերաբերյալ
1988 թ. հուլիսի 18 — ԽՍՀՄ Գերագույն խորհրդի կողմից ՀԽՍՀ ԳԽ-ի և ԼՂԻՄ-ի մարզխորհրդի որոշումները չճանաչելը
1988 թ. դեկտեմբերի 7 — Սպիտակի աղետալի երկրաշարժը
1989 թ. հունվարի 11 — Հատուկ կառավարման ձևի սահմանումը ԼՂԻՄ-ում
1989 թ. օգոստոսի 16 — Ազգային խորհրդի ստեղծումը Լեռնային Ղարաբաղի ազգաբնակչության լիազոր ներկայացուցիչների համագումարում
1989 թ. նոյեմբերի 4 — Հայոց համազգային շարժման առաջին համագումարի բացումը
1989 դեկտեմբերի 1 — «Հայկական ԽՍՀ-ի և Լեռնային Ղարաբաղի վերամիավորման մասին» համատեղ որոշման ընդունումը
1990 թ. հունվարի 13-20 — Բաքվի հայության կոտորածն ու տեղահանությունը
1990 թ. մայիսի 20 — ՀԽՍՀ Գերագույն խորհրդի այլընտրանքային ընտրությունները
1990 թ. օգոստոսի 4 — ՀՀՇ վարչության նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի ընտրվելը Հայաստանի Գերագույն խորհրդի նախագահ
1990 թ. օգոստոսի 23 — «Հռչակագիր Հայաստանի անկախության մասին» փաստաթղթի ընդունումը
1991 թ. հունվարի 29 — «Գյուղացիական և գյուղական կոլեկտիվ

տնտեսությունների մասին» օրենքի ընդունումը

1991 թ. ապրիլի 30 — մայիսի 7 — «Կոլցո» («Օղակ») ռազմական գործողության իրականացումը

1991 թ. մայիս — 1994 թ. մայիս — Ղարաբաղա-ադրբեջանական պատերազմը

1991 թ. սեպտեմբերի 2 — «Հռչակագիր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակման մասին» փաստաթղթի ընդունումը

1991 թ. սեպտեմբերի 21 — Անկախության հանրաքվեի անցկացումը Հայաստանում

1991 թ. սեպտեմբերի 23 — Հայաստանի անկախության հռչակումը

1991 թ. հոկտեմբերի 16 — Լ. Տեր-Պետրոսյանի ընտրվելը ՀՀ նախագահ

1991 թ. դեկտեմբերի 8 — Բելովեժյան համաձայնագրի ստորագրումը

1991 թ. դեկտեմբերի 10 — Լեռնային Ղարաբաղի անկախության հանրաքվեի անցկացումը

1991 թ. դեկտեմբերի 21 — ԱՊՀ-ի ստեղծումը

1991 թ. դեկտեմբերի 28 — ԼՂՀ Գերագույն խորհրդի պատգամավորների ընտրությունները

1992 թ. հունվարի 7 — Դիվանագիտական հարաբերությունների հաստատումը ԱՄՆ-ի և Հայաստանի միջև

1992 թ. հունվարի 8 — Ա. Մկրտչյանի ընտրվելը ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահ

1992 թ. հունվարի 28 — «ՀՀ պաշտպանության նախարարության մասին» որոշման ընդունումը. հայոց ազգային բանակի ստեղծման սկիզբը

1992 թ. մարտի 2 — ՀՀ-ի դառնալը ՄԱԿ-ի լիիրավ անդամ

1992 թ. մարտ — «Հայաստան» համահայկական հիմնադրամի հիմնումը Երևանում

1992 թ. մայիսի 9 — Շուշիի ազատագրումը

1992 թ. մայիսի 18 — Լաչինի ազատագրումը. Արցախի շրջափակման օղակի ճեղքումը

1992 թ. — Լեռնային Ղարաբաղի պետական համալսարանի կազմավորումը (1995 թվականից՝ Արցախի պետական համալսարան)

1993 թ. նոյեմբեր — Հայկական ազգային արժույթի՝ դրամի շրջանառության մեջ մտնելը

1994 թ. փետրվարի 18 — Քելբաջարի շրջանի հյուսիսային մասի և Օմարի լեռնանցքի ազատագրումը

1995 թ. ապրիլ — Հայոց ցեղասպանությունը դատապարտող հայտարարության ընդունումը ՌԴ Պետական դումայում

1995 թ. հուլիսի 5 — Խորհրդարանական ընտրությունները ՀՀ-ում. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության ընդունումը

1995 թ. դեկտեմբեր — ՀՀ վարչատարածքային փոփոխությունները. մարզերի ու համայնքների ստեղծումը

1996 թ. — Հայկական ատոմային էլեկտրակայանի վերագործարկումը

1996 թ. նոյեմբեր — ԼՂՀ առաջին նախագահական ընտրությունները

1997 թ. օգոստոսի 29 — ՀՀ-ի և ՌԴ-ի միջև բարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության մասին պայմանագրի կնքումը

1998 թ. փետրվարի 3 — ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի հրաժարականը

1998 թ. մարտ — Արտահերթ նախագահական ընտրությունները ՀՀ-ում

1998 թ. — Բելգիայի Սենատի և Ֆրանսիայի Ազգային ժողովի՝ Հայոց ցեղասպանությունը դատապարտելու մասին որոշումների ընդունումը

1999 թ. հունիսի 12 — Եռաստիճան դատական համակարգի ներդրումը

1999 թ. սեպտեմբեր — Հայաստան—Սփյուռք առաջին խորհրդաժողովը Երևանում

1999 թ. հոկտեմբերի 27 — Արյունալի ահաբեկչությունը ՀՀ Ազգային ժողովում

2001 թ. հունվարի 25 — ՀՀ-ի լիիրավ անդամակցությունը Եվրախորհրդին

2001 թ. — Քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հռչակելու 1700-ամյակի տոնակատարությունները

2001 թ. սեպտեմբերի 23 — Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու օծումը

2002 թ. նոյեմբեր — Համահայկական երիտասարդական առաջին համաժողովը Երևանում

2003 թ. սեպտեմբեր — Հայագիտական միջազգային առաջին համաժողովը Երևանում

2004 թ. հուլիս — «Ոսկե ծիրան» միջազգային առաջին կինոփառատոնը Երևանում

2004 թ. օգոստոս — Համահայկական կրթական առաջին համաժողովը Երևանում

2004 թ. օգոստոսի 27 — «Մեկ ազգ, մեկ մշակույթ» համահայկական առաջին փառատոնը Երևանում

2006 թ. դեկտեմբերի 10 — ԼՂՀ Սահմանադրության ընդունումը

2007 թ. հունվարի 19 — Հրանտ Դինքի սպանությունը

2008 թ. փետրվարի 19 — Նախագահական հինգերորդ ընտրությունները ՀՀ-ում

2008 թ. մարտի 1-2 — Հետընտրական մթնոլորտի շիկացումը և ողբերգական դեպքերը Երևանում

2008 թ. հոկտեմբեր — ՀՀ Սփյուռքի նախարարության ստեղծումը

2009 թ. հոկտեմբերի 10 — Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի միջև «Երկկողմ

դիվանագիտական հարաբերությունների հաստատման և զարգացման մասին» արձանագրությունների ստորագրումը Ցյուրիխում

2010 թ. ապրիլի 22 — ՀՀ նախագահի հրամանագրով հայ-թուրքական արձանագրությունների վավերացման գործընթացի կասեցումը

2013 թ. — Նախագահական վեցերորդ ընտրությունները ՀՀ-ում

2015 թ. դեկտեմբերի 6 — Սահմանադրական փոփոխությունների հանրաքվեի անցկացումը

2016 թ. ապրիլի 2-5 — Քառօրյա պատերազմը

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

ԲԱԺԻՆ 1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

ԳԼՈՒԽ 1. ՆՈՐԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԿՅԱՆՔԸ
§ 1. Հանրապետության հռչակումը 7
§ 2. Հայկական պետականության ձևավորումն ու ամրապնդումը 11
§ 3. Սոցիալ-տնտեսական և քաղաքական կյանքը 15
§ 4. Երկրի կայունությանը սպառնացող վտանգները 20

ԳԼՈՒԽ 2. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ: ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ
§ 1. Հանրապետության արտաքին կապերը 24
§ 2-3. Հարաբերությունները հարևան երկրների հետ: Տարածքային հիմնախնդիրները 28
§ 4. Հայկական հարցը Փարիզի խաղաղության խորհրդաժողովում: Սևրի պայմանագիրը 36
§ 5. Իրադրությունը Կիլիկիայում և կիլիկիահայությունը 43

ԳԼՈՒԽ 3. ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԿՈՒՄԸ
§ 1. Հայաստանը Խորհրդային Ռուսաստանի արևելյան քաղաքականության ոլորտում: Քեմալա-բոլշևիկյան համագործակցությունը 47
§ 2. 1920 թվականի թուրք-հայկական պատերազմը 51
§ 3. Հայաստանի Հանրապետության խորհրդայնացումը 55

ԲԱԺԻՆ 2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

ԳԼՈՒԽ 1. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ 1920-1922 ԹԹ.
§ 1. Հայաստանը խորհրդային իշխանության առաջին ամիսներին 60
§ 2. 1921 թվականի Փետրվարյան ապստամբությունը 64
§ 3-4. ՀՍԽՀ տարածքային հիմնախնդիրները և արտաքին կապերը 68
§ 5. ՀՍԽՀ Սահմանադրությունը: Խորհրդային հանրապետությունների միավորումը 81

ԳԼՈՒԽ 2. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ 1922-1941 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ
§ 1. Նոր տնտեսական քաղաքականության կենսագործումը 86
§ 2. Արդյունաբերացումը և գյուղատնտեսության կոլեկտիվացումը 90
§ 3-4. Հասարակական-քաղաքական կյանքը 96

ԳԼՈՒԽ 3. ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1941–1945 ԹԹ.)
§ 1. Հայ ժողովրդի ներդրումը Մեծ հայրենականում 104
§ 2. Հայ առաքելական եկեղեցին և սփյուռքահայությունը երկրորդ աշխարհամարտի տարիներին 112

ԳԼՈՒԽ 4. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1945–1985 ԹԹ.)
§ 1. Հանրապետության սոցիալ–տնտեսական դրությունը. 115
§ 2. Հասարակական–քաղաքական կյանքը 119
§ 3. Սոցիալիստական հասարակարգի հակասությունների սրումը 125

ԳԼՈՒԽ 5. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ
§ 1. Վերակառուցման քաղաքականությունը. 130
§ 2. Արցախյան շարժումը. 133
§ 3. 1988 թ. դեկտեմբերի 7–ի երկրաշարժը 142
§ 4. Հայաստանի անկախացման գործընթացը 145

ԲԱԺԻՆ 3. ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԴԻ ՓՈՒԼՈՒՄ

ԳԼՈՒԽ 1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ
§ 1. Անկախ պետականության կայացման գործընթացը. 150
§ 2–3. Սոցիալ–տնտեսական դրությունը 157
§ 4–5. Հասարակական–քաղաքական կյանքը 165
§ 6–7. Հայաստանի Հանրապետության միջազգային դրությունը և արտաքին քաղաքականությունը 172

ԳԼՈՒԽ 2. ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ
§ 1–2. Անկախության հռչակումը: Արցախյան ազատագրական պատերազմը 190
§ 3. Նորակազմ հանրապետության ներքին կյանքը 203
§ 4. ԼՂՀ միջազգային դրությունը 209

ԲԱԺԻՆ 4. ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԸ 1920 ԹՎԱԿԱՆԻՑ ՄԻՆՉԵՎ ՄԵՐ ՕՐԵՐԸ

ԳԼՈՒԽ 1. ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԸ 1920–1939 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ
§ 1. Սփյուռքահայությունը 1920–1939 թվականներին և հայրենիք—Սփյուռք առնչությունները. 213

ԳԼՈՒԽ 2. ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԸ 1945–1991 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ
§ 1. Հայրենադարձությունը 219
§ 2. Հասարակական-քաղաքական կյանքը: Հայրենիք—Սփյուռք կապերը 225
§ 3. Սփյուռքահայերի պայքարը Հայ դատի համար 228

ԳԼՈՒԽ 3. ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԸ ԱՐԴԻ ՓՈՒԼՈՒՄ
§ 1. Հայրենիք—Սփյուռք հարաբերությունները 232
§ 2–3. Հայկական համայնքները արդի փուլում 237
§ 4. Համագործակցության ամրապնդումը 245

ԲԱԺԻՆ 5. ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆՈՒՄ

ԳԼՈՒԽ 1. ՄՇԱԿՈՒՅԹԸ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ
§ 1. Առաջին հանրապետության մշակութային կյանքը 249

ԳԼՈՒԽ 2. ՄՇԱԿՈՒՅԹԸ 1920–1941 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ
§ 1. Կրթությունը և գիտությունը 252
§ 2. Գրականությունը և արվեստը 258
§ 3. Սփյուռքի հոգևոր-մշակութային կյանքը 264

ԳԼՈՒԽ 3. ՄՇԱԿՈՒՅԹԻ ՎԵՐԵԼՔԸ (1945–1991 ԹՎԱԿԱՆՆԵՐ)
§ 1. Խորհրդային Հայաստանի մշակույթը 267
§ 2. Գիտության զարգացումը 269
§ 3. Գրականությունը, երաժշտությունը, թատրոնը և կինոն 273
§ 4. Կերպարվեստը և ճարտարապետությունը 279
§ 5. Սփյուռքահայ դպրոցը, մամուլը գրականությունը և պատմագրությունը 283
§ 6. Սփյուռքահայ արվեստը 287

ԳԼՈՒԽ 4. ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՐԴԻ ՎԻՃԱԿԸ
§ 1. Կրթամշակութային կյանքը 292
§ 2. Անկախության շրջանի գրականությունը և արվեստը 295
§ 3. Սփյուռքահայ մշակույթը արդի փուլում 303

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ 307

Ա. ՄԵԼՔՈՆՅԱՆ, Է. ԳԵՎՈՐԳՅԱՆ, Կ. ԽԱՉԱՏՐՅԱՆ,
Յ. ՀՈՎՍԵՓՅԱՆ, Ա. ՎԻՐԱԲՅԱՆ, Է. ՄԻՆԱՍՅԱՆ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

12-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

ՆՈՐԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆ

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՀՈՍՔԻ ԴԱՍԱԳԻՐՔ

Երկրորդ՝ լրամշակված հրատարակություն

Հրատարակչության տնօրեն՝ Էմին Մկրտչյան
Գեղարվեստական խմբագիր՝ Արա Բաղդասարյան
Տեխնիկական խմբագիր՝ Նվարդ Փարսադանյան
Համակարգչային ձևավորումը՝ Գրիգորի Հարությունյանի
Քարտեզների համակարգչային մշակումը՝ Աննա Գալոյանի

ISBN 978-99941-1-923-3

Տպագրությունը՝ օֆսեթ: Չափսը՝ 70x100 1/16: Թուղթը՝ օֆսեթ:
Ծավալը՝ 20 տպ. մամուլ, 25,8 պայմ. մամուլ: Տառատեսակը՝ GHEA Mashtots:
Պատվեր՝ ՀՀ ԿԳՆ ԾՁԲ-16/25: Տպաքանակը՝ 4000:

«ԶԱՆԳԱԿ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՀՀ, 0051, Երևան, Կոմիտասի պող. 49/2, հեռ.՝ (+37410) 23-25-28
Էլ. փոստ՝ info@zangak.am, էլ. կայքեր՝ www.zangak.am, www.book.am
Ֆեյսբուքյան կայքէջ՝ www.facebook.com/zangak

ՇԱՊԻԿԻՆ

Ա. Ահարոնյան, Ե. Զարենց, Ա. Սպենդիարյան, Ա. Միկոյան, ՀՀ կառավարության շենքը Հանրապետության հրապարակում, Շուշիի ազատագրումը 1992 թ. մայիսի 9-ին/Հայաստանի ազգային արխիվ

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՆԿԱՐՆԵՐ

Էջեր՝ 8, 251, 253, 254, 255, 256, 266/Երևանի պատմության թանգարան, էջեր՝ 14, 26, 33, 37, 38, 49, 52, 56, 61, 66, 78, 91, 92, 99, 101, 107, 108, 109, 110, 113, 114, 116, 120, 122, 123, 123, 134, 139, 140, 143, 144, 151, 154, 155, 159, 191, 195, 196, 200, 217, 220, 250, 257, 259, 260, 261, 265, 272, 274, 275/Հայաստանի ազգային արխիվ, էջեր՝ 167, 169, 173, 178, 179, 183, 211, 234, 243, 247, 290/www.president.am, էջեր՝ 170, 230, 261, 270, 280, 281, 282, 293, 297, 298 © Հովիկ Կարապետյան, էջ 182 © Kerem Özcan. էջեր՝ 197, 206, 271, 280 © Էմին Սկրտչյան, էջ 207 © Արտակ Մովսիսյան, էջ 235 © Արթուր Խաչատրյան, էջեր՝ 259, 276, 277, 278, 299 © Սերգեյ Առաքելյան, էջեր՝ 257, 279, 298, 299 © Յուրի Յուզբաշյան, էջ 298 © Գևորգ Գևորգյան, էջ 300 © photostock.am, էջեր՝ 301, 305/«Ոսկե ծիրան» միջազգային կինոփառատոն: